

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ

ՄԻԱԿԱԶՄ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ե Ր Ե Վ Ա Ն – 2022

ՀՏԴ 811.19՝0

ԳՄԴ 81.51

Խ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ քանասիրական գիտությունների թեկնածու
Ն. Գ. Հովհաննիսյան
Գրախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լ. Շ. Հովհաննիսյան
քանասիրական գիտությունների թեկնածու
Գ. Մ. Մխիթարյան, դոցենտ

Խաչատրյան Գ. Կ.

Խ 282 Միջին հայերենի միակազմ նախադասությունները / Գ.

Կ. Խաչատրյան.– Եր.: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
հրատարակչություն, 2022. – 315 էջ:

Աշխատությունը բովանդակում է տեսական և փաստական ծավա-
լուն տեղեկություն միջին հայերենի միակազմ նախադասությունների մա-
սին: Ուսումնասիրվել են և՛ գրաբարից ավանդված, և՛ միջինհայերենյան
լեզվական իրողությունները: Միջին հայերենի բուն միակազմ կա-
ռույցներից բացի՝ հեղինակը քննության է առել նաև զուգորդող միակազմ
նախադասությունները:

Աշխատությունը նախատեսվում է հայոց լեզվի պատմության, մաս-
նաորապես միջին հայերենի հարցերով զբաղվող մասնագետների, հայոց
լեզվի և գրականության ուսուցիչների, ինչպես նաև քանասիրական մաս-
նագիտությունների ուսանողության համար:

ՀՏԴ 811.19՝0

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9298-6-6

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝

«Եւ հանց եղայ ես հիմայ, որ ոչ հարստութեան կու խնդամ, եւ ոչ աղքատութեան կու տրտմիմ, եւ զամէն չարն ու զբարին մէկ կու տեսնում, եւ անհոգել եմ այս ամէն ցանկութենէն կենցաղոյս եւ յուսամ ի տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս որդին միածին եւ երկոտասան առաքեալքն եւ սուրբ Գրիգոր լուսաւորիչն Հայաստանեաց, եւ ՅԺԸ հայրապետն. եւ պրարիչ տէր Աստուածն արքայութիւն պատրաստէ ձեզ եւ մեր ծնօղացն, եւ անարժան եւ անպիտան ծառայիս Աստուծոյ »:

Ամիրդովլաթ Ամասիացի, «Օգուտ բժշկութեան»

Հայ քերականագիտութեան մեջ միադիմի բայերի և միակազմ նախադասությունների ուսումնասիրությունը դարերի պատմություն ունի, որը, մեր կարծիքով, պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակահատվածի:

1-ին շրջանը տևում է մոտավորապես 17-րդ դարից մինչև 19-րդ դարակես: Այդ ընթացքում՝

ա) դիտարկվել են միայն միադիմի բայեր, որոշ չափով՝ նաև միադիմի նախադասություններ,

բ) քննությունը կատարվել է միայն գրաբարի ընձեռած լեզվական փաստերի հիման վրա:

2-րդ շրջանը տևում է մոտավորապես 19-րդ դարակեսից մինչև 20-րդ դարակես: Այդ ընթացքում՝

ա) դիտարկվել են միայն բայական (անենթակա) միակազմ նախադասություններ,

բ) քննության նյութ են ծառայել երկճյուղ աշխարհաբարի՝ արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական իրողությունները:

Մինչև անցյալ դարի 50-ական թվականները միակազմ նախադասություններ են համարվել գերազանցապես բայով արտահայտված կառույցները, որոնք ընդհանուր կերպով անվանվել են *անենթակա* կամ *ան-*

* Հեղինակը երախտապարտ է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի՝ հայոց լեզվի պատմության բաժնի աշխատակիցներին՝ աշխատությունը հանգամանորեն ուսումնասիրելու, օգտակար դիտարկումների ու առաջարկությունների համար:

դեմ խոսքեր և հիմնականում ուսումնասիրվել միայն՝ ըստ արտահայտության պլանի, առանց ձևախմբաստային դասակարգման և համալիր վերլուծության: Բավական է նշել, որ Ա. Այտընյանի աշխատության մեջ միակազմ նախադասությունների ուսումնասիրությունն զբաղեցնում է ընդամենը երկու, Մ. Աբեղյանի տեսության մեջ՝ երեք էջ:

Ա. Այտընյանը, իր դիտարկումները կատարելով արևմտահայերենի լեզվական իրողությունների հիման վրա, խնդրո առարկա բայերը անվանում է «*միադիմի կամ դիմագուրկ*»՝ նկատի առնելով բայական միակազմ կառույցների միայն մի խմբի գերադաս անդամը: Նշելով, որ դրանք այն բայերն են, «որոնց միայն եզ. երրորդ դեմքը կը գործածուի (անոր համար ալ կը կոչուի Միադիմի), եւ որոնք գործքին ընողն ու ըլլողը չեն ցուցնէր (այն պատճառաւ Դիմագուրկ ալ կը կոչուի)»¹, նա բերում է «բուն միադիմի բայերի» շարքը, որում, սակայն, տեղ են գտել գերազանցապես անվանաբայական կազմություններ և ոչ թե բայեր (*պէտք է, հարկ է, արժան է, հնար է, մեղք է, հերիք է, բաւ է, ամօթ է, անկ է*), և միայն մեկ-երկուսն են բայական միադիմի կազմություններ՝ *կը վայլէ, կ'օգտէ* (ինծի), *կ'իյնայ*²: Նրա եզրակացությունն այն է, որ հայերենը «... հազիւ մէկ երկու հատ ունի բուն միադիմի կամ դիմագուրկ բայ»³: Ապա դիտարկում է նաև «հասարակ դիմավոր բայեր», որոնք նույնպես գործածվում են «իբրև միադիմի բայ»՝ նշելով, որ կարող են «շատ այլեւայլ բայեր իբրև դիմագուրկ գործածուիլ, ինչպես նաև դիմագուրկներն ալ իբրև հասարակ դիմաւոր բայ առնուիլ: - *Ամօթ է, պէտք է, մեղք է* այնպէս են, ինչպէս այլեւայլ գոյականներով ըսէիր՝ *Պարծանք է, պատիւ է, թշնամանք է* եւ այլն»⁴: Մեկ այլ շարքում նա զետեղում է *որոտայ, անձրեւել, մռնչիլ, գռայ, բառաչիլ* բայերը՝ գտնելով, որ թեպետ դրանք համարվում են միադիմի բայեր, սակայն «ճիշդ խօսելով, ամենն ալ հասարակ բայեր են, եւ պէտք որ ըլլայ՝ ամեն դեմքի մէջ ալ կրնան գործածուիլ»: Ա. Այտընյանն առանձնացնում է նաև «տեսակ մը միադիմի», «որ կրաւորականէ առնուած է»՝ նշելով, որ այդպիսի միադիմիներ ոչ միայն ներգործական բայերից են կազմվում, «այլ նաև

¹ Ա. Այտընյան, 1866, 80-81:

² Ն.տ.:

³ Ն.տ.:

⁴ Ն.տ.:

չէզոքներէն ալ կրաւորական ձեւով միադիմի բայեր կ'ելլեն»: Նա բերում է այդպիսի բայերի մի ընդհանուր շարք (*Կըսուի թէ, կը լսուի, կը խմուի, կ'ընթերցուի, կ'երթըըցուի, կը նստուէր, խօսուեցաւ, պիտի զգուշացուի, այսօր չի գործուիր*), որոնք թե՛ սեռի քերականական կարգով են միմյանցից տարբեր (կրավորական կամ կրավորաձև չէզոք սեռի քերականական իմաստ են արտահայտում), թե՛ ըստ խոսքի մեջ գործածության: Այսպէս՝ *կը լսուի*-ն կրավորական նշանակություն ունի, մինչդեռ *կը նստուէր*-ը՝ կրավորաձև չէզոք, *կը խմուի*-ն կարող է գործածվել որպէս պարզ նախադասություն, մինչդեռ *կ'ըսուի թէ*-ն՝ որպէս բարդ կառույցի գլխավոր նախադասություն⁵:

19-րդ դ. 70-ականներին միակազմ նախադասություններին անդրադարձել է Ստ. Պալասանյանը, որը թեև որոշ չափով կրում է Ա. Այտընյանի ազդեցությունը, սակայն խորությամբ էապէս տարբերվում է նրա քննությունից: Այսպէս՝ չնայած նա հիմնականում բերում է միադիմի բայերի և կազմությունների՝ Ա. Այտընյանի քերականության մեջ հանդիպող լեզվական օրինակները, սակայն այդ շարքից *միադէմ* կամ *դիմագուրկ* է համարում միայն բայերը (*Լուսանում է: Մթնում է* և այլն)՝ դրանք տարանջատելով անվանաբայական կազմություններից, ինչպիսիք են՝ *պէտք է, հարկ է, մեղք է, հերիք է, բաւ է*⁶: Պահպանելով Ա. Այտընյանի՝ միադիմի բայերին («*կը վայլէ, կ'օգտէ* (ինծի), *կ'իյնայ*») տված *բուն* եզրույթը՝ այդպիսիք է համարում եզակի 3-րդ դեմքով բաղադրյալ կազմությունները միայն (*պէտք է, հարկ է, բաւ է, հերիք է, մեղք է*)՝ դրանց հակադրելով և դրանցից զանազանելով «*պատահական անդէմ*» բայերի խումբը, «... որոնք առանձին մտքով վարվում են իբրև անդէմ» (*ամպել, անձրնել, որոտալ, փայլատակել, մլխուել, բառանչել, մոնչել, զռալ*), բայց «նմանողութեամբ կարող են ամեն դեմքերով գործածուիլ»: Առանձնացնում է նաև չէզոք և կրավորական բայեր, որոնք գործածվում են «անդէմի մտքով» (*երևում է, թվում է, մնում է, հետեւում է, ասվում է, լսվում է, կարծվում է*)⁷ դիտարկելով այն նախադասությունները, որոնք բարդ ստորադասական կառույցների կազմում են հանդիպում: Սրանից բացի՝ նա միակազմ կառույցներն անվա-

⁵ Նշվ. աշխ., 80-81:

⁶ Ստ. Պալասանեան, 1874, 63:

⁷ Նշվ. աշխ., 175:

նում է *անդէմ* նախադասություններ⁸: Մտ. Պալասանյանի կողմից ուսումնասիրության նյութ են դառնում ոչ միայն միադիմի, այլև դիմավոր բայաձևերով արտահայտված կազմություններ: Վերջիններիս շարքում (առանց որոշակի դասակարգման) նա դիտարկում է երկու տեսակ՝ ա) «ենթական որոշ յայտնի չէ» (*ասում են*), և բ) «ենթական բոլորովին անյայտ է» (*որոտում է*): Ավելին՝ առաջին խմբի անդեմ նախադասությունները նա (դարձյալ առանց որոշակի դասակարգման) բաժանում է երկու ենթախմբի՝ այսպիսով ուրվագծելով հետագա լեզվաբանների կատարելիք՝ ա) անորոշ դիմավոր և բ) ընդհանրական-դիմավոր դասակարգումը: Նա իրավացիորեն գտնում է, որ առաջին ենթախմբում «գորութեամբ իմացվում» է *մանք* կամ *շատ մարդիկ* ենթական. ինչպէս. *Կարծում են* թէ լուսնի վրայ բնակիչներ կան»: Նշում է նաև, որ այս կարգի նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է բայի հոգնակի թվի 3-րդ դեմքով: Երկրորդ ենթախմբում «գորութեամբ իմացվում» է *բոլոր մարդիկ* կամ *խրաքանչիւր մարդ* ենթական. ինչպէս. Սգաւոր մարդ տեսնելիս՝ ուզում ես մխիթարել նրան, բայց չես իմանում թէ ի՞նչ ասես կամ ո՞ր տեղից սկսիս»⁹:

Մտ. Պալասանյանը կողմնակիորեն առանձնացնում է նաև՝ ա) անորոշ դերբայով սր *պիտի* կամ *պէտք է* անդեմներով և բ) «*աժ անցեալով*» (նա նկատի ունի հարակատար դերբայը) ու *պիտի* կամ *պէտք է* դիմագուրկներով արտահայտված անդեմ նախադասություններ, որոնք գործածվում են «խօսքին աւելի որոշութիւն տալու համար. գորօրինակ. *Ի՞նչ պէտք է արած: Մեղաւորը պէտք է պատժած: Պաս օրին միս չպէտք է կերած* (փոխանակ՝ *չպէտք է ուտել*)»¹⁰:

Ի տարբերություն Ա. Այտընյանի, որը դիտարկումները կատարում է ձևաբանության համակարգում և բերում է միադիմի բայերի և բաղադրյալ կազմությունների սակավաթիվ օրինակներ՝ Մտ. Պալասանյանը խնդրո առարկա իրողությունը քննում է և՛ ձևաբանության, և՛ շարահյուսության համակարգում՝ տեսական նյութը հիմնավորելով տարբեր կարգի միակազմ նախադասություններով: Ընդ որում, աշխատության տարբեր հատվածներում նա գործածում է այլ կարգի միակազմ նախադասություն-

⁸ Նշվ. աշխ., 20, 202-203 և այլն:

⁹ Նշվ. աշխ., 203:

¹⁰ Նշվ. աշխ., 202:

ներ նույնպես՝ *Բայց առհասարակ նկատելու է*, որ ստորադասական անկատարի տեղ գրեթե միշտ ներկան է վարվում¹¹: *Աշխատելու ժամանակ պետք է աշխատել*¹² և այլն¹³:

Հետևելով Ստ. Պալասանյանին՝ Մ. Աբեղյանը ևս միակազմ նախադասությունները քննում է շարահյուսության համակարգում: Միակազմ կառույցներն անվանելով *անենթակա խոսքեր*, նա այդպիսիք է համարում ոչ միայն այն նախադասությունները, որոնք արտահայտված են դիմասահմանափակ (տվյալ դեպքում՝ միադիմի) բայերով և կազմություններով (*Լուսացավ: Վհատելու չէ*, վերջ կունենան, կուգան ու կերթան և այլն), այլև անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով արտահայտված միակազմ նախադասությունները, որոնք ժամանակին դիտարկել և առանձնացրել էին մասամբ Ա. Այտընյանը, մասամբ էլ՝ Ստ. Պալասանյանը, ինչպես՝ *Այդ թարգմանության վրա թեթև աչքով չի նայվի: Այս տունը ծախում են: Ճտերն աշնանը կհամարեն: Յոթ չափի թ, մեկ կտրի ը*¹⁴:

Անցյալ դարի 30-ականներից մինչև 70-ականները շրջանառված դպրոցական դասագրքում Գ. Սևակը ժամանակակից հայերենի պարզ նախադասությունների շարքում անդրադառնում է նաև միակազմ կառույցներին՝ դրանք առաջին անգամ բաժանելով երկու խմբի՝

- 1.անենթակա նախադասություններ,
- 2.անդեմ նախադասություններ¹⁵:

Առաջին խմբում նա դասում է այն կառույցները, որոնք արտահայտվում են թե՛ դիմավոր և թե՛ միադիմի բայաձևերով (*Երեկոյան անձրևելու է: Երկաթը տաք-տաք կծեծեն: Այստեղ չի նստվում*): Այդ նախադասությունների բնութագրման հարցում նկատվում է անմիօրինակություն. մի դեպքում Գ.Սևակը կարևորում է դրանց և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլանները, մյուս դեպքում՝ լոկ արտահայտության պլանը: Բացի դրանից՝ նա հոգնակի թվի 3-րդ դեմքով «Երկաթը տաք-տաք կծե-

¹¹ Նշվ. աշխ., 200:

¹² Նշվ. աշխ., 67:

¹³ Մ. Աբեղյանը *պետք է/պիտի - անորոշ դերբայ* կապակցության անորոշ դերբայը համարում է ենթակա, ինչպես՝ *Ի՞նչ պիտի/պետք է անել: Մի թե դրա համար պետք է լալ (Մ. Աբեղյան, 1965, 372):*

¹⁴ Մ. Աբեղյան, 1965, 371-373:

¹⁵ Գ. Սևակ, 1980, 29-31, 40-41:

ծեն» և «Ասում են՝ ուռին Աղջիկ էր ինձ պես» նախադասությունները բնութագրում է որպես «ընդհանրապես բոլորին վերաբերող գործողություն» ցույց տվող կառույցներ, որոնք սովորաբար գործածվում են իբրև առած¹⁶, մինչդեռ վերջին նախադասությունը ո՛չ առածական խոսք է, և ո՛չ էլ արտահայտում է բոլորին վերաբերող գործողություն:

Երկրորդ խմբում Գ.Սևակն անդեմ է համարում և՛ բայական, և՛ անվանական միակազմ նախադասությունները, որոնք «*արտահայտում են հրաման, ցանկություն կամք, հարցում կամ վիճակ և չունեն ստորոգյալ ...*»¹⁷: Սակայն այս սահմանումից հետո նա հավելում է, որ այդ նախադասությունները «չունեն նաև ենթակա»: Պարզվում է նաև, որ Գ. Սևակը, օրինակ, «Կեսօր» նախադասությունը համարում է անդեմ միակազմ (*Երեկվան, Չարենցի փողոց, կեսօր*), իսկ «Կեսօր է» (*Երևանն է. Չարենցի փողոցն է. կեսօր է*) նախադասությունը՝ երկկազմ, որում, ըստ լեզվաբանի, *կեսօր*-ը ենթակայի գործառույթ ունի, է-ն՝ ստորոգյալի և այլն¹⁸:

Ժամանակակից արևելահայերենի միակազմ նախադասությունների ուսումնասիրության ոլորտում ակնհայտ է Գ. Ղափանցյանի դերը: Ելնելով իր աշխատության նպատակադրումներից՝ նա թեև այդ նախադասությունները չի դասակարգել և չի կատարել խորքային քննություն, սակայն նկատել է դրանց բոլոր տեսակները: Ասվածի մասին վկայում է այն, որ նա առանց որոշակի սահմանումների ու սահմանազատումների բերում է թե՛ բայական դիմավոր (*մարդ ուզում էր փախչել, ասում են*¹⁹), միադիմի (*մթնեց*) ու անդեմ (*չաղմկե՛լ*), թե՛ անվանական (*օ՛հ, որպիսի երջանկություն*²⁰) և թե՛ բառ-նախադասություններ (*ափսո՛ւր*²¹): «Հաճախ նախադասության որևէ անդամ (ենթակա կամ ստորոգյալ) առկա չի լինում, կախված կամ պատմական հանգամանքներից, կամ հոգեբանական-անմիջական, բայց ամեն դեպքում միատեսակ բացատրություն չի կարելի տալ, ինչպես, օրինակ, *մթնեց*»²²: «Հրամայական կամ դրան փոխա-

¹⁶ Նշվ. աշխ., 30-31:

¹⁷ Նշվ. աշխ., 31:

¹⁸ Նշվ. աշխ., 40:

¹⁹ Գ. Ղափանցյան, 1939, 170:

²⁰ Նշվ. աշխ., 168-170:

²¹ Նշվ. աշխ., 173:

²² Ն.տ.:

րինող ըղձական եղանակների ժամանակ,- գրում է նա,- ենթական կարող է և անհետանալ կամ ավելի ճիշտ անորոշ (ընդհանուր) բնույթ ստանալ, թեպետ բայաձևը դիմավոր է մնում (կասես թե, *ասում են*), իսկ եթե «ձևականորեն» այդ դեպքում տեսնում ենք նրա ներկայությունը, փաստորեն այդ ենթական բովանդակությունը փոխած է լինում (կամ ընդհանուր առում ունի), ինչպես հայերեն «*մարդ ուզում էր փախչել*» »²³: Գ. Ղափանցյանը գտնում է, որ ոչ տարորոշված բառ-նախադասությունները մարդուն հատուկ են եղել մինչև վերջինիս՝ մտապատկերների բաժանման և միացման կարողությամբ օժտվելը: «Մյժմյան ոչ տարորոշված բառ-նախադասությունները այլ պահանջի արդյունք են. այժմ մեզ բառեր և կապակցական ձևեր չեն պակասում, բայց և այնպես, այլ և այլ մղումներից դրդված, երբեմն դիմում ենք այդ «նախնի» միջոցին, ինչպես՝ «թե՛յ» (“чаю”-կայարանում), «գո՛ղը, գողը»,- «չաղմկե՛լ», «զգաստ»: Չզարգացած բառ-նախադասությունները (назывные слова-предложения) գործ են անվում պատկերավոր ոճի մեջ, ինչպես՝ *միտինգ, դրոշակներ, ճառեր* (ընդգծումը մերն է-Գ. Խ.) »²⁴: Գ. Ղափանցյանի գործածած եզրույթներից, այլև տեսական դրույթներից ու բերած օրինակներից երևում է, որ գիտնականը *անվանական նախադասություն* և *բառ-նախադասություն* եզրույթները գործածում է ոչ մերօրյա ըմբռնմամբ. *անվանական նախադասություն* հասկացության ներքո նա նկատի ունի «*Петр студент*» կարգի կառույցները, որոնք նա մի կողմից հակադրում է երկկազմ բայական նախադասություններին, մյուս կողմից՝ «անվանաբայական կամ բայանվանական» նախադասություններին՝ «он стал великим»²⁵: Մինչդեռ *բառ-նախադասություն* հասկացության ներքո Գ. Ղափանցյանը նկատի ունի մեկ բառով արտահայտված նախադասությունները, որոնցում «գործողությունը ոչ թե տրամաբանական ակցիա է, այլ ավելի շուտ կամային-զգայական արտահայտություն»՝ անկախ այն բանից՝ ինչ խոսքի մասով է արտահայտված նրանց գերադաս անդամը: Պատահական չէ, որ նա զոյականով, բայով, ձայնարկությամբ, անվանով արտահայտվող հաղորդակցական միավորները բերում է որպես բառ-նախադասություններ՝ «լռություն, սս, կամաց, մտիկ, չծխե՛լ (բայ է),

²³ Նշվ. աշխ., 169-170:

²⁴ Նշվ. աշխ., 168:

²⁵ Նշվ. աշխ., 173-174:

ափսոս ...»²⁶: Ինչպես նկատելի է, Գ. Ղափանցյանի բերած օրինակները ներկայացնում են արևելահայերենի և՛ գրական, և՛ խոսակցական շերտերը: Լեզվաբանը դրանք բոլորը համարում է անենթակա նախադասություններ՝ գտնելով, որ դրբանցում «բայ-ստորոցյալի դեր են խաղում (ընդգծումը մերն է-Գ.Խ.)» ոչ միայն դիմավոր և անդեմ բայեր, այլև «այլ տիպի բառեր, որպես խոսքի մաս»²⁷:

3-րդ շրջանը տևում է մոտավորապես 20-րդ դարակեսից մինչ այսօր: Այդ ընթացքում՝

ա) ուսումնասիրվել են ոչ միայն բայական, այլև անուն խոսքի մասերով և այլ բառերով արտահայտվող միակազմ կառույցները,

բ) գերազանցապես ուսումնասիրվել են ժամանակակից արևելահայերենի, զուգահեռաբար՝ նաև գրաբարի և միջին հայերենի միակազմ նախադասությունները:

Անցյալ դարի 30-ականների կեսից մինչև 60-ականների կեսը միակազմ նախադասությունների ուսումնասիրության առումով նկատելի առաջընթաց է արձանագրել ռուս շարահյուսագիտությունը. ժամանակակից ռուսերենի միակազմ նախադասությունները՝ որպես ինքնատիպ կառույցներ, ուսումնասիրվել են պարզ նախադասության համակարգում՝ համարվելով երկկազմ նախադասությունների հետ արտահայտության և բովանդակության պլաններով հակադրամիասնական կապի մեջ գտնվող հաղորդակցական միավորներ:

Այս տեսակետը, ըստ որի՝ միակազմ նախադասությունը համարվում էր պարզ նախադասության համակարգի առանձին հաղորդակցական միավոր, հիմնավորապես տեղ է գտել ռուսերենի թե՛ քերականագիտական աշխատություններում (ասվածի վկայությունը Ա. Շախմատովի, Վ. Վինոգրադովի, Ա. Պեշկովսկու և ուրիշ լեզվաբանների ուսումնասիրություններն են²⁸), թե՛ բուհական և դպրոցական դասագրքերում ու ծրագրերում:

Վերոնշյալ տեսակետից բացի՝ մի խումբ ռուս շարահյուսագետներ անցյալ դարի 60-ականների կեսից սկսած առաջ են քաշել մի տեսություն,

²⁶ Նշվ. աշխ., 168, 174:

²⁷ Նշվ. աշխ., 173:

²⁸ *А. Шахматов*, 1941. Грамматика русского языка, 1954.. *А. Пешковский*, 1956.

որով վերանայվում է միակազմ նախադասության քերականական կարգավիճակի հարցը և կասկածի տակ դրվում նախադասությունների միակազմությունն ընդհանրապես²⁹: Նշված տեսության հիմնադիր Գ. Զոլոտովան գտնում է, որ միակազմությունը ոչ թե պարզ նախադասության մոդելի բնութագիրն է, այլ այդ մոդելի յուրահատուկ իմաստա-շարահյուսական փոփոխակի նշանը³⁰: Լեզվաբանների մեկ այլ խումբ (Մ. Պանով, Ի. Մելչուկ, Ե. Շիրյան) ևս փորձում է միակազմ համարվող նախադասությունները դիտել երկկազմ, սակայն այլ ճանապարհով, այն է՝ շրջանառելով «շարահյուսական գրո» հասկացությունը: Այս դրույթով առաջնորդվող լեզվաբանների կարծիքով անվանական նախադասություններում առկա է գրոյական ստորոցյալ, իսկ բայական նախադասություններում՝ գրոյական ենթակա³¹, հետևաբար կազմությամբ պարզ բոլոր հաղորդակցական միավորները պետք է համարել երկկազմ:

Անցյալ դարակեսից սկսած՝ ժամանակակից հայերենի միակազմ նախադասությունների գնահատման և դասակարգման հարցերում ակնհայտ է այն ռուս շարահյուսագետների ազդեցությունը, որոնք երկկազմ և միակազմ նախադասություններն առանձնացնում էին որպես պարզ նախադասության երկու առանձին տեսակ՝ միակազմ նախադասությունների դասակարգման հիմքում կարևորելով գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունը: Ասվածի մասին վկայում են հրապարակի վրա առկա հայերեն քերականագիտական աշխատություններն ու դրանցում տեղ գտած և առայսօր շրջանառվող այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ *անորոշ-դիմավոր*, *ընդհանրացնող-դիմավոր*, *ընդհանրական-դիմավոր*, *բանախադասություններ* և այլն, որոնք ռուսերենից հայերենին են անցել բառապատճենման ճանապարհով:

Ժամանակակից հայերենի միակազմ կառույցներն առաջին անգամ ձևաիմաստային դասակարգման և համակողմանի վերլուծության է ենթարկել Վ. Առաքելյանը³²՝ հետևելով ռուս շարահյուսագետների (Ա. Շախմատով, Վ. Վինոգրադով, Ա. Պեշկովսկի և այլք) այն սկզբունքային դրույ-

²⁹ Գ. Золотова, Н. Онипенко, М. Сидорова, 1998.

³⁰ Գ. Золотова, 1986, № 1.

³¹ Ю. Долин, 2001, 54.

³² Վ. Առաքելյան, 1964, 11-57:

թին, որով երկկազմ և միակազմ նախադասությունները դիտվում էին պարզ նախադասության երկու հիմնական տեսակ, իսկ վերջինիս շարքում իրավացիորեն առանձնացվում էին «*բայական, անվանական և բառական*» հիմնական խմբերը³³: 1975-ին լույս տեսած համահեղինակային աշխատության մեջ Վ. Առաքելյանը վերանայում է բայական միակազմ նախադասությունների իր դասակարգումը. եթե 60-ականներին նա միադիմի կառույցներն ուսումնասիրում էր բայական անդեմ նախադասությունների շարքում, որին, ի դեպ, համաձայն չէր Ս. Գյուլբուղաղյանը³⁴), ապա այս անգամ նա միադիմի կառույցները գետեղել է դիմավոր բայերի շարքում՝ որպես անենթակա նախադասության մի տեսակ: Նկատենք, որ թեև Վ. Առաքելյանը նշում է միայն բայական դիմավոր նախադասությունների երկու տեսակ (անորոշ-դիմավոր և միադիմի-դիմավոր), սակայն իրավացիորեն քննում է նաև ընդհանրացնող-դիմավոր միակազմ նախադասությունները³⁵:

Ի տարբերություն Վ. Առաքելյանի, որը բայական միակազմ նախադասությունները բաժանում է դիմավոր ու անդեմ խմբերի և վերջինիս շարքում առանձին ուսումնասիրում թե՛ միայն անդեմ, թե՛ միադիմի բայաձևերով արտահայտված կառույցներ՝ Ս. Գյուլբուղաղյանի կարծիքով «ճիշտն այն է, որ առանձնացվեն **անենթակա նախադասությունները** (մթնեց, երեկոյանում է) բայական անդեմ նախադասություններից (չծխել, չաղմկել) և **առանձին տեսակ համարվեն** (ընդգծումները մերն են-Գ.Խ.)»³⁶: Սակայն նա միադիմի բայերով արտահայտված նախադասությունները ի վերջո համարում է անդեմ նախադասություններից տարբերվող ոչ թե **առանձին տեսակ**, այլ անդեմ նախադասությունների կազմից հանելով՝ «անորոշ-անենթակա» և «ընդհանրական-անենթակա» նախադասությունների հետ միասին դրանք դասում է «անենթակա» կառույցների խմբում որպես երրորդ ենթատեսակ՝ հետևյալ երկարաշունչ անվանումով՝ «*եզակի թվի երրորդ դեմքի պարզ և բաղադրյալ ստորոգյալ ունեցող անենթակա նա-*

³³ Նշվ. աշխ., 11: Հետագայում *բառական նախադասություններ*-ի փոխարեն Վ. Առաքելյանը ևս գործածում է *բառ-նախադասություն* եզրույթը (*Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, 1975, 276, 290-293*):

³⁴ *Ս. Գյուլբուղաղյան, 1967, 38*:

³⁵ *Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, 1975, 276-279*:

³⁶ *Ս. Գյուլբուղաղյան, 1967, 38*:

խաղասություններ, որոնք վերաբերում են բնության երևույթներին (անձրևնու՛մ է, ցրտեց, լուսացա՛լ, ուշ է, ամառնացա՛լ, կեսօր է, ձմեռ է, շոգ է և այլն)»³⁷: «Դրանք,- շարունակում է հեղինակը,- ցույց են տալիս՝

I. Մթնոլորտային երևույթներ, տեղումներ:

II . Տարվա եղանակ, ժամանակ:

III. **Անենթակա նախադասությունների այս երրորդ տեսակը** (ընդգծումը մերն է-Գ.Խ.) արտահայտում է խոսողի հասարակական միջավայրը, իրադրությունը, իրավիճակը:»³⁸:

Դժվար չէ նկատել, որ Ս. Գյուլբուղայանի աշխատության մեջ **անենթակա նախադասություններ** եզրույթը՝

ա) մի դեպքում բայական միակազմ նախադասությունների երկու խմբերից մեկի անվանումն է (**անենթակա նախադասություններ**)³⁹,

բ) մյուս դեպքում համարվում է տեսակի անվանում [**Անենթակա նախադասությունները** լինում են **երեք տեսակ**» (ընդգծումները մերն են-Գ.Խ.)՝ 1. անորոշ-անենթակա⁴⁰ և 2. ընդհանրական-անենթակա⁴¹ և 3. **եզակի թվի երրորդ դեմքի պարզ և բաղադրյալ ստորոգյալ ունեցող անենթակա** (ընդգծումը մերն է-Գ.Խ.)⁴²,

գ) երրորդ դեպքում՝ նշված տեսակներից վերջինիս III ենթատեսակի անվանումը, որը նա դարձյալ համարում է **տեսակ** և ոչ թե ենթատեսակ՝ **«III. Անենթակա նախադասությունների այս երրորդ տեսակը** (ընդգծումները մերն են-Գ.Խ.) արտահայտում է խոսողի հասարակական միջավայրը, իրադրությունը, իրավիճակը»:

Ակնհայտ է, որ վերոնշյալ շփոթը կարող էր բացառվել, եթե «III. Անենթակա նախադասությունների այս երրորդ տեսակը արտահայտում է խոսողի հասարակական միջավայրը, իրադրությունը, իրավիճակը» ձևակերպման փոխարեն տեղ գտներ **«III. Եզակի թվի երրորդ դեմքի պարզ և բաղադրյալ ստորոգյալ ունեցող** անենթակա նախադասությունների այս երրորդ ենթատեսակը արտահայտում է խոսողի հասարակական միջա-

³⁷ Նշվ. աշխ., 41-42:

³⁸ Նշվ. աշխ., 42, 48 և 51:

³⁹ Նշվ. աշխ., 29:

⁴⁰ Նշվ. աշխ., 72:

⁴¹ Նշվ. աշխ., 81:

⁴² Նշվ. աշխ., 41:

վայրը, իրադրությունը, իրավիճակը»⁴³ ձևակերպումը:

Սրանից բացի՝ *եզակի թվի 3-րդ դեմքով* մի շարք նախադասություններ, որոնք Վ. Առաքելյանի իրավացիորեն համարում էր միադիմի, Ս. Գյուլբուդադյանը քննում է ընդհանրական-անենթակա նախադասությունների շարքում⁴⁴՝ հաշվի առնելով վերջիններիս իմաստային պլանը: Ստացվում է, որ նա միակազմ նախադասությունները դասակարգելիս մի դեպքում կարևորում է նրանց արտահայտության միջոցը (օրինակ՝ *եզակի թվի 3-րդ դեմքի պարզ և բաղադրյալ ստորոցյալ ունեցող անենթակա նախադասություններ*)՝ դասակարգելով դրանք՝ ըստ արտահայտած իմաստի, մյուս դեպքում, ընդհակառակը, կարևորում է նրանց իմաստային կողմը (օրինակ՝ *ընդհանրական-անենթակա*) և դասակարգում դրանք՝ ըստ արտահայտության միջոցի:

Ինչ վերաբերում է միակազմ նախադասությունները «անենթակա», «անդեմ» և «բառ-նախադասություն» տեսակների բաժանելուն, ապա այս դեպքում էլ ակնհայտ է լեզվաբանի՝ քերականական միևնույն իրողությունը տարբեր հիմունքներով դասակարգելու փաստը. առաջին դեպքում («անենթակա») կարևորվում է այդ նախադասությունների շարահյուսական կառուցվածքը, երկրորդ դեպքում («անդեմ»)՝ նրանց գերադաս անդամի արտահայտության ձևը, իսկ երրորդ դեպքում («բառ-նախադասություն»)՝ նրանց գերադաս անդամի արտահայտության միջոցը:

Հետաքրքրական է, որ թեև ժամանակակից հայերենի միակազմ նախադասությունների առաջին ամբողջական դասակարգումը և համալիր քննությունը կատարել է Վ. Առաքելյանը, սակայն այդ նախադասություններն առանձին ուսումնասիրող Ս. Գյուլբուդադյանն իր մենագրության «Ներածական մասում» (բովանդակության մեջ՝ «Ներածություն») Վ. Առաքելյանի կատարած ծավալուն աշխատանքի մասին ընդամենը մի դրվատական նախադասություն է գրում. «Այս հարցի (միակազմ նախադասությունների) ավելի մանրամասն ու հանգամանալից գիտական քննությունը կատարել է բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանը՝ իր «Հայերենի շարահյուսության» Բ հատորում (1964թ.)»՝ առանց նշելու, որ իր՝ միակազմ նախադասությունների դասակարգման հիմքում փոքր-

⁴³ Նշվ. աշխ., 42, 48, 51:

⁴⁴ Նշվ. աշխ., 86-87:

ինչ տարբերությամբ ընկած է հենց Վ. Առաքելյանի շրջանառած մոտեցումը⁴⁵:

Անցյալ դարի 70-ականներին ժամանակակից հայերենի միակազմ նախադասություններին անդրադարձել է Գ. Ջահուկյանը: Գիտնականն ի մի է բերել հաղորդակցական այդ միավորների մասին մինչև 70-ականները շրջանառված տեսակետներն ու կարծիքները՝ հնարավորինս ամփոփ ներկայացնելով այդ նախադասությունների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները նաև իր դիտանկյունից:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Քերականները տարբերում են անենթակա նախադասությունների մի քանի տեսակ՝ անդեմ (դիմագուրկ, միադիմի), անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր: Բացի սրանցից, ոմանք անենթակա նախադասությունների շարքում են դասում նաև անորոշ դերբայով արտահայտված նախադասությունները, սակայն բուն «անենթակա» նախադասությունների մեջ կարելի է դասել միայն այն կառույցները, որոնց անորոշ դերբայն ուղեկցվում է դիմավոր ձևով («Քաղցր է հիշել», «Հարկավոր է պատմել» և այլն) ... »⁴⁶: Նա գտնում է, որ եզակի 3-րդ դեմքի «ստորոգյալը կարող է լինել փոխարկական և ոչ փոխարկական տիպարի (*Յրտում է = Յուրտ է դառնում* և *Յուրտ է*), կրավորաձև (*Չի քնվում, Չի նստվում*) և ոչ-կրավորաձև (*Մթնում է, Լուսանում է*): Ըստ գիտնականի դիտարկման՝ եզակի 3-րդ դեմքի բայով արտահայտված միակազմ նախադասությունները՝ «կա՛մ զգայական (իրականության զգացում), կա՛մ գնահատական բնույթի են (իրականության, խոսողի և իրականության փոխհարաբերության գնահատում), դրանց մեջ արձանագրվում է որևէ իրավիճակ կամ հոգեվիճակ»⁴⁷:

Գ. Ջահուկյանն առանձնացնում է անենթակա նախադասությունների իմաստային երկու հիմնական խումբ՝ «ա) վիճակա-եղանակային, բ) առարկայա-քանակական», որոնցից առաջինում արձանագրվում կամ գնահատվում է որևէ անմիջական իրավիճակ կամ հոգեվիճակ որպես

⁴⁵ Նշվ. աշխ., 38: Ասվածին հակառակ՝ նա մեկ-երկու էջում հարցին համառոտ անդրադարձած կամ չհամակարգված մոտեցում ցուցաբերած քերականների և լեզվաբանների աշխատանքները երբեմն ներկայացնում է ավելորդ մանրամասնությամբ:

⁴⁶ Գ. Ջահուկյան, 1974, 394:

⁴⁷ Նշվ. աշխ., 395:

իրական ենթակա (*Յրտում է, Յուրտ է, Լավ է, Հիանալի է, Հարկավոր է գնալ*), իսկ առարկայա-քանակական նախադասություններում «ենթական կամ որևէ պատճառով (հաղորդողը չգիտի, կարևոր չի համարում կամ չի ուզում բացահայտել իրական ենթական) մնում է անորոշ, կամ ընդհանրացված է (նրա տակ կարելի է հասկանալ բոլոր անձերին): Վերջին դեպքում ենթական կարող է ձևականորեն արտահայտվել *մարդ բառով* և անորոշ ու որոշյալ զանազան դերանուններով՝ *Ասում են* (= ինչ-որ մարդիկ ասում են), *որ Գրիգորը եկել է. Մի ձեռքով երկու ձմերուկ չեն* բռնի (= բոլոր մարդիկ էլ մի ձեռքով երկու ձմերուկ չեն կարող բռնել): *Մարդ ասում է՝ վեր կենա գնա* և այլն»⁴⁸:

Եզակի 3-րդ դեմքով «անենթակա» կառույցների մասին Գ. Ջահուկյանը նշում է, որ դրանք «ցույց են տալիս իրավիճակ (անփոփոխ կամ փոփոխական), արձանագրում են իրականության մեջ կամ հոգում տեղի ունեցող որևէ երևույթ, մասնավորապես՝ ա) բնության ընդհանուր վիճակներ (մթնոլորտային տեղումներ, կլիմայական ընդհանուր վիճակներ և վիճակների փոփոխություններ)՝ *Լուսանում է (Լույս է), Անձրևում է, Առավոտ է, Գարուն էր, Ժամի 5-ն էր* և այլն. բ) հասարակական, ընտանեկան, անձնական, ընդհանրապես մարդկանց առնչվող վիճակներ՝ *Պատերազմ է, Այսօր տոն է, Սենյակում լռություն է* և այլն. գ) իրականության և արտահայտվող անհատի փոխհարաբերությամբ պայմանավորված վիճակներ, իրականության գնահատումներ, եղանակային իմաստներ՝ *Չի քնվում* (= հնարավոր չէ քնել), *Ցավալի է, Լավ է* և այլն»⁴⁹: Նրա համոզմամբ՝ սրանց մի տեսակը պետք է համարել «եղանակիչ բառ+է+անորոշ դերբայ» կապակցություններով նախադասությունները՝ *Պետք է զբաղվել, Հնարավոր է հանդիպել, Չի կարելի գնալ* և այլն⁵⁰: Գ. Ջահուկյանն իրավացիորեն նշում է նաև, որ անենթակա նախադասությունների «ստորոցյալը ամենից ավելի շատ կարող է արտահայտվել երրորդ և ավելի քիչ՝ երկրորդ դեմ-

⁴⁸ Նշվ. աշխ., 396: Այդ մասին նշում են նաև Վ. Առաքելյանը, սակայն անորոշ դիմավոր նախադասությունների շարքում (*Վ. Առաքելյան, 1964, 15*) և Ս. Գյուլբուրդյանը (*Ս. Գյուլբուրդյան, 1967, 88-90*):

⁴⁹ Գ. Ջահուկյան, 1974, 395:

⁵⁰ Ն.տ.:

քով»⁵¹, ապա, հղելով Ս. Գյուլբուղայանին, հավելում, որ «երբեմն նշում են նաև առաջին դեմքը», «երբ այն գործածվում է ընդհանրացնող իմաստով, բայց այս կարգի գործածությունները հազվադեպ են և կարող են հաշվի չառնվել»⁵²:

Անցյալ դարի 80-ականներից ժամանակակից հայերենի միակազմ նախադասությունների ուսումնասիրությունն ընթացել է մասնակի փոփոխությունների կատարման ճանապարհով, արձանագրվել են մի շարք ուշագրավ դիտարկումներ, վերանայվել որոշ մոտեցումներ, որոնք տեղ են գտել տարբեր մենագրություններում⁵³ և հողվածներում:

Խոսքը մասնավորապես արդի հայերենի բայական անդեմ նախադասությունների մասին է, որոնք ենթարկվել են նոր, առավել համակողմանի ուսումնասիրության: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ այդ նախադասությունները բովանդակության պլանում միատարր չեն: Ընդ որում, անմիատարրություն է նկատվում այդ նախադասությունների թե՛ անդեմ բայով արտահայտված հատկանիշը ենթադրյալ ենթակային վերագրելու և թե՛ դրանց կիրառության նպատակի ու ոլորտի տեսանկյուններից: Միշտ չէ, որ խոսողը բայական անդեմ նախադասության միջոցով կարող է դիմել խոսակցին կամ բոլորին ընդհանրապես, և միշտ չէ, որ խոսողը կամ խոսքի հեղինակը կարող է արտահայտվել ինքն իր մասին կամ հաղորդում տալ մի երրորդ անձի կամ առարկայի վերաբերյալ: Բայական անդեմ նախադասությունների դիմային վերաբերության հարցին առաջինն անդրադարձել է Ս. Աբրահամյանը՝ իրավաօրենս նկատելով, որ այդ նախադասությունները՝ ա) «թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի, մեծ մասամբ՝ ... հենց իրեն՝ խոսողին», բ) «հաճախ այնպիսի գործողություն են ցույց տալիս, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է

⁵¹ Գ. Ջահուկյանը միակազմ նախադասությունների գլխավոր անդամն անվանում է *ստորոգյալ*՝ ի տարբերություն շատ լեզվաբանների, որոնք հիշյալ անդամը կոչում են *գերադաս անդամ*:

⁵² Նշվ. աշխ., 395:

⁵³ Նշվ. աշխ., 395-396: Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, 1976, 478-481: Ռ. Բշխանյան, 1986, 300-308: Ս. Ասատրյան, 1987, 180-190: Ս. Գյուլբուղայան, 1988, 121-139:

ընդհանուրին՝ և՛ խոսողին, և՛ խոսակցին, և՛ ուրիշներին»⁵⁴:

Բայական անդեմ միակազմ նախադասությունների դիմային վերագրման հարցը չի վրիպել նաև Ն. Պառնասյանի ուշադրությունից: Գիտնականը արդի հայերենի բայական անդեմ նախադասությունների բովանդակության պլանը, մասամբ նաև կիրառության ոլորտը քննել է՝ նկատի առնելով դրանց՝ այլ նախադասությունների հետ շարահյուսորեն հոմանիշ լինելու փաստը⁵⁵: Նա առանձնացրել է բայական անդեմ նախադասությունների երկու հիմնական տեսակ՝ ա) նախադասություններ, որոնցում արտահայտված գործողությունը վերաբերում է առաջին դեմքին⁵⁶, բ) նախադասություններ, որոնցում արտահայտված գործողությունը վերաբերում է երկրորդ դեմքին⁵⁷: Առաջին դեմքին վերաբերող նախադասությունների շարքում Ն. Պառնասյանը առանձնացնում է այնպիսիք, որոնցում արտահայտված գործողությունը «կոնտեքստի թելադրանքով կարող է վերաբերել կա՛մ խոսողին (առաջին դեմքին), կա՛մ երրորդ անձնավորությանը»⁵⁸: Ինչ խոսք, նշված աշխատության մեջ քննվող թեմայի առանձնահատկությունը և ուսումնասիրության նպատակն ու խնդիրները (լեզվաբանի նպատակը բայական անդեմ նախադասությունների ուսումնասիրությունը և մասնավորապես դասակարգումը չի եղել) չէին կարող գիտնականին հնարավորություն տալ առանձնացնելու բայական անդեմ նախադասությունների այլ տեսակներ նույնպես:

Խնդրո առարկա հարցին անդրադարձել է նաև տողերիս հեղինակը՝ ի մի բերելով նախկինում արտահայտված դրույթները և հավելելով նաև սեփական նկատառումը. «Արդի հայերենի բայական անդեմ նախադասություններն ըստ դիմային հարաբերությունների արտահայտման բաժանվում են չորս հիմնական խմբի՝ իրարից տարբերվելով նաև կիրառության ոլորտով»⁵⁹:

Միակազմ նախադասությունների մասին հետաքրքիր դիտարկում ունի Է. Աղայանը, որը *նախադասություններին* հակադրում է *ասություն-*

⁵⁴ Ս. Արքահամյան, 1962, 139:

⁵⁵ Ն. Պառնասյան, 1970, 37-63:

⁵⁶ Նշվ. աշխ., 58-63:

⁵⁷ Նշվ. աշխ., 57-58:

⁵⁸ Նշվ. աշխ., 59:

⁵⁹ Գ. Խաչատրյան, 1990, 144:

ները՝ վերջիններս ենթարկելով բազմակողմանի (ըստ հաղորդակցական-խոսքային իրադրության, բնույթի, ընդհանուր բովանդակության և կազմության) քննության⁶⁰: Լեզվաբանը գտնում է, որ խոսքը բաղկացած է «հաղորդումն իրացնող կամ արտահայտող նախադասություններից կամ ասություններից»⁶¹: «Նախադասությունները ստորոգում ունեցող բառերը կամ բառակապակցություններն են, մինչդեռ ասությունները գուրկ են ստորոգումից»: «Դրանք (իմա՝ ասությունները-Գ.Խ.) քերականությունների մեջ այսպես կոչված միակազմ բայական անդեմ, անվանական անդեմ և բառ-նախադասություններն են՝ իրենց բոլոր տեսակներով»⁶²:

Մեր պատկերացմամբ, եթե «ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային ժամանակային և վերաբերմունքային հարաբերությամբ»⁶³, ապա ճիշտ չէ կարծել, որ հետևյալ (ընդգծված) հաղորդակցական միավորը, օրինակ, գուրկ է ստորոգումից. «...ժողովի նախագահ Վարդգես Վարդապետյանն ինձ դիմելով ասաց.

- *Ընկե՛ր Ալազան, դահլիճը թողնե՛ր*» (ԳԹ):

Այլապես ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ դահլիճն ազատելու մասին հրամանը վերաբերում է 2-րդ և ոչ թե 1-ին կամ 3-րդ դեմքին, կամ էլ ընդհանրապես բոլորին: Ընդգծված նախադասությունը շարահյուստորեն ոչնչով չի տարբերվում « - *Ընկե՛ր Ալազան, դահլիճը թողնե՛ք*» նախադասությունից: Դրանց տարբերությունը արտահայտության պլանն է. ստորոգումը մի դեպքում իրականանում է անդեմ բայով, մյուս դեպքում՝ դիմավոր:

Սակայն հայերենի միակազմ նախադասությունների շուրջ մասնագիտական հետաքրքրասիրությունը վերը նշված ձեռքբերումներով չի սպառվել: Անցյալ դարի 70-ականներին Պ. Վարդապետյանը ուսումնասիրել է միջին հայերենի միակազմ նախադասությունները: Ելնելով առաջադիր խնդիրներից՝ լեզվաբանն այդ նախադասությունները ենթարկել է ոչ թե առանձին ծավալուն քննության, այլ դրանք ընդհանուր գծերով ներկայացրել է գրական հայերենի հիշյալ շրջանի շարահյուսական համա-

⁶⁰ Է. Աղայան, 1987, 121-138:

⁶¹ Նշվ. աշխ., 134:

⁶² Նշվ. աշխ., 135:

⁶³ Նշվ. աշխ., 122:

կարգի սահմաններում: Պ. Վարդապետյանը միջին հայերենի միակազմ նախադասությունները դասակարգել է, ինչպես ինքն է նշում, հայ լեզվաբանների կողմից միակազմ նախադասությունների դասակարգման երկու սկզբունքների գուգակցմամբ⁶⁴: Խոսելով անորոշ- և ընդհանրական-դիմավոր նախադասությունների առնչության մասին՝ նա գտնում է, որ «անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր նախադասություններն «իրար հակադրվում են ոչ այնքան կառուցվածքով, որքան իրենց արտահայտած իմաստով»: Ըստ լեզվաբանի՝ անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններում «գործող անձի անորոշության աստիճանը միշտ նույնը չէ»: Այդ հանգամանքը Վարդապետյանը պայմանավորում է գերադաս անդամի արտահայտման ձևաբանական միջոցով՝ նշելով, որ «ներկա ժամանակի հոգնակի 3-րդ դեմքով կառույցի համեմատությամբ՝ ըղձականի 2-րդ դեմքով գերադաս անդամ ունեցող անորոշ-դիմավոր նախադասության մեջ գործող անձի անորոշության աստիճանը ավելի պակաս է»⁶⁵: Պ. Վարդապետյանը բերում է ընդհանրական-դիմավոր նախադասությունների միայն հրամայական եղանակի եզակի թվի 2-րդ դեմքով օրինակներ⁶⁶, մինչդեռ միջին հայերենում ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններն արտահայտվում են նաև այլ եղանակներով և դիմաթվային ձևերով, այդ թվում՝ հրամայական⁶⁷ ապառնու ոչ միայն եզակի, այլև հոգնակի թվի 2-րդ դեմքով: Օրինակ՝ *Թէ չուզես, որ քիւֆր ասես, Ձեռքդ տար ու սիրտդ բռնէ* (Հ, 330): ... *Հնցեդ, զինչ կտրեն գնուշկն Ու դնեն ի ոսկի սենին* (Հ, 271): *Եւ ի թթու իրաց պատրաստ կեցիր*, որ շատ օգտէ աստուծով (ԱՍՕԲ): *Եւ ամէն իրք որ գանձն տաքցնէ՝ ի գործ արկէք* (ԱՍՕԲ): *Զի Քրիստոս հրամայեաց, թէ ձրի առէք եւ ձրի տուէք* (ՎԱԱ): Հետաքրքիր

⁶⁴ Համաձայն այդ սկզբունքներից մեկի՝ Պ. Վարդապետյանը միակազմ նախադասությունները բաժանում է 2 հիմնական խմբի՝ կախված այն բանից՝ միակազմ նախադասության գերադաս անդամն ինչ խոսքի մասով է արտահայտված՝ ա) բայով, թե բ) անուն խոսքի մասով (Պ. Վարդապետյան, 1975, 133-136):

⁶⁵ Պ. Վարդապետյան, 1975, 135:

⁶⁶ Նշվ. աշխ., 135-139:

⁶⁷ Մենք նպատակահարմար ենք գտնում միջին հայերենի համար գործածել ոչ թե բուն հրամայական, այլ հրամայական ապառնի եզրաբառը, քանի որ միջին հայերենը չունի գրաբարին բնորոշ բուն հրամայական և հորդորական հրամայական ժամանակաձևերի զանազանման անհրաժեշտություն:

է, որ Պ. Վարդապետյանը ըղձական եղանակի 2-րդ դեմքով նախադասությունները համարում է անորոշ-դիմավոր միակազմ, իսկ հրամայական եղանակի 2-րդ դեմքով արտահայտվածները՝ ընդհանրական-դիմավոր, չնայած որ երկուսի արտահայտած գործողությունն էլ ենթադրաբար վերաբերում է բոլորին: Հմնտ. *Եւ թէ սպեղանի առնես և ձգես, այլ աւզտէ և Բ յանգտե մարդոյն փախի՛ր, յիւրմէն գատ կաց ու հեռի*: Նշելով, որ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների արտահայտության միջոցներից մեկը արգելական հրամայականն է՝ Վարդապետյանը այդ նախադասությունների շարքում բերել է նաև ըղձական եղանակի ժխտականով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասություն, որում ժխտումն արտահայտվել է ոչ թե ոչ կամ չ մասնիկով, ինչպես սովորաբար լինում է ըղձական եղանակի ժխտական խոնարհման դեպքում, այլ *մի՛ մասնիկով՝ Այլ հաւու ձագ մի՛ տաս ուտելու*⁶⁸: Խոսելով ընդհանրական-դիմավոր նախադասությունների կրած հետագա փոփոխությունների մասին՝ Վարդապետյանը նշում է նրանց «առանցքային անդամի արտահայտման ձևաբանական միջոցների առավել բազմազան» դառնալը: «Արդի հայերենում,- գրում է նա,- այն կարող է արտահայտվել գրեթե բոլոր եղանակներով, թեև դեմքերի մեջ սահմանափակում այնուամենայնիվ նկատվում է. բայաձևերը առավելապես 3-րդ և 2-րդ դեմքերով են դրվում»⁶⁹: Մինչդեռ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը, ինչպես նշեցինք, տարբեր եղանակներով է արտահայտվում նաև միջին հայերենում, ընդ որում՝ թե՛ հոգնակի 3-րդ և թե՛ եզակի ու հոգնակի 2-րդ դեմքի բայաձևերով:

Պ. Վարդապետյանը միջին հայերենի անվանական միակազմ կառույցները բաժանում է երկու խմբի՝ ա) անվանական միակազմ նախադասություններ, «որոնց գերադաս անդամն արտահայտված է անվամբ և չունի բայական բաղադրիչ», բ) դիմավոր անվանական միակազմ նախադասություններ, որոնց գերադաս անդամն «անպայման ունենում է անուն+հանգույց տեսքը»: Նա նշում է, որ «անվանական նախադասությունները միջին հայերենում աչքի չեն ընկնում կառուցվածքային բազմազանությամբ և «շատ սակավ կիրառություն ունեն»: Վերջինս նա պայմանավորում

⁶⁸ Պ. Վարդապետյան, 1975, 136:

⁶⁹ Նշվ. աշխ., 139:

է միջին հայերեն մատենագրության ոճական առանձնահատկություններով: Նշենք, որ եթե «Ձմեռն էր» կարգի նախադասությունները, իրոք, սակավ կիրառություն ունեն, ապա բուն անվանական միակազմ նախադասությունները չափածո գործերում, մասնավորապես հայրեններում նկատելիորեն հաճախադեպ են: Լեզվաբանը «Վա՛յ գսենակ գերիս» միակազմ կառույցը բերում է անդեմ միակազմ նախադասությունների մեջ՝ նշելով, որ վերջիններիս «ձևավորմանը երբեմն մասնակցում է վա՛յ ձայնարկությունը»⁷⁰: Իրականում այդ նախադասության գերադաս անդամը հենց վա՛յ ձայնարկությունն է, որը, աղերսներ ունենալով բայանուններին (հմմտ. վա՛յ և վայել), պահանջում է նաև տրական հոլովով լրացում (վերջինս բերված նախադասության մեջ արտահայտվել է հայցական հոլովով՝ գե-րիս, որը ևս բնորոշ է միջին հայերենին): Նման հնարավորությամբ օժտված են նաև երանի՛, ալա՛ն և այլ ձայնարկություններ: Այնպես որ, նշված և այսօրինակ այլ ձայնարկություններ ոչ թե մասնակցում են անվանական միակազմ նախադասությունների ձևավորմանը, այլ նրանց գերադաս (առանցքային) անդամներն են: Մենք անվանական միակազմ նախադասությունների շարքում տեղ ենք տալիս այն նախադասություններին, որոնց գերադաս անդամն արտահայտված է ձայնարկությամբ, որը կարող է պահանջել որևէ խնդիր կամ պարագա լրացում: Ասվածը պայմանավորված է նրանով, որ ձայնարկություն գերադաս անդամով միակազմ կառույցները համարվում են բառ-նախադասություններ, մինչդեռ պարտադիր կերպով լրացում պահանջող և դրանց հետ հանդես եկող ձայնարկություններն արդեն իսկ բառ-նախադասություններ չեն:

Անցյալ դարի 80-ական թվականների առաջին կեսին տողերիս հեղինակը քննել գրաբարի դասական ենթաշրջանի բայական միակազմ նախադասությունները⁷¹, իսկ 2002թ.՝ լույս ընծայել մենագրություն, որում կատարվել է գրաբարի միակազմ նախադասությունների համալիր ուսումնասիրություն⁷²: Միակազմ կառույցների պատկերն առավել ամբողջական և համակողմանիորեն ներկայացնելու նպատակով նշված աշխատության մեջ ուսումնասիրվում են ոչ միայն բուն միակազմ նախադասու-

⁷⁰ Նշվ. աշխ. 140-141:

⁷¹ Գ. Խաչատրյան, 1986.

⁷² Գ. Խաչատրյան, 2002:

թյունները, որոնք հեղինակը կոչում է *անկախ*, այլն վերջիններիս հակադրվող *գուգորդվող* միակազմ նախադասությունները, որոնք, որպես կանոն, հանդես են գալիս բարդ ստորադասական կառույցներում՝ գուգորդվելով ենթակայի գործառույթ կատարող երկրորդական նախադասություններին⁷³: Աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել են 2-րդ դեմքով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունները⁷⁴, և միակազմ նախադասությունները դասակարգվել են՝ ըստ նրանց գերադաս անդամի արտահայտության խոսքիմասային պատկանելության:

Հանրագումարի բերելով վերն ասվածը՝ կարող ենք արձանագրել, որ՝ ա) միակազմ նախադասությունների ուսումնասիրությունը հայերենագիտության մեջ շարունակական է, բ) հայերենի միակազմ նախադասությունների քերականագիտական ուսումնասիրության առումով առասուր տևական և արդյունավետ աշխատանք է կատարվել:

Այսուհանդերձ, դիտարկումները ցույց են տալիս, որ կան միակազմ նախադասությունների արտահայտության և բովանդակության պլաններին վերաբերող հարցեր, որոնք դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից: Այսպես՝ հայ շարահյուսագետները որպես ժամանակակից հայերենի անորոշ-դիմավոր նախադասությունների արտահայտության հիմնական միջոց առանձնացնում են խոնարհված բայի հոգնակի թվի 3-րդ դեմքը⁷⁵: Ավելին՝ Ս. Գյուլբուդադյանն իր մենագրության մեջ առանձնակի շեշտում է (ընդ որում, երկու անգամ), որ ժամանակակից հայերենի անորոշ-դիմավոր նախադասություններն արտահայտվում են բոլոր եղանակներով ու ժամանակներով, բացի հրամայական եղանակից⁷⁶: Սակայն լեզվական փաստերը այլ բան են վկայում:

1. 3-րդ դեմքով գործածված անորոշ-դիմավոր նախադասությունները տեսականորեն կարող են արտահայտվել ոչ միայն անձնանիշ, այլև

⁷³ Ս. Գյուլբուդադյանը դրանք միակազմ չի համարում (*Ս. Գյուլբուդադյան*, 1967, 103-122):

⁷⁴ Գ. *Խաչատրյան*, 2002, 27-32:

⁷⁵ Վ. *Առաքելյան*, 1964, 12: Ս. Գյուլբուդադյան, 1967, 72: Տեսական այս դրույթը ռուս շարահյուսագետները շրջանառել են դեռևս անցյալ դարի 60-ականներից, և նույն համոզման են նաև մեր օրերում (*Русская грамматика*, 1982, 355-356, *В. Белошанкова*, 1997, 711 և ուրիշներ):

⁷⁶ Ս. Գյուլբուդադյան, 1967, 72, 78:

կենդանանիշ առարկաների կապակցվելու հնարավորությամբ օժտված բայերով, այսինքն՝ նշված կարգի նախադասություններում որպես գործողություն կատարող կամ կատարողներ կարող են ենթադրվել նաև կենդանի ցույց տվող գոյականներ: Օրինակ՝ «Մի քանի օր հետո նկատեցի, որ ճնճողուկի ձագերը գողացել են» նախադասության *գողացել են* գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն անձի կամ անձերի (*երեխան//երեխաները*), այլև կենդանու կամ կենդանիների (*կատուն//կատուները, ագռավը//ագռավները*):

2. Անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը տեսականորեն կարող է արտահայտվել ոչ միայն հոգնակի թվի 3-րդ, այլև հրամայական եղանակի եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքով: Հետևաբար զգացվում է անհրաժեշտություն քննելու հրամայական եղանակի 2-րդ դեմքով այդ նախադասությունները նույնպես՝ համալրելու բայական միակազմ, մասնավորապես անորոշ-դիմավոր կառույցների մասին գիտական շրջանառության մեջ առկա տեսական դրույթները:

Որպես հաղորդակցական միավոր՝ միջին հայերենի նախադասությունները միատարր չեն: Լինելով կենդանի խոսքի արտահայտության միջոց՝ միջինհայերենյան նախադասություններն ունեն կառուցվածքային, հնչերանգային, բովանդակային և այլ առանձնահատկություններ: Մասնավորապես ստորոգման քերականական կարգի առումով բազմաթիվ նախադասություններ հանդես են բերում պակասավորություն. գրավոր աղբյուրներում վկայվել են այնպիսի կառույցներ, որոնք, ի տարբերություն երկկազմ նախադասությունների, զուրկ են ստորոգման քերականական կարգից: Օրինակ՝ *Եւ թէ ցաւն յաւելնայ եւ չի գերծանի՝ թէ այր է՝ թող կին առնու, եւ թէ կին թէ աղջիկ՝ էրիկ տան* (ՍՍԴ): *Եւ լինի* որ սովորութենէն աւելի ելանէ, *եւ լինայ* որ պակաս ելանէ (ԱՍՕԲ): Յորժամ մարդն ընկնի, *պարտ է ասել զինքն՝* թագաւորի որդի եմ կամ մեծատան. *որ չսպանանեն, այլ պահեն. միթէ գան գանձ տան եւ գնեն* (ՎԱԱ): – Ստոր *երել ի նչ պիտի*, Բեր դնեմ երեստ երեսիս (Հ, 46) և այլն: Ստորոգման քերականական կարգից զուրկ նախադասությունները միջին հայերենին այնքան են բնորոշ, որ աչքի են ընկնում գործածության հաճախադեպությամբ՝ գերազանցապես հանդես գալով որպես խոսքի ոճավորման միջոց: Տարբեր տեսակի միակազմ նախադասություններ հանդիպում են նույնիսկ միննույն քարդ կառույցի կազմում: Օրինակ՝ Իպն Մասուային որդին ասէ, *թէ ի տաք*

հիւանդութիւնն զերակն մեծ հասկնալ կու պիտի եւ ի հով հիւանդութեն՝ փոքր. եւ ի չոր ցաւերն զերակն պինտ քաշէ, եւ ի գէճ ցաւերն տես զերակն կակուղ (ԱՍՕԲ): Եւ թէ զտղան շուտ կտրեն ի կայծնէ՝ վատուծ լինայ եւ աւաղ. եւ թէ յուշ կտրեն՝ գէշ խօսի տէր լինայ (ԱՍՕԲ):

Միակազմ նախադասությունների՝ ստորոգման քերականական կարգից գուրկ լինելը պայմանավորված է տարբեր պատճառներով.

1. Մի դեպքում քերականական ստորոգում չի կատարվում, քանի որ կան բայեր, որոնք ի բնէ գուրկ են ենթակաառության արժույթից, հանդես են գալիս միայն միադիմի ձևով, որով արտահայտված գործողությունը պարզապես հնարավոր չէ վերագրել առարկայի, քանի որ վերջինս չի ենթադրվում: Դրանք դիմասահմանափակ բայեր են կամ բաղադրյալ կազմություններ՝ արտահայտված միայն եզակի թվի 3-րդ դեմքով, ինչպես՝ *Եւ լինի* որ խոչկին վերն ուռի, եւ այն զէտ խաղող լինի, եւ *պատեհ է* զայն *կտրել* եւ թէ Ա լինայ՝ *չէ պատեհ* որ ի տակէն կտրեն, զի գէն է (ԱՍՕԲ): Բայց զեկեղեցիս լուսաւոր, Թէ որպիսիք յոյժ փառաւոր, Զայլս *չէ ասել* ինձ *հնարաւոր*, Կամ հողեղէն մարդ երկրաւոր (ԱԽ): Իբրեւ *ստաւտեաց*, զայ քերծն եւ առնու՝ ի փող աղուէտուն (ՎԱԱ): Եւ իբրեւ *ստաւուտ եղել*, զայր շուն մի քերց յանկարծակի (ՎԱԱ):

2. Մյուս դեպքում քերականական ստորոգում տեսականորեն կարող է կատարվել, որովհետև այդ նախադասությունների դիմավոր բայաձևերը անդիմասահմանափակ են, և այլ նախադասություններում նրանցով արտահայտված գործողությունը կարելի է ցանկացած դեմքով վերագրել առարկային կամ առարկաներին, որոնք ստորոգյալով արտահայտված հատկանիշը կրելու առումով միևնույն փոխհարաբերության մեջ են, սակայն տվյալ կիրառության մեջ ստորոգում չի իրականանում իրական ենթական չհասկացվելու, չենթադրվելու պատճառով՝ Եւ թէ նստոյտեղին ի դուրս լինայ՝ *մի՛ կտրել* (ԱՍՕԲ): Եւ լինի որ խոչկին տակն. *մի՛ կտրեր*, զի վնաս է (ԱՍՕԲ)⁷⁷:

3. Երրորդ դեպքում քերականական ստորոգում չի կատարվում, քանի որ այդ նախադասությունների գերադաս անդամներն արտահայտված են անդեմ բայով՝ Հարց. Վասն է՞ր ասէ. և տրականն պատուիրական: Պատ. Տրական *որզոն հարցանել*, թէ *առ ո՞տուէր զայս ինչ կամ զայն* :

⁷⁷ Հմտ. Եւ թէ ի դուրս լինայ եւ աղէկ չերեւնայ՝ չէ պատեհ կտրելն (ԱՍՕԲ):

Եւ պատուիրական *որպէս ասել՝* առ յո՞ պատուիրեցեր (ԴԶ, 117): Դերանուն թերանուն լսի կամ տիրանուն կամ փոխանուն, *որպէս յորժամ թողլով զանունսն և ասել* ես, դու, նա, մեք, դուք, նոքա, սոքա ... (ԴԶ, 106): Եւ [այս-Գ.Խ.] իցէ, *յորժամ դէմ առ դէմ կոչել և խօսել* (ԴԶ, 119):

4. Չորրորդ դեպքում քերականական ստորոգում չի կատարվում, քանի որ այդ նախադասությունների գերադաս անդամները ո՛չ բայով են արտահայտված և ո՛չ էլ ունեն բայական բաղադրիչ, որոնցով հնարավոր կլիներ իրականացնել ստորոգումը: Օրինակ՝ *Հենի ու հազար*, իմ Տէր, Բաժակն ի այս ինչ նմանի (Հ, 520):

Ինչպէս նկատում ենք, չորս դեպքում էլ առկա է միևնույն իրողությունը. նախադասության գլխավոր անդամներից մեկը համարվում է բառային-քերականական տեսանկյունից անվերականգնելի⁷⁸:

Միակազմ նախադասությունների դասակարգման հարցում նկատվող անմիօրինակություններից խուսափելու նպատակով մենք դրանք միմյանցից առանձնացնում ենք՝ հաշվի առնելով գերադաս անդամների արտահայտության բառային միջոցը. վերջինս կա՛մ բայ է, կա՛մ նյութական իմաստ արտահայտող անուն խոսքի մաս, կա՛մ էլ ոչ նյութական իմաստ արտահայտող խոսքի մաս: Ըստ այդ նկատառման էլ մենք առանձնացնում ենք միակազմ նախադասությունների երեք խումբ՝

1. բայական,
2. անվանական և
3. բառ-նախադասություններ, որով խուսափում ենք նաև նոր եզրույթներ շրջանառելուց (միջին հայերենի միակազմ նախադասությունների դասակարգման գծապատկերը տե՛ս էջ 29):

Սույն ուսումնասիրությունը կատարելիս գերազանցապէս առաջնորդվել ենք նկարագրական, համեմատության, վիճակագրության, մակաձման, տեսական-հետազոտական ու գործնական-հետազոտական, պատահական ընտրության, ամփոփ շարադրանքի և այլ մեթոդներով:

Մշխատանքի համար լեզվական նյութ են ծառայել գերազանցապէս 12-16-րդ դարերի միջինհայերենյան բնագրերը, առանձին դեպքերում փաստական նյութեր ենք քաղել ՄՀԲ-ից, միջին հայերեն նյութեր բովանդակող քրեստոմատիաներից, ինչպէս նաև հիշյալ ժամանակահատվա-

⁷⁸ Հմմտ. Գ. Ջահուկյան, 1974, 394:

ծում գրաբար, գրաբարախառը միջին հայերեն և միջինհայերենախառը գրաբար երկերից:

Միջին հայերենի լեզվական փաստերը համեմատելու նպատակով մի շարք դեպքերում դիմել ենք գրաբարի, երբեմն էլ՝ ժամանակակից հայերենի համարժեք լեզվական իրողություններին:

Հարկ եղած դեպքում դիմել ենք նաև 17-րդ դարից ավանդված լեզվական աղբյուրների՝ հաշվի առնելով, որ՝

ա) գրական հայերենի զարգացման՝ այսօր շրջանավորդ պարբերացման շրջանների և ենթաշրջանների սահմանները հարաբերական բնույթ ունեն, ինչի մասին նշում է նաև այդ պարբերացման հեղինակ Գ. Ջահուկյանը: Նա գտնում է, որ թեև հայերենի անցած փուլերը որոշակի են և նշվում են դարերով, սակայն դրանում «միշտ էլ նկատի է առնվում ժամանակագրական սահմանների պայմանականությունը»⁷⁹:


բ) Ս. Ղազարյանը, Հ. Մուրադյանը և այլք միջին հայերենի ենթաշրջանը սահմանափակում են 17-րդ դարով⁸⁰: Հ. Մուրադյանը, օրինակ, այդ տեսակետը հայտնում է՝ նկատի առնելով, որ 15-16-րդ դարերի միջին հայերենին հատուկ գծերով բնորոշվում էր նաև 17-րդ դարի հայերենը⁸¹:

⁷⁹ Գ. Ջահուկյան, 1964, 77:

⁸⁰ Ս. Ղազարյան, 1981, 289:

⁸¹ Հ. Մուրադյան, 1982, 45:

Ահավասիկ միջին հայերենի միակազմ նախադասությունների դասակարգման գծապատկերը.



ԳԼՈՒԽ 1
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ
ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջին հայերենի բայական միակազմ նախադասությունները տարբեր խմբերի են բաժանվում՝ ըստ գերադաս անդամի քերականական արտահայտության:

Առաջին խմբի նախադասություններում գերադաս անդամն արտահայտվում է անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով: Երրորդ խմբում այն նախադասություններն են, որոնցում գերադաս անդամի գործառնությունը հանդես են գալիս կա՛մ դիմասահմանափակ (միադիմի) բայեր, կա՛մ էլ անդիմասահմանափակ բայերի դիմասահմանափակ կիրառություններ՝ արտահայտված եզակի 3-րդ դեմքով: Երրորդ խմբի նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է անդեմ բայով:

Ըստ այս դասակարգման՝ միջին հայերենի բայական միակազմ նախադասությունների շարքում առանձնանում են՝

Ա. դիմավոր միակազմ նախադասություններ,

Բ. միադիմի միակազմ նախադասություններ,

Գ. անդեմ միակազմ նախադասություններ:

Մրանցից միադիմի բայերով արտահայտվողները առանձին ենթատեսակ համարելը պայմանավորված է այդ նախադասությունների արտահայտության և բովանդակության պլանների յուրօրինակությամբ. միադիմի միակազմ նախադասությունները միջակա դիրք են գրավում դիմավոր և անդեմ նախադասությունների միջև՝ գերադաս անդամի արտահայտության պլանում հարելով բայական դիմավոր, իսկ բովանդակության պլանում՝ բայական անդեմ նախադասություններին:

Ա. ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիմավոր են համարվում բայական միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտվում է դիմային սահմանափակություն չունեցող բայերի եզակի կամ հոգնակի թվերի 2-րդ կամ 3-րդ դիմային ձևերով: Արտահայտության պլանում տարբերություն գրեթե չունենալով՝ այս նախադասությունները, ըստ բովանդակության պլանի, բաժանվում են երկու խմբի.

Ա.1. անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ,

Ա.2. ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ⁸²:

Ա.1. ԱՆՈՐՈՇ-ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անորոշ-դիմավոր համարվում են բայական միակազմ նախադասությունները, որոնցում գործողություն կատարող կամ կատարողներ են ենթադրվում անորոշ անձ կամ անձինք: «Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների մեջ, - իրավացիորեն նշում է Պ. Վարդապետյանը, - անորոշ է դիմային վերաբերության իմաստը, հայտնի չէ, թե ո՞վ է գործողություն կատարողը, մե՞կ անձ է, թե՞ մի քանի»⁸³: Օրինակ՝ *Խաբեն գիս բանի նման տղայու* (ՄՏ): Եւ լօղ եւ կէս արծթէ էսներ եւ այլ տվի. *կէս հրիւնայ գրաւեցին*. որ բանեց (Կ-Պ): Մեռաւ Մելէք Նասրն *եւ ի յայս տարիս ձգեցին յաթոռոյն զտէր Յակոբ* (ՀՊ): - *Իմ գեղեցիկ վարդս է տարած, Ձիս անողորմ է լացուցած* (Հ, 609): Երգս է գրած Մարտիրոսի, Չախուս աշըխ էր չոր մսի, *Հարսնիք տարան ի նոր փեսի*, Խէր չտեսայ, քանց կորուսի (ՄԽ):

Անորոշ-դիմավոր միակազմ (այսուհետև՝ անորոշ-դիմավոր) նախադասության գերադաս անդամով արտահայտված գործողություն կատարողի կամ կատարողների մասին տվյալ խոսքային իրադրության մեջ բացակայում է բառային-քերականակալական տեղեկությունը, որն անհրաժեշտության դեպքում հնարավոր չէ վերականգնել: Օրինակ՝ «Եւ նա ասաց. թէ գրէ ում կամիս. զի *վարձեն* մեզի Ա (1) քօօրայ: Ջոր ես գրեցի եւ *վարձեցին* մեզի Ա (1) քօօրայ եւ ես վճարեցի զհախն զիմ հալլա սպիտակով եւ զիւր բաժինն այլ» (Կ-Պ) հատվածի «զի *վարձեն* մեզի Ա (1) քօօրայ» և «եւ *վարձեցին* մեզի Ա (1) քօօրայ» նախադասությունների բովանդակության պլանում անհայտ է, և հնարավոր չէ հստակեցնել, թե որոշակիորեն ով կամ ովքեր են *վարձեն* և *վարձեցին* գերադաս անդամներով արտա-

⁸² Բերված եզրույթները հայերենում շրջանառել է Վ. Առաքելյանը, որը դրանք բառապատճենման ճանապարհով փոխառել է ռուսերենից (неопределенно-личные, обобщенно-личные односоставные предложения): *Անորոշ-դիմավոր* եզրույթը ընդունել են բոլոր հայ շարահյուսագետները, *ընդհանրական-դիմավոր* եզրույթին զուգահեռ հանդիպում են նաև վերջինիս *ընդհանրացնող-դիմավոր* (Վ. Առաքելյան, 1964, 16-19) և *ընդհանրական-անենթակա* (Ս. Գյուլբուղայան, 1967, 81-98) տարբերակները:

⁸³ Հմմտ. Պ. Վարդապետյան, 1975, 135:

հայտված գործողությունները կատարել: Այսպես նաև՝ *Ձիս գովեցին*, եւ հեշտացայ, Զսուտն իրաւ համարեցայ (ՎԱԳՀ, 300): Եւ թագաւորաց պատեհ է, որ իմաստուն եւ ճարտար արուեստաւոր բժիշկ մն ի մօտն պահէ, այնոր համար որ յորժամ պիտենայ՝ *տեղաց մն այլ չի փնտռեն, կամ այլ յերկրէ բերեն*, եւ հանապազ մարդն առողջ չի կենար (ՄՄԴ) և այլն:

Միջին հայերենում անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամներն արտահայտվում են անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով, սակայն հարկ է նկատել, որ այդպիսի նախադասություններ կարելի է կազմել՝

- ա) ոչ բոլոր անդիմասահմանափակ բայերով,
- բ) անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմաթվային ձևերով,
- գ) ոչ բոլոր խոսքային իրադրություններում:

Ստորև առանձին-առանձին կանդրադառնանք վերոնշյալ դրույթներին:

Ա. Անորոշ-դիմավոր նախադասություններ կարելի է կազմել ոչ բոլոր անդիմասահմանափակ բայերով:

Ժամանակակից հայերենի (և ոչ միայն⁸⁴) շարահյուսագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամների արտահայտման միջոց են դառնում այն անդիմասահմանափակ բայերը, որոնք դասանշային տեսանկյունից հնարավորություն ունեն կապակցվելու անձանիշ ենթակաների հետ⁸⁵: Սակայն մեր կատարած դիտարկումներից հանգել ենք այն համոզման, որ մասնավորապես 3-րդ դեմքի գերադաս անդամ ունեցող անորոշ-դիմավոր նախադասությունները տեսականորեն կարող են արտահայտվել ոչ միայն անձանիշ, այլև կենդանանիշ առարկաների կապակցվելու հատկանիշով բնութագրվող բայերով: Ասել է՝ նշված կարգի նախադասություններում որպես գործողություն կատարող կամ կատարողներ կարող են ենթադրվել թե՛ անձանիշ և թե՛ կենդանանիշ գոյականներ: Օրինակ՝ «Մի քանի օր հետո նկատեցի, որ ճնճղուկի ձագերը գողացել են» նախադասության *գողացել են* գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն անձի կամ անձերի (երեխան/երեխաները), այլև կենդանու կամ

⁸⁴ Տե՛ս Րусская грамматика, 1982, 355-35, *Белашапкова В.*, 1997, 711 և այլք:

⁸⁵ Վ. *Առաքելյան*, 1964, 12: Մ. *Գյուլբրդադյան*, 1967, 72:

կենդանիների (կատուն//կատուները, ագռավը//ագռավները)⁸⁶: Այս եզրահանգման եկել ենք՝ միջին հայերենում մի շարք նախադասությունների առկայությամբ պայմանավորված: Այսպես՝ «Ինտո՞ր չի լամ, որ ձագերս են տարած: Ձագերս բուներնէն տարած, Իմ սիրտս են էրած» (Հ, 804) բարդ կառույցի ընդգծված նախադասությունների տարած են, էրած են գործողությունները ենթադրաբար կարող էին կատարել ոչ միայն անձնանիշ, այլև կենդանանիշ գոյականներ: Հմմտ. նաև՝

Իմ տերս վերելէս անցաւ,
Ըսաւ, թե՛ Ի՞նչ գու լաս, ի՞նչ չես լար,
Իմ հաւք թևաւորս:

– *Ձագերս ի ծոցէս տարեր են* (Հ, 610)⁸⁷:

– Կարտ՝ լկ, դուն ինչո՞ւ կու լաս:

– *Տարեր են ձագերս ի բնէս:*

Ձագերս ի բնէս տարին,

Ուր է իմ բունս խոռիաթ (Հ, 736):

Հարցն այս տեսանկյունից դիտարկելով՝ նշենք, որ միջին հայերենի (և ոչ միայն) անորոշ-դիմավոր նախադասություններում գերադաս անդամի գործառնությունը կարող են հանդես գալ՝

1. միայն անձնանիշ ենթակաների կապակցվող բոլոր բայերը, ինչպես՝ *աղաչել, աղօթել, ապաշխարել, ասել, բարբառել, բժշկել, գովել, գրաւել, գրել, եփել, ընծայել, թագաւորել, թագաւորեցուցանել, խնդրել, խորհել, խօսել, կարգել, կեղծել, հաստատել, հինայել, հնձել, հրամայել, յուղարկել, նուիրել, ստել, վկայել* և այլն: Օրինակ՝ Ասեմ զճշմարիտն. զի քոյ երիկամունքն իմ տղայոցն դեղ *ասացին*. զի կարի խիստ հիւանդ են (ՎԱԱ): Ջոր Ոհանն խնդրեց ի դատաստանէն. զի *գրեացեն* ի տիֆղարն. եւ *գրեցին* (Կ-Պ): *Կոչեցին* զԱնդրիսն առաջի դատաստանին եւ *հայեցին* ի նմանէ. զի վճարէ. գոր պարտ էր (Կ-Պ): Է (7)-երորդ *թագաւորեցուցին* զփոքր Պաղ-

⁸⁶ Նշված հարցին վերջերս ռուս լեզվաբաններից անդրադարձել է, օրինակ, Ա. Ցիմմերլինգը (Ա. *Циммерлинг*, 2018, 14):

⁸⁷ Հմմտ. նաև՝

Մեր տերն եկաւ, վերելէն անցաւ.

– Ի՞նչ գու լաս, իմ հայր թագաոր (փխ.՝ *իմ հաւք թևաւոր-Գ.Խ.*):

– Ի՞նչ լամ, իմ հայր թագաւոր,

Ձագերս ի ծոցէս տարեր են (Հ, 611):

տինն՝ գորդին մարզիզին, յառաջ քան զվախճանել Պաղտին Գորդյն (ՀՊ):

2. Բազմադաս այն բայերը, որոնք, իրանիշ ենթականերից բացի, աչքի են ընկնում նաև անձնանիշ ու կենդանանիշ ենթակաների հետ կապակցելիությամբ: Ասվածը մասնավորապես վերաբերում է այն բայերին, որոնք հանդես են բերում անսահմանափակ կամ սահմանափակ բազմադասություն՝ կարողանալով զուգահեռաբար կապակցվել՝

2.1. կենդանանիշ և իրանիշ (թանձրացական և/կամ վերացական), բայց նաև անձնանիշ ենթակաների (անսահմանափակ բազմադասություն), ինչպես՝ *այնել, անկանել, արզելել, աւելանալ, բազմանալ, բարձրանալ, բացել, բերել, կալ, կտրել, մաքրել, մնալ, շարժել, պոկել, պղտորել, ջարդել, սպան(ան)ել, տեսնուլ, փակել* և այլն: Այսպես՝ *սպան(ան)ել* բայը հետևյալ նախադասություններում կապակցվել է մի դեպքում անձնանիշ (*նա, մարդ, թագաւոր*), մյուս դեպքում՝ կենդանանիշ (*անասուն, մեղունք*), իսկ երրորդ դեպքում՝ իրանիշ ենթակաների (*կերակուր/այն, քար*): Հմմտ.

ա) որ թէ նաքա չէին հանդիպիլ ի հօն. *նա կու սպանէր* զիս մինչեւ ի սպառ (Կ-Պ): *Մարդ* շնայ կամ զրկէ կամ գողանայ կամ *սպանանէ* եւ կամ զայլ մեղս որ գործէ, ոչ կարէ դիրաւ գերծանիլ ՚ի մեղաց (ՎԱԱ): Ասցին, թէ զին[չ] աւտար մարդ ՚ի յայս քաղաքս կու մտ[ն]է, զամենն *թագաւոր կու սպանանէ* (ՎԱԱ):

բ) Եւ թէ *անսուն* քշտէ եւ *սպաննէ* զմարդ՝ նա զանասունն սպանեն եւ ձգեն, եւ չուտվի (ՍՄԴ): Դարձեալ, թէ *մեղունք* շատ ուտեն ՚ի մեղրէն, գոր գործեն. եւ որք շատ ուտեն, *սպան[ան]ին*՝ ՚ի դուրս ձգեն (ՎԱԱ):

գ) Առջն լուանայ գյորովայն իւր եւ երթեալ ննջէ ՚ի ծերպս վիմաց մինչեւ ՚ի մուտս զարնանային ժամանակին. եւ թէ սակաւ մի *կերակուր* մնայ ՚ի փոր նորայ, *այն* սպանանէ զնա (ՎԱԱ): Եւ թէ եկեղեցւոյ կամ ի տանէ *քար* ընգնի եւ մարդ *սպաննէ*, նա՝ թէ տուն լինի՝ *քակեն* զինք (ՍՄԴ):

2.2. Կենդանանիշ, բայց նաև անձնանիշ ենթակաների (սահմանափակ բազմադասություն)՝ *գարթնել, գալ, գողանալ, թռչել, լողալ, լսել, խլել, խրտահարել, կամենալ, կանգնել, կտրել, հեռանալ, մոտենալ, հայիլ, ձգել, նստել, պահել, շուրջ գալ, սողալ, սպանանել, վազել, վախենալ, տալ, տանիլ, տեսնուլ, տրորել, ուտել, փախչել, քակել, քշտել* և այլն: Այսպես՝ *տեսնուլ* բայը հետևյալ նախադասություններում մի դեպքում կապակցվել է անձնանիշ (*ես, մարդ*), իսկ երկրորդ դեպքում՝ կենդանանիշ ենթակաների

(գորտունք, եղնիկ)⁸⁸: Հմմտ.

ա) «Եւ գնաց առ բժիշկն եւ առիծն եւ ասէ, թէ մեծ զարմանք է. զի էշն այն ոչ սիրտ ունի եւ ոչ ականջ. իբրեւ եկին *տեսին*. զի ոչ ունէր, զարմացան» (ՎԱԱ): - Ես ալ շատ մարդ *եմ տեսել*, Չէ խըմել նա զօրըն գինի (Հ, 51): - Չատ այլ ի ծոցս եմ պահէր, Քո արևն՝ այլ *մարդ չէ տեսեր* (Հ, 258):

բ) Եւ ՚ի գնալն նոցա *տեսին* գնոսա երամակ մի *գորտունք* (ՎԱԱ): *Եղնիկ* մի ջրին խմելն Ձեղջերուաց զշուքն *էր տեսեր* (Հ, 319)⁸⁹:

Քննությունից պարզվում է, որ միջին հայերենում անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը արտահայտության սահմանափակություն ունի ոչ միայն դասային կապակցելիության, այլև սեռի քերականական կարգի առումով. այն կարող է արտահայտվել միայն ներգործական և չեզոք սեռի անդիմասահմանափակ բայերի որոշ դիմավոր ձևերով: Օրինակ՝ Չայս տունն ամենովն *եսուն* Սարգսին վարձու (Կ-Պ): Խաբելով զսատանայ՝ *մտանեն* արքայութիւն Աստուծոյ եւ *առնուն* զվարձս ՚ի տեառնէ եւ *առնուն*, գոր խէչափառն էառ (ՎԱԱ): Է՞ր չիք ի տալ ինձ ի փոխ, Երբ *գային* ի ձեր դրովընին (Հ, 877): Սովուն չեմ կարեր քայլեր, Նա *կասեն*, թէ՛ Գառ մ՛ է կերեր (Հ, 213): *Բացին* գդուոն քաղաքին եւ ետես զգանձն. զի չէր ՚ի մատն (ՎԱԱ) և այլն: Մինչդեռ կրավորական սեռի անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերը անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամի շարահյուսական գործառնությունից հանդես չեն գալիս, քանի որ սովորաբար ենթադրում և պահանջում են ենթակա: Սա նշանակում է, որ այդ բայաձևերի գործածության ոլորտը երկկազմ նախադասություններն են: Ներգործական սեռի դիմավոր բայերով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները կրավորականի փոխակերպելու դեպքում ստացվում են երկկազմ նախադասություններ: Վերջիններին կազմում, սակայն, բացակայում է, և հնարավոր չէ վերականգնել արդեն ոչ թե ենթական, այլ նրա շարահյուսական համանիշը, այն է՝ ներգործման խնդիրը: Ասվածի մասին վկայում է «1)Նա թէ (քահանայ-Գ.Խ.) գայ լաւցնէ զիր արատն, 2) նա թէ կարգաւոր լինի՝ 3) *նա ձգուի* ի կարգէն 4) եւ *վարուի* յամէն երկրէն, 5) եւ թէ աշխարհական լինի՝ 6) նա հաւնովրեն զինքն 7) եւ բանադրած *վարեն*» (ՄՄԴ) բարդ կառույցը, որի 3-րդ և 4-րդ

⁸⁸ Հմմտ. նաև՝ *Աչերս ի նչ տեսաւ ի քեզ*, Որ իմ սիրտս կու սիրէ զքեզ (Հ, 114):

⁸⁹ Հմմտ. նաև՝ *Վարդն* այլ խօշ ստեթ ունի, Երբ արև *տեսնու* կու բացլի (Հ, 62):

նախադասությունները կրավորական սեռի բայով արտահայտված երկկազմ կառույցներ են, և հնարավոր չէ վերականգնել նրանց ներգործող խնդիրը, իսկ 6-րդ և 7-րդ նախադասությունները՝ ներգործական սեռի բայով արտահայտված անորոշ-դիմավոր միակազմ կառույցներ:

Նշված քերականական իրողությունը ոչ միայն միջին հայերենին է հատուկ, այլև գրական հայերենի հին և նոր շրջաններին: Այսպես՝ «Էրեբունի ամրոցը հիմնադրել են մ.թ.ա. 782 թվականին» միակազմ նախադասությունը կրավորականի փոխակերպելիս ստանում ենք ոչ թե թերի (տվյալ դեպքում զեղչված ներգործման խնդիր ունեցող) երկկազմ, այլ, այսպես կոչված, պակասավոր երկկազմ նախադասություն («Էրեբունի ամրոցը հիմնադրվել է մ.թ.ա. 782 թվականին»), որի ներգործման խնդիրը բացակայում է առհասարակ, քանի որ այն բառային-քերականական արտահայտություն չունի, և հնարավոր չէ վերականգնել: Սմբատ Սպարապետը, օրինակ, սովորություն ունի գործողությունը կատարողների անորոշությունն արտահայտելու ոչ միայն անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններով, որոնք կառուցվածքով ներգործական են, այլև կրավորական կառուցվածքով երկկազմ նախադասություններով, որոնցում հնարավոր չէ վերականգնել ներգործող խնդիրը: Հմմտ.

- մի կողմից՝ *Չոր տարեալ թաղեցին արժանաւորապէս պատուով և մեծաւ ողորմք ի սուրբ տեղուջն* (ՄՍՏ, 26): Եւ կատարեալ զաւուրս ուրախութեանն *դարձուցանէին զկաթողիկոսն և զթագաւորն մեծամեծօքն յաշխարհն իւրեանց մեծաւ պատուով* (ՄՍՏ, 22): *Ասէն՝ ի ներքոյ երկրի գոլ ջուր* (ՅՈՂ, 377): *Ձեռնադրեցին կաթուղիկոս գտէր Յակոբ* (ՄԺ, I, 83),

- մյուս կողմից՝ մեծաւ աղաղակաւ ասէր *«գերեցաւ ամենայն գաւառ»* (ՄՍՏ, 29): Սա թարգմանեաց զպատմութիւն մատին սուրբ առաքելոյն Պետրոսի, *որ բերաւ ի Հայս* (ՄՍՏ, 26): *Եւ եղաւ կաթուղիկոս Հայոց տէր Գրիգորն* (ՄԺ, I, 87): *Ասի՝ աշտարակն ի վերայ ջուրց հաստատեալ* (ՅՈՂ, 377):

Միջինհայերենյան աղբյուրներում առավել հաճախադեպ են ներգործական սեռի գերադաս անդամներով անորոշ-դիմավոր նախադասությունները: Սա գերազանցապես պայմանավորված է նրանով, որ այդ նախադասություններում որպես ենթակա ենթադրվում են անձ կամ անձեր, որոնք մեծ մասամբ անցողական գործողություններ են կատարում: Սարկավազ Մինաս Թոխաթցին, օրինակ, իր հայտնի «Ողբ ի վերայ Օլախաց

երկրի հայերուն» չափածո երկում որպես անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամ գործածում է բացառապես ներգործական սեռի բայեր: Ասվածը պայմանավորված է տվյալ երկի բովանդակությամբ. նրանում նկարագրվում են լեհերի վայրագությունները հայ գաղթականների հանդեպ: Բնական է, որ տվյալ դեպքում Թոխաթցին ավելի հաճախ գործածում է ազդվող, փոփոխվող առարկայի ուղիղ խնդիր պահանջող կամ այնպիսի բայեր, որոնք տվյալ համատեքստում ցույց են տալիս բռնի կատարվող գործողություն, ինչպես՝ *ածիլեցին, այրեցին, առին, աւերեցին, բռնեցին, դաւանեցուցին, դրին, կապեցին, կացուցին, կողոպտեցին, հագուցին, հանին, մկրտեցին, սահմանեցին, տանջեցին, փորեցին, քակտեցին* և այլն:

Բ. Անորոշ-դիմավոր նախադասություններ կարելի է կազմել անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմաթվային ձևերով:

Լեզվական փաստերը վկայում են, որ, չհաշված մասնակի դեպքեր, միջին հայերենում անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները կարող են արտահայտվել՝

1. Եզակի թվի 3-րդ դեմքով՝ Եւ մերձաւորութեան աղէկ ատենն գարունն է եւ ձմեռն է. *եւ թէ յաւելի առնէ* շատ զէն այնէ, եւ շահն ի զէն փոխի (ԱՍՕԲ) և այլն:

2. Հոգնակի թվի 2-րդ դեմքով՝ Եւ եղեւ ինքն հիւանդացաւ. եւ հրեշտակն երեւեցաւ ՚ի տակ յոտիցն իւր. եւ իմացաւ, զի պիտի մեռաներ, եւ ասէ այրն. *շրջեցէք զսնարքն*. եւ շրջեցին. եւ դարձեալ ՚ի յոտից կողմն տեսաւ զհրեշտակն (ՎԱԱ): Եւ նայ ասէ. Ասացին բժշկայպետքն, թէ *հանէք զսորթ արջոյն եւ տաք տաք արկէք ՚ի վերայ առիւծոյն*. եւ նայ փութով քարշէ զցաւն ՚ի նմանէ ՎԱԱ)⁹⁰:

3. Հոգնակի թվի 3-րդ դեմքով՝⁹¹ Ձորօրինակ կրակ ձգէն ի յարդն, որ

⁹⁰ Քերականական այս իրողությունն առկա է նաև անուղղակիորեն մեջբերվող խոսքով կառույցներում, որոնցում, սակայն, գերադաս անդամն արտահայտվում է ոչ թե հոգնակի 2-րդ, այլ հոգնակի 3-րդ դեմքով, ինչպես՝ Եւ անցին աւուրք ինչ. եւ ահա եկն թագաւորն, նստաւ ՚ի վերայ պարսպին. եւ հրամայեաց, որ *զամէն խոզերն կապեն եւ ընդ մէջ կտրեն*: Եւ սկսան կապել եւ կտրել ընդ մէջ (ՎԱԱ):

⁹¹ Գրաբարում և ժամանակակից հայերենում առանձնանում են այս կարգի, սակայն եզակի թվի 2-րդ դեմքով արտահայտվող միակազմ նախադասություններ նույնպես: Խոսքը, համապատասխանաբար, «Եւ ասէ Յովրամ. *լծեաւ*. եւ լծեցին

այրի. նոյնպէս մեղաւոր մարդն առանց խոստովանութեան ի հուրն ան-
շէջ անկանի (ՎԱԱ): Այր ոմն ուներ որդի մի եւ ըմբռնեցաւ ՚ի գողութեան.
եւ կալեալ զհայրն *չարչարէին*, թէ ցոյց զքո որդին. եւ ոչ եկն ՚ի խօսք. եւ...
գտին գորդին եւ զհայրն *թողին* եւ որդին *չարչարէին* (ՎԱԱ): Երբ զհերի-
սան *բազմեցուցին*, Յառջեւ քահանայից *եղին*, Տիկ մի գինի այլ հետ *բերին*,
Եւ մատռուակն ի հետ նորին (ՄԹ) : ի մեծ եկեղեցին զաւագ խորանին
պատարագն անխափան յիմ անուն *մատուցանեն*. (ԿՂՀ 2, 169)⁹²:

կաս» (Դ թագ., Թ, 21) և «Հարա՛յ են տալի - «*քաշի՛ հա, քաշի՛ ...*» Ու դուրս քաշե-
ցին գոռով երկուսին» (ՀԹ3, 94) կարգի նախադասությունների մասին է, որոնցում
եզակի թվի 2-րդ դեմքով արտահայտված գործողությունների (*քաշի՛* և *լծեա՛*) կա-
տարումը ենթադրաբար հասցեագրվում է անորոշ անձանց (Գ. Կ. *Խաչատրյան*,
2002, 27): Այդօրինակ նախադասություններ միջին հայերենի լեզվական աղբյուր-
ներում մեզ չեն հանդիպել, ինչը, սակայն, չի նշանակում, թե դրանք գրական հայե-
րենի զարգացման այդ շրջանին խորթ էին:

⁹² Միջին հայերենի անորոշ-դիմավոր նախադասությունների արտահայտու-
թյան միջոցների շարքում Պ. Վարդապետյանը նշում է նաև 2-րդ դեմքը: «Միջին
հայերենի բայի երկրորդ դեմքով ևս երբեմն կարելի է դեմքի անորոշության իմաստ
արտահայտել (մասնավորապես երբ միակզում նախադասության գերադաս ան-
դամը ընդհանրապես եղանակի բայ է...),»- գրում է նա և բերում Ամասիացու բժշկարա-
նից քաղված «*Թէ հող ձգես* (ընդգծումը մերն է-Գ.Խ.)՝ յատակն նստի» կառույցը (Պ.
Վարդապետյան, 1975, 135): Սակայն պետք է նկատել, որ վերոբերյալ կառույցի
ընդգծված նախադասությունը ընդհանրական-դիմավոր է, նրանում *ձգես* գործո-
ղության կատարումը ենթադրաբար վերագրվում է ոչ թե անորոշ անձի կամ ան-
ձանց, այլ ընդհանրապես բոլորին: Ավելին՝ նշված նախադասության ընդհանրա-
կան-դիմավոր լինելը կասկած չի հարուցում թե՛ համատեքստում, թե՛ համատեքս-
տից դուրս: Ահավասիկ Ամասիացու կազմած տվյալ բազմաբարդ նախադասու-
թյունն ամբողջությամբ՝ Իսկ իմաստութեան գլուխն Դ տարերքս է, որ ամեն բանի
հիմն է. գոր Դանիլ է և ամեն իմաստասերքն քննեցին այսպէս, թէ *որպէս կանթեղ*,
ձէթ եւ ջուր. թէ հող ձգես՝ յատակն նստի, նոյնպէս եւ կրակն թէթեւ է եւ նուրբ, եւ
քամին քան զնա այլ ի վար է, եւ ջուրն այլ ի վար է, եւ ներքինն հողն է, որ ծանր եւ
թանձր է քան զամեն տարերքս: Նույն էջի հաջորդ իսկ պարբերության մեջ Պ. Վար-
դապետյանը նկատում է, որ բավականին հաճախադեպ են այն անորոշ-դիմավոր
միակզում նախադասությունները, որոնց առանցքային անդամն արտահայտվում է
ընդհանրապես եղանակի 2-րդ դեմքով: Սակայն հարկ ենք համարում նշել, որ բերված
բնագրային օրինակների շարքում երբեմն տեղ են գտել ոչ թե անորոշ-դիմավոր,
այլ դարձյալ ընդհանրական-դիմավոր նախադասություններ: Բերենք դրանցից մի
քանիսը՝ Դարցեալ Լեյկոյո որ գաս Ամարդամ, Դ սհաթէն ճանապարհ է: Եւ թէ
սպեղանի առնես և ձգես, այլ աւգտէ և այլն:

Եզակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների միջոցով արտահայտվում է կատարելի գործողության գաղափար. գերադաս անդամը սովորաբար ըղձական ապառնի ժամանակի բայաձև է: Օրինակ՝ Եւ մերձատրութեան աղէկ ատենն գարունն է եւ ձմեռն է. *եւ թէ յաւելի առնէ շատ զէն այնէ*, եւ շահն ի զէն փոխի (ԱՍՕԲ):

Եզակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններն առնչվում են միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններին, սակայն վերջիններիս արտահայտության պլանում գերադաս անդամի կազմությանը մասնակցում են էական կամ եղանակավորիչ բայերի միադիմի ձևեր, մինչդեռ միակազմ նախադասությունների այս խմբում, ինչպես բոլոր անորոշ-դիմավոր նախադասությունների մեջ, գերադաս անդամի գործառույթ են կատարում անձնանիշ ենթակաների կապակցվելու հնարավորությամբ օժտված անդիմասահմանափակ բայեր, ինչպես՝ *առնել/այնել, համարիլ, ուտել* և այլն: Օրինակ՝ *Ջրերդտուքն եւ զայնպիսիքն անհնար պիտի սպաննել եւ զկինն ու գորդիսն ծառայ տայ ի դարպասն եւ կարէ ծախել* (ՄՄԴ): Հմտ. նաև «Հիւանդանոց ուր կենայ՝ նա չէ պատեհ ամենեւիմբ անտից հարկ առնուլ, ոչ ի հիւանդէ եւ ոչ յիւր սպասաւորէ. թէ ոչ՝ *թող համարի թէ գՔրիստոս կու կողոպտէ*» (ՄՄԴ) կառույցի ընդգծված նախադասությունը, որով արտահայտված գործողությունը ենթադրաբար կարելի է վերագրել կա՛մ անորոշ հարկահավաքի, կա՛մ հիվանդանոցի անորոշ կառավարչի և այլն:

Ի տարբերություն հոգնակի 2-րդ և 3-րդ դեմքերով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունների, որոնք կարող են գործածվել թե՛ որպես ինքնուրույն հաղորդակցական միավոր և թե՛ բարդ կառույցների կազմում՝ եզակի 3-րդ դեմքերով արտահայտվող միակազմ կառույցները սովորաբար հանդիպում են բազմաբարդ կառույցներում, որոնցում առկա տարբեր նախադասություններ ունեն տարբեր կառուցվածքներ և տարբեր դիմային վերագրումներ (մի դեպքում՝ 2-րդ, մյուս դեպքում՝ 3-րդ և այլն): Այսպես՝ «Եւ գինի մի՛ խմել, եւ երակ քիչ ամ, եւ լուծման դեղ ամ, եւ մերձատրութիւն եւ աշխատիլ եւ բաղանիսն զէն առնէ. *եւ կերակուր հաւու ձագ եւ շուրվան եւ քաղցր կերակուրքն ուտէ*. օգտէ» (ԱՍՕԲ) կառույցի ընդգծված նախադասության բովանդակությունից հնարավոր չէ վերականգնել տվյալ գործողությունը ենթադրաբար կատարողին, քանի որ մի դեպքում խոսքը վերագրվում է անորոշ հիվանդին (Եւ գինի մի՛ խմել՝ 2-րդ

դեմքով), մյուս դեպքում՝ անորոշ բժշկին (եւ երակ քիչ առ, եւ լուծման դեղ առ՝ 2-րդ դեմքով), երրորդ դեպքում առկա է երկկազմ նախադասություն (եւ մերձաւորութիւն եւ աշխատիլ եւ բաղանիսն զէն առնէ)՝ 3-րդ դեմքով. սրանց հաջորդում է դարձյալ 3-րդ դեմքով մի նախադասություն, որի գործողությունը վերագրելի է անորոշ անձի (*եւ կերակուր հաւու ձագ եւ շուրվան եւ քաղցր կերակուրքն ուտէ*), որի մասին նախորդ շարադրանքում որևէ կոնկրետ հիշատակություն չկա, և միայն համատեքստից կարելի է ենթադրել, որ ասվածը վերաբերում է տվյալ հիվանդությամբ տառապող անորոշ հիվանդի/հիվանդ մարդու:

Անորոշ-դիմավոր նախադասությունների այս տեսակը միջինհայերենյան աղբյուրներում աչքի է ընկնում սակավ գործածությամբ:

Հոգնակի թվի 3-րդ դեմքով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները կազմությամբ կարող են լինել՝

ա) պարզ, ինչպես՝ եւ ՚ի բերանոյ աղջկան պիտի ասեմ, թէ զայս անուն մարդ *բերէք*. որ ելնեմ. եւ երբ *բերեն*, դու առ .Գ. մագ ՚ի գլխուն աղջկան եւ ձգէ ՚ի վերայ կրակին եւ ծխէ յառջեւ քթին (ՎԱԱ): Եւ հրամայեաց առիւծն եւ *կալան* զարչն եւ սկսան քարշել զմորթն (ՎԱԱ): Եթէ զաշխարհս ամէնըն դարիպին *տան*, Նմա խոտան թուի, անարգ՝ ւ անպիտան (ՄԵԼ): Յորտեղ որ է *եփեն* զքեզ, Անմահութեան հոտն բուրես (ՄԹ): Եւ *ժողովեն* յշտեմարանս, Ջորն ի հնձան, զորն ի կարաս (ՄԴ): *Բուխտան դրին* ի վերայ նորա, Թէ՛ Խտրշան յիշոցք ասաց (ՄՊ) և այլն:

Կազմությամբ պարզ գերադաս անդամները կարող են արտահայտվել խոնարհված բայերի և՛ համադրական, և՛ վերլուծականան ժամանակաձևներով: Օրինակ՝ Ապա պարտ է յայս կեանքն ժողովել, որ է ամառն, իմաստութեամբ եւ աշխատութեամբ զհոգեւոր կերակուր, զի դատաստանին արն սովամահ ՚ի դժոխս *ոչ առնեն* զմեզ (ՎԱԱ): Ապա թէ ոչ՝ նա *յորկեն* առ ինք երկու եպիսկոպոս՝ ու *կոչեն* զինք բ. ու գ. հետ. եւ թէ յանդգնի ու չգայ ի ժողովն, նա *խմանան* զիր խաւսքն եւ զպատճառն՝ եւ ի յայնոր վերայ *իրաւունք տան եւ սագայ* ի շատն եւ ի քիչն (ՄՄԴ): *Առին տարին* ի յայն տեղին, շուն որ կրակն *վառէր էին*, *Տարան* ի հուն *կանգնեցուցին*, Ջինք *մերկ արին* ու զլիսիբաց (ՄՊ): Ջայս ձայն գուժի աղաղակաւ Ի Հոռոմ քաղաքն *հասուցին* (ՆՄ, 68) և այլն:

բ) Բաղադրյալ՝ արտահայտված տարբեր կարգի բաղադրիչներով: Օրինակ՝ Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ ոք արգելու

կամ ասել թե՛ սինաուս իմ է, մի՛ հանել ջուր. քանց *կարեն հանել ու տանել* խանդկով ընդ ամեն մարդոյ գետններ՝ ի յիր հողն եւ *շինել* զինչ իւր պիտեւայ (ՄՄԴ): Եւ Խաչերէսն հայցեց. զի զձեռնագիրն գրեն ի տիֆչարն վասն չկորսվելոյ եւ կամ պատառելոյ համար. գոր եւ *թոյլ ետուն գրել*. որ է այսպէս (Կ-Պ): Ապա թէ ի գողութիւն բռնվի՝ նա զկարքն առնուն ու դարպասուն նամուսովն *խրատ ու սազայ այնեն*՝ զեղ գողոյ ու անհատի (ՄՄԴ): Ջումանք փոսէն ի դուրս հանին, Շատք ի մորին *գտան բերին* (ՄԹ): Եւ հրամայեաց առիծն եւ կալան զարչն եւ *սկսան քարշել* զմորթն (ՎԱԱ):

Լեզվական աղբյուրներում հոգնակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների՝ կազմությամբ պարզ գերադաս անդամներն արտահայտվում են համադրական և վերլուծական բայերի թե՛ միջին հայերենի և թե՛ գրաբարի խոնարհման համակարգերին բնորոշ ժամանակաձևերով:

Միջինհայերենյան խոնարհման համակարգի ժամանակաձևերից գերադաս անդամի դերով գործածվում են՝

1. *Կու//կ* եղանակիչով ձևավորված սահմանական ներկան՝ Սուտ ե, որ *կասեն*, եղբա՛րք, Թէ ընտանի կաքաւ չի լինի (Հ, 147): «Տէ՛ր, ինձ թողութիւն արայ, Զիս մոլար ճանփով *կու տանին*» (ԹԼԿ, 910): Ճըշմարիտ և ըղորդ *կասեն*, Որ կու տայ հոգի մեռածին (ԹԼԿ, 911): Ջուր եմ բերեր լեռներոյս, Աղբիւր եմ շիներ այգոյս, Դեռ չեմ խըմեր ջրոյս, *Կասեն*, թ՛ «Արե՛կ, ե՛լ այգոյս» (ԳԱՂ, 108): որ էստեց ախբուր դուրս գովման, որ *կայսեն* թէ, որ Շայտին <Եփրատ> ջուրն, որ էն սայրէն այ դուրս գույլման (ՅՁ, 287):

Որոշ նախադասություններում *կու* եղանակիչով կազմված դիմավոր ձևերով արտահայտվում է ոչ թե սահմանական ներկայի, այլ ենթադրական կամ հարկադրական ապառնու կամ էլ սահմանական ապառնու քերականական իմաստ՝ Եւ քոյրն Պաւլիտոսի ճանաչեց զԱղէկսանդր եւ ասաց, թէ արի փախիր, թէ այս պահս *կու բռնեն* («կբռնեն, բռնելու են»-Գ.Խ.) զքեզ (ՎԱԱ): Թէ չէ կու մեռնիմ, կերթամ Ու *կու գան* («կգան, գալու են») կանչեն՝ Մարդասպա՛ն (Հ, 302): Գեմ զայս դու գիտես, եղբայր, Որ յէգուց ըզքեզ *կու կոչեն* («պիտի կանչեն, կանչելու են» -Գ.Խ.) (Հ, 857) և այլն:

Ի դեպ, այսպիսին է նաև Սմբատ Մպարապետի դատաստանագրքից քաղված կառույցի «նա ապա զմեզ քրիստոնէքս ի մեր հարէն եւ ի մարէն *կու քակտեն*» («կքակտեն, քակտելու են») նախադասության ընդգծված գերադաս անդամը՝ Ամ զայս տեսէք՝ թէ որ զայս միութիւնս *կու քա-*

կեն ու կու այլայլեն, որ է մայր մեր սուրբ եկեղեցի՝ եւ հայր բանն Աստուծոյ Քրիստոս, նա ապա զմեզ քրիստոնէքս ի մեր հարէն եւ ի մարէն կու քակտեն (ՄՄԴ):

2. *Կու//կ* եղանակիչով ձևավորված անկատար անցյալը և վերջինիս՝ օժանդակ բայով ու կապական կապակցությամբ կազմված ժխտական խոնարհման տարբերակը: Հմմտ. Յերէկ ցորեկով բարով *Կու տանենք*⁹³ աղվոր մի ճորով (Հ, 156) և Բագում աշխատանաւք աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի *չէին ի հասկնալ*, եւ ոչ յօկտել գայր (ՄՄԴ):

3. Վաղակատար ներկան, որի վաղակատար դերբայն արտահայտվում է թե՛ -ել, և թե՛ -էր վերջավորություններով՝ իրենց հերթին վկայելով խնդրո առարկա նախադասությունների՝ և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառախմբերին բնորոշ լինելու մասին՝ Ձի գայս ի Նիկիայի սահմանն *աւրացուցել են եւ կապել* (ՄՄԴ): Եւ վոյթն Թորոս ետուր գրել գայս Մեսոի մանչին խրերն. գոր նմա *ասել են* եւ որպէս ոչ եգիտ զնայ ի տունն (Կ-Պ): Հաւսար *ի ճօշք են առել*՝ Ի ի ոտանց կամին զիս ուտել (Հ, 168): – Ի՞նչ լամ, իմ հայր թագաոր, Չագերս ի ծօցէս *տարէր են* (Հ, 611): Ես եմ առանց սըլէի ու մերկ եմ յանդիման կանգնել, Հագար դէհաց խոցեն, ու չերևի թէ *են խոցել* (ԿԵ, 76):

4. Հարակատար ներկան՝ – Ինտո՞ր չի լամ, որ ձագերս *են տարած*: Չագերս բուներնէն *տարած*, Իմ սիրոս *են էրած* (Հ, 804)⁹⁴: Հայրեններից քաղված այս նախադասությունների հաջորդող բանատողերը հետաքրքրական են նրանով, որ դրանցում խոսքի հեղինակը խոստովանում է, թէ ինքը չգիտի հաստատապէս կատարված այդ գործողությունների իրական կատարող(ներ)ի մասին՝ Ո՛չ գիտեմ ավճիները տարած, Ո՛չ գիտեմ հարաւին հովը քշած (Հ, 804):

Միջին հայերենի ոճական հնարքներից մեկն այն է, որ հարակատար ներկայով արտահայտված կառույցները հաճախ հանդես են գալիս իբրև թերի միակազմ կառույցներ՝ *են* օժանդակ բայի զեղչմամբ: Չառիւծն ի

⁹³ Բանաստեղծական տողաչափը պահպանելու նպատակով ենթադրվող *կու տանին* (=կու տանէին) ձևի փոխարեն թյուրիմացաբար գործածվել է *կու տանեն*:

⁹⁴ Հմմտ. *Չագուկս ի բունէս առած* (*են-Գ.Խ.*), Ո՛չ ի սար գիտեմ, ո՛չ ի ձոր (Հ, 757):

զընճիլ [*են-Գ.Խ.*] դրբած Ու չիպան [*են-Գ.Խ.*] տուած, թէ՛ Քաշէ (Հ, 407): Փնճիկ մ՝ ըռեհան ես դու, *Չքեզ ամեն նագով* [*են-Գ.Խ.*] *սնուցած* (Հ, 106)⁹⁵: Բերված և նմանատիպ նախադասությունների անորոշ-դիմավոր լինելու մասին լավագույնս վկայում են, օրինակ, այն հայրենները, որոնցում վերոհիշյալ կարգի անորոշ-դիմավոր կառույցների մի մասին զուգահեռ հանդիպում են նաև դրանց՝ դիմավոր բայերի հոգնակի թվի 3-րդ դեմքով տարբերակները: Հմմտ. Խոցած եմ չարխի նետով, Որ սլաքն կէս նուկի է, *Առած ու հեքիմ տարած*⁹⁶ (հարակատար ներկա), Նայ ասաց, թէ՛ Ապրելու չէ (Հ, 272) և *Առին ու հեքիմին տարան* (անցյալ կատարյալ), Նայ ասաց, թ՛ Ատ ապրելու չէ (Հ, 165): *Առին, ի հեքիմ տարան* (անցյալ կատարյալ), Նա ասաց, թէ՛ Ապրելու չէ (Հ, 64): Կամ՝ *Ջինչ ձուկն ի ջրրէն հանած* (հարակատար ներկա), Նա այլ ո՞նց մընայ կենդանի (Հ, 487) և *Ջինչ ձուկն Ի ջրրէն հանեն* (ըզձական ապառնի), Նա այլ ո՞նց մնայ կենդանի (Հ, 394):

Միջինհայերենյան աղբյուրներում հարակատար ներկայով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները գերազանցապես հանդիպում են հայրեններում, ինչը ինքնին վկայում է այդ նախադասությունների՝ միջինհայերենյան շրջանի խոսակցական լեզվին բնորոշ լինելու մասին:

Նկատենք, որ հարակատար ներկայի՝ առանց օժանդակ բայի կիրառությունը բնորոշ է եղել արևմտյան հատվածի որոշ բարբառների և հասել է մինչև մեր օրեր⁹⁷:

5. Հարակատար անցյալը, որը հազվադեպ գործածություն ունի՝ Ես ո՛չ խմած եմ, ո՛չ հարբած Խելքս ի գլուխս *էին տարած* (ՂՄ) և այլն:

6. Անցյալ կատարյալը⁹⁸, որով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները միջին հայերենում նկատելիորեն հաճախադեպ

⁹⁵ Չենք բացառում, որ «*Չքեզ ամեն նագով սնուցած*» (Հ, 106) նախադասությունը կառուցվեր նաև էմփազիսի բայաձևով (*Չքեզ ամեն նագով է սնուցած*):

⁹⁶ *Տարած* ուղղումը մերն է: Բնագրում՝ Առած ու հեքիմ տարած:

⁹⁷ Վ. Կատվայյան, 2016, 415:

⁹⁸ Անցյալ կատարյալը հավասարապես կարող էր տեղ գտնել նաև գրաբարի խոնարհման համակարգի ժամանակաձևերի շարքում, սակայն զետեղել ենք միջինհայերենյան խոնարհման համակարգում՝ նկատի առնելով, որ այն, պահպանելով հանդերձ գրաբարյան խոնարհման համակարգի որոշ առանձնահատկություններ, աչքի է ընկնում նաև միջին հայերենին բնորոշ թեքման տարրերով:

են⁹⁹՝ *Առին* գթագն ի գլխոյս Այն պահուն, որ ես չիմացայ (Հ, 496): Եւ ի վրայ այս բանին *կոչեցին* [հարսն] եւ *հրամանք արին*. որ գեկտանան բերէ եւ դնէ առաջի դատաւորացն (Կ-Պ): եւ իսկոյն կալեալ գհայրն եւ *կախեցին* (ՎԱԱ): Եւ *հարցան* ի Նորսէսն. թէ այն տաւարներն. որ քո հորէն մնաց, գոր կա ի կտակին մէջ գրեալ. գոր եւ *եսուն կարդալ* գկտակն. ի՞նչ արիք (Կ-Պ): Եղեւ կոտորումն քրիստոնէից ի Սալահատնէն մերձ ի Երուսաղեմ, եւ *կալան* գթագաւորն զԿի եւ անյայտ եղեւ Սուրբ Խաչն Քրիստոսի (ՀՊ): եւ յայգեստանոյն խանդակնին ինն թիգ կարկուտ *չափեցին* (ԳՂ, 10):

7. Ըղձական ապառնին՝ Եւ որ այսոր ուժ չուննայ՝ որ վճարէ՝ նա *ծախեն* զինքն ու զիր տունն ու զինչ ուննայ ու ի գինն *տան*, զարդ ի կնկնէն ու ի յորդեցն (ՍՄԴ): Եւ ինչ շահ կենայ՝ ըղորդն այն է՝ որ զամէնն յիրուր *քշտեն*, ու կէսն թագվորին է՝ եւ կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթրւին չափոյն ի յիրենց վերայ *բաժնեն* (ՍՄԴ): Ամիրան բեկին հրաման արար թէ՛ մարդ դիր, որ *տանեն* ի քո աշխարհն» (ՄԺ, II, 229): Թող զիս *երեն* տառայալուով, որ իմ սրտիս բոցըն գոռայ, Թող *լանան* ըզիս գինով, Ստրուպ *բերեն* ինձ քահանայ (ՀԱԳ, 105): Եւ հաստատեցի որ արեղայ, որ աղմուկ առնէ *գիշերաւթ չտան առնել*, ստացուածն տերունի եղիցի (ԿՂՀ 1, 98):

Բերված լեզվական փաստերը վկայում են հետևյալ դիտարժան իրողությունների մասին.

ա) սահմանական ներկա ժամանակաձևով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասություններով կարելի է արտահայտել սովորութային (թե՛ իրական և թե՛ անիրական, թեական) գործողություն: Օրինակ՝ Ի ապա թէ եւ լինին ուժեղ զօրական, Իբրեւ զարին Սամսոն տանն Իսրայէլեան, Եւ կամ զքաջն Սուշեղ, Վահրամ գովական, *Սապղար ասեն նմա եւ յոյժ անպիտան* (ՄԵԼ): Ես չեմ ցորեկվան օրսիկն, *Զիս կորսան ի մութ գիշերով* (Հ, 303): Եղեգնախունկ ես հոտով, *որ ծխեն ի սուրբ սեղանի* (ՄԹ): Իմաստունն ոչ երկընչի, *թէ հարկանեն զինքըն սրով* (ԿԵ, 88): *Տունսն լնուն բարով ի լի, Ուրախանան սիրով սրտի* (ՄՂ): Եթէ քան զՍողոմոն է իմաս-

⁹⁹ «Ավելի շատ են այն անորոշ-դիմավոր նախադասությունները,- նկատում է Պ. Վարդապետյանը,- որոնց գերադաս անդամը արտահայտված է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի երրորդ դեմքով» (Պ. Վարդապետյան, 1975, 135):

տաբան, Կամ իբր զՊղատոն եղեալ քաջաբան, Խօսի իմաստութեամբ Սոկրատա նման, *Մասսեն նմա թէ՛ Լո՛ւտ կացիր, ո՛վ անբան* (ՄԵԼ):

բ) Անցյալ ժամանակի գաղափար արտահայտող անցյալ կատարյալ, վաղակատար ներկա և հարակատար ներկա ժամանակաձևերով գերադաս անդամ ունեցող անորոշ-դիմավոր նախադասություններով, որպէս կանոն, արտահայտվում է իրական գործողություն: Օրինակ՝ Յամօթալի դառնա եւ թաթարին խան, Քանզի գորդին առեալ յՄտամպօլ *տարան* (ՄՂ): Չմանց զձեռն *կապեցին* Եւ շատք մագէն ի քարշ *բերին, Բերին* ի դուռն վիստեռին, Անտանելի *չարչարեցին* (ՄԹ): *Ասցին*, թէ՛ Մուտ հաւատ Հռոմին, Թէ չէ տանջենք անհնարին (ՄԹ):

Միջին հայերենին բնորոշ վերոնշյալ ժամանակաձևերից բացի՝ հոգնակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների՝ կազմությամբ պարզ գերադաս անդամներն արտահայտվում են նաև գրաբարի խոնարհման համակարգի ժամանակաձևերով, այդ թվում՝

1. սահմանական ներկայով՝ *Ասեն, թէ* կաթով է շաղուած Այդ ճերմակ ծոցիկդ, որ ունիս (Հ, 340): *Ասեն՝* եղուկըդ տար սիրով ջերմային, Երբ որ դուն յորդորելով մանրաքայլես. *Ասեն՝* արև ծագեաց ի մէջ գիշերվա, Երբ ջայլես յանկարծակի յերկրին երես (ԿԵ, 152): զի են, *ասեն*, անընդելք, մարդակերք, կիսանձունք, վիշապոտունք (ԹԿ, 281) և այլն:

2. Անկատար անցյալով՝ Մինչ հիւր որ գար *մեծարէին*, Եւ մինչ գնայր՝ *կողոպտէին* (ՊՄԱՓԹ, 120): Եւ *կարծէին* գնա մինակեաց (ՄԱԺ, 320): Երէկ ցորեկով բարով *Տանէին* մէկ եար մի ճորով: Ձնա ճորով է տարած, Կամ խաբած է զինք դրամով (Հ, 45): Որ ամէն օր զինքն կարդային, Թէ ո՞նց եղաւ կամ ո՞նց գնաց (ՄՊ): Եւ յորժամ *սաստէին* նմայ, նա ասաց, թէ դա ուսոյց զիս ՚ի գողութիւն (ՎԱԱ): Չայս վայելուչ գեղ, *ասէին*, ոչ է պարտ հանել ի վայելչութեանց աշխարհի (ԳՄ, 13):

3. Վաղակատար-հարակատար ներկայով՝ Վասն այն *գրեալ են*, թէ հողն ամենայն տարերաց մայրն է (ՅՈՀ, 367):

Յետոյ եւ գնա *են ըմբռնեալ*,

ՅԱմիթ քաղաքն գնա *բերեալ*,

Զմորթին յիւրմէն իբր գտիկ *հանեալ*,

Եւ պիղծ մարմինն հրով *այրեալ* (ԱՍ) և այլն:

4. Անցյալ դերբայով, որ, ըստ մեր դիտարկման, բացառիկ կիրառություն ունի և հաճախադեպ չէր գրաբարում ևս՝ Եւ տարեալ եդին ի բանտի

և զմանս *յերկաթի հարեալ*, և զմանս բրածեծ արարին (ԹՄԼԹ, 40):

Ինչպես տեսնում ենք, գրաբարյան խոնարհված ձևերով գերադաս անդամ ունեցող անորոշ-դիմավոր նախադասությունների արտահայտության միջոցները սահմանափակ են, և դրանց գործածությունը հիմնականում խոսքը ռճավորելու նպատակ ունի:

Ասվածին հակառակ՝ անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները գերազանցապես արտահայտվում են միջին հայերենի խոնարհման համակարգի մի շարք բայաձևերով: Անշուշտ, սա առաջին հերթին վկայում է այն մասին, որ հիշյալ նախադասությունները բնորոշ էին խոսակցական նոր հիմքով առանձնացող միջին հայերենին և ունեին նաև գրաբարից տարբեր արտահայտության միջոցներ¹⁰⁰:

Եզակի թվի 3-րդ, հոգնակի թվի 2-րդ և 3-րդ դիմային ձևերով հանդես եկող գերադաս անդամներն առանձնանում են արտահայտության եղանակաժամանակային ձևերի սահմանափակությամբ, իսկ նրանցով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունները՝ գործածության տարբեր հաճախականությամբ:

Միջինհայերենյան բնագրերում գործողություն կատարողի անորո-

¹⁰⁰ Դիմավոր ձևերից բացի՝ միջին հայերենում ընդունված էր չափածո խոսք կառուցել նաև անցյալ դերբայով: Հայտնի են այդօրինակ լուծումով՝

ա) մի շարք փոքր կտավի ստեղծագործություններ, ինչպես՝

Բանն ի չօրէ առաքեալ,

Եւ յարգանդ Կուսին բնակեալ,

Առեալ յարենէ Կուսին,

Եւ անշուշտ ընդ Բանին խառնեալ ... (Հ, 319):

... Թանձր Աստուած ի փայտ բևեռեալ,

Կողըն սրահերձ եղեալ,

Ջուր 'ւ արիւնն զմեզ նորոգեալ,

Ի եօթն անգամ ձայն ածեալ,

Որ զեօթանց կենցաղս յօրինեալ,

Անեղն Աստուած մարդ եղեալ,

Նմա պարտ էր զայս ներգործեալ ... (Հ, 401-402) և այլն,

բ) ամբողջական պոեմներ, մինչև անգամ՝ չափածո պատմություններ (խոսքը Ներսես Շնորհալու «Վիպասանութիւն» և Վահրամ Բարունու «Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» ստեղծագործությունների մասին է, որոնցից վերջինում հանդիպում են անցյալ դերբայով արտահայտված անորոշ-դիմավոր կառույցներ նույնպես):

շուրջյան գաղափար արտահայտող այդ նախադասություններից առավել հաճախադեպ են հոգնակի թվի 3-րդ, քան եզակի 3-րդ և հոգնակի 2-րդ դեմքերով արտահայտվող նախադասությունները: Դա պայմանավորված է նրանով, որ՝

1. եզակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները գուտ միջինհայերենյան լեզվական իրողություն են և լայն տարածում չունեն. հանդիպում են միայն առանձին հեղինակների (Ամիրդովլաթ Ամասիացի, Սմբատ Սպարապետ) գործերի բազմաբարդ կառույցներում և ծառայում են որպես խոսքի ոճավորման միջոց: Դրանք ավելի շատ վկայում են հիշյալ հեղինակների անհետևողականության մասին:

2. Հոգնակի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները արտահայտվում են միայն հրամայական եղանակի 2-րդ դիմային ձևով և սովորաբար ունեն հրամայական, սակավ դեպքերում՝ հորդորական հնչերանգ: Այդ նախադասությունները խոսքի շղթայում գործածվում են միայն որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք, որով դիմում են անորոշ անձի կամ անձերի՝ հորդորելով կամ հրամայելով կատարել այս կամ այն գործողությունը: Լեզվական փաստերը վկայում են, որ հաղորդակցման ընթացքում նշված կարգի ուղղակիորեն մեջբերվող խոսքեր ոչ միշտ են անհրաժեշտ:

3. Հոգնակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները տեսականորեն կարող են հանդես գալ բոլոր եղանակաժամանակային ձևերով՝ բացի հրամայական ապառնուց, որը, ինչպես նշեցինք, ունի արտահայտության դիմային սահմանափակություն (միայն 2-րդ դեմք): Մինչդեռ հրամայական ապառնու համեմատությամբ՝ խոսքի շղթայում անհամեմատ հաճախադեպ են մնացած եղանակների բայաձևերով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունները, որոնք, ունենալով հոգնակի թվի 3-րդ դիմային ձև, ըստ անհրաժեշտության կարող են արտահայտել ոչ միայն հաստատական, այլև ընդակն ու այլ բնույթի գործողություններ: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս, որ հոգնակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները խոսքի շղթայում կարողանան ըստ անհրաժեշտության հանդես գալ թե՛ ուղղակիորեն ու անուղղակիորեն մեջբերվող խոսքերում և թե՛ դրանցից դուրս՝ տեղ գտնելով ոչ միայն արձակ, այլև չափածո ստեղծագործություններում: Օրինակ՝ Ելլա ոտիւքն ի խորանին, Զխորհուրդն

առաւ ի իւր ձեռին, Յանկարծակի գարկ ի գետին Եւ չար ոտիւք *կոխան արին* (ՄԹ): *Ատոր արեգակ ասեն*, Որ ցաթէ ի սար 'ի ի բլուր (Հ, 173): Յետոյ ի Թարվեզ ելնունք, *Որ ասեն Շահաստան է նայ* (Հ, 589): *Ճըշմարիտ և ըղորդ կասեն*, Որ կու տայ հոգի մեռածին» (ԹԼԿ, 911): Եւ հանց կու պիտի որ ի ցաւուն յառաջն երակ առնուն եւ ըստ ուժուն արին հանես (ԱՍՕԲ):

Գ. Անորոշ-դիմավոր նախադասություններ կարելի է կազմել ոչ բոլոր խոսքային իրադրություններում:

Միջին հայերենում հոգնակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններից էականորեն տարբերվում են հոգնակի 2-րդ դեմքով գերադաս անդամ ունեցող անորոշ-դիմավոր նախադասությունները ոչ միայն գերադաս անդամի դիմային արտահայտությամբ, այլև կառուցվածքային և բովանդակային մի շարք առանձնահատկություններով¹⁰¹, որոնց կանդրադառնանք ստորև: Այդ նպատակով քննության առնենք միջինհայերենյան հետևյալ խոսքահատվածի վերջին երեք բարդ կառույցների կազմում առկա անորոշ-դիմավոր նախադասությունները (ընդգծվում և համարակալվում են), որոնցից 1-ին և 3-րդ նախադասությունները կազմված են, համապատասխանաբար, հոգնակի 3-րդ, իսկ 2-րդ նախադասությունը՝ հոգնակի 2-րդ դեմքի գերադաս անդամներով՝ «Այրի կին մի ուներ գտղայ մի. եւ սկսաւ գողանալ միրք եւ բանջար. եւ մար նորա ուրախութեամբ ճաշակէր եւ ոչ խրատէր 'ի կամս Աստուծոյ. եւ սովորեցաւ տղայն եւ փոքր փոքր աճեցաւ 'ի գողութիւն. եւ բերէր անասունս եւ այլ անօթս, եւ աճեալ եղէ արագակ 'ի լերինս եւ բազում չարիս առնէր. 1. *եւ կայեալ տարան 'ի կախել:* Եւ նայ ասէ, թէ 2. *բերէք զմար իւ*, զի համբուրեցից զնայ: 3. *Եւ իբրեւ բերին* եւ նա խաճեալ եհատ զքիթն մօրն» (ՎԱԱ):

Վերոհիշյալ հատվածից դուրս՝ «բերէք զմար իւ» նախադասությունը թերի է երկու առումով՝ ա) չունի ենթակա, բ) գործածվել է առանց հեղի-

¹⁰¹ Հիշյալ կարգի միակազմ նախադասությունները գրական հայերենին բնորոշ են դեռևս գրաբարից: Ասվածի մասին վկայում են 5-րդ դարի հայերեն բնագրերում և թարգմանական գրականության մեջ առկա լեզվական փաստերը (Առավել մանրամասնորեն տե՛ս Գ. *Խաչատրյան*, 2002, 27-32): Այդօրինակ նախադասություններ հանդիպում են նաև միջին հայերենի ենթաշրջանի ավանդված գրաբար լեզվական աղբյուրներում, ինչպես՝ Նենգաուր թագաուրն պատուէր տուեալ էր՝ Թէ դառնայ, *նայ զնան ի բալաղօզս տուք*, որ մոլորի և մեռանի: Եւ այսպէս արարեալ կորուսին զնա (ՀՀՄԱՔ, 496):

նակի խոսքի: Վերջինիս բացակայության պատճառով անհնար է ենթադրել՝ «բերէ՛ք զմար ին» նախադասությունը միակա՛զմ է, թե՛ երկկազմ: Բանն այն է՝ հիշյալ նախադասությունը տեսականորեն կարող է գործածվել և՛ միակազմ, և՛ երկկազմ նախադասություններում, նայած այն բանին, թե ինչ կազմություն ունի հեղինակի խոսքը: Այսպես՝ եթե խոսքային որոշակի իրադրության մեջ «բերէ՛ք զմար ին» ուղղակիորեն մեջբերվող խոսքի համադրությամբ գործածված¹⁰² հեղինակի խոսքում բառային-քերականական արտահայտություն ունի նաև հանգման (հաղորդման) խնդիր, ապա «բերէ՛ք զմար ին» նախադասությունը կունենա երկկազմ կառուցվածք: Օրինակ՝ «Եւ նա ասէ պահնորդացն, թէ բերէ՛ք զմար իմ» կառույցի ուղղակիորեն մեջբերված խոսքը երկկազմ թերի նախադասություն է, և դա՝ շնորհիվ պահնորդացն հանգման խնդրի¹⁰³: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել այդ թերի նախադասության ենթական (դուք): Մինչդեռ եթե «բերէ՛ք զմար ին» նախադասությունը գործածենք որոշակի խոսքային իրադրության մեջ և դարձյալ հեղինակի խոսքի համադրությամբ, սակայն առանց հիշատակելու հանգման խնդիրը, ապա ուղղակիորեն մեջբերվող խոսքը կվերածվի միակազմ կառույցի: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հեղինակի խոսքում առկա հանգման խնդիրը որոշակիացնում է, թե ով է մեջբերվող խոսքի ենթական, իսկ առանց հանգման խնդրի առկայության հնաավոր չէ հստակեցնել, թե ուղղակիորեն մեջբերվող նախադասության մեջ որոշակիորեն ով է այդ խոսքի հասցեատերը, ում է ուղղված խոսքը: Այսպես՝ «Եւ նա ասէ, թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) նախադասության կազմում հանգման խնդրի բացակայության պատճառով խոսքի հեղինակի

¹⁰² Հեղինակի խոսքը տեսականորեն կարող է նախորդել կամ հաջորդել ուղղակիորեն մեջբերվող խոսքին և կամ էլ ընդմիջարկել այն:

¹⁰³ Այս նույն ձևով, սակայն շնորհիվ նայիպնոյն հանգման խնդրի, երկկազմ է նաև հետևյալ բարդ կառույցի «և տանէին» նախադասությունը՝ Թագաւոր մի կայր եւ մէկ որդի ունէր եւ հրաման արար նայիպնոյն, թէ յամէն օր մէկ մի զին օրդին 'ի պատիւ տարէք. եւ տանէին (ՎԱԱ): Հմմտ. նաև «Տեսան զնայ այնպէս ձեռովն քաղաքն ամենայն, ժողովեցան եւ ասեն մէկ մէկի զնորայ արմացքն. եկէք տեսէք. զի սատանայ, որ խաբեաց զԱդամ եկեալ 'ի քաղաքս մեր» (ՎԱԱ) կառույցը, որի հեղինակի խոսքում բառային-քերականական արտահայտություն ունի մէկ մէկի հանգման խնդիրը: Այսպէս նաև՝ Եւ ասէ Թորոս զՄանդալէի որդիքն, եթէ՝ «Բերէք առ իս զԳազկայ թուրն, և հանդերձն հայոց թագաւորին»: Եւ նոքա բերին (ՄՈՒ, 399):

գործողությունը որոշակի հասցեատեր չունի, և խոսքային իրադրությամբ պայմանավորված՝ հասցեատեր են ենթադրվում անորոշ անձինք, որոնց էլ ենթադրաբար կարելի է հասցեագրել խոսքը: Ուղղակիորեն մեջբերվող խոսքերը այս կարգի կառույցներում անորոշ-դիմավոր միակազմ են:

Հատկանշական է նաև այն, որ որոշակի խոսակից կամ խոսակիցներ նշող հանգման խնդրի բացակայությամբ պայմանավորված՝ ուղղակիորեն մեջբերվող այս կարգի նախադասությունները, որպես կանոն, պատասխան խոսք չեն ենթադրում, հակառակ դեպքում այդ պատասխան խոսքը չի կարող լինել ուղղակիորեն մեջբերվող խոսքով արտահայտված գործողության համարժեք պատասխանը. չէ՞ որ պատասխան խոսքի դեպքում անհրաժեշտություն կառաջանար հեղինակի խոսքում անպայմանորեն հիշատակելու կամ (զեղչված լինելու դեպքում) ենթադրելու և վերականգնելու ենթական, մի բան, որը, հեղինակի խոսքում հանգման խնդրի բացակայության պայմանավորված, հնարավոր չէ: Այլ կերպ ասած՝ հոգնակի 2-րդ դեմքով արտահայտված և ուղղակիորեն մեջբերվող այս կարգի նախադասությունները երկխոսության բաղադրիչ եզր չեն կարող դառնալ, որովհետև որպես պատասխանողներ չեն կարող հանդես գալ որևէ անձ կամ անձինք, ում ենթադրաբար ուղղված է անորոշ-դիմավոր նախադասությամբ արտահայտված մեջբերվող խոսքը¹⁰⁴: Ասվածը միաժամանակ հիմնավորումն է այն բանի, որ «Եւ նա ասէ, թէ *բերէ՛ք զմարտիս*» (ՎԱԱ) կառույցի ընդգծված և նմանատիպ նախադասությունները ոչ թե թերի (տվյալ դեպքում՝ զեղչված ենթակայով երկկազմ), այլ անորոշ-

¹⁰⁴ Ուղղակիորեն մեջբերվող խոսքով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը ավելի հաճախ հանդես է գալիս դիմավոր բայի հոգնակի թվի 2-րդ դեմքով, սակայն այն կարող է գործածվել նաև եզակի թվի 2-րդ դեմքով: Այսպես՝ աստվածաշնչյան «Եւ ասէ Յովրամ. լծեա» նախադասության կազմում չի հիշատակվում, թե ում է ուղղված խոսքը (հանգման խնդիրը բացակայում է), սակայն խոսքային իրադրությունից ենթադրվում է, որ Հովրամի հրամանը (*լծեա՛*) ո՛չ որոշակի անձի է ուղղված, ո՛չ էլ ընդհանրական բնույթ ունի. ուղղված է անորոշ անձի (կամ անձերի): Ասվածի վկայությունը հենց հաջորդ նախադասությունն է՝ «Եւ լծեցին կառս», որը նույնպես, ինչպես և նախորդ նախադասությունը, անորոշ-դիմավոր է, քանի որ նրանում արտահայտված գործողությունը կարելի է վերագրել անորոշ անձի կամ անձերի, բայց ոչ որոշակի անձանց (ինչպես երկկազմ նախադասություններում է) կամ ընդհանրապես բոլորին (ինչպես ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններում է):

դիմավոր նախադասություններ են, քանի որ նրանցում բացակայում է ենթական, և այն հնարավոր չէ վերականգնել: Նկատենք սակայն, որ թեև հետևյալ մեջբերվող խոսքում (ընդգծվում է) չի հիշատակվում հաղորդման խնդիրը, սակայն նրան անմիջապես հաջորդող հատվածում պատումի հեղինակը գործածում է ոչ թե անորոշ-դիմավոր, այլ երկկազմ նախադասություններ՝ Յորժամ մեռանէր Աղէկսանդր, նա՛ ւաւիթ արար [ո՛ւմ-Գ.Խ.], թէ *զիս իմ տունն տարէք եւ իմ դարպասին արջեւ եւ Ռ. մարդ մերկացուցէք եւ չուլ հագուցէք եւ Ռ. մարդ ոսկի սինով ակն եւ մարգարտով եւ Ռ. ձիոյ ազին եւ բաշն խուզեցէք եւ գէշ եւ բիշիկ, աղեղ եւ ռումպ ՚ի վերայ կապեցէք եւ ՃՌ. սրաւոր յառաջ ուղարկեցէք. եւ նոքա* [ովքե՞ր-Գ.Խ.] նոյնպէս *արարին եւ տարան* (ՎԱԱ): Վերջիններս, ըստ էության, նախորդ միակազմ նախադասությունների տրամաբանական շարունակությունը չեն. *նոքա* ենթական այս դեպքում գործածվել է անհետևողականության հետևանքով: Ու թեև «եւ *նոքա* նոյնպէս *արարին եւ տարան*» բարդ կառույցի բաղադրիչ նախադասությունները կառուցվածքով երկկազմ են, սակայն բովանդակության պլանում մնում են միակազմ, քանի որ հնարավոր չէ ենթադրել, թե նրանցում որոշակիորեն ովքեր են *արարին* եւ *տարան* գործողությունների իրական կատարողները:

Կարելի է առանձնացնել նաև «... դատաստանաւ *գնացին* ի տունն Ազիզբոյին եւ որչափ բարութիւն մնացեալ էր յետ մահուանն իւրոյ եւ *ի գիր առին՝* եթէ ոսկի. եւ թէ արծաթ. եւ թէ տանտանեղն» բարդ կառույցը, որի կազմում առկա *դատաստանաւ* միասնության խնդիրը թեև պատկերացում է տալիս «դատաստանաւ գնացին ի տունն Ազիզբոյին» և «*ի գիր առին՝* եթէ ոսկի. եւ թէ արծաթ. եւ թէ տանտանեղն» նախադասությունների ընդգծված գործողությունները կատարողների մասին (դատարանի անդամներից են), սակայն, միևնույն է, այդ նախադասությունները մնում են անորոշ-դիմավոր, քանի որ հնարավոր չէ ենթադրել, թե որոշակիորեն ովքեր *ի գնացին* և *ի գիր առին* Ազիզբոյի տան գույքը: Այսպես է նաև «Այսօր եղեր ողորմելի Եւ կոծելի, Բիւզանդիա. *Որ յամենայն տեղ լլսեցին Ջրո դառնութիւնդ, Բիւզանդիա*» (ԱՌԲ) կառույցի ընդգծված նախադասության մեջ, որի *ամենայն տեղ լլսեցին* չի նշանակում «ամեն տեղ *բոլորը լսեցին*», ուստի այդ նախադասությունը համարվում է ոչ թե երկկազմ կամ ընդհանրական-դիմավոր, այլ անորոշ-դիմավոր:

2-րդ դեմք ունեցող անորոշ-դիմավոր կառույցերը գործածվում են

միայն հեղինակի խոսքի համադրությամբ: Ասել է՝ խոսքի մեջ նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր, ինչն անմիջականորեն պայմանավորված է նաև նրանցում արտահայտվող գործողության բովանդակությամբ: Բանն այն է՝ 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններում արտահայտվում են առօրյա, իրավիճակային, բայց աներկբայորեն կատարելի գործողություններ խոսելու պահից անմիջապես հետո (որոշակիորեն նշվում կամ խոսքային իրադրությունից ենթադրվում է գործողության կատարման ժամանակը), մինչդեռ ընդհանրական-դիմավոր կառույցներով գերազանցապես արտահայտվում են առածական, սովորությանի մտքեր, որոնք չեն ենթադրում կատարման որոշակի ժամանակ, այլ ենթակա են կատարման առհասարակ կամ երբևիցե՝ Եւ Յոհաննես սուրբ առաքեալն Հրամայէ նման նմին. Թ՝ *ամէն մարդոյ մի հաւատայք, Այլ ընտրեցէք զչար եւ զբարին* (ՄՂ):

Հրամայական եղանակի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններին բնորոշ է մեկ այլ առանձնահատկություն ևս. նրանցում արտահայտված հրամանը կամ հորդորը կատարելու կամ չկատարելու մասին սովորաբար հիշատակվում է տվյալ խոսքային հատվածին հաջորդող մեկ այլ նախադասության մեջ, որը նույնպես անորոշ-դիմավոր կառույց է, սակայն նրա գերադաս անդամն արդեն ունի ոչ թե հոգնակի 2-րդ, այլ հոգնակի 3-րդ դեմք: Օրինակ՝ «Եւ նա ասէ. թէ *բերէ՛ք զմար իս*» (ՎԱԱ) բարդ կառույցին հաջորդում է նրան տրամաբանական, պատճառահետևանքային կապակցված մեկ այլ անորոշ-դիմավոր նախադասություն, ինչը ևս 2-րդ դեմքով արտահայտված «*բերէ՛ք զմար իս*» կարգի նախադասության միակազմ լինելու հիմնավոր փաստարկ է: Ահա այդ խոսքային հատվածը. Եւ նա ասէ. թէ *բերէ՛ք զմար իս՝* զի համբուրեցից զնա: *Եւ իբրև բերին*, և նա խածեալ եհատ զքիթ մօրն (ՎԱԱ), որում ընդգծված և՛ առաջին, և՛ երկրորդ նախադասություններով արտահայտված գործողությունները ենթադրաբար վերագրվում են անորոշ անձանց կամ անձի: Ահավասիկ նմանատիպ այլ շարահյուսական կառույցներ նույնպես, որոնք վկայում են մեր առաջարկած դրույթի՝ խնդրո առարկա նախադասություններին բնորոշ լինելու մասին՝ Եւ թագաւորն ետես իւրեանց անմտութիւնն եւ բարկացաւ. հրամայեաց, թէ *սպանէք զոռսա. եւ սպանին* (ՎԱԱ): Եւ լվեալ թագաւոր եւ ասաց, թէ *մարդ մի գտէք*, որ .Ռ. դրամ առնու եւ երթայ եւ ՚ի .Գ. օրն խապար բերէ. *եւ գտին այր մի կախարդ* (ՎԱԱ): Եւ եղև ինքն հի-

լանդացաւ. եւ հրեշտակն երեւեցաւ 'ի տակ յոտիցն իւր. եւ իմացաւ, զի պիտի մեռանէր, եւ ասէ այրն. *շրջեցէք զսնարքն. եւ շրջեցին* (ՎԱՍ):

Սակայն ուղղակիորեն մեջբերվող միակազմ խոսքին ոչ միշտ է հաջորդում 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություն: Երբեմն, երբ հեղինակը խուսափում է դեպքերի մանվածապատ նկարագրությունից, 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությամբ արտահայտվելիք տեղեկությունը չի նշվում, որից, անշուշտ, խոսքի բովանդակային պլանը չի խաթարվում: Այսպես՝ «Վարդապետ մի գովեցին մօտ պարոն Բուրթելն, թէ յոյժ համբերէ. ասէ՝ գնացէք եւ բերէք. որ փորձեմ: Երբ 'ի դուռն երեկ, տեսաւ զնա, ասէ՝ երթ 'ի բաց, յիմար ..», եւ նա լռութեամբ 'ի բաց գնաց» (ՎԱՍ) խոսքային հատվածում բացակայում է սպասվող *«Եւ գնացին եւ բերին զվարդապետն»* նախադասությունը, սակայն դեպքերի ընթացքից այդ նախադասությամբ արտահայտվելիք միտքը ենթադրվում է. վարդապետը եկել է, և պարոն Բուրթելը տեսել է նրան: Նույն բանն առկա է նաև հետևյալ խոսքային հատվածում, որում բառային արտահայտություն չունի *«եւ ետուն նմա թագ եւ իմ մասուրայքս եւ առէչս ինձ հեծելք եւ ժողովուրդ»* նախադասությունը՝ [Ջ]ուլիակ մի ասաց, թէ Աստուած զմարդն թագաւոր է ստեղծեր. եւ ես այլ թագաւոր եմ [յ]իմ յանձինս. *եւ տուք ինձ թագ եւ իմ մասուրայքս եւ առէչս ինձ հեծելք եւ ժողովուրդ*. եւ երթամ խնդրեմ հնդկաց թագաւորին դուստրն ինձ կնութիւն: Եւ գնաց առ հնդկաց թագաւորն եւ ասէ. տուր ինձ զքո դուստրն 'ի կնութիւն (ՎԱՍ):

Հրամայական հոգնակի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են այնպիսի իրադրությունների նկարագրություններում, որոնցում խոսողը ուղղակի խոսքով դիմում է ներկա, սակայն անորոշ անձանց: Դա տեղի է ունենում գերազանցապես այն պատճառով, որ նման իրադրություններում կարևորվում է խոսողի կողմից հրամայված գործողությունը, մինչդեռ հասցեատիրոջը կամ հասցեատերերին հիշատակելու հանգամանքը մղվում է հետին պլան: Ենթադրյալ հասցեատերը կամ հասցեատերերը ընդամենը կատարում են իրենց ուղղված գործողությունը՝ առանց երկխոսության մեջ մտնելու խոսողի հետ, քանի որ տվյալ դեպքում տեսականորեն հնարավոր չէ, որ երկխոսություն կայանա (անորոշ հասցեատերը պատասխան խոսքին զուգորդվող հեղինակի խոսքում չի կարող հանդես գալ որոշակի ենթակայի դերում):

Վերը կատարած քննությամբ հանգում ենք մի կարևոր եզրակացու-

թյան. ի տարբերություն ընդհանրական-դիմավոր նախադասությունների, որոնք կարող են գործածվել նաև խոսքային իրավիճակներից դուրս, իսկ նրանցից 2-րդ դեմքով արտահայտվածները՝ նաև առանց հեղինակի խոսքի, անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են որոշակի խոսքային իրավիճակում: Նրանցում արտահայտվում են տվյալ խոսքային հատվածի տրամաբանությունից բխող մասնակի, առօրյա, իրավիճակային, տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված ու նրանով սահմանափակվող գործողություններ:

Ի տարբերություն 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների՝ 2-րդ դեմքով արտահայտվող անորոշ-դիմավորներն առանձնանում են սահմանափակ կիրառությամբ: Սա պատճառաբանվում է նրանով, որ դրանք գործածվում են՝ ա) խոսքը ոճավորելու նպատակով, բ) գերազանցապես արձակ ստեղծագործություններում, բ) որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք: Օրինակ՝ Եւ յորժամ մեռաւ [ումն տանուտէր-Գ.Խ.], յայտնեցաւ, թէ պարտական է. եւ լուեալ կայսերն ասաց. *բերէք զանկողին նորս*. զի այն զօրաւոր է եւ քուն բերէ մարդոյ (ՎԱԱ):

Եզակի և հոգնակի թվի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների մասին հանգել ենք մի շարք եզրահանգումների:

1. Կախված խոսքային իրադրությունից և հեղինակի խոսքի կազմությունից՝ հրամայական եղանակի բայաձևերով կարող են արտահայտվել ոչ միայն երկկազմ և ընդհանրական-դիմավոր, այլև անորոշ-դիմավոր նախադասություններ:

2. Անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են նաև ուղղակիորեն մեջբերվող խոսքերում, որոնք արտահայտվում են անձնանիշ ենթակաների կապակցվելու հնարավորությամբ օժտված անդիմասահմանափակ բայերի հրամայական եղանակի եզակի կամ հոգնակի թվի 2-րդ դեմքերով:

3. Գերադաս անդամի կազմությունից բացի՝ եզակի և հոգնակի թվի 2-րդ դեմքով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները բնորոշվում են միևնույն առանձնահատկություններով¹⁰⁵, սակայն եզակի թվի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններ միջինհայերեն-

¹⁰⁵ Այս համոզումն ունենք զրաբարի և ժամանակակից հայերենի նմանօրինակ նախադասությունների ուսումնասիրությունից հետո:

յան աղբյուրներում չեն հանդիպում:

4. 2-րդ դեմքով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները խոսքային այլ իրադրություններում կարող են հանդես գալ որպես երկկազմ կառույցներ:

5. Ուղղակիորեն մեջբերվող նախադասությունների միակազմ կամ երկկազմ լինելը պայմանավորված է երեք հանգամանքով՝ ա) տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ կամ նրանից դուրս գործածվելը, բ) հեղինակի խոսքում հանգման խնդրի՝ բառային-քերականական արտահայտություն ունենալը կամ բացակայությունը և գ) տվյալ նախադասության իմաստային կողմը¹⁰⁶. նրանցում արտահայտվում են տվյալ խոսքային հատվածի տրամաբանությունից բխող մասնակի, իրավիճակային, տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված և նրանով սահմանափակվող գործողություններ և ոչ թե բոլորին վերաբերող խորհուրդ կամ պատգամ:

6. 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասության զուգորդությամբ հանդես եկող հեղինակի խոսքում հանգման խնդիրը, որպես կանոն, բառային-քերականական արտահայտություն չունի և չի ենթադրվում, որն էլ հիմք է դառնում, որ ուղղակիորեն մեջբերվող խոսքը կառուցվածքով լինի ոչ թե երկկազմ, այլ միակազմ:

7. 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների կազմում չի կարող լինել ոչ միայն ենթակա, այլև կոչական: Բանն այն է՝ այդ նախադասություններին զուգորդվող հեղինակի խոսքում, որպես կանոն, բացակայում է հանգման խնդիրը, որը, ինչպես նաև մեջբերվող խոսքի ենթական ու կոչականը մատնանշում են միևնույն անձին կամ անձերին և բնորոշվում թվի քերականական կարգի համաձայնությամբ:

8. 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, հակառակ դեպքում անհնար կլիներ հիշատակել պատասխան խոսքի զուգորդությամբ հանդես եկող հեղինակի խոսքի ենթական, ասել է՝ այդօրինակ անորոշ-դիմավոր նախադասություններ ընդգրկող երկխոսություններ սովորաբար չեն ձևավորվում, հակառակ դեպքում դրանք չեն լինի հիշյալ նախադասություններով արտահայտված գործողություններին համարժեք պատասխաններ:

¹⁰⁶ Հմմտ. *Գ. Խաչատրյան*, 2002, 58:

9. Խնդրոք առարկա միակազմ նախադասություն պարունակող խոսքային հատվածներին բնութագրական է և այն, որ նրանք եզրափակվում են մեկ այլ անորոշ-դիմավոր նախադասությամբ, որը տեղեկություն է տալիս 2-րդ դեմքով արտահայտված հրամանի կամ հորդորի կատարման կամ չկատարվելու մասին: Մակայն չհանդիսանալով ուղղակիորեն մեջբերվող խոսք՝ այդ նախադասություններն արտահայտվում են ոչ թե հոգնակի թվի 2-րդ, այլ հոգնակի թվի 3-րդ դեմքով և կարող են հանդես գալ թե՛ որպես անկախ միավոր, թե՛ բարդ նախադասության կազմում:

10. 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են միայն հեղինակի խոսքի գուգորդությամբ, նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր:

11. 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են այնպիսի իրադրությունների նկարագրություններում, որոնցում արտահայտվում է անմիջական կատարման ենթակա հրաման, հորդոր կամ խնդրանք: Խոսողը ուղղակիորեն մեջբերվող խոսքով դիմում է ներկա, սակայն անորոշ անձի կամ անձանց՝ հրամայելով, հորդորելով կամ խնդրելով կատարել այս կամ այն որոշակի գործողություն:

12. Եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքով ուղղակիորեն մեջբերվող անորոշ-դիմավոր նախադասությունները բնորոշ են ոչ միայն ժամանակակից հայերենին, այլև գրական հայերենի նախորդ երկու շրջաններին՝ գրաբարին և միջին հայերենին: Այդ կարգի նախադասությունները հատուկ են նաև ժամանակակից ռուսերենին և այլ լեզուների:

13. Հիշյալ նախադասությունները լայն տարածում չունեն, սակայն գործածական են թե՛ խոսակցական մակարդակում և թե՛ գրավոր խոսքում, մասնավորապես՝ պատմական բնույթի գեղարվեստական ստեղծագործություններում և ժողովրդական բանահյուսության մեջ (հեքիաթներ, առակներ)՝ դառնալով խոսքի ոճավորման միջոց:

Անորոշ-դիմավոր նախադասություններում ենթակայի բացակայությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք ի հայտ են գալիս հիշյալ միակազմ նախադասությունների և նրանց նախորդած խոսքային հատվածների դիտարկմամբ: Այսպես՝

1. հետևյալ առակում անձնավորված աղվեսը ստում է, ուստի խոսքում որոշակիություն մտցնելուց խուսափելով՝ գործածում է անենթակա (տվյալ դեպքում՝ անորոշ-դիմավոր) նախադասություն (ընդգծվում է)՝ ի

հաքիմի շուրջ կու գայի եւ դեղ հարցանէի. եւ *ասացին*, թէ զարջուն մորթն քերթել մինչ ՚ի ծնկվին եւ մինչ ՚ի շլնիքն եւ արկանեն ՚ի վերայ թագաւորին. եւ լանայ (ՎԱԱ):

2. «Բայց ՚ի գիշերն քարշէին զկամուրջն. եւ որ ՚ի գիշերն գայր, ՚ի վիհն անկանէր» (ՎԱԱ) բարդ կառույցի առաջին նախադասութիւնը կառուցվածքով անորոշ-դիմավոր է, քանի որ պատումի հեղինակը՝ ա) չգիտի *քարշէին* գործողության որոշակի կատարողներին և բ) հարկ չի համարում նաև գործածել *պահապանք, զինուորք* կամ նմանատիպ որևէ ենթակա: Նույնը կարելի է ասել նաև «Զքո Տէրն ի կողէն խոցեցին» (Հ, 502) անորոշ-դիմավոր նախադասության մասին:

3. «... Այսօր ի սուգ մըտեալ ողբայ Զի գերեցին զքեզ, Շտըմպոլ» (ԱՌԲ) բարդ կառույցի միակազմ նախադասության ենթական (*թուրքական գորքերը*) հեղինակը չի հիշատակում տվյալ ժամանակաշրջանում հանրահայտ լինելու պատճառով:

4. *Զիմ էարն յիսնէ գատեցին, Թոռմեցայ զէտ վարդի տերև, Տարին, այլ յերկիր հանին*, Զի ցաթեց իմ սիրտըս արև (Հ, 199) կառույցում կարևորվում է գործողությամբ արտահայտված տեղեկությունը, իսկ այն կատարողի մասին տեղեկությունը համարվում է ավելորդ, անկարևոր: Հմմտ. նաև՝ *Կտրեն զան հաւուն ջըլնին*, Որ պէվախտ ատեն խօսեցաւ (Հ, 190): *Թէ զան՝ տան հազար կարմիր*, Քո մազէդ մազ մի չի փոխեմ (Հ, 188):

5. «Եւ աճեալ եղև աւազակ ՚ի լերինս եւ բազում չարիս առնէր. եւ կալեալ տարան ՚ի կախել: Եւ նայ ասէ, թէ *բերէք զմար իս*, զի համբուրեցից զնայ» խոսքային հատվածի «Եւ նայ ասէ, թէ *բերէք զմար իս*» նախադասության ենթական չի հիշատակվում, քանի որ ավազակը իրականում կարող էր չճանաչել իրեն կալանավորողներին:

6. «Եւ թագաւորն ետես իրեանց անմտութիւնն եւ բարկացաւ. հրամայեաց, թէ *սպանէք զոռոս*. եւ սպանին» (ՎԱԱ) նախադասության մեջ թագավորը, իմանալով հանդերձ, թէ ով է իր խոսքի հասցեատերը, հարկ չի համարում նշել, թէ որոշակիորեն ում է ուղղված իր հրամանը, քանի որ տվյալ խոսքային իրավիճակում նրա համար էական է մատնանշել միայն կատարվելիք գործողությունը և այլն:

Անորոշ-դիմավոր նախադասությունների գործողությունը ենթադրաբար կատարողների թվի մասին կարելի է պատկերացում կազմել՝ յուրաքանչյուր առանձին նախադասության կամ խոսքային հատվածի բո-

վանդակությամբ պայամանավորված, քանի որ գերադաս անդամի արտահայտության պլանից հնարավոր չէ ենթադրել: Այսպես՝ հայրեններից մեկի «Եկին ու խապար բերին» սկսվածքով տողին հաջորդող բանատողում (ընդգծվում է) հեղինակն ինքն է նշում գործողությունը մեկ անձի կողմից կատարված լինելու մասին: Ահա՝ Եկին ու խապար բերին, *Թող լեզուն չորնայ բերողին*, Քո եարն ի Պուռսայ քաղաք Նայ տեսաք ի մեջ շուկային (Հ, 178):

Դիտարկումները ցույց են տալիս, որ՝

1. Բազմաթիվ անորոշ-դիմավոր նախադասություններում գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել մեկից ավելի անորոշ անձանց: Այսպես՝ «*Կու գան ու կու տան հազար*, Չե՛մ առնուր և գրեզ չե՛մ ի տար» (Հ, 55): «Մարդ մի գերեզմանակիտր. *օր մի զխաթուն մի թաղեցին շատ ընչիւք*. եւ ՚ի գիշերին եբաց զգերեզմանն» (ՎԱԱ): «Ի յօր մահուն հեծեծագին Վա՛յ ասելով հանէ զհոգին, *Առեալ մարմինն այն օտարին՝ Տարեալ դնեն ի տապանին*» (ԱՌԲ) կառույցների ընդգծված նախադասությունների գործողությունները ենթադրաբար կարող են կատարել միայն մեկից ավել անձինք:

Գործողության կատարումն ակնհայտորեն մեկից ավելի անձի է վերագրվել, և անորոշ-դիմավոր (ավելի ճիշտ՝ կիսաանորոշ-դիմավոր) պիտի համարել նաև հոգնակի 3-րդ դեմքով այն նախադասությունները, որոնցում գործողություն կատարողներից մեկն է հայտնի, մինչդեռ մյուսը կամ մյուսներն անհայտ են: Այսպես՝ հետևյալ խոսքահատվածում անձնավորված առյուծը «դիմում է» մի բժշկի, սակայն հաջորդ նախադասության գործողությունը կատարվում է անորոշ անձանց կողմից, որոնցից հայտնի է միայն բժիշկը՝ Գնաց առ բժիշկն եւ առիծն եւ ասէ, թէ մեծ զարմանք է. զի էշն այն ոչ սիրտ ունի եւ ոչ ականջ. իբրեւ *եկին տեսին*. զի ոչ ունէր, *զարմացան* (ՎԱԱ): Նույն բանն առկա է նաև հետևյալ խոսքահատվածում, որում առաջին նախադասությունը անորոշ-դիմավոր է, երկրորդը («եւ բացեալ զսնդունկն՝ *տեսին*») մասամբ է անորոշ-դիմավոր, քանի որ գործողություն կատարողներից առնվազն մեկին կարելի է ենթադրել և բառաքերականորեն վերականգնել (*վարդապետ*), մինչդեռ մյուս մասնակիցները չեն ենթադրվում, և հնարավոր չէ բառաքերականորեն վերականգնել՝ Եւ ՚ի լուանալն *գտին* բալանի մի յանթատակն եւ *տարան* առ վարդապետն. եւ բացեալ զսնդունկն՝ *տեսին*, զի սիրտ արիւնաթաթախ

կայր ՚ի վերայ ընչիցն. զի ճշմարտեալ է (ՎԱԱ):

2. Մի շարք անորոշ-դիմավոր կառույցների գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել մեկ կամ մեկից ավելի անորոշ անձանց: Այսպէս՝ հետևյալ կառույցի երկրորդ նախադասության *հատուցանել* և երրորդ նախադասության *սպանանել* գործողությունները կարող էին կատարել, համապատասխանաբար, դատավորը և դահիճը, սակայն երկու դեպքում էլ գործողության կատարումը ներկայացվել է որպէս անորոշ անձանց կատարած: Կամ՝ Եւ եկն դատաւորն ՚ի յադմուկն եւ հատուցին վիճիո մահու ՚ի վերայ մսայգործին եւ *սպանին* զնայ ՚ի զուր (ՎԱԱ)¹⁰⁷: Շուտով դեղ ու ճար արեք, *Որ չասեն*, թէ՛ «Անկի մեռաւ» (Հ, 76) և այլն:

3. Նկատելիորեն սակավադեպ են այն անորոշ-դիմավոր կառույցները, որոնցում որպէս գործողություն կատարող է ենթադրվում մեկ անձ՝ «Շիշէ մի հալած ոսկիդ *P գետինն ի վայր թափեցին*» (Հ, 62): «*Եկին ու խապար բերին*՝ «Քո սիրած մորձն զքեզ մոռցաւ» (Հ, 76): Եւ իր ստածումն այն է, զոր վերցնեն զինքն սունարայով եւ կտրեն (ԱԱՕԲ): Ֆալօսն ասէ, թէ դեղն այն է, որ երակ առնուն եւ լուծումն այնեն եւ զարիւնն սրբեն. եւ շաֆի տինարկուն քաշեն (ԱԱՕԲ): Եւ թէ ծեծածն հին լինայ՝ լաւն այն է, որ զինքն քերեն որ շատ արիւն երթայ (ԱԱՕԲ): Որոյ ոսկորն կտորի՝ *եւ կապեն*, եւ որ ի տեղացն էլնէ՝ *ի տեղն ձգեն* (ԱԱՕԲ): «Մեռաւ ոմն իշխան, որ ունէր բազում գանձս ոսկւոյ եւ արծաթոյ եւ յականց. եւ ո՛չ ասաց խոստովանահորն. եւ ՚ի լուանալն գտին բալանի մի յանթատակն եւ տարան առ վարդապետն» (ՎԱԱ) բարդ կառույցի «եւ ՚ի լուանալն գտին բալանի մի յանթատակն» նախադասության *գտին* և *տարան* գործողությունները իրականում կարող է կատարել մեկ անձ (չէ՞ որ բանալի գտնելը, կրելը, տանելը (և այլն) մեկ անձի կատարելիք գործողություն է), բայց միաժամանակ չի կարելի բացառել, որ՝ ա) այդ գործողությունները կարող էին նաև տարբեր անձեր կատարել, բ) չի բացառվում, որ բանալին փնտրելուն և վարդապետի մոտ գնալուն մասնակցած լինեն նաև այլ անձինք և այլն:

Կան անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, որոնցում նկարագրվում է միանգամայ գործողություն, որը գերազանցապէս արտահայտվում է անցյալ կատարյալ ժամանակաձևով.

¹⁰⁷ Հմմտ. նաև՝ Եւ տարաւ զնայ առ դատաւորն արքունի եւ չարչարեալ *սպանին* զնայ (ՎԱԱ):

Առին, ի հէքիմ տարան,

Նա ասաց, թէ՛ Ապրելու չէ (Հ, 64):

Զիմ եարն յիսնէ գատեցին,

Թառմեցայ զէտ վարդի տերև.

Տարին յայլ երկիր հանին,

Զի ցաթեց իմ սիրտն այլ արև (Հ, 108):

Եփեսոս, աթոռն Յոհաննու աւետարանչին, որ գրեաց զաւետարանն յետ Հ ամի վերանալոյն Քրիստոսի ի յոյն լեզու, *գոր յետոյ փոխեցին յԸստրմբոլ զայթոռն* (ԱՎՎ, 63): Թագաւոր՝ հրամայեա, զի *ցուցցեն ինձ զԱշոտ* (ՄՍՏ, 27): ... *երբ գանասունն կոտեն* նա իր միսն քնքուշ լինի, և նոյնպէս մարդկային բնութիւնն այլ (ԱՍՍ, 101): *Եւ թէ զտղին ձուզն հանեն և կտրեն* նա զիջութիւնն յանձն մնայ (ԱՍՍ, 101):

Միանգամայա գործողության մասին երբեմն վկայում են նախադասության համապատասխան անդամները, ինչպէս՝ *Տարպա մի* սիրու վերա Օեծեցին՝ կողերս երևաց (Հ, 233): *Երէկ ցորեկով բարով Տանէին մէկ եար մի ճորով* (Հ, 45):

Մինչդեռ հետևյալ անորոշ-դիմավոր նախադասության բովանդակությունից երևում է, որ նկարագրվող գործողությունը կատարվում է մեկից ավելի անգամ.

Կուզան ու կուտան հազար,

Չէ՛մ առնուր և զքեզ չէ՛մ ի տար (Հ, 55):

Թեև բերված բարդ կառույցների ընդգծված նախադասությունների գործողությունների կատարման հաճախականության մասին վկայող որևէ անդամ չի գործածվել, սակայն սրանց բովանդակությունից ենթադրվում է, որ գործողությունը, համապատասխանաբար, կատարվել է (*կանչէին*) կամ կատարվում է (*կուզան, կուտան*) բայաձևերի քերականական բազմմաստությունը:

Այս դեպքում նույնպէս կարող են գործածվել լրացուցիչ միջոցներ՝ ... զաւագ խորանի պատարագն *անխափան* յիմ Զաքարիայի անուն *մատուցանեն յայսմհետէ*. որ թիւ Հայոց է .ՌԾԹ. (ԿԿՑ, 51):

Հետաքրքրական է, որ նշված բոլոր դեպքերում կիրառվում է քերականական միևնույն միջոցը՝ հոգնակի թվի 3-րդ դեմքի բայաձևը, որով փաստացի կարելի է արտահայտել թէ՛ մեկ կամ մեկից ավելի անգամ, թէ՛ մեկի կամ մի քանիսի կողմից կատարվող, կատարված կամ կատարելի

գործողության գաղափար՝ առանց համապատասխան անդամի (ենթակա, պարագա և այլն) բառային-քերականական արտահայտության¹⁰⁸:

«Դատաստանագրքում» հանդիպում են միևնույն իրողությանը վերաբերող, սակայն կազմությամբ տարբեր նախադասությունների հետաքրքիր զուգորդումներով բարդ կառույցներ, որոնք կարելի է երկու ձևով մեկնաբանել: Խոսքը, օրինակ, հետևյալ բարդ կառույցների մասին է՝ «Նոյնպես եւ զնշխարն պատեհ է, որ առաջ եպիսկոպոսին տանին, որ խաչ հանէ եւ յառաջ ինքն առնու եւ հարկետրացն տայ, եւ ապա զայն երեցն բաժնէ ժողովրդեանն»: Մի դեպքում այդ կառույցի առաջին հատվածում գործածված անորոշ-դիմավոր միակազմ նախադասության («նոյնպես եւ զնշխարն առաջ եպիսկոպոսին տանին») *տանին* գերադաս անդամով և երկրորդ հատվածի երկկազմ նախադասության («... եւ ապա զայն երեցն բաժնէ ժողովրդեանն») *բաժնէ* ստորոգյալով արտահայտված գործողությունները կատարողը միևնույն *երեց* ենթական է, և կատարվի, որ երկրորդ նախադասությամբ բացահայտվում, հստակեցվում է նախորդ նախադասության գերադաս անդամով արտահայտված գործողության իրական կատարողը: Մյուս դեպքում կարելի է ենթադրել, որ միակազմ նախադասության *տանին* և երկկազմ նախադասության *բաժնէ* գործողությունների իրական կատարողները տարբեր անձինք են:

Բովանդակության պլանում անորոշ-դիմավոր նախադասություններին համանիշ են այն երկկազմ նախադասությունները, որոնցում ստորոգյալն արտահայտված է կրավորական սեռի բայով, սակայն բացակայում է ներգործման խնդիրը, և այն հնարավոր չէ ենթադրել կամ վերականգնել: Այսպես՝ «Եւ մին մարդն արգիլեցաւ եւ զօլերաց փոկեր կապեր եւ այլ ո՛չ հասաւ. *եւ դուռն քաղաքին փակեցաւ*՝ եւ ո՛չ կարաց մտանել» (ՎԱԱ): «*Սսի ՚ի պատմութեանց*. այր ոմն ունէր որդի մի եւ ըմբռնեցաւ ՚ի գողութեան» (ՎԱԱ) կառույցների ընդգծված նախադասություններում անհնար է ենթադրել, թե ում կողմից է կատարվել գործողությունը, քանի որ այդ մասին չի խոսվում խոսքի նախորդ և հաջորդ հատվածում նույնպես: Ասվածը լավագույնս հիմնավորվում է, երբ վերոնշյալ կարգի կրավորական կառույցները փոխակերպում ենք ներգործականների, որի արդյունքում ստացվում են անորոշ-դիմավոր նախադասություններ: Հմմտ. «

¹⁰⁸ Հմմտ. Գ. Խաչատրյան, 2013, 130-131:

և զուռն քաղաքին փակեցաւ՝ և ո՛չ կարաց մտանել» և « և զուռն քաղաքին փակեցին և ո՛չ կարաց մտանել»: « այր ոմն ուներ որդի մի և ըմբռնեցաւ ՚ի գողութեան» և « այր ոմն ուներ որդի մի և ըմբռնեցին ՚ի գողութեան»: Վերոնշյալ հաղորդակցական միավորների համանշտության մասին վկայում է նաև այն, որ հեղինակը միևնույն բարդ կառույցի մեջ շարահյուսական միևնույն իմաստն արտահայտում է մի դեպքում կրավորական երկկազմ, մյուս դեպքում՝ ներգործական միակազմ նախադասությունների միջոցով, ինչպես՝ Նա թէ չգայ լաւցնէ զիր արատն, նա թէ կարգաւոր լինի՝ նա *ձգուի* [=զնա ձգեն-Գ.Խ.] ի կարգէն և *վարուի* [=զնա վարեն-Գ.Խ.] յամէն երկրէն, և թէ աշխարհական լինի՝ նա *հաւնովրեն* զինքն և բանադրած *վարեն* (ՍՄԴ): Հմմտ. նաև՝ *Չկնակն ի ջրէն հանուի* [=հանեն-Գ.Խ.], *Ձուր ս՛ ալ ձգեն՝ նա ապրի* ¹⁰⁹ (Հ, 339) և *Ձձուկն ի ջրէն հանեն*, Նա տըտան տայ ու մեռանի, *Երբ զիս իմ էարէն զատեն*՝ Մեռնիմ ու այլ ճար մի չլնի (Հ, 339):

Ձևաիմաստային աղերսներ ունեն նաև անորոշ- և ընդհանրական- դիմավոր նախադասությունները. արտահայտվելով հիմնականում նույն միջոցներով (խոսքը միայն անձնանիշ գոյականներին կապակցվող բայերի եզակի թվի 2-րդ, հոգնակի թվի 2-րդ և հոգնակի թվի 3-րդ դեմքի բայաձևով հանդես եկող կառույցների մասին է¹⁰⁹)՝ նրանք իրարից տարբերվում են բովանդակության պլանով: Արտահայտության միջոցների նույնության փաստը ինքնին վկայում է, որ այդ երկու կարգի միակազմ նախադասությունների գերադաս անդամները կարող են արտահայտվել նույնիսկ միևնույն բայի նույն դիմաթվային ձևով: Այլ հարց է, թե տվյալ նախադասությունը խոսքային ի՛նչ իրավիճակում է գործածվում, և տվյալ գործողության կատարման համար քանի՛ անձ է ենթադրվում: Հենց այս երկու հանգամանքով պայմանավորված է այդ նախադասությունների բովանդակային տարբերությունը: *Ասել* բայի հոգնակի թվի 3-րդ դեմքի գերադաս անդամներով բազմաթիվ միակազմ նախադասություններում, օրինակ, գործողության կատարման համար մի դեպքում կարող են ենթադրվել մեկ կամ մի

¹⁰⁹ Նշված երկու տիպի նախադասություններն արտահայտության պլանում իրարից տարբերվում են նաև նրանով, որ անորոշ-դիմավորների գերադաս անդամը կարող է արտահայտվել նաև կենդանանիշ գոյականներին կապակցվող բայերի հոգնակի թվի 3-րդ դեմքով, մինչդեռ ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը՝ չի կարող:

քանի անձ, մյուս դեպքում՝ բոլորն առհասարակ: Այսպես՝ հետևյալ նախադասություններում որպես հոգնակի 3-րդ դեմքով գործողություն կատարող կարող են ենթադրվել թե՛ մեկ անձ, թե՛ մի քանիսը՝ *Եկին ընդ իս հանց ասին*, Թե՛ Գնաց օրերդ ի ձեռաց (ԽԿ, 39): Եթե ոք գրաստ կամ ընչուղ ուննայ, որ քշտան լինի, *ու ասեն* թե՛ հան զինքդ ի քենե, նա չհանե, որ քշտե ու մարդ սպաննե՝ նա քարկոծեն զինք (ՍՄԴ): *Սոցին*, թե՛ դուն դեղ ունիս, Տուր ինձի, որ կենդանանամ. Թե՛ չե կու մեռնիմ զնամ, *Գան ասեն քեզ՝ Մարդայսպան* (Հ, 172): Հանց աղուոր պատկեր ունիս, *Որ կասեն*, թե՛ Տերն է Մըսրայ (Հ, 198): Կասեմ, թե՛ «Կելնե հոգիս». *Նա կասեն*, թե՛ «Թող մեռնիս» (Հ, 337) և այլն: Նկատենք, որ բերված բոլոր գործողությունները իրավիճակային են, սովորության ոչ մի երանգ չեն արտահայտում, ինչը ևս ապացույց է, թե այդ կարգի նախադասությունները անորոշ-դիմավոր են:

Ասվածին հակառակ՝ ստորև բերվող նախադասություններում միևնույն (*կ*)*ասեն* բայաձևով արտահայտված գործողությունները ենթադրաբար կարելի է վերագրել բոլորին: Այդ նախադասություններն ունեն սովորության, շարունակական բնույթ և կարող են կատարվել ըստ անհրաժեշտության և ոչ թե այս կամ այն իրավիճակով պայմանավորված, ինչը նշանակում է, որ դրանք ընդհանրական-դիմավոր կառույցներ են: Օրինակ՝ Եւ կտրճերուն այսպէս մահն *որ մաֆաճան ասեն*՝ ամռան աւուրքն լինի եւ կուշտ լինի (ԱՍՕԲ): *Տունն որ ասեն*՝ մարդուն կինն է, Թե շէն պահե, նա կու պահե (ՀԵ): *Թուրքերէն սամա՛ն կասեն*, Որ յափիդ միջին կու պահես (Հ, 616): Քո ծոցս է ի ծով նման, *Ծովն դեղ կասեն ի ջերման* (Հ, 167): *Ջուր անմահութեան կասեն*, Այն ի քո ծոցըն կու բլխէ (Հ, 198)¹¹⁰: ՉԱստուածն ողորմած *կասեն*, Կողորմի ամէն դարիպի (ԹԼԿ, 912): Եւ ասե միմոսն. ինձ Ձիս *ասեն*. եւ նայ ասե. քոյ տղին ինչ *ասեն*. ասե միմոսն. իմ տղին Ձերդքանզիս *ասեն*. եւ նայ ասե. քոյ կնոջն ինչ *ասեն*. եւ ասե միմոսն, թե իմ կնոջն՝ Այլառակքանզիս (ԿԱԱ): Մոքայ զնշաններն շալկեն՝ որ է դրաւջն՝ որ անուն *ասեն* սիգնայ (Կ-Պ): Հիւանդին Աստուած է դեղ. Որ մահու է տէր և կենաց, Ձեկքիմն սեպեպ ասեն (Հ, 521): *Է շէմն ու դամար կասեն*՝ Ի յարապ լեզուն, որ դու ես (Հ, 86):

Նշենք մի քանի կարևոր հանգամանք ևս.

1. ի տարբերություն առաջին խմբի նախադասությունների, որոն-

¹¹⁰ Հմմտ. *Ջուր անմահութիւն կասեն*, Ի այն ի քո ծոցդ կու բլխէ (Հ, 202):

ցում գերադաս անդամն արտահայտում է մեկ կամ մի քանի անգամ կատարվող գործողության գաղափար՝ երկրորդ խմբի նախադասությունների գերադաս անդամի միջոցով արտահայտվում է սովորության, ընդունված կարգով կատարվող գործողության գաղափար:

2. Ի տարբերություն *ասեն* գերադաս անդամով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունների, որոնցում այն գործածվում է հենց ասացական իմաստով, ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեջ, որպես կանոն, *ասեն* գերադաս անդամն անվանողական իմաստ ունի՝ շնորհիվ որի էլ՝ տվյալ նախադասությանը հաղորդվում է ընդհանրականության իմաստ. նրանով առհասարակ կոչվում, անվանվում են ինչ-որ անձ(եր) կամ առարկա(ներ):

Բնավ պատահական չէ, որ հանդիպում են նաև անորոշ- և ընդհանրական-դիմավոր նախասություններ, որոնց գերադաս անդամն արտահայտվում է *ասեն* բայի հոմանիշ *կանչեն, կոչեն, ձայնեն, վերաձայնեն* և այլ բայաձևերով: Բնական է, որ վերջիններիս ցույց տված գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել մի դեպքում անորոշ անձ(եր)ի [Ես անցայ ու մեկ տարայ Կանչեցին. «Տարաւ ճղերով» (Հ, 117)], մյուս դեպքում՝ բոլորին [– Կօզա՛լ, այն քաղաքն ուզես, Որ կոչեն զանուն Պօլիայ (Հ, 588): Երբ որ ես պզտիկ էի, *Կանչէին ինձ՝ «Ոսկի տղայ»* (Հ, 82): Գեղ մի կայր՝ *Նարեկ ասեն*, Որ յաթոռն էր վարդապետին, Անդրբ տանուտեր մի կայր, Իւր անունըն Գորգիկ *ձայնին* (ԹԼԿ, 909)¹¹¹: Որ էր քաղաք դղեակ նմին, *Ջոր Պէկրաստ վերաձայնին* (ՄԻԳ): *Անուն կոչեն իւրեան Յունան*, Ի հաւատոց դատարկ ւ ունայն (ՄՂ) և այլն]: Այսուհանդերձ, *ասեն, կանչէին, կոչեն, ձայնեն, վերաձայնին* և այլ բայաձևերով արտահայտվող նախադասություններն ունեն տվյալ գործողությանը և ենթադրյալ կատարողների անհավասարապես տարածքային և ժամանակային սահմանափակություն: Վերջին հանգամանքը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ այդ նախադասությունները չունեն առածական, ասացվածքային բովանդակություն, ինչը, սակայն, չի խանգարում նրանց ընդհանրական-դիմավոր լինելուն, քանի որ առածական բովանդակություն ոչ բոլոր ընդհանրական-դիմա-

¹¹¹ Բանաստեղծական տողաչափը պահպանելու նպատակով ենթադրվող անկատար անցյալ *ձայնին* (=կու ձայնէին) ձևի փոխարեն գործածվել է *ձայնին* տարբերակ, որն արտաքինից սահմանական ներկայի տպավորություն է թողնում:

վոր նախադասություններին է բնորոշ:

3. Անվանողական արժեք ունեցող այսօրինակ ընդհանրական-դիմավոր նախադասություններում *սսեն* և այլ գերադաս անդամներ կարող են ստանալ հանգման և ոչ թե հաղորդման բնության խնդիր՝ Երբ որ ես պզտիկ էի, *Կանչեին ինձ*՝ «Ոսկի տղայ» (Հ, 82): Ասվածը բնորոշ չէ նշված գերադաս անդամներով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասություններին, որոնցում կարող են գործածվել հաղորդման խնդիրներ և ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեջբերվող խոսքեր: Օրինակ՝ Եկան ու *սսին* ինձի, Թե՛ Եարիտ պաղչան կայ գօհար (Հ, 54): Հանչաք *կանչեցին հետ ինձ, Թե՛ Քու բանտ ի նչ խօշ կու լինի* (Հ, 148):

Անորոշ-դիմավոր նախադասությունների շարքում լեզվական աղբյուրներից քաղելով սահմանական ներկա ժամանակի հոգնակի 3-րդ դեմքով միակազմ կառույցներ՝ Պ. Վարդապետյանը նշում է, որ դրանց «գերադաս անդամը ցույց է տալիս անընդհատ, ընդհանրապես կատարվող գործողություն»¹¹²: Սակայն պետք է նկատել, որ այս հատկանիշով բնութագրվում են ոչ թե անորոշ-, այլ ընդհանրական-դիմավոր նախադասությունները. վերջիններին է բնորոշ՝ ա) ցույց տալ շարունակաբար, սովորութային, ինչ-որ իրավիճակից դուրս կատարվող գործողություն և բ) այդ գործողությունը ենթադրաբար կատարողների ընդգրկման առումով չունենալ սահմանափակություն: Ահա նրա կողմից անորոշ-դիմավոր համարված այդ կառույցներից մեկը՝ Աշնան ժամանակն որ գայ, Երբ Կշիռն մտան է արևն, *Ջերկիրն վարեալ ցանեն Ջայդ գարի՛ղ*, որ մեջ արիդ է, որում ընդգծված նախադասության գերադաս անդամի ցույց տված գործողությունը (*ցանեն*) ենթադրաբար կարելի է վերագրել ոչ թե անորոշ անձի կամ անձանց, այլ բոլորին, և գործողությունը ոչ թե իրավիճակային է, ինչպես անորոշ-դիմավոր կառույցներում, այլ որոշակի իրավիճակից դուրս, ընդհանրական: Հմտ. «Ճտերն աշնանն են հաշվում» հայտնի ասացվածքը:

Նույնը չենք կարող պնդել նրա քաղած «*Սսեն*՝ եղուկըդ տար սիրով ջերմային, Երբ որ դուն յորդորելով մանրաքայլես. *Սսեն*՝ արև ծագեաց ի մեջ գիշերվա, Երբ ջայլես յանկարծակի յերկրին երես» կառույցի ընդգծված նախադասությունների մասին¹¹³, որովհետև նրանք ցույց են տալիս ոչ թե

¹¹² Պ. Վարդապետյան, 1975, 136:

¹¹³ Անդ:

«անընդհատ, ընդհանրապես կատարվող», այլ անորոշ անձի կամ անձերի կողմից կատարվող իրավիճակային գործողություն:

Անորոշ-դիմավոր նախադասությունները խոսքի մեջ հանդես են գալիս թե՛ համադաս, թե՛ ստորադաս և թե՛ գերադաս դիրքում՝ զուգորդվելով և՛ երկկազմ, և՛ միակազմ նախադասությունների: Այսպես՝

1. Կան բարդ համադասական կառույցներ, որոնցում անորոշ-դիմավոր նախադասությունները քերականորեն համագոր են երկկազմ նախադասություններին: Օրինակ՝ *Զիմ էարն յիսնէ զատեցին, Թառմեցայ զէտ վարդի տերև, Տարին յայլ երկիր հանին*, Չի ցաթեց իմ սիրտն այլ արև (Հ, 108): Թէ չէ կը սպանեմ ես զիս, *Գան՝ ուզեն զարիւնս ի քենէ* (Հ, 235)¹¹⁴: Ես շէֆթալուի մորճ մ՛ էի, Ապառաժ քարը բուսնէի. *Եկին քաշեցին տարին, Զիս այլոց այգին տնկեցին: Շէքրէն ալ շէրպէթ արին, Ուր բերին ինծի ջրեցին* (Հ, 652) և այլն:

2. Մի շարք բարդ համադասական կառույցներում անորոշ-դիմավոր նախադասությունները համագոր հարաբերության մեջ են անորոշ-դիմավոր այլ նախադասությունների, որոնցում որպէս գործողություն կատարող ենթադրվում են նույն անձինք կամ անձը (ընդհանուր ենթակա ենթադրող անորոշ-դիմավոր նախադասություններ)՝ *Թէ գան ու զիմ տեղն ասեն*, Նայ հեռու եմ՝ այլ հեռանամ: *Թէ գան ու զքո տեղն ասեն*, Թէ զին՝ ճիլն եմ՝ կտրեմ ու գամ (Հ, 152): *Առին՝ ի ի հագիմ տարան*, Նա ասաց, թէ՛ Ապրելու չէ (Հ, 136): Չախուս ունէր աղէկ ատապ, Հետ ինձ կենար զօրն առանց կապ, *Գինով արին ու տուին ի խար, Լուկ ձգեցին զչախուս ի յափ* (ՄԽ): Եւ զմայր իմ *հատեցին զԲ(2) ձեռն, և զգլուխն յարին թաւալեցուցին* (ԳԱ, 412): *Եւ բերին զամենայն կերեալսն, կապեցին զբերինս և հանին ի վիզ ձեր քահանային* (ՀՄԳԱ, 27) և այլն: Այս կարգի նախադասությունները կառուցվածքով ներկայացնում են ընդհանուր ենթակա ունեցող երկկազմ նախադասությունների հակառակ պատկերը:

3. Բազմաթիվ բարդ ստորադասական կառույցներում անորոշ-դիմավոր նախադասությունը կարող է հանդես գալ մի դեպքում որպէս երկրորդական, մյուս դեպքում՝ գլխավոր նախադասություն՝ զուգորդվելով և՛ երկկազմ, և՛ միակազմ նախադասությունների: Օրինակ՝ *Եփ զիս արևես հանեն*՝ Թող ցամքի զինչ գետ կայ ու ծով (Հ, 157): Յորեկն եմ նետիտ նման,

¹¹⁴ Հմմտ. Թէ չէ կու մենիմ զնամ, *Գան առնուն զարիւնս ի քենէ* (Հ, 133):

Ուր նետեն՝ ես ի հոն կենամ (Հ, 167): *Կտրեն զայն հաւուն շինին*, Որ պէ-վախտ ատեն խօսեցաւ (Հ, 77): *Եկին ու խապար բերին*, Թէ Մըբար քարերն է ճօհար (Հ, 103): *Անչափ կու ճողաւ՝¹¹⁵ զմարդն*, Որ սուտն ալ իրաւ կու լի-նի (Հ, 161): Ըռուֆօսն ասէ, թէ յաւելի արենէ լինայ, որ ի լերդն ժողվի՝ չէ պատեհ որ *զինքն շուտ մն բռնեն* (ԱՍՕԲ): Եւ կսեր որդին գողացաւ զակն. *եւ յորժամ թաղեցին զթագաւորն եւ զակն այլ ո՛չ գտին* եւ յոյժ տրտմութիւն եր վասն ակին (ՎԱԱ) և այլն:

4. Բարդ համադասական և բարդ ստորադասական մի շարք կա-ռույցների կազմում առկա են տարբեր ենթականեր ենթադրող անորոշ-դիմավոր նախադասություններ, թեև դրանց բոլորի գերադաս անդամները խոնարհված բայի հոգնակի 3-րդ դեմքով են: Այսպես՝ «Դատաստանա-գրքից» քաղված «Ձայնոց՝ որ ի հաւրէ յորդիք կամ ազգաւ գողի կամ պի-սակ՝ կամ պեղծ բորոտութիւն ուննան՝ *նա զայնպիսեացն խափնեցնեն զինամութիւնն*, որ ոչ առնուն *եւ ոչ տան իրենց բնաւ կին*» կառույցի երկու միակազմ նախադասություններում (ընդգծված են) որպես գործողություն կատարող են ենթադրվում տարբեր անձինք. առաջին նախադասության մեջ խոսքը վերաբերում է խնամիությունը խափանելու իրավունք ունեցողներին, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ՝ պսակվելու աղջիկ ունեցողներին: Հետևյալ կառույցի՝ *կրթեցեն* գերադաս անդամով արտա-հայտված նախադասության գործողության կատարման համար այլ են-թակա է ենթադրվում, մյուսներով արտահայտվածների համար՝ այլ են-թակա՝ Ապա թէ չկենայ որդի եւ ոչ դուստր, եւ եղբար որդիք լինին, նա հայրապետին եւ այլ եկեղեցոյն եւ իշխանաց ու երկրին տեսովն *առնուն*՝ մէկ մի՝ յոր *հաճին* ի լաւն, *եւ կրթեցեն յարքունիքն*. եւ յոր *հաճին* յայնոց՝ նա հետ թագաւորին մահուն զայն *դնեն* յաթոռն հայրապետով (ՍՄԴ): Հե-տևյալ բարդ կառույցում որպէս *առնուն* և *տան* գերադաս անդամների գործողություն կատարող ենթադրվում է անորոշ անձ (կամ անձինք), մինչդեռ *դատեն* գերադաս անդամի գործողություն կատարող է ենթա-դրվում մէկ այլ անձ (կամ այլ անձինք)՝ Եւ թէ յայս ժառանգաւորաց եկե-ղեցոյս ընդ կարգակից ընկեր կամ ընդ աշխարհական կոնի այնէ ու փայ-

¹¹⁵ Կասկած չկա, որ բնագրային վրիպակ է. պիտի լինի *ճօշան* (*ճօշալ* «բամբա-սել», «չարախոսել»): Հմնտ. Ես ըզբեզ սիրել կամիմ, Թող *ճօշան* գիս երկիրս ամէն (Հ, 137): Անչափ կու *ճօշան* զմարդն, Որ սուտն այլ իրաւ կու լինի (Հ, 283):

տով քշտե՛լ հայնց որ մենակ մեռանի, նա *անուն* զկարգն եւ ի դարպասն *տան* զինք, որ զեղ սպաննաւոյ *դատեն* զինք (ՍՄԴ): Հմտ. նաև հետևյալ բազմաբարդ և բարդ ստորադասական կառույցների ընդգծված կառույցները՝ *Սեչով քաղքին Հայոց ազգին, Ձեկեղեցիքն փակեցին, Ջղրունքն ամենն մօհրեցին, Որ չի հանեն սուրբ անօթնին* (ՄԹ): *Եկին ու խապար բերին, Թէ մազէ կարմունջ կապեցին* (Հ, 525): Եւ ասե[ի], թէ գուլտանին զմեծ ուղտն, *գոր Պալխտի կոչեն, պաշարման տկճոր քարշէին զմորթ նորա* (ՎԱԱ): Ինձ որոգայթ *պատրաստեցին*, Ի մէջ ծովին զիս *յափշեցին*, Անօրինաց երկիր *բերին*, Գանձ եւ բազումս *տիրեցին*: Դարձեալ յետոյ *գերեցուցին*, Յարեանս զինն *կտրեցին* (ԱՇ): ՉԱստուած ո՞վ կարէ տեսնուլ, Բայց ծնաւ ու զհնքն *սնուցին*, Այսինքն է՝ ծածկեալ Խորհուրդ, Բայց յայտնի է՝ զըրկով *բարձին*, Ա՛յն, որ զամենայն էստեղծ Ի Բանից՝ զհնքըն *խաչեցին* (Ֆ, 875): Սև չորեքշաբթին Ձխաբարըն *բերին*, Թէ բոկիկ և մերկ գլխիբաց Ձնա *ըմբռնեցին* (ՄԵ, 315):

Բարդ և բազմաբարդ կառույցներում անորոշ-դիմավոր նախադասությունների կապակցումը այլ նախադասությունների հիմնականում տեղի է ունենում գոդումով, ինչպես՝ *Երբ ձուկն ի ջրէն հանեն, Ջուր մըն ալ ձգեն՝ նա ապրի. Երբ զիս ի քէնէ գատեն՝ Քանց մեռնելն այլ ճար չի լինի* (Հ, 145): *Եւ հանին զկովն ՚ի բենն եւ քարշեցին զվարայգուրն ՚ի դէմ* (ՎԱԱ): *Խելօք մազմընին հարցան, Թէ՛ քակած չուան ոլորի՞* (Հ, 148): *Մարդոյ մի քարկանի գրեռներն տարան եւ աղքատացաւ* (ՎԱԱ): Ուր որ դու կանկնած լինիս՝ Չէ պատեհ *վառեն մումեղէն* (Հ, 138): Չար աւազակաց դիպայ, *Թալնեցին զինչ մերկ ի մօրէն* (Հ, 497) և այլն:

Պ. Վարդապետյանը նկատում է, որ «անորոշ-դիմավոր նախադասությունները հանդիպում են միջին հայերենի գրեթե բոլոր ժանրերի ստեղծագործություններում»¹¹⁶: Եվ իրոք, որպես քերականական իրողություն՝ անորոշ-դիմավոր նախադասությունը միջին հայերենում հանդիպում է բոլոր ժանրերում և տարաբնույթ ստեղծագործություններում, սակայն ասվածը վերաբերում է հոգնակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններին: Օրինակ՝ Եւ եթէ կաթողիկոսն փնտռէ՝ թէ սուտ էլնէ անկեալն ի կարգէն ու եպիսկոպոսն իրաւ լինի, *նա տուժեն զինքն զնդանով* որ ապաշխարէ (ՍՄԴ): *Վաղվնէն զնտան ձգեն*, շատ տուգանք

¹¹⁶ Պ. Վարդապետյան, 1975, 135:

տաս (ԱԶ): Յորժամ մարդն ընկնի, պարտ է ասել զինքն՝ թագաւորի որդի եմ կամ մեծատան. որ *չսպանանեն*, այլ *պահեն* (ՎԱԱ): Եւ թէ այսպէս որ գրեցի չի լինի եւ հակառակն լինի՝ լանն այն է, որ *գայնպիսի բժիշկն չի տանին առ հիւանդն* եւ դեղ չառնէ հիւանդին (ԱԱՕԲ): *Ընտրեցին պսայ Հռովմայ զարժանաւորն Գրիգորիոս*, որ եկեալ էր յաղաթաւորութիւն հետ իր Աստուարտին եւ կայր ի յԱքայ (ՀՊ): Այսօր ո՛չ կապայ ունիս, Ո՛չ անկողին մէջն ի հողին, *Յայգուց՝ հուր ու բոց ածեն Ի բերան ըռաւաշ խնողին* (Ֆ, 876): *Խելօքին հարցուկս էլան*, Թէ զպատճառն ո՞վ իսկի զիտէ (Հ, 388): Մինչդեռ հոգնակի թվի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները լայն տարածում չունեն. դրանք տեսականորեն կարող են հանդիպել այն արձակ երկերում, որոնցում գործածվել են ուղղակիորեն մեջբերվող խոսքեր: Նշված կարգի նախադասություններ մասնավորապես առկա են պատմագրական բնույթի երկերում և ժողովրդական բանահյուսության մեջ (հեքիաթներ, առակներ)՝ հանդես գալով որպէս խոսքի ռճավորման միջոց: Միջին հայերէնում այդպիսի ստեղծագործություն է, օրինակ, Վարդան Այգեկցու առականին, որում, սակայն, հիշյալ միակազմ նախադասությունները հաճախադեպ չեն՝ Եւ էլ դէն եւ գնաց մտաւ ՚ի դուստր թագաւորին եւ աղաղակէր, թէ *զիս այս ինչ մարդոյ տուէք*, որ ելանեմ. եւ եւ տուին գնայ անոր եւ եղեւ թագաւորին փեսայ (ՎԱԱ):

Միջին հայերէնում գործողություն կատարողի անորոշության գաղափար գերազանցապէս կարելի է արտահայտել կա՛մ հոգնակի թվի 3-րդ, կա՛մ հոգնակի թվի 2-րդ դեմքի բայաձևերով: Բնագրերում դրանցից առավել հաճախադեպ են հոգնակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները: Դա պայմանավորված է նրանով, որ հոգնակի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները արտահայտվում են միայն հրամայական ապառնիով, որն ունի միայն հրամայական հնչերանգ, ուստի այդ նախադասությունները խոսքի շղթայում գործածվում են միայն որպէս ուղղակիորեն մեջբերվող խոսքի առանցքային անդամ: Բայց, ինչպէս հայտնի է, հաղորդակցման ընթացքում հրամայական հնչերանգով ուղղակի խոսքեր ոչ միշտ են անհրաժեշտ: Մինչդեռ խոսքի շղթայում անհամեմատ հաճախադեպ են սահմանական, ըղձական եղանակների ժամանակաձևերով կազմված անորոշ-դիմավոր կառույցները, որոնց արտահայտման լավագույն միջոց են հոգնակի 3-րդ դեմքի բայաձևերը:

Բովանդակության պլանում անորոշ-դիմավոր նախադասություն-

ներին համանիշ են կրավորական սեռի բայ-ստորոցալով այն երկկազմ նախադասությունները, որոնցում, սակայն, բացակայում է ներգործման խնդիրը, և այն հնարավոր չէ ենթադրել կամ վերականգնել:

Արտահայտության պլանում անորոշ-դիմավոր նախադասություններն աղերսներ ունեն ընդհանրական-դիմավոր նախադասությունների հետ. նրանց գերադաս անդամները կարող են արտահայտվել միննույն անդիմասահմանափակ բայերի նույն դիմաթվային ձևով, սակայն արտահայտության պլանում ունենալով ընդհանրություն՝ նրանք իրարից տարբերվում են բովանդակային պլանով և կառուցվածքային մասնակի առանձնահատկություններով:

Միջին հայերենում անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամների արտահայտման միջոց են ծառայում այն անդիմասահմանափակ բայերը, որոնք դասանշային տեսանկյունից հնարավորություն ունեն կապակցվելու հիմնականում անձնանիշ ենթակաների, որոնք են՝ ա) միայն անձնանիշ ենթակաների կապակցվող բոլոր բայերը և բ) բազմադաս այն բայերը, որոնք, այլ ենթականերից բացի, աչքի են ընկնում նաև անձնանիշ ու կենդանանիշ ենթակաների հետ կապակցելիությամբ: Ասվածը մասնավորապես վերաբերում է այն բայերին, որոնք հանդես են բերում անսահմանափակ կամ սահմանափակ բազմադասություն՝ կարողանալով գուգահեռաբար կապակցվել կենդանանիշ և իրանիշ (թանձրացական և/կամ վերացական), բայց նաև անձնանիշ ենթակաների (անսահմանափակ բազմադասություն) ու կենդանանիշ, բայց նաև անձնանիշ ենթակաների (սահմանափակ բազմադասություն):

Թե՛ հոգնակի 2-րդ և թե՛ հոգնակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններում որպես գործողություն կատարող գերազանցապես կարող են ենթադրվել և՛ մեկ անձ, և՛ մեկից ավելի անձինք, բայց ոչ բոլորը: Հակառակ դեպքում տվյալ նախադասությունը ձեռք է բերում ընդհանրական-դիմավոր նախադասության արժեք: Այս նախադասություններում իբրև գործողություն կատարող կարող են ենթադրվել նաև կենդանանիշ առարկաներ¹¹⁷:

Անորոշ- և ընդհանրական-դիմավոր նախադասությունները, գերադաս անդամի արտահայտության պլանում ունենալով ընդհանրություն,

¹¹⁷ *А. Циммерлинг, 2018, 14.*

իրարից տարբերվում են բովանդակային պլանով, կառուցվածքային մասնակի առանձնահատկություններով և կիրառության դաշտով: Մասնավորապես 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները կարող են հանդես գալ միայն հեղինակի խոսքի համադրությամբ: Նշանակում է խոսքի մեջ նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր, ինչն անմիջականորեն պայմանավորված է նաև այդ նախադասություններում արտահայտվող գործողության իմաստային առանձնահատկությամբ:

Հոգնակի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններ տեսականորեն կարող են հանդիպել այն արձակ երկերում, որոնցում գործածվել են ուղղակիորեն մեջբերվող խոսքեր: Միջին հայերենում ուղղակիորեն մեջբերվող խոսքերով հարուստ են Վարդան Այգեկցու առակները. դրանով է պայմանավորված նշված երկում 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների առկայությունը:

2-րդ դեմքով և նրան հաջորդող 3-րդ դեմքով արտահայտված անորոշ-դիմավոր նախադասությունները խոսքային այլ իրավիճակներում գործածված և 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններից տարբերվում են նաև այն բանով, որ առաջիններով արտահայտված գործողությունն առնչվում է տվյալ իրադրությանը և, որպես կանոն, վերաբերում է ներկա, իրական, բայց անորոշ անձի կամ անձերի: Մինչդեռ 2-րդ դեմք ունեցող և այլ իրավիճակներում գործածված որոշ միակազմ նախադասություններով արտահայտված գործողությունը առնչվում է տվյալ իրադրությանը, և այն կարելի է վերագրել իրական, որոշակի անձի կամ անձերի (երկկազմ նախադասություն), իսկ որոշ նախադասություններով արտահայտված գործողությունը կապ չունի տվյալ իրադրության հետ, այն իրականում չի կատարվում¹¹⁸ և ենթադրաբար վերաբերում է տվյալ իրադրության մեջ գոյություն չունեցող անձի կամ անձերի (ընդհանրական-դիմավոր նախադասություն)¹¹⁹:

¹¹⁸ Չ. *Осипова*, 2009, 38.

¹¹⁹ Հմմտ. ժամանակակից հայերենի հետևյալ նախադասությունները.

ա) Մեկը պատշգամբից կանչում էր՝ *օգնեցե՛ք*, և *նրան օգնության հասանք*:

բ) Մեկը պատշգամբից դիմեց ինձ և ընկերոջս՝ *օգնեցե՛ք*, և *նրան օգնության հասանք*.

գ) Մեկը ասել է. «Եթե կարիքավոր մարդ եք տեսնում, *օգնեցե՛ք*»:

Որպես քերականական իրողություն՝ անորոշ-դիմավոր նախադասությունը միջին հայերենում լայնորեն տարածված հաղորդակցական միավոր է. հոգնակի 3-րդ դեմքով նախադասությունները հանդիպում են թե՛ արձակ և թե՛ չափածո ստեղծագործություններում, մինչդեռ հոգնակի 2-րդ դեմքով արտահայտվածները՝ արձակ ստեղծագործություններում: Վերջիններս կարող են գործածվել նաև չափածո գործերում, սակայն մեզ այդպիսիք չեն հանդիպել:

Տարբեր բայերի հոգնակի 3-րդ դիմային ձևեր լեզվական աղբյուրներում ունեն գործածության տարբեր հաճախականություն և բաշխվածություն: Քանի որ անորոշ-դիմավոր նախադասություններն առավել բնորոշ են խոսակցական հայերենին, նրանցում գերադաս անդամն ավելի հաճախ արտահայտվում է միջին հայերենի բառապաշարի հիմնական շերտը ներկայացնող այնպիսի բայերով, ինչպիսիք են՝ *ասել, բացել, բերել, գալ, գտանիլ/գտնուլ, գրել, խօսել, հանել, տալ, տանիլ, տեսնուլ, փակել* և այլն: Օրինակ՝ *Ուր գան ու հազար ըսին*, - չազրեն մէկ խօսքունկ մի խօսէ (Հ, 637): *Ասին (կ'ասեն)* բայաձևն, օրինակ, հաճախականության և բաշխվածության առումով սահմանափակություն չի ճանաչում. գործածվում է հաճախ և տարբեր ժանրերի ստեղծագործություններում, ինչպես՝ *Եւ ասեն, թէ բարի արայ եւ չարի մի մնար* (ՎԱԱ): *Եւ այլ իմացի՛ր, որ այս մուխթատիլ միգաճն է որ ասեն, զի այս բանս մարդուն բնութիւնն է, եւ այլ կենդանոցն չէ: Եւ այն խառնվածն որ հակառակ է՝ ի յայս Դ նիւթէն մէկ-մէկ աւելի լինի, որպէս ջուրն, եւ մէկն պակաս՝ ասեն*, թէ այս բնութիւնն հով է. եւ թէ հողին բնութիւնն աւելի լինի՝ եւ *ասեն*, թէ բնութիւնն չոր է. եւ թէ կրակն եւ քամին եւ Բ այլ աւելի լինի՝ *եւ ասեն*, թէ այնոր բնութիւնն տաք էւ չոր է. եւ թէ հողն եւ ջուրն մէկ-մէկ բաժին աւելի լինի՝ *եւ ասեն*, թէ այնոր բնութիւնն հով էւ չոր է (ԱԱՕԲ): *Գալ* բայի *եկին* և *բերել* բայի *բերին* բայաձևերը թեև նույնպես հաճախակի գործածություն ունեն, սակայն գերազանցապես հանդիպում են հայրեններում: Չհաշված բազմաթիվ հայրենների տարբեր հատվածները, որոնցում նրանք հանդիպում են՝ միայն «Եկին ...» և «Եկին ու խապար բերին...» (երբեմն էլ՝ «Եկին ու ասին...») սկսվածքներով շուրջ երեսուն հայրեն է ավանդվել, ինչպես՝ *Եկին ու բե-*

ըին խապար՝ «Քո սիրած եարն զքեզ մոռացաւ» (Հ, 324) և այլն¹²⁰: Ասվածին հակառակ՝ որոշ բայեր, որոնք ակտիվ բառապաշարի միավորներ չեն, սակավադեպ են և գործածվում են արձակ և/կամ չափածո ստեղծագործություններում: Դրանցից են՝ *ամրացուցանել, այլայլել, խնդրել, կոչել, համբերել, ձեռնադրել, ձգել, շրջել, չարչարել, վարձել, փնտրել, քակել, քակտել* և այլն: Օրինակ՝ Ձի եթէ դու թափես ըզքեզ Ի մեղաց՝ մաքրիս դու յըստակ, Երբ ըզքեզ յառաջ *կոչեն*, Դու խօսել կարես համարձակ (Ֆ, 867): Ասէ ցմայրն. ո՞վ մայր, տես. զի գարոյ հաս փակեալ չլինի՝ ՚ի յոտս. որ զհաշին *խնդրեն* յինէն, որպէս ՚ի խոզէն (ՎԱԱ): Բայց այս պատճառանօքն պատեհ է որ *համբերեն* կերակրոյ եւ ուշ ուտեն (ԱԱՕԲ): *Ձեռնադրեցին* կաթուղիկոս գտեր Յակովբ (ՀՊ):

Անհրաժեշտության դեպքում անորոշ-դիմավոր նախադասություններ են գործածում նաև այն հեղինակները, որոնք փորձում են ստեղծագործել գրաբար, սակայն նկատենք, որ դա նրանց ոչ միշտ է հաջողվում.

Պարկով լըցեալ զմոխիր հնոցին

Կայծակնախառն գլխոյդ արկին,

Կապար հալեալ մարմնովդ հեղին,

Ոչ վնասեցար ամեննին (ԱԱ, Ք, 12):

Տե՛ս դու զանբան սուրբ կենդանին,

Որ ոչ թողուն յեկեղեցին,

Ու թէ անասունք անդ մտանին,

Այլ ժամ չ՛առնեն յայն տաճարին (ԱԱ, Ք, 100) և այլն:

¹²⁰ Բերենք ամբողջական շարքից մի քանիսը՝ Եկին, աւետիս բերին Ադամայ, թէ՛ Նիստ ու խնդայ (Հ, 356): Եկին ու խապար բերին Պիւլպիւլին, թէ՛ Վարդըն մեռաւ (Հ, 365): Եկին ու խապար բերին, Թէ մազէ կարմունջ կապեցին (Հ, 525): Եկին ու խապար բերին՝ Կաֆայու քարերն է ճոհար (Հ, 67): Եկին ու ասին ինձի, Թէ՛ Եարիտ պաղչան կա գօհար (Հ, 74): Եկին ու խապար բերին, Թէ քո եարն եղեր հաբեդա (Հ, 131): Եկին ու խապար բերին, Թէ ելեր մանչուկդ՝ կու գայ (Հ, 141): Եկին ու բերին խապար, Թ՛ ելեր է մեր տէրն ու կու գայ (Հ, 215): Եկին լուկ ինձի ասին, Թէ քո եարն զքեզ մոռացաւ (Հ, 209): Եկին ու խապար բերին, Թէ Մրսրա քարերն է ճօհար (Հ, 103): Եկին ինձ յերագն ասին, Թէ այդ խիալդ, որ քեզ կու թըւի (Հ, 863): Եկին ու բերին խաբար՝ Սուրբ Յակոբ օտա կը շինէ (Հ, 751): Եկին ու բերին խաբար. «Թունդ ելեր քուկիդդ ու կու գայ» (Հ, 693): Եկին ու բերին խապար. – Չե՛լ խուրպէթ մանուկ մ՛ է մեռեր (Հ, 659): Եկին ու բերին խապար Պիւլպիւլին, թէ՛ Վարդն մեռաւ (Հ, 324) և այլն:

Ա.2. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ-ԴԻՄՍՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանրական-դիմավոր միակազմ (այսուհետև՝ ընդհանրական-դիմավոր) նախադասությունների միջոցով արտահայտվում են այնպիսի գործողություններ, որոնց կատարումը տրամաբանորեն վերագրելի է բոլորին: Օրինակ՝ *Ապա տեսէք՝* թե այնոց պատիժն ի՞նչ է, կամ թե երբ համբերեն իրենց կարաւորն՝ ինչ մեղք այնեն (ՄՄԴ): *Զմուրհակս անիրաւ պատեցէ՛ք Եւ նեղելոցն շնորհեցէ՛ք* (ԱԽ): *Գիտացի՛ր*, որ ի յայս ըստուդուսաթին չաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր մէկ մէկին հակառակ (ԱԱՕԲ): *Այսօր ինձ յէնեկ տվէք, Քանց զամէն օրերն աւելի* (Հ, 149): *Եւ գիտացիք*, զի այսաւր [միտք] մեր զայս խորհին եւ աղտեղեն զհոգիս մեր (ՎԱԱ): Եւ առաջի ատամունքն այլ պիտոյ են խօսիցն, *որ ըղորդ գրուցեն* (ԱԱՕԲ): Չինչ գեղեցիկ կայ քան զոսկին, Եւ կամ քարինքն, որ են անգին. *Տես* քահանին չի պիտանի, Յորժամ նորա կինն մենի (ՄԴ):

Ընդհանրական-դիմավոր կառույցները կազմությամբ թերի նախադասություններ են (տվյալ դեպքում՝ միակազմ): Թերի երկկազմ կառույցներից տարբերվում են այն բանով, որ թեև կարելի է տրամաբանորեն ենթադրել, թե ովքեր են տվյալ նախադասության գործողություն կատարողները, բայց հնարավոր չէ վերականգնել քերականական ենթակա, մինչդեռ դա կարելի է անել երկկազմ, բայց թերի նախադասությունների դեպքում: Այսպես՝ «*Գիտացի՛ր*, որ տէր Աստուած է ստեղծեր զմարդն, եւ ամէն բժշկապետք եւ իմաստասերքն միաբան են ասացեր եւ չկայ հակառակ խօսք, որ [*տէր Աստուած*] զմարդն ի չորս նիւթէ է ստեղծեր» (ԱԱՕԲ) կառույցի առաջին նախադասությունը (*Գիտացի՛ր*) միակազմ է, քանզի հասկանալի է, որ գործողությունը ենթադրաբար վերագրվում է բոլորին, սակայն հնարավոր չէ վերականգնել որոշակի ենթակա, մինչդեռ վերջին նախադասությունը (*որ զմարդն ի չորս նիւթէ է ստեղծեր*) ոչ թե միակազմ, այլ թերի երկկազմ նախադասություն է. զեղչված է ենթական (*տէր Աստուած*), որն անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել:

Ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով: Օրինակ՝ Երթայր անհոգ տնտնօէր եւ ասէր. ահա այլ առակ *տեսէք*.

ո՞ւստի է ինձ խունկ, որ քեզ բերեմ (ՎԱԱ): Աւետարանին լքսէ, *Բմացիր*, թէ ի՞նչ կու լինի. Դառնայ առաջինն յետին Եւ յետինն լինի առաջի (Հ, 864): *Գիտացի՛ր*, որ քրտինք ելանելն պատճառն ազգի ազգի է (ԱԱՕԲ): Եւ թէ լինի որ փորն ամուր եւ պինտ լինայ՝ պիտի որ *տաս* գմբգաց ջուրն եւ գպանքին ջուրն (ԱԱՕԲ): *Գիտացիր*, որ ապականութիւնքն, որ ի ներքոյ լուսնին ֆալաքին եւ, եւթն ազգ են (ՅԵ, 305) և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ընդհանրական-դիմավոր նախադասութ-
յունների գերադաս անդամի գործառույթ կարող են կատարել ոչ բոլոր
անդիմասահմանափակ բայերը: Ըստ գոյականների դասային խմբերի
հետ կապակցելիության՝ միջին հայերենի բայերը լինում են՝

1. միայն անձնանիշ ենթակաների կապակցվող, ինչպես՝ *ածիլել*,
աղալ, *աղընձել*, *աղօթել*, *աճռել*, *ասել*, *գովել*, *գրել*, *դատիլ* («չարչարվել»,
«աշխատել» իմաստով), *եռացնել*, *եփել*, *ընծայել*, *թագաւորել*, *թագաւորե-
ցուցանել*, *խնդրել*, *խորհել*, *կարգել*, *կեղծել*, *մաղել* և այլն՝ Բայց ինչ *ասեմ
ես՝ ու կու գրեմ*, չկարցի այլ ցեղ գրել քան գոր յարիմակն գտայ (ՄՄԴ):

2. Միայն կենդանանիշ ենթակաների կապակցվող, ինչպես՝ *բռնայ*,
թառել, *կարկնչել/կարկըջալ*, և այլն՝ *Պիլպիլուն* ի յեգին մտաւ, Ի վերայ
վարդին *թառեցաւ* (Հ, 324): Իր երկու ծրծին միջին Կար կաքաւ, կար՝ *կար-
կընչելով* (Հ, 156):

3. Միայն իրանիշ առարկա ցույց տվող ենթակաների կապակցվող,
ինչպես՝ *բշտանալ*, *բշտատիլ*, *բոլորնալ*, *բոլրել*, *հալիլ*, *հովնալ*, *ջրենալ* և
այլն՝ Այս կեանքս է նման ձիւնի, Որ ի գալ գարնան *կու հալի* (Հ, 455): Եւ
այս բժշկութեանս չափ այս մեր վարդապետացն խօսքն հակառակ է *աւ-
ցած* (ԱԱՕԲ): Անձն *հովնայ* եւ բնութիւնն մոհթատիլ լինայ (ԱԱՕԲ): Այն ի
յայն կցուածոցն *կու հոնծի* և կու ելանէ (ԱԱՕԲ): Արիւնն և մաղձերն զի-
րարին և *ջրենան* (Աբուս.): Ջո՛ւր, *զլզլալէն* կու գաս, Գետի թ՝ ո՞ր ակնէն
կու գաս (Հ, 313):

4. Բազմադաս բայեր, որոնք տարբեր դասային խմբեր ներկայացնող
ենթակաների հետ կապակցելիության տեսանկյունից կարող են ունենալ
տարբեր հնարավորություններ՝ հանդես բերելով բազմադասության սահ-
մանափակություն կամ անսահմանափակություն)¹²¹, ինչպես՝ *անկանել*,
աւելանալ, *բազմանալ*, *բարձրանալ*, *զլզլալ*, *լցվել*, *խառնվել*, *կտրել*, *մաք-*

¹²¹ Գ. Ջահուկյան, 1974, 464:

ըել, մնալ, շարժել, պոկել, սպան(ան)ել, տեսնուլ, կանգնել, կտրել, հեռանալ, մոտենալ, հայիլ, ձգել, նստել և այլն: Օրինակ՝ Երամն ի յերամ խառնվաւ (կենդանանիշ), Ու թռաւ երամն ի մորին (Հ, 271): Զի ընդ հոգևոր սիրոյն Շատ մարմնոյ սեր կու խառնի (իրանիշ վերացական) (Հ, 451): Անուշ, քաղցր աղբիւր էի, Զիս ի ցեխ մեղաց խառնեցի (անձնանիշ) (Հ, 455): Է՛ հ զըլզըլէր էրթէր, Խառնէր ճըզիբէն գետն (իրանիշ թանձրացական), Էրթէր լըցվէր կարմիր կըժէր (Հ, 775):

Վերոնշյալ խմբերը ներկայացնող բայերի դիտարկումը ցույց է տալիս, որ ընդհանրական-դիմավոր նախադասությունների կազմում գերադաս անդամի գործառնությունով կարող են հանդես գալ միայն այն բայերը, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են անձնանիշ ենթակաների, այսինքն՝ օժտված են կա՛մ միայն անձնանիշ, կա՛մ նաև անձնանիշ ենթակաների կապակցվելու հնարավորությամբ: Դրանք են վերը նշված՝

1. առաջին խմբի, այն է՝ անձնանշությամբ օժտված բոլոր բայերը, որոնցից են՝ *աղաչել, աղօթել, սպաշխարել, ասել, բարբառել, բժշկել, գովել, եփել, ընծայել, թագաւորել, խնդրել, խորհել, խօսել, կեղծել, հաստատել, հինայել, հնձել, հրամայել, նուիրել, ստել, վկայել* և այլն: Օրինակ՝ Նալէ՛թ այն սիրուն վերա. Այս գիշեր կէսըս հալեցաւ: Թէ շունչս ու հոգիս կասես՝ Նա եկաւ, կլափս կուտեցաւ (Հ, 76): Դաւիթ մարգարէն հրամայեաց, Թէ՛ Չարկամ ունիս, նա սիրէ: Չձեռքն բռնէ ի տունդ տար, Աստուծոյ բարոյ գնա պատուէ: Գաւաթ լից, ի ձեռքն տուր, Իր լեզուովն զինք անիծէ (Հ, 115):

2. Չորրորդ, այսինքն՝ բազմադաս խմբի բայերը, որոնք, այլ խմբերի ենթակաների կապակցվելուց բացի, աչքի են ընկնում նաև անձնանիշ ենթակաների հետ կապակցելիությամբ, մասնավորապէս՝

2.1. *գալ, գողանալ, գարթնել, թռչել, լիզել, լողալ, լսել, խլել, կամենալ, կանգնել, կտրել, հեռանալ, հայիլ, նստել, շուրջ գալ, սողալ, վազել, տալ, տեսնուլ, տրորել, ուտել, փախչել, քշտել* և այլ բայեր, որոնց ցույց տված գործողությունը կարելի է վերագրել ոչ միայն կենդանանիշ, այլև անձնանիշ ենթակաների: Օրինակ՝ *Հաւուկն, որ նստած տեսնուս, Մի՛ ձգեր զձեռն քո ի քար: Մի՛ խրտահարեր գատ հաւտ, Թ՛ ինչ՝ հազար որ հաւն է օտար* (Հ, 87): Սէրն այլ ոտք ու ձեռք ունի, Շուրջ կու գայ գետ զհարամի: Եկէ՛ք, զհարամիս տեսէք, Հարամիս, որ նետ մի չունի (Հ, 104):

2.2. *Աւելանալ, բազմանալ, բարձրանալ, բացել, անկանել, կտրել, մաքրել, մնալ, շարժել, պոկել, պղտորել, ջարդել, փակել, քշել* և այլ բայեր,

որոնց ցույց տված գործողությունը, կենդանանիշ ու իրանիշ թանձրացական և/կամ վերացական գոյականներից բացի, կարելի է վերագրել նաև անձնանիշ ենթակաների: Օրինակ՝ *Եւ թէ այնով չօգտէ՝ զականջին երկնին կտրէ՝: Եւ կէ՛ր զթարֆինան եւ զմատուսն եւ զաֆսարտն եւ որ նման է սոցա եւ բան տար, որ վերաբերութիւն չտայ այնել եւ զսիրտն չի պղտորէ եւ զգլուխդ ի շուրջ ածէ (ԱՍՕԲ): Քան զկաթն իստակ էի, Քան զգարնան ջուր պղտորեցայ (Հ, 82) և այլն:*

Ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամները սահմանափակություն ունեն թե՛ ենթադրյալ ենթականերին կապակցվելու և թե՛ բոլոր դիմաթվային ձևերով արտահայտվելու տեսանկյունից, մինչդեռ սեռի քերականական կարգի առումով սահմանափակություն չունեն. նրանք կարող են արտահայտվել և՛ ներգործական, և՛ չեզոք, և՛ կրավորական սեռի անդիմասահմանափակ բայերի 2-րդ և 3-րդ դիմաթվային ձևերով¹²²: Օրինակ՝ *Եւ զայս ի սուրբ Գրիգոր Լուսաւորչին սահմանն էլ գտնուս փակած - տէ՛ս ի յերեսուն գլուխն ի սուրբ Գրիգոր Լուսաւորչին (ՄՄԴ): Յուցանէ. օրէնքն եւ մարգարէքն, առաքեալքն եւ մարտիրոսքն, հայրապետքն եւ հրեշտակքն ասեն, թէ *սպաշխարեցէք եւ արդարացէք եւ եկէք ՚ի յարքայութիւն եւ մի լինիք սեւերեսք*, որպէս ջաղացապանն այն, որ սեւերես գնաց ՚ի դժոխքն (ՎԱԱ): *Եկէք, հարամիդ տեսէք*, Հարամի ու նետ մի չունի (Հ, 330): *Յորժամ հայիոյէք զաղբասն Ու դրժար իսօօք կրոնիք, Ելնէք յԱստուծոյ աչացն, Ի՛ր ի մեղաց դաւթար զըրուիք (Ֆ, 879): Գիտեմ՝ անպիտան դառնայ Այն մատաղն, որ զհնքն չի զենեն (Ֆ, 857) և այլն: Նկատենք, սակայն, որ կրավորական սեռի անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով արտահայտված ընդհանրական-դիմավոր կառույցներ միջինհայերենյան աղբյուրներում հազվադեպ են, ինչը միարժեքորեն պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի լեզվակիրների լեզվամտածողության առանձնահատկություններով:**

Ընդհանրական-դիմավոր կառույցների գերադաս անդամները սահմանափակություն չունեն նաև արտահայտության միջոցների կազմության տեսանկյունից. նրանք կարող են արտահայտվել և՛ համադրական, և՛

¹²² Սրանով ևս ընդհանրական-դիմավոր նախադասությունները տարբերվում են անորոշ-դիմավոր նախադասություններից, որոնց գերադաս անդամները, ինչպես նշել ենք, չեն կարող արտահայտվել կրավորական սեռի բայերով:

վերլուծական բայերի ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ ժամանակաձևերով, ինչպես՝ *Թե չուզես*, որ քուֆր *ասես*, Ջեռքըդ *տար* ու սիրտըդ *բռնե* (Հ, 222): *Մտիկ* իմ եարուն *էրէք*, Որ նուշ ու շաքար կու ծախե (Հ, 255): Այսօր ինձ *երնեկ տըւէք*, Քան զամեն օրերս եմ ուրախ (Հ, 237): Խելօքին իրատ երբ *տաս*, Բարեկամ զքեզ կու զիտե, Անգետին *խրատ* երբ *տաս*, Նա չարկամ զքեզ ճանաչե (Հ, 334): Էհանան ասե, թե զկարմիր շաֆն եւ կանաչ շաֆն *ի բան տար* (ԱՍՕԲ): Եւ հով տեղ նստի, եւ ամռան աւուրքն շատ *ի շուրջ մի՛ գալ*, զի զեն է (ԱՍՕԲ): Ահայ որդեակք, ՚ի *միտ առէք* զբանն առակիս, զի ոչ յիշեմք զաւրն ահայգին (ՎԱԱ): Յուցանե առակս, թե *մի ձեռն արկեր* եւ մի ցանկար գործոյ, որ չես հմուտ (ՎԱԱ): Մապիթ Կուռանն ասե, թե շատ *քուն եղիր* եւ գոր կերել էիր մարսես. եւ թե *քուն չկարես լինիլ*՝ պառկե՛, եւ աճռեն զձեռքդ եւ գոտքդ (ԱՍՕԲ): Եւ յորժամ աղէկ *միտք դնես*՝ նա *իմանաս* (=կիմանաս) զխօսացն զհամն (ԱՍՕԲ):

Ընդհանրական-դիմավոր կառույցների գերադաս անդամն արտահայտվում է խոնարհված բայերի՝

1. հոգնակի թվի 1-ին դեմքով՝ Յուցանե առակս, թե՛ ով մարդիք, թե զինչ գործէք եւ կամ զինչ խորհիք. թե չար եւ թե բարի, *թե փարթամանանք եւ թե աղքատանանք*. զայգին Քրիստոսի մի մոռանաք՝ զոյսն եւ զապաշխարութիւն եւ զղջումն արտասաւք (ՎԱԱ): *Հաշուենք թ՛* անպրտուղ փայտ ես՝ Կրքակին լինիս վառելիք (Ֆ, 855): Մարդ մեղօք մեռանի եւ լա, ոչ ինչ օգտի. զի Աստուած ոչ լսե աղաչանացն. այլ այժմ լսե, *որ դեռ ՚ի մարմնի եւք եւ կենդանի* (ՎԱԱ): Բաժանելն, որ գռեհկօրէն կտրատել ասի, է՛, երբ մին փոքր թուով մին որիշ մեծ համարք բաժին բաժին *կանենք* (ԴՎ): Ինչպէս *ասենք* թե մին հայր 96 սանդուղ արծաթ ունի եւ 6 զաւակ (ԴՎ):

2. Եզակի թվի 2-րդ դեմքով՝ *Այն մանկանքն մի՛ նենգել*, Որ սրտով ըզքեզ կու սիրե (Հ, 134): Ի զուր խոռովեալ *զանձես*, *Ոչ գիտես*, թե ո՞ւմ *ժողովես*, Ջաշխարիս ես ի զիրկդ *առեր*, Քեզի խոր դժոխք *կու փորես* (Հ, 502): Յուցանե առակս, թե *մի ձեռնարկեր եւ մի ցանկար* գործոյ, որ չես հմուտ (ՎԱԱ): Յուցանե առակս, թե նենգաւոր եւ անիրաւ մարդէ ՚ի զատ *կաց* եւ պատրաստ *կաց* (ՎԱԱ): *Ջրաժինքն այսպէս արա*, որ ըրորդ լինի (ՄՄԴ): Եւ զայդ *իմանաս* ի խակ պտղոցն, զի նոյնպիսիք են, զի այս Բ. (2) համքս սնուցողք են և տնականք (ԻՇ): Բայց *գիտացիր*, որ ի յամեն ցեղ այրածէ երակ առնեն ի մէկ ալ դիհացն (ԱՍՍ) և այլն:

3. Հոգնակի 2-րդ դեմքով՝ *Եւ տեսէք* թե սուրբ հայրն Սահակ քանի

տարով յառաջ, երբ դեռ Յունաց գրովն վարեաք, զգուշացոյց զմեզ եւ պնդեաց (ՍՍԴ): Զկաշառ առնուլն *մի' սիրէք*, Զշահ արծաթոյն *արտաք-սեցէք* (ԱԽ): Եւ զԱմիրտովլաթ բժիշկն *յիշեցէք* ի տէր, որ շատ աշխատա-նօք զայս գիրքս թարգմանեցի. եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գա-լուստն. ամէն (ԱՍՕԲ): *Մի մեղադրէք* Մեծպարոնին, Որ զայս սակաւ բա-նէրս ասաց, Ժամանակիս դառնութենէն (ՄՊ): Բայց *գիտասցիք* վասն ջուր իջնելուն, զի սպիտակ ջուրն ի պաղլամէ լինի (ԱՍՍ):

4. Եզակի թվի 3-րդ դեմքով՝ Վեհ իմաստուն մի ասաց. եթէ ոք շրջի ՚ի գաւառէ ՚ի գաւառ եւ ՚ի քաղաքէ ՚ի քաղաք, ոչ բազում ընչից տէր լինի եւ ոչ իմաստութեան. եւ զոր ունի, զայն եւս կորուսանէ. այլ այն է բարի. զի *նստի* մարդ լռիկ եւ հանդարտ ՚ի տանն իւրում ՚ի նմին գաւառն եւ *աշ-խատի* մարմնաւոր (ՎԱԱ): Էս աչերուն նման ծովեր՝ մարդ *չէ տեսեր* ծով ծիրանի (ՄԽՏ, 350):

5. Հոգնակի թվի 3-րդ դեմքով՝ Եւ թէ յիմար լինի՝ նա լաւն այն է, որ *չի տանին առ* հիւանդն, եւ ոչ զնա բժիշկ *համարին* (ԱՍՕԲ): Գեղիանոս ասէ, թէ զջուրն ի վերայ կերակրին այնչափ *պիտի խմեն*, որ զծարաւն խաղեցնէ եւ զկերակուրն ի վայր տանի, որ ստամոքն թէթեւ լինի (ԱՍՕԲ): Թ՛ որորդ սիրելի ես դու, Հանց արա, որ զքեզ *չի խոտեն* (Հ, 857): Աս աստնվորիս վե-րայ Մէր չկայ առանց զահմաթ. Յառաջ զշէհրն *կուտեն*, Յետն *կու խմեն* զշարպաթ (Հ, 216):

Ընդհանրական-դիմավոր կառույցների՝ կազմութեամբ պարզ գերա-դաս անդամներն արտահայտվում են համադրական և վերլուծական բա-յերի թե՛ միջին հայերենի և թե՛ գրաբարի խոնարհման համակարգերին բնորոշ ժամանակաձևերով:

Միջին հայերենի խոնարհման համակարգի ժամանակաձևերից որ-պէս գերադաս անդամ գործածվում են՝

ա) սահմանական ներկան՝ Ծնել եւ ՚ւ յաշխարհս եկել, Տուր խա-պար, թէ ուստի՞ *կու գաս* (Հ, 389): Ի գուր խոովեալ *զանձես*, *Ոչ գիտես*, թէ ո՞ւմ *ժողովես* (Հ, 502): Եւ թէ *կամիս*, որ իմանաս, թէ ո՞ր ողնայշարն է ելեալ ի տեղեացն, դիր ձեռտ ի մեջ թիկանցն և յողնայշարն (Գ, 77): *Տեսանես*, զի-արդ վասն այլոց զայլ նշանակէ (ԴԶ, 139): Թէ *ուզես*, որ մնճղեխն ի մօտդ

չը գայ, ճուղ մի կանափի ի յանկողինս դիր (ԱՍՍ, 135)¹²³: Եւ զչոր վարդն *ծեծես* եւ ջրով *շաղես* եւ ի վերայ ակոփն *դնես* եւ ի վերայ փորուն. աղէկ է (ԱՍՕԲ)¹²⁴,

բ) վաղակատար ներկան՝ Չաշխարհս *ես* ի գիրկդ *անէր*, Քեզի խոր դժոխք կու փորես (Հ, 502),

գ) վաղակատար անցյալը՝ Մապիթ Կուռանն ասէ, թէ շատ քուն ե- դիր եւ գոր *կերել էիր* մարսես. եւ թէ քուն չկարես լինիլ՝ պառկէ՛ (ԱՍՕԲ),

դ) ըղձական ապառնին՝ Յուցանէ առակս, թէ սգաստ լեր, որ *չէ խա- քիս* ՚ի սատանայէ եւ ՚ի նենգոր մարդկանէ. զի կապէ սատանայ գմարդ ՚ի մեղք եւ ՚ի հեշտութիւն, եւ յանժամ *տաս* վա՛յ անձին քո, որ գայ Քրիստոս ՚ի դատաստան (ՎԱԱ): Տե՛ս, որ *չի խեռաս* գոչով Կամ *ասես*, թ՛ «Այս է՞ր կու լինի» (Հ, 864)¹²⁵: Ճանպորդ քեզ յայնժամ ասեմ, Որ զճանպիհի դատրն *գիտենաս* (Հ, 389),

ե) հարկադրական ապառնին՝ Գեղիանոս ասէ, թէ զջուրն ի վերայ կերակրին այնչափ *պիտի խմեն*, որ զծարան խաղեցնէ եւ զկերակուրն ի վայր տանի, որ ստամոքն թեթեւ լինի (ԱՍՕԲ),

զ) հրամայական ապառնին՝ Զօր մահուն մտաց *մի՛ հանել* (ՀՄ, 923): Աշխարհիս սահմանն է հանց. *Մի՛ կենար*, եղբայր, ի յերեր (Հ, 923): Եւ այն որ չերենայ՝ *հարցի՛ր* հիւանդին թէ որպէս է, եւ ստածէ՛ շուտով (ԱՍՕԲ): Եւ ամէն հով կերակրէ պատրաստ *կացիր*: Եւ ամէն հաստ կերակրէ պատ- րաստ *կեցիր* (ԱՍՕԲ): *Սովորեցո՛յ* զքո լեզուդ, Զի քո ծառայ իցէ, *Մի՛ բամ- բասել* զոք ..., Քանզի վտանգ իցէ (ԳՏ, 186): Յուցանէ, թէ մի զքո խորհուրդն մարդոյ այտներ. եւ թէ զիտես, որ զեն բերէ քեզ, կնոջո՞ւ պ մի ասել, թէպէտ կէս մարմնոյդ է՝ թող թէ օտարաց (ՎԱԱ): *Տե՛ս* եւ լաւ *միտ դիր* այսպէս (ԴԶ, 137): Զբողկն ձիթով *ենացուր* և սուզ այն ձէթն և *կայթեցո* (ԱՍՍ, 122) և այլն: Վերոնշյալ ժամանակաձևերից բացի՝ ընդհանրական-դիմավոր նա-

¹²³ Ընդգծված բայաձևը խոսքային այլ իրադրությունում կարող է ընկալվել որպէս ըղձական ապառնի («ուզես»):

¹²⁴ Ընդգծված բայաձևերը խոսքային այլ իրադրությունում կարող են ընկալվել որպէս ենթադրական ապառնի («կծեծես» և այլն):

¹²⁵ Հետևյալ կառույցում ըղձական ապառնիով մի դեպքում արտահայտվում է հենց ըղձական ապառնու, մյուս դեպքում՝ ենթադրական ապառնու քերականա- կան իմաստ՝ Եւ յորժամ աղէկ *միտք դնես*՝ նա *խմանաս* (=կիմանաս) զիսուացն գիսան (ԱՍՕԲ):

խաղասությունների՝ կազմությամբ պարզ գերադաս անդամներն արտահայտվում են նաև գրաբարի խոնարհման համակարգի ժամանակաձևերով, այդ թվում՝

ա) սահմանական ներկայով՝ Դարձեալ ցուցանէ առակս, թէ մի վստահանար յորդիս քո եւ ՚ի յորդիս որդոց քոց, թէ քաւեն զմեղս քո. այլ ջանայ, որքան որ *կարես*՝ ապաշխարութեամբ եւ արտասուաւք (ՎԱԱ): Տանիս զնայ ի բանտ ածես, Դէմ դռանն քար մի ձրգես (ԹԼԿ, 904): Մովսէս մարգարէ *չասես*, Ի ի Դավթայ իսկի *չամաչես*, ՉԱբրահամ հայրըն *տանիս*, ՉԻսահակ ի հողն *աճըռես*, ՉՏրդատ յաթոռոյն *ձգես*, ՉԿոստանդին *ի յայք չբերես*, Թէ կանգնէր հազար հեծել Եւ ժողովք՝ իսկի *չի վախես*, Թէ հազեր է վեց զրեհ, Նետ *նետես*՝ *ի թափն անցընես* (ԹԼԿ, 904):

բ) անցյալ կատարյալով՝ *Ծնար* ի մեկ դուռն ի նես, Մերկ յաշխարհ *եկիր* անցական (Հ, 926)¹²⁶,

գ) 1-ին ապառնիով՝ Որդեա՛կ, եթէ լսես բան ինչ ի դրանէ արքունի, մեռո՛ւ և թագո՛ զնա ի սրտի քում և *մի* ումեք *վերահանիցես* (ԽԻԽ, 77): Մի *վրիպիցիս* ի խրատուս, զի մի սղալիցիս (ՀՄՁ, 255): Եւ նոյնս, թէ կամիցիս անուն յօրինել, լինի սուրբ, և թէ *կամիցիս* առնել սահմանական ներկայ ներգործական, լինի սրբեմ, կրաւորական՝ սրբիմ (ՀՄՁ, 255): Եւ հրամայէ աւետարան, թէ մի դատիք եւ *ոչ դատիցիք* եւ *ոչ պատժիցիք* (ՎԱԱ),

դ) 2-րդ ապառնիով՝ Չայս առասպելս զիտելով *մի* երբէք *պատրիցիս* ՚ի սուտակասպաս գովութենէ (ՎԱԱ): Եւ *իմասցիս*, զի ԱԺ (11) շրջագայք են գեր ի վերոյ մեր, և Արեգակն զմիջոց նոցա ունի (ԻՇ, 84): զի յորժամ անունն կամ բայն կամ այլքն բազում հեգիւք բաղկանան, *մարթասցես* բաժանել զիրսն անձայնս ի վերայ ձայնաւորացն (ԴՁ, 93): Չկապն կնքեալ մի՛ արձակել, և զարձակեալն *մի՛ կասկեսցես* (ԽԻԽ, 77): Բայց զգոյշ լէր, զի մի *սիսալեսցիս*. զի ոմանք զմեծ նախադասութիւնն եղին սկիզբն նախադասութեան (ՀՄՁ, 244),

Նկատենք, որ 2-րդ ապառնիին գերազանցապէս հանդիպում է գրաբարից քաղված արտահայտություններում, ինչպէս՝ Այսպէս և զամենայն

¹²⁶ Անցյալ կատարյալին տեղ ենք տվել գրաբարի խոնարհման համակարգի ժամանակաձևերի շարքում, քանի որ մեզ հանդիպած երկու բայաձևերն էլ (*ծնար* և *եկիր*), միջինհայերէնյան աղբյուրում գործածված լինելով հանդերձ, պահպանել են գրաբարի խոնարհման համակարգի առանձնահատկությունները:

իր ի սահմանս *qingtu* (ՅԵ, 303): Սոյնպէս և զբովանդակն *խմացիս*, քանզի միոյ տառին յաւելլուածն կամ պակասութիւն ի տեսութենէ զրկէ զբանն ի խորհրդոյն (ԴԶ, 145): *Կայցիս* զՀոռիս ընդ կրկնակին սոյնպէս առնես զամենեսին (ԴԶ, 183):

ե) բուն հրամայականով, ինչպէս՝ Եւ ի թանծր կերակրէ պատրաստ *կաց* (ԱԱՕԲ): *Պատուեա՛* զբժիշկք ի պէտս քո, զի եւ սա Աստուծոյ արարեալ է (ԱԱՕԲ): *Ասայ* գառակս, յորժամ կոչեն զքեզ ՚ի բան կամ ՚ի գործ անդէպ եւ անման, որ ՚ի վեր է քան զկարողութիւն քո (ՎԱԱ): Մալի, գանձի մի՛ *ցանկար*. (ՀՄ, 923),

զ) հորդորական հրամայականով, որն, ըստ էության, գրաբարաբանության դրսևորում է՝ Եւ արդ, այսպէս *խմացիք* զարուեստ հեգիցն կպելոյ և զբաժանումն տառիցն ի շինել զհեզսն (ԴԶ, 93):

Համադրական և վերլուծական ժամանակաձևերով գերադաս անդամների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց բնորոշ գծերից մեկը զուգադիր ձևերով արտահայտվելն է¹²⁷: Ի տարբերություն գրաբարի, որում լեզվական զուգաձևություններ թեև կային, սակայն լայնորեն տարածված չէին, միջին հայերենից ավանդված լեզվական աղբյուրներում բազմաթիվ են լեզվական նույն իրողության արտահայտության պլանում գոյություն ունեցող (հնչյունական, բառային, քերականական) տարատեսակ անմիօրինակություններն ու դրանց հետևանքով առկա զուգաձևությունները: Ավելին՝ միջին հայերենում ավելի շատ անկանոնություններ, անմիօրինակություններ և զուգաձևություններ կարելի է փաստել, քան թե միօրինակ և կանոնարկված լեզվական իրողություններ: Դա կարող է

¹²⁷ Չուգաձևությունը՝ որպէս լեզվական իրողություն, բնորոշ է բոլոր լեզուներին: Գրական հայերենին այն հատուկ էր դեռևս դասական գրաբարի ենթաշրջանում: Անդրադառնալով մասնավորապէս բայական զուգաձևություններին՝ նշենք, որ դրանք հանդիպում են 5-րդ դարից ավանդված երկերում: Այսպէս՝ Փարպեցու պատմության մեջ *հասանել* կանոնավոր բայի բուն հրամայականի եզակի թիվը գործածվել է *հա՛ս* կանոնավոր ձևով (Առ ի բժշկութիւն վիրաւորաց փութա՛, *հա՛ս* յօգնել), մինչդեռ Բուզանդի պատմության մեջ այն հանդես է եկել *հասի՛ր* անկանոն ձևով (Վաղ *հասիր*, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու եւ յանցանաց խողխողեն): Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» *պարածածկէմ* բայի անցյալ դերբայը մի դեպքում կազմվել է առաջին հիմքով՝ *պարածածկէալ*, մյուս դեպքում՝ երկրորդ՝ *պարածածկեցեալ* և այլն: Այս մասին առավել մանրամասնորեն տե՛ս Գ. Խաչատրյան, 2011, 4-19:

պայմանավորված լինել՝ ա) հայ ժողովրդի կյանքում տվյալ ժամանակահատվածում առկա պատմաքաղաքական իրավիճակի, բ) լեզվի խոսակցական հիմքի փոփոխության, գ) մեր օրեր հասած փաստական սղբյուրների հեղինակների՝ ծագումով տարբեր վայրերից, տարբեր բարբառակիրներ լինելու, դ) այդ սղբյուրների՝ տարբեր իրադրություններում ու ժամանակահատվածներում գրվելու և այլ հանգամանքներով: Գրական հայերենի զարգացման հիշյալ շրջանում լեզվական զուգաձևությունների բազմաթիվ փաստեր են առկա ոչ միայն տարբեր դարերից մեզ հասած գրավոր հուշարձաններում և նույն ժամանակաշրջանի տարբեր հեղինակների ստեղծագործություններում, այլև նույն հեղինակի միևնույն գործում: Այսպես՝ միջնադարյան Կամենից քաղաքի հայկական դատարանի արձանագրություններում (Կ-Պ) տեղ են գտել հնչյունական, բառային և քերականական բազմաթիվ զուգաձևություններ: Վերջիններս կարող են մի դեպքում տվյալ բարբառակիր քարտուղարի անհետևողականության, մյուս դեպքում՝ դատական գործընթացներին մասնակցած տարբեր բարբառակիրների լեզվամտածողության արտահայտությունը լինել¹²⁸: Հմմտ. ... եւ կոչեց զԳրիբգորն ի յատեանն (արձ. թիվ 573) և ... եւ գոչեց իւր մոտն (արձ. թիվ 561), զձիուն գինն (արձ. թիվ 151) և կտաւին քինն (արձ. թիվ 103), դատաստանին առջեն եկին (արձ. թիվ 297) և դատաստանին առջեն եկան (արձ. թիվ 232) և այլն:

Մասնավորապես միջին հայերենի խոնարհման համակարգում զուգաձևություններ են առաջանում ոչ միայն միևնույն ժամանակաձևի արտահայտության պլանի, այլև միևնույն բայի կազմության տեսանկյունից: Վերջին դեպքում նկատի ունենք՝ ա) որևէ բայի հնչյունափոխված և չհնչյունափոխված, բ) պարզ կամ ածանցավոր և գ) տարբեր լծորդ ձայնավորներով կազմված լինելու հանգամանքները, ինչն արտահայտություն է գտել նաև ընդհանրական-դիմավոր նախադասություններում: Այսպես՝ լինիլ բայի արգելական հրամայականը Ամասիացին գործածում է թե՛ ի լծորդ ձայնավորով, թե՛ ա զուգաձևով և երկու դեպքում էլ՝ միևնույն քուն

¹²⁸ Լեհահայ գաղութն իր կազմով միատարր չէր. տարբեր ժամանակահատվածներում այն համալրվում էր արևելահայ և արևմտահայ գաղթականներով (Կ-Պ, 19, 39), ինչի մասին վկայում են նաև դատական արձանագրություններում պահպանված լեզվական մի շարք փաստեր:

լինիլ վերլուծական բարդության կազմում: Հմնտ. Եւ թէ դեղն բան չի դնէ՝ քուն մի՛ լինիք (ԱՍՕԲ) և Եւ կուշտ ի քուն մի՛ լինար (ԱՍՕԲ): Չորացնել պատճառականը, բացի չորացն՛ւ և չորցն՛ւր զուգաձևությունից, հանդիպում է նաև չորցն՛ւ զուգաձևով: Հմնտ. Եւ հապ արա եւ ի շուքն չորցն՛ւ (ԱՍՕԲ): Հապ արա քարօսի ջրով եւ ի շուքն չորցն՛ւր (ԱՍՕԲ) և Տրորէ՛ եւ շաֆ արա եւ չորացն՛ւ (ԱՍՕԲ): Ճեղքել բայն ունի ճեղքէ՛//ճղքէ, համապատասխանաբար, չհնչյունափոխված և հնչյունափոխված զուգաձևեր: Հմնտ. Յառաջն աչացն աղբիւրին դիհն ճղքէ՛ եւ բա՛ց և Եւ թէ այս դեղս ոչ օգտէ՛ դու գտեղն ճեղքէ՛: Հմնտ. նաև անհնչյունափոխ լուս՛ւ և պատմական հնչյունափոխության ենթարկված լվս՛ւ զուգաձևերը՝ Եւ եղի ջրով հանապազ լվս՛ւ զգլուխն (ԱՍՕԲ) և Եւ թէ տաքութիւն լինայ՛ լուս՛ւ զարանքն հազրի ջրով (ԱՍՕԲ): Գրաբարյան լնու՛մ բայի արգելական հրամայականի եզակի թիվը ու լծորդ ձայնավորին զուգահեռ հանդիպում է է լծորդ ձայնավորով (Եւ ի վերայ գլխուն տաք ջուր մի՛ լնէր), թէև Ամասիացին գործածում է նաև այդ բայի՝ ու լծորդ ձայնավորով անկատար անցյալի¹²⁹ եզակի թվի 2-րդ դիմային ձևը (լնուս), ինչպես՝ Տաս ասպաղօլի ջուր, վարդի ձիթով ի վերայ ցաւուն լնուս (ԱՍՕԲ): Եւ զջուրն ի վերայ գլխուն լնուս օգտէ (ԱՍՕԲ) և այլն:

Ընդհանրական-դիմավոր կառույցների՝ հրամայական բայաձևերով արտահայտված գերադաս անդամների ուսումնասիրությունից, օրինակ, պարզվում է, որ դրանք գործածության անմիօրինակություն են հանդես բերում ոչ միայն միջին հայերենի խոսակցական, այլև գրական մակարդակներում: Քերականական միևնույն իրողությունը բառային տարբեր միջոցներով արտահայտելը բնորոշ է անգամ միևնույն հեղինակի, մասնավորապես Ամիրդովլաթ Ամասիացու լեզվին: Ասված մասին վկայում է նրա «Օգուտ բժշկութեան» բժշկարանը, որում զուգաձևությունների և անկանոնությունների առումով առանձնանում են հրամայական ապառնու և՛ դրական, և՛ ժխտական խոնարհումները, որոնցում առկա են թե՛ երկանդամ, թե՛ եռանդամ և թե՛ բազմանդամ զուգաձևեր: Բայական զուգաձևերի՝ նույն երկում առկայությունը վկայում է միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում (15-16-րդ դդ.) առկա լեզվական իրավիճակի մասին:

¹²⁹ Հասկանալի է, որ Ամասիացու երկում այն արդեն ըղձական անցյալի իմաստ ունի:

Վերջիններս ուրվագծում են և՛ կանոնավոր, և՛ անկանոն բայերի հրամայական ապառնու արտահայտման միջոցների հետագա զարգացումները:

Նշեցինք, որ միջին հայերենում ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է անդիմասահմանափակ բայերի հոգնակի թվի 1-ին, եզակի թվի 2-րդ, հոգնակի թվի 2-րդ, եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 3-րդ դիմային ձևերով: Ստորև կանդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

Ա. *Հոգնակի թվի 1-ին դեմքով արտահայտվող ընդհանրական-դիմավոր նախադասություններ:*

Հոգնակի 1-ին դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունները գերազանցապես արտահայտվում են գրաբարատիպ և մասնիկավոր սահմանական ներկա ժամանակաձևով: Օրինակ՝ Յուցանէ առակս, թէ այսպէս *ագահիմք եւ ջանամք* որդիք մարդկան ՚ի գրկել եւ ՚ի յափշտակել, ՚ի յուտել եւ ՚ի յըմբել, ՚ի յագահիլ եւ ՚ի շնալ եւ յայլ մեղս (ՎԱԱ): Գ. ազգ սեր կայ յաշխարհս. մին հօրն եւ մօրն ՚ի վերայ որդոյ. Բ. զի այրն զկինն սիրէ եւ կինն¹³⁰ զայրն. եւ Գ. զի զաշխարհս *սիրեմք*. եւ ՚ի զի աշխարհիս սերն սուտ է (ՎԱԱ): Բազմացնելն, որ եւ գոեկօրէն ռաղամ անել ասի, է՛ երբ մին փոքր համարքով մին որիշ մեծ համարք *կու շատացնենք* (ՂՎ):

Հոգնակի թվի 1-ին դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունները գործածվում են խոսքը ոճավորելու նպատակով: Եթե 2-րդ և 3-րդ դեմքերով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասություններում գործողության վերագրման տեսանկյունից 1-ին դեմքով ենթադրյալ խոսողը (կատարողը) հայտնվում է երկրորդական պլանում, ապա 1-ին դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասություններում և՛ խոսողն է առաջին պլանում, և՛ ենթադրյալ խոսակիցները: Ենթադրյալ կատարողների շարքում խոսողի ընդգրկված լինելը տվյալ գործողության կատարումը դարձնում է իրատեսական, ավելի հավանական ու համոզիչ: Ինչպես՝ *Բեր տեսցուք*, թէ ի մի նիւթոյ գոյացոյց աստուած զերկնայինսն և զերկրայինսն (ՅՈՂ, 356): Բեր տեսցուք զմիաբանութիւն ծննդոցն (ՄՏ, 410):

Հոգնակի թվի 1-ին դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասու-

¹³⁰ Բնագրում՝ *զկինն*:

թյունները միջին հայերենում հաճախադեպ չեն¹³¹:

Բ. Եզակի 2-րդ դեմքով արտահայտվող ընդհանրական-դիմավոր նախադասություններ:

Եզակի թվի 2-րդ դեմքի գերադաս անդամով ունեցող ընդհանրական-դիմավոր նախադասությունների արտահայտվման միջոցներից են՝

ա) սահմանական ներկան, ինչպես՝ Բարդելն, որ եւ ջամ անել կասեն, լինի, երբ շատ համարք ի մին տեղ *հաւաքես* (ՂՎ): Դուրս հանելն կամ դուս ձգելն է՝, երբ փոքր համարքն մին մեծ համարքէ *կու հանես* (ՂՎ): Չկարէ փայտ մնալ ի կրակն, զի *գիտես*, որ շուտ կու այրի (ԽԿ, 32) և այլն.

բ) գրաբարյան ապակատար ներկան՝ Դատաստանքն ակն կալ, զի *տալոց էս* անդ պատասխան (ԽԿ, 31).

գ) ըղձական ապառնին, ինչպես՝ Գրոց թէ *ականջ դրնես* և ունիս միտս բանական (ԽԿ, 31): Գայ ձմեռն և ձիւն բերէ, Անհանդերձ՝ ցրտով *նըւաղիս*, Յորժամ որ գարուն լինի, մեծ *ամօթ կըրես* ՚ւ *ամաչես* (ԽԿ, 37): Պարտք է հեռանալ անտի, որ *չլնիս* բաժինն գեհենի (ԽԿ, 32) և այլն.

դ) հրամայական ապառնու բայաձևերը, որոնք հավասարապես հանդիպում են թե դրական և թե՛ ժխտական խոնարհմամբ: Օրինակ՝ Եւ այն որ ի սաֆրայէ՝ զփորն *լուծէ՛* հալիլայի մատպուխով եւ շահթառայի ջրով եւ դեղին հալիլայով, եւ սիսոան եւ բակլայի եւ տղտի ալրով զգլուխն լվա՛ (ԱՍՕԲ): Եւ մո՛ւտ ի բաղանիս եւ *լվացվէ՛* եղկ ջրով (ԱՍՕԲ): Եւ զսեւ հնտիկն *խորվէ՛* եւ նշի *խառնէ՛* եւ *օծէ՛* (ԱՍՕԲ) Եւ միս եւ գինի *մի՛ տուր* (ԱՍՕԲ): Եւ թթվնի տուր, եւ քաղցր *մի՛ տալ* (ԱՍՕԲ): Քեզ օրինակ. եւ ունիմ 8642 փաստավ չուխայ, ամէն փաստավ՝ 62 գազ, *տե՛ս* թէ 8642 փաստավն ողջ քանի՛ գազ է (ՂՎ): Ե՛կ, որ օրինակ բերեմ զառաջին մարդիկն, որ անցան (ԽԿ, 31): Ով լինի իմաստնոյն ինք հակառակ՝ չար կամելով, Նա հանց *տես*, թէ լել Յուդայ և զնա *խաչէ՛* չարչարելով (ԿԵ, 86) և այլն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ընդհանրական-դիմավոր նախադասություններում որպես գերադաս անդամ հանդես եկող հրամայական ապառնու եզակի թվի 2-րդ դեմքը միջին հայերենում ունի կազմության մի շարք ձևեր, որոնք կա՛մ ավանդվել են գրաբարից, կա՛մ միջինհայերենյան քերականական իրողություններ են: Եվ քանի որ Ամիրդովլաթ

¹³¹ Նույնը նկատելի է նաև ժամանակակից հայերենում (Գ. Ջահուկյան, 1974, 395):

Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ եզակի թվի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասություններն ակնհայտորեն հաճախադեպ են, այլև աչքի են ընկնում արտահայտության պլանի բազմազանությամբ՝ արտացոլելով միջին հայերենի հրամայական ապառնու եզակի թվի կազմության ամբողջական պատկերը, ուստի ստորև քննության կառնենք այդ աշխատության մեջ գործածված հիշյալ նախադասությունները, որոնցից շատերի գերադաս անդամներն ունեն նաև գուգաձևեր ու անկանոն կազմություններ: Հրամայական ապառնու եզակի թվի 2-րդ դեմքով անկանոնությունների, անմիօրինակությունների և գուգաձևությունների պատկերը հնարավորինս ամբողջական ներկայացնելու նպատակով ըստ անհրաժեշտության անդրադարձել ենք նաև՝ ա) այլ աղբյուրներում վկայված լեզվական փաստերի, որոնք տեղ են գտել ընդհանրական-դիմավոր կառույցներում, բ) Ամասիացու հիշյալ երկի որոշ երկկազմ նախադասություններում գործածված եզակի հրամայականի ձևերի:

Հրամայական ապառնու դրական խոնարհման եզակի թիվը գերազանցապես գրաբարաձև է. այն հանդես է գալիս կա՛մ առանց փոփոխություն կրելու, կա՛մ միջին հայերենին բնորոշ հնչյունափոխությամբ, այսինքն՝ արտահայտվում է կա՛մ շեշտակիր երկրորդ հիմքով, կա՛մ էլ, նայած բայի կազմությանը և լծորդ ձայնավորին, «երկրորդ հիմք+շեշտակիր դիմաթվային վերջավորություն» մասնակադապարով: Խոնարհման ներգործաձև և կրավորաձև տարբերակները միջին հայերենում սեռի քերականական կարգի արտահայտման միջոց չեն ծառայում: Ասվածի մասին են վկայում ստորև բերվող լեզվական փաստերը, ըստ որոնց՝ հրամայական ապառնու դրական խոնարհման եզակի թիվը ունի կազմության հետևյալ տարբերակները:

1. Մի դեպքում այն արմատական է, ինչպես՝ *ա՛ն, ել, ե՛րթ, զա՛րկ, թո՛ւք, լի՛ց, լո՛ւծ, կե՛ր, հա՛ն, հա՛ր, մո՛ւտ, նի՛ստ, տե՛ս*: Օրինակ՝ Հանապազ խունկ եւ մագտաքէ ծամէ եւ *թո՛ւք* ի դուրս: Եւ ի բաղանիս *մո՛ւտ* (ԱՍՕԲ): Եւ *տե՛ս*, երբ տղան ծնաւ, թէ Լուսինն յո՛ր կենդանակերպ է, եւ *ե՛րթ* ի յետ ԲՃՀԳ օր (ԱՍՕԲ)¹³²: Եւ աղա՛ գշանփինն եւ *հա՛ր* որ միաւորի որպէս մորհամ. եւ *հա՛ն* ի վերայ քթեթ (ԱՍՕԲ): Բերված շարքում առկա

¹³² Հմմտ. *Տե՛ս*, զի արդ յառաջին դեմն լծեցաւ մենն ընդ քէի և բազմացան թիւք (ԴԶ, 137): *Տե՛ս*՝ երեկոյին միաշաբաթին ասաց, և ոչ երկուշաբաթին (ՎԸԼ, 282):

են նաև գրաբարյան անկանոն և պակասավոր բայերի եզակի հրամայականի ձևեր (*ա՛ն, ե՛րթ, կեր, հա՛ն, հա՛ր, նի՛ստ*), որոնք գործուն են նաև միջին հայերենում:

2. Երկրորդ դեպքում այն ցոյական է, սակայն *ց* բաղադրիչը ինչպես գրաբարում, այնպես էլ տվյալ դեպքում չի պահպանվում: Պատճառն այն է, որ միջին հայերենում *-եա՛* վերջավորությունը հնչյունափոխության է ենթարկվել և լայնորեն հանդես է գալիս որպես շեշտակիր *-է՛*, ինչպես՝ Եւ թէ հին լինի՝ զգուխն *ածիլէ՛* եւ եղ կո *օծէ՛*, զնոր պտուկն *ծեծէ՛* եւ *մաղէ՛* եւ ի վերայ տեղուն *ցանէ՛* (ԱՍՕԲ): Ա՛ն շաֆթալուի տերեւ եւ հինայ եւ սօտ եւ չոր վարդ, *ծեծէ՛* եւ *եփէ՛* եւ ի վրան *շփէ՛* (ԱՍՕԲ): Իսկ յորժամ ընծայի տղան՝ դու *հաշվէ՛* (ԱՍՕԲ): Եւ ձեռօքդ *աճո՛ւ* եւ զլուսպն հա՛ն (ԱՍՕԲ):

Ամասիացու բժշկարանում նշված վերջավորությամբ (*-է՛*) բայաձևերի հաճախակի կիրառությունը պայմանավորված է նրանով, որ հեղինակը՝ ա) գրում է միջին հայերեն՝ գերազանցապես գործածելով առտնին գործողություն ցույց տվող, միջին հայերենի գործուն բառապաշարի մաս կազմող *է* խոնարհման պարզ բայեր, բ) շարադրանքն ավելի հաճախ առաջ է տանում ընդհանրական-դիմավոր նախադասությունների միջոցով, որոնց գերակշիռ մասի գերադաս անդամներն արտահայտված են հիշյալ բայերի հրամայական եղանակի եզակի թվով:

-Է վերջավորությամբ եզակի հրամայականի լայն կիրառությունը դարձել է բայական մի շարք զուգաձևությունների առաջացման նախապայման, որոնց կանդրադառնանք ստորև:

Սակայն պետք է նկատել, որ *է* խոնարհման պարզ բայերի հրամայականի նշված ձևից բացի՝ միջին հայերենում, այնուամենայնիվ, գործածվում են գրաբարյան բուն հրամայականի (*-եա՛* վերջավորությամբ) ձևեր, որոնք գերազանցապես հանդիպում են՝ ա) գրաբար գրված ստեղծագործություններում, մասնավորապես՝ պատմագրական երկերում, բ) միջին հայերեն գրված գործերի՝ գրաբար շարադրված որոշ հատվածներում կամ էլ գ) միջին հայերենով շարադրված գործերում՝ վերջին դեպքում հաճախ ունենալով դիպվածային բնույթ [Այլ զպարտիզի քասնուն տակն հանէ և գինով *եփեայ* (ԱՍՍ, 207)] կամ ծառայելով որպես ռճի դրսևորման միջոց (գրաբարաբանություն): Այսպես՝ ըստ մեր հաշվարկի՝ միջին հայերենով շարադրված հիշյալ բժշկարանում Ամիրդովլաթ Ամասիացին, օրինակ, գրաբարաձև բուն հրամայականներ գործածում է ընդամենը 3 անգամ,

որոնցից երկուսը՝ հիշյալ գրքի առաջաբանում՝ միակազմ նախադասություններում, երբ մեջբերումներ է կատարում գրաբարյան բնագրերից՝ *Պատուեա՛* գրքիչկք ի պետս քո, զի եւ սա Աստուծոյ արարեալ է (ԱՍՕԲ): Որպէս ասէ մարգարէն Դաւիթ, թէ Աստուած իմ, *փրկեա՛* զիս ի կարճմտութենէ (ԱՍՕԲ), իսկ մեկը՝ բուն շարադրանքում՝ Եւ զանարժան ծանայս *յիշեա՛*. յիշեալ լիցիք ի գալ նմա (ԱՍՕԲ):

Հայտնի է, որ միջին հայերէնում գրաբարյան ածանցավոր մի շարք բայեր, կորցնելով բայածանցը, վերածվել են պարզ կազմությունների: Այդ գործընթացը միանգամից չի կատարվել: Բնագրերում զուգահեռաբար հանդիպում են նույն բայերի թե՛ ածանցավոր և թե՛ պարզ տարբերակները, ինչը վկայում է որ զուգաձևեր էին առաջանում բայերի կազմության փոփոխության հետևանքով նույնպես: Այսպէս՝ գրաբարյան *լուծանել* բային զուգահեռ միջին հայերէնում հանդիպում է նաև *լուծել* զուգաձևը¹³³: Ամասիացին միակազմ նախադասություններ է գործածում թե՛ մեկի, թե՛ մյուսի եզակի հրամայականով, որի հետևանքով զուգաձև են կազմում նաև հիշյալ բայերի եզակի հրամայականները (համապատասխանաբար, *լն՛ լծ-լուծէ՛*): Հմմտ. Եւ թէ փորն կապ լինի՝ *լն՛ լծ* (ԱՍՕԲ) և Եւ զփորն *լուծէ՛* մրգաջրով (ԱՍՕԲ): Տվալ դեպքում հատկանշական է և այն, որ Ամասիացին դասական *լոյ՛ ծ* բայաձևի փոխարեն գործածել է նրա՝ պատմական հնչյունափոխության ենթարկված տարբերակը՝ *լն՛ լծ*: Քերականական նույն երևույթն ենք արձանագրում նաև *օծանել* և *օծել*¹³⁴ բայերի առումով (համապատասխանաբար, *օ՛ ծ-օծէ՛*): Հմմտ. Եւ զայս արա եւ *օ՛ ծ* ի գլուխն (ԱՍՕԲ) և Եւ *օծէ՛* զանձն հով դեղերով (ԱՍՕԲ):

Հավելենք նաև, որ եթե գրաբարից ժառանգված *է* լծորդության պարզ բայերի եզակի հրամայականի *-է՛* դիմաթվային վերջավորությունը միջին հայերէնում դիտվում է որպէս երկրորդ հիմքի պատմական հնչյունափոխության հետևանք, ապա բուն միջինհայերէնյան *է* խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականների կազմությանն արդէն մասնակցում է վերաիմաստավորված՝ որպէս այդ բայերի առաջին հիմքին ա-

¹³³ ՆՀԲ-ում *լուծել* բայը համարվում է «առաւել ռամկօրէն» (տե՛ս համապատասխան բառահոդվածը):

¹³⁴ ՆՀԲ-ում *օծել* բայը համարվում է «առաւել ռամկօրէն» (տե՛ս համապատասխան բառահոդվածը):

վելացող նոր դիմաթվային վերջավորություն, ինչպես՝ խածկել՝ *խածկէ՛*, կտրատել՝ *կտրատէ՛*, շաղաղել՝ *շաղաղէ՛* և այլն: Օրինակ՝ Ա՞՞ մարդու մազ, *խածկէ՛*, ուստուպաճ խառնէ՛ (ԱՍՕԲ): Եւ *կտրատէ՛* եւ տո՛ւր ժմուն Գ դրամ (ԱՍՕԲ): Եւ աղողարհան եւ սպանդ եւ կապարի կեղեւ ծեծէ՛ եւ մեղրով *շաղաղէ՛* (ԱՍՕԲ):

Գրաբարում է խոնարհման որոշ պարզ բայերի (*ածես, բերես, համբերես, հանես, հեղուսես*) երկրորդ հիմքն անկանոն էր. կազմությամբ ոչ թե ցոյական էր, այլ արմատական¹³⁵: Սրանցից՝ ա) *հեղուսես*-ը միջին-հայերենյան աղբյուրներում առհասարակ չի հանդիպում, բ) *համբերես* բայը հրամայականում գործածվել է միայն *համբերէ՛* տարբերակով՝ Եւ Ա ժամ *համբերէ՛* եւ վարդի ձիթով օձէ (ԱՍՕԲ): Ինչ վերաբերում է *ածել, բերել* և *հանել* բայերին, ապա նրանց մասին դիտարկում ունի Ս. Անթոսյանը: Նա նշում է, որ միջին հայաերենում այդ բայերը հրամայականում «ունեն արմատական (ոչ ցոյական) ձևեր՝ *հա՛նն* ..., *բե՛ր* ..., *ա՛ծ* ...»¹³⁶: Ասվածը հաստատող վկայություններ կան նաև Ամասիացու հիշյալ բժշկարանում: Օրինակ՝ Եւ ծոծրկէն ապիկիս արկ եւ *հա՛նն* ցաւն ի ծոծրկէն (ԱՍՕԲ): Եւ թէ այտով չողջանայ՝ դուն ճղքէ՛ գտեղին եւ *հա՛նն* զցաւն եւ յետոյ ցանէ՛ զրուր (ԱՍՕԲ): Եւ ձեռօքդ աճո՛ւ եւ զլուսայն *հա՛նն* եւ զատէզատ դիր ապիկի (ԱՍՕԲ): Զամէնն *ա՛ծ* ի հաւան եւ տրորէ՛ (ԱՍՕԲ): Եւ թէ ոչ՝ որ զարկեր որ եարայ է բացվեր՝ *յիրար բեր՛*¹³⁷ եւ պողպատ ասողով կարէ՛ (ԱՍՕԲ): Նկատենք սակայն, որ Ամասիացին նույն բժշկարանում *հա՛նն* հրամայականին զուգահեռ գործածում է միջին հայերենի գոնե որոշ բարբառներում ընդհանուր օրինաչափության ձգտող *-է՛* վերջավորությամբ կազմված *հանէ՛* տարբերակը նույնպես, ինչը նշված քննական բնագրում հանդիպում է մի քանի անգամ՝ Եւ այն որ հանելուն է՝ զայն *հանէ*, եւ այն լաւ է (ԱՍՕԲ): Էհանան ասէ, թէ գլուխն ոսկր որ խոշորեր է թէ կոտրած ոսկր կայ՝ նա *հանէ՛* (ԱՍՕԲ): Մասրճունէն ասէ, թէ հիւանդն վատուժ լինի որ մտպուխ եւ դեղ չկարէ խմել՝ դու հոկնայ արա եւ *հանէ՛* զայն խլտերն (ԱՍՕԲ):

¹³⁵ *Համբերես* բայը գրաբարում ուներ կանոնավոր և անկանոն զուգաձևեր՝ *համբեր-համբերեսց* (տե՛ս ՆՀԲ՝ համապատասխան բառահոդվածը):

¹³⁶ Ս. Անթոսյան, 1975, 391:

¹³⁷ Սա *բե՛ր* հրամայականի միակ կիրառությունն է Ամասիացու բժշկարանում, այն էլ՝ վերլուծական բայի կազմում:

Պատկերը նույնն է նաև *ածել* բայի դեպքում. *ա՛ծ* արմատական բուն հրամայականից բացի, որը գրաբարին բնորոշ իրողություն էր (ընդ որում՝ անկանոնություն)՝ Ամասիացին գործածում է նաև *ածէ՛* զուգաձևը, այսինքն՝ այնպես, ինչպես միջին հայերենում կազմվում էր *է* խոնարհման պարզ բայերի հրամայականը, ինչը նույնպես համաբանության հետևանք է: Օրինակ՝ Եւ թէ այսով չի բացվի՝ հանապազ *ածէ՛* ի վերան սամթի ձեթ, եւ յետոյ ճղթէ՛ երկաթով (ԱՍՕԲ):

Ի տարբերություն *է* խոնարհման պարզ բայերի, որոնք միջինհայերենյան բազմաթիվ ընդհանրական-դիմավոր նախադասությունների արտահայտության միջոց են դառնում, և որոնց եզակի հրամայականը՝ *ա*) ենթարկվել է հնչյունափոխության և բ) աչքի է ընկնում գործածության բարձր հաճախականությամբ՝ ցոյական հիմքի-*ց* ձևային անկմամբ կազմվող *ա* խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականը պահպանել է գրաբարյան կազմությունը՝ *աղա՛*, *արա՛*, *գնա՛*, *լվա՛*, *ջանա՛*: Օրինակ՝ Ջամէնդ հուսասար *աղա՛* եւ մաղէ՛ (ԱՍՕԲ): Եւ *գնա՛* գի՛տ ի Ախրապատինն, ի մալխոլիային համարն (ԱՍՕԲ): Եւ *արա՛* զդեղն գոր գրած է (ԱՍՕԲ): Եւ եղկ ջրով հանապազ *լվա՛* զգլուխն (ԱՍՕԲ): Գեղիանոս ասէ, թէ այս ցաւուս *ջանա՛*, որ գլխուն ցաւն ի վար քաշես (ԱՍՕԲ):

Միջինհայերենյան բնագրերում հանդիպում են նաև *ա* խոնարհման այնպիսի բայաձևեր, որոնք գրաբարի բուն հրամայականի բացառությունների շարքից են, այսինքն՝ ունեն անկանոն կազմություն, ինչպես՝ *թա՛ց*, *կա՛ց*, որոնք շարունակում են անփոփոխ գործածվել նաև միջինհայերենյան բնագրերում: Օրինակ՝ Եւ ամէն թթուէ *պատրաստ կաց* (ԱՍՕԲ): Եւ հանապազ մէշպահարի ջրով զոտն *թա՛ց* (ԱՍՕԲ): Սակայն նշվածներից *կալ* անկանոն և պակասավոր բայն ունի հրամայական ապառնու եզակի թվի ոչ միայն գրաբարին հատուկ *կա՛ց*, այլև միջինհայերենյան *կացի՛ր* և *կեցի՛ր* զուգաձևերը, ինչպես՝ Եւ ամէն թթուէ պատրաստ *կաց*. Եւ ի թանձր կերակրէ պատրաստ *կաց* (ԱՍՕԲ): Եւ ամէն հով կերակրէ պատրաստ *կացիր*: Եւ ամէն հաստ կերակրէ պատրաստ *կեցիր* (ԱՍՕԲ)¹³⁸:

¹³⁸ Ի դեպ, միննույն իրողությունը արձանագրում ենք նաև Վարդան Այգեկցու առակներում: Հմմտ. Յուցանէ առակս, թէ պատրաստ *կացիր* ՚ի նենգաւոր մարդոյ (ՎԱԱ) և Յուցանէ առակս, թէ նենգաւոր եւ անիրաւ մարդէ ՚ի գատ *կաց* եւ պատրաստ *կաց* (ՎԱԱ):

Նկատելի է, որ միջին հայերենում հրամայական ապառնու դրական խոնարհման եզակի թվի նշված տարբերակների առկայությունը մասամբ է պայմանավորված գործածվող բայերի կազմությամբ (այդ թվում նաև լծորդ ձայնավորով), ինչի լավագույն վկայությունն են վերոնշյալ *կա՛ց-կացի՛ր*/*կեցի՛ր* գուրգուռերը:

3. Երրորդ դեպքում հրամայական ապառնու դրական խոնարհման եզակի թիվը կազմվում է *-ի՛ր* դիմաթվային վերջավորությամբ, որով կատարվում էր գրաբարյան բայերի մեծ մասի բուն հրամայականի եզակի թվի կրավորաձև խոնարհումը: Միջին հայերենում նշված դիմաթվային վերջավորությամբ կազմվում է սակավաթիվ բայերի եզակի հրամայականը, որոնցից են՝

ա) գրաբարյան կանոնավոր *հանգչիմ, հեծանիմ, փախչիմ* և անկանոն *դնել, լինիլ*, որոնք միջին հայերենում և՛ կազմությամբ են անփոփոխ, և՛ խոնարհման ձևով՝ Եւ յորժամ ի դեղ խմելուն խալիսի՝ քուն եղիր, *հանգի՛ր* (ԱՍՕԲ): Եւ քալուկ ձի *հեծի՛ր* (ԱՍՕԲ): Այլ քո իմաստութեամբ *փախիր* ի դիւաց (ԱՍՕԲ): *Դի՛ր* գայն մորհամն (ԱՍՕԲ)¹³⁹: Եւ յորժամ ի դեղ խմելուն խալիսի՝ *քուն եղիր* (ԱՍՕԲ),

բ) *գիտել, իմանալ, մոռանալ*, որոնք գուրգուռությամբ առանձնանում են դեռևս գրաբարում (կանոնավոր ձևերից բացի՝ նրանք հանդես էին գալիս նաև անկանոն գուրգուռերով՝ *գիտացի՛ր-գիտա՛ցիտեա՛, իմացի՛ր-իմա՛-իմաց՛, մոռացի՛ր-մոռա՛*¹⁴⁰), միջին հայերենում գերազանցապես գործածվել են *-ի՛ր* դիմաթվային վերջավորությամբ՝ Եղբայր, դու գամէն իրք *մոռացի՛ր* և այլն (ԱՍՕԲ): Յորժամ մարդոյ աջ կուշտն ցաւի *գիտացիր*, որ ի լերդէն է (ԱՄՍ, 123): Միայն որոշ աղբյուրներում են առկա նաև վերոնշյալ մյուս տարբերակներով՝ Եւ գայս ևս ճշգրիտ *իմա*, զի իսկագոյն քերականութիւն է աներևոյթն բայ (ՀՄՁ, 255): այլ այսպէս *իմա*, որպէս մարդն ի վերայ կենդանոյն չասուի (ՎՐԼ, 100): Մոյնպէս և գամենեսեան *իմա՛* (ԴՁ, 137): Եւ դարձեալ *իմա*, զի ամենայն ամանակ յերկակցաց եղանի՝ ի ներկայէն և ի կատարելոյն (ՀՄՁ, 255):

¹³⁹ Հմմտ. նաև *մտիկ դնել* միջինհայերենյան վերլուծական կազմությունը՝ Եւ ադէկ *մտիկ դիր*, որ խուլինճ չի լինայ (ԱՍՕԲ):

¹⁴⁰ Տե՛ս ՆՃԲ, համապատասխանաբար, *ԳԻՏԵՄ, ԻՄԱՆԱՄ* և *ՄՈՌԱՆԱՄ* բառահոդվածները:

Վերոնշյալ *գիտացի՛ր* և *իմացի՛ր* հրամայականները միջին հայերենում հանդիպում են նաև տվյալ ժամանակաշրջանին բնորոշ հնչյունափոխված տարբերակներով՝ համապատասխանաբար, *գիտացի՛ր*¹⁴¹ - *գիտցի՛ր*, *իմացի՛ր*-*իմացի՛ր* գուգաձևերով: Հմմտ. *Գիտացի՛ր*, որ հալաբշտին բնական տեղիքն ի յաճուկին ներքեն է (ԱՍՕԲ) և *Գիտցի՛ր*, որ լեռդին բնութիւնն տաք եւ գէճ է (ԱՍՕԲ): *Իմացի՛ր*, որ բնութիւնն չորսն մէկ մէկ է, եւ չորսն խառնած է (ԱՍՕԲ) և Եւ իւելօքէն *իմացի՛ր*, որ քան զամէն կենդանու միճաս մարդուն միճասն մոռթատիլ է (ԱՍՕԲ):

գ) *Հարցանել*, որը ավանդվել է գրաբարից, սակայն ունի նաև *հարցնել* միջինհայերենյան գուգաձևը, և որի գրաբարյան *հարց* արմատական հրամայականը տվյալ դեպքում համաբանությամբ ստանում է *-իր* դիմաթվային վերջավորություն՝ Եւ այն որ չերենայ՝ *հարցի՛ր* հիւանդին թէ որպէս է, եւ ստածէ՛ շուտով (ԱՍՕԲ),

դ) *գտնուլ* (գրաբարում՝ *գտանել*), որի թե՛ *-ան*- սուկածանցի *ա*-ն է ընկել (*գտանել*>*գտնուլ*), թե՛ փոխվել են լծորդ ձայնավորը (*է*-ն փոխարինվել է *ու*-ով) և խոնարհման ձևը [ներգործաձև խոնարհման փոխարեն (*գի՛տ*)՝ խոնարհվում է կրավորաձև՝ ստանալով *-իր* դիմաթվային վերջավորություն (*գտի՛ր*), թեն ներգործական սեռի բայաձև է]՝ Եւ այսպէս *գտի՛ր* կարգաւ մինչեւ ի քէն (ԱՍՕԲ),

ե) *հագնիլ* (գրաբարում՝ *ագանիլ*), որի *-ան*- սուկածանցի *ա*-ն ընկել է (*ագանիլ*>*հագնիլ*), բայց միջին հայերենում պահպանվել են և՛ լծորդ ձայնավորը, և՛ խոնարհման ձևը (խոնարհվում է կրավորաձև՝ ստանալով *-ի՛ր* դիմաթվային վերջավորություն՝ *հագի՛ր*): Սակայն նշված բայաձևը կորցրել է գրաբարյան կրկնասեռ լինելու հատկանիշը և միջին հայերենում արտահայտում է միայն ներգործական սեռի իմաստ՝ Եւ ի յանձն օճէ.

¹⁴¹ Բառասկզբի *ի* և *ու* ձայնավորներին *յ* հնչյունի հավելումը միջին հայերենին բնորոշ հնչյունափոխություններից մեկն է, որն արտացոլվել է նաև սույն բժշկարանում՝ գլխացաւութիւն՝ որ *յիրիկացքն* լինի եւ գիշերն: Զթեթեն, կակուղն եւ զպինտն *յիմանայ*: Ուտէ գառին միս եւ *յուլի* եւ հաւձագու միս: *Յունացն* մագն նօսրնայ: Եւ թէ *յուզենան*: Անձինն գլխուն ոսկրն ամուր է եւ *յուժով* է եւ ի հողն *յուշ* կու փթի նն: Նշված ժամանակահատվածում հիշյալ կարգի հնչյունափոխություն արձանագրվում է նաև լեհահայոց խոսվածքում՝ նա *յիշխանութիւն յունենայ* իմ կինն զիմ բաժինն ժառանգել այնպէս. որպէս ես ինքն: Եւ թէ չվճարեմ կամ *յուշացնեմ* (Կ-Պ): Եւ ապա զայն խումշովն վիճարէ. գոր *յունի* նն (Կ-Պ):

եւ քթան *հազիր* (ԱՍՕԲ):

4. Գրաբարում *է* և *ի* խոնարհումների պարզ բայերը հրամայական ապառնու եզակի թվով կրավորաձև խոնարհվելիս *-իր* վերջավորություն չէին ստանում: Շեշտվելով՝ նրանց ցոյական 2-րդ հիմքը արտահայտում էր եզակի հրամայականի քերականական իմաստ: Միջին հայերենում նշված կարգի գերադաս անդամներով ընդհանրական-դիմավոր նախադասություններ են հանդիպում Վարդան Այգեկցու առակներում՝ արտահայտված *հայիլ* և *մխիթարել* բայերով՝ Յուցանէ առակս, թէ ո՞վ մարդ, թէ մեղաւոր ես, մի հայիր ՚ի կարի արդարքն. այլ *հայեաց* ՚ի մեծայմեղ մարդիքն եւ *մխիթարեց* (ՎԱԱ) և այլն: Ասվածը վկայում է քերականական այս իրողության՝ միջին հայերենում վերացած լինելու մասին: Լինելով գրաբարին քաջատեղյակ՝ նման կազմություններ հազվադեպ գործածում է Այգեկցին՝ փորձելով առակները մեկնել գրաբար, սակայն դա նրան ոչ միշտ է հաջողվում. *հայեաց* դասական ձևի կողքին նա գործածում է նաև պատմական հնչյունափոխության ենթարկված *մխիթարեց* զուգաձևը:

Միջին հայերենում ընդհանրական-դիմավոր նախադասությունները՝ հրամայական ապառնու ժխտական խոնարհման եզակի թվով հանդես եկող գերադաս անդամները նույնպես ունեն արտահայտության (կազմության) տարբեր միջոցներ.

1. Մի դեպքում *մի՛* արգելական մասնիկն ավելանում է ըղձական ապառնու դրական խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքին՝ եզակի թվում *ս>ր* փոփոխությամբ: Օրինակ՝ Եւ *մի՛ թողուր*¹⁴² որ կաւ ուտէ, զէն կառնէ (ԱՍՕԲ): Պուխարով իրվի *մի՛ ուտեր* (ԱՍՕԲ): Եւ գինի *մի՛ խմեր* (ԱՍՕԲ): Եւ ապիկիս *մի՛ արկաներ* (ԱՍՕԲ): Եւ շատ *մի՛ նստիր* ի բաղանիսն. զէն է

¹⁴² Որքան էլ տարօրինակ է, Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի ակտիվ բայաձևերի շարքում տեղ չունի *թողուլ* բայի *թող* հրամայականը՝ բուն նշանակությամբ: Նշված բայաձևն ունի բազմաթիվ կիրառություններ, որոնցում, սակայն, եղանակավորում է ստորոգյալի արտահայտած գործողությունը: Օրինակ՝ Ի կերակրէն յետեւ *թող չաշխատի* եւ խաղաղ նստի: Մնդիկին մուխն որ գոսկերիչն զարնէ՝ նա *թող* գինի *խմէ* որ վնաս չառնէ (ԱՍՕԲ): Եւ երբ գայս դեղն ի գլուխն օծես՝ *թող* զաչքն *խփէ* որ չմտէ յաչքն (ԱՍՕԲ): Այսպես նաև՝ *թող երթայ*, *թող չի կանչէ*, *թող չի նստի*, *թող հոտայ*, *թող աշխատի* և այլն: Այսօրինակ վկայություններից մեկը ցույց է տալիս *թող+ստորոգյալ* կապակցության առաջացման ճանապարհը՝ Եւ յորժամ զգոզն դարուրան առնես *թող որ* պահ մն *կենայ* (ԱՍՕԲ):

(ԱՍՕԲ): Եւ մածուն եւ կաթն *մի՛ ուտեր* (ԱՍՕԲ)¹⁴³: Այսպէս նաև՝ *մի՛ ազա-
հիր*¹⁴⁴, *մի՛ շռայլիր*, *մի՛ շարժիր*¹⁴⁵, *մի՛ նայիր*, *մի՛ կաթեցներ* և այլն, ինչ-
պէս չնով իրք յականջն *մի՛ կաթեցներ* որ զէն չառնէ (ԱՍՕԲ) : Յուցանէ, որ
թէ հնար իցէ բնաւ *մի առներ* քեզ թշնամի գոք ՚ի մարդկանէ, թէպէտ եւ աղ-
քատ եւ տկար լինի (ՎԱԱ): Յուցանէ առակս, թէ *մի վիճիր* եւ *մի անկանիր*
՚ի մէջ վիճողաց եւ բազում տգիտաց եւ աներկեղաց (ՎԱԱ):

Մի՛ արգելականը բացառիկ կիրառությամբ ավելանում է նաև հենց
ընդական ասպառնու եզակի 2-րդ դեմքին՝ առանց *ս>ր* հնչյունափոխու-
թյան՝ Յուցանէ առակս, թէ որ դնէ գրպարտութիւն ՚ի վերայ քո եւ ջանայ
խաբել զքեզ եւ յաւել իրք առնէ ՚ի քէն, գոր ոչ պարտիս, *մի նեղանաս*. գոր
առնեն միմոսք (ՎԱԱ):

Քննելով միջին հայերենի հրամայական ասպառնու ժխտականի
կազմությանը՝ Ս. Անթոսյանը նշում է. «Ճնշող մեծամասնությամբ հրամա-
յականի ժխտական ձևերը կազմվում են ներկա ժամանակի II դեմքի
(եզակիում *ս-ն* փոխվում է *ր-ի*՝ գրես-գրեր, աղաս-աղար ևլն) բայաձևերի
վրա *մի՛ արգելականի ավելացումով*»¹⁴⁶: Մենք, սակայն, այն համոզման
ենք, որ միջին հայերենում ոչ թէ նույնությամբ գործում էր գրաբարից

¹⁴³ Հմմտ. Զոչդ *մի* այսպէս *իմանար*, թէ կու ասէ, թէ զինչ կենդանի ի վերայ մար-
դոյն կու ստորոգի, և մարդն ի վերայ կենդանոյն չէ ի ստորոգիլ, նա առինչս չէ հա-
յնց (ՎԸԼ, 98)

¹⁴⁴ Գրաբարյան *ագահեմ* բայի կազմում տեղի է ունեցել լծորդ ձայնավորի փո-
փոխություն՝ *ագահեմ < ագահիմ՝ Մի՛ ագահիր* դու ամէն փափկութեանս քո: ՆՀԲ-
ում *ագահիմ*-ը դիտվում է «իբր ոամկօրէն» (տե՛ս *ԱԳԱՀԵՄ* բառահոդվածը):

¹⁴⁵ Ըստ մեր դիտարկումների՝ Ամասիացին *ե//է>ի* փոփոխությամբ (համապա-
տասխանաբար, ներգործածն և կրավորածն խոնարհումներ) սակավաթիվ ներ-
գործական բայաձևերով է արտահայտում տարբեր սեռերի քերականական ի-
մաստներ: Հմմտ. Յորժամ հիւանդն զայքն *շարժէ* («շարժում է») եւ դողայ եւ հանց
որ համբեր չառնու՝ մահու նշան է (ԱՍՕԲ): Յորժամ բժիշկն զկարուրան *շարժէ*
 («շարժում է»)՝ նա այրկանն գոզն ան պահն պղտորի (ԱՍՕԲ) և Եւ պալղամն որ
այսպէս լինայ՝ նա մարդուն ոսկերացն *շարժումն* աղէկ լինայ, եւ կակուղ եւ աղէկ
շարժի («է շարժվում») (ԱՍՕԲ): Եւ այս ամէնն ի սաֆրայէ *շարժի* («է շարժվում») (ԱՍՕԲ) եւ տաքութենէ եւ չորութենէ (ԱՍՕԲ): Եւ յորժամ սաֆրան *շարժի* («շարժ-
վում է»)՝ հիւանդն զարթի (ԱՍՕԲ): Եւ ուտէ զայն իրվին, որ *յիստկէ* («մաքրում է») եւ ճիւղ տայ (ԱՍՕԲ) և Եւ թէ *չի յիստկի* («չմաքրվի»)՝ տո՛ւր այարիճի ֆայդարայ եւ սապրի հատ (ԱՍՕԲ):

¹⁴⁶ Ս. Անթոսյան, 1975, 391:

ժառանգված «*մի՛* - ներկա ժամանակի II դեմք» մասնակաղապարը՝ *ս-ք* դիմաթվային փոփոխությամբ, այլ կատարվել էր ներկա ժամանակի իմաստափոխություն. այն արդեն ծառայում էր որպես ըղձական ապառնի ժամանակաձևի արտահայտման միջոց, և *մի՛* մասնիկն արդեն ավելանում էր ոչ թե սահմանական ներկա, այլ արդեն ըղձական ապառնի ժամանակաձևի դրական խոնարհման տարբերակին¹⁴⁷:

2. Մյուս դեպքում *մի՛* արգելական մասնիկն ավելանում է հրամայական ապառնու հենց դրական ձևին, ինչը բնորոշ է միջին հայերենի լեզվամտածողությանը: Օրինակ՝ *խսէ՛-մի՛ խսէ*: Հմմտ. Եւ սիստան ջուր տուր. օգտէ աստուծով և Շատ *մի՛ տուր* զհով կերակուրքն (ԱՍՕԲ): Եւ յայնժամ առ սրբնճուպին շարապի եւ *խսէ՛*՝ն Սահակն ասէ, թէ պաղ ջուրն շատ *մի՛ խսէ* (ԱՍՕԲ):

3. Երրորդ դեպքում *մի՛* արգելական մասնիկն ավելանում է անորոշ դերբային, ինչը նույնպես միջինհայերենյան քերականական իրողություն է, ինչպես *ի շուրջ մի՛ գալ, մի՛ ուտել, մի՛ խմել, մի՛ նստիլ* և այլն: Օրինակ՝ Եւ հանապազ ի բաղնիս մտնու. եւ շատ *մի՛ նստիլ*, զէն է՝¹⁴⁸ (ԱՍՕԲ): Եւ ամռան ատուրքն շատ *ի շուրջ մի՛ գալ*, զի զէն է (ԱՍՕԲ): Եւ շատ *մի՛ ուտել* եւ կուշտ ի քուն մի՛ լինար (ԱՍՕԲ): Եւ բնաւ գինի *մի՛ խմել*. օգտէ (ԱՍՕԲ): և այլն: Հմմտ. նաև՝ *Մի՛* զսրտի կամքն *առնել*, որ չընկնիս ի ճօշք ու ի լեզու (ՄՅՀԶ, Գ, 479):

Ժխտական ընդհանրական-դիմավոր կառույցներում գերադաս անդամը, *մի՛* ժխտական մասնիկից բացի, արտահայտվում է նաև *չի* մասնիկով, որն այս դեպքում հանդես է գալիս ըղձական ապառնու եզակի թվի 2-րդ դեմքի հարադրությամբ: Նշված կազմությամբ բայաձևերով ընդհանրական-դիմավոր նախադասությունները սակավադեպ են և հանդիպում

¹⁴⁷ Նույն իրողությունը նկատելի է նաև արդի հայերենի հրամայական ապառնու ժխտական խոնարհման հոգնակի թվի կազմության մեջ, ինչպես՝ *մի՛ կտրեք, մի՛ կտրտեք, մի՛ կտրվեք, մի՛ խաղաք* և այլն:

¹⁴⁸ Ներկայացնելով միջին հայերենի երկրորդ շրջանի (15-16-րդ դդ.) արգելական հրամայականի արտահայտության միջոցները՝ Ս. Անթոյանը նշում է, որ այդ շրջանում նույնպես «... անորոշ դերբայի վրա *մի՛* արգելականի ավելացումով կազմվող հրամայականի կիրառության շատ դեպքեր ունենք», և բերում է երկու օրինակ, երկուսն էլ՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետ»-ից (Ս. Անթոյան, 1975, 405):

են Ամասիացու բժշկարանում ու հայրեններում: Ահա՛ Ա. այն է, որ երակն ուժով լինայ, եւ թէ գմատդ ի վերայ պինդ *չի դնես*՝ նա երկին ուժն գմատդ խափանէ եւ չճանաչես՝ մինչեւ գմատդ ի վերայ երկին պինդ *չի դնես* (ԱՍՕԲ): Թէպէտ շատ ջանաս, եղբա՛յր, Քան զշուարն այլ իրք *չի տանիս* (Հ, 456):

Արգելական հրամայականի եզակի թվում ամենաշատ տարբերակներով աչքի է ընկնում միջինհայերենյան *անել/այնել* բայը՝ հանդես բերելով 5 զուգած: Դա բնական է ոչ միայն այն պատճառով, որ բայս գրական հայերենի բոլոր շրջաններում (այդ թվում նաև միջին հայերենում) ակտիվ բառապաշարի միավորներից է և ունի կազմության անկանոնություն¹⁴⁹, այլև այն պատճառով, որ վերը նշված *այնել* և *անել* ձևերից բացի՝ միջին հայերենում գործածվում է նաև գրաբարից ավանդված ձևով՝ *առնել*¹⁵⁰: Ահավասիկ նշված 5 տարբերակները՝ *մի՛ առներ*, *մի՛ առնել*, *մի՛ այններ*, *մի՛ այնել*, *մի՛ աններ*¹⁵¹ Եւ մերձաւորութիւն *մի՛ առնել* (ԱՍՕԲ): Երակ *մի՛ առներ*, որ ցաւ մն այլ չընծայի (ԱՍՕԲ): Թէ գիշերն թէ ցորեկն է՝ մերձաւորութիւն *մի՛ այնել* (ԱՍՕԲ): Եւ գաւր դեղերն տաք *մի՛ այնէր* (ԱՍՕԲ): Եւ մերձաւորութիւն *մի՛ անէր* (ԱՍՕԲ):

Խմել, *ուտել* և *տալ* բայերի հրամայական ապառնու եզակի թվի ժխտականները հանդիպում են երեքական զուգածներով՝ *մի՛ խմէր-մի՛ խմէր-մի՛ խմել*, *մի՛ ուտէր-մի՛ ուտել-մի՛ ուտիլ*, *մի՛ տար-մի՛ տուր-մի՛ տալ*: Ասվածը վկայվում է բազմաթիվ օրինակներով՝ Եւ գինի *մի՛ խմէր*//Եւ բնաւ գինի *մի՛ խմէր* (ԱՍՕԲ)//Պաղ ջուրն շատ *մի՛ խմէ* (ԱՍՕԲ)//Եւ գինի *մի՛ խմել* (ԱՍՕԲ): Եւ մաճուն եւ կաթն *մի՛ ուտէր* (ԱՍՕԲ)//Եւ կերակուր տաք եւ եղի եւ քաղցր լինի՝ *մի՛ ուտել* (ԱՍՕԲ)//Եւ այն կերակուրն որ սավտայ

¹⁴⁹ *Անել* բայը զուգածություն ունի նաև մեր օրերում (*մի՛ արա*, *մի՛ անի*):

¹⁵⁰ Հատկանշական է, որ անհրաժեշտության դեպքում մինևնայն գործողությունն արտահայտվում է մի դեպքում *առնուլ*, մյուս դեպքում՝ *առնել* բայով, որից առաջանում է կազմությամբ վերլուծական բայերի զուգածություն: Հմնտ, Բազարատն ասէ, թէ *երակ առնելն* վասն սովորութեան կու պիտի, որ գառողությունն առողջ պահելու և Եւ թէ *երակ առնուլն* երակն արձակի կամ ի քնոյ ժամն կամ արթնութեան ժամն, եւ արուն շատ երթայ՝ իր ստածումն այսպէս է (ԱՍՕԲ): Եւ թէ *երակ առնելն* պատեհ չլինի՝ նա *չառնուս*. ապա թէ *առնես*՝ մեծ ցաւեր ընծայէ (ԱՍՕԲ):

¹⁵¹ Տեսականորեն հնարավոր է նաև 6-րդ՝ *մի՛ անել* զուգածը, որ, սակայն, միջինհայերենյան աղբյուրներում մեզ չի հանդիպել:

ընծայե՛լ մի՛ ուտիչ: Եւ այն կերակուրն որ յիրմէն չորութիւն ընծայի՛ մի՛ տար (ԱՍՕԲ)¹⁵²://Շատ մի՛ տուր զհով կերակուրքն (ԱՍՕԲ)//Եւ ծանր կերակուր մի՛ տալ (ԱՍՕԲ) և այլն: Նկատենք, որ տալ բայը զուգաձևեր ունի, մի կողմից՝ խոնարհիչ ձայնավորի փոփոխությամբ (*ուտել//ուտիչ*), մյուս կողմից՝ բայական բաղադրիչի (*մի՛ տար//մի՛ տալ*):

Հատկանշական է, որ բայական որոշ զուգաձևություններ այնքան են համարժեք, որ Ամասիացին դրանք գործածվում է ոչ միայն նույն պարբերության՝ *մի՛ տալ-մի՛ տար, մի՛ ուտել-մի՛ ուտեր*, այլև անգամ նույն նախադասության մեջ, ինչպես՝ *մի՛ ուտել-մի՛ ուտեր*: Օրինակ՝ եւ զամէն տաք իրք *մի՛ ուտել*, եւ մերձաւորութենէ եւ արթնութենէ պահէ զքեզ եւ այն իրքն որ սաֆրայ յաւելցնէ *մի՛ ուտեր* (ԱՍՕԲ):

Երկու տարբերակով հանդիպում են հետևյալ բայերի հրամայական ապառնու ժխտական խոնարհման եզակի թվով արտահայտված զուգաձևություններ՝

- *մտնել//մտնուլ*, ինչպես՝ Եւ իսկի բաղանիս *մի՛ մտեր* (ԱՍՕԲ) և Եւ շատ ի բաղնիս *մի՛ մտել* (ԱՍՕԲ):

- *ի շուրջ գալ*, ինչպես՝ Եւ շատ ի *շուրջ մի՛ գար* (ԱՍՕԲ) և Եւ շատ ի *շուրջ մի՛ գալ* (ԱՍՕԲ):

- *կտրել*, ինչպես՝ Զտղան ի կաթնէն *մի՛ կտրեր* (ԱՍՕԲ) և Թէ նստոյտեղիս ի դուրս լինայ՝ *մի՛ կտրել* (ԱՍՕԲ):

Միջին հայերենում զուգաձևություններով առանձնանում են նաև պատճառական բայերի հրամայական եղանակի բայաձևեր, որոնց մեծ մասն ունի համադրական, իսկ մի քանիսը՝ վերլուծական կազմություն (վերջիններս արտահայտվում են *տալ* բայի անդեմ կամ դիմավոր ձևերի մասնակցությամբ):

Անդրադառնալով միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում (15-16-րդ դդ.) համադրական պատճառական բայերի հրամայականի կազմույթ-

¹⁵² Նկատենք, որ *տալ* բայի հրամայական ապառնու ժխտական խոնարհման եզակի թվի *տար* բաղադրիչը և *տանիմ* բայի դրական խոնարհման եզակի հրամայականի *տար* ժամանակաձևը քերականական համանուններ են դեռևս գրաբարում, որից էլ անցել են միջին հայերենին: Հմտ. Եւ *մի՛ տար* գայն կերակուրն որ պալղամն ընծայե (ԱՍՕԲ): Եւ յորժամ ցան խաղի՛ այլ *մի՛ տար* ֆլունիայ (ԱՍՕԲ) և Այս հապս ի բան *տար* որ զպոխարն ի վար քաշէ գլխուն (ԱՍՕԲ): Եւ յորժամ ցան պակասի՝ նա ի բաղանիս *տար* (ԱՍՕԲ):

յանը՝ Ս. Անթոսյանը նշում է, որ նախորդ շրջանի նման (12-14-րդ դդ.) հիշյալ բայերի հրամայականը կազմվում է ինչպես գրաբարյան (*ապրեցո՛ւ*), այնպես էլ նորակազմ (*իմացո՛ւր*) վերջավորություններով: Նա նկատում է նաև, որ հիշյալ «շրջանում, անշուշտ, տիրապետողը նոր վերջավորությամբ ձևերն են (նկատի ունի նաև պատճառականի եզակի հրամայականի *-ո՛ւր* և *-ո՛ւ* վերջավորությունները-Գ.Խ.)»: Իբրև լրացուցիչ հիմնավորում ասվածին՝ Ս. Անթոսյանը հավելում է. «Ավելին. Ամիրդովլաթի մոտ *ո՛ւր* վերջավորության *ր* հնչյունը արդեն մաշվել ընկել է»¹⁵³, և բերում է մի շարք օրինակներ թե՛ «Անգիտաց անպէտ», և թե՛ «Օգուտ բժշկութեան» բժշկարաններից, ինչպես՝ *եռցո՛ւ*, *կաթեցո՛ւ*, *չորցո՛ւ*, *տափկցո՛ւ*: Սակայն հարկ է նկատել, որ խնդրո առարկա գործերում *-ո՛ւր* վերջավորության *ր*-ն ոչ թե «արդեն մաշվել ընկել է», այլ սկսել է մաշվել, բայց վերջնականապես չի ընկել: Բանն այն է՝ հիշյալ երկու բժշկարաններում «արդեն մաշված ընկած» ձևերին զուգահեռ հանդիպում են *-ո՛ւր* սկզբնական ձևեր նույնպես («Անգիտաց անպէտ»-ում՝ մեկ անգամ՝ Մէկ կտոր տրորէ ջրով ու *խսցուր*, մինչդեռ «Օգուտ բժշկութեան» մեջ՝ նկատելիորեն հաճախ՝ Առ արձիճ մն, *նօսրացո՛ւր* եւ ի վերան կապէ: Ջմորհամնին ի գործ արկ եւ զանձն *ուժովցո՛ւր* և այլն): Այսինքն՝ ոչ միայն *գիճացո՛ւ*, *գօրացո՛ւ*, *կաթեցո՛ւ*, *կակղացո՛ւ*, *հովսցո՛ւ*, *պակսեցո՛ւ*, *պաղեցո՛ւ*, *տաքցո՛ւ*, *քաղցեցո՛ւ*, այլև *նօսրացո՛ւր*, *պակսեցո՛ւր*: Դիտարժան է և այն, որ *-ո՛ւ* և *-ո՛ւր* ձևությոներով հրամայականներ հանդիպում են ոչ միայն տարբեր բայերի գործածության ժամանակ, այլև միևնույն բայի տարբեր կիրառություններում, ինչպես՝ *եռցո՛ւր-եռցո՛ւ*, *խաղեցո՛ւր-խաղեցո՛ւ*, *յաւելցո՛ւր-յաւելցո՛ւ*, *ուժովցո՛ւր-ուժովցո՛ւ*, *չորցո՛ւր-չորցո՛ւ*: Հմմտ.

ա) մի կողմից՝ Եւ քանի որ տղան մեծանայ՝ դու զկերակուրն *յաւելցո՛ւր* ի կաթն (ԱՍՕԲ): Եւ զսիրտն *ուժովցո՛ւր* եւ զտաքութիւնն *պակսեցո՛ւր* (ԱՍՕԲ): Եւ կարագ եղով *եռցո՛ւր* (ԱՍՕԲ): Ջամէնն *եռցուր* եւ ի մէջն *նստեցուր* գողան. շատ օգտակար է (ԱՍՕԲ): Զինքն անուշ խօսօք *խաղեցո՛ւր* (ԱՍՕԲ): Հապ արա քարօսի ջրով եւ ի շուքն *չորցո՛ւր* (ԱՍՕԲ).

բ) մյուս կողմից՝ Եւ ստամոքն *ուժովցո՛ւ* խնձորի շարապով (ԱՍՕԲ): Եւ զստամոքն *պաղեցո՛ւ* սանտալով եւ հանապազ *պակսեցո՛ւ* զպալղամն յանձնէն (ԱՍՕԲ): Եւ *կաթեցո՛ւ* քամոնի ջուր (ԱՍՕԲ): Եւ զըղեղն *գիճացո՛ւ*

¹⁵³ Ս. Անթոսյան, 1975, 391:

(ԱՍՕԲ): Եւ զջուրն երկաթով *տաքցն ՚* եւ ի վերայ գլխուն լից (ԱՍՕԲ): Եւ զրդեղն *հովացն ՚* եւ զարեան սրութիւնն *խաղեցն ՚* (ԱՍՕԲ): Եւ զստամոքն *զօրացն ՚* ինծորի շարապով եւ նոան (ԱՍՕԲ): Խիարի կտի ձէթն օձէ՛ ի գլուխն, եւ *կաթեցն ՚* ի քիթն (ԱՍՕԲ): Եւ հանապազ *յաւելցն ՚* զգիճութիւն գլխուն (ԱՍՕԲ): Եւ ձարխոտ եւ երիցուկ եւ վարդի եղն *ենցն ՚* (ԱՍՕԲ): Քիչ քիչ ի կաթէն *քաղցեցն ՚* եւ կտրէ՛ (ԱՍՕԲ): Եւ թէ բնութիւնն կապ լինայ՝ *կակղացն ՚* զարու ջրով (ԱՍՕԲ) և այլն:

Ինչ խոսք, Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկում *-ն ՚*ը ձևույթով բայաձևերի համեմատ *-ն ՚* ձևույթով կազմված եզակի թվի հրամայականները հաճախադեպ են:

«Օգուտ բժշկութեան» երկում 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունների մի զգալի մասի գերադաս անդամն արտահայտվում է պատճառական բայերի հրամայական եղանակի ժամանակաձևերով, ինչպես՝ *եռացուցանել, խաղեցուցնել*¹⁵⁴, *խմեցուցանել, կաթեցուցանել, կակղացուցանել, հովացուցանել, յաւելցուցանել, նստեցնել/նստուցանել, ուժովցնել, պակսեցնել, չոր(ա)ցնել, պաղեցուցանել, պայթեցուցանել, տաքացուցանել* և այլն: Օրինակ՝ Եւ թէ ամեն ուռեցն թարախ ժողվի՝ նա ասողով *պայթեցու* (ԱՍՕԲ): Եւ մանուշակի եւ դդմի ձէթ ի քիթն *կաթեցու* եւ գլուխն օձէ (ԱՍՕԲ): Եւ թէ այսոք որ ասացի թէ չօգտէ՝ նա դու *յաւելցու* ինքն քիչ մի պանձ եւ կամ քիչ մի աֆիոն. շատ օգտէ (ԱՍՕԲ): Եւ հանապազ զտեղին *կակղացն ՚*. օգտէ աստուծով (ԱՍՕԲ): *Յաւելցն ՚* զստամոքն կերակրօք եւ դեղերով, որ պատեհ է ժմուն. եւ ի շուքն *չորցն ՚*ը եւ տո՛ւր ի ժմուն Ա դրամ ըղտու կաթով (ԱՍՕԲ): Եւ զստամոքն *պաղեցն ՚* սանտալով եւ քաֆուրով եւ վարդէջուրով եւ սերկելիլի ջրով: Եւ դրամ կարագ եղով *ենցն ՚*ը (ԱՍՕԲ): Այս շարքում հաճախադեպ են *-ու* ձևույթով միջին-հայերենյան պատճառականները՝ Կտոր մն երկաթ ի կրակն *տաքցու* եւ ի կաթն ձգէ (ԱՍՕԲ): Եւ դեղերով որ ժմուն պիտեան է՝ *ողջացն ՚* (ԱՍՕԲ): Եւ զրդեղն *գիճացն ՚* եւ նուտուլ արա պապունաձով եւ սառնով *պաղեցն ՚* (ԱՍՕԲ): Քիչ քիչ ի կաթէն *քաղցեցն ՚* եւ կտրէ՛ (ԱՍՕԲ):

Նշված պատճառականների մի մասը կազմվում է նաև *-ուր* ձևույ-

¹⁵⁴ Միևիթար Շերացու երկում հանդիպում է *խաղաղացնել* և *խաղեղցնել*, իսկ Ամասիացու երկում՝ նաև *խաղեցնել* տարբերակներով՝ «խաղաղեցնել, մեղմացնել, հանդարտեցնել, հանգստացնել» իմաստներով:

թով գուգաձև՝ *խաղեցո՛ւր//խաղեցո՛ւ, պակսեցո՛ւր//պակսեցու, ուժովցո՛ւր //ուժովցո՛ւ, չորցո՛ւր//չորցու*: Հմնտ. Եւ հապ արա քարօսի ջրով եւ ի շուքն *չորցո՛ւր* եւ գամենն եոցո՛ւր շիրիկ ձիթով եւ օձէ՛ ի գլուխն (ԱԱՕԲ) և Եւ քացախ եոցու եւ հապ արա եւ ի շքի *չորցու* (ԱԱՕԲ): Եւ գսիրտն *ուժովցո՛ւր* (ԱԱՕԲ): Եւ գանձն *ուժովցո՛ւր* (ԱԱՕԲ) և Եւ գստամոքն հովցո՛ւ եւ *ուժովցո՛ւ* (ԱԱՕԲ): Եւ գտաքութիւնն *պակսեցո՛ւր* (ԱԱՕԲ) և Զպալղամն *պակսեցու* շահմի հանդալով (ԱԱՕԲ): Զինքն անուշ խօսօք *խաղեցո՛ւր* (ԱԱՕԲ) և Եւ գարեան սրութիւնն *խաղեցո՛ւ* (ԱԱՕԲ):

Պատճառական բայերի հրամայականների՝ ընդհանրական-դիմավոր նախադասություններում գործածության ուսումնասիրությունը վկայում է, որ Ամասիացին անհետևողականություն է ցուցաբերում նաև այս դեպքում. միջինհայերենյան *-ն ՚/-ն ՚ւր* տարբերակներից բացի՝ երբեմն գործածում է նաև գրաբարյան հրամայականներ, որոնք նկատելիորեն հազվադեպ են՝ Եւ գնձի ջրով գամեն յականջն կաթեցո (ԱԱՕԲ): Եւ կլորկներ արա որպէս հապ եւ ի շքի չորցո՛ (ԱԱՕԲ): Թէ յորժամ փորն ի կապ լինի՝ կակղացո՛ մրգաջրով (ԱԱՕԲ):

Ս. Անթոսյանը վկայում է նաև, որ Ամասիացին գործածել է *կպուցանել* (ինչպէս Ս. Անթոսյանն ինքն է նշում), բայի *կպու* անկանոն եզակի հրամայականը: Սակայն հարկ է նկատել, որ Ամասիացին հիշյալ բայը գործածում է ոչ թէ *կպուցանել*, այլ արդեն հնչյունափոխված՝ *կպցնել* ձևով՝ *կպցնող* (ԱԱ), *կպցնէ* (ԱԱ), *կպցնես* (ԱԱ), *կպցնեն* (ԱԱ) և այլն¹⁵⁵:

Կպո՛ւ է հրամայականի առնչությամբ կարևոր ենք համարում արձանագրել նաև, որ միջին հայերենում նշված սկզբունքով կազմվում են ոչ միայն *կպցնել*, այլև *մտցնել*, *նստցնել*, *սնուցանել*¹⁵⁶, *վերցնել* պատճառական բայերի եզակի հրամայականները (*մտո՛ւ*, *նստո՛ւ*, *սնո՛ւ*, *վերո՛ւ*¹⁵⁷), սակայն այս հանգամանքը վրիպել է Ս. Անթոսյանի ուշադրությունից: Վերոհիշյալ բայերի շարքը վկայում է, որ պատճառական բայերի եզակի

¹⁵⁵ Տե՛ս նաև ՄՀԲ, *ԿՊՅՆԵԼ* բառահոդվածը, որում բնագրային օրինակը բերվել է հենց Ամիրոբովլաթ Ամասիացուց:

¹⁵⁶ Պտուղները, ծաղիկները, տերևները և այլն մեղրով, շաքարով, քացախով եփել պատրաստել՝ պահելու համար (տե՛ս ՄՀԲ, ՄՆՈՒՑԱՆԵԼ բառահոդվածը):

¹⁵⁷ Նշված իրողության մասին անուղղակի ակնարկ կա ՄՀԲ-ում, որում *վերու*-ն բերվում է որպէս առանձին բառահոդված՝ հետևյալ մեկնաբանությամբ. «ՎԵՐՑ-ՆԵԼ բայի բուն կամ ներկա հրամայականը. վերցրո՛ւ, վերցրո՛ւ տա՛ր» (ՄՀԲ, 737):

հրամայականի *-n* ձևությոն ավելանում է մի շարք բայերի ոչ թե երկրորդ ցոյական, այլ առաջին՝ արմատական հիմքին: Օրինակ՝ Եւ *մտն* ի տաք բաղնիս եւ շատ նստի (ԱՄՕԲ): Եւ *մտն* ի հանապազ ի բաղնիս (ԱՄՕԲ): Եւ *մտն* ի բաղնիս (ԱՄՕԲ): Տա՛ր ի բաղնիս եւ *նստն* ի տաք տուն (ԱՄՕԲ): Եւ *նստն* ի զհիւանդն ի տաք ջուրն (ԱՄՕԲ): Չփանճակուշտին ճղերն քացխով եւ մեղրով *սնն* ի եւ տո՛ւր որ ուտէ (ԱՄՕԲ): Դու սունարայով *վերն* ի եւ կտրէ՛ (ԱՄՕԲ): Զամէնն ծեծէ՛ եւ *սնն* ի ազոխի ջրով. եւ դի՛ր ի վերայ աչացն (ԱՄՕԲ): Եւ թէ չաղէկնայ՝ զմազն մազտաքով ի յայլ մազերն *փալկն* ի որ աչքն չի ծեծէ եւ ցաւ հասցնէ (ԱՄՕԲ): Եւ *սնն* ի այտով: Եւ պղպեղ *սնն* ի եւ տո՛ւր անօթեց (ԱՄՕԲ):

Այս շարքում հետաքրքրական է *նստիլ* բայից սերված պատճառականի հրամայական ապառնու արտահայտությունը «Օգուտ բժշկութեան» երկում. մի դեպքում Ամասիացին գործածում է *նստուցանել* գրաբարյան բայի *նստո՛ւ* դասական ձևը՝ Եւ տո՛ւր շարքով տաք հաց, եւ յաւազան *նստո*, որը վկայում է հեղինակի՝ գրաբարի իմացության մասին, մյուս դեպքում՝ միջին հայերենին հասուկ *նստոն* և *նստոն՝ը* եզակի հրամայականները, ինչպես՝ Եւ *նստոն* ի զհիւանդն ի տաք ջուրն: Եւ հանց տուն *նստուր*, որ խիստ լուս լինի (ԱՄՕԲ)¹⁵⁸: Սակայն վերջիններիս ժխտական խոնարհման տարբերակը Ամասիացին կազմում է ոչ թե միջին հայերենին բնորոշ ձևով, այն է՝ դրական խոնարհման բայաձևին ավելացնելով *մի՛* արգելական, այլ գրաբարի օրինաչափությամբ: Բնական է, որ այս դեպքում արգելական մասնիկն ավելանում է միջինհայերենյան *նստեցնել* բայի ոչ թե ներկային, այլ արդեն նրա իմաստափոխված ձևին՝ ըղձական անցյալին, բայց դարձյալ պահպանելով *ս>ր* հնչյունափոխությունը՝ *մի՛ նստեցներ*, ինչպես՝ Եւ զտղան ի բաղանիսն շատ *մի՛ նստեցներ* (ԱՄՕԲ): Դժվար չէ նկատել, որ *նստիլ* բայի պատճառականը ևս ունի կազմության զուգաձև, մի դեպքում՝ գրաբարից ավանդված (*նստուցանել*), մյուս դեպքում՝ միջին հայերենին բնորոշ (*նստեցնել*):

Նշեցինք, որ ածանցավոր պատճառականներից բացի՝ միջինհայերենյան աղբյուրներում հանդիպում են կազմությամբ վերլուծական պատճառական բայեր, որոնց հրամայական ապառնու ձևերը նույնպես գործ-

¹⁵⁸ Նշված *նստոն* բայաձևը գրաբարյան հրամայականն է՝ *n>ու* պատմական հնչյունափոխությամբ՝ *նստոն > նստոն* ւ:

ածվել են ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեջ: Օրինակ՝
Եւ թէ խոչակն խոշորութիւն կենայ՝ կաթն տուր կթել (ԱՍՕԲ): Եւ գառնա-
լեզվի ջուր տուր օծել եւ խմել (ԱՍՕԲ): Եւ ի կշտու փսխել տուր, եւ տո՛ւր
գառաջի հապն որ յիշեցի (ԱՍՕԲ): Եւ վարդէջուր եւ սանտալ տուր հոտալ
(ԱՍՕԲ): Ապուճարեհն ասէ, թէ գքիթն արիւնել տուր եւ գնրգերուն ջուրն
տուր որ թթու լինայ (ԱՍՕԲ): Եւ հանապազ կաթն ի յաչքն կաթեցու եւ
կթել տուր (ԱՍՕԲ): Փոնքտալ տուր քունտուտով եւ կղբու ձուով (ԱՍՕԲ):
Եւ գամենն եփե՛ ջրով եւ զշոգին յերեսն բռնել տուր (ԱՍՕԲ):

Ինչպես վկայում են վերոբերյալ լեզվական փաստերը, վերլուծա-
կան պատճառական բայերի կազմությանը մասնակցող տալ բայի դիմա-
վոր ձևերը միջին հայերենում ունեն շարադասական գուգաձևություն. մի
դեպքում հանդես են գալիս անորոշ դերբայներից առաջ, մյուս դեպքում
հաջորդում են նրանց: Հմմտ. Հունան ասէ, թէ այն որ ծեծած պզրղաթունայ
ուտէ՝ փսխել տուր սամթի ջրով որ սրբի (ԱՍՕԲ) և Եւ թէ պատճառն ի
ստամոքէն լինայ՝ տո՛ւր փսխել (ԱՍՕԲ)¹⁵⁹: Նկատելի է, որ, ի տարբերու-
թյուն գրաբարի, որում տալ բաղադրիչն ավելի հաճախ գործածվում է նա-
խադաս, հիշյալ բժշկարանում գերակշռում են տալ բայի ետադաս կիրա-
ռությունները, ինչը բնորոշ է միջին հայերենին, որից էլ ավանդվել է աշ-
խարհաբարին:

Չնայած բաղադրիչների իմաստային սերտությանը՝ տալ բայի դի-
մավոր ձևը և անորոշ դերբայը կարող են նաև ընդմիջարկվել նախադա-
սության այլ անդամներով, ինչպես՝ Եւ թէ փայծաղն այլ ցաւի՝ տո՛ւր գրա-
սիլիկն կտրել ձախ դիհեն (ԱՍՕԲ):

Վերլուծական կազմությամբ անորոշ դերբայների հետ (վերաբերու-
թիւն այնել, մատն արկանել և այլն) գործածվելու դեպքում տալ բայի խո-
նարհված ձևերը հայտնվում են միջադաս դիրքում՝ հարադրի և բայական
բաղադրիչի միջև՝ Եւ վերաբերութիւն տուր այնել սրքնճուպիտով եւ եղկ
ջրով եւ սամթով (ԱՍՕԲ): Սրքնճուպիտով մատն տուր արկանել (ԱՍՕԲ):

Վերլուծական պատճառական բայերից են՝ աճռել տալ, (վերաբե-

¹⁵⁹ Հետաքրքրական է, որ բազմաթիվ նախադասություններում Ամասիացին
տուր բայաձևը գործածում է բուն իմաստով, որին հաջորդում է երկրորդական
նախադասություն, ինչպես՝ Մուշքի դալիայ տուր որ հոտալ (հմմտ. տուր հոտալ):
Թանասուպ տուր որ ուտէ (հմմտ. տուր ուտել): Գնծի ջուր մէկ նուկի տուր որ խմէ
(հմմտ. տուր խմել): Վայրի անուխ տուր որ վերցնէ (հմմտ. տուր վերցնել) և այլն:

րութիւն) *այնել տայ, արկանել տայ, բռնել տայ, խմել տայ, կապել տայ, կթել տայ, հոտայ տայ, մարձել տայ, վերցնել տայ, փսխել տայ, օծել տայ* և այլն: Օրինակ՝ Եւ օծե՛ր զանձն հով դեղերով եւ ի ժիր *ածռել տուր* (ԱՍՕԲ): ... նա զանձն աղէկ *մարձել տուր* (ԱՍՕԲ): Եւ սապոն *վերցնել տուր* (ԱՍՕԲ): Եւ զշոգիւն յերեսն *բռնել տուր* (ԱՍՕԲ): Զքիթն *արիւնել տուր* (ԱՍՕԲ): Եւ *լզել տուր* այն մարդուն որ հեւք ունի (ԱՍՕԲ): Եւ զանդամն *կապել տուր* (ԱՍՕԲ): Եւ կղբու ձու հոտայ եւ *փռնքտայ տուր* (ԱՍՕԲ):

Հատկանշական է, որ եթէ դրական խոնարհման վերլուծական կազմութեամբ պատճառական բայերի գործածության դեպքերը բազմաթիվ են, ապա, դրան հակառակ, ժխտական խոնարհման վերլուծական պատճառականների գործածության մեկ դեպք է հանդիպել՝ Եւ տաք իրք *մի՛ տար ուտել* (ԱՍՕԲ):

Միջին հայերէնում եզակի թվի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունների շարքում առանձնանում են այն կառույցները, որոնց կազմության պարտադիր բաղադրիչներից մեկը *մա՛րդ* կոչականն է¹⁶⁰, որը հանդես է գալիս՝

ա) ավելի հաճախ *ն՛վ* ձայնարկության հարադրությամբ: Օրինակ՝ Յուցանէ առակս, թէ՛ *ով մարդ*, մի անկանիք ՚ի գուր մեղաց. զի անշահ իրք է մեղքն եւ անոգուտ եւ յետոյ շատ ապշօես (ՎԱԱ):

բ) հազվադեպ՝ լրացման հետ, որից *մարդ* կոչականի ընդհանրական բնույթը չի փոխվում, ինչպես՝ Աշխարհիս սահմանն է հանց. Մի՛ ավտար, *ն՛վ մարդ բանական*. Քանի միտք յԱստուած պահես, Նայ հոգիտ բարեօք կու ցնծան (ՀՄ, 924):

Սովորաբար այսօրինակ ընդհանրական-դիմավոր նախադասությունները *մարդ* ձևական ենթակայով կառույցներից տարբերվում են դիմային արտահայտությամբ. այս դեպքում գերադաս անդամն արտահայտվում է ոչ թե 3-րդ, այլ 2-րդ դեմքով: Հմմտ. Դու առ զհոգիս ու զմարմինս, Ի՛ ի դրնչետ պաքիք մի ծախէ, Թէ այն որ Ըռելկան տաս, *մարդ չի գրնէ* (Հ, 135) և Յուցանէ բանիս զօրութիւնն, թէ *ով մարդ մեղաւոր*, *մի անյուսիր*, թէ կուրացաւ եւ խաւարեցաւ ոգիդ քո մեղօք եւ անօրէնութեամբ եւ աղտեղի

¹⁶⁰ *Մարդ* և այլ կոչականներ ներառող ընդհանրական-դիմավոր կառույցներին առաջին անգամ անդրադարձել է տողերիս հեղինակը՝ գրաբարի առումով (Գ. Խաչատրյան, 2002, 47-48):

գործով (ՎԱԱ):

Մարդ կոչականով կառույցներում տեսականորեն կարող են գործածվել ոչ միայն միակազմ նախադասություններ՝ արտահայտված 2-րդ կամ 3-րդ դեմքով, այլև երկկազմ նախադասություններ, ինչպես՝ Եւ ասաց թագաւորն. *ո՛վ մարդ, ոյզէ, զինչ ոյզես. որ տամ քեզ.* եւ նայ ասաց. բեր զլեզու իմ ՚ի բերան քո հասուցանեմ (ՎԱԱ): Ցուցանէ առակս բարի եւ լաւ, թէ՛ *ո՛վ մարդ, ձմեռն մեղաց եկն ՚ի վերայ քո եւ սառնացուց զքեզ չար հողմն հուսուսական մեղացն, որ գնացիր ընդ կամացն սատանայի. եւ գոսացար. եւ թափեցաւ ՚ի քէն գեղեցկութիւն քո* (ՎԱԱ) և այլն: Բնական է, որ այս շարքում մենք քննության ենք առնում միայն *մարդ* ընդհանրական կոչականով այն նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտված է խոնարհված բայի եզակի թվի 2-րդ դեմքով: Բանն այն է՝ *մարդ* ընդհանրական կոչականի հետ միայն եզակի թվի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասություններն են քերականական կապի մեջ (տեղի է ունենում կոչականի և գերադաս անդամի թվային համաձայնություն), ինչպես՝ Ցուցանէ առակս, թէ՛ *ով մարդ՝* որ ծերացար անարէն եւ չար գործովք, *բարձրացիր* հոգով առ Քրիստոս եւ *ջերմացիր* հրով սիրոյ նորայ եւ *մկրտեայ* զանձն քո ՚ի ջերմ արտասուս եւ *լուսայ* արտասաւք եւ հառաջանաւք զշարաւ մեղաց քոց մեծայլուսով եւ ապաշխարութեամբ (ՎԱԱ): Ցուցանէ առակս, թէ՛ *ով մարդ,* ձրի *մի երկմտիր* թերեհաւտութեամբ. այլ *լուսայ* ՚ի Քրիստոս հաստատուն հաւատով եւ *դիմէ* առ նայ զղջ[մ]ամբ եւ արտասուաւք (ՎԱԱ) և այլն:

Մարդ բառով կոչական ունեցող և 2-րդ դեմքով նախադասությունների կարգավիճակը փոխվում է, երբ դրանցում բառային արտահայտությունն ունի *դու* ենթական: Օրինակ՝ Ցուցանէ առակս, թէ՛ *մարդ,* մի տար *դու* ՚ի քէն զէն սատանայի. որ գայ եւ նովաւ սպանցէ զքեզ (ՎԱԱ): Եվ որքան էլ այսօրինակ նախադասություններում *մարդ* կոչականն ու *դու* ենթական ունեն ընդհանրական արժեք, ու դրանցում արտահայտված գործողությունը վերաբերում է ընդհանրապես բոլորին և ոչ թե որոշակի խոսակցի, այնուամենայնիվ բերված կարգի նախադասությունները ձևականորեն համարում ենք երկկազմ:

Առանձնանում են նաև այնպիսի՝ պայմանականորեն երկկազմ կառույցներ, որոնցում *մարդ* կոչականը բացակայում է, իսկ *դու* ձևական ենթական դարձյալ որոշակի անձ չի նշում, քանի որ դրան թե՛ նախորդող և

թե՛ հաջորդող կառույցներում խոսքը վերաբերում է ոչ թե կոնկրետ որևէ մեկին, ով տվյալ պահին իրական խոսակից է, այլ բոլոր նրանց, ովքեր երբևէ կառնչվեն այդ տողերին: Օրինակ՝ Եւ թէ ուզենաս որ գտնուս գրբինձն, զբակլան, զբացվենեկն՝ դու տե՛ս ի վերայ բենին. եւ թէ ուզենաս որ գտնուս զգարին, զգառն, զգարծիլն՝ նա դու տե՛ս ի վերայ գիմին. եւ այսպէս գտի՛ր կարգաւ մինչեւ ի քէն (ԱՍՕԲ):

Վերևում բերված կառույցներից էապէս տարբերվում են նրանք, որոնցում բացակայում են *մարդ* բառով կոչականն ու *դու* ենթական, և դա՛ ոչ թէ այն պատճառով, որ խոսքի բովանդակության պլանում նշված անդամները ենթադրվում են, այլ այն, որ այդ նախադասություններում արտահայտված գործողությունը որոշակի վերագրում չունի: Օրինակ՝ Եւ զխառնուած դեղերն այլ այսպէս գտիր, որպէս ասան ասիան եւ ապքաման եւ աստաքի սալիմն եւ ինչ նման սոցա՝ ի վերայ այբին տես, եւ զմաճունն ի վերայ մենին տես, եւ զճուարիջն ի վերայ ճէին տես, եւ զշարապն ի վերայ շային տես, եւ զալէն ի վերայ տիւնին տես, եւ դուրսն ի վերայ դատին տես. եւ այսպէս գնա՛ կարգաւ մինչեւ վիճարն ի գրոցն. եւ ի գրոցն վիճարքն զփոխանն է գրած. եւ այլ յետեւ զխրատն է գրած զԳեղիանոսի եւ զԲագարատայ. եւ այլ ի վերջն քիչ մն բան առաք ի Զախիբայ Խորոզմի շահէն եւ որպէս զէտ ստածումն է Ա Ա դեղերու զօրութիւնէ (ԱՍՕԲ):

Մարդ բառով արտահայտված կոչականից բացի՝ ընդհանրական-դիմավոր նախադասություններում կոչականը կարող է արտահայտվել նաև այլ գոյականներով ու գոյականական բառակապակցություններով, որոնք նույնպէս ունեն ընդհանրական իմաստ, և որոնցով կարելի է որևէ գործողություն վերագրել բոլորին: Որպէս այդ կարգի կոչականներ՝ բնագրերում հանդիպում են՝

ա) *եղբա(յ)ր, հոգի, որդի, որդեակ* գոյականները՝ եզակի և հոգնակի թվերով, ինչպէս՝ Յուցանէ առակս, թէ զխոստացեալ իրքն մի համարիք քեզ եւ մի շնորհայկալ մարդոյ լինիս, մինչեւ առնուս. եւ թէ ջուր տան քեզ, ՚ի նոյն ժամն ՚ի գոգդ առ զինքն, զի շատք ասեն եւ ոչ տան զասացեալն իւրեանց, *ով եղբար*, եւ սուտ լինին (ՎԱԱ): *Որդեա՛կ*, թէ լըսես դու ինձ Ու ականջ դընես խըրատի (Ֆ, 864): Թէպէտ շատ ջանաս, *եղբա՛յր*, Քան զշիւարն այլ իրք չի տանիս (Հ, 456):

Անշուշտ, նշված և այլ կոչականներ ուրիշ կիրառություններում ունեն որոշակի հասցեատեր, ինչպէս՝ *Հոգե՛կ*, թէ զհոգիս ուզես, Չէ չասեմ,

հանեմ տամ ի քեզ (Հ, 283): – Ես ու դուն, *հոգե՛կ*, Ես ու դուն, Ես ու դուն
օթվան սարերուն (Հ, 91) և այլն:

Բերված կարգի նախադասություններում *եղբայր*, *որդի* և այլ գոյա-
կաններով արտահայտված կոչականների ընդհանրական իմաստ ունե-
նալու մասին լավագույնս վկայում են հետևյալ բանատողերը, որոնցում
հիշյալ բառերով բազմակի կոչականներին վերագրվում է եզակի թվով
հատկանիշ՝ *Եղբա՛յր, սիրելի որդի*, Որ ի այս հողս *կու կենաս*, Յաշխարհս
ես ի բան *էկել*, Չաչքտ *բաց, տե՛ս*, թե ո՞ւր *կու գնաս* (Հ, 419):

բ) *Իմ հոգի* մասնատունակ բառակապակցությունը և այլն, ինչպես՝
Խելօք իմաստուն խօսից Թէ ականջ դնես, *իմ հոգի*, Նայ հանց փառաւոր
լինիս, Որ աշխարհս ամէն հաւանի (Հ, 453):

Թեև այս կարգի ընդհանրական-դիմավոր նախադասություններում
գործածված կոչականներն արտահայտվել են գոյականով, սակայն նրանք
տվյալ կիրառության մեջ հանդես են բերում դերանվան առանձնահատ-
կություն. ցույց են տալիս ոչ թե որոշակի, այլ չտարբերակված անձ կամ
անձինք: Արդյունքում առաջանում են ընդհանրական-դիմավոր նախա-
դասություններ, քանի որ նմանատիպ կոչականների կիրառումով ստեղծ-
վում է խոսքային որոշակի իրադրությունից դուրս վիճակ, որում խոսքը
վերաբերում է ընդհանուրին և ոչ թե կոնկրետ անձի կամ անձանց: Այս
տիպի նախադասություններում իբրև կոչական կիրառվում են *մանկտիք*,
եղբար (*եղբարք*) և այլ գոյականներ.

Բերված կարգի կոչականներով նախադասությունների ընդհան-
րական-դիմավոր կառույց լինելու լավագույն վկայությունն այն է, որ երբ
այդ նախադասությունները գործածենք առանց տվյալ կոչականների, ա-
պա նրանք չեն դադարի ընդհանրական-դիմավոր լինելուց: Այս հարցում
էական է այդ նախադասությունների իմաստային կողմը. նրանցում ար-
տահայտվում են բոլորին վերաբերելի խրատներ, խորհուրդներ, պատ-
գամներ և այլն: Առտնին, տվյալ իրադրությունից բխող գործողություն
ցույց տվող նախադասությունները իրավիճակային են, այսինքն՝ վերաբե-
րում են որոշակի անձի կամ անձերի և կառուցվածքով էլ երկկազմ են:
Այնպես որ, ինչպես առանց կոչականի ընդհանրական-դիմավոր նախա-
դասությունների դեպքում է դրանց իմաստային կողմը կարևոր, այնպես
է՝ վերոնշյալ կոչականներով նախադասությունների դեպքում: Հմմտ. *ույ*/
մարդ, ձրի մի երկմտիր թերեհաւատութեամբ. այլ յուսայ ՚ի Քրիստոս

հաստատուն հաւատով (ՎԱԱ) և Ձրի մի երկմտիր թերէհաւատութեամբ. այլ յուսայ 'ի Քրիստոս հաստատուն հաւատով (ՎԱԱ): Խելօք իմաստուն խօսից Թէ ականջ դնես, *իմ հոգի*, Նայ հանց փառաւոր լինիս, Որ աշխարհս ամէն հաւանի (Հ, 453) և Խելօք իմաստուն խօսից Թէ ականջ դնես, Նայ հանց փառաւոր լինիս, Որ աշխարհս ամէն հաւանի (Հ, 453): Թէպէտ շատ ջանաս, *եղբա՛յր*, Քան զշուարն այլ իրք չի տանիս (ԽԿ, 36) և Թէպէտ շատ ջանաս, Քան զշուարն այլ իրք չի տանիս (Հ, 46):

Գ. Հոգնակի 2-րդ դեմքով արտահայտվող ընդհանրական-դիմավոր նախադասություններ:

Ընդհանրական-դիմավոր նախադասությունների արտահայտման միջոց են ծառայում անդիմասահմանափակ բայերի հոգնակի թվի 2-րդ դեմքի դրական և ժխտական խոնարհման բայաձևեր նույնպէս: Օրինակ՝ Այլ ողորմն չէք տեսել, Թէ ունի մարդըն սիրելի (Հ, 422): Եւ թագաւորն Աստուած է, որ եւ յաւուր դատաստանին ասէ վասն մեղաւորացն, թէ *կտրեցէք* ընդ մէջ եւ *հանէք* 'ի խաւարն արտաքին (ՍՄԴ):

Գերադաս անդամը գերազանցապէս արտահայտվում է հրամայական ապառնու հոգնակի թվի 2-րդ դեմքով, որի կազմութիւնը գերազանցապէս գրաբարաձև է՝ Եւ ամէն իրք որ զանձն տաքցնէ՝ *ի գործ արկէք* (ԱԱՕԲ): Եւ սուրբ գիրք քաջայլերեն եւ ասեն, թէ *հասմբերեցէք* սակաւիկ մի եւ *ողորմիք* ամենայն հեշտասէր մեղաւորացն եւ մեծայտանցն, որ զմարմինս բտեն կերակուր որդանցն (ՎԱԱ): Եւ զիս զանալիտան եւ զանարժան ծառայս *յիշեցէ՛ք* 'ի Տէր (ԱԱՕԲ):

Ընդհանրական-դիմավոր նախադասությունների՝ հոգնակի թվի 2-րդ դեմքով գերադաս անդամների արտահայտման հիմնական միջոցը հրամայական ապառնի ժամանակաձևն է, որը, ի տարբերություն կազմութեան անմիօրինակությամբ առանձնացող եզակի թվի 2-րդ դեմքի, թէ՛ դրական և թէ՛ ժխտական խոնարհման համակարգերում պահպանել է կազմութեան՝ գրաբարից ավանդված օրինաչափությունները, այն է՝

1. դրական խոնարհման բայաձևերը կազմվում են անցյալ կատարյալի հիմքով, որին՝

1.1. ներգործաձև խոնարհման դեպքում ավելանում է *-է՛ք* դիմաթվային վերջավորություն: Օրինակ՝ ... թէ բժիշկ է՝ *մի՛ խափանէք*. Եւ *ջանացէ՛ք*, որ զբանադրանքն չի ընդունիք, եւ զինչ որ գրած է զայն *արեք* (ԱԱՕԲ): Որք կարդայք կամ օրինակէք՝ թողութիւն մեղաց *յսնդրեցէք* 'ի

Քրիստոսէ թարգմանողի գրոցս Ամիրտովլաթ բժշկին (ԱՍՕԲ): Ձի Քրիստոս հրամայեաց, թէ ձրի *ամէք* եւ ձրի *տուէք* (ՎԱԱ):

Թերևս բացատրություն է *խմանալ* բայի հոգնակին, որը Ամասիացին գործածել է ոչ թե -*էք*, այլ -*իք* դիմաթվային վերջավորությամբ՝ Եւ այլ *խմացիք*, որ գայս բժշկությունս պատեհ է որ ամեն մարդ ուսանի (ԱՍՕԲ):

1.2. կրավորաձև խոնարհման դեպքում՝ -*ա՛յք* կամ -*արո՛ւք* դիմաթվային վերջավորություն՝ Եւ գայս կամի ցուցանել, թէ ահա թագաւորդ ձեր ՚ի մէջ ձեր՝ *գորացարուք* եւ յաղթեցէք (ՎԱԱ):

Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ՝

ա) գրեթէ չի գործում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների գրաբարյան օրինաչափությունը, այսինքն՝ բայի կազմությունը և խոնարհիչ ձայնավորը խոնարհման ձևի հարցում այլևս որոշիչ դեր չունեն,

բ) ներգործաձև խոնարհման բայաձևերը մեծաթիվ են,

գ) վերոնշյալ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ներգործաձև խոնարհման վերջավորությամբ են կազմվում նաև բայեր, որոնք գրաբարում խոնարհվում էին կրավորաձև՝ Օրէնքն եւ մարգարէքն, առաքեալքն եւ մարտիրոսքն, հայրապետքն եւ հրեշտակքն ասեն, թէ *սայաշխարեցէք* եւ *արդարացէք* (փխ.՝ *արդարացայք//արդարացարուք*) եւ *եկէք* (փխ.՝ *եկայք//եկերուք*) ՚ի յարքայութիւն եւ մի լինիք սեւերեսք (ՎԱԱ)¹⁶¹,

դ) կրավորաձև խոնարհման բայաձևերը չափազանց սակավաթիվ են, ինչը վկայում է նրանց՝ խոսքի ոճավորման միջոց լինելու և -*այք//արուք* վերջավորությունների՝ խոնարհման համակարգից գրեթէ դուրս մղվելու մասին,

ե) կրավորաձև խոնարհվում են բացառապէս այն բայերը, որոնք գրաբարում ևս նույն ձևով էին խոնարհվում՝ Որպէս ասէ. *եկայք* արինեալք հօր իմոյ. զի քաղցեա եւ ետուք ինձ. եւ զանողորման արտաքսէ ՚ի տանէն ասելով. *երթայք* յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտանական (ՎԱԱ):

զ) գուրաձևություն է առաջանում նաև -*էք* վերջավորության գործածության սահմանների ընդլայնման հետևանքով, ինչի մասին վկայում է *գալ* բայի *եկէք* և *եկայք* քերականական գույգը:

2. Ժխտական խոնարհման բայաձևերը կազմվում են կանոնավոր

¹⁶¹ Հանդիպում է նաև *եկայք* տարբերակով՝ Որպէս ասէ. *եկայք* արինեալք հօր իմոյ. զի քաղցեա եւ ետուք ինձ (ՎԱԱ):

կերպով. այն է՝ *մի՛* արգելական մասնիկով և սահմանական ներկայի 2-րդ դեմքով, ինչպես՝ Ցուցանէ առակս, թէ բնաւ ամենեւին *մի առնէք* ձեզ թշնամի գոք ՚ի մարդկանէ. թէպէտ եւ կարի աղքատ եւ տկար լինի (ՎԱԱ): Եւ *մի լինիք* սուերեսք (ՎԱԱ):

Հոգնակի հրամայականով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները միջինհայերենյան աղբյուրներում ունեն անհամաչափ բաշխվածություն: Այգեկցու առակներում դրանք համեմատաբար հաճախադեպ են, մինչդեռ, օրինակ, Ամասիացու բժշկարաններում ունեն սահմանափակ թիվ և հազվադեպ կիրառություն:

Միջինհայերենյան աղբյուրներում հրամայական ապառնու ժխտական խոնարհման հոգնակի 2-րդ դեմքով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները հազվադեպ են:

Ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր որոշ նախադասություններում հանդես են գալիս կոչականներ, որոնք արտահայտվում են՝ *եղբա(յ)ր, մարդ, որդեակ* և այլ գոյականների հոգնակի թվերը, որոնք լեզվական աղբյուրներում հազվադեպ են: Օրինակ՝ Ցուցանէ առակս, թէ՝ *ով մարդիք, թէ զինչ գործէք եւ կամ զինչ խորհիք. թէ չար եւ թէ բարի, ... զայզին Քրիստոսի մի մոռանաք* (ՎԱԱ): Ցուցանէ օրինակս, թէ *ով մարդիկ, սիրեցէք զսրբութիւն եւ զողջախոհութիւն. բայց վասն որդէծնութեան մտէք յամուսնութիւն եւ մի՛ վասն աղտեղութեան* (ՎԱԱ): Ահայ որդեակք, ՚ի *միտ առէք* զբանն առակիս, զի ոչ յիշեմք զաւրն ահայզին (ՎԱԱ): *Եղբա՛րք, լրսեցէք խրատի, Թէ հետ ինձ ի՛նչ բան կու լինի* (Ֆ, 863): *Եղբա՛յրք, երբ ի հաց նըստիք, Ձենեցէք ձեզ մէկ մ՛* այլ ընկեր (Հ, 374): *Մըսկին Մինասն ասաց, եղբարք, լսեցէք, Աշխարհս անցաւոր է, խոստովանեցէք, Դարձէք չարեաց եւ զբարիս գործեցէք, Մեղաւորիս մէկ Հայր մեղա ասացէք* (ՄԹ):

Հոգնակի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասություններում իբրև կոչական հանդիպում է նաև *ազգ մարդկան* հարաբերականորեն անմասնատունակ բառակապակցությունը՝ Գոչեաց ասելով, թէ *լուսարուք ազգ մարդկան*. ՚ի ցանկութիւն գէշ ախտի պոռնկութեան եւ շնութեան եւ յալ մեղս եւ ՚ի չար գործս. եւ իմացարուք, որ չար դելքն կապեցին զմեզ մեղաւք ՚ի յաշխարհիս նահատակիք (ՎԱԱ):

Դ. *Եզակի 3-րդ դեմքով արտահայտվող ընդհանրական-դիմավոր նախադասություններ:*

Միջին հայերենում ընդհանրական-դիմավոր նախադասություններին արտահայտման միջոցներից մեկն էլ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դեմք ունեցող դրական և ժխտական խոնարհման բայաձևերն են: Այդպիսի նախադասություններն արտահայտվում են *մարդ* ձևական ենթակայով: Օրինակ՝ Ասի, թէ բարև մի տամ Այն կըռոցն, որ *մարդ* չիմանայ (Հ, 496): Ն՝ ավվայ երեսիս ջըրէն Կու վախեմ, թէ մարդ իմանայ (Հ, 100): Եւ ասէ կին ուրախութեամբ. երթանք հանենք զան եւ բերենք ՚ի տունս մեր. եւ *մարդ* ոչ յիմանայ եւ ոչ տեսանէ (ՎԱԱ): Թէլպիսութեան մէջն ես սնել, *Մարդ* չի կարեր հետ քեզ հնել (ՄՂ): Երբ *մարդ* այլ ճամփով ի Նահիրուլայ կամի գնալ, քսան և հինգ ար երթայ ի Մուլթան քաղաք (ԱՔՀՊ, 322):

Եզակի 3-րդ դեմքով գերադաս անդամով ընդհանրական-դիմավոր նախադասությունների մասին առաջին հիշատակության հեղինակը Գ. Ղափանցյանն է, որը միակազմ այլ կառույցների շարքում նշում է նաև *Մարդ ուզում էր փախչել* նախադասությունը¹⁶²: Վ. Առաքելյանն առաջին հայ լեզվաբանն է, որը ժամանակակից հայերենի *մարդ* ձևական ենթակայով կառույցները քննում է անորոշ-դիմավոր նախադասությունների կազմում¹⁶³: Հետագայում խնդրո առարկա կառույցներն ուսումնասիրել է նաև Ս. Գյուլբուղաղյանը (դրանք այն կառույցներն են, որոնցում *մարդ* ենթական մատնանշում է «ոչ թե ինչ-որ անորոշ մարդկանց, այլ՝ մարդուն ընդհանրապես») ¹⁶⁴, ապա նաև Գ. Ջահուկյանը¹⁶⁵:

Մարդ բառով կազմված ընդհանրական-դիմավոր նախադասություններ գործածվում են նաև միջին հայերենի լեզվական աղբյուրներում: Օրինակ՝ Յորեկն է իր մութն եղեր, *Մարդ ըզհւր տարտըն չգիտէ* (Հ, 236): Քո ձայնդ յերկիր ելեր, *Չքո դիմայթըն մարդ չգիտէ* (Հ, 224): Լինի որ մէկին աւգտէ, եւ մէկային չաւգտէ. *մարդ չի գիտէ* թէ ի՛նչ եղաւ աւգտութիւնս (ԱԱ): Գնա՛, գիշերով եկուր, Հաւը քուն ուր *մարդ* չիմանայ (Հ, 708) և այլն:

Խնդրո առարկա ընդհանրական-դիմավոր կառույցներում *մարդ* բառի իմաստային յուրահատկությունը (ձեռք է բերում ընդհանրական

¹⁶² Գ. Ղափանցյան, 1939, 169:

¹⁶³ Վ. Առաքելյան, 1964, 15:

¹⁶⁴ Ս. Գյուլբուղաղյան, 1967, 88:

¹⁶⁵ Գ. Ջահուկյան, 1974, 396:

արժեք) պայմանավորված է նրա՝ անորոշ առմամբ արտահայտված լինելու հանգամանքով: Օրինակ՝ Գնա՝ ու պահ մի եկո, Հանս ի քուն, *Մարդ* չիմանայ (Հ, 755): Ասի՛, թե քաշե՛մ դանա՛կ, Արիւնիս ասեմ՝ Արի՛, ե՛լ. *Մարդ* իր դանակ ո՞նց քաշէ Կամ հոգուն ասէ՛ Արի՛, ե՛լ (Հ, 168): Նա՛ վասն մեր բազում մեղացն ի հոս մեծ սով եղև, որ բնաւ *Մարդ* տեսեալ չէր (ՄԹ, 129) և այլն: Սակայն միջին հայերենում զրո ցուցիչով արտահայտվում էր նաև բառի որոշյալության (առկայացման) քերականական իմաստը, ինչին նպաստում էր բառի՝ խոսքում բառային-քերականական մի շարք միջոցներով ու հնարներով տարբերակված լինելը: Նշենք դրանցից մի քանիսը.

ա) Առարկայի առկայացումը միարժեք էր, եթե այն գործածվում էր *և* որոշիչ հոդով: Օրինակ՝ Քանզի Դաւիթ *մարգարէն* ասէ, թէ խոստովանութիւն մեծ վայելչութիւն է. ապա *մարդն*, որ զմեղքն փոքր համարի եւ ոչ խոստովանի, նա յաւուրն դատաստանի պատասխան պիտի տայ եւ խայտառակի ՚ի մէջ հանդէս հրապարակին. գորօրինակ կրակ ձգեն ՚ի յարդն, որ այրի. նոյնպէս մեղաւոր *մարդն* առանց խոստովանութեան ՚ի հուրն անշէջ անկանի. ապա թէ ուղիղ խոստովանի եւ ոչ թաքուցանէ, նա խոստովանութիւնն այն զմեղքն այրէ, որպէս հուր գյարդն, եւ *մարդն* մնա մաքուր (ՎԱԱ): Երբ ջրհեղն լցվի՝ *մարդն* չպիտի արգիլէ. շուտ ելնել պիտի (ԱԱՕԲ)¹⁶⁶: Այն *մարդն*, որ քեզի չար կուզէ՝ Դու զայն ի գատ նշանէ (Հ, 507):

բ) Եթէ *մարդ* բառը պարզ նախադասության կազմում գործածվում էր առանց որոշիչ հոդի, սակայն որոշյալի դերով, ապա այն երբեմն տարբերակվում էր, երբեմն՝ ոչ: Հմմտ. Կուզե՞ս, որ ազիզ կենաս, Որ *ամէն մարդ* զքեզ սիրէ, Դու հողի նման կացիր, Որ *ամէն մարդ* զքեզ կոխէ (Հ, 478) և Ապա թէ *յիմար մարդ* լինի, որ ոչ կարէ իմանալ զկորուստ հոգոյ իւրոյ եւ ոչ զփառք եւ զպատիւ արդարոցն իմանայ եւ ոչ գտանջանք մեղաւորացն, այնպիսին ուրախանայ յաշխարհիս (ՎԱԱ):

գ) Եթէ *մարդ* բառն առանց հոդի գործածվում էր որպէս այլ բառի (տվյալ դեպքում՝ Աստուած) հակադրաբար, ապա ինքնին առկայացվում էր: Օրինակ՝ Եւ *մարդ* ոչ պիտի Աստուծոյ ըստեղծուածոյն բան ասէ կամ ոչ հաւանի եւ ասէ, թէ խոտան է կամ գէշ (ՎԱԱ): Հայ իմ մէկ ու մէկ Աստուած, Մէկութիւնըն քեզ վայել է. Ձով որ դուն ի վեր հանես, *Մարդ* ի վայր

¹⁶⁶ Հմմտ. Երբ ջրհեղն լցվի մարդոյն՝ չի պիտի որ արգիլէ, շուտ ելնել պիտի (ԱԱՕԲ):

բերել չկարէ: Չան հացն, որ դու տաս ուտել, *Մարդ* իսկի խըլել չը կարէ: Ջուր ի կենաց աղբերէդ Ով խըմէ՝ անմահ մընասցէ (Հ, 223):

դ) Եթէ *մարդ* բառը բարդ ստորադասական կառույցի գլխավոր նախադասության մեջ գործածվում է որպէս ենթակա, ապա այդ նախադասությունը չի կարող արտահայտել ընդհանրական-դիմավորին բնորոշ իմաստ, քանի որ որոշչի դերով երկրորդական նախադասությամբ նրան ամրագրվում է որոշականի հատկանիշ, ինչպէս՝ *Մարդ*, որ օտար տեղ երթայ, Շատ մի խելք կու պիտի նորայ (Հ, 499): *Մարդ*, որ սիրու տէր լընի, Անոր դէդ ու դարման չի լընի (Հ, 797): Յուցանէ առակս, թէ մարդ որ կապի ՚ի սէր աշխարհիս եւ ՚ի փառս եւ հեշտանայ ՚ի մէդս եւ ՚ի ցանկութիւնս, նայ դիրար գտանէ գնոսս սատանայ եւ սպանանէ մեղօք (ՎԱԱ):

ե) Որոշ կառույցներում *մարդ* բառը կատարում է երկկազմ նախադասության՝ անորոշ առմամբ գործածված ենթակայի և ոչ թէ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասության ձևական անդամի դեր՝ Այր մի կար կարի խիստ աղքատ, անք է անկարելոր եւ անայցելու. եւ էր այրն այն բնութեամբ բարի եւ գործովք բարի. եւ յորժամ որդի եղէ նմայ, *առաւել աղքատութենէն մարդ չերթար ՚ի տուն նորա* (ՎԱԱ):

զ) Ստորն բերվող բազմաբարդ կառույցի վերջին երկու նախադասությունները, այսպէս կոչված, թերի ընդհանրական-դիմավոր կառույցներ են. նրանցում զեղչված են *մարդ* բառով ձևական ենթականները, Այս աստընվորիս վրայ Երկու բան՝ ողորմ ու լալի. Մէկ մ՝ որ (*մարդ-Գ.Խ.*) սիրու տէր լինի, Մէկ ալ ա՛ն՝ (*մարդ-Գ.Խ.*) կարօտ մեռանի (Հ, 160): Հմտ. Այս աստուորիս վրայ Երկու բան՝ ողորմ ու լալի. Մէկ որ (*մարդ-Գ.Խ.*) սիրոյ տէր լինի, Մէկ ալ՝ գայ գրօղն ու տանի (Հ, 160):

Մարդ ձևական ենթակա ունեցող ընդհանրական-դիմավոր նախադասությունները միջին հայերենի բանավոր խոսքին բնորոշ հաղորդակցական միավորներից էին և լայնորեն գործածվում էին նաև խոսակցական մակարդակում, ինչի մասին վկայում է դրանց հաճախադեպությունը խոսակցական լեզվով գրված ստեղծագործություններում: Վերջիններիս շարքին կարելի է դասել նաև Հովասափ Երզնկացու մի տաղը, որում հիշյալ կարգի նախադասություններ հանդիպում են մի քանի անգամ՝ Բանք Խիկարայ գայս կու ասէ, *Մարդ* հարամուն թող չի վախէ: *Մարդ* հաշարուն թող վախենայ, Որ ի չարեացն ի գատ մնայ: *Մարդ* հաշարի կնոջ դիպի, Հանց թէ ջհտի ձեռն կինկնի (ՀԵ): *Մարդ* թէ հազար դայդու ունի, Ինքն

խելօք կնկան դիպի: Թող մարդ բոզին ձեռն չինկնի, Քան զգերի երկիր վարի (ՀԵ):

Ե. *Հոգնակի 3-րդ դեմքով արտահայտվող ընդհանրական-դիմավոր նախադասություններ:*

Միջին հայերենում ընդհանրական-դիմավոր նախադասությունների արտահայտման միջոց են նաև անդիմասահմանափակ բայերի հոգնակի թվի 3-րդ դիմային ձև ունեցող դրական և ժխտական խոնարհման բայաձևեր: Օրինակ՝ Ասայ գառակս, յորժամ *կոչեն*¹⁶⁷ զքեզ ՚ի բան կամ ՚ի գործ անդէպ եւ անման, որ ՚ի վեր է քան զկարողութիւն քո (ՎԱՍ): *Եւ թէ գտողան շուտ կտրեն ի կաթնէն*՝ վատուժ լինայ եւ աւաղ (ԱՍՕԲ): Գիտեմ՝ անպիտան դառնայ Այն մատաղն, որ զինքն *չի գենեն* (Հ, 857): Ի Պուրճ քաղաք յամէն չորս տարի աստուած մի *պաշտեն*, և ի յաւարտել չորս ամին՝ *փոխեն* (ԱՔՀՊ, 322) և այլն:

Հոգնակի թվի 3-րդ դեմք ունեցող գերադաս անդամների արտահայտման հիմնական միջոցը սահմանական ներկա և ըղձական ապառնի ժամանակաձևերն են, երկուսն էլ՝ շարունակական իմաստով: Ասվածը պայմանավորված է նրանով, որ հենց շարունակական իմաստն է նպաստում այդ նախադասություններում արտահայտված գործողությունների ընդհանրական արժեքի ձեռքբերմանը: Օրինակ՝ *Ի սուրբ սեղանոյն վերայ Քան գաղէկն այլ իրք չի գենեն, Չնիհարն ու զվատուծն, եղբարք, Աստուծոյ գայն ե՞րբ դըբըլեն* (Հ, 857): Խելօքն է ի ծով նման, *Որ քանի չափեն*՝ կուտանի, Անգէտն ի տիկ նման, *Փառչ մ՛ աւել լնուն*՝ կու պատրի (Հ, 483) և այլ նախադասություններում արտահայտվում է ոչ թե խոսելու պահին, ներկայում կատարվող և ենթադրաբար ավարտվող, այլ այնպիսի գործողություն, որը կատարում են բոլոր ժամանակներում կամ չեն կատարում առհասարակ, այսինքն՝ ո՛չ անցյալում, ո՛չ ներկայում և ո՛չ էլ ապագայում: Հետևաբար ունենք այն համոզումը, որ միջին հայերենի ընդհանրական-դիմավոր նախադասությունների՝ մասնավորապես հոգնակի 3-րդ դիմային ձև ունեցող գերադաս անդամները, որոշակի ժամանակաձևերով արտահայտված լինելով հանդերձ՝

1. չեն մատնանշում հստակ, որոշակի ժամանակ կամ ժամանակա-

¹⁶⁷ Ընդգծված բայաձևը տվյալ խոսքային իրադրության մեջ կարող է ընկալվել նաև սահմանական ներկայի քերականական իմաստով:

հատված. նրանցով արտահայտվում է գործողության կատարման շարունակականություն, անընդհատություն: Ահավասիկ ասվածը հիմնավորող նախադասություն՝ Եւ յորժամ տղան վատուծի՝ *պիտի որ կտրեն ի կաթնէն* (ԱՍՕԲ):

Ի դեպ, նույնը նկատվում է նաև 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասություններում: Այսպես՝ «Զամէն ազգ արուեստավոր *պատուեցէք*. Բայց գդարբինն եւ զհիւսն ու զքարգործն աւելի» (ՄՄԴ) նախադասության մեջ *պատուեցէք* բայաձևի բովանդակային պլանում ենթադրվում է ոչ միայն «այս պահին» և «այս պահից հետո», այլև «առհասարակ» իմաստ: Հմմտ. նաև՝ Օրինակն այս է, որ *թէ զճուֆրն եւ իսպիտակ դեղն եւ զթանաքն եւ զոնէխն յամենէն առնուս մէկ մէկ մասն եւ զամենն տրորես եւ յիրար խառնես*՝ անպատճառ որ գուն մն կու լինի՝ որ ի յայս գուներս չի նմանիր (ԱՍՕԲ) և այլն:

2. Չի նկարագրվում խոսքային որոշակի միջավայր: Նրանց արտահայտած գործողությունները չեն ենթադրում մի իրադրություն, որում ներկա լինեն գործողությունը ենթադրաբար կատարողները խոսելու պահին: Օրինակ՝ եւ դեղն այն է, որ տաք ջուր *լնուն* ի վզին լիսեռին վերայ (ԱՍՕԲ): Ի Լ ահուրէն ի քառսուն արն *երթան* ի Խշմիր (ԱՔՀՊ, 320): Այսպես է նաև 2-րդ դեմքով նախադասություններում: Հմմտ. «Եւ *տեսէք*՝ թէ քանի՞ պնդանք կայ հայրապետացն եւ այլ դատաւորաց եկեղեցոյն, որ վասն կաշառոյ չփոխեն զԱստուծոյ իրավունքն ի ծուռն» (ՄՄԴ) կառույցի «Եւ *տեսէք*» նախադասությունը, որի բովանդակությունից հնարավոր չէ պարզել, թե ում է ուղղված այդ խոսքը, քանի որ դա ասվում է խոսքային միջավայրից դուրս:

3. Չեն մատնանշում որոշակի կամ անորոշ անձ կամ անձինք: Այսպես՝ հոգնակի 2-րդ դեմքով գերադաս անդամ ունեցող «Քանքարոյ բիր պարտական Ագարիայ, Սակաւիկ բանս, որ ասաց զհնոյն վերայ, *Քաղցր երգէք եւ ասացէք մէկ Հայր մեղայ*, Քաղցրասցի ձեզ Տէր, գթասցի մեզ Տէր» (ԱՁ) և հոգնակի 3-րդ դեմքով գերադաս անդամ ունեցող «*Երբ զճուկն ի ջրէն հանեն Ի ի ջուր մ՝ այլ ձգեն*՝ նա կապրի, *Երբ զճուկն ի ջրէն հանեն Ու ձգեն*՝ նա թալէթի» (Հ, 206) նախադասությունների ընդգծված գործողությունների կատարման համար ենթադրվում են ոչ թե, համապատասխանաբար, 2-րդ դեմքով խոսակից կամ խոսակիցներ կամ էլ 3-րդ դեմքով անձնանիշ ենթականեր, այլ բոլորն առհասարակ:

Միջինհայերենյան աղբյուրներում հաճախադեպ են միևնույն պարբերության, անգամ նույն բարդ կառույցում գործածվող եզակի 2-րդ և հոգնակի 3-րդ դեմքերով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասություններ: Ավելին՝ տարբեր դիմաթվային միջոցներով արտահայտված այդ նախադասությունները խոսքային բազմաթիվ իրադրություններում փոխարինվում են մեկը մյուսով, ինչը վկայում է նրանց շարահյուսական հումանշության մասին: Այսպես՝ Վարդան Այգեկցու միևնույն առակից քաղված նույն կառույցների վերջին նախադասությունները, արտահայտված լինելով, համապատասխանաբար, եզակի 2-րդ և հոգնակի 3-րդ դիմային արտահայտությամբ գերադաս անդամներով, ըստ էության գործածվել են որպես միևնույն անփոփոխի փոփոխակներ: Հմտ.

Ցուցանէ առակս, թէ մարդ որ շնայ կամ զրկէ կամ գողանայ կամ սպանանէ եւ կամ զայլ մեղս որ գործէ, ոչ կարէ դիրաւ գերծանիլ 'ի մեղաց. զի մեղքն աւճն է, որ 'ի ծակն մտանէ եւ *ոչ կարես 'ի յետս քարշել* (ՎԱԱ) և Ցուցանէ առակս, թէ մարդ որ շնայ կամ զրկէ կամ գողանայ. յինք մեղք որ սովորի, որպէս շուն տոռամբ քարշեն. ամենայն մեղք զմարդն յինքն կու քարշեն, եւ օձի նման է մեղքն, որ 'ի ծակն սուր կու մտանէ. եւ *դուրս չեն կարել քարշել* (ՎԱԱ):

Վերոհիշյալ հումանշության մասին լավագույնս վկայում է նաև այն փաստը, որ տարբեր դիմաթվային արտահայտությամբ գլխավոր անդամներով ընդհանրական-դիմավոր նախադասություններ են հանդիպում անգամ միևնույն բազմաբարդ կառույցի կազմում (ընդգծվում են): Օրինակ՝ *Եւ Ա քանի օր չի թողուն* որ ի լոյսն նայի, *եւ սեւ կտաւ ի յաչիչն ի յարջեն կապեն*, *եւ ամեն երկօր եղչ ջրով լվանաս եւ օժես մանուշկի ձիթով*. *եւ հանապազ գոտքն եւ զձեռքն կապած պահես* (ԱՍՕԲ): Եւ թէ ծեծածն հին լինայ՝ լաւն այն է, *որ զինքն քերեն* որ շատ արիւն երթայ, *եւ յետ այնոր մորհամ բասիլիկոնով դեղ առնես եւ հաւու եւ սագու ճրագու քիթրայով թողուս պահ մն* (ԱՍՕԲ) և այլն:

Երբեմն հեղինակը չի կարևորում, թէ ո՞ր դեմքով և ո՞ր ժամանակաձևով է արտահայտում հանուրին վերաբերող գործողությունը: Այսպես՝ միջինհայերենյան աղբյուրներում՝

ա) հետևյալ բարդ կառույցի ընդհանրական-դիմավոր նախադասություններից առաջինն արտահայտվել է հոգնակի թվի 3-րդ դեմքով, հաջորդ երկու նախադասությունները՝ 2-րդ դեմքով, որոնցից մեկը՝ հրամա-

յական ապառնի, իսկ մյուսը՝ ըղձական ապառնի ժամանակաձևով՝ եւ դեղն այն է, որ տաք ջուր *լնուն* ի վզին լիսեռին վերայ. եւ սկանջթոռքն *օձէ՛* ձիթով եւ սամիթով, պապունաճով. եւ թէ ծանրանալն ի պալղամէ լինայ՝ այն է որ *տաս* կուլանկուպին զանճապիլով անօթեց. օգտէ, որ ջուրն եւ զգիճութիւն քաշէ (ԱՄՕԲ): Ամիրդովլաթ Ամասիացին, օրինակ, միննույն կարգի ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամներն արտահայտում է դիմավոր բայի 3-րդ դեմքի՝ մի դեպքում եզակի, մյուս դեպքում՝ հոգնակի թվով՝ Հմմտ. Եւ ի բաղանիսն հով ջուր չի խմէ եւ ձմերուկ չուտէ եւ դալար մրգեր չուտէ, որ վնասէ եւ արծուիք առնէ և Եւ Ա օրն չէ պատեհ որ Բ գործդեղ խմեն (ԱՄՕԲ) և այլն:

բ) Վերը նշված հանգամանքը շարադասության առումով որևէ օրինաչափության չի ենթարկվում, քանի որ ըղձական ապառնի ժամանակաձևներով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները երբեմն նախորդում են հրամայական ապառնիով արտահայտված նախադասություններին, երբեմն՝ հաջորդում, ինչպես՝ Եւ թէ գդեղն վասն պալղամին եւ հովութեան համար *տաս*՝ նոր թրպութ եւ դարիդոն *ծեծէ՛* եւ *մաղէ՛* ամէն մէկէն միաչաք (ԱՄՕԲ): Զերկուքն ի խաղողին շիրան *դրջէ՛*, որպէս մորհամ լինայ, եւ յետ այնոր ի քթան *փաթես* եւ ի վերայ ցաուն *դնես*. օգտէ աստուծով (ԱՄՕԲ): Ի մէջ եղբարց ահով մի խասիր, որ չէ ամաչես (ՎԱԱ):

Միջինհայերենյան լեզվական աղբյուրներում ընդհանրական-դիմավոր նախադասություններում որպէս գերադաս անդամ գործածվում են անդիմասահմանափակ բայերի վերը նշված խմբերից բազմաթիվ բառային միավորներ: Նկատենք, որ տարբեր հեղինակների ստեղծագործություններում այդ բայերը կազմում են տարբեր շարքեր՝ գործածության հաճախականությամբ և բաշխվածությամբ ներկայացնելով տարբեր պատկերներ¹⁶⁸:

¹⁶⁸ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկարանում, օրինակ, ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեջ որպէս գերադաս անդամ գործածված բայերի թիվը, ըստ մեր հաշվարկների, ավելի քան 8 տասնյակ է՝ *ածիլէլ, աղայ, աղընձել, աճոել, այրել, առնել/այնել/անել, առնուլ, ածել, արկանել, արունել, բաժնել, բանալ, ի բան տանել, բոնել, գալ, գործել, ի գործ արկանել, դատիլ* («աշխատել», «չարչարվել» նշանակությամբ), *դնել, թրջել/դրջել, եռացնել, երթալ, եփել, զարկել, թաթիսել, թանալ, թողուլ, իմանալ, լոսել, լուծել, լվանալ, լինել, լու-*

Բերված կարգի բայերի ընդհանուր շարքի դիտարկումը ցույց է տալիս, որ նրանց հիմնական մասը միջին հայերենի բառապաշարի գործուն շերտից է, որում առանձնանում են՝

1. դասական գրաբարից փոխառյալ բայեր (ներքին փոխառություն), որոնք միջին հայերենը ժառանգել է առանց որևէ փոփոխության, ինչպես՝ *աղալ, այրել, իմանալ, մաղել, շինել, պարզել, սրբել, տալ* և այլն: Դրանք գերազանցապես ներկայացնում են գրաբարի բառապաշարի գործուն շերտը և ոճի տեսանկյունից հիմնականում չեզոք են, ինչպես գրաբարում,

2. այսպես կոչված, միջինհայերենացված բայեր, որոնք դարձյալ գրաբարյան փոխառություններ են (ներքին փոխառություն), սակայն հնչյունական կազմի՝ միջին հայերենին բնորոշ փոփոխությունների ենթարկված, ինչպես՝ *թաթախեն<թաթխել, ճեղքեն<ճղքել, մտանեն <մտնուլ, պատակիմ<պատկել//պատկիլ, առնել<այնել//անել* և այլն: Սրանցից է նաև գրաբարի *թոթովեն* բայը, որը ՆՃԲ-ում վկայվում է թարգմանական երկից (Հովհան Ոսկեբերան), մինչդեռ միջինհայերենյան վկայությունը (Գրիգոր Մաշկվոր, 12-րդ դ.) հնչյունափոխված է՝ *թոթովէ*,

3. միջինհայերենյան կազմություններ, ինչպես՝ *խածկել* («խանձել»), *շաղաղել, սղկել* («ծեծելով մանրել՝ մանրացնել, փոշիացնել») և այլն,

4. արտաքին փոխառություններ, որոնք փոքրաթիվ են, և որոնց մի մասն ունի համադրական, մյուսները՝ վերլուծական կազմություն՝ *թաշմիր անել* («հերձել», «հատելով ճեղքել»), *անդիճել* («մտածել», «քննել»), *խաղաջ//խախաջ անել* («խոչափողը հեղուկով ողողել՝ կլկլացնելով») և

ծել, լվացվել//լվացվիլ, լցնել, խախաջ անել, խածկել, խանձել, խառնել, խարել, խոթել, ծամել, ծխել, ծեծել, ծծել, կանգնիլ, կանգնեցնել, կանչել, կապել, կենալ, կթել, կտրել, կտրատել, հալել, համբերել, հանել, հաշվել, հարկանել, հեծանիլ, հոգալ, հովացնել, հոտալ, ձգել, ճղքել, մաղել, մտնուլ, մտցնել, յեմել, յիշել, յիստկել, նստիլ, նստեցնել//նստուցանել, շաղել, շաղվել, շարժել, շաղաղել, շինել, ի շուրջ գալ, պահել, պառկել, պատրաստել, պատրաստ կենալ, պարզել, ջանալ, սրբել, վառել, վերցնել, տալ, տանել, տաքացնել, տրորել, ուտել, ուտեցնել, սղկել, սրբել, ցաթկել, ցանել, փաթել, փոխել, քամել, քայլել, քաշել, քերել, քուն լինալ, քրտնել, օծել, օրինակել և այլն, որոնց մի մասն առանձնանում է նաև հաճախակի գործածությամբ:

Գրեթե նույն բառապաշարից է օգտվում նաև Ասար Սեբաստացին: Ահավասիկ նրա բժշկարանի՝ պատահականորեն ընտրված երկու էջերում հանդիպող բայերի շարքը՝ *աղալ, առնել, եփել, լուծանել, ծածկել, կաթեցուցանել, կապել, հանել, մաղել, սուգել, տալ, տրորել, քաշել* (ԱՄՍ, 122-123):

այլն: Օրինակ՝ Եւ թէ մազն շատ լինի՝ *թաշմիր արա* (ԱՍՕԲ): Լաւ կալ¹⁶⁹ գայս բանս ի մտիտ, Միտք արա՝ ւ աղվոր *անդիճէ* (Հ, 505): Եւ յայնժամ սրբնճուպիտով *խաղաջ արա* մանեխով եւ աղողարհայով (ԱՍՕԲ):

Նշված շարքերում առանձնապէս մեծաթիվ են *է* խոնարհման պարզ բայերը: (Ըստ մեր հաշվարկների՝ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկում, օրինակ, գործածվել է ավելի քան 5 տասնյակ *է* խոնարհման պարզ բայ): Դրանցից բացի՝ հաճախակի գործածությամբ աչքի են ընկնում ոչ միայն կանոնավոր, այլն անկանոն բայեր, ինչպէս՝ *ածել, առնել//այնել//անել//առնուլ, բանալ, գալ, դնել, նստել, տալ, տանել ուտել* և այլն, որոնք միջին հայերենի բառապաշարի գործուն շերտից են, ավանդվել են գրաբարից, և մեծ մասամբ անկանոն էին նաև գրաբարում:

Վերոնշյալ բոլոր դրույթները պայմանավորված են մեկ հանգամանքով. խնդրո առարկա նախադասությունները գերազանցապէս խոսակցական մակարդակի լեզվական իրողություններ են, և միայն մասնակի դեպքերում են տեղ գտել նաև գրաբարաբանություններ:

Եզակի թվի 2-րդ դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունների մի մասը գործածվում է խոսքը ոճավորելու նպատակով. դրանով հեղինակը իր կատարած գործողությունն արտահայտում է ոչ թե եզակի թվի 1-ին, այլ եզակի թվի 2-րդ դեմքով՝ փորձելով գործողության կատարմանը մասնակից դարձնել նաև ընթերցողին (խոսակցին), ինչպէս՝ *Եւ թէ կրկնես երկրորդարար*, Ահեղ գոչէ, քան զգիւահար (ՄՂ): *Զինչ որ ասես* կառնէ ինաստ, Խիստ նգոված է եւ մուրթատ (ՄՂ): Աղեկին վատն է ատող՝ ւ ի հետ բարոյն չարն է նենգով, Եւ անգէտն ոչ կամենայ զմարդն իմաստուն որ կայ բարով, *Թէ խօսիս քաղցր և անոյջ բան մի երկուս յինք խըրատով*, Նա հեռի փախչի ի քէն և չընդունի զքեզ սիրով (ԿԵ, 86): *Տեսանէ՛ս*, թէ ի՛նչ գեղեցիկ զատուց զանունն յայլ մասանց բանին (ԴԶ, 102): *Տե՛ս զառաքեալսն*, որ զայն առին, Հոգով սրբբով լըցան նոքին (ԱՍ, Բ, 117): *Նոյնպէս ծանիր՝* որ ոչ առնու ի սահման՝ ոչ է գոյացական (ՅՈՀ, 359): Յետու Ըսպանայ չորս կուղմուն երկերն, *որ գնայս դուրս Ըսպանայ* չորս ի Քայշայն

¹⁶⁹ Միջինհայերենյան *կալնել* բայն է՝ «պահել» իմաստով: ՆՀԲ-ն բերում է միայն մեկ օրինակ՝ նշելով «փակել», «խցկել» իմաստները: Հմմտ. Եւ յորժամ որ բժիշկն կամենայ երակ բռնէ՝ այսպիսի խրատնին պիտի որ *ի միտքն պահէ* (ԱՍՕԲ): Մարդն հոգի է ու լեզու, Եւ լեզուն հոգոյն չարկամ է: Թէ զհոգիդ կուզես՝ Զլեզուդ պահէ (Հ, 963):

<Քաշան> քաղաքն Դ-Գ /4-3/ օրէն ճանապախ այ (ՅՁ, 286):

Լինելով խոսակցական լեզվին բնորոշ հաղորդակցական միավորներ և ունենալով նաև խոսքային իրադրությունից դուրս գործածվելու հնարավորություն՝ ընդհանրական-դիմավոր կառույցները տարբեր բովանդակությամբ մտքերի արտահայտման լավագույն միջոց են: Միջին հայերենում նրանցով արտահայտվում են սերնդետերունդ փոխանցվող ասույթներ, ասացվածքներ, առածներ, խրատներ և այլն: Ինչպես՝ *Վարդն բացուած մի՛ սիրեր*, Որ գայ ի քո ծոցդ՝ թոռով: *Վարդն պուլպուլիկ սիրէ*, Որ գայ ի քո ծոցդ՝ բացուի (Հ, 122): *Զինչ շարթուն որ մեղք գործես՝ Կիրակի զայն խոստովանէ: Առնուս անթառամ պըսակ*, Յանտենին հուրդ ըզբեզ չը երէ (Հ, 222): *Արե՛կ*, որ խրատ մի տամ, *Խելք ու միտք ունիս՝ նա լսէ, Հետ անգէտին մի՛ դատիր*, Թէ հազար որ զբեզ կու սիրէ (Հ, 334): *Թէ չար ինչ առնես մարդոյ, փախիր եւ հեռացիր յաչաց նորա. եւ ապա սրբի սիրտ նորա* (ՎԱԱ): Խելօքն ի անգէտն ի մօտ՝ *Միտք արա, թէ ի՞նչ նըման է: Խելօքն է ի ծով նըման, Որ քանի չափես՝* կու տանի: Անգէտն է ի տիկ նըման, *Փառչ մ՛ էվել լընուս՝* նայ պատռի (Հ, 498): Յուցանէ, թէ որ նախանձ եւ ոխ շարժի՝ ՚ի վերայ քո, *փախիր ՚ի նմանէ եւ այլ մի հաւատար նմա*. զի ոչ սրբի ոխ ՚ի չար սրտէ. այլ եթէ երկիւղած մարդ լինի, *մի վախեր*. զի փոյթ ելանէ ոխն ՚ի սրտէն (ՎԱԱ): Չորս բան առ խրատ յիսնէ, Որ ամէն աշխարհի հաւանէ: *Չայլոց մեղք դու մի՛ քններ, Չքոյդ երակ մտօքդ անտիճէ: ՉԱստուած մոտ ի քեզ դու բեր, Ու մահուդ օրն դու յիշէ: Չխրատդ ի սրտիդ տընկէ*, Որ Աստուած զբեզ չի դատէ (Հ, 461): *Պատուեա՛ զբժիշկք ի պէտս քո*, զի եւ սա Աստուծոյ արարեալ է (ԱԱՕԲ): *Սն ամպոյն և ի խելայեղ մարդոյն մի՛ վախենար. Այլ՝ ի սպիտակ ամպոյն Եւ ի խելօք մարդոյն* (Հ, 964) և այլն:

Այս կարգի միակազմ նախադասությունների մի մասով արտահայտվում են ունկնդրելու, անսալու զանազան խորհուրդներ ու հորդորներ՝ *Արե՛կ*, որ խրատ մի տամ, *Խելք ու միտք ունիս՝ նէ լըսէ* (Հ, 354): *Ականջդ յիս արէ*, Ինչ ըսես՝ *ամուր ծըրարէ* (Հ, 689) և այլն, որոնցից առավելապես հայտնի են Այգեկցու առակներն ամփոփող մեկնությունները, ինչպես՝ Յորժամ հպարտանայ ոք եւ անպատեհ բան առնէ քան զհւր կարողութիւն ՚ի վեր, *սաա զայս* (ՎԱԱ): Վասն որոյ աղաչեմ *արարէք Աստուծոյ տաճար զմարմինս ձեր եւ սրբեցէք յամենայն աղտեղի գործոց մեղաց* (ՎԱԱ): Եւ հրաման էհան թագաւոր, թէ *այգի տնկեցէք, ապայ զգինին հանց խմեցէք, որ զառիժն սպանէք. չլինի, թէ յաղբընոցն մեռանիք* (ՎԱԱ):

Յուզանէ, որ թէ հնար իցէ *բնաւ մի առնէր քեզ թշնամի գոք 'ի մարդկանէ*, թէպէտեւ աղքատ եւ տկար լինի (ՎԱԱ)¹⁷⁰:

Խորհուրդներով և հորդորներով կոչ է արվում կատարել կամ չկատարել այս կամ այն գործողությունը. ըստ որի էլ՝ այդ կառույցները, որոնք կազմությամբ պարզ կամ բարդ են, լինում են, դրական (հաստատական) կամ ժխտական, որոնցից հաճախադեպ են դրականները: Հմտ.

- մի կողմից՝ *Եւ թէ ձմեռն երթաս ի ճանապարհս 'պիտի որ տաք կերակուրք ուտես* (ԱՍՕԲ): *Զսիրելին սրտով սիրէ*, Որ սերն երկու ցեղ չի լինի (Հ, 510): *Լաւ կալ զայս բանս ի մտիտ, Միտք արա 'ւ աղվոր անդիճէ*: Տէրն է ի յիւրմէն խոցեր, *Պատրաստ լեր ի խիստ սիրելէ*: *Զխօսքս ալ ամ հայնց խօսէ*, Որ քո ձանդ մահ չգործէ (Հ, 505): *Յորժամ, որ ի հաց նստիս 'Նայ ձենէ մէկ մ' ալ քեզ ընկեր*. *Մեռնիս 'ւ ի յանդէն երթաս, Նայ նստիս քանց մէկ մ' ալ ի վեր* (Հ, 502),

- մյուս կողմից՝ *Եւ ձուկ եւ հաւկիթ մի' տար*, որ ըխտաւոր չառնէ (ԱՍՕԲ): *Հետ անգիտին մի ' դատիք*, Թէ հազար որ զքեզ սիրէ (Հ, 354):

Մի շարք բարդ կառույցներ էլ կազմվում են դրական և ժխտական նախադասությունների համադրությամբ, ինչպես՝ *Մարդն, որ սիրելի անես*, Նա զասլը զինքն փնտոէ, *Հետ ան մարդուն մի' նստիք*, Երբ էլնէ՝ զքեզ գրուցէ (Հ, 443): *Մի' զովեր զգանձ մարդուն Կամ զոզակ անթիւ, անցական, Այլ զիւելքն և զիմաստութիւնն Եւ զհանճարն և զգործն ի լման* (Կ, 929): Քանի ու քանի ասեմ՝ *Վարդն մի' սիրեր, փուշ ունի*: *Գնա ' , մանուշակ սիրէ*, Փուշ չունի, անուշ հոտ ունի (Հ, 122) և այլն:

Հետաքրքրական են միջնադարյան գրականությանը բնորոշ այն չափածո և արձակ գործերը (կաֆաներ, հայրեններ, առակներ և այլն), որոնցում գրեթէ բառացիորեն վերարտադրվում են աստվածաշնչյան հայտնի խրատներ ու խորհուրդներ: Այսպես՝ հայրեններից մեկի՝ ստորև բերվող հատվածը՝

¹⁷⁰ Որոշ դեպքերում Այգեկցին նմանօրինակ նախադասություններով ուղղորդում է բոլորին, թե որ դեպքում գործածեն այս կամ այն առակը՝ *Ասայ զառակս, յորժամ կոչեն զքեզ 'ի բան կամ 'ի գործ անդէպ եւ աննման, որ 'ի վեր է քան զկարողութիւն քո* (ՎԱԱ): *Յորժամ հպարտանայ որ եւ անպատեհ բան առնէ քան զհւր կարողութիւն 'ի վեր, ասա զայս* (ՎԱԱ): *Ասայ առակս, յորժամ կարիք ինչ կենայ քեզ. եւ ասայ զաս 'ի ժողովն. եւ ասայ թէ դու քարոզել կամիս, ասայ 'ի ժողովն զառակս զայս* (ՎԱԱ):

Հաւուկն, որ նստած տեսնուս,
Մի՛ ձգեր զձեռն քո ի քար,
Մի՛ խրտահարեր զատ հաւտ,

Թ՛ ինչ՝ հազար որ հաւն է օտար (Հ, 87) աստվածաշնչյան հետևյալ պատումի չափածո փոխադրությունն են. «Եւ եթէ դիպեցիս բունոյ հաւուց առաջի քո ի ճանապարհի, եթէ ի ծառ եւ եթէ ի գետնի, ձագուց կամ ձուոց, եւ մայրն ջեռեալ նստցի ի վերայ ձագուցն կամ ձուոց, մի առնուցուս զմայրն հանդերձ որդուվքն: Արձակելով արձակեցես զմայրն. եւ գորդիսն առցես քեզ, զի բարի լիցի քեզ. եւ բազմօրեայ լինիցիս ի վերայ երկրի» (Բ Օր., ԻԲ, 6-7):

Նմանատիպ լուծումներ ունեն նաև ստորև բերված հետևյալ արձակ ու չափածո մեջբերումները.

Սողոմոն արքայն ասաց.
– Մի՛ ասեր թէ՛ «Արքայ եմ ես....,
....Ունիմ շատ դրամ, շատ գանձ,
Շատ դարպաս և ոսկի ի ներս»:
Ի գուր խրոռովեալ գանձես,
Ո՛չ գիտես, թէ ո՛ւմ ժողովես:
Ջաշխարհս ես ի գիրկդ առեր,
Քեզի խոր դժոխք կու փորես (Հ, 903):

Դաւիթ արքային որդին՝
Սողոմոն, զա՛յս մեզ կու հրամէ.
– *Ջիրատն իմաստիցն տուր,*
Առաւել զքեզ կու սիրէ.
Թէ անգէտ, յիմար մարդոյն
Խրատ տաս՝ զքեզ կու ատէ.
Նա թուր ու դանակ կաննէ,
Թէ կարէ՛ զքեզ կու սպանանէ (Հ, 461):

Որպէս եւ Աստուած հրամայեաց՝ *պատուեալ զհայր քո եւ զմայր* (ՄՄԴ): Վասն այն խոստումն տալ պիտի ըստ սաղմոսին, թէ *ուխտ դիք եւ կատարեցէք*. ապա թէ ոչ, այնպիսի երդմնագանցն եւ սուտասացն յետոյ մեծ փաթերակի հանդիպի (ՎԱԱ) և այլն:

Անհրաժեշտ է նկատել, որ Աստվածաշնչից և այլ գործերից մեջբերվող խոսքերը բնագրերում ոչ միշտ են միակազմ, մինչդեռ միջնադարյան հեղինակները ուղղակիորեն մեջբերվող խոսքը քաղում են մասնակիորեն, ինչի հետևանքով ստացվում են միակազմ կառույցներ: Այսպես՝ Դավիթ մարգարեն սաղմոսներում զանազան խնդրանքներով դիմում է Տիրոջը (*Տէր Աստուած իմ, ի քեզ յուսացայ, փրկեա զիս յամենայն հալածչաց իմոց եւ ապրեցո զիս: Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Աստուած, յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ. ապրեցո՛ զիս* և այլն), մինչդեռ հայրեններից մեկում բերվում է Դավիթի խոսքը՝ առանց նշելու, թէ ում է ուղղված այն, և ուղղակիորեն մեջբերված նախադասությունը տվյալ խոսքային հատվա-

ծում ընկալվում է որպես միակազմ կառույց՝ Դաւիթ մարգարէն ասէ, Թ՝ *Ապրիցո՞ ի մարդոյ չարէ* (Հ, 406): Այսպէս նաև՝ Ապա ընդէ՞ր մարգարէն Դաւիթ ասէ. *կորուսանես զայնոսիկ*, որ խօսին սուտ (ՎԱԱ): Սուրբ Գորգ վասն այն խոստումն տալ պիտի ըստ սաղմոսին, *թէ ուխտ դիք եւ կատարեցէք* (ՎԱԱ) և այլն:

Ասելիքի հանդէպ բոլորի ուշադրությունը հրավիրելու, նրանց ինչ-որ ձևով հաղորդակցման դաշտում պահելու նպատակով միջնադարյան հեղինակները ընդհանրական-դիմավոր նախադասությունների միջոցով հաճախ դիմում են բոլորին: Այս բնույթի նախադասություններում որպէս գերադաս անդամ հանդես են գալիս *ասել, գիտել, գիտենալ, իմանալ, միտք անել, տեսնուլ* և այլ բայերի հրամական ապառնու եզակի, երբեմն էլ՝ հոգնակի 2-րդ դեմքով: Վերջիններով գերազանցապէս կազմվում են գլխավոր նախադասության գործառույթով հանդես եկող պարզ համառոտ կառույցներ, որոնք սովորաբար նախադաս են¹⁷¹, ինչպէս՝ *Տես*, զի երբ կամիս ասել բան, նա մենակ շրթունքդ յիրար խփին, և ձայնն կու կորնչի (ԴԶ, 82): Այլ իմացի՞ր, որ արարիչն Աստուած զայս աղետտանս ծուռ եւ տափակ է ստեղծել (ԱԱՕԲ): *Տէ՛ւ*, թէ ինչ հայրէն մ՛ ասաց Թուխ մաքին իւր սըրտէն ի դուրս (Հ, 538): *Տեսէ՛ք*, թէ քանի՛ մարդիք Յաշխարհէս դարտակ մընացին (Հ, 956): Խելօքն ի յանգէտն ի մօտ՝ *Միտք արա*, թէ ի՞նչ նըման է (Հ, 410): *Եկէք* զողորմուկս *տեսէք*, Ո՛չ մեռած է, ո՛չ կենդանի (Հ, 196): Իմ եարըս ընծի հուր եկեր Զէտ հազար տարու՝ *թէ գիտես* (Հ, 199): Եւ լուծումն այնելն եւ երակ առնելն եւ ապիկիս արկանելն եւ դեղ խմելն եւ վերաբերութիւն այնելն՝ ամէնն լուծումն է, *թէ իմանաս* (ԱԱՕԲ): *Գիտացի՛ր*, որ քրտինք ելանելն պատճառն ազգի ազգի է (ԱԱՕԲ): – Աստուորս է չորս քեօշայ, Լոյսն ընդ ո՞ր կելնէ, մէկ *ասա՛* (Հ, 325): Նստաւ տրտնջէր եւ ասէր. *զգէշս եւ զառակս տեսէք*, որ քանի յաշխարհս մարմնով կային սուրբքն, նա ՚ի վերայ կառաց եւ ՚ի վերայ ձիոց կային (ՎԱԱ): *Բայց ի մօտոյ իմացի՛ր*, որ պայծառութիւն եւ տաքութիւն ամէն անդամոցն այն մէկ քանի

¹⁷¹ Ավելի վաղ դրսևորումներ են *Ասես*, թէ եաղութն ես դու, Կամ զըմբոյթ, կամ ամբարինայ (Հ, 219) կարգի կառույցները, որոնցում ընդհանրական իմաստով գործածված բայաձևերը ձեռք են բերել վերաբերականի արժեք:

կաթ արինն է որ ի սրտին մէջն է ստեղծել Աստուած (ԱՍՕԲ) և այլն¹⁷²:

Այս առումով հետաքրքրական են *հաշուիլ//հաշուել* բայի ապառնի հրամայականի եզակի թվով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները մի շարք հայրեններում՝ վկայված *հաշուեց//հաշվեց//հաշուեց//հաշուէ//հաշուէ* տարբերակներով¹⁷³, որոնք բոլորն էլ ունեն նույն բնորոշ գծերը՝ ա) հանդես են գալիս բարդ ստորադասական կառույցներում, բ) ունեն գլխավոր նախադասության գործառույթ, գ) կազմությամբ պարզ համառոտ են, դ) հանդես են գալիս նախադաս դիրքում՝ *Հաշուեց*, թէ լեզուս բռնիմ, Որ չելնի՝ նայ մարդու ասէ. Զաչերս ես ի՞նչխ ի բռնիմ, Արտասուօք կու հասկցնէ (Հ, 306): Մարդն, որ սիրելիք ունի, Ի ի նորա միջէն բաժանի, *Հաշուեց*, թէ ի մահ կերթայ, Ի ի մարմնոյն շունչըն կու քաղի (Հ, 393): Աւա՛ղ գայն, որ շատ դատիս, Մարդ չկայ, որ գելն ճանչէ, *Հաշուէ*, թէ ճուհար ունի, Ի խոզուն առջև կու վաթէ (Հ, 333): Ով որ իմ ձայնիս լքսէ, Իմ տարտիս տարման մի չանէ, *Հաշուէ՛* թէ գերի գըներ Ի արևուն ազատ կու անէ (Հ, 236): Ատ իմ հեռացած եարէն, Ով ինձի խապար մի բերէ, *Հաշուէ՛ զիմ ելած հոգին Դարձուցեր ՚ի ինձի կու բերէ* (Հ, 285)¹⁷⁴:

¹⁷² Սմբատ Սպարապետի դատաստանագրքում *տե՛ս* բայաձևով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասություններին բնորոշ չեն վերոնշյալ առանձնահատկությունները՝ *Եւ գայս ի քոանկաց եկեղեցականացն տես* եւ ուսիր՝ որ ջանուն անուանին (ՄՄԴ): *Եւ տես գայլազգիսն* որ չեն ուտել (ՄՄԴ) և այլն:

¹⁷³ Քերականական միևնույն իրողությունը առկա է նաև ժամանակակալից հայերենում, սակայն ձեռք է բերել միջանկյալ բառի արժեք, ինչպես՝ Շուրջը մի ժամվա ու *համարիք* մի օրվա գնացքի վրա ծառ չկա («Տախը»): Այստեղի քրոջ պատրոնը՝ Սմբատ Մելիքյանի հերը՝ մեր *համարիք* քսան հորեղբայրներից բարի ու խելոք, խոսքով ուղղակի կոպիտ Թամրազ պապը պատշգամբում թախտին խոտոր ընկած է լինում («Տախը»): Մաթնոսյանի ստեղծագործական ինքնատիպ հնարքներից մեկն է, որով շրջանառության մեջ գտնվող բազմադարյա լեզվական միավորի փոխարեն (*համարյա*) առաջարկում է ժամանակակալից գրական համարժեքը (*համարիք*):

¹⁷⁴ Նշված գործառույթով և բնորոշ գծերով հանդիպում է նաև *հաշուիլ* բայի հրամայական ապառնու հոգնակի թիվը՝ – Ջուր տուր, թող մենք ալ մեռնիք, *Հաշուիք* թէ մարը չէ բերեր (Հ, 722): Նույն բանը չենք կարող ասել, օրինակ, եզակի թվի 1-ին դեմքով արտահայտված *հաշուիմ//հաշուել* բայաձևի մասին, որով արտահայտվում են երկկազմ նախադասություններ, ինչպես՝ – Ջուր տուր խըմիմ, թող մեռնիմ, *Հաշուիմ* թը մարըս չէ բերեր (Հ, 723): Թող զիս՝ ի վրատ մորթեմ, չենց *հաշուել*, թէ օր մի չեղայ (Հ, 248):

Հաշուել բայի՝ հրամայական ապառնու եզակի թվով արտահայտված վերոնշյալ ձևերը համանունների շարքեր են կազմում անցյալ կատարյալի (*հաշուեց/հաշվեց// հաշուեց*) և ըղձական ապառնու (*հաշուել/հաշուել*) եզակի 3-րդ դիմային ձևերի հետ, և նրանցով կազմվող ընդհանրական-դիմավոր նախադասությունները որոշ բարդ կառույցներում, կազմությամբ համընկնելով ուղիղ խնդրի գործառույթով հանդես եկող երկրորդական նախադասությունների ստորոգյալների հետ, կարող են ընկալվել նաև որպես թերի (տվյալ դեպքում զեղչված ենթակայով) երկկազմ նախադասություն, ինչպես՝ Աւա՛ դ գայն, որ շատ դատել, Մարդ չկայ, որ զելմըն ճանչէ, *Հաշուեց, թէ մարգրիտ ունի, Ի ի յառջև խոզին կու թափէ* (Հ, 388): Աւա՛ դ գայն, որ շատ դատի, Մարդ չկա, որ զելն ճանաչէ, *Հաշուեց, թէ ըզքո ճուհարդ Ի յառջև խոզին կու թափէ* (Հ, 437): Աւա՛ դ գայն, որ շատ կու դատեր, Մարդ չըկայ, որ զելմըն ճառէ, *Հաշվեց, թէ ճօհար ունի, Եւ յառջև խոզին կու թափէ* (Հ, 409): Ով անզգամ կնոջ դիպեր Ի մէջ ծովուն ալեկոծեր *Հաշվեց* թէ նա աշխարհ չէ ընկեր, Ուրախութեան օր չէ տեսեր (ՀԵ):

Բնագրերում տարբեր բայեր ունեն տարբեր բաշխվածություն ու գործածության հաճախականություն: Հայրեններում, օրինակ, ճախակի գործածություն ունեն *մտիկ անել* հարադիր բայով ընդհանրական-դիմավոր նախադասությունները¹⁷⁵, որոնցից բացի՝ նույն բայով հանդիպում են նաև երկկազմ կառույցներ: Հմտ. հետևյալ, համապատասխանաբար, երկկազմ և միակազմ կառույցները՝ *Քո սիրուտ մըտիկ արի*, Նա զէտ նետ ի չարխէն էլաւ (Հ, 366): *Մտիկ սարերուն արի*, Նայ ամէնք տրտում են դարձեր (Հ, 612) և *Մտիկ սարերուն արայ*, Խելօքին հերիք խրատ է (Հ, 507): *Մըտիկ մանուշկի՛ն արէք*, Որ բուսեր է մէջ թիւերուն (Հ, 72)¹⁷⁶:

Մտիկ անել բայով կազմված ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է հրամայական ապառնու թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերի 2-րդ դիմային ձևերով: Դրանցից անհամեմատ հաճախադեպ են հոգնակի 2-րդ դեմքով արտահայտված-

¹⁷⁵ Տե՛ս Գ. Խաչատրյան, 2011, թիվ 4, 166:

¹⁷⁶ Բացառիկ է *մտիկ անել* բայի՝ գրաբարից փոխառյալ *նայիմ* համանիշի գործածությունը նշված կարգի կառույցներում, որոնցում, ի դեպ, *նայել* բայը պահպանել է գրաբարյան հրամայականի խոնարհման ձևը՝ *նայեա՛ց*՝ պատմական հնչյունափոխության ենթարկված՝ *Նայեց* ի վերայ քարին, Լուկ զքարամն ի քեզնէ արայ (Հ, 310):

ներք: Հմմտ. *Մըտիկ լեռներուն արայ*, Խելօքնուն ասած մասալ է (Հ, 358): Կանթեղին *մըտիկ արայ*, Ջուրն ու ձէթն ու հուրն ի լարան (Հ, 397) և *Մտիկ* իմ եարուն *էրէք*, Որ նուշ ու շաքար կու ծախէ (Հ, 255): *Մտիկ* իմ եարոջն *արէք*, Որ կելնէր կանուխ ի քնուն (Հ, 260): *Աղտրին մըտիկ արէք*, Որ դըրէր կարմիր սարաղուճ (Հ, 238): Խելօք ի յանգէտն ի մօտ՝ Մտիկ արէք, թէ ի՞նչ նման է (Հ, 320):¹⁷⁷

Լինելով խնդրատույթամբ միարժույթ չեզոք սեռի բայ՝ *մտիկ անել*-ը ուժեղ կառավարմամբ պահանջում է մեկ բնության խնդիր (հանգում), որը խոսքը ոճավորելու նպատակով կարող է նաև կրկնվել կամ բազմակի լինել, ինչպես՝ Մտիկ *կանթեղին* արա, Որ հուրն ու ջուրն ու ձէթն է լարան (Հ, 171): *Մտիկ իմ եարին արէք*, Որ նուշ ու շաքար կու ծախէ (Հ, 59): Մտիկ *էօլիւմին* արէք, Էօլիւմին արած *գուլումին* (Հ, 662):

Այսպիսի կառույցներում *մտիկ անել* գերադաս անդամը հանդես է գալիս թե՛ առանց ընդմիջարկվելու, թե՛ ընդմիջարկված: Վերջին տարբերակը հայրեններում անհամեմատ հաճախակի է հանդիպում: Հմմտ. *Մտիկ* մանուշկի՛ն *արէք*, Որ բուսեր ի հետ թփերուն (Հ, 251): *Մըտիկ լեռներուդ արէք*, Խելօքնուն հերիք խըրատ է (Հ, 479) և Կանթեղիտ *մըտիկ արա*, Ջուրն ու ձէթ ու հուրն ի լրման (Հ, 358): Իմ եարին *մտիկ արէք*, Ջինչ հագեր՝ ամենն է կանանչ (Հ, 218): Նկատելի է, որ *մտիկ* հարադիրը և բայական բաղադրիչը ընդմիջարկվում են վերոնշյալ բնության խնդրով ու այլ անդամներով. Մըտիկ իմ *եառուն* արէք¹⁷⁸, Ջիս թողեր է՝ զով կու սիրէ (Հ, 208): Մըտի՛կ *ցորենին* արէք, Որ ի մէջն ի վար կիսած է (Հ, 236): Մըտիկ *լեռներուն* արէք, Խելօքի ասած մասալ է (Հ, 221) և այլն¹⁷⁹:

Հետաքրքրական են նաև *մտիկ անել* բայով արտահայտված որոշ կառույցներ, որոնցում առկա է նաև *դու* ձևական ենթական կամ վերջինիս *դուն* միջինհայերենյան տարբերակը. Մըտիկ *դու* ծառին արայ, Թէ քանի

¹⁷⁷ Ըստ մեր դիտարկումների՝ ըղձական ապառնի ժամանակաձևի եզակի 2-րդ դեմքով հետևյալ նախադասությունը բացառիկ է՝ Բանիկ մի ասել կամիմ, *Թէ մտիկ անես* ու լսես (Հ, 617):

¹⁷⁸ Բնագրում՝ Մըտիկ մի եառուն արէք, Ջիս թողեր է՝ զով կու սիրէ (Հ, 208):

¹⁷⁹ Հմմտ. «Հայեց ի ծառին վերայ, Թէ քանի հունար կայ ի նայ» (Հ, 262) նախադասությունը, որում խոսակցական միջին հայերենին բնորոշ *մտիկ անել* վերլուծական բարդության փոխարեն գործածվել է գրաբարյան *հայիմ* համանիշ բայի բուն հրամայականը՝ *հայեց-հայեաց* հնչյունափոխությամբ:

հունար կայ ի նայ (Հ, 402): Մըտիկ *դու* հիւսանն արայ, Որ թափուք, որոց շինէ նա (Հ, 498): Մըտիկ *դուն* ծառին արայ, Որ քանի՛ ճղեր կայ ի նայ (Հ, 499): Զինչ որ դո՛ւ չափես այլոց, Քեզ չափեն մէկին մէկ՝ մին այլ (Հ, 860) և այլն: Ունենալով երկկազմ կառուցվածք՝ այս նախադասությունները, միևնույնն է, բովանդակային պլանում միակազմ են, քանի որ տվյալ խոսքաշարում չեն կարող ենթադրել որոշակի հասցեատեր, և չեն գործածվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, այլ արտահայտում են ընդհանուրին հասցեագրված միտք: Ասվածը հիմնավորվում է նաև *դու* ձևական ենթակայով և առանց *դու* ենթակայի արտահայտված հետևյալ կառույցով, որում *դու* ենթակայով նախադասությունը նույն ձևով է ընկալվում, ինչպես նրան հաջորդող երկու նախադասությունները, որոնք անենթակա են ոչ միայն արտահայտության, այլև բովանդակության պլանում՝ Իսկ յորժամ ընծայի տղան՝ դու *հաշվէ՛* զկենդանակերպն թարպեղ դէպի յառաջ, եւ *տե՛ս*, երբ տղան ծնաւ, թէ Լուսինն յո՛ր կենդանակերպ է, եւ *ե՛րթ* ի յետ ԲՃՃԳ օր եւ գիտացիր յայտ, ԺԴ աուրդ ի միջի կայր Լուսին (ԱՍՕԲ):

Որոշ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների կազմում գործածվող *հանց* դերանունը ոչ թե ցույց է տալիս տվյալ գործողության կատարման ձևը, այլ ունի թարմատարի արժեք: Օրինակ՝ *Եւ հանց գիտացի՛ր*, որ զարգանդն որպէս հալաբուշտ ստեղծեր է Աստուած (ԱՍՕԲ): Եւ *հանց գիտացի՛ր*, որ գոգին ճանաչելն գԴ իրքն աշել եւ պահել կու պիտի. յառաջն զգունն, եւ Բ զհոտն, եւ զԳ զղվամն եւ Դ գռուսուպն (ԱՍՕԲ)¹⁸⁰:

Ընդհանրական խորհուրդ, խրատ արտահայտող բազմաթիվ նախադասություններում բառային արտահայտություն ունի *դու//դուն* ենթակական, որով, սակայն, չի մատնանշվում գործողությունը որոշակիորեն կատարող: Օրինակ՝ Յուցանէ առակս յայտնայպէս. որքան ծառայես զմարմինդ քո հեշտութեամբ եւ մեղաւք. *դու* եւս քան զեւս աղքատանասս հոգովդ եւ ողորմելի լինիս (ՎԱԱ): Ուր նախանձ եւ մախանք շարժի՛ ի վերայ քո, *դու* փախիր անտի. եւ ապա սրբի մախանքն այն (ՎԱԱ): Ընկեր հետ անո՛ր

¹⁸⁰ Ոճական այս հնարքը տեղ է գտել նաև ժամանակակից հայերենում. նշված դերով գործածվում է *այնպես* դերանունը: Օրինակ՝ Հազարավոր չորացած ծաղիկներ բուրում էին խոտի խուրձերի միջից և լուսնյակ գիշերով նրան *այնպես էր թփում*, ասես այդ նույն դեզի վրա պատկել է Սոնան և խուրձերի մեջ թողել լաջվարդի բույրը (ԱԲ1, 408):

եղիր, Ձինչ որ *դուն* ասես՝ նա լսէ, Երբ դժար տեղաց առնուս, Նա գիտնա՛ս, որ քեզ ընկեր է (Հ, 334): Ուր գան, ուր հազար ըսեն, Հազրէն մէկ խօսք լսէ, ըսէ, Ան ալ «Չը գիտեմ» ըսէ, Դուն քեզ հազար չարէն ազատէ (Հ, 689): Ապայ թէ տանջես զմարմինդ քո եւ չարչարես եւ սպանցես ամենայն բարեգործութեամբ. ապայ կարես փարթամանալ *դու* հոգովդ եւ փրկիս ՚ի դժոխոց հուր գեհեճոյն (ՎԱԱ): Խրատ մի քեզ տալ կամիմ, Ձուգնիմ զինչ օր ոսկէ խալաս: Սիրես ու ականջդ դնես, Թէ *դու* քո կեանքստ գիտենաս (Հ, 419): Թէ տասն խօսք բարի գիտես, *Ղու* զինն խօսեաց, զմին պահէ: Թէ խօսք շատ գիտենաս՝ քիչ ասա: Ձմէկն հարիւր մի՛ ասել, Ձհարիւրն՝ մէկ ասա (Հ, 963) և այլն: Կառուցվածքով երկկազմ այս նախադասությունները բովանդակությամբ ընդհանրական-դիմավոր են, քանի որ դիմավոր բայով արտահայտված գործողությունը խոսքային որոշակի իրադրության մեջ որոշակի *դու*-ի, այսինքն՝ որոշակի խոսակցի չի վերագրվում: Օրինակ՝ Ցուցանէ, թէ բարեմոռացն աստուածամոռաց է. եւ թէ բարի առնես մարդոյ եւ նայ ջանայ քեզ չար առնել, *դու հեռացիր ՚ի նմանէ* (ՎԱԱ): Ձինչ մարմնոյդ ՚ւ անձիդ համար Դատեցար *դու* շատ մի տարիք (Ֆ, 854): Ամէնն ի քամին զընաց Եւ ի քուն կացեր *դու* հերիք (Ֆ, 854): Ձարթի՛ր, քեզ թաբդիր արա Եւ գործէ սակաւ մի բարիք (Ֆ, 855): Ի պահք ՚ւ ի յաղօթք կացիր, Սի՛ գործեր *դու* մեղք ու չարիք (Ֆ, 855):

Հաղորդակցման շղթայում ընդհանրական-դիմավոր նախադասությունները հանդես են գալիս և՛ բարդ կառույցների կազմում, և՛ որպէս ինքնուրույն շարահյուսական միավորներ:

Բարդ կառույցներում հանդես եկած և 2-րդ դեմքի գերադաս անդամով մի շարք ընդհանրական-դիմավոր նախադասությունների նախորդում կամ հաջորդում են այնպիսիք, որոնցում առկա են 2-րդ դեմքի դերանունների թեք ձևերով (*քեզ, զքեզ* և այլն) արտահայտված անդամներ: Վերջիններս նույնպէս ունեն ընդհանրական արժեք, քանի որ խոսքի հեղինակի ասելիքը վերաբերում է ոչ թէ որոշակի խոսակցի, այլ ընդհանրապէս բոլորին: Այսպէս՝ «Եւ այլ օրինակ ցուցանեմ *քեզ*, որ հեշտ հասկանաս եւ իմանաս, թէ որպէս է» (ԱՍՕԲ) բարդ կառույցի *քեզ* հանգման (հաղորդման) խնդիրն ունի ընդհանրական իմաստ, ինչն էլ նախապայման է դարձել, որ հաջորդ նախադասությունը ձեռք բերի ընդհանրական արժեք: Այսպէս նաև՝ Եւ զամէն տաք իրք մի՛ ուտել, եւ մերձաւորութենէ՛ եւ արթնութենէ՛ պահէ *զքեզ* (ԱՍՕԲ): Եւ այն իրքն որ սաֆրայ յաւելցնէ մի՛ ուտեր,

եւ գոր ուտես՝ տաք եւ չոր կերակուր կեր. պուխարով իրվի մի՛ ուտեր, զէն չառնէ *քեզ* (ԱՍՕԲ): Սապիթ Կուռանն ասէ, թէ ակոռային ցաւն մէն ակոռային չէ, եւ յիբ մսէն որ կու ցաւի եւ կուռի միսն ակոռատկերուն. եւ չէ՞ս տեսնուր մի, որ յորժամ քաշեն՝ ցաւն անցնի եւ խաղի. *քեզ* օրինակ է այս թէ գիտես (ԱՍՕԲ):

Բերված լեզվական փաստերը միջին հայերենում հաճախակի հանդիպող երևույթներից մեկի՝ անհետևողականության դրսևորումներից են, որոնք տեղ են գտել մասնավորապես Ամասիացու բժշկարանում: Այսպես՝ համոզված, որ ասելիքի բովանդակությունը հասկանալի է, բժշկապետը գործածում է բարդ կառույցներ, որոնց բաղադրիչ միակազմ նախադասությունների գերադաս անդամներն արտահայտված են տարբեր միջոցներով, մասնավորապես՝

ա) եզակի 2-րդ և եզակի 3-րդ դեմքերով: Օրինակ՝ Գէշ կերակուր չուտես, եւ [*թող-Գ.Խ.*] քնքուշ մսեր ուտէ եւ անուշ եւ գէր հաւու միս եւ ուլի միս եւ շուրվանի եւ գերպայ (ԱՍՕԲ),

բ) հոգնակի 3-րդ և եզակի 2-րդ դեմքերով՝ Եւ պիտի որ զանձն տաք հագուստով ծածկեն, բահրակ զկուրծքդ ծածկես, որ ցուրտն սրտին զէն չառնէ: Այսպես նաև՝ Եւ զանարժան ծառայս յիշեա՛. յիշեալ լիցիք ի գալ նմա (ԱՍՕԲ): Կասեմ, թէ՛ «Կելնէ հոգիս». Նա կասեն, թէ՛ «Թող մեռնիս»: Ասքան զուլում ո՞վ տեսեր, Որ զմանկան մահն կու կամիս (Հ, 337):

Մինչդեռ ստորև բերվող բազմաբարդ կառույցներում առկա է ոչ թէ անհետևողականություն, որի պատճառով արձանագրվել է դիմաթվային կարգերի շփոթ, այլ առկա է ընդհանրական-դիմավոր նախադասություններին բնորոշ իրողություն: Այսպես՝ «Գայլն պատառող է եւ յափշտակող եւ աղուէն արայտաւոր եւ նենգաւոր, վասն որոյ աղաչեմ *զքեզ՝ տուք* կերակուր Աստուծոյ զմիտս *ձեր* եւ *սրբեցէք* զնայ ՚ի պիղծ եւ ՚ի դիւական խորհրդոյն եւ Աստուծոյ հանգիստ զհոգիս *ձեր* եւ *մաքրեցէք* ՚ի չար բանից խօսեայց. ՚ի յոխակալութենէ եւ ՚ի հպարտութենէ եւ յայլոց չարութեանց» (ՎԱԱ) կառույցի սկզբնամասում խոսքի հասցեատերը արտահայտված է եզակի 2-րդ դեմքով (*զքեզ*), մինչդեռ շարունակության մեջ վերագրումն անընդմեջ կատարվում է հոգնակի 2-րդ դեմքով: Այգեկցին առակների բովանդակությունից բխող մեկնությունները գերազանցապես արտահայտում է 2-րդ դեմքով՝ դրանք վերագրելով 2-րդ դեմքի հասցեատերերին, սակայն «Քանզի թագաւորն Քրիստոս կոչէ զմեզ անդադար, եթէ եկայք առ

իս եւ ելէք ՚ի ծովէ մեղաց. նոյնպէս եւ առաքեալք նորայ եւ հայրապետք եւ վարդապետք եկեղեցոյ զմեզ կոչեն եւ ասեն, թէ ողորմեցարուք անձանց մերոց եւ ելէք ՚ի մեղաց ծովէ եւ լալով կոծեցարուք եւ ապաշխարեցէք զմեղս ձեր» (ՎԱԱ) կառույցում դիմային վերագրումն առավել ծավալուն դարձնելու նպատակով գործածում է ոչ թե 2-րդ (*զձեզ*), այլ 1-ին դեմքով հասցեատեր (*զմեզ*)՝ բոլորի հետ ընդգրկելով նաև իրեն և այլն:

Որոշ աղբյուրներում ընդհանրական-դիմավոր նախադասություններով արտահայտված գործողությունները ենթադրաբար վերագրվում են ոչ թե ընդհանրապես բոլոր մարդկանց, այլ որևէ հիմունքով մյուսներից առանձնացող բոլորին: Այս կարգի ընդհանրական-դիմավոր նախադասություններ հանդիպում են Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ: Այսպես՝ «Եւ այն տեղն որ հով քամի լինայ՝ մի՛ նստիր եւ մի՛ պառկիր» և «Եւ մերձաւորութիւն մի՛ առնել, եւ ամուր մի՛ կանչեր եւ ծանր իրք մի՛ վերցնէր, եւ ի բարձր տեղաց ի վայր մի՛ ցաթկեր» նախադասությունների *մի՛ նստիր*, *մի՛ պառկիր*, *մի՛ առնել*, *մի՛ կանչեր*, *մի՛ վերցնէր* և *մի՛ ցաթկեր* գործողությունները բնագրի համատեքստում ենթադրաբար վերաբերում են ինչ-որ հիվանդությամբ տառապող բոլոր մարդկանց, մինչդեռ «Եւ թանձր կերակուր եւ գինի մի՛ տալ» և «Եւ տաք իրք մի՛ ուտեցնէր» նախադասությունների *մի՛ տալ* և *մի՛ ուտեցնէր* գործողությունները ենթադրյալ բոլոր բժիշկներին կամ խնամողներին և այլն: Այսպես Ամասիացին անգամ մինևնոյն բարդ նախադասության սահմաններում է դիմում մի դեպքում ընդհանրապես հիվանդին, մյուս դեպքում՝ ընդհանրապես բուժողին կամ խնամողին՝ Եւ մերձաւորութիւն մի՛ առնել (հասցեագրված է հիվանդին-Գ.Խ.) եւ շուրվանի տուր (հասցեագրված է բուժողին-Գ.Խ.) գառին մտով, եւ հարիսայ եւ քապապնի եւ խորվու գեր. օգտէ: Էհանան ասէ, թէ քանի որ հիւանդին երեսին գունն տեղն լինայ եւ չվատուծի՝ մի՛ բռնել (հասցեագրված է բուժողին-Գ.Խ.) (ԱՍՕԲ): Կոստանդին Բարձրաբերդցու «Խրատական նամակում» խոսքը բոլոր հայ հավատացյալների մասին է, երբ նա գրում է. «*Գարի և ալիւր և աւազ և ուլուն և ջուր մի դիւթեցեն*» (ԿԲԽԹ, 283): *Այլազգոյ և կնոջ չտան սան զտղայ քրիստոնէից* (ԿԲԽԹ, 282), իսկ հետևյալ տողերը՝ մասամբ նաև հավատացյալ կանանց մասին. «*Ի վերայ մեռելոյ մազ մի կտրեցեն, և սեաւ մի արասցեն և զերեսս մի կեղեքեցեն, և լալական մի վարձեցեն*» (ԿԲԽԹ, 284):

Ընդհանրական-դիմավոր նախադասությունները խոսքի մեջ հան-

դես են գալիս թե՛ համադաս, թե՛ ստորադաս և թե՛ գերադաս դիրքով՝ զուգորդվելով և՛ երկկազմ, և՛ միակազմ նախադասությունների հետ: Այսպես՝

1. Կան բարդ համադասական կառույցներ, որոնցում ընդհանրական-դիմավորները երկկազմ նախադասությունների հետ համագոր հարաբերության մեջ են: Օրինակ՝ *Աշխարհս է ոչինչ նրման, Շատ դատին, դառնան փռշիման, Հալալ ու հարամ այնեն, Հոս թողուն՝ ՚ի ի հոն կու գրնան* (Հ, 411): – *Ձիւրատն իմաստնիցն տուր, Առաւել գրեզ կու սիրէ* (Հ, 442):

2. Մի շարք բարդ համադասական կառույցներում համագոր հարաբերության մեջ են ընդհանուր ենթակա ենթադրող ընդհանրական-դիմավոր նախադասություններ՝ Եւ զամեն տաք իրք մի՛ ուտել, եւ մերձաւորութենէ եւ արթնութենէ պահէ գրեզ (ԱՍՕԲ): Տուք կերակուր Աստուծոյ զմիտս ձեր եւ սրբեցէք զնայ ՚ի պիղծ եւ ՚ի դիւական խորհրդոյն եւ տուք Աստուծոյ հանգիստ զհոգիս ձեր եւ մաքրեցէք ՚ի չար բանից խօսեայց. ՚ի յոխակալութենէ եւ ՚ի հպարտութենէ եւ յայլոց չարութեանց (ՎԱԱ): Արարէք Աստուծոյ տաճար զմարմինս ձեր եւ սրբեցէք յամենայն աղտեղի գործոց մեղաց (ՎԱԱ) և այլն:

3. Բազմաթիվ բարդ ստորադասական կառույցներում ընդհանրական-դիմավոր նախադասությունը ազատորեն հանդես է գալիս մի դեպքում որպէս երկրորդական, մյուս դեպքում՝ որպէս գլխավոր նախադասություն՝ զուգորդվելով թե՛ երկկազմ, թե՛ միակազմ (այդ թվում՝ ընդհանրական-դիմավոր) նախադասությունների հետ: Օրինակ՝ Եւ յորժամ ուժն գայ՝ միս տուր եւ ապուր եւ թերխորով հակկիթ (ԱՍՕԲ): Թ՛ ուզես, որ հանգիստ գըտնուս Եւ յարգիք ու խիստ մեծութիւն, Ջմարմինըդ մաքրէ պահօք ՚Ի արտասուօք գըտիր թողութիւն (Ֆ, 858): Եւ սնցնողին թէ կաթն աղի լինայ՝ պատեհ է, որ տաս խիարին կտին կաթն եւ զխաշխշին կաթն (ԱՍՕԲ): Հայեց ի ծառին վերայ, Թէ քանի հունար կայ ի նայ (Հ, 262): Եկէ՛ք, հանց տնակ տեսէք, Մուխն ելեր, երդիք չի կենայ (Հ, 257) և այլն:

Այս շարքում հաճախադեպ են այն բարդ կառույցները, որոնցում իբրև բաղադրիչներ տեղ են գտել շարահյուստրեն համանիշ միադիմի և ընդհանրական-դիմավոր նախադասություններ: Միննույն բարդ կառույցում նշված կարգի նախադասություններին տեղ տալը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու դեպքում էլ արտահայտված գործողությունը ենթադրաբար վերագրվում է բոլորին, ինչպես՝ Յուցանէ առակս, թէ *բնաւ ոչ է պարտ չարայիսուսել գոք եւ ոչ բամբասել. այլ գքոյ հոգն հոգայ*

և զքոյ մեղքն տես առաջի քո. այն է բարի և լաւ (ՎԱԱ)¹⁸¹: Յուցանէ առակս, թէ ոչ վայելէ, որ ահոկ խաւսիս, ընդ որ չունիս հաշիւ (ՎԱԱ):

«Օգուտ բժշկութեան» երկի որոշ հատվածներում, օրինակ, ակնհայտ է հեղինակի անհետևողականությունը. խոսքային միևնույն հատվածում նա բոլորին վերաբերող գործողություններն արտահայտում է մի դեպքում երկկազմ, մյուս դեպքում՝ միակազմ նախադասությունների գուգորդումով: Այդ է պատճառը, որ առանձնանում են խոսքային հատվածներ, որոնցում նա պատմողական բնույթի նախադասությունից անսպասելիորեն անցում է կատարում հրամայական (հասցեատեր պահանջող) նախադասության, որից հետո՝ դարձյալ պատմողական նախադասության, որը, ինչ խոսք, շարադրանքը դարձնում է ոճականորեն անմիօրինակ, ինչպես՝ և ամէն մարդ կու պիտի որ իմաստութենով հանց իրվի ուտէ, որ եղանակացն զէն չառնէ և զանձն առողջ պահէ: Եւ զկերակրին աղէկն կեր, և երակ առ և պիկիս արկ և դեղ խմէ և աշխատէ և որ սոցին նման է՝ արա՛ ի յատենն, որ հանապազ անձն մարդուն առողջ լինայ և ցաւ չի դիպի, թէ Աստուած կամի: Կամ՝ Էհանան ասէ, թէ դեղն այն է, որ հանապազ զայն ուտէ որ զաֆրան պակսեցնէ, որպէս ազոխ ապուրն և նռան ջրերն, աղտորի ջուրն. և ամէն տաք իրաց պատրաստ կացիր, օգտէ, և թթու իրվի կեր (ԱՍՕԲ):

Խոսքը ոճավորելու հնարք է նաև ընդհանրական բովանդակությամբ միադիմի և ընդհանրական-դիմավոր նախադասությունները կողք կողքի գործածելը, որից օգտվել են Ամիրդովլաթ Ամասիացին, Այգեկցին և այլք: Հմնտ. Յուցանէ առակս, թէ բնաւ ոչ է պարտ չարայիսուսել զոք և ոչ բամբասել. այլ զքո հոգն հոգայ և զքոյ մեղքն տես առաջի քո. այն է բարի և լաւ (ՎԱԱ) և Յուցանէ առակս, թէ չէ պարտ չարայիսուսել զոք և ոչ բամբասել. այլ զքեզ հոգալ և զքո մեղքդ (ՎԱԱ): Յուցանէ առակս, թէ չէ պարտ զխոստն մոռանալ, զոր Աստուծոյ և խոստացեալ ՚ի նեղութեան ժամանակին. այլ կատարեայ զուխտն և յիշեայ զնեղութիւնն (ՎԱԱ):

Նկատելիորեն հաճախադեպ են նաև միևնույն բարդ կամ բազմաբարդ կառույցում ընդհանրական-դիմավոր և անորոշ-դիմավոր նախադասություններով գուգորդումները թե՛ արձակ և թե՛ չափածո ստեղծա-

¹⁸¹ Հմնտ. Յուցանէ առակս, թէ չէ պարտ չարայիսուսել զոք և ոչ բամբասել. այլ զքեզ հոգալ (ՎԱԱ):

գործություններում, ինչպես՝ *Ջան արա ու գործէ բարի, Որ յետոյ չի լինիս փռշիման*, Թէ չէ Ադամայ դրախտէն Քեզ կանանչ տերև մի չի տան (Հ, 411): *Քանի՛ շատ չարիք գործէք*, Մահն գայ և զձեզ զնդանէ, *Յետոյ պատասխան ուզեն*, Երբ գեհենն զձեզ պաշարէ (Հ, 457): Եւ ի յայս եղանակս *պատրաստիլ կու պիտի* ի հով եւ ի չոր կերակրոց եւ ի թթվոյ եւ այն կերակրոցն, որ սավտայ ընծայէ, եւ զինի *մի՛ խմել*, եւ երակ քիչ առ, եւ լուծման դեղ *առ*, եւ մերձաւորութիւն եւ աշխատիլ եւ բաղանիսն զէն առնէ. եւ կերակուր հաւու ձագ եւ շուրվան եւ քաղցր կերակուրքն *ուտէ*. օգտէ (ԱՄՕԲ) և այլն: Հարկ է նշել, որ թէն վերջին բազմաբարդ կառույցում հեղինակը վարպետորեն զուգորդում է ընդհանրական իմաստ արտահայտող միադիմի և ընդհանրական-դիմավոր նախադասություններ, սակայն անհետևողականության պատճառով վերջին նախադասությունը կազմվել է ոչ թե նախորդ երեք նախադասությունների նման, որոնց գերադաս անդամներն արտահայտված են եզակի 2-րդ դեմքի բայաձևերով (*մի՛ խմել, առ*), այլ եզակի թվի 3-րդ դեմքի բայաձևով (*ուտէ*):

«Գազան մի կայ ՚ի ծովն, որ հուր կոյտէ. գան որսորդք նորա եւ վառեն կրակ եւ առնեն կայծակունս յեզր ծովուն եւ ինքեանք թաքչին. եւ նայ գայ փափաքանաւք եւ լափէ զկայծակունս. եւ անկեալ թըմբբի ՚ի գաւրութենէ հրոյն. եւ ելանեն որսորդքն եւ սպանանեն եւ առնուն զնայ. եւ այս են բանք նորա, որ *թէ զնորթ նորա ՚ի հուր արկանեն*, նայ չի այրիբ» (ՎԱԱ) բազմաբարդ կառույցը հետաքրքրական է նրանով, որ «*թէ զնորթ նորա ՚ի հուր արկանեն*» նախադասությունը կարելի է միակազմ դիտել այն տեսանկյունից, որ իբրև գործողության հավանական կատարողներ միարժեքորեն չեն ենթադրվում որսորդները, այլ առհասարակ բոլորը:

Միջինհայերենյան աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մի մասում չափազանց հաճախադեպ են ընդհանրական-դիմավոր նախադասությունները, ինչն առաջին հերթին պայմանավորված է այդ աղբյուրների բովանդակությամբ. ընդհանրական-դիմավոր նախադասություններով հեղինակները տարատեսակ խորհուրդներ, հանձնարարություններ, հորդորներ են տալիս ընթերցողին առհասարակ:

Միջին հայերենում հիշյալ նախադասությունների գերադաս անդամների արտահայտության հիմնական միջոցներն են հրամայական ապառնու եզակի և հոգնակի 2-րդ, ինչպես նաև այլ ժամանակաձևերի հոգնակի 3-րդ դիմային ձևերը: Հոգնակի թվի 3-րդ դիմային ձևերն արտա-

հայտվում է թե՛ գրաբարից ավանդված և թե՛ զուտ միջինհայերենյան ժամանակաձևերով, մասնավորապես՝ սահմանական ներկայով, ըղձական ապառնիով, 2-րդ ապառնիով և այլն: Հրամայական եղանակի բայաձևերը գերազանցապես գրաբարատիպ են՝ միջին հայերենին բնորոշ հնչյունական փոփոխությունների ենթարկված: Հրամայական ապառնու դրական խոնարհման համակարգի՝ -է վերջավորությամբ բայաձևերի հաճախակի կիրառությունը պայմանավորված է նրանով, որ հեղինակները՝ ա) գրում են միջին հայերեն՝ գերազանցապես գործածելով առտնին գործողություններ ցույց տվող և ակտիվ բառապաշարի մաս կազմող է խոնարհման պարզ բայեր, որոնք համեմատաբար մեծաթիվ են (դրանց մի մասը միջին հայերենը ժառանգել է գրաբարից, մյուսները հենց միջինհայերենյան միավորներ են), բ) շարադրանքում ավելի հաճախ գործածում է ընդհանրական-դիմավոր նախադասություններ, որոնց գերակշիռ մասի գերադասանդամներն արտահայտված են է խոնարհման պարզ բայերի հրամայական ապառնու եզակի թվի 2-րդ դեմքով:

Բնական է, որ որոշակի հասցեատեր կամ հասցեատերեր չենթադրող խորհուրդները, հրահանգներն ու հորդորները գերազանցապես արտահայտվում են ընդհանրական-դիմավոր կառույցների միջոցով, որոնց գերադասանդամները սովորաբար հրամայական եղանակի եզակի կամ հոգնակի թվի 2-րդ դեմքի բայաձևեր են:

Արժե կարևորել, որ եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքերով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները, չնայած արտահայտության տարբեր միջոցներին, շարահյուսական համանուններ են: Հմմտ. Եւ թէ աչքն կիծ լինի՝ զաղտորն *դրօշէ՛* եւ զջուրն ի յաչքն *քաշէ՛*, եւ զխիարին տերեւն քացխով եւ ջրով *էփէ՛* եւ ի վերայ աչացն *դիր*. օգտէ: Եւ թէ ցանն ուժով է՝ ճակատէն երակ *առ* եւ զքիթն *արունէ՛* և Եւ զԱմիրտովլաթ բժիշկն *յիշէցէ՛ք* ի տեր, որ շատ աշխատանօք զայս գիրքս թարգմանեցի և այլն: Պատահական չէ, որ հիշյալ նախադասություններում որպես գերադասանդամ երբեմն գործածում է նույն բայի հրամայականի՝ մի դեպքում եզակի, մյուս դեպքում՝ հոգնակի ձևը¹⁸². չէ՞ որ երկու դեպքում էլ

¹⁸² Մմբատ Սպարապետի դատաստանագրքում -ի՛ք ձևությամբ հոգնակի հրամայականով արտահայտված ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ են հանդիպում *զհտենալ, իմանալ* բայերով՝ Եւ *զհտացիք* որ յանհաւատ ի-

խոսքն ուղղվում է ընդհանուրին¹⁸³:

Հրամայական բայաձևերի ուսումնասիրությունը վերահաստատում է, որ միջինհայանյան խոնարհման համակարգն անմիջիցհայն է: Հրամայական ապառնու և՛ դրական, և՛ ժխտական խոնարհումներում առկա են ոչ միայն երկբաղադրիչ, այլև եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ գուգաձևեր, որոնցով ուրվագծվում են հրամայական ապառնու արտահայտման միջոցների հետագա զարգացումները թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն բայերի շարքում: Չուգաձևերի՝ նույն երկում առկայությունը վկայում է միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում (15-16-րդ դդ.) առկա լեզվական իրավիճակի և մասնավորապես այն բանի մասին, որ խոսակցական լեզվին բնորոշ էր քերականական միևնույն իրողությունը բառային գուգաձևություններով արտահայտելը, ինչը հանդիպում է ոչ միայն միջին հայերենի տարբեր ենթաշրջանների լեզվական աղբյուրներում և ոչ միայն նույն ենթաշրջանի տարբեր հեղինակների գործերում, այլև նույն երկի մի շարք հատվածներում, մինչև անգամ՝ միևնույն պարբերության մեջ:

րիցնոյ, որ զհող գերեզմանին էլ կու ծախեն, հայնց որ ի կապալ հանելն՝ եպիսկոպոսաց թուլութեամբ՝ որ չեն այնոնք զեդ սատանայապաշտք ի յայրել: Բայց գայս հայնց վասն այնոր գրեցաք՝ որ դոքա շատ ազգի ազգի կերպով կու շրջին. *եւ գաւտէնն այդ ձեւովդ յիմացիք:*

¹⁸³ Երբեմն Ամասիացին նույն գործողությունը տարբեր կիրառություններում արտահայտում է տարբեր բայերով, որով ձևավորվում են հոմանշային կամ համանշային շարքեր: Դրանցում առկա բառային միավորները՝

1. մի դեպքում ներկայացնում են միջին հայերենի բառապաշարը՝ մասամբ ավանդված գրաբարից, սակայն միջինհայերենյան կազմությամբ, ինչպես՝ *խածկէ//այրէ//խանձէ//խարէ//վառէ՛, խառնէ//մշխէ, ծեծէ//զա րկ//հա ր, կտրէ//կտրատէ՛, հովցո ւ//պաղեցո ւ, պատրաստէ//պատրաստ կաց/պահէ՛* և այլն: Օրինակ՝ Լեդի նուշ եւ շեհերմանի եւ ծովու փրփուր *այրէ՛* եւ եղով օծէ ի գլուխն: Ա՛ն մարդու մագ, *խածկէ*, ուստուպաճ խառնէ: Եւ զփայծաղն *խարէ՛* երկթով եւ ապիկիս արկ: Ա՛ն զպրտուն որ ի փալանտուզին խոտին մեջն կայ, թաթխէ՛ ի ձեթն եւ *վառէ՛* ի կրակն եւ դիր մէկ ծայրն ի յականջն և այլն:

2. Մյուս դեպքում՝ գրաբարյան և միջինհայերենյան բառաձևեր, ինչպես՝ *թա՛ց//դրջէ՛, շաղէ//շաղվէ//շաղաղէ՛, շփէ՛//օծէ՛//քսէ՛//ծեփէ՛* և այլն: Օրինակ՝ Եւ հանապազ մեշպահարի ջրով գոտն *թա՛ց*: Եւ զքացախն *դրջէ՛* թեփով եւ ի քիթն ծխէ՛ (ԱՍՕԲ):

Բ. ՄԻԱԴԻՄԻ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայական միադիմի միակազմ (այսուհետև՝ միադիմի) է համարվում այն նախադասությունը, որի գերադաս անդամն արտահայտվում է՝

1. կա՛մ դիմասահմանափակ բայերով՝ *լուսանայ, առաւօտանայ, սասնանայ* և այլն: Նրանք խոնարհման համակարգում ունեն միայն եզակի 3-րդ դիմային ձևեր, որոնք հակադրամիասնական կապ չեն կազմում 1-ին և 2-րդ դիմային ձևերի հետ, ինչպես՝ *լուսանայ, լուսանայր, լուսացաւ* և այլն¹⁸⁴: *Եւ յորժամ լուսացաւ*, եկն քուրոչ որդին թագաւորին (ՎԱԱ),

2. կա՛մ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դեմքով, որը տվյալ դեպքում գործածվում են միադիմի բայի նշանակությամբ, այն է՝ 1-ին և 2-րդ դեմքերի հետ հակադրամիասնական կապի մեջ չէ: Խոսքը էական, վերացական, եղանակավորիչ և այլ բայերի մասին է, ինչպես՝ *Ջեղէն* ես ի ձեռդ առեր, Կու պահես, թէ գիր կու գրէ, Հանէ՛ զինքն, ի դուրս ձգէ, *Չլինի* որ ձեռքդ խայթէ (Հ, 630): Հունան ասէ, թէ զվոքք տղաքն ի ձմռան աւուրքն ի մրգէ *արգիլել կու պիտի* (ՍԱՕԲ),

3. կա՛մ էական, վերացական, եղանակավորիչ և այլ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դիմային ձևերի մասնակցությամբ, որոնք տվյալ դեպքում գործածվում են միադիմի բայի նշանակությամբ¹⁸⁵: Օրինակ՝ *զի սաստիկ քամի էր եւ հով պաղ եւ ձիւնամեծ* (ՍԼ): զի անթողելի մեղք է առաջի Աստուծոյ: *Վայ է ինձ* (ՎԱԱ): *Աշուն էր, եղավ գարուն*, Դուն՝ ի ա՛յլ դարձար, ես՝ ի մաշ (Հ, 118): Դումրին երգէ մեզ եղանակ՝ Թ՛ այսօր *եղև* պայծառ *գարուն* (ԿԵ, 146) և այլն:

Ըստ խոսքի մեջ գործածության՝ միադիմի նախադասությունները երկու տեսակ են՝ անկախ և գուգորդվող:

1. *Անկախ* են այն միադիմի նախադասությունները, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս իբրև ինքնուրույն հաղորդակցական միավոր, սակայն անհրաժեշտության դեպքում կարող են գործածվել նաև բարդ

¹⁸⁴ Դիմասահմանափակ բայերն ունեն միայն անդամ և միադիմի ձևեր, ինչպես՝ *լուսանայ, լուսացեայ, լուսացող*, *լուսանայ, լուսանայր, լուսացաւ* և այլն:

¹⁸⁵ Ներկա ուսումնասիրության մեջ միադիմի նախադասությունների գերադաս անդամների արտահայտությանը մասնակցող և՛ դիմասահմանափակ, և՛ անդիմասահմանափակ բայերի՝ տվյալ կիրառությամբ հանդես եկող եզակի թվի 3-րդ դիմային ձևերը ընդհանուր կերպով անվանում ենք միադիմի բայաձևեր:

կառույցների մեջ՝ բարդ ստորադասականների կազմում գրավելով գերադաս կամ ստորադաս, իսկ բարդ համադասականների կազմում՝ համադաս դիրք՝ Եւ ասէ գալն. *վայ է ինձ*. զի նեղիմ չարայչար (ՎԱԱ): Սրտիկս ալ ի յիս ասաց, Թէ *անոր թարկն պիտի տալ* (Հ, 156): *Շամ է արդեն*, դարձ ի խորոց, Գրիգորէ՛, փութա՛ ի կոծ (ՅՎ, 7): Յուցանէ օրինակս այս, թէ *պարտ է մեծարել եւ դարմանել զծնօղս եւ հնազանդիլ*: *Վայ է նոցա* (ՎԱԱ): *Երանի է մեզ*, զի գաստուածատիպն լսենք զբան քաղցր (ՊՎ, 420):

2. *Չուգորդվող* են այն միադիմի նախադասությունները, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս միայն բարդ ստորադասական կառույցների կազմում՝ գրավելով գերադաս դիրք և պահանջելով մի երկրորդական նախադասություն, որը կատարում է ենթակայի գործառույթ, ինչպես՝ Եւ թէ *լինի* որ ի յականջնցալ լինայ՝ եւ քիչ մի յեսմէկի ձէթ եւ մանուշակի ձէթ եւ քիչ մի շիրիկ ձէթ յականջն կաթեցուր (ԱԱՕԲ): Եւ *պիտի* որ զեղ որդոյ առնուն ի տանէն եւ ի տեղոյն եւ յընչիցն բաժին զեղ երկու քուրոջ ՍՄԴ): *Ասացած է, թէ կու պիտի*, որ գինին ամիսն Ա տարպայ կամ Բ տարպայ իսմէ (ԱԱՕԲ): *Եղուկ և վայ է ինձ*, որ ի յայս հասայ (ՄԿՄ, 406) և այլն¹⁸⁶: Ս. Գյուլբուղաղյանը և այլք այս կարգի միակազմ նախադասություններ չեն առանձնացնում՝ գտնելով, որ նրանք իրենց ստորադասված նախադասության հետ միասին երկկազմ կառույցներ են: Եվ եթե նրանք նույնիսկ «գրավորում տրոհվում են», ապա դա դեռ «չի նշանակում, թե նրանք ինքնուրույն են և ամբողջական»¹⁸⁷: Սակայն ասվածը վերաբերում է ամբողջ բարդ կառույցին, որի կազմում իրականանում է երկու ստորագում: Ընդունելով Վ. Առաքելյանի այն մոտեցումը, ըստ որի՝ բարդ կառույցի՝ ենթակայի գործառույթով երկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասությունը միակազմ է, քանի որ այն «ինքնուրույն միավոր է դարձել նույնիսկ իբրև բարդության մաս»¹⁸⁸, մենք ևս տվյալ դեպքում յուրաքանչյուր նախադասություն համարում ենք շարահյուսական առանձին միավոր՝ կարևորելով դրանցից ամեն մեկի կազմությունը՝ ըստ ստո-

¹⁸⁶ Երբեմն իրար հաջորդում են քերականորեն անհամագոր երկու միադիմի գուգորդվող միակազմ նախադասություններ, և ձևավորվում է ենթաստորադասություն:

¹⁸⁷ Ս. Գյուլբուղաղյան, 1967, 104-105:

¹⁸⁸ Ս. Արքահայան, Վ. Առաքելյան, Վ. Քոչյան, 1975, 283:

րոզման առանձնահատկության¹⁸⁹:

Դիտարկումները ցույց են տալիս, որ միևնույն կազմությամբ մի շարք գերադաս անդամներ կարող են հանդես գալ թե՛ անկախ և թե՛ զուգորդվող միակազմ նախադասությունների կազմում: Այսպես՝ *լաւ է միադիմի կապակցությունը* միևնույն բարդ կառույցներում մի դեպքում գործածվել է անկախ նախադասության կազմում՝ անորոշ դերբայի համադրությամբ, մյուս դեպքում՝ զուգորդվող նախադասության կազմում՝ ենթակա երկրորդական նախադասության զուգորդությամբ՝ Ժահահոտութիւն դժոխոցն այնպէս չար է. որ *լաւ է*, թէ յարեւմտից յարեւելս կրակ լինի, *լաւ է* յայն կրակն ՚ի ներս *գնալ* քան թէ զդժոխոց ժահահոտութիւնն *առնուլ* եւ զՍաղայէլի զագիր կերպարանքն *տեսանել* (ՎԱԱ):

Տվյալ դեպքում էական է, թէ այս կամ այն նախադասության կազմությունը՝ առանձին վերցրած: Այսպես՝ «Հարկավոր է, որ ես նրան կանչեմ» կառույցի առաջին բաղադրիչը միակազմ նախադասություն է, երկրորդը՝ երկկազմ: «Հարկավոր է, որ նրան կանչեն ինձ մոտ» կառույցի բաղադրիչ երկու նախադասություններն էլ՝ իբրև առանձին հաղորդակցական միավոր, միակազմ են. առաջինը՝ միադիմի միակազմ, երկրորդը՝ անորոշ-դիմավոր: Իսկ որ նրանք երկուսով մի բարդ երկկազմ նախադասություն են ձևավորում, դա այլ հարց է:

Կարևոր ենք մի հանգամանք ևս. մեզ հետաքրքրում են ոչ թէ ենթակա երկրորդական նախադասությամբ բոլոր բարդ ստորադասական կառույցները, այլ միայն նրանք, որոնց գլխավոր նախադասության կազմում սովորաբար ընդունված չէ ենթակա հարաբերյալի գործածությունը: Սկսած գրաբարից՝ այդ կարգի նախադասություններում հարաբերյալներ չեն գործածվում¹⁹⁰, հակառակ դեպքում հարցն առնչվում է խոսքի ոճավորմանը, ինչը թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում և թե՛ աշխարհաբարում ընդունված չէ: Մինչդեռ այն կառույցները, որոնցում ենթակա հա-

¹⁸⁹ Տե՛ս *Գ. Խաչատրյան*, 2002, 20:

¹⁹⁰ Օրինակ՝ *Որպէս եւ գրեալ է*, թէ Չոզան զհետ ոչնչի, եւ գտին զոչինչ (Ագաթ.): *Որով յայտ իսկ է*, թէ զԱրարչին անուն յառաջ քան զայս ծանուցեալ Ադամայ (Ագաթ.): *զի լաւ է քեզ* եթէ մի յանդամոց քոց կորիցե՛ք եւ մի ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն (Մատթ., Ե, 29): Բայց այս որ ես ինձէն աչաւք տեսի, *թուի ինձ*՝ թէ մեծագոյն եւս լինի քան զառաջինն (Եղիշէ) և այլն:

րաբերյալը զեղչված է, և վերականգնելու դեպքում խոսքը չի ոճավորվում, այլ թերի նախադասությունը վերածվում է սովորական ամբողջական նախադասության, դուրս են մեր ուսումնասիրության նպատակից: Քննությունը ցույց է տալիս, որ գրական հայերենի զարգացման բոլոր փուլերում վերջիններիս շարքում են գերազանցապես այն կառույցները, որոնցում ենթակա հարաբերյալներն արտահայտվում են կա՛մ անձնական և կա՛մ կենդանանիշ ցուցական դերանուններով: Այդ կառույցներում հարաբերյալների առկայությունը սովորական է, ինչպես՝ Ով կրբերի անշեջ հուրը՝ *Նա է ընտրած իմ փեսան* (ՀԹ2, 124), մինչդեռ բացակայությունը՝ ոչ, քանի որ դրանք զեղչելու դեպքում խոսքը ոճավորվում է՝ Ով եկավ, *խըսեց* — Գետը ցամաքեց (ՀԹ4, 26):

Բայական միադիմի միակազմ նախադասությունները բնորոշ են գրական հայերենի բոլոր շրջաններին, որոնցից գրաբարի դասական ենթաշրջանի միադիմի նախադասությունները քննության են առել տողերիս հեղինակ¹⁹¹, իսկ ժամակակակից հայերենի նույն կարգի նախադասությունները՝ Ս. Գյուլբուդաղյանը, որը դրանք ուսումնասիրում է անենթակա նախադասությունների շարքում՝ համարելով «Եզակի երրորդ դեմքի պարզ և բաղադրյալ ստորոգյալ ունեցող անենթակա նախադասություններ»¹⁹²: ժամակակակից հայերենի միադիմի նախադասությունների մասին Վ. Առաքելյանը, Ս. Աբրահամյանը, Գ. Ջահուկյանը նույնպես հիշարժան բնորոշումներ և դիտարկումներ ունեն¹⁹³, որոնք, չհաշված մասնակի

¹⁹¹ Նշվ. աշխ.. 71-168:

¹⁹² Ս. Գյուլբուդաղյան, 1967, 40-72:

¹⁹³ Անդրադառնալով ժամանակակից հայերենի միադիմի նախադասություններին՝ Գ. Ջահուկյանը դրանք համարում է անենթակա նախադասությունների երկու տեսակներից մեկը՝ անվանելով «վիճակա-եղանակային» և նշելով, որ դրանցում արձանագրվում կամ գնահատվում է որևէ անմիջական իրավիճակ կամ հոգեվիճակ որպես իրական ենթակա (*Ցրտում է, Ցուրտ է, Լավ է, Հիանալի է, Հարկավոր է գնալ*)(Գ. Ջահուկյան, 1974, 396): Գիտնականը նշում է, որ ժամանակակից հայերենի՝ եզակի 3-րդ դեմքով բայաձև ունեցող «անենթակա» նախադասությունները «ցույց են տալիս իրավիճակ (անփոփոխ կամ փոփոխական), արձանագրում են իրականության մեջ կամ հոգում տեղի ունեցող որևէ երևույթ, մասնավորապես՝ ա) բնության ընդհանուր վիճակներ (մթնոլորտային տեղումներ, կլիմայական ընդհանուր վիճակներ և վիճակների փոփոխություններ)՝ *Լուսանում է (Լույս է), Անձրևում է, Առավոտ է, Գարուն էր, Ժամի 5-ն էր* և այլն. բ) հասարակական, ընտանե-

տարբերություններ, հատուկ են նաև միջին հայերենի միադիմի միակազմ նախադասություններին: Մասնավորապես միջին գրական հայերենում և՛ անկախ, և՛ գուգորդվող միադիմի նախադասություններն աչքի են ընկնում արտահայտության և բովանդակության պլանների բազմազանությամբ: Այս նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել չեզոք կամ կրավորական սեռի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ: Ըստ վերոնշյալ առանձնահատկությունների էլ՝ առանձնացրել ենք անկախ և գուգորդվող միադիմի նախադասությունների հետևյալ խմբերը.

Բ.1. անկախ միադիմի միակազմ նախադասություններ,

Բ.2. գուգորդվող միադիմի միակազմ նախադասություններ:

Ստորև կքննենք դրանք՝ ըստ արտահայտության ու բովանդակության պլանների և գործառական առանձնահատկության:

Բ.1. ԱՆԿԱԽ ՄԻԱԴԻՄԻ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես վկայում են փաստերը, միջին հայերենում անկախ միադիմի նախադասությունների գերադաս անդամներն արտահայտվում են կա՛մ չեզոք սեռի բայերի միադիմի ձևերով, կա՛մ վերջիններիս մասնակցությամբ: Ըստ գերադաս անդամի արտահայտության և բովանդակության պլանների առանձնահատկության՝ միջին հայերենում անկախ միադիմի միակազմ նախադասությունները լինում են երկու տեսակ՝

Բ.1.1. *չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ,*

Բ.1.2. *չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտա-*

կան, անձնական, ընդհանրապես մարդկանց հետ կապված վիճակներ՝ *Պատերազմ է, Այսօր տոն է, Մենյակում լռություն է* և այլն. գ) իրականության և արտահայտվող անհատի փոխհարաբերությամբ պայմանավորված վիճակներ, իրականության գնահատումներ, եղանակային իմաստներ՝ *Չի քնվում* (= հնարավոր չէ քնել), *Ցավալի է, Լավ է* և այլն»: Գ. Ջահուկյանը գտնում է, որ սրանց տեսակներից մեկը պետք է համարել «եղանակավորիչ բառ+է+անորոշ դերբայ» կապակցություններով նախադասությունները՝ *Պետք է գրադվել, Հնարավոր է հանդիպել, Չի կարելի գնալ* և այլն: Ժամանակակից հայերենի՝ միադիմի նախադասությունների ուսումնասիրությունից նա հանգում է այն եզրակացության, որ դրանք «կա՛մ զգայական (իրականության զգացում), կա՛մ գնահատական բնույթի են (իրականության, խոսողի և իրականության փոխհարաբերության գնահատում), դրանց մեջ արձանագրվում է որևէ իրավիճակ կամ հոգեվիճակ» (Գ. Ջահուկյան, 1974, 395):

*հայտվող անկախ միակազմ նախադասություններ*¹⁹⁴:

Պայմանավորված գերադաս անդամի կազմությամբ՝ չեզոք սեռի միադիմի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները միջին հայերենում ունեն արտահայտության մի շարք միջոցներ: Այդ նախադասությունների գերադաս անդամը կազմությամբ պարզ է կամ բաղադրյալ:

1. Կազմությամբ պարզ գերադաս անդամն արտահայտվում է միադիմի բայերի համադրական կամ վերլուծական ժամանակաձևերով, ինչպես՝ Զամեն մեկի ստածումն յիբ համարն *յիշած է* (ԱՍՕԲ): Երթամ, քաջ արծիւ լինամ, Գամ, կռուիմ մինչոր *լուսանայ* (Հ, 140): Երբոր *առաւօտանայր՝* Ես ի բունս ճովոայի (Հ, 240): *Ստոնացեալ էր* (ՎԱԱ):

2. Կազմությամբ բաղադրյալ գերադաս անդամը հանդես է գալիս տարբեր բաղադրիչների հարադրությամբ, որոնցից մեկը, որպես կանոն, միադիմի բայաձև է: Բաղադրյալ գերադաս անդամն արտահայտվում է «(անուն//եղանակիչ բառ+) չեզոք սեռի միադիմի բայաձև (+անդեմ բայ)» կաղապարով, որը հանդես է գալիս հետևյալ մասնակաղապարներով՝

2.1. «անուն+չեզոք սեռի միադիմի բայաձև», ինչպես՝ Ես տղայ ու դուն տղայ, *Միրվելուն ատենն է հիմայ* (Հ, 101): թեպէտ *ամառն էր* (ՍԼ): *Աշունք էր, եղաւ գարուն*, Ամ քանի՛ կենանք մեք ի տուն (Հ, 374) և այլն,

2.2. «չեզոք սեռի միադիմի բայաձև+անդեմ բայ», ինչպես՝ Եւ յայս ամենիս վերայ *փնդռել պիտի եւ ճշմարտել*, որ թէ կամաք լինի սղալն եւ կամ վասն պզման՝ նա զեդ մահապարտ զինք սպաննեն (ՍՄԴ): Երբորդն այն է, որ զմեկ դեղ մըն մեկ ցառու *փորձել կու պիտի* (ԱԱ): Այտոր ի՞նչ *խածնել պիտի*, Զայտ ի յիմ կրակն է այրած (Հ, 261): զի յասելն զլեզուն պինտ *պիտի կոխել* ի բերան և ձայն անհեթեթ *հանել* (ԴԶ, 81) և այլն,

2.3. «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով՝ *Եւ պատեհ է* զայն *կտրել* (ԱՍՕԲ): Տուցանէ առակս, թէ յայս

¹⁹⁴ Քանի որ միջին հայերենում՝ ա) բայական համակարգի բնորոշ գծերից մեկն այն է, որ միադիմի բայերը ոչ միայն թվով և իմաստային դաշտերով են սահմանափակ, այլև բնագրային վկայություններով, և բ) վերոնշյալ խմբերով ուսումնասիրելու դեպքում ունենք անհամաչափ ենթազուխներ, ուստի կարելի էր դրանք բոլորը քննել մեկ ընդհանուր վերնագրի ներքո, այն է՝ չեզոք սեռի միադիմի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ:

կեանքս պարտ է ջանալ եւ գղջանալ եւ ապաշխարել զմեղս (ՎԱԱ): Քարկոծել պարտ է [զմարդն], զի անարգեաց [զնա] (ՍՍԴ): Իսկի չէ պատեհ վարձ առնուլ եւ ապա ուսուցնել (ՍՄԴ)¹⁹⁵: Պարտ է ... Տաղ, շարական եւ խաղ երգել, Անուշ գինով թասը լեցնել, Տալ սիրելի եղբոր ձեռն, Անուշ, անուշ վերան ձայնել (ՄԴ): Պարտ է եւ ի կանոնս դադարեցուցանել (ՍՕ):

Բ.1.1. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՒ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտահայտության պլանում լինելով միատարր՝ չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները բովանդակության պլանում տարբեր են. նրանցով նկարագրվում են բնությանը, մարդկանց առնչվող գործընթացներ, վիճակներ, պահեր և այլն: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

1. ՕՂԵՐԵՎՈՒԹԱՆԻՇ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՒ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օդերևութանիշ միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները ցույց են տալիս օդերևույթին և առհասարակ բնությանը վերաբերող տարատեսակ իրողություններ: Այս խմբի նախադասությունների գերադաս անդամներն արտահայտվում են՝

1. օդերևութանիշ որոշ բայերի (*առաւօտանայ, լուսանայ, մութանայ/մթանայ, մթնել, սառնանայ, ցրտանայ*) միադիմի ձևերով, որոնք սովորաբար ցույց են տալիս օրվա ընթացքին և մթնոլորտին առնչվող փոփոխություններ: Օրինակ՝ Քեզի գիրկ ու ծոց պարտիմ, Պագ հազար, *ինչոր լուսանայ* (Հ, 43): *Երբոր առաւօտանայր՝* Ես ի բունս ճովոյալի (Հ, 240): *Իրիկունն, երբ որ մթնէր՝* Գայի, քո ծոցդ մտնէի (Հ, 240): Պայծառ քան զարև, Լուսով քո լըցաւ աշխարհըս, ՚ի այլ մըթնելոյ չէ (ԱԱ, Բ, 27):

Նկատենք, որ գերադաս անդամը հազվադեպ կարող է արտահայտվել միադիմի բայերի այլ ժամանակաձևերով նույնպես, մասնավորապես՝
- անկատար անցյալով՝ Կանչուկ հաւն էրբ ցրտանայր, Ջուբա կու-

¹⁹⁵ Հմտ. Եւ աղէկ չերեւնայ՝ չէ պատեհ կտրելն (ԱԱՕԲ) նախադասությունը, որում մինևույն չէ պատեհ-ը երկկազմ նախադասության ստորոգյալի գործառույթ է կատարում:

գեր իր մանտրկար (ԿԳԹ, 240)¹⁹⁶,

- անցյալ կատարյալով, որը թեև համեմատաբար հաճախ է գործածվում, այնուամենայնիվ ունի արտահայտության սահմանափակ միջոց. դա *լուսանայ* բայի *լուսացաւ* միադիմի ձևն է: Օրինակ՝ Եբաց զհւր անուշ լեզուն Ու գովեց՝ մինչոր *լուսացաւ* (Հ, 204)¹⁹⁷: Դեռ իմ սրտին մուրատին Չի հասեր, նա բարկ *լուսացաւ* (Հ, 77)¹⁹⁸: Աս գիշեր մինչի *լուսացաւ*, Ես երկու խանդալ մանեցի (Հ, 728): Եբաց զհւր բարի բերանն, Լուկ երգեց՝ մինչև *լուսացաւ* (Հ, 365):

- վաղակատար անցյալով, որը բացառիկ կիրառությամբ է հանդիպում, այն էլ՝ *եւ* օժանդակ բայի միադիմի ձևի զեղչմամբ՝ Ջան ալ ի վարդին սիրուն է իսուեր, ինչուր *լուսացեր* [է] (Հ, 194):

Վերը նշեցինք, որ այս շարքում է նաև *սառնանամ* բայը: Այն միակ անգամ հանդես է գալիս *սառնացեալ* անցյալ դերբայով և *էր* միադիմի բայաձևով արտահայտված բաղադրյալ կազմությամբ՝ Ես նայ ի ծագել արեւոյն զարթեաւ. եւ *էր սառնացեալ*. զի էր ձմեռն. եւ դողալով էմուտ ի քաղաքն (ՎԱԱ):

Միջինհայերենյան լեզվական աղբյուներում օդերևութանիշ միադիմի նախադասությունները հաճախադեպ են մասնավորապես հայրեններում: Նրանցում գերադաս անդամն առավել հաճախ հանդես է գալիս *լուսանայ* միադիմի բայաձևով՝ արտահայտված և՛ գրաբատիպ, և՛ *կու* մասնիկավոր տարբերակներով՝ Երթամ ու բազայ լինիմ Ու կովիմ *հինչուկ լուսանայ* (Հ, 211): Գնա՛յ ու գիշերն արի, Պագ հազար՝ *մինչոր լուսանայ* (Հ, 174): – Լուսի՛ն, քո արևտ ասեմ, Պահ մի կաց՝ *ինչօր լուսանայ* (Հ, 181): – Մօլայ, քեմ հերիք կանչես, Գիտացաք, որ *կու լուսանայ* (Հ, 181): Բռնեմ զայս բարակ ճամփիկս Ու երդամ *մինչոր լուսանայ* (Հ, 249): Օղցիկդ առաւօտ լման, Քանի ետ բանամ՝ *լուսանայ* (Հ, 201): Մօլայ՛, գեմ հերիք կանչես, Գիտացաք, որ *կու լուսանայ* (Հ, 141): Ընդ արշալոյսն, երբ *լուսանայ*, Ելնէ ժամուն թողնու գնայ (ՄՂ)¹⁹⁹:

¹⁹⁶ *Ցրտանայ* այս դեպքում կարելի է մեկնաբանել նաև «մրսել» իմաստով, որի դեպքում նախադասությունը կդիտվի երկկազմ:

¹⁹⁷ Հմմտ. Եբաց զհւր բարի բերան Ես սասց՝ մինչոր *լուսացաւ* (Հ, 324): Բացաւ իր շիշէ բերնակ, Ու կանչեց գեմ որ լուսացաւ... (Հ, 758):

¹⁹⁸ Հմմտ. Դեռ սրտիս մուրատին Չի հասեր, նա բարկ *լուսացաւ* (Հ, 190):

¹⁹⁹ Հմմտ. *Երբ առաւօտն լուսացաւ*, Աւարտ եղև պատարագին (ՄՂ):

Որոշ նախադասություններում միադիմի բայաձևերի հետ հանդես են գալիս վերջիններիս համարմատ գոյականներով արտահայտված ենթակաները (*լուսն լուսանայր, մութն մթանայր* և այլն), որոնք ձևական, հավելյալ արժեք ունեն և փոփոխելով հանդերձ այդ նախադասությունների կառուցվածքը՝ չեն ազդում նրանց բովանդակության վրա, ինչպես՝ *Երբոր լուսն լուսանայր* Աշխարհիս վերայ ժուտ գայի (Հ, 240): *Ոնց որ մութն մթանայր*²⁰⁰ Յաճնայի, ծոցըտ մտնուի²⁰¹, Ոնցոր *լուսն լուսանայր*՝ Բարձրանայի, բունըս մտնուի (Հ, 182)²⁰²:

Բերված կառույցներից տարբերվում են ստորև ներկայացվող այն նախադասությունները, որոնցում առկա քերականական հարաբերությունները տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս: Խոսքը «*Բրիկունն*, երբ որ մթնէր՝ Գայի, քո ծոցդ մտնէի, *Գիշերն* մինչոր լուսանայր՝ Ես ի քո ծոցդ պատկէի» (Հ, 240): «*Գիշերն* մինչոր լուսանայր՝ Քո սիրոյն ես քուն չինայի» (Հ, 239): «*Գիշերն* ինչուր լուսանար՝ Քո սիրուն ես քուն չինլայի» (Հ, 160): «*Գիշերն* ինչուր լուսանայր՝ Քու սիրուդ ես քուն չունէի» (Հ, 108) բարդ կառույցների այն նախադասությունների մասին է, որոնց ընդգծված անդամները (*իրիկունն, գիշերն*) մի դեպքում կարելի է համարել ոչ թե ուղղական հոլովով արտահայտված ենթակա, այլ հայցական հոլովով ժամանակի պարագա: Ասվածի օգտին վկայում է նաև «*Գիշերն* մինչոր լուսանայր՝ Ես ի քո ծոցդ պատկէի» բանաստղից առաջ գործածված «*Բրիկուն-*

²⁰⁰ Լեզվական աղբյուրներում *մութանայ* և *լուսանայ* բայերը հանդիպում են նաև միջին հայերենին բնորոշ խոնարհմամբ՝ Ոնց որ մութն *մութանար*՝ Յաճնայի, ծոցտ մտնուի (Հ, 47): *Գիշերն* ինչուր *լուսանար*՝ Քո սիրուն ես քուն չինլայի (Հ, 160):

²⁰¹ Նկատենք, որ ինչպես *լուսանայ* և նմանատիպ բայերի դիմավոր ձևերը չեն կարող պահանջել ենթակա, այնպես էլ նրանց անդամ ձևերը չունեն սեռականով արտահայտված կողմնակի (փոխակերպված) ենթակայի հետ կապակցվելու հատկություն: Օրինակ՝ Երթամ, սիրեմ զարեզակն, Որ ծագե դեմ *լուսանայուն* (Հ, 310): Սա այն դեպքում, երբ այսօրինակ կառույցներում հանդես եկող անդամասանձանափակ բայերի անդամ ձևերը սովորաբար հանդես են գալիս ուղղականով կամ սեռականով արտահայտված փոխակերպված ենթակաների հետ: Հմտ. Ժամանակակից հայերենի «Նա արթնացել էր լրիվ *լուսանայուց առաջ*» և «Նա արթնացել էր *իմ վերադառնալուց առաջ*» կառույցները, որոնցից վերջինում *իմ*-ը պարտադիր անդամ է:

²⁰² Հմտ. Ոնցոր *մութն մութանար*՝ Յաճնայի, ծոցտ մտնուի (Հ, 47): Ոնց որ *մութն մութանար*՝ Յաճնայի, ծոցըտ մտնուի (Հ, 128): Ոնց որ *լուսն լուսանար*՝ Բարձրանայի, բունտ մտնուի (Հ, 128):

նըն, երբ որ մթնէր՝ Գայի, քո ծոցդ մտնէի» բարդ կառույցի կազմում «երբ որ մթնէր» նախադասության տրոհումը, որով *իբիկունն* անդամին վերագրվում է ժամանակի պարագայի շարահյուսական գործառույթ²⁰³: Մինչդեռ այլ մոտեցմամբ՝ «*Գիշերն ինչուր լուսանայր*՝ Քու սիրուդ ես քուն չունէի» կառույցի ընդգծված և նմանատիպ միավորները կարելի է համարել երկկազմ նախադասություններ՝ *գիշերն լուսանայր* ենթակա-ստորոցյալ հարաբերությամբ:

Ինչպես գրական լեզվի գրաբար, ավելի ուշ՝ նաև աշխարհաբար շրջաններում, օդերևութանիշ միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ նախադասությունները միջին հայերենում նույնպես առանձնանում են սահմանափակ թվով: Օրինակ՝ Հանչաք զիրկ ու ծոց անենք, Պագ հազար մինչոր *լուսանայ* (Հ, 248): *Երբոր առաւօտանայր*՝ Ես ի բունս ճովոյաի (Հ, 240): Պատճառն այն է, որ բոլոր լեզուներում, այդ թվում նաև հայերենում, սովորաբար հաղորդակցման միջոց են երկկազմ նախադասությունները, որոնք արտահայտվում են ենթակաառու դիմավոր բայերով: Բնական է, որ վերջիններս միջին հայերենում նույնպես անհամեմատ մեծաթիվ են՝ ի տարբերություն ենթակա չստացողների, որոնց թիվը խիստ սահմանափակ է:

Նկատենք նաև, որ միջին հայերենում բնությանը, օդերևութին վերաբերող բազմաթիվ նախադասություններ են կազմվում ոչ միայն դիմասահմանափակ (տվյալ դեպքում միադիմի), այլև անդիմասահմանափակ բայերով՝ ձևավորելով ոչ թե միակազմ, այլ երկկազմ նախադասություններ, ինչպես՝ – *Գիշեր չէ անցեր*, հոգի՛, Ես ի քո դուռնըն չեմ եկեր (Հ, 194): Վարդն ալ խօշ լազաթ ունի, Վաղվնէքն երբ *դպչի արև*, Հանէ զիր կանանչ կապան, Լուկ հագնի զկարմիրն ի վերն (Հ, 363): *Եղբարք*, պարտ է մեզ քաջանալ, Մինչև ի մահ պատերազմեալ Ես ուր պիտէր, անդ աւերեալ: Երբ *առաւօտն լուսացեալ*, Նա ի կօռն անյայտ եղեալ (ԱՄ): Ոչ ժամանեց ի քաղաքն մտանել, զի *արեւն ի մուտս էր* եւ դրունքն փակեալ էին (ՎԱՄ):

²⁰³ Հանդիպում են նաև հետևյալ կազմությամբ կառույցներ՝ Պէնի խօյնընայ ալայ, Ինչօր այս *մութըն լուսանայ* (Հ, 44): Երթամ զարեգակն սիրեմ, Որ *ծագէ լուս առաւօտուն* (Հ, 228): Երթամ արևը սիրիմ, Որ *ծագէ լուսն առաւօտուն* (Հ, 687), որոնցում ենթակա-ստորոցյալ հարաբերությունն ակնհայտ է:

2. ՀՈԳԵՎԻՃԱԿԱՆԻՇ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեվիճականիշ միադիմի բայաձևով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները ցույց են տալիս մարդկային ապրումներ, զգացողություններ, տպավորություններ: Այս կարգի նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է հոգեվիճականիշ բայերի միադիմի ձևերով, ինչպիսին, օրինակ, *վայելէ* բայաձևն է՝ Թէ մարդ ես, նայ սերտ եւ անխնայ զարկ դու եւ հար զթիկունս իմ. *զի այս խելացս այսպէս վայելէ ինձ* (ՎԱԱ):

Հոգեվիճականիշ միադիմի բայաձևով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները միջին հայերենում հազվադեպ են:

Բ.1.2. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտվող անկախ միադիմի նախադասությունների միջոցով նկարագրվում են բնությանը, օդերևույթին, ժամանակին, մարդկանց առնչվող գործընթացներ, վիճակներ, պահեր, եղանակավորված և առանց եղանակավորման անդեմ գործողություններ և այլն: Ստորև առանձին-առանձին դիտարկենք դրանք:

1. «ՕՂԵՐԵՎՈՒԹԱՆԻՇ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌ-ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Օդերևութանիշ կամ ժամանականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասություններով նկարագրվում են տարվա եղանակ, շաբաթվա օր, օրվա պահ և օդերևույթին ու բնությանը վերաբերող տարբեր հանգամանքներ: Օրինակ՝ Եւ թէ *ամառն* եւ թէ *ձմեռն լինայ*՝ լաւն այն է, որ պաղ ջրով զանձն լվանաս (ԱԱՕԲ): ... վասն երկրի ցածութեան *ցուրտ է* (ԻՇ): Յորժամ որ *գարուն լինի*, Մեծ ամօթ կրես՝ ւ ամաչիս (Հ, 456): Եւ ասաց, թէ չեմ՝ ի կամիլ. զի *շաբաթ էր*. Էկեալ մէկ ալ օրն քրիստոնէայն ՚ի ջուրն. եւ ասաց [ց]ջիւտն, թէ չեմ՝ ի կամիլ. զի *կիրակի էր* (ՎԱԱ): Եւ յայնմ գիշերին շատ անձրն եկաւ և սաստիկ ձիւն և *ցուրտ եղև* (ՄԺ, II, 229): Յայս ժամուս, ի մեր մեղաց, Խիստ *սառն եւ ցուրտ էր* ի ձմնաց (ՄԻԳ) և այլն:

«Օղերևութանիշ կամ ժամանականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակադասարով արտահայտվող միադիմի կառույցներում գերադաս անդամի անվանական բաղադրիչի դերով հանդես են գալիս *ամառ(ն)*, *ամպ*, *այգոցն*²⁰⁴, *աշուն(ք)*, *առաւօտ*, *ատեն//ատեն*, *գարուն(ն)*, *գիշեր*, *երեկոյ*, *թուական*, *ժամ*, *իրիկուն*, *լուս*, *խաւար*, *կիրակի*, *ձմեռն*, *ճաշք*, *մուտք*, *շաքաթ*, *ուրբաթ*, *պարզ*, *սառն*, *տիւ*, *տօթ*, *ցուրտ*, *քամի* և այլ գոյականներ ու որոշ փոխանուն ածականներ: Ասվածը հիմնավորենք բերված բառերով արտահայտջված նախադասությունների մեկական օրինակով՝ Եւ *ձմեռն է* ցուրտն նեղեր գնարմինն (ՎԱԱ): Ոնց որ *առաւօտ լինի՝* Գամ ի դուտ, ասեմ թէ՛ Արի՛ (Հ, 186): Եւ թէ *ձմեռն լինայ՝* ի կրակին տաքէն եւ ի մխեն պատրաստէ՛ (ԱԱՕԲ): Եւ յորժամ *գարուն լինայ*, հարաւ քամին շատնայ (ԱԱՕԲ): Եւ թէ *ամառ լինայ՝* հով տեղ նստի (ԱԱՕԲ): *Յաշունք էր, եղաւ գարուն*²⁰⁵, Ամ քանի՛ կենամք մեք ի քուն (Հ, 299): Այս գիշեր դուրս ելայ, Թուխ *ամպ էր* ՚ւ անուշ կու ցողայ (Հ, 197) ²⁰⁶: Եւ իբրեւ *երեկոյ եղել*, ել խաւսողն ի բարձր ծառ մի եւ թառեցաւ (ՎԱԱ): Յայս ժամուս, ի մեր մեղաց, Խիստ *սառն եւ ցուրտ էր* ի ձմռաց (ՄԲԳ): Եւ յորժամ եկն կախարդն, *գիշեր էր*. յեւ ոտն խաղեալ էր (ՎԱԱ): Եւ էր օրն կիրակի. եւ կամէր ճաշակել. եւ *էր այգոցն* (ՎԱԱ): Ես տղայ ու դուն տղայ, Սիրելուն *ատենն է* հիմայ (Հ, 112): Եւ *յորժամ ճաշք եղել*, եկեալ լուսաւոր այր մի (ՎԱԱ): *Շաքաթ էր, լուս կիրակի*, Որ կրակ տուին Երևան (Հ, 939): Եկ առ զպանիրն եւ կեր. *գի ուրբաթ է* (ՎԱԱ): Ոչ լսեցիք եւ ոչ լացիք ողբալով, երբ *ժամ էր լալոյ եւ ողբալոյ*. այլ [այժմ ժամ է] յիրաւանց եւ արդար դատաստանի. գնացէք յինէն անիծեալք ՚ի հուրն յախտենից (ՎԱԱ): Խաչատո՛ւր, զարթիր ի քնոյ, Ձի քեզ *ժամ է աշխարելի* (ԽԿ, 36): *Յորժամ որ առաւօտ լինայ*, Յեկեղեցին փութան նոքա (ՄԹ): Այս գիշերս *պարզ էր* եւ անձրեւ ոչ կայր (ՎԱԱ): Հրաման կուտամ ես ծաղկընուն՝ Փրոնէն տերն խիստ գուն ու գուն, Ձի է հասարակաց գարուն (ԿԵ, 138): Երկիր էր լի մութն ու մըլար, *Սառն էր կապել* և պաղ ու քար (ԿԵ, 132): *յերթալոյ ժամ է* (ԴԶ, 164): Յայսմ ժամանակի, *յորում էր թուական Հայոց ՊԼԶ*. (1387), ելաւ ազգն խուժադուժ յարեւելից, ի

²⁰⁴ ՄՀԲ-Ն չունի, ՆՀԲ-ն՝ *այգուց//յայգուց* ձևերով է վկայում:

²⁰⁵ Հմմտ. Աշունք էր, *եղև գարուն*, Ու քանի՛ խմենք մեք ի տուն (Հ, 250):

²⁰⁶ Հմմտ. Ես գիշերս ի դուրս ելայ, Թուխ *ամպեր*, անուշ կու ցողայ (Հ, 201): Գիշեր տիւս ելա, Թուխ *ամպը* անուշ կցողէր (Հ, 777):

կողմանց հիւսիսոյ, որ կոչէր Լանկ Թամուր, եւ եկն մինչեւ յԱրգրում (ՀՅ, 1387) և այլն²⁰⁷:

Լեզվական փաստերը վկայում են, որ վերոնշյալ մասնակաղապարով նախադասությունների գերադաս անդամի միադիմի բաղադրիչը գերազանցապէս արտահայտվում է *եմն լինիլ* եական բայերի՝

ա) սահմանական ներկայով (*է, լինի/լինայ, կու լինի*), որը, ինչպէս նկատում ենք, տարբեր աղբյուրներում կիրառվում է կա՛մ գրաբարատիպ, կա՛մ մասնիկավոր տարբերակով,

բ) սահմանական անցյալով (*էր, լինէր*),

գ) վաղակատար ներկայով (*եղեր է*),

դ) անցյալ կատարյալով, որը տարբեր կիրառություններում կարող է հանդէս գալ կա՛մ գրաբարատիպ, կա՛մ միջինհայերենյան տարբերակով (*եղև/եղաւ*),

ե) ըղձական ապառնիով (*կու լինի*), որից պարզ է դառնում, որ *կու լինի* բայաձևը տարբեր կիրառություններում կարող է արտահայտել թե՛ սահմանական ներկա, թե՛ ըղձական ապառնի ժամանակաձևերի քերականական իմաստ,

զ) գրաբարի ստորադասական եղանակի առաջին ապառնիով (*իցէ*):

Բերենք համապատասխան օրինակներ՝ Եւ թէ *ձմեռն լինի* եւ *ցուրտ խիստ՝ օձէ՛ խիրու* եւ պապունաճի ձեթ (ԱՍՕԲ): Եւթէ *ամառն լինայ՝* հով տեղեր նստի եւ շատ ի քուն չի լինիս (ԱՍՕԲ): Եւ թէ *ձմեռն լինայ՝* վառէ՛, որ սօթ շատ օգտէ (ԱՍՕԲ): Երբ *մութն կու լինի՝* նա կու լաննայ, երբ *լուս կու լինի՝* նա կու նեղնայ (ԱՍՕԲ): *Յաշունք էր, եղաւ գարուն*, Ամ քանի՛ կենամք մեք ի քուն (Հ, 299): Եւ *էր* ի թուականս մեր *884* (ԹՄԼԹ, 109): Եւ նայ ել յերեվայրն եւ գնաց. դեռ *գիշեր էր* (ՎԱԱ): Եւ նայ ի ծագել արեւոյն գարթեաւ. եւ էր սառնացեալ. *զի էր ձմեռն* (ՎԱԱ): *Դեռ գարունն չէ եղեր* Իմ կիւզելն ինձ վարդ է դրկեր (Հ, 279): Երթ հանգիր, *յերեկոյ եղաւ* (ՊՄԱՓԹ, 120): զի ի ձմերանի գրեցաւ եւ *ցուրտ էր* տանն (ՀՅ, 1380): Եւ *գիշեր ոչ եւս իցէ*, եւ ո՛չ է նոցա պիտոյ լոյս ճրագի (ՆԼ, 33, 73) և այլն:

²⁰⁷ Այսօրինակ նախադասություններ հանդիպում են նաև գրաբար գործերում՝ Եւ էր եղանակն ամառնային, և *էր սօթ յոյժ* (ԿԳ, 130): Եւ *էր* ժամ օր հասարակաց և *սօթ կարի յոյժ* (ՄՈՒ, 249): Հետաքրքրական է Թովմա Մեծոփեցու «*Եւ էին յաւուրս ձմերայնոք*» նախադասության կառուցվածքը (ԹՄԼԹ, 14):

Նշված մասնակադապարով միադիմի նախադասություններում գերադաս անդամի դերով հանդես է գալիս նաև *թուիլ* բայի՝ էական միադիմի բայի գործառույթով կիրառվող եզակի 3-րդ դիմային ձևը (*թուի*): Օրինակ՝ Եւ ի կողմանս, որ անդր է քան գճուսք, միշտ տիւ թուի (ԻՇ):

Հետաքրքրական է «Եւ յայսմ տարուջ ձմեռն խիստ սաստիկ ձիւն երեկ և չոր ցուրտ արար, որ ծովն պաղեցաւ ի յԸստամբօլ» (ԳՆ, 206) կառույցի ընդգծված նախադասությունը՝ արտահայտված ոչ թե չեզոք, այլ *առնել* ներգործական սեռի բայի եզակի թվի 3-րդ դեմքով: Հարկ է նշել, որ *անել* բայի մասնակցությամբ այսօրինակ նախադասություններ են գործածվում նաև ժամանակակից հայերենում, ինչի մասին նշում են նաև ուսումնասիրողները՝ *Հոկտեմբերի վերջին ցուրտ է անում: Ամռանը շոգ է անում*՝ և այլն²⁰⁸:

Քննելով ժամանակակից հայերենի միակազմ նախադասությունները՝ Գ. Ջահուկյանը գտնում է, որ նրանց՝ եզակի 3-րդ դեմքով գերադաս անդամը «կարող է լինել փոխարկական և ոչ փոխարկական տիպարի (*Յրտում է = Յուրտ է դառնում* և *Յուրտ է*), կրավորաձև (*Չի քնվում, Չի նստվում*) և ոչ-կրավորաձև (*Մթնում է, Լուսանում է*)»²⁰⁹: Միջին հայերենում միակազմ նախադասությունների՝ եզակի 3-րդ դեմքով գերադաս անդամը կարող է լինել փոխարկական և ոչ փոխարկական (*առաւօտանայ* և *առաւօտ լինի*): Ինչ վերաբերում է կրավորաձև և ոչ-կրավորաձև տեսակի գերադաս անդամներին, ապա դրանցից հանդիպում է միայն ոչ-կրավորաձև տեսակը՝ *մթնէր, լուսանայր*:

*Գալ*²¹⁰ բայով արտահայտված «Քեյ անչամ կը պախեմ Սօխում էրերում, Չիւմ կեայ լեռս առաւրտուն» (Հ, 778): «Եւ յորժամ որ գարունն գայ եւ հիւսիսոյ քամի փչէ խիստ շատ » (ԱՍՕԲ): «Եւ անձրեւ շատ գայ՝ եւ գիճուրթին այս եղանակիս զչորութիւն մարդուն խափանէ» (ԱՍՕԲ): «Եւ յորժամ ամառն գայ՝ նա լինայ սուր ջերմեր ի մարդն» (ԱՍՕԲ) և նմանատիպ այլ նախադասություններում ենթակա-ստորոգյալ քերականական հարաբերությունը մթագնված է, քանի որ *գալ* բայն այս դեպքում զրկվել է

²⁰⁸ Հմմտ. Վ. Առաքելյան, 1964, 24: Ս. Գյուլբուղայան, 1967, 59-60:

²⁰⁹ Գ. Ջահուկյան, 1974, 395:

²¹⁰ Հմմտ. Քե կը պախեմ սախում էրերում, Չում գայ լիւսիյն առաւուտուն (Հ, 809): Պահեմ սահուն՝ ւ երերուն, Մինչոր գայ լուսն առաւօտուն (Հ, 228):

իրեն բնորոշ արժույթի դրսևորման հնարավորությունից. ավելի շատ օժանդակ դեր ունի, քան թե շարահյուստրեն անկախ գործառույթ: Պատճառն այն է, որ բերված նախադասություններում այն իր երկրորդական նշանակությամբ է գործածվում: Լինելով ընթացք ցույց տվող և պարագաառությամբ եռարժույթ չէզոք սեռի բայ՝ *գալ* բայը, որպես կանոն, միաժամանակ կարող է պահանջել կամ ենթադրել սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաներից առնվազն մեկը: Մինչդեռ դիտարկումները ցույց են տալիս, որ *գալ*-ը այս կարգի նախադասություններում հազվադեպ է պահանջում տեղի պարագա, ընդ որում՝ ա) սկզբնակետի տեղի պարագան բացառիկ կիրառություն կարող է ունենալ, բ) անցման տեղի պարագա չի ենթադրվում, ուստի և չի պահանջվում, իսկ գ) վերջնակետի տեղի պարագայի փոխարեն ըստ անհրաժեշտության կարող է պահանջվել բուն տեղի պարագա: Այսպես՝ *ձյուն է գալիս* կապակցությունը, օրինակ, ձեռք է բերում «ձնում է//ձյուն է դնում» իմաստ): Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ *գալ* բայի միջոցով կազմված նախադասությունները բովանդակային առումով ավելի մոտ են միադիմի բայաձևերով արտահայտված միակազմ նախադասություններին, քանի որ նրանց գերադաս անդամը նույնպես պարագաառությամբ միարժույթ է և կարող է ենթադրել կամ պահանջել միայն բուն տեղի պարագա: Ասվածը նշանակում է, որ «Եւ *անձրել* պակաս *գայ*՝ գիտացի՛ր որ կնկտիքն եւ տղաքն ի յայս եղանակն հիւանդանան» (ԱՍՕԲ) նախադասության բովանդակության պլանում, օրինակ, *անձրև գայ* ոչ թե նշանակում է «*մի տեղից-մի տեղով-(դեպի) մի տեղ անձրև է գալիս*», այլ պարզապես նշանակում է «անձրե՛» (=անձրևում է), որը պարտադիր պարագաառությամբ միարժույթ է, քանի որ կարող է ենթադրել և/կամ պահանջել միայն բուն տեղի պարագա («ինչ-որ տեղ անձրևում է») այնպես, ինչպես որ *անձրևէ* բայաձևը կամ *անձրև է//լինի* կապակցությունը:

Ի տարբերություն գրաբարի, որի, այսպես կոչված, նկարագրական եղանակով արտահայտվող օղերնությանիշ միակազմ նախադասությունները լայն տարածում չունեին, միջին հայերենում նշված կարգի նախադասությունների տասնյակ լեզվական փաստեր են արձանագրվել, որոնք վկայում են բնության երևույթների շուրջ մեր ժողովրդի՝ տվյալ ժամանակահատվածի լեզվակիրների փոփոխվող պատկերացումների մասին: Բերենք ասվածը հիմնավորող այլ օրինակներ՝ կազմված դարձյալ *գալ* բայի

մասնակցությամբ՝ Ահա քեզ գիշեր *կու գայ*, Երազին դու գեշ տեսանես (Հ, 153)²¹¹: Եւ նոյնպէս որ ձմեռն հիւսիսոյ քամի լինի եւ *անձրեւ* եւ *ձուն չգայ* (ԱՍՕԲ): Առաւօտ ի վերայ երեկ, Լօք եղան երկու թուր Ի ի թուր (Հ, 172): Դէո *ամառն չէր եկած*, Նայ տվին ինձ վարդ մի հասած (Հ, 157): Երբ դու, որ յիսնէն ելար՝ *Ձիւն երեկ*²¹², եղեմն ի վրայ (Հ, 331): *Գայ ձմեռն* և ձիւն բերե, Անհանդերձ ցրտով նուաղիս (Հ, 456)²¹³: *Բ լուսանալ միուս օրին* (ՄԹ): *Բ լուսանալ օր կիրակի* (ՄԹ) և այլն:

Բերված կարգի կառույցները բովանդակության պլանում համարժեք են նաև *լինիլ* բայի *լինի//լինա* ձևերի մասնակցությամբ արտահայտված կառույցներին, որոնք նույնպես միակազմ են և պարտադիր պարագառությամբ՝ միարժույթ: *Հմտ. Երբոր առաւօտանայ //Երբոր առաւօտն գայ //Երբոր առաւօտ լինա , Մինչոր լուսանայ //Մինչոր լուսն գայ //Մինչոր լուս լինի* և այլն:

Թե՛ օդերևութանիշ միադիմի բայաձևերով, թե՛ «օդերևութանիշ կամ ժամանականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները գործածվում են օդերևութի փոփոխություն, օրվա կամ տարվա ինչ-որ ժամանակահատված (և այլն) նշելու նպատակով և սովորաբար հանդիպում են այն ստեղծագործություններում, որոնցում առկա են բնության նկարագրություններ՝ ըստ անհրաժեշտության գործածվելով նաև այլ բովանդակությամբ աղբյուրներում, ինչպես, օրինակ, Ամասիացու բժշկարաններում և չափածո ստեղծագործություններում, մասանավորապես՝ հայրեններում:

2. «ԻՐԱԿԻՃԱԿԱՆԻՇ ԲԱՌ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավիճականիշ անկախ միադիմի կառույցներով նկարագրվում են իրականությանն առնչվող տարբեր վիճակներ, իրադրություններ, իրողություններ և այլն, ինչպես՝ Կայր աղքատ մի եւ ունէր շուն մի. *եւ սով էր* եւ ոչ

²¹¹ Հմտ. *Գիշեր է դառնում*, և գիշերվա հետ որսի են դուրս գալիս Մթնածորի բնիկները (ԱԲ1, 12):

²¹² Հմտ. – Խօշ եա՛ր, ամ գդուռն բա՛ց, *Ձիւն եկէր*, ոտվիս կու մըսի (Հ, 312):

²¹³ Նույնը նկատելի է նաև «Բարի-լուսը բարով *գայ*, Մութն երթայ ու լուսը *գայ*» (Հ, 768) կառույցի բաղադրիչ նախադասություններում, որոնցում ակնհայտ է *գալ-երթալ* հակադրությունը:

կարաց պահել եւ ոչ սպանանել (ՎԱԱ): Ապա ի յԱմթայ կէս աուր հողէն որ ի դուրս ելանես, *մինչ ի մեծ քաղաքն Ստամբոլ աւերութիւն է*, ուր ուրեք գտանի շինութիւն (ԱԴՊ): Զի այս գիշերս *տաւն է* (ՎԱԱ)²¹⁴: Երեք աղանի բըննեց – Օրըն *պաք էր՝ չորեքշաբթին* (ԹԼԿ, 910)²¹⁵:

Իրավիճականիշ անկախ նախադասությունների գերադաս անդամներն արտահայտվում են՝ «իրավիճականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով: Գերադաս անդամի բայական բաղադրիչը սովորաբար արտահայտվում է *եւ*, *լինիմ* բայերի միադիմի ձևերով: Օրինակ՝ Եւ խաղաղութեամբ ելեալ գնաց, զի *միաբանութիւն էր ի մէջ Պարսից եւ Վրաց* (ՎՎՀՊ): Եւ *եղիցի սէր եւ խաղաղութիւն, եւ երթելեկութիւն ի մէջ ազգին Պարսից եւ Վրաց* (ԱԴՊ): *Տարածամ մահ է*, եւ առաւել տղայոց (ՀՅ, 1379):

Որպէս գերադաս անդամի անվանական բաղադրիչ՝ այս նախադասություններում միադիմի բայաձևերի հետ սովորաբար գործածվում են վերացական, հազվադեպ՝ թանձրացական իրանիշ գոյականներ, որոնցից են՝ *առատութիւն, աւերութիւն, բարկենդան, լիութիւն, խնդումն, խռովութիւն, միաբանութիւն, պաք, տաւն, սով, սուգ, տարաբեր, տրտմութիւն* և այլն: Օրինակ՝ Եւ լուեալ եթէ *սով է ի Պաղեստին*, թողին զգօրսն առ Աբգար (ՎՎՀՊ): Եւ *էր նոցա աւուրք* ուրախութեան իբր լուսին մի (ՎՎՀՊ): Եւ *քրիստոնէիցն էր մեծ սուգ*²¹⁶ *եւ տրտմութիւն՝* զի քրիստոնէից թագաւորութիւնն անկաւ (ԱԴՊ): *Բարկենդան է*, մի՛ մեղադրէք, Զինչ որ ասեմ, ի վեր չառնէք (ՄԹ): Է *ինձ խնդումն այսօր*, որ զձայնըդ լուայ (ԽԿ, 24): *Յաշխարհին Հայոց ամենայն բարեաց լիութիւն եւ առատութիւն է* (ԱԴՊ): Եւ *յերկ-*

²¹⁴ Բերված նախադասության *գիշերս* անդամը այլ մոտեցմամբ կարելի է համարել ենթակա: Հմմտ. *այս գիշեր Տոն է* հոգվույս՝ *Կիրակի*, համբույրներ կուգան հովեն ու ծովեն (ՄՄ, 7):

²¹⁵ Վերջին նախադասության *օրն* անդամը ոչ թե ենթակայի, այլ ժամանակի պարագայի գործառույթ ունի: Հմմտ. Այսօր է մեզ օր խընդման (ՆՍ, 916) նախադասությունը, որում նույնպես գերադաս անդամն արտահայտված է «անուն+միադիմի բայաձև» մասնակաղապարով (*օր է*): Նույնը չենք կարող ասել «Ելա, յայս քաղաքս եկա, Լօք *եղաւ օրիկս երիկուն*» (Հ, 234) կառույցի ընդգծված նախադասության մասին, որում *օրիկս* ենթակայի գործառույթ է կատարում:

²¹⁶ Հմմտ. Եւ *սուգ մեծ եղև* ամենայն Հայոց (ԹՄԼԹ, 22): Եւ *խաւարումն եղև* աշխարհիս Հայոց (ԹՄԼԹ, 16):

իրն այն էր սով եւ իժ եւ օձ եւ նեղութիւն (ՎԱԱ)²¹⁷: Եւ եղև խռովութիւն և տարաբեր²¹⁸ թշուառացեալ ազգիս Հայոց (ԺԵ, 337) և այլն:

Թեև միջին հայերենում առկայացման և անառկայացման քերականական իմաստները արտահայտության պլանում դեռևս հստակորեն տարբերակված չեն (*ն* որոշիչ հոդը գործածվում է, սակայն ոչ միշտ, իսկ *ը*-ն դեռևս կանոնավոր շրջանառություն չունի), և մինևս այն անշանակիր բառաձևով կարող է արտահայտվել թե՛ որոշյալության և թե՛ անորոշության քերականական իմաստ, այսուհանդերձ, ինչպես վկայում են վերոբերյալ լեզվական փաստերը, իրավիճականիչ անկախ միակազմ նախադասությունների գերադաս անդամի անվանական բաղադրիչը գերազանցապես արտահայտում է անառկայացման քերականական իմաստ՝ ի հակադրություն առկայացման քերականական իմաստ արտահայտող իրավիճականիչ նախադասությունների, որոնք ունեն սահմանափակ գործածություն, ինչպես՝ *Ջկնի նոյն կիրակէին յետագայ երկուշաբաթոջ աւուրն Դաւթի մարգարէին եւ Յակովբայ Տէառն եղբօրն էր տօն* [=տոնն էր-Գ.Խ.] *և յերեքշաբաթոջն աւուր Ստեփաննոսի նախավկայիին էր տօն* [=տոնն էր-Գ.Խ.] (ԱԴՊ):

Միջինհայերենյան աղբյուրներում իրավիճականիչ միադիմի նախադասությունները սակավաթիվ են, ինչը, կարծում ենք, չի նշականում, թե նմանատիպ կառույցները միջին հայերենին խորթ լեզվական իրողություն էին: Վարդան Վանականի «Հաւաքումն պատմութեան» երկից մինչև Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն» երկն ընկած ժամանակահատվածում (13-17դդ.) «իրավիճականիչ բառ-միադիմի բայաձև» մասնակազմապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ գործածվում են պատմագրական երկերում, ժամանակագրություններում՝ ավելի հաճախ ծառայելով որպես խոսքի ոճավորման միջոց: Օրինակ՝ Եւ յորժամ թաղեցին զթագաւորն եւ զակն այլ ո՛չ գտին եւ յոյժ տրտմութիւն էր վասն ակին (ՎԱԱ): *Վասն զի յաւուրս տորա անհաշտ խռովութիւն էր ի մէջ Պարսից եւ Օսմանցոց* (ԱԴՊ): *Յայնմ ժամանակի եղև սով սաստիկ*, մինչև կե-

²¹⁷ Հմմտ. Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ *եկն սով սաստիկ յաշխարհս մէր* (ԹՄԼԹ, 36):

²¹⁸ Բառս ՆՀԲ-ում վկայվել է որպես ածական, սակայն միջին հայերենում ձեռք է բերել գոյականի արժեք:

րան և ընդ գարշելիս՝ զփմեանս (ՄԱԺ, 316): Ի սոյն ամի եղև ահագին և անասելի սով սաստիկ (ՅՎՀՊ, 73): Նշված կարգի կառույցներ հանդիպում են նաև հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, որոնց հեղինակները այլևայլ հանգամանքներին զուգահեռ երբեմն անդրադառնում են նաև այն դժվարին իրավիճակներինը, որոնցում կյանքի են կոչել իրենց հայրենանվեր ձեռնարկումները, ինչպես՝ *Եւ յամէն արբ սաստուածասաստ բարկութիւն, ու կոբի, ու արիւնահեղութիւն էր ի վերայ քրիստոնէիցն* (ԺԵ, 3, 329): *Նա՛ վասն մեր բազում մեղացն ի հոս մեծ սով եղև* (ՄԹ, 129) և այլն:

3. «ՀՈԳԵՎԻՃԱԿԱՆԻՉ ԿԱՍ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՆԻՉ ԲԱՌ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՍ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդկային ապրումներ, զգացողություններ, վերաբերմունք, սպա-վորություններ են արտահայտվում նաև «հոգեվիճականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով գործածվող միադիմի նախադասությունների միջոցով: Օրինակ՝ Իմ եարն ինձի հիւր երեկ, *Յէյնէ կ' է գիս՝ ւ յէյնէ կ' էլի* (Հ, 149):

«Հոգեվիճականիշ կամ վերաբերմունքանիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով միադիմի նախադասություններում բաղադրյալ գերադաս անդամների անվանական բաղադրիչի գործառույթ են կատարում բայանուններ, մասնավորապես՝ *դիժար//դժար, ծածուկ, հեշտ, փոյթ* գոյականներն ու ածականները, որոնք ցույց են տալիս հոգեվիճակ²¹⁹, ինչպես՝ *Եւ այս գրքիս ձեւն խիստ աղէկ եւ հաւնելու է, եւ կարդացողին դժար եւ ծածուկ չի լինիր* (ԱԱՕԲ): *Եւ չէ քեզ փոյթ վասն աշխարհի, Զի դու վարձկան ես քո շահին* (ԱԱ, Զ, 108):

Այս շարքից բացի՝ հիշյալ կարգի կառույցներում հանդիպում են նաև *երանի ~/յերնէ կ', վա յ, վա շ* ձայնարկությունները, որոնք իմաստով առնչվում են բայանուններին, սակայն ցույց են տալիս զգացական վերաբերմունք: Օրինակ՝ *Եւ զի՞նչ է նայ եւ զի՞նչ է ուժ նորայ*, զի փախչիք ՚ի նմանէ. եւ նոքայ ասեն. թէ գայ տեսնու գքեզ, *վայ լինի քեզ* (ԿԱԱ)²²⁰: Այս անցաւոր կեանքս անցանի, *Համբերողաց է երանի* (ՄԱՐԳ, 410):

²¹⁹ *Ծածուկ* բառն այս շարքում գետեղել ենք պայմանականորեն:

²²⁰ Հմմտ. գրաբ. *Վայ է նոցա*, զի ըստ ճանապարհին Կայենի գնացին (ՄԳ): Եւ ասեմ. *վայ է ինձ*, ես այր տառապեալ, զի՞ արդ կամս հիացեալ (ՄԳ):

«Հոգեվիճականիշ կամ վերաբերմունքանիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով գործածվող միադիմի նախադասություններում բայական բաղադրիչի դերով հանդես են գալիս էական բայերի եզակի 3-րդ դիմային ձևերը՝ միադիմի նշանակությամբ, մասնավորապես՝

ա) *եւ* բայի սահմանական ներկայի և անցյալի, համապատասխանաբար, *է* և *էր* բայաձևերը, ինչպես՝ Եւ նա ծիծաղելով ասէր «Աստուած արար. զի՞նչ *վոյթ* է ինձ. թող չէր տուեալ զոոսա ի ձեռս իմ և ոչ ձիւն յերկնից առաքեալ» (ԹՄԼԹ, 105): Եւ համբուրեաց թագաւորն զվաճառականսն եւ ասէ. *վաշ է* ձեզ, ընդ նեղ ճանապարհն եկիք (ՎԱԱ): Եւ *երանի էր* տեսողացն և լսողացն (ԹՄԼԹ, 39),

բ) *լինիլ* բայի՝ միադիմի նշանակությամբ որոշ ձևեր (*լինիլ//լինայ, կու լինի*), որոնք արդեն ոչ թե սահմանական ներկայի, այլ ըդձական ապառնու քերականական իմաստով են գործածվել՝ ըստ էության լրացնելով *եւ* բայի պակասավորությունը՝ Գընա՛յ, համբեր տուր սըրտիս, Թէ չէ՛քեզ դիժար *կու լինի* (Հ, 594): Եւ զայս ամէնն հաւասար ի կերպ պիտի բերեմ եւ ցուցանեմ, որ *կարդացողին* եւ ուսանողին հեշտ *լինի* (ԱՍՕԲ):

«Հոգեվիճականիշ կամ վերաբերմունքանիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող նախադասությունների կազմում (որպես պարտադիր բաղադրիչ) առկա է տրականով արտահայտված հանգման խնդիր՝ ա) որը ուժեղ կառավարմամբ հանդես է գալիս ոչ թե միադիմի բայաձևի, այլ բայանուն բաղադրիչի պահանջով, բ) որին վերաբերում է գերադաս անդամով արտահայտված հատկանիշը՝ Ապա վարդապետ կու լինի. զաղէկն եւ զվատն գիտենայ եւ ուսանի, թէ ո՛րպէս պետ կառնեն, եւ ապա *նորա* հեշտ կու լինի (ԱՍՕԲ): Ընդգծված հանգման խնդրի արտահայտության պլանի առնչությամբ նշենք, որ այն ոչ թե անհետևողականության դրսևորում է, այլ միջին հայերենում *նա* անձնական դերանվան հոլովմանը բնորոշ դրսևորում: Բանն այն է՝ *նա* անձնական-ցուցական դերանունը միջին հայերենում պահպանել է ոչ միայն գրաբարյան *նա* տրականը, այլև արտահայտվում է նաև *նորա* (միջինհայերենյան տարբերակը՝ *նարա*)²²¹ զուգաձևով, որով գրաբարում և միջին հայերենում

²²¹ Պ. Վարդապետյան, 1975, 96: Բերված լեզվական փաստը վկայում է այն ժամանակահատվածի մասին (15-րդ դ.), երբ սեռականն ու տրականը դարձել էին քերականական համանուններ (*նորա*), և դրանց տարբերակման խնդիրը լուծվեց

արտահայտվում էր սեռական հոլովը²²²:

Կախված նախադասության բովանդակությունից՝ հանգման խնդիրը կարող է արտահայտվել ոչ միայն բոլոր դեմքերի անձնական դերանունների, այլև գոյականների ու փոխանունների տրականով: Օրինակ՝ Նայ կըկզեալ վայեր գանձն իւր եւ լալով ասէր. վայ է *ինձ*, թափեցայ յագոյս եւ ձուկն ոչ ըմբռնեցի (ՎԱԱ): Երանի է *ձեզ*, ով իմաստուն այծեր. զի դուք ուրախ առնէք զմարդիք բազում բարութեամբ ձերով (ՎԱԱ): Վայ է *անցա* (ՎԱԱ): Եւ ի մէկ երեսն գտաքէ եղածն է գրած եւ ի մէկ այլ երեսն գպաղէ եղածն է գրած, որ *կարդացողին* հեշտ լինայ (ԱԱՕԲ): Յայնժամ ասէ գայլն. երանի՛ էր իմ *աչացա*²²³, որ տեսանէի, թէ այծն գայր եղջերովն՝ զիմ փորն պատառէր (ՎԱԱ) և այլն: Դժվար չէ նկատել, որ տրականով հանգման խնդիրը այս կարգի նախադասությունների բովանդակության պլանում անուղղակիորեն կատարում է ենթակայի դեր:

Միջինհայերենյան իրողություն է և այն, որ անգամ նույն հեղինակն է հանգման խնդիր գործածում մի դեպքում տրական, մյուս դեպքում՝ հայցական հոլովով: Հմնտ. Եւ ասէ. հազար *վայ զիս* եւ շատ *աւաղ է*, որ չկայ ի հետս (ՎԱԱ) և Եւ ասէ գալն. *վայ է ինձ*. զի նեղիմ չարայչար (ՎԱԱ):

Մեզ հայտնի լեզվական փաստերը վկայում են, որ՝

ա) խնդրո առարկա նախադասությունները, ըստ գերադաս անդամի արտահայտության պլանի, սովորաբար դրական (կամ հաստատական) կառույցներ են,

բ) հոգեվիճականիչ բառերի մասնակցությամբ կազմված կառույց-

տրականը միշտ գործածելով որոշիչ հոդով (*նորան*): Հմնտ. հետևյալ կառույցների, համապատասխանաբար, սեռականով և տրականով արտահայտված անդամները՝ Ոսկունքս առ ու դիր արի, Թէ մտնեմ ի ծոցըն *նորա* (Հ, 99): Հետ հոգոյն ամ ո՞վ թոչի, Երբ *նորայ* տունն հեռի է (Հ, 352) և էյնէկ ես *նորա* կու տամ, Որ լինի երկու սէրըն նոր (Հ, 45): Երնէկ ես *նորայ* ասեմ, Որ յաշխարհս ի սուգ կու կենայ (Հ, 395): Հարցուկ ես *նորան* եղայ. Թ՛ «Ի՞նչ կանես, այդ քեզ ի՞նչ տեղի» (Հ, 919):

²²² Կարծում ենք, որ «Եւ յորժամ որ բժիշկն կամենայ երակ բռնէ՝ այսպիսի խրատնին պիտի որ ի միտքն պահէ, որ երակ բռնելուն ժամն իրենն հեշտ լինի աստուծով» (ԱԱՕԲ) կառույցի ընդգծված նախադասությունը նույնպես միակազմ է, քանի որ Ամասիացին հայցական հոլովով արտահայտված ժամանակի պարագան սովորաբար գործածում է առանց նախդրի:

²²³ Հմնտ. գրաբ. Երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ (ՄԳ): Զվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ. եւ բարի եղիցի (ՄԳ):

ներում գերադաս անդամի շարահյուսությունն արտահայտվում են *հանգման խնդիր-հոգեվիճականիշ բառ-միադիմի բայաձև* շարադասությամբ,

գ) վերաբերմունքանիշ բառերի մասնակցությամբ կառույցներում գերադաս անդամի շարահյուսությունն ունեն *վերաբերմունքանիշ բառ-միադիմի բայաձև-հանգման խնդիր* շարադասություն՝ չհաշված ոճական լուծումները:

«Հոգեվիճականիշ կամ վերաբերմունքանիշ բառ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները նույնպես, ինչպես հոգեվիճականիշ միադիմի բայաձևով արտահայտվողները, միջին հայերենում աչքի են ընկնում սահմանափակ գործածությամբ և սովորաբար հանդես են գալիս ոչ թե որպես անկախ նախադասություն, այլ բարդ կառույցների կազմում:

4. «ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱՁԵՎ+ԱՆԴԵՄ ԲԱՅ» ՄԱՍՆԱԿԱԴԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱԽ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում առանձնանում է «անդեմ բայ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունների չորս տեսակ՝

4.1. «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ,

4.2. «անորոշ դերբայի սեռական հոլովաձև+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ,

4.3. «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ,

4.4. «հարակատար դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ:

4.1. «ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎԱՁԵՎ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱՁԵՎ» ԵՆԹԱՄԱՍՆԱԿԱԴԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱԽ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում անկախ միակազմ նախադասությունների մի խումբ արտահայտվում է «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական

հոլովաձև» ենթամասնակադապարով: Օրինակ՝ Եւ ի ըոզակն այն է, որ հրամայէ բժիշկն, թէ այսպիսի իրք *առնուլ կու պիտի* (ԱՍՕԲ): Բայց *տեսնուլ պիտի եւ փնտռել եւ իմանալ* զմտնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամեն կերպ (ՄՄԴ): Երկու ցեղ սէր կայ ի հօս, Ջայս աղուոր *գիտնալ կու պիտի* (Հ, 509): *Ատոր ի նչ խածնել պիտի*, Ատի մեր կրակ է վառած (Հ, 165): Այժմ *ոչ լիցի ասել խուժ եւ լսել դուժ*, այժմ *ոչ լիցի* միոյն *ընթեռնուլ* և միւսոյն *մեկնել* (ՎՎԲԳ, 380):

«Միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասություններով նկարագրվում են անդեմ բայերով (տվյալ դեպքում՝ անորոշ դերբայի ուղղական հոլովով) արտահայտված գործողություններ: Օրինակ՝ Բայց՝ զինչ ցեղ եւ է՝ *զեկեղեցոյն քաւութիւնն առնուլ պիտի*, վասն զի արինհեղութիւն է (ՄՄԴ): Երակ մեզ *հայիլ պիտի* Յայն արնն, որ լոյս ծագէ (Հ, 483)²²⁴: Եւ զհիւրնդին գոզն յայնժամ *առնուլ կու պիտի*, որ ի քնուն զարթի, դեռ կերակուր կերել չի լինի ԱՍՕԲ)²²⁵ և այլն: Ասել է՝ նշված ենթամասնակադապարով միակազմ նախադասությունների՝ անորոշ դերբայով հանդես եկող բաղադրիչն արտահայտում է գերադաս անդամի հիմնական իմաստը, իսկ նրա հետ գործածվող միադիմի բայաձևը, որպէս կանոն, եղանակավորում է անորոշ դերբայով արտահայտված գործողությունը, ինչպէս՝ Յառաջն զանձն *յիստկել պիտի* ի խառնվածոց (ԱՍՕԲ): Ջբերդտուքն եւ զայնպիսիքն անհնար *պիտի սպաննել* (ՄՄԴ): Այն սէրն, որ ճորով լինի, Կրակով զինքն *էրել պիտի* (Հ, 511): Եւ այս ի խնամոցն Աստուծոյ *պիտի իմանալ* (ՄՅՀԶ, Ա, 975):

²²⁴ Հմմտ. «Աւս դ, մեզ *հայել* պիտի Յայն արնն, որ լոյս կու ծագէ» (Հ, 489) կառույցը, որում կատարվել է լծորդ ձայնավորի *h>ե* փոփոխություն:

²²⁵ Միջին հայերենում վաղակատարը ոչ միայն ձևակազմիչ դերով է հանդես գալիս, այլև անկախ, ինչի մասին վկայում է *կերել չի լինի* կրկնաբաղադրյալ բայաձևը, որի վաղակատարն արտահայտում է հարակատար դերբայի քերականական իմաստ («կերած չլինի» նշանակությամբ): Հմմտ. նաև՝ Եւ թէ *գողցել լինայ* ի նիւթոյն՝ նա դարձցնէ, եւ դատվի զեղ գող՝ զինչ, որ հրամայած է վասն գողերոյն (ՄՄԴ): Ս. Անթոյանը նշում է նաև վաղակատար դերբայի՝ որոշի դերակատարության մասին, ինչը նույնպէս անկախ լինելու նշան է: Ի դեպ, նա բերում է այդպիսի ընդամենը երկու վկայություն, երկուսն էլ՝ *տառպել* վաղակատարով, որոնց հավելում ենք մեր առանձնացրած վկայությունը՝ *այրել* բայի *այրեցել* վաղակատարով՝ «Քանի՞ զին *այրեցել* սիրտս արունես»:

Միջին հայերենի լեզվական աղբյուրներում «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադասարով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունների գերադաս անդամի կազմում եղանակավորիչ բայի դերով հանդես են գալիս *պիտիմ*, *պիտենամ* պակասավոր բայերի, համապատասխանաբար, *պիտի*, *կու պիտի*, *պիտեր* և *կու պիտենայ*, ինչպես նաև *եմ*, *հասանել*, *պարտել*, *վայ(ե)լել* բայերի միադիմի ձևերը: Օրինակ՝ *Միրել պիտի* գայն կօզալն, Որ դընջիկն է գետ կարագ եղ (Հ, 242): Ատոր ի՛նչ խածնել պիտեր, Ատի մեր կրակն է վառած (Հ, 198): Մանկդաթևին պիտի խղճալ, Ինքն չկարեր նստիլ ի վայր (ԿԳԹ, 252): Թէ չարկամ չի կենայ՝ այն սլեհն ի յայն տունն մնայ, եւ ի ժիր գայն սլեհինն *աշել կու պիտի եւ պահել* աւուր մն պիտեւան (ՄՄԴ): Եւ այն երակն, որ գմատդ ի վերայ պինտ *դնել կու պիտենայ*՝ այն ալ Բ ցեղ է (ԱԱՕԲ)²²⁶ և այլն:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, խնդրո առարկա նախադասություններում եղանակավորիչ բաղադրիչի գործառույթով գերազանցապես հանդես են գալիս *պիտիմ* բայի միադիմի կիրառությունները, մինչդեռ *եմ*, *հասանել*, *պարտել*, *պիտենամ* և *վայ(ե)լել* բայերի միադիմի ձևերի գործածության բացառիկ դեպքեր են առկա: Նշված հանգամանքով է պայմանավորված այն, որ «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադասարով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները բնութագրելու համար հետագա շարադրանքում գերազանցապես անդրադառնում ենք այն նախադասությունների ընձեռած լեզվական փաստերին, որոնց գերադաս անդամի կազմում որպես եղանակավորիչ գործածվում են *պիտիմ* բայի *պիտի* և *կու պիտի* միադիմի ձևերը, որոնք, ըստ էության, համանիշներ են: Բնավ պատահական չէ, որ միևնույն քերականական իմաստը արտահայտելու համար նշված բայաձևերը զուգահեռաբար կարող են հանդես գալ անգամ միևնույն բարդ կառույցի կազմում: Օրինակ՝ Եւ քանի որ չորնայ՝ *քերել կու պիտի*, եւ զամէն մէկն յիր տեղն *գտնուլ պիտի եւ այնել* (ԱԱՕԲ): Սահակն ասէ, թէ զբարկանալն *կու պիտի խաղեցնել. եւ մտել* ի բաղնիս եւ յեղկ ջուրն *պիտի*

²²⁶ Հմմտ. «Եւ այլ զօրաւոր դեղեր *չի պիտենայ*» (ԱԱՕԲ) կառույցը, որի *պիտենայ* բայաձևը հանդես է գալիս ոչ թե որպես միակազմ նախադասության գերադաս անդամ, այլ երկկազմ նախադասության ստորոգյալ:

նստիչ (ԱՍՕԲ) և այլն:

Հատկանշական է, որ «միադիմի բայածն+անորոշ դերբայի ուղղական հոլովածն» ենթամասնակադասարի բաղադրիչներից մեկը՝ միադիմի բայածնը, որն առանձին արտահայտում է սահմանական ներկա (օրինակ՝ *պիտի/կու պիտի*) կամ սահմանական անցյալ (օրինակ՝ *պիտէր/կու պիտէր*) ժամանակաձևի քերականական իմաստ, իսկ մյուսը՝ անդեմ բայը՝ ժամանակի հասկացությունից դուրս անորոշ գործողության գաղափար, միասին արտահայտում են, համապատասխանաբար, խոսելու պահից հետո կամ առաջ կատարելի գործողության իմաստ: Հմնտ. Եւ թէ ծաղկունք են, որպէս մանուշակն, եւ նոճէսն, եւ զանպախն, եւ որ սոցին նմանէ, ան ատենն *ժողվել կու պիտի*՝ որ լման հասնի (ԱԱ) և *Այտոր ջանք պիտէր դրնել*, Որ այս բարոյս ես տիրանամ (Հ, 892):

Ե՛վ արձակ, և՛ չափածո ստեղծագործություններում այս խմբի միակազմ նախադասությունների բաղադրյալ գերադաս անդամների *պիտի* (*պիտէր, կու պիտի*) եղանակավորիչը սովորաբար հաջորդում է անորոշ դերբային (*անորոշ դերբայ-միադիմի բայածն* շարադասություն)՝ Ասէ Գեղիանոս, թէ...քիչ մն ի վերայ կերակրին *շուրջ գալ կու պիտի*, եւ օգտե պեղծ խառնվածոցն (ԱՍՕԲ): Եւ *պատրաստել պիտի* եկեղեցւոյն յայստեղս, որ բարեգործութեան բանն ի չար չղառնայ (ՍՄԴ): Բայց՝ զինչ ցեղ եւ է, արեան պարտական է, եւ *սահմանել պիտի* որ քաւէ (ՍՄԴ): Եւ զանձն *սրբել կու պիտի* որ ի հիւանդութենէն խալսի ԱՍՕԲ): *Միրել պիտի* զայն ծաղիկն, Որ յօձուն բերանն է բուսել (Հ, 215): *Չարին համբերել պիտի*, Ինչօր զայ բարին հասանի (Հ, 177): *Օծել պիտի* այս դեղովս (ԱՍՍ):

Լեզվական աղբյուրներում, սակայն, հանդիպում են նաև *միադիմի բայածն-անորոշ դերբայ* շարադասությամբ որոշ դեպքեր: Ասվածը վերաբերում է և՛ *կու պիտի*, և՛ *պիտի* եղանակավորիչներով կազմություններին, որոնք հետագայում դառնում են օրինաչափ: Օրինակ՝ Ապա յայրկանն հայրենեստներոյն վերայ էլ *պիտի հայել ու տնտղել*, թէ վասն ինչ իրաց կու ուզէ ժառանգ (ՍՄԴ): Բագարատ ասէ, թէ իր ստածումն Բ ցեղ է. պէտ *կու պիտի այնել* եւ զմիտքն ստածել, եւ Բ զանձն ստածել ԱՍՕԲ): Յում որ *պիտի շատ սպրիչ*, Թող խելօք կենայ, թէ պիտի (Հ, 272): Բայց եւ

գտղան այլ *պիտի մկրտել*, երբ ծնանի (ՄՄԴ)²²⁷: Եւ զկերակուրն եւ զրմպե-
լին չափաւոր *պիտի այնել* հանց որ ի յառաջն յիշեցի (ԱԱՕԲ)²²⁸:

«Անորոշ դերբայի ուղղական+միադիմի բայաձև» ենթա-
մասնակաղապարի բաղադրիչների շարադասության անմիօրինակու-
թյունը նկատվում է անգամ նույն բարդ կառույցում: Դա, պարզ է, պայմա-
նավորված է վերջինիս՝ չափածո խոսքում գործածված լինելու հանգա-
մանքով. առաջացել է բանատողի հանգավորման անհրաժեշտություն.

Շատ մարդ է մեռել սիրուտ, Կու վախեմ, թէ մեռնիմ ես *այ*,

Մեննիլ պիտի, չի կայ ճար, Զայս հոգեկս ի քեզ *պիտի տալ* (Հ, 156):

Վերլուծական կազմությամբ անորոշ դերբայների հետ (օրինակ՝
թարկն տալ) եղանակավորիչը հանդես է բերում անմիօրինակ շարադա-
սություն՝

ա) մի դեպքում գործածվելով հարադրի և բայական բաղադրիչի մի-
ջև, ինչպես՝ Սրտիկս ալ ի յիս ասաց, Թէ անոր *թարկն պիտի տալ* (Հ, 156),

բ) մյուս դեպքում՝ վերլուծական բարդությունից հետո՝ Վասն այն
խոստումն տալ պիտի ըստ սաղմոսին (ՎԱԱ):

«Միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթա-
մասնակաղապարով արտահայտվող նախադասությունների կազմում
պիտի, *կու պիտի*, *կու պիտէր* և *կու պիտենայ* բայաձևերը առանձնանում
են գործածության տարբեր հաճախականությամբ և հանդիպում են միջին-
հայերենյան ոչ բոլոր աղբյուրներում: Ամիրդովլաթ Ամասիացին, օրինակ,

²²⁷ *Պիտի* բայաձևը միննույն բարդ կառույցի առաջին նախադասության մեջ
գործածվել է որպես երկկազմ նախադասության գլխավոր անդամ, իսկ երկրորդ
նախադասության մեջ ենթադրվում է որպես միակազմ նախադասության զեղչված
զերադաս անդամ՝ Եւ ի յայտ տեղդ մեծ փնդռաղուրթին *պիտի*, եւ [*պիտի-Գ.Խ*] *հա-
յիլ* ի կտրճին ուժն ու ի յաղչկնին (ՄՄԴ):

²²⁸ Դիտարկումներից պարզվում է, որ *անցյալ դերբայ-միադիմի բայաձև* շարա-
դասությամբ կապակցությունները առավել հաճախադեպ են, ինչպես՝ Թէ վարդ
կուգես *քաղել պիտի*, Սալայմատհայ վու ջարի խար (Հ, 960): Զօրն *աղաչել պիտի*
զԱստուած, Որ գիտութեան հոգի մեզ տայ (Հ, 894): Մէրն որ դըրամով լինի՝ Զինք
երել պիտի կըրակով (Հ, 176): Յուցանէ առակս, թէ զմարդն *փորձել պիտի*, որ նեն-
գաւոր չէ լինի աւճու պէս եւ ապայ սիրելութին դնել ի հետն (ՎԱԱ): Յուցանէ ա-
ռակս, թէ *յանդիմանել պիտի* զթագաւորն եւ զառաջնորդն եւ զդատաւորն յերեսն,
թէ էլանիցեն յիրաւանց եւ թիրին յարինաց եւ ի կամացն տեառն (ՎԱԱ): Կասէ,
թէ՝ «Բաժակ է այս, Բաժակիս այս *խսել պիտի*» (Հ, 520) և այլն:

մեզ հայտնի երկու բժշկարաններում դրանք գործածում է՝ առաջնահերթությունը տալով, սակայն, *պիտի* բայաձևին: Թեև Սմբատ Սպարապետի լեզվամտածողությանը խորթ չեն *կու* մասնիկավոր կազմությունները [օրինակ՝ Ապա թե որ հանդգնի եւ խալապայ շարժե՝ նա *կու հրամայե* արեմքս, որ ձգեն զինք ի դուրս յեկեղեցոյն (ՄՄԴ)], սակայն նա *կու պիտենայ* և *կու պիտի* բայաձևերն առհասարակ չի գործածում որպես միադիմի բայաձև, այլ ունի միայն *պիտի* բայաձևով ու անորոշ դերբայի ուղղականով արտահայտված անկախ միադիմի նախադասություններ, ինչպես՝ Բայց եւ գողան այլ *պիտի մկրտել*, երբ ծնանի (ՄՄԴ): Բայց՝ զինչ ցեղ եւ է, արեան պարտական է, *եւ սահմանել պիտի* որ քաւէ (ՄՄԴ): *Պիտէր* սահմանական անցյալով արտահայտված եղանակավորիչներն առանձնանում են սակավ գործածությամբ՝ Աւա՛դ, թէ *մեռնիլ պիտէր* Եւ *մտնուլ ի հող ՚ի զնտան* (Հ, 171):

«Միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով նախադասությունները կարող են լինել դրական (կամ հաստատական) կամ ժխտական (տվյալ դեպքում՝ լիակատար ժխտում), որոնցից առաջինները՝ ա) նկատելիորեն հաճախադեպ են, բ) գործածվում են տարբեր ժանրերի աղբյուրներում և գ) ունեն բաղադրիչների ազատ շարադասություն: Օրինակ՝ *Այտոր ջանք պիտէր դընել*, Որ այս բարոյս եւ տիրանամ (Հ, 892): Սահակն ասէ, թէ զբարկանալն *կու պիտի խաղեցնել*. *Եւ մտել ի բաղնիս եւ յեղի ջուրն պիտի նստիլ* (ԱՍՕԲ): Զբերդտուքն եւ զայնպիսիքն անհնար *պիտի սպաննել* (ՄՄԴ): Այն սերն, որ ճորով լինի, Կրակով զինքն *էրել պիտի* (Հ, 511): Եւ ի ըոզակն այն է, որ հրամայե բժիշկն, թէ այսպիսի իրք *առնուլ կու պիտի* (ԱՍՕԲ): Օձի ձագն քանի փոքր է, *սպանել պիտի*, թէ չէ կու մեծանայ, վիշապ կու դառնայ, մարդ կու կուտայ (ՂԼ, 235): Զայս *գիտենալ պիտի*, որ սատանան աւձն է (ՅԵԹ, 306) և այլն:

Ժխտական կառույցները՝ ա) հազվադեպ են, բ) ունեն միադիմի բաղադրիչների կազմության զուգաձևություն՝ *չպիտի//չի պիտի*, որոնք հանդիպում են տարբեր հեղինակների երկերում՝ հետևաբար ներկայացնելով տարբեր բարբառների բնորոշ կազմություն, գ) հանդես են բերում գերադաս անդամի բաղադրիչների ազատ շարադասություն. եղանակավորիչը կարող է նախորդել կամ հաջորդել անորոշ դերբային: Ահավասիկ համապատասխան օրինակներ՝ Չետ այս ժամանկուս մարդուն Աղ ու հաց *ուտել*

յի պիտի (Հ, 161): Երբ ջրհեղն լցվի՝ *մարդն չպիտի արգիլել*. շուտ ելնել պիտի (ԱՍՕԲ): Բմ եարունն ասդին պիտէր, Ալ անդին *նայիլ չպիտէր...* (Հ, 758): Ետի դին *մեննիլ յի պիտի* (Հ, 634): Զի թէպէտ եւ բժիշկքն ի պատահմանէ ասեն փոխիլ, բայց ի սերմէ է ճշմարիտն, ու *չպիտի զատողջ սերմն*՝ որ ի հարէ լինի մնացել՝ *ի յախտածէտն խառնել եւ աւերել զմարդկութեանն ազգս* (ՍՄԴ):

Արտահայտության պլանում ունենալով եզակի 3-րդ դեմք՝ «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով արտահայտվող կառույցները բովանդակությամբ առնչվում են ինչպես միակազմ, այնպես էլ երկկազմ նախադասությունների: Այսպես՝ «*Գիտնալ կու պիտի*, որ ըղեղն Գ բաժին է եւ մէկ ի մէկ ամուր ի կիցէ» (ԱՍՕԲ) նախադասությունը բովանդակությամբ համանիշ է այն ընդհանրական-դիմավոր նախադասություններին, որոնցում գործողության կատարումը ենթադրաբար վերագրվում է ոչ թե որոշակի կամ անորոշ անձի կամ անձանց, այլ բոլորին, ինչպես՝ *Եւ գիտացիք*, զի այսար [միտք] մեր զայս խորհին եւ աղտեղեն զհոգիս մեր (ՎԱԱ): *Գիտացի՛ր*, որ ի յայս ըստուղուսաթին չաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր մէկ մէկին հակառակ (ԱՍՕԲ)²²⁹: Պատահական չէ, որ այս կառույցներում կարելի է նաև գործածել ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների բովանդակության պլանում ենթադրվող *սովորաբար*, *առհասարակ* կամ *ընդհանրապես* բառերից որևէ մեկը²³⁰, ինչպես՝ *Գիտացի՛ր (ընդհանրապես)*, որ ի յայս ըստուղուսաթին չաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր մէկ մէկին հակառակ:

Ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին բովանդակության պլանում համանիշ են «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով արտահայտված այն նախադասությունները, որոնք իրենց կազմում չունեն միադիմի գործողությունն անուղղակիորեն կրող հանգման խնդիր: Հակառակ դեպքում

²²⁹ «Միադիմի բայաձև-անորոշ դերբայ» մասնակադապարով գերադաս անդամով անկախ միակազմ նախադասությունները տեսականորեն կարող էին համանիշ լինել նաև այն անդեմ միակազմ նախադասություններին, որոնցով արտահայտված գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել բոլորին, սակայն նմանատիպ նախադասություններ միջին հայերենին բնորոշ չեն:

²³⁰ Գ. Խաչատրյան, 2002, 58-59:

այդ նախադասությունների արտահայտած գործողության կատարումը հնարավոր չէր լինի ենթադրաբար վերագրել բոլորին: Ասվածի վկայությունն են Ամիրդովլաթ Ամասիացու, համապատասխանաբար, միադիմի և ընդհանրական-դիմավոր նախադասությունները, որոնք տվյալ դեպքում իրարից տարբերվում են միայն գերադաս անդամներով արտահայտված գործողությունների եղանակաժամանակային իմաստով, մինչդեռ երկուսն էլ արտահայտում են բոլորին վերաբերող գործողություն: Հմնտ. Եւ *ուտել կու պիտի* զանոնք որ գստամոքն զօրացնէ եւ յիստկէ գստամոքն ի պեղծ խառնվածոց (ԱՍՕԲ) և Եւ *կէ ը* զանոնք որ գստամոքն զօրացնէ եւ յիստկէ գստամոքն ի պեղծ խառնվածոց (ԱՍՕԲ): Անհրաժեշտության դեպքում այս կառույցներում նույնպես կարելի է տեղ տալ վերոնշյալ *սովորաբար, առհասարակ* կամ *ընդհանրապես* բառերից որևէ մեկին²³¹՝ *Մրգերն [ընդհանրապես-Գ.Խ.] յայնժամ ժողվել պիտի, որ կատարեալ հասնի և քաղցր լինի* (ԱՍՕԲ): Մինչդեռ հանգման խնդիր ունենալու դեպքում այդ կառույցները կարող էին համանիշ լինել ոչ թե միակազմ, այլ հանգման խնդրին փոխարինող ենթակա ունեցող երկկազմ նախադասություններին:

Ի վերջո, խնդրո առարկա և ընդհանրական-դիմավոր նախադասությունների ակնհայտ առնչություններից է և այն, որ սրանցով ևս կարելի է փոխանցել բոլորին անհրաժեշտ խորհուրդներ, պատգամներ, հորդորներ և այլն, բայց ոչ առտնին, իրավիճակային մտքեր, ինչպես՝ *Փախչիլ կու պիտի ի յայն քաղաքուն, որ ի հոն մարկի մաֆաճան լինի եւ վապայի լինի* (ԱՍՕԲ): *Ապա յայրկանն հայրենեստներոյն վերայ էլ պիտի հայել ու տնտղել, թէ վասն ինչ իրաց կու ուզէ ժառանգ* (ՍՄԴ): Ցուցանէ առակս, թէ *յանդիմանել պիտի զթագաւորն եւ զառաջնորդն եւ զդատաւորն յերեսն, թէ ելանիցեն յիրաւանց եւ թիւրին յարիւնաց եւ ի կամացն Տեառն* (ՎԱՍ): *Հետ այս ժամանկուս մարդուն Ադ ու հաց ուտել չի պիտի* (Հ, 161): Հունան ասէ, թէ *զվոքք տղաքն ի ձմռան ատուրքն ի մրգէ արգիլել կու պիտի* (ԱՍՕԲ):

«Միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակադապարով գերադաս անդամ ունեցող անկախ միակազմ նախադասությունները շարահյուսորեն համանիշ են նաև այն բարդ ստորադասական կառույցներին, որոնց բաղադրիչներից մեկը՝ գլխավոր նախադասությունը, զուգորդվող միակազմ նախադասություն է՝ արտահայտված

²³¹ Ն.տ.:

միադիմի բայաձևով: Որպես հիմնավորում՝ համեմատենք հետևյալ անկախ և զուգորդվող նախադասությունները՝

Գիտնալ կու պիտի, որ ըղեղն Գ բաժին է եւ մէկ ի մէկ ամուր ի կիցէ (ԱՍՕԲ) և Եւ զամէն իրք *պիտի որ* յայս գիրքս *գիտենան* (ԱՍՕԲ) և

Եւ ի յայս ցաւուս ստածումն *համբերել պիտի* (ԱՍՕԲ) և Բայց այս պատճառանօքն *պատեհ է որ համբերեն* կերակրոյ եւ ուշ ուտեն (ԱՍՕԲ):

Ամասիացու բժշկարանում առանձնապէս հաճախադէպ են եղանակավորիչներով և *առնել/այնել* բայի մասնակցությամբ համանիշ զույգերը: Հմնտ. Բագարատ ասէ, թէ իր ստածումն Բ ցեղ է. պէտ *կու պիտի այնել* եւ զմիտքն *ստածել* (ԱՍՕԲ) և Ասէ Գեղիանոս, թէ յորժամ տղան ի մօրն ի փորուն ելանէ՝ *պիտի որ* բամպկէ պատրոյգ *այնեն* (ԱՍՕԲ)²³²:

Համեմատվող նախադասությունների ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ դրանց գերադաս անդամներն արտահայտվում են միադիմի բայաձևերի մասնակցությամբ:

Ինչպէս նշել ենք վերևում, «միադիմի բայաձև+անորոշ դերբայ» ենթամասնակադապարով արտահայտվող միադիմի նախադասությունների գերադաս անդամի կազմում, *պիտիմ* բայի միադիմի ձևերից բացի, որպէս եղանակավորիչ գործածվում են նաև *եմ, հասանել, պարտել* և *վայ(ե)լել* բայերի միադիմի ձևերը, որոնք, ըստ մեր դիտարկման, խիստ սահմանափակ կիրառություն ունեն և արտահայտվել են, համապատասխանաբար, *է, էր, եհաս, պարտէ, կու վայելէ, վայլէ, ոչ վայելէ* միադիմի ձևերով²³³: Օրինակ՝ *էր եւ տեսանել աստ աղէողորմ տեսիլ միայն արտասուալի դիմաւք եւ կամաբարձ հառաչմամբ, ազգ եւ սիրելիք, ծնօղք եւ եղբարք, այլ ինչ ոչ օգնել թ գերութիւն վարելոց*, որպէս եւ յայնմ արուր՝ ի կորուստ մատնելոց (ՀՅ, 1387): *Աստ էր տեսանել զահ և զերկիւղ արուրն դատաստանի, զլա-*

²³² Նույն հեղինակը զուգահեռաբար գործածում է նաև առանց *որ* շաղկապի, այն է՝ շարահարությամբ կապակցված տարբերակը, որում *պիտի*-ն, վերածվելով սոսկ եղանակիչի, դադարել է իբրև գլխավոր նախադասություն գիտակցվելուց՝ Է-հանան ասէ, թէ ցաւն խիստ լինայ՝ դժար ողջանայ, բայց *պիտի* ստածումն *առնեն* որ չաւելնայ եւ ցաւն հայինդէ (ԱՍՕԲ):

²³³ Թէն *հասանել* բայը միջին հայերենում վկայված է նաև *հասնել* տարբերակով, սակայն մենք այս շարքում տալիս ենք գրաբարյան *հասանել* ձևով՝ նկատի առնելով, որ նրա՝ ստորն բերվելիք միադիմի բայաձևը (*եհաս*) նույնպէս գրաբարի օրինաչափությամբ է կազմված:

լումն և գողբումն ամենայն բերդին, զի համար եղև ի չար բռնաւորէն զկանայս և զմանկունս առնուլ ի գերութիւն (ԹՄԼԹ, 30): *Եւ եհաս արթիլ նոցա ի վայրայբնակ տեղի նոցա* (ՎԱԱ): Հոգեւոր հայրն Աստուած է եւ մարմնաւոր՝ ծնօղքն. զերկուքն սիրել պարտէ (ՎԱԱ): Ռատով խմել կու վայելէ (ՄԽՏ, 342): *Շաքրին շատ ուտել չվայլէ*, Արդմորդուն սրտին կահովէ (Հ, 221): Ցուցանէ առակս, թէ *ոչ վայելէ մարդոյ յաւելի ձկտիլ քան զչափն եւ զկարն իւր հպարտութեամբ՝ ոչ ի հոգեւորն եւ ոչ ի մարմնաւորն* (ՎԱԱ):

Թեև Պ. Վարդապետյանը գտնում է, որ «միջին հայերենում լայն տարածում է ստացել միադիմի բայ+անորոշ դերբայ կառուցվածքով գերադասանդամ ունեցող բայական միակազմ նախադասությունը»²³⁴, սակայն՝

ա) վերոնշյալ կառուցվածքով միակազմ նախադասությունների լայն տարածվածությունը գրական հայերենին բնորոշ էր դեռևս գրաբարի շրջանում, ինչպես՝ *Եհաս նմա թագաւորել (ՍԳ): Ի կղզի ինչ հասանէ անկանել* մեզ (ՍԳ): *Դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ (ՂՓ): Կայ մնայ* մարդկան միանգամ *մեռանել* (ՍԳ) և այլն, որից էլ նրանք անցել են միջին հայերենին²³⁵:

բ) Միջին հայերենում «միադիմի բայ+անորոշ դերբայ» կառուցվածքով նախադասության գերադասանդամի արտահայտության պլանում նկատելի են որոշ սահմանափակումներ: Այսպես՝ ա) չեն հանդիպում *դիպիմ, կամ, մնամ* բայերի միադիմի ձևերի մասնակցությամբ կազմված գերադասանդամներով կառույցներ, բ) գրաբարյան հանրահայտ «*(անդ) էր տեսանել*» կառուցվածքով միադիմի նախադասությունները գրեթե դադարել են գործածվելուց, իսկ գործածվելու դեպքում էլ ակնհայտ գրաբարաբանություններ են, ընդ որում՝ ոչ բոլոր հեղինակների նախասիրած ոճական հնարք: Նմանօրինակ կառույցներ հանդիպում են Թովմա Մեծովիցու պատմության մեջ «*աստ էր տեսանել*» տարբերակով, որը նրա եր-

²³⁴ Պ. Վարդապետյան, 1975, 138:

²³⁵ «Անորոշ դերբայ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող հետևյալ նախադասությունը գրաբարին բնորոշ քերականական իրողություն է, տվյալ դեպքում՝ աստվածաչնշյան մեջբերում՝ արված Ամիրդովլաթ Ամասիացու կողմից՝ Յորժամ ոչ խնդրեցին յինէն բարի, կապեցեք՝ ասէ՝ զոոցա ոտն եւ զձեռն եւ արկեք ի հուրն անշէջ. *անդ եղիցի լալ եւ կրճել աստամանց* (ԱԱՕԲ), հետևաբար նշված մասնակաղապարը միջինհայերենյան միակազմ նախադասությունների արտահայտության միջոց չենք դիտում:

կում մեկ տասնյակից ավել կիրառություն ունի, ինչպես՝ *Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց անմեղ տղայոցն ի ձեռն չար ի չար բռնաւորին հաւատացելոցն և անհաւատիցն* (ԹՄԼԹ, 65): *Աստ էր տեսանել զօրինակն դատաստանին և զգոչումն և զաղաղակն, և զլաց և զհատաչումն* (ԹՄԼԹ, 64) և այլն:

Նշված երկում այս կարգի նախադասությունները ավելի հաճախ հանդիպում են բարդ կառույցներում, որոնցում սրանք *զի* շաղկապով գուգորդվում են երկրորդական նախադասությունների: Օրինակ՝ *Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց և զահ և զերկիւղ անօրինաց*, զի 15000 մարդ յԵրիշատ գեղ հասեալ (ԹՄԼԹ, 48): *Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց նոցին*. զի գոչումն աղաղակի նոցին սարսեալ դողացունէր զերկոսին կողմանս, որպէս քաջքն Վարդան և Մուշեղ արարին Պարսից (ԹՄԼԹ, 81): *Աստ էր տեսանել զուրախութիւն անապատին սրբոյ և ամենայն ընկերաց իւրոց*, զի տեսանէին գնա իբրև զլուսաւորիչն Գրիգոր և կամ զՂազար՝ սիրելին Քրիստոսի, յարուցեալի մեռելոց (ԹՄԼԹ, 56-57):

Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերէնում այս կառույցները գործածվում են պատմական բնույթի աշխատություններում՝ *Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց ամենայն գնդին*, զի հայրն զորդին ուրացաւ, և որդին՝ զհայրն (ԹՄԼԹ, 27): *Աստ էր տեսանել զողորմութիւն Աստուծոյ և զպտուղ աղօթից և յուսոյ հաւատացելոց* (ԹՄԼԹ, 24):

4.2. «ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՍԵՌԱԿՓԱՆ
ՀՈՒՈՎԱԶԵՎ» ԵՆԹԱՄԱՄԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ
ՄԻԱԿԱԶՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ միադիմի նախադասությունները կարող են արտահայտվել ոչ միայն անորոշ դերբայի ուղիղ ձևի և միադիմի բայաձևի կապակցությամբ, այլև «անորոշ դերբայի սեռական հոլովաձև+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով: Ըստ մեր դիտարկման՝ միջին հայերէնի աղբյուրներում այս կարգի կառույցները բացառիկ են: Ահավասիկ մեզ հանդիպած լեզվական փաստերը՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկից՝ *Բայց ի յայս ցաւերն վախելու չէ այնոր համար*, որ ցաւն զխլտն ի գոգին ճանփէն վարեց եւ եհան զսավտան (ԱԱՕԲ): Եւ այս գրքիս ձեւն խիստ աղէկ եւ *հաւնելու է*, եւ կարդացողին դժար եւ ծածուկ չի լինիր

(ԱԱՕԲ)²³⁶: Սակայն կարևոր է այն հանգամանքը, որ բերված նախադասությունները վկայվել են 15-րդ դարում, ինչը խոսում է տվյալ լեզվական իրողության ավելի հին լինելու, այն է՝ միջին հայերենի նախորդ շրջանին նույնպես բնորոշ լինելու մասին: Միանգամայն իրավացի է Ա. Այտընյանը, որը, «ընտանեկան կամ ռամկական հայերենի» գործածության ժամանակն ընդունելով 11-12-րդ դարերը, այնուհանդերձ, գտնում է, որ այդ լեզվաիրավիճակը մեկ-երկու դարի ընթացքում չէր կարող ձևավորված, տարածված և հին լեզվի տեղն զբաղեցրած լինել: Ելնելով այն դատողությունից, որ նշված ժամանակահատվածի և 18-19-րդ դարերի լեզվաիրավիճակները իրար շատ մոտ են, Ա. Այտընյանը գտնում է, որ 9-12-րդ դարերի լեզվաիրավիճակը ևս կարող էր նույն կամ գրեթե նույն ձևով գոյություն ունեցած լինել առնվազն մի քանի դար առաջ (իր կարծիքով՝ 9-րդ դարի կեսերին), ապա հնարավոր է համարում, որ այդ լեզուն գործածական եղած լինի նաև 8-րդ, մասամբ գուցե նաև 7-րդ դարում²³⁷: Ի վերջո նա նշում է, որ այդ ժամանակահատվածն սկսվում է 7-րդ դարից, որը սահման է հին հայերենի (գրաբար) և հին աշխարհաբարի («նախնեաց ռամկորեն») միջև, երբ «Կենդանի է դեռ ծնողը, և դեռ տղայ մանուկ է զուակը»²³⁸: Ի դեպ, միննույն համոզումն ունի նաև Հ. Մուրադյանը՝ նկատելով, որ այս կամ այն լեզվական իրողությունը կարող է առաջացած լինել «իր վկայությունից առնվազն 250-300 տարի առաջ»²³⁹:

«Անորոշ դերբայի սեռական հոլովաձև+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտված անկախ միակազմ նախադասությունների գերադաս անդամի դիմավոր բաղադրիչն արտահայտվում է *եւ*

²³⁶ «Եւ ամէն մարգարեքն եւ հայրապետքն զգինէիմութիւնն մեղք եւ մեղաց պատճառ են ասացեր, եւ մեծն իմաստասիրացն եւ բժշկական վարդապետացն ասացել են, թէ բնաւ զինի խմելու օգտութիւն չկայ, *եւ ինքն բնաւ չէ խմելու*» կառուցում *չի խմելու* կապակցությունը դարձյալ անորոշ դերբայի սեռականով է կազմվել, սակայն ոչ թէ միակազմ նախադասության գերադաս անդամի գործառույթ է կատարում, այլ երկկազմ նախադասության բաղադրյալ ստորոգյալի: Ուշադրության է արժանի նաև ժխտական կազմությամբ այդ ստորոգյալի հանգույցի և ստորոգելիի շարադասությունը, որը միակազմ նախադասության մեջ հակառակ պատկերն է ներկայացնում: Հմմտ. *վախելու չէ-չի խմելու*:

²³⁷ Ա. Այտընեան, 1866, 161:

²³⁸ Նշվ. աշխ., 121:

²³⁹ Հ. Մուրադյան, 1982, 100:

բայի սահմանական ներկա ժամանակաձևի եզակի թվի 3-րդ դեմքով, որը տվյալ դեպքում ունի միադիմի բայաձևի արժեք: Սեռական հոլովով արտահայտված անորոշ դերբայի գործողությունը այս դեպքում եղանակավորված չէ: Հանդիպած սակավաթիվ օրինակներից հետևում է, որ այդ նախադասություններով արտահայտվում է խոսելու պահից հետո ընդհանուրին վերաբերող կատարելի գործողության գաղափար:

Հաշվի առնելով, որ՝ ա) անորոշ դերբայի սեռական հոլով-միադիմի բայաձև կապակցությունը կազմությամբ ոչ թե պարզ գերադաս անդամ է (այսինքն՝ խոնարհված բայի միադիմի կիրառություն), այլ բաղադրյալ, և բ) բաղադրյալ գերադաս անդամի բայական բաղադրիչը սովորաբար վերջադաս է լինում, կարող ենք ենթադրել, որ բերված և այդ կարգի նախադասությունները տեսականորեն կարող էին լինել և՛ դրական (կամ հաստատական), և՛ ժխտական (լիակատար ժխտում)՝ երկու դեպքում էլ ունենալով բաղադրիչների՝ *անորոշ դերբայի սեռական հոլովաձև-միադիմի բայաձև* շարադասությամբ արտահայտված գերադաս անդամ:

Նկատենք, որ «անորոշ դերբայի սեռական հոլովաձև+միադիմի բայաձև» ենթամասնակադասարով արտահայտվող միակազմ նախադասության բովանդակության պլանում որպես գործողություն կատարող ենթադրվում են բոլորը, քանի որ այդ կարգի նախադասություններով արտահայտվում են ընդհանուրին ուղղված խորհուրդ, հորդոր (տվյալ դեպքում՝ «ընդհանրապես չպիտի վախենալ» իմաստով): Վերը բերված անկախ միադիմի նախադասությունն այս տեսանկյունից համանիշ է միջին հայերենին բնորոշ հետևյալ անկախ և գուգորդվող միադիմի (1. «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ», 2. «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակադասարներով, 3. «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև») և 4. ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին:

Հմմտ. *Բայց ի յայս ցաւերն վախելու չէ* և, համապատասխանաբար, հետևյալ միակազմ նախադասությունները՝

1. *Բայց ի յայս ցաւերն ոչ է պիտոյ վախել:*
2. *Բայց ոչ պիտի, որ ի յայս ցաւերն վախէք:*
3. *Բայց ի յայս ցաւերն ոչ պիտի վախել:*
4. *Բայց ի յայս ցաւերն մի՛ վախէք/մի՛ վախել:*

«Անորոշ դերբայի սեռական հոլովաձև+միադիմի բայաձև» ենթա-

մասնակաղապարով միակազմ կառույցները միջին հայերենից անցել են աշխարհաբարին: Նրանք առայսօր գործածվում են խոսակցական լեզվում: Այդ մասին են վկայում նաև Ջիվանու հայտնի բանատողերը՝

Չախորդ օրերը ձմռան նման կու գան ու կերթան,
Վհասեղու չէ, վերջ կունենան, կու գան ու կերթան (Ջ, 35):

Նշված հանգամանքը հիմք է ծառայում ենթադրելու, որ «անորոշ դերբայի սեռական հոլովածն+միադիմի բայածն» ենթամասնակաղապարով արտահայտվող միակազմ նախադասությունների գերադաս անդամները, լինելով ոչ թե խոնարհվող բայածներ, այլ բաղադրյալ կազմություններ, կարող էին արտահայտվել թե՛ դրական, թե՛ ժխտական տարբերակներով՝ հանդես գալով *անորոշ դերբայի սեռական հոլովածն-միադիմի բայածն* շարադասությամբ:

4.3. «ԱՊԱՌՆԻ 2-ՐԴ ԴԵՐԲԱՅ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ԵՆԹԱՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում «անդեմ բայ+միադիմի բայածն» ենթամասնակաղապարով հանդես եկող անկախ նախադասությունների մի տեսակի գերադաս անդամի կազմությանը մասնակցում է ապառնի 2-րդ դերբայը: Օրինակ՝ Դարձեալ *գիտելի է*, զի հանդարտն և սուրն ոչ կարեն լինել ի միում ասութեան (ՅՔՅՔ, 213): Բայց *գիտելի է*, զի հոյ մինակ էր, և ոչ լինի ինքն ինքեան լծորդ, քանզի այլ այլոյ լինի լծորդ (ԴՋ, 142) և այլն:

Մ. Աբեղյանը իրավացիորեն նշում է. «Հին լեզվի մեջ ներգործական բայերից կազմված այսպիսի ածանցումները կարող են թե՛ ներգործական և թե՛ կրավորական նշանակություն ունենալ, և գործողի և կրողի անուն լինել. օրինակ՝ *կրելի* նշանակում է թե՛ *կրող* և թե՛ ինչ որ կրվելու է, կարելի է կրել, *կրվող*: Նոր լեզվի մեջ այդ կազմություններն ունեն կամ կրավորական կամ չեզոք նշանակություն, ինչպես՝ *բուժելի* նշանակում է միայն՝ ինչ որ կարելի է բուժել, բուժվող. *երևելի*-երևացող, *նազելի*-նազ անող, *ծորելի*-ծորող, *անջնջելի*-չջնջվող»²⁴⁰: Հավելենք, որ ապառնի 2-րդ դերբայը նշված հատկանիշը պահպանել է նաև միջին հայերենում:

Դիտարկումներից այն համոզումն ունենք, որ միադիմի բայերի հետ կիրառությունը միակ կապակցությունն է, որում ապառնի 2-րդ դերբայը

²⁴⁰ Մ. Աբեղյան, 1965, 256:

միջին հայերենում հանդես է բերում բային բնորոշ հատկություն՝ մասնավորապես բնութագրվելով նաև սեռի քերականական կարգով: Ասվածը նշանակում է, որ՝ ա) նշված կիրառության մեջ ներգործական սեռի բայերի ապառնի 2-րդ դերբայները կարող են ստանալ ուղիղ խնդիր լրացում և բ) լինելով կրկնասեռ՝ հիշյալ դերբայները հարկ եղած դեպքում կարող են արտահայտել կրավորական սեռի քերականական իմաստ: Ասվածի մասին վկայում են միջինհայերենյան այն կառույցները, որոնց գերադաս անդամն արտահայտվում «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով: Օրինակ՝ *Եւ գիտելի է*, զի որչափ մարդոյն ստամոքն ի կերակրոյ թէթն լինի, նա ոչ կարէ ցան յաղթել իւրենն (ԱՍՍ, 159):

«Ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով նախադասությունների միջոցով արտահայտվում է կատարելի գործողության գաղափար: Օրինակ՝ *Եւ գիտելի է*, զի մահն այն իրքն չէ, որ դեղ անելով խափանէ և չմեռնի (ԱՍՍ, 107): *Եւ աստ գիտելի է*, զի ոչ միայն սով մարմնական տուաւ մեզ, այլ եւ սով հոգեւորական (ԹՄԼԹ, 37) և այլն:

Հիշյալ ենթամասնակաղապարով արտահայտվող նախադասությունների գերադաս անդամի կազմում որպես ապառնի դերբայ գերազանցապես հանդես են գալիս ներգործական սեռի համապատասխան բայերից սերված *այլաբանելի, ասելի, բնեռելի, գիտելի, դասելի, դնելի, խնդրելի, յիշելի, վերծանելի* և այլ ապառնի 2-րդ դերբայներ, որոնցից միջին հայերենում հաճախադեպությամբ առանձնանում է *գիտելի* բայաձևը²⁴¹: Օրինակ՝ Դարձեալ և այս *գիտելի է*, զի նախքան զգալ Թամուրին ... արարեաց դեսպան առ դանն Թաւրիզու (ԹՄԼԹ, 13): Բայց *խնդրելի է*, թէ վասն է՞ր Մովսէս նախ գերկիր դնէ, ապա գերկին (ՅՈՂ, 369): Իսկ այժմ *ասելի է*, թէ ի սկզբանէ՞ էին լերինք և բլուրք, թէ յետոյ եղեն (ՅՈՂ, 371):

Նշված և այլ բաղադրիչների հետ որպես միադիմի բայաձև սովորաբար գործածվում է *եւ* բայի սահմանական ներկան՝ Բայց *գիտելի է*, զի բազում վիշտս կրեաց և դառնութիւնս վարդապետն Մարգիս յաշակերտաց իւրոց (ԹՄԼԹ, 37): Իսկ վասն էթի, թէ որպէս պարտ իցէ դնել, կամ ի վերջոյ տողին *դնելի է* զկնի անձայն գրին, որ սկիզբն է հեգին ... (ԴԶ, 95):

Բնական է, որ խնդրո առարկա ներգործական սեռի դերբայների մասնակցությամբ կազմվող նախադասություններում տեղ է գտնում նաև

²⁴¹ Վերջին առումով առանձնանում է Ասար Սեբաստացու բժշկարանը:

ուղիղ խնդիր անդամ, որը գերազանցապես արտահայտվում է երկրորդական նախադասությամբ²⁴²: Այդ է պատճառը, որ «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով հանդես եկող նախադասությունները ավելի հաճախ հանդիպում են բարդ ստորադասական կառույցներում՝ կատարելով գլխավոր նախադասության շարահյուսական պաշտոն: Նկատելի է, որ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գլխավորներին կապակցվում են՝

ա) կա՛մ գողման եղանակով, ինչը հաճախ է հանդիպում և հիմնականում կատարվում է *զի*, հազվադեպ՝ *որ* ստորադասական շաղակապով, ինչպես՝ Աստ գիտելի է, *զի* են ոմանք բացաբարձական անուն, որպես եզն, մարդ, և սոքա չեն առինչք (ՅՈ, 144): Գիտելի է, *զի* չեզոք գործ և զեզ տղայն ի միասին պարունակել (ԴԶ, 84): Վասն որոյ գիտելի է, *որ* ամենայն տեսակս սկիզբն ունի, գոր խելքն իմանայ (ՅԵ, 303): Գիտելի է, *զի* մարդն երեք ծնունդ ունի (ՄՏ, 426),

բ) կա՛մ էլ շարահարությամբ, երբ կապակցման միջոցը կախման հնչերանգն է՝ *Բայց գիտելի է՝ նոցա ի հարկուն եղև վասն կարճութեան գրին և լեզուին* (ԴԶ, 83-84): Եւ պարուն Միխնոն ասաց. թէ յորժամ զիմ գաբիսն ցուցանէ որ. նա *յայնժամ գիտելի է՝ որչափ պարտական եմ* (Կ-Պ):

Մեզ հանդիպած լեզվական փաստերը վկայում են, որ կայուն է բարդ ստորադասական կառույցներում հանդիպող այսօրինակ նախադասությունների ոչ միայն շարադասությունը (դրանք, որպես կանոն, նախորդում են ուղիղ խնդիր երկրորդականներին), այլև նրանց գերադասանդամի բաղադրիչների շարադասությունը (ապառնի դերբայը մշտապես գրավում է նախադաս դիրք)՝ *Գիտելի է*, զի ոմն հերձուածող, որ Մանիքոս ասեն, երկու արարիչս ասաց (ՅՈՂ, 381): *Եւ գիտելի է*, զի որչափ մարդոյն ստամոքն ի կերակրոյ թեթև լինի, նա ոչ կարէ ցան յաղթել իւրենն (ԱՄՄ):

Ինչ վերաբերում է «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող պարզ կառույցներին, այսինքն՝ երբ ներգործական սեռի բայով հանդես եկող գերադասանդամի պահանջած ուղիղ խնդիրը, որպես կանոն, արտահայտվում է ոչ թե երկրորդական նախադասությամբ, այլ ունի բառային արտահայտություն, ապա սրանցում ևս գերադասանդամի՝ ապառնի դերբայով հանդես եկող բաղադրիչը

²⁴² Նույնը նկատվում է նաև գրաբարում (տե՛ս Գ. Խաչատրյան, 2002, 139):

արտահայտվում է վերոնշյալ ներգործական սեռի դերբայներով: Օրինակ՝ *Յիշելի է զԱստուած առաւել՝ քան զշունչ կլանելի* (ՄՀԲ): ... և *դարձեալ ապա ընդ սոքօք իբր գտեսակ դասելի է ժամանակի յարակայականն* (ԴԶ, 158): Վերծանելի է [զգիրսն//զբանսն-Գ.Խ.] ըստ ենթադասութեան, ըստ առոգանութեան, ըստ տրոհութեան (ԴԶ, 70): Հենց այս հանգամանքն է լավագույնս վկայում, որ վերոբերյալ բարդ կառույցներում գործածված ապառնի դերբայների պահանջած երկրորդական նախադասությունները ոչ թե ենթակայի, այլ ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ ունեն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ խնդրո առարկա պարզ կառույցներն անհամեմատ սակավադեպ են՝ ... յաստուծոյ երկիւղն *բնեռելի է* (ԴԶ, 164): *Սոյնպէս զամենայն գիտելի է*, քանզի բազում են տեսակք անուանցն և անբաւ (ԴԶ, 109): Իսկ է և ո և ինն, յորժամ իւրեանք միայն հեզ լինին, *դնելի է* կիսանենթամնայ, իսկ յորժամ տիրապէս հեզ լինին, *դնելի է* այսպէս՝ ո դարձոյց, ... է տէր, ... ի գիշերի (ԴԶ, 95): Զի յորժամ ի սպառուած տողին կատարի բառն և կամ բանն իսկ բովանդակի ի միւս տողին սկիզբն անկասկած *դնելի է*, զհետ զայ բանին սկիզբն, թէ ձայնաւոր իցէ առաջին գիրն և թէ անձայն (ԴԶ, 94): *Գիտելի է և սա*, զի եչ և այբ բազում անգամ լծին ի բազում տեղիս (ԴԶ, 144) և այլն: Բնական է, որ այս դեպքում գերադաս անդամի պահանջով հանդես եկող ուղիղ խնդիրն արտահայտվում է բառով և ոչ թե երկրորդական նախադասությամբ: Օրինակ՝ *«Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց եւ Վրաց»* (ՎԱԱ): ... *գորս հանդիսադրին Քրիստոսի Աստուծոյ մերոյ միայն է գիտելի* (ԹՄԼԹ, 23)²⁴³:

Ստացվում է, որ «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարը միջոց է քերականական միևնույն իմաստն արտահայտելու մի դեպքում պարզ, մյուս դեպքում՝ բարդ նախադասության միջոցով, որոնք, ըստ էության, միևնույն անփոփոխի փոփոխակներն են: Այսպէս՝ *«Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց եւ Վրաց»* (ՎԱԱ) կարգի նախադասություններն անկախ միադիմի կառույցներ են և կարող են գործածվել որպէս կազմությամբ պարզ նախադասություններ, մինչդեռ *«Իսկ այժմ ասելի է, թէ ի սկզբանէ՞ էին լերինք և բլուրք, թէ յետոյ եղեն»* (ՅՈՀ, 371) կարգի նախադասությունները՝ որպէս բարդ ստորադասական

²⁴³ Առանձին դեպքերում ուղիղ խնդրին զուգահեռ հանդիպում է նաև վերաբերության խնդիր՝ *Զի՞նչ ասելի է վասն հաւուցն* (ԴԶ, 99):

կառույցներ:

Գիտելի բայաձևը բերված նախադասություններում ներգործական սեռի իմաստ է արտահայտում. այդ են վկայում լեզվական այլ փաստեր նույնպես: Այսպես՝ Դավիթ Զեյթունցին, «Գիտելի է զի անհատն ըստ երից ասի» (ԴԶ, 128) կարգի նախադասություններից բացի, միննույն իմաստով գործածում է նաև «*Պարտ է գիտենալ*, զիւր ազգին լեզուն կատարեալ ըստ ամենայն բառից և գաւառից խօսից, և յետ նորա, եթէ հնար է զըջակայ ազգաց (ԴԶ, 67)²⁴⁴:

Ասար Սեբաստացին, ծանոթ լինելով նշված միադիմի կառույցներին [Եւ գիտելի է, զի թուխմայութիւնն ի շատ և յագահ ուտելուն լինի (ԱՍՍ, 98)], նրանց զուգահեռ գործածում է ևս երկու համանիշ կառույցներ, որոնք նունպես, թէև արտահայտված են խոնարհված բայով, սակայն կառուցվածքով միակազմ են, այս անգամ՝ ընդհանրական-դիմավոր՝ Եւ գիտացիր, որ մագն գոլոշ մըն է, որ գաղտ շնչահանացն ելանէ (ԱՍՍ, 101): Բայց գիտասօջիք, վասն ջուր իջնելուն, զի սպիտակ ջուրն ի պաղլամէ լինի (ԱՍՍ, 160):

Քննության առարկա նախադասություններով գերազանցապես արտահայտվում է ընդհանուրին վերագրելի գործողություն, ինչի շնորհիվ նրանք բովանդակության պլանում ձեռք են բերում ընդհանրական արժեք: Բնավ պատահական չէ, որ նմանօրինակ նախադասությունները քերականորեն համանիշ են ընդհանրական-դիմավոր նախադասություններին: Հմմտ. Բայց *գիտելի է*, զի յոյնք մակաւասար վասն ծիծառն և արծուի ասեն (ԴԶ, 95): *Գիտելի է*, զի նիւթ հասարակն իսկոյն ընդ նմին ստեղծան չորս որակք (ՅՈՀ, 360) և *Գիտացի՛ր*, որ ի յայս ըստուղուսաթին չաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր մէկ մէկին հակառակ (ԱՍՕԲ): *Եւ գիտացիք*, զի այսար [միտք] մեր գայս խորհին եւ աղտեղեն զհոգիս մեր (ՎԱԱ):

Փաստորեն միջին հայերենում բովանդակության պլանում համանշային դաշտ են կազմում ոչ միայն «ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադասարով արտահայտվող պարզ և բարդ ստորադասական կառույցները, այլև միակազմ նախադասությունների ուրիշ տեսակներ, որոնց շարքը ներկայացնում ենք ստորև՝

²⁴⁴ Հմմտ. նաև՝ Եւ պարտ է գիտել, թէ ընդեր ասի տրամաբանութիւն և յորս տրամատի (ՀՄԶ, 231):

1. *Գիտելի է աստ*, զի այսպիսի է կարգ շարամանութեան (ՅՔՅՔ, 205):
2. *Սոյնպէս զամենայն գիտելի է*, քանզի բազում են տեսակք անուանցն և անբաւ (ԴԶ, 109):
3. *Գիտացիր*, զի հինգ բայք են առնողական (ՅՔՅՔ, 179):
4. *Եւ գիտացիք*, զի այսաւր [միտք] մեր գայս խորհին (ՎԱԱ):
5. *Պարտ է գիտենալ* զիր ազգին լեզուն կատարեալ ըստ ամենայն բառից և գաւառից խօսից, և յետ նորա, զըրջակայ ազգաց (ԴԶ, 67):
7. *Եւ գիտել պարտ է*, զի ոչ միայն սուսերօք և զինուք լինէր կորուստ անօրինացն (ՅԿ, 65):
8. *Բայց ի յայս ցաւերն վախելու չէ այնոր համար*, որ ցան զխլտն ի գոգին ճանփէն վարեց եւ եհան զաավտան (ԱԱՕԲ):

«Ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայածն» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ նախադասությունները հիմնականում հանդիպում են գրաբարով շարադրված արձակ ստեղծագործություններում, մասնավորապես՝ մեկնական, պատմագրական բնույթի երկերում: Մակայն այդօրինակ նախադասություններ առկա են նաև միջին հայերենով շարադրված տարբեր բնույթի բնագրերում, մասնավորապես՝ բժշկարաններում՝ բոլոր դեպքերում գործածվելով որպես խոսքի ոճավորման միջոց: Այս հանգամանքը վկայում է, որ այդօրինակ նախադասությունները չեն ներկայացնում միջին հայերենի խոսակցական շերտը:

4.4. «ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ԵՆԹԱՄԱՍՆԱԿԱԴԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱԽ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդեմ բայի մասնակցությամբ ձևավորվող միակազմ նախադասությունների մի խումբ միջին հայերենում արտահայտվում է «հարակատար դերբայ+միադիմի բայածն» ենթամասնակադապարով: Օրինակ՝ *Ջամէն մէկի ստածումն յիբ համարն յիշած է* (ԱԱՕԲ): Պուլպուլն ելաց, լալով ասաց, թէ՛ Իմ սրտիկս է խիստ խոցած, Վարդս [Է-Գ.Խ.] տարած (Հ, 609): *Զինչ որ մեզի է ուսուցած* (ՄՊ): Ասեն. Եկոյ, զմատոյ վերուր, *Կրակս քեզ համար [Է-Գ.Խ.] վառած* (ՄՊ):

«Հարակատար դերբայ+միադիմի բայածն» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունների գերադաս անդամի կազմությանը հարակատար դերբայի հետ մասնակցում են *եւ*, *լինիլ* և *պիտիմ* բայերի եզակի թվի 3-րդ դիմային ձևերը, որոնք տվյալ

դեպքում միադիմի բայաձևի արժեք ունեն, ինչպես՝ Տըխամար յաշխարհիս վերայ Չի պիտէր մէկիկ մի սպրած (Հ, 849): Եւ այն որ ի ստամոքին վատուծութենէն՝ յիշած է զհնքն (ԱՍՕԲ): Եւ արա՛ զսավտային դեղերն որ գրած է (ԱՍՕԲ): – Իմ գեղեցիկ վարդս է տարած, Ձիս անողորմ է լացուցած (Հ, 609): Հաւքերն ամէն վրաս էկած, Ձիս անողորմ են լացուցած, Թէ՛ Դու ի՛նչ խիստ մեղաւոր ես, Որ քո սիրոյն վարդն է տարած (Հ, 609) և այլն:

«Հարակատար դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունների արտահայտության և բովանդակության պլանները միատարր չեն.

1. Առանձին խումբ են կազմում այն միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտվում է ներգործական սեռի բայերի հարակատար դերբայով, որի հետ հանդես է գալիս *եւ* բայի եզակի թվի 3-րդ դիմային ձևը (*գրած է, զուգած է, լացուցած է, ձգած էր, յիշած է, ուսուցած է, վառած է, տարած է* և այլն): Խոսքը ստորև ընդգծված և նմանօրինակ կառույցների մասին է՝ Եւ այն որ աղիքն խոց առնէ՛ այն է որ յիր համարն զհնքն յիշած է (ԱՍՕԲ): *Ձինչ որ մեզի է ուսուցած* (ՄՊ):

Բնական է, որ այս խմբի կառույցներում, գերադաս անդամից բացի, պարտադիր բաղադրիչ է համարվում նաև ուժեղ կառավարմամբ կապակցվող և հայցական հոլովով արտահայտված սեռի խնդիրը: Օրինակ՝ Վաղին տեսանեն *զՓօլատն* [է-Գ.Խ.] *սպանած*, Ի մէջ ճանապարհին *էր զհնքն ձգած* (ՊՖՄ, 128) և այլն:

«Հարակատար դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող այս ենթախմբի միադիմի նախադասությունների գերադաս անդամի բաղադրիչները կարող են հանդես գալ ոչ միայն *հարակատար դերբայ-միադիմի բայաձև*, այլև *միադիմի բայաձև-հարակատար դերբայ* շարադասությամբ: Հմմտ. Եւ արա՛ զդեղն զոր գրած է, եւ տո՛ւր զայս մտպուխնիս (ԱՍՕԲ) և Եւ յառաջն ի վերն *ցաւուն անունն* է գրած (ԱՍՕԲ) այլն:

Միջին հայերենում նշված կարգի նախադասություններ հանդիպում են թե՛ չափածո և թե՛ արձակ լեզվական աղբյուրներում: Մեր ուսումնասիրած աղբյուրներից՝

ա) չափածոյում առանձնանում են հայրենները, որոնցում, սակայն, այդ նախադասությունները լայն տարածում չունեն՝ Ասեն. Եկոյ, զմատդ վերուր, *Կրակս քեզ համար* [է-Գ.Խ.] *վառած* (ՄՊ): Պուկպուկ նստէր վերայ

ցախին Ու լաց կասեր վերայ վարդին. - *Իմ գեղեցիկ վարդս է տարած, Ձիս անողորմ է լացուցած* (Հ, 609):

բ) Արձակում հատկանշական է Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության առաջաբանը՝ Եւ ի մէկ երեսն *գտաքէ եղածն է գրած* եւ ի մէկ այլ երեսն *գպաղէ եղածն է գրած* (ԱՍՕԲ): Եւ ի ներքեւն *զցաւուն պատճառն* է գրած եւ *զնշանն*, եւ ի ներքեւն *զստածումն* է գրած (ԱՍՕԲ): *Եւ զամէն մէկի ստածումն յիր տեղն յիշած է կամօքն աստուծոյ* (ԱՍՕԲ)²⁴⁵:

Այս նախադասությունները բովանդակության պլանում համանիշ են հոգնակի թվի 3-րդ դեմքի գերադաս անդամով անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններին, քանի որ երկու դեպքում էլ գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել անորոշ անձի (անձանց) կամ էլ կենդանանիշ առարկա(ներ)ի²⁴⁶:

Նկատենք, որ հոգնակի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններին ունեցած բովանդակային աղերսն ավելի քան ակնհայտ է հայրեններում գործածված եզակի 3-րդ դեմքով միակազմ նախադասություններում: Այսպես՝ «*Իմ գեղեցիկ վարդս է տարած, Ձիս անողորմ է լացուցած*» (Հ, 609) բարդ կառույցի ընդգծված երկու նախադասություններն էլ բովանդակության պլանում ենթադրում են գործողության անորոշ կատարող կամ կատարողներ («Իմ գեղեցիկ վարդն են տարել, Ինձ անողորմ են լացացրել»):

Ի տարբերություն հայրեններում հանդիպող վերոբերյալ նախադասությունների՝ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության նմանօրինակ նախադասությունների իմաստը կարելի է տարբեր տեսանկյուններից մեկնաբանել: Դիտարկենք հիշյալ բժշկարանից քաղված «*Եւ զամէն*

²⁴⁵ Տեղին է նշել, որ ուղիղ խնդրի կազմության մեջ *q* որոշիչ հոդի գործածության առումով որոշ դեպքերում նկատվում է անհետևողականություն մինչև անգամ միևնույն բարդ կառույցում: Հմնտ. Եւ զայն արա *որ գրած է ի քիթ արիւնելուն* համարն. օգտէ Աստուծով (ԱՍՕԲ) և Եւ արա՛ զդեղն *գոր գրած է* (ԱՍՕԲ): Այսպես նաև՝ Եւ յառաջն ի վերն ցաւուն *անունն է գրած* եւ ի ներքեւն *զցաւուն պատճառն է գրած* եւ *զնշանն*, եւ ի ներքեւն *զստածումն է գրած* (ԱՍՕԲ) և այլն: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ միջին հայերենում հայցական հոլովածեր որոշյալ առմամբ գործածվելիս ոչ միշտ էր արտահայտվում գրաբարին բնորոշ *q* որոշիչ հոդով:

²⁴⁶ Ձագերս բուներնեն տարած, Իմ սիրտս են էրած (Հ, 804):

մէկի ստածումն յիր տեղն յիշած է» նախադասությունը:

ա) Մի դեպքում կարելի է կարծել, որ Ամասիացին այս նախադասությունը գործածում է անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններին բնորոշ իմաստով «գոր յիշած են//յիշեր//յիշել են»՝ գործողությունը անորոշ կերպով վերագրելով այն բժշկապետերին, որոնց հեղինակած բժշկարաններից ինքը թարգմանել և կազմել է իր բժշկարանը²⁴⁷:

բ) Մյուս դեպքում կարելի է ենթադրել, որ Ամասիացին վերոբերյալ նախադասությունը գործածում է իր իսկ՝ առաջին դեմքի փոխարեն՝ «գոր յիշած//յիշեր//յիշել եմ/ք/» իմաստներից որևէ մեկով: Ասվածի մասին վկայում են նույն բժշկարանում վերոնշյալ բովանդակությամբ գործածված այն ներգործական կառույցները, որոնցում բժշկապետը եզակի թվի 3-րդ դեմքով արտահայտված «*հանց որ յիշած է»* նախադասությունը երբեմն ձևակերպում է իր իսկ՝ 1-ին դեմքով՝ «*հանց որ յիշեցի»*: Հմմտ. բովանդակության պլանում համանիշ հետևյալ նախադասությունները՝ Թէ որ նստոյ տեղն թուլանայ ի գախմէ՝ այն է, որ գՖալիճի դեղն առնես՝ *հանց որ յիշած է* (ԱՍՕԲ) և Եւ յետոյ դեղ խմէ *հանց որ յիշեցի* (ԱՍՕԲ):

Առավել քիչ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ Ամասիացին «*Եւ գայտոր գպատճառն յիր համարն յիշած է լման»* նախադասությունը գործածում է դարձյալ իր՝ առաջին դեմքի փոխարեն՝ «գրած է իմ» կամ «գրած է մեր» իմաստներից որևէ մեկով: Բանն այն է՝ գրաբարի անցյալ դերբային, որը, բացառությամբ մի կիրառության, կրկնասեռ էր, միջին հայերենում փոխարինելու եկան վաղակատար և հարակատար դերբայները: Դրանցից ներգործական սեռի բայերի վաղակատար դերբայը և նրա մասնակցությամբ կազմված վաղակատար ներկա ու անցյալ ժամանակաձևերը միջին հայերենում արդեն կրկնասեռ չեն. աննշանակիչ տարբերակով արտահայտում են միայն ներգործական սեռի իմաստ՝ Եւ *սացել է Լնօֆօսն*, թէ կայր մարդ մի, որ ինքն ի տանէն ի դուրս չկարէին հանել (ԱՍՕԲ): Մէկ մարդ մի լեռներն ելեր, Լեռներէն ծաղիկ *ժողովեր* (Հ, 934), իսկ կրավորական կամ կրավորաձև չեզոք սեռերի իմաստ արտահայտելու համար վաղակատար դերբայը և նրա մասնակցությամբ կազմված

²⁴⁷ Ասվածի մասին «Օգուտ բժշկութեան» գրքի առաջաբանում վկայում է հենց ինքը. «Եւ գԱմիրտովլաթ բժիշկն յիշեցէ՛ք ի տէր, որ շատ աշխատանօք գայս գիրքս թարգմանեցի (ընդգծումը մերն է-Գ.Խ.)», ապա հավելում. «Համարօտ ժողովեցի եւ գրեցի զհին եւ զնոր բժշկապետացն զխօսքն (ընդգծումը մերն է-Գ.Խ.), որ զամէն մէկին անունն ի յիր տեղն պիտի յիշենք» (ԱՍՕԲ):

ներկա ու անցյալ ժամանակաձևերը նշանակիր են. արտահայտվում են *ու/վ* ածանցով, ինչպես՝ ճովերդ ի երդիքն ելեր, *Կախուեր է խոշոր ճիղերուն* (Հ, 638): *Կասյուեր (է-Գ.Խ.)* իմ ճարտար լեզուս, Որ բնաւ իսկի չիօսի (Հ, 920): «Ա՛յ»-եր կանչեմ փարայով, Սրտիկս *լցուեր է խոցոտ եարայով* (Հ, 739): Կամ յեզր Աստուածածին, Որ *շինուեր է* ի Կուկլիանեայ (Հ, 582): Ոչ ով չէ պատճառ եղեր, *Չեմ այլոց ձեռօք խաբուեր* (Հ, 332): Օր մի յառիծէն փախեր, Նայ եղջիւրն ի ծառն *է գամուեր* (Հ, 478): Հարսնուկ մի յանտի թաղէն *Ջարթըրվեր* ու կերթար ի ժամ (Հ, 257): *Բացվեր էս* ի վարդ նման, Ես՝ պիւլպիւլ ի դէմ քեզ կու լամ (Հ, 90) և այլն: Հավելենք նաև, որ թէև վաղակատար և հարակատար դերբայները միջին հայերենի որոշ կառույցներում համարվում են գուգաձևեր, սակայն, հաճախ միևնույն իմաստն արտահայտելով հանդերձ, վաղակատարը միադիմի բայաձևերի հետ չի մասնակցում անկախ կամ գուգորդվող միակազմ նախադասությունների կազմությանը: Ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը և նրա մասնակցությամբ կազմված ներկա ու անցյալ ժամանակաձևերը (ինչպես գրաբարի անցյալ դերբայն ու նրանով կազմված վերլուծական ժամանակաձևերը) բազմաթիվ կիրառություններում հանդես են բերում կրկնասեռություն՝ աննշանակիր տարբերակով արտահայտելով մի դեպքում ներգործական, մյուս դեպքում՝ կրավորական սեռի իմաստ (հարակատարը նշված իմաստն ավելի ուշ կարող է արտահայտել նաև *ու/վ* կրավորական ածանցով): Ասել է՝ միջին հայերենի հարակատար դերբայն իր բնույթով նման էր գրաբարի անցյալ դերբային, և դա՛ ոչ միայն կրկնասեռությամբ, այլև նրանով, որ ուներ թե՛ անկախ, թե՛ ձևակազմիչ դերբայներին հատուկ գծեր, մի բան, որը բնորոշ չէր վաղակատարին՝ չհաշված մասնակի դեպքերը: Գրաբարին բնորոշ էր *անցյալ դերբայ-միադիմի բայաձև-սեռական հոլովով ենթակայական բառ* կապակցությամբ կառույցը, որը կազմվում էր միայն ներգործական սեռի բայի անցյալ դերբայով, որը տվյալ կառույցներում երբեք կրկնասեռություն չէր ցուցաբերում, այլ արտահայտում էր միայն ներգործական սեռի քերականական իմաստ: Ամասիացին քաջածանոթ էր գրաբարին, ուստի կարելի է ենթադրել, որ գրաբարի՝ վերոնշյալ կապակցությամբ կառույցի քերականական իմաստը փորձել է արտահայտել՝ անցյալ դերբայի փոխարեն գործածելով դերբայ (Եւ արա՛ գդեղն գոր գրած է)՝ առանց նշելու իր իսկ՝ 1-ին դեմքի անձնական դերանվան սեռականով արտահայտված ենթակայական բառը (*իմ կամ մեր*), որը ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում: Հավելենք նաև, որ հարակատար դերբայի և է3-րդ դիմային ձևի ոչ բոլոր հարադրություններով են արտահայտվում միադիմի նախադասություններ: Օրինակ՝

Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկարանում հաճախակի հանդես եկող *փորձած է* կապակցությունը *փորձել* բայի ներկայի եզակի 3-րդ դեմքն է, թեև նրանով կազմված երկկազմ նախադասությունների ենթական հիմնականում բառային արտահայտություն չունի: Հմտ. մի կողմից՝ Իպնի-յորսին յրդեղն չորցնեն եւ քացխով խմեն՝ օգտ ըխտաւորին, զի *փորձած է*: Ըդտուն ըդեղն այլ քացխով տաս, այնպէս *փորձած է*: Եւ հանէ ի բշտէն, զի *փորձած է* աստուծով: Դեղն այն է, որ զայս դեղս տաս, որ *փորձած է*: Չաֆրանն վարդէջրով տրորէ, ի քիթն լից, ազատի. *փորձած է* և այլն, մյուս կողմից՝ Որ քերելուն ժամն դեղին ջուր ելանէ. *այս փորձած է*: Եւ *այս* այլ *փորձած է* խիստ: Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկարանում հաճախակի կիրառությամբ առանձնանում են նաև *գրել* և *յիշել* ներգործական բայերի կրավորական տարբերակով արտահայտված երկկազմ նախադասությունները՝ Էհանան ասէ, թէ թաժայ խոցին դի ր մորհամ իսպիտակ եւ զայն իրվին, *որ յիշած է* ի չոր խոցին համարն (ԱՍՕԲ): Նշան գուքամէ եւ նուզլայէ այն է, որ *գրած է* գուքամին եւ նուզլային համարն, եւ լման *գրեալ է եւ կատարեալ է* (ԱՍՕԲ): Եւ թէ խոցն ի վերի աղիքն լինայ՝ տո՛ւր մուղլիսայ եւ զայնք որ *գրած է* ի սաֆրային լուծումն նա օգտէ աստուծով (ԱՍՕԲ): Եւ թէ փայծաղն ուռի՝ արա՛ զփայծղան ուռեցին դեղն, *որ յիր համարն գրած է* (ԱՍՕԲ): Եւ զճուարիչ քամոնին տուր՝ որպէս ըռասմն է եւ *գրած է* ի Ախրապատինն (ԱՍՕԲ) և այլն²⁴⁸:

Ինչևէ, գտնում ենք, որ Ամասիացին «*Եւ զամէն մէկի ստածումն յիր տեղն յիշած է*», «*Եւ զայսոր զպատճառն յիր համարն յիշած է լման*» և նմանօրինակ նախադասությունները, այնուամենայնիվ, գործածել է իր՝ առաջին դեմքի և ոչ թե հոգնակի թվի 3-րդ դեմքի նշանակությամբ: Մենք այս համոզումն ունենք՝ նկատի առնելով նաև այն փաստը, որ Ամասիացին հիշյալ բժշկարանում նախ 1-ին դեմքով (ընդ որում թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով) խոսում է ոչ միայն իր կատարածի, այլև հետագա անելիքի մասին, ապա սրան անմիջապես հաջորդում են խնդրո առարկա առաջին նախադասությունները, որոնցում որպես գործողություն կատարող ենթադրվում է ոչ այլ ոք, եթե ոչ հեղինակն ինքը. «Եւ յառաջն ի վերն ցաւուն անունն է *գրած* եւ ի ներքեւն զցաւուն պատճառն է *գրած* եւ զնշանն,

²⁴⁸ Այսուհանդերձ, մենք չենք բացառում *հարակատար դերբայ-միադիմի բայաձև-սեռական հոլովով ենթակայական բառ* կապակցությամբ կառույցների առկայությունը միջինհայերենյան լեզվական աղբյուրներում, որոնցից է «*Երգս է գրած Մարտիրոսի*» (ՄԽ) նախադասությունը:

եւ ի ներքեւն զստածումն է *գրած*, եւ ի մէկ երեսն զտաքէ եղածն է *գրած* եւ ի մէկայլ երեսն զպաղէ եղածն է *գրած*, որ կարդացողին հեշտ լինայ: Եւ զԳեղիանոսի զխօսքն է *ընտրած*, որ ասցել է, թէ բժշկին քան զԴ իրքն անցել այլ ճար չկայ. յառաջն որ գիտենայ զպատճառն, թէ ի՛նչ պատճառէ է (ընդգծումները մերն են-Գ.Խ.)» (Ա.Ա.ՕԲ): Վերոնշյալ դիտարկումները հաշվի առնելով՝ Ամասիացու գործածած ներգործական սեռի հիշյալ նախադասությունները համարում ենք յուրօրինակ կառույցներ, որոնցում ե-գակի թվի 3-րդ դեմքով արտահայտված գործողություն կատարող է ենթադրվում եգակի թվի 1-ին դեմքի ենթական:

Նշենք, որ թե՛ Ամասիացու տվյալ բժշկարանում և թե՛ հայրեններում հարակատար դերբայի մասնակցությամբ արտահայտված անկախ միակազմ կառույցները գործածվում են խոսքը ոճավորելու նպատակով:

«Եւ զամէն մէկի ստածումն յիր տեղն յիշած է կամօքն աստուծոյ», «Իմ գեղեցիկ վարդս է տարած» կարգի ներգործական նախադասություններից կազմությամբ և բովանդակությամբ էապես տարբերվում են հայրեններում հանդիպող որոշ թերի նախադասություններ, որոնց կանդրադառնանք ստորև: Միջին հայերենում ներգործական սեռի բայերի հարակատար դերբայի կրավորական իմաստը ոչ միշտ է արտահայտվում *ու//վ* կրավորական ածանցով, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ճշտելու որոշ կառույցների՝ հարակատարով արտահայտած գլխավոր անդամի սեռի քերականական իմաստը և դրանով պայմանավորված՝ տվյալ նախադասության կառուցվածքը նույնպես: Խոսքը «*Էս տուն Աստրծու շինած*, Ինոր քեարը Կիւկեանից բիրված. *Ինոր խիւրն կուսանաց դրրած*» (Հ, 774) կառույցի ընդգծված նախադասությունների մասին է, որոնք արտահայտվել են կրկնասեռ հարակատար դերբայով: Ի տարբերություն վերն ասվածի՝ նրանց միջև գործածված «Ինոր քեարը Կիւկեանից բիրված» նախադասության կազմում առկա է կրավորական ածանցով կազմված կրավորական սեռի հարակատար դերբայ (*բիրված*), ինչը հիմք է ծառայում համոզվելու, որ վերոբերյալ զույգ նախադասություններում առկա *շինած* և *դրած* հարակատար դերբայները ևս արտահայտում են կրավորական սեռի քերականական իմաստ, սակայն արդեն առանց կրավորական ածանցի: Վերջինս այդ նախադասություններում չի գործածվել կա՛մ անհետևողականության, կա՛մ էլ այն պատճառով, որ միջին հայերենում հարա-

կատարը ժառանգել է գրաբարի ներգործական սեռի բայերի անցյալ դերբայի կրկնասեռ լինելու հատկանիշը և կարողանում է հարկ եղած դեպքում առանց կրավորական ածանցի արտահայտել նաև կրավորական սեռի քերականական իմաստ: Քննվող կառույցների երկկազմ լինելու մասին վկայում են նրանցում առկա *Աստրծու* և *կուսանաց* անդամները նույնպես, որոնք բացառականով արտահայտված ներգործող խընդիրներ են՝ *ի* նախդրի զեղչմամբ: Խնդրո առարկա կառույցները հետաքրքրական են նաև կառուցվածքային մեկ այլ առանձնահատկությամբ. թերի նախադասություններ են: Բանն այն է՝ նրանց ստորոցայլներն արտահայտված են հարակատար ներկայով, սակայն նրանցում զեղչված է *է* օժանդակ բայը, որը հեշտությամբ կարելի է վերականգնել՝ *Էս տուն Աստրծու շինած* [է-Գ.Խ.], Ինոր քեարը Կիկեանից բիրված [է-Գ.Խ.]. *Ինոր խիմըն կուսանաց դրած* [է-Գ.Խ.], ինչը բնորոշ է նաև ժամանակակից հայերենի որոշ բարբառների և խոսվածքների: Բնականաբար, *շինած (է)*, *բիրված (է)* և *դրած (է)* բայաձևերի հետ հանդես եկող *տուն, քեարը* և *խիմն* անդամները ենթակայի գործառույթ են կատարում (հմմտ. *Էս տուն յԱստրծու է շինած*): Հմմտ նաև՝ Հիւանդիին Աստուած է դեղ. Որ մահու է տէր և կենաց, Ձեկքիմն սեպէպ սսեն, *Խելօքաց է բանս ասացած* (Հ, 521):

«Հարակատար դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակադապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասությունները շարահյուսորեն համանիշ են հոգնակի թվի 3-րդ դեմքով անորոշ-դիմավոր կառույցներին. երկուսի դեպքում էլ դիմային որոշակի վերագրում չունեցող գործողության կատարումը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն մեկ, այլև մի քանի անձի (կամ կենդանանիշ գոյականի): Հմմտ. *Ձագերս բունէրնէն տարած*, Իմ սիրտս են էրած» (Հ, 804) և Երեկ ցորեկով բարով Տանէին մէկ եար մի ճորով: *Ձնա ճորով է տարած, Կամ խարած է զինք դրամով* (Հ, 45): Ասվածի լավագույն վկայությունը գրեթե նույն բովանդակությամբ, բայց մի դեպքում՝ եզակի, մյուս դեպքում արդեն հոգնակի 3-րդ դեմքով հետևյալ անորոշ-դիմավոր նախադասություններն են՝ Պուլպուլն ելաց, լալով ասաց, թե՛ Իմ սրտիկս է խիստ *խոցած*, Վարդս [է-Գ.Խ.] *տարած ...* (Հ, 609): – Ի՞նչ լամ, իմ հայր թագաոր, *Ձագերս ի ծօցէս տարեր են* (Հ, 611):

Ինչպես նշեցինք, այս կարգի նախադասություններում գերադաս անդամի կազմությանը մասնակցում են նաև *լինիլ* և *պիտիմ* բայերի միադիմի ձևերը: Օրինակ՝ Ի սերմանելոյ ժամըն *Կու լինի* ա՛յսցեղ *հանդիպած*

(Հ, 849): Թէ զԽորշին բաներն ասեմ, Ի Յայսմաւորքն *պիտէր գրած* (ՄՊ): Սրանցից հարակատար դերբայի և *պիտի* (*պիտէր*) միադիմի բայաձևի հարադրությամբ արտահայտվող նախադասությունները բովանդակության պլանում համանիշ են *անորոշ դերբայի ուղղական հոլովաձև-պիտի* (*պիտէր*) *միադիմի բայաձև* կապակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասություններին (*Չի պիտէր մէկիկ մի ապրած* նշանակում է «*չի պիտէր մէկիկ մի ապրել*»): Ասվածի մասին վկայում են հետևյալ կառույցների ընդգծված նախադասությունները՝ *Ատոր ի նշ խածնել պիտէր*, Ատի մեր կրակն է վառած (Հ, 198): *Բայց տեսնույ պիտի եւ փնտռել եւ իմանալ զստնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամէն կերպ*: (ՄՄԴ) և այլն²⁴⁹: Պատահական չէ, որ անորոշ դերբայի ուղղականով և հարակատար դերբայով բաղադրված այդօրինակ միակազմ նախադասություններ գործածվում են նույնիսկ միևնույն բարդ համադասական կառույցի կազմում՝ *Ոչ խիստ արտորայ պիտի*՝ Ի ոչ անհոգ, նա՛յ, ի վայր [*պիտի*] *նըստած* (Հ, 850)²⁵⁰:

Ուշադրության է արժանի այս ենթախմբի նախադասությունների գերադաս անդամների բաղադրիչների շարադասությունը (*միադիմի բայաձև-հարակատար դերբայ*), որը պայմանավորված չէ այդ անդամների դրական կամ ժխտական կազմությամբ: Սրանով նրանք տարբերվում են *եմ բայի միադիմի ձևով* ու *հարակատար դերբայով* և *անորոշ դերբայի ուղղական հոլովաձևով* ու *պիտի միադիմի բայաձևով* կապակցությամբ կառույցներից, որոնց գերադաս անդամների բաղադրիչները շարադասական սահմանափակություն չունեն:

Ի տարբերություն *եմ* բայի միադիմի ձևերի ու հարակատար դերբայի կապակցությամբ արտահայտվող միակազմ նախադասությունների՝ *լի-*

²⁴⁹ Հարակատար դերբայով և *պիտի* միադիմի բայաձևով արտահայտված կառույցները միջին հայերենից փոխանցվել են աշխարհաբարին:

²⁵⁰ Հարակատար դերբայով և *պիտի* միադիմի բայաձևով արտահայտված կառույցների մասին ժամանակին նշել է Մտ. Պալասանյանը՝ դրանք համեմատելով անորոշ դերբայով և *պիտի* կամ *պէտք է* «անդեմներով» արտահայտված կառույցների հետ, որոնք գործածվում են «խօսքին աւելի որոշութիւն տալու համար. գործրինակ. *Ի նշ պէտք է արած. Մեղաւորը պէտք է պատժած: Պաս օրին միս չպէտք է կերած* (փոխանակ՝ *չպէտք է ուտել*)» (Մտ. Պալասանեան, 1874, 202): Պարզ երևում է, որ լեզվաբանը գրական հայերենի համար ընդունելի է համարում անորոշ դերբայով և *պիտի* կամ *պէտք է* միադիմիներով արտահայտված կառույցները:

նիլ և պիտիմ քայերի միադիմի ձևերի ու հարակատար դերբայի կապակցությամբ արտահայտվող միակազմ նախադասությունները միջին հայերենի լեզվական աղբյուրներում հազվադեպ են:

5. «ԵՂԱՆԱԿԻԶ ԲԱՌ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ» ՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱԽ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում անկախ միադիմի նախադասությունները կարող են արտահայտվել նաև «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով: Օրինակ՝ *Եւ կաշառաւք ոչ է պարտ թիրել զհրաւունքն*. զի անթողելի մեղք է առաջի Աստուծոյ (ՎԱԱ): *Արդ վասն ջերմանցն զհտութեան առաւել պէտ առնել արժան է յաղագս երից պատճառանաց* (ՁՄ): *Այլ նախ արժան է ի ձեռնարկութիւնս ... մտապահ լինիլ և ապա ձեռնամուխ լինել* (ՀՄՁ, 231): *Եւ զայս ասեմ ոչ եթէ այլ և այլ են տան Ծննդեանն և Մկրտութեանն, այլ ի միում աւուր տաւնել պարտ է* (ՎԱԳՀ, 238):

Նշված մասնակաղապարով արտահայտվող նախադասություններում, ինչպես «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակաղապար ունեցող անկախ միադիմի կառույցներում, տեղի է ունենում անորոշ դերբայով արտահայտված գործողության եղանակավորում: Հմմտ.

- մի կողմից՝ *Եւ զայս ժիր կարդալ պարտ է եպիսկոպոսին եւ պարոնացն* (ՄՄԴ): *Լաւ է ցանկալ զհտութեան, Քան թէ ծնողաց տեսութեան* (ՅԳ, 24): *Արդ արժան է յառաջ զհտենալ զբոբբոսիլն զչորս նիւթերոյն՝ որ ի մեզ են* (ՁՄ): *Պարտ է կարգաւ խոնարհեցուցանել զբայ և ոչ այլ ընդ այլոյ* (ԴՁ, 137),

- մյուս կողմից՝ Բայց զչափաւորն *աշէլ կու պիտի*, որ զշահն ի զէն չփոխի (ԱԱՕԲ): Ասէ Ջաքարիային որդին, թէ զգործդեղն թեթեւցնել եւ համառօտ *այնել կու պիտի* (ԱԱՕԲ): *Բայց տեսնուլ պիտի եւ փնտռել եւ իմանալ զմտնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամէն կերպ*: (ՄՄԴ):

Այլ նախադասություններում տեղի է ունենում անորոշ դերբայով արտահայտված գործողության հավաստում, կանոնակարգում և այլն, որոնք նույնպես ստորն համարում ենք եղանակավորում: Հետևաբար ստացվում է, որ այս խմբի միադիմի նախադասությունները սովորաբար ունեն եղանակավորող նշանակություն, որի արտահայտություններից են

անխուսափելիությունը, պարտավորությունը, անհրաժեշտությունը, կանխատեսումը, անհնարիությունը, հարկադրանքը, թելադրանքը, ստիպումը, անթույլատրելիությունը և որոշակիորեն չտարբերակված եղանակավորող այլ նշանակություններ:

Այս կարգի անկախ միադիմի նախադասությունների՝ բաղադրյալ կազմությամբ գերադաս անդամի թեք բայաձևն արտահայտվում է միայն էական *ես* և *լինիլ/լինել/լինալ* բայերի միադիմի ձևերով, որոնք եղանակիչ բառի հետ կազմում են մեկ շարահյուսությո՝ որպես ստորոգելի հանդես եկող մյուս շարահյուսությին՝ *անորոշ դերբային* առընթեր կատարելով, համապատասխանաբար, հանգույցի և անորոշ գործողությունը երանգավորողի դեր: Օրինակ՝ Եթե ոք ընդ անգէտս հաղորդի անսուրբ, նա *պատեհ է տեսնուլ* զմարդն՝ թէ ինչ մարդ է եւ կամ յինչ հասակի (ՍՄԴ) *Պարտ է այսօր ուրախանալ*, Զի հայրապետքն են կանոնեալ (ՄՂ): Գող եւ ծեծվոր չէ *պարտ յղարկել* թագվորին (ՍՄԴ): Բայց զխրատելոյն կամ զմեոցնելոյն՝ առանց թագաւորին կամ իշխանին *չէ արժան այնել* (ՍՄԴ): *Պարտ է օրհնել* Տէրն ամենայն (ՄԻԳ): Ինձ *չէ պարտ* համարձակ՝ նըման եղբօր ի քեզ *խօսել* (ԿԵ, 74): Իսկ վասն եթի, թէ որպէս *պարտ իցէ դնել*, կամ ի վերջոյ տողին դնելի է զկնի անձայն գրին (ԴԶ, 95): Բայց ինձ Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ *հարկ եղել* յայս տեղիս *գտնուլ* զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն (ՍՄԴ) և այլն: Նկատենք, որ վերոնշյալ մասնակաղապարը գերազանցապէս արտահայտվում է *ես* բայի սահմանական ներկայի (*է*) մասնակցությամբ: Ասվածին հակառակ՝ *ես* բայի *իցէ* և *լինիլ* բայի *եղև* միադիմի ձևերով արտահայտված վերջին երկու կառույցները բացառիկ են: Իսկ *էր* սահմանական անցյալով կազմություններ հազվադեպ են հանդիպում, ինչը, սակայն, հիմք չէ եզրահանգելու, թե դրանց գործածությունը միջին հայերենում ընդունված չէր: Ահավասիկ մեզ հանդիպած բացառիկ վկայությունը՝ *Չէր պարտ լսել* մեր չարկամին (ՎՍ, 21): Կարծում ենք՝ սահմանական անցյալով կազմությունների գրեթե բացակայությունը պայմանավորված է նրանով, որ մեզ հասած աղբյուրներում հիշյալ բայաձևի մասնակցությամբ միակազմ նախադասություններ կազմելու անհրաժեշտություն չի եղել:

Որպէս կազմությամբ բաղադրյալ գերադաս անդամների անվանական բաղադրիչ գործածվում են *ամօթ, անդէպ, անկար, արժան, բարւոք, դժուարին, դիժար, դիրին, ժամ, ի դէպ, լաւ, կարելի, հարկ, հնար, պատեհ,*

պատշաճ, պարտ//պարտք, պիտոյ, վայելուչ, փոյթ և այլ գոյականներ ու անականներ²⁵¹: Ասվածը հիմնավորենք մեկական օրինակով՝ Խաչատո՛ր, րե՛կդ, Որ ի յափիդ մեջն կու լողայ (Հ, 631): Այժմ *ամօթ* է առաջի նոցա *ասել* բան (ՎԱԱ): Խնդամտաբար եւ խնկեալ յաւժարութեամբ *պարտ եւ վայելուչ է առնել* զհիմն բանիս ի նախաստեղծէն մերմէ Ադամայ, համառատիւ *հասուցանել* մինչեւ ուր խնդիրն է մեզ (ՄԱՆ): *Պարտք է հեռանալ* անտի, որ չլինիս բաժինն զեհենի (ԽԿ, 32): Գիտեմ, տէ՛ր, քեզ *չէ դիժար Ազատել* զհիւանդն ի ցաւէն (ԽԿ, 26): Ուստի և զայս *գիտել արժան է*, զի նախքան զմեզ էին զիտաղք արուեստիս (ԵՆ, 171): զի *կարելի է* ըստ ձևոյ տանեցի հաւուցն *կոչել* զամենայն հաւականաց զարականանքն և զիզականքն և չեզոքն (ԴԶ, 107): Իսկ թէ ասեն՝ Աստուծոյ բնութիւնն մեռաւ, ասացնոսա. Ո՞րպէս *հնար է* Աստուծոյ *մեռանել* (ՎԱԳՀ, 200): *Բարևք է գիտանալ* զամենայն ի հնոց եղեալ բանս և գործս ի սկզբանէ արարածոց (ԴԶ, 67): Զի Պողոս առաքեալն կոյ հրամայէ, թէ *լաւ է բնակիլ* յանայպատի քան ընդ կնոջ անզգամ եւ բարկացողի եւ լեզւանոյ (ՎԱԱ):²⁵² զի յոյժ *դժուարին է* յաղագս աստուծոյ *խօսել*, զի անհասական է մարդկային մտաց (ՎՎՅՏ, 157): *Գիտել պարտ է*, զի առաջին շարժուն ֆալաքին և աստեղացն (ՅԵ, 308): Պանիսն քաղաք՝ ուր աւուրց ճանապարհ ընդ ցամաք *պիտոյ է* ընթանալ (ԱՔՀՊ, 320): Զոր *ի դէպ էր երկրորդել* այժմու ժողովս եկեղեցեաց (ՆԿ, 11): յորժամ, որ հանդիպիս յայսպիսի երգ, նա *չէ փոյթ*

²⁵¹ Նշված բառերը տեսականորեն կարող են մասնակցել նաև զուգորդվող միադիմի նախադասությունների գերադաս անդամների կազմությանը՝ ձևավորելով անկախ միադիմի նախադասություններին համանիշ հաղորդակցական միավորներ: Ավելին՝ սրանց մի մասը, փոխանվանաբար գործածվելով, հանդես է գալիս նաև երկկազմ նախադասություններում, որոնք դառնում են միակազմ նախադասություններով ձևավորված շարահյուսական համանշտության շղթան համալրող նոր միավորներ: Հմտ. 1. Եւ *յայնժամ պատեհ է* որ պատրաստ կենան, զի մահ բերէ (ԱԱՕԲ): 3. Եւ թէ ուրդի, որ ի խաղալն տղայք զիրար սպանենն՝ *նա պատեհ է տեսնուլ զսպաննաւորին հասակն* (ՍՄԴ): 2. *Պատեհն այն է*, որ ի շարքսն հեղ մն լինայ, օգտէ (ԱԱՕԲ): Հմտ. նաև՝ *Պատշաճ է մեզ խնամութիւն և Պատշաճ է մեզ*, զի և այլն: Նկատենք, որ, լինելով երկկազմ նախադասություն՝ «*Պատեհն այն է*» գլխավորը պահանջում է ոչ թէ ենթակայի, այլ ստորոգելիի գործառույթ կատարող երկրորդական նախադասություն:

²⁵² Հմտ. Եւ յաւուր միում 'ի միտ էաճ այրն զան բանսն Պողոսի առաքելոյն, որ ասէ, թէ՛՝ *լաւ է բնակել* յանայպատի քան ընդ կնոջ անզգամի, լեզւանոյ եւ բարկացաւորի (ՎԱԱ):

արուեստ քերականութեան *խնդրել* ի նմանէ, այլ երգել աշխարհօրէն (ԴԶ, 69): *Դիրին է գտանել* գտնա, նա և բառս կորճայից, որք այսպիսի նախադրութեամբ վարին (ԴԶ, 154):

Ի տարբերություն որոշ միակազմ նախադասությունների, որոնք միջին հայերենին բնորոշ լեզվական իրողություններ են, «եղանակիչ բառ-միադիմի բայաձև-անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունները ավանդվել են գրաբարից²⁵³. այնտեղ նրանք նույնքան հաճախադեպ էին, ինչպես միջին հայերենում: Ահավասիկ օրինակներ գրաբարից՝ *Պարտ է խնդրել*, թէ արդեօք մայր գո՞յր նոցա (ԵԿ): *Որովք ոչ է հնար գիտել*, զինչ է ճանապարհ հողմոյ (ՄԳ) և այլն: Նկատենք սակայն, որ գրաբարում այս դերով հանդես եկող մի շարք եղանակիչ բառեր (*անկ, ճահ, մարթ* և այլն) միջին հայերենում դադարել են գործածվելուց:

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարի անորոշ դերբայով արտահայտվող բաղադրիչի գործածության առումով սեռի, կազմության և այլ սահմանափակություններ չեն նկատվում: Օրինակ՝ արժան է այնու *բաւականանալ* (ՄՀԲ, 623): Ապա իրաւի հարկ է մեզ ընտրողապէս ի վնասակարացն *փախչել* և օգտակարացն *բուռն հարկանել* (ՆԵՄՍ, 391): Բայց պարտ է *արթուն կենալ*, Վերո՛ւստ է ամեն պատրաստած (Ֆ, 850): Ձեզ պարտ է *լըսել*, եղբա՛րք, Յաշխարհի աստ դուք մի՛ խաբիք (Ֆ, 855): Յուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ եւ իմաստութեամբ *պարտ է առաջնորդին* եւ վարդապետին զամենայն ինչ *քննել*. եւ *ստուգել* ամենայն քահանայս եւ *յիմանալ* զվարս նոցա եւ որ չէ արժանի պատարագի, ծածկայբար *յանդիմանել* եւ *ոչ տալ թուլ* կրկին *յաչել* գորդին Աստուծոյ անարժան պատարագան եւ հաղորդութեամբն (ՎԱԱ):

Ինչպես «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև», այնպես էլ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններով նկարագրվում են անդեմ բայերով (տվյալ դեպքում՝ անորոշ դերբայի ուղիղ ձևով) արտահայտված գործողություն՝ *Քննել արժան է* և գայս, թէ զի-սա՞րդ եկեղեցիք հայաստանեայցս ի մուտն Նուասարդի տան կատարեն

²⁵³ Գ. Խաչատրյան, 2002, 120-135:

Յովանու (ՎՎՅՏ, 166): Վասն այնորիկ *պարտ է* առն կնոջն՝ զժամանակն առողջութեան *ընտրել*, զի առողջ լինի մանուկն (ԱՍՕԲ): *Հարկ է* մեզ ընտրութիւն *առնել* (ՅՈՂ, 379):

Նշված մասնակաղապարով միակազմ նախադասությունների՝ անորոշ դերբայով բաղադրիչն այս դեպքում ևս արտահայտում է գերադասանդամի հիմնական իմաստը, իսկ նրա հետ գործածվող *եղանակիչ բառ-միադիմի բայաձև* կապակցությունը, որպես կանոն, եղանակավորում է անորոշ դերբայով արտահայտված գործողությունը, որը փաստորեն արտահայտում է տվյալ նախադասության հիմնական իմաստը: Օրինակ՝ Եւ այժմ *պարտ է* Ձշռոմն *կարգաբանել* և գՊարսիկս (ՄԱՊՀ, 58): Ու կէսք մ՝ ասեն, թէ՛ *Պարտ է* զայնպիսոյս արիւնն *հեղել* (ԿԵ, 76): *Հարկ է* փոքր ի շատէ յաղագս վանականաց *գրել*, եւ զայս արժան է զյերկար սահմանն ի սրբոյն Սահակայ գրենացն *ուսանել* (ՍՍԴ) և այլն:

Բարդ կառույցներում, ելնելով խոսքի ոճավորման անհրաժեշտությունից, միննույն անվանական բաղադրիչը կարող է նաև զեղչվել՝ Եւ թէ զմարմնաւոր ծնօղսն պարտ է սիրել, որչափ եւս առաւել զերկնաւոր Հայրն մեր զԱստուած սիրել պարտ է եւ զպատուիրան նորա [*պարտ է*] պահել (ՎԱԱ): Վասն զի *չէ պատեհ* փոթով *հաւատալ* ամենայն բանից եւ [*չէ պատեհ*] քննել եւ [*չէ պատեհ*] իմանալ զճշմարտութիւն (ՎԱԱ): Յայս կեանքս *պարտ է ջանալ եւ* [*պարտ է*] *գղջանալ եւ* [*պարտ է*] *ապաշխարել* զմեղս (ՎԱԱ): Ձխօսքն զիտութեամբ պարտ է դաս ասել, Ոսկով [*պարտ է*] կշռել և ապա [*պարտ է*] խօսել (Հ, 963) և այլն:

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասությունների գերադասանդամի բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր շարադասությամբ: Նկատելի են հետևյալ օրինակափոխությունները.

1. Նշված անդամի դրական տարբերակը լեզվական աղբյուրներում հանդիպում է ոչ միայն *եղանակիչ բառ-չեզոք սեռի միադիմի բայաձև-անորոշ դերբայ*, այլև *անորոշ դերբայ-եղանակիչ բառ-չեզոք սեռի միադիմի բայաձև* շարադասությամբ: Հմմտ.

- մի կողմից՝ Ապա *պարտ է* յառաջ իր ապաշխարութիւն *տալ քաշել* վասն անհնազանդութեանն զպատեհն (ՍՍԴ): Եւ ընդ այս ըզորդ անցնել՝ այլ չէքուչէք *չէ պատեհ առնուլ* ավելի ի հարկատվացն (ՍՍԴ): *Պարտ է* զդեղ խարտէշ մաղձին ամոռն *առնուլ* (ԱՍՕԲ),

- մյուս կողմից՝ Եւ կերակուրն ուտելն ի յատենն *դեղ առնել պիտոյ* է (ԱՍՕԲ): Եւ *կուրացնել* յերկու աչաց *արժան է* (ՄՄԴ): Արդ վասն ջերմանցն գիտութեան առաւել *պէտ առնել արժան է* յաղագս երից պատճառանաց (ՋՄ) և այլն:

Սակայն այն փաստը, որ բերված երկու տարբերակները լեզվական աղբյուրներում նույնիսկ միևնույն արտահայտության միջոցներն ունենւմ, ակնհայտորեն վկայում է տվյալ ժամանակահատվածում դրանց ազատ շարադասության մասին: Հմտ. *Պարտ է գիտել*, որ ժողովարան թարգմանի՝ որ հանիկ լինի ամենայն ազգաց հաւատացելոց ... ի մաւր մեր հանգչիլ ի գիրկ (ՄՄԴ): Այլ *պարտ է* գլխինն ընդ հոյի *լծել*, զի երբեմն կալնուն զմիմեանց տեղիս (ԴԶ, 142) և *Գիտել պարտ է* որ մկրտութիւն եւ ձեռնադրութիւն մէկ է (ՄՄԴ) և այլն:

Այսուհանդերձ, ակնհայտ է *եղանակիչ բառ-չեզոք սեռի միադիմի բայաձև-անորոշ դերբայ* շարադասությամբ անկախ միադիմի նախադասությունների հաճախադեպությունը, որը հետագայում ամրագրվել է հայոց լեզվի զարգացման հաջորդ շրջանի՝ աշխարհաբարի երկու ճյուղերում:

2. Նույնը չենք կարող ասել հիշյալ մասնակադապարի ժխտական տարբերակի մասին, որը գործածվում է միայն *ժխտական խոնարհման միադիմի բայաձև-եղանակիչ բառ-անորոշ դերբայ* շարադասությամբ²⁵⁴: Օրինակ՝ Զի որպէս զերեցն *չէ պատեհ* ի հարկ *դնել*, նա հայնց ոչ զհարկտուն չկարէ որ հանել ի հարկէն առանց պարոնիւն կամացն (ՄՄԴ): Վասն այն ոչ է *պարտ* ի գիշահոտ տեղ *ննջել* (ԱՍՕԲ): Փուշքարին տանն առջեն եւ եհար զիս ջոմխով²⁵⁵ ի քուրծս եւ անհարկի խօսօք զիս ամաչեցոյց. զոր *չէ պարտ ասել* (Կ-Պ) և այլն: Նկատելի է, որ այս դեպքում ժխտական խոնարհման միադիմի բայաձևն գործածվում է անվանական բաղադրիչից առաջ՝ Եւ կաշառաւք ոչ է *պարտ թիրել* զիրաւունքն (ՄՄԴ): Եւ նայ ի բաց վարեաց գաւճն եւ ասաց. ոչ է *արժան առնուլ ինչ ի թունալից բերանոյ քումէ* (ՎԱԱ): ... ոչ է *արժան վատ ասել նմա* (ԶՊ, 20):

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակադա-

²⁵⁴ Հայրեններից քաղված *Կին մարդոյն պարտ չէ խօսել, Ո՛չ յատեն՝ ո՛ր չ՛ յեկեղեցի* (Հ, 458) նախադասությունը մեզ հանդիպած բացառիկ օրինակն է, որում ժխտումն արտահայտվում է *անուն-ժխտական խոնարհման միադիմի բայաձև-անորոշ դերբայ* շարադասությամբ:

²⁵⁵ Լոռու խոսվածքում՝ *չումբախ չումբախով*:

պարով արտահայտվող անկախ միադիմի կառույցներում ժխտական իմաստն արտահայտվում է *ոչ* և *չ* մասնիկներով (ի տարբերություն «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակաղապարով արտահայտվողների, որոնց ժխտականն արտահայտվում է *չի* և *չ* մասնիկներով), որոնք ավելանում են միադիմի բայաձևի դրական խոնարհմանը: Պետք է նշել, որ միջին հայերենում նշված մասնակաղապարի ժխտական իմաստի արտահայտման համար *ոչ* և *չ* ժխտական մասնիկները միևնույն անփոփոխի փոփոխակներն են, ինչի մասին վկայում են լեզվական փաստերը. անգամ նույն հեղինակն է վերոնշյալ մասնիկներով գուգաձևեր գործածում, ընդ որում՝ միևնույն արտահայտության միջոցներով: Հմնտ. Եւ ծեր շուն ասաց եւ այլ շատ բաներ ասաց. գոր *ոչ է պարտ խօսել* (Կ-Պ): Եւ գորացիսներն անհարկիք խօսօք ամօթեց եւ յետոյ եկաւ եւ սկսաւ Սերհիյին կնոջն անպատեհ խօսօք անհարկութիւն իտուր. գոր *չէ պարտ լսել* (Կ-Պ): . Յուցանէ առակս, թէ *ոչ է պարտ առնել ի պղծոյ* եւ անգղջից, որ ոչ կամին դիմել առ Աստուած ապաշխարութեամբ եւ արտասուաւք (ՎԱԱ): Յորժամ արիւնն ի քթէն վազէ *չէ պարտ արգելել*, թէ ոչ արծուի կու առնէ քաւել (ԱՄՍ, 122) և այլն:

Հետաքրքրական է նշված մասնակաղապարի ժխտական իմաստի արտահայտման «ժխտական կազմությամբ եղանակիչ բառ+միադիմի բայաձև-դրական կազմությամբ անորոշ դերբայ» տարբերակը, որն արտահայտվում է ոչ թե միադիմի բայաձևի, այլ եղանակիչ բառով: Ըստ մեր դիտարկման՝ միջին հայերենում առանձնանում են նշված տարբերակով սահմանափակ կիրառություններ՝ Եւ ասէ օձն. ո՛վ բարի թագաւոր, *անդէպ է ինձ գալ* առ քեզ (ՎԱԱ): Արարք եւ գործք նոցին որք յանդգնեցան *Անկար է թիւ առնուլ* զեղեալսն ամենայն (ՄՂ): Նկատենք, որ ժխտման այս ձևը առկա է դեռևս գրաբարում. նմանատիպ կառույց հանդիպում է Ղազար Փարպեցու պատմության մեջ: Խոսքը «Յաղագս որոյ համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, *թէ աւելի՛ ձեզ եւ անդէպ՝ ա՛յլ մարգպան կացուցանել*» (ՂՓ) կառույցի ընդգծված նախադասության մասին է, որը ՆՀԲ-ն մեկնաբանում է հետևյալ ձևով՝ *Յաղագս որոյ համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, թէ աւելի՛ (է) ձեզ եւ անդէպ՝ ա՛յլ մարգպան կացուցանել*:

Անկախ միադիմի կառույցների բաղադրյալ գերադաս անդամը կարող է ընդամիջարկվել այլ անդամով կամ անդամներով, ինչը, սակայն, չի

խաթարում այդ բաղադրիչների քերականական կապը, ընդհակառակը, նշված հանգամանքը վկայում է դրանց միջև գոյություն ունեցող իմաստի սերտության մասին: Օրինակ՝ *Ոչ է պարտ* զաւետարանն Քրիստոսի սուտ *համարել*. այլ պարտ է հաւատալ եւ կատարել, զոր հրամայել է (ՎԱԱ): Բայց թագաւորաց եւ աշխարհաւոր արինաւորաց *չէ պատեհ* զայտ այտ ցեղ *թուլցնել* (ՍՄԴ): Եթէ ումէք կին ի բոգութեան բռնվի, եւ կամ մարդ ցուլ առ ինքն՝ նա *պատեհ է* ստուգութեամբ *քննել* զճշմարիտն (ՍՄԴ): Վասն որոյ *պարտ է* ամէն եղանակի լուծման դէղով զանձն *յիստըկել* (ԱՍՍ):

Անկախ միադիմի նախադասությունների կազմում երբեմն հանդէս են գալիս տրական հոլովով անդամներ՝ արտահայտված՝

ա) գոյականով, օրինակ՝ Յուցանէ առակս, թէ պարտ է համբերել *վարդապետին* եւ հեզութեամբ աւկտեցուցանել ժողովրդեան. եւ քաղցրութեամբ կոչել զմեղաւորսն եւ զհեթանոսսն յապաշխարութիւն (ՎԱԱ): Եւ ոչ է օրէն *հզորի* ելանել յախոյեան ընդդէմ մանկանց տղայոց (ՊՏ, 18): Վասն որոյ պարտ է *ւօրն*, մինչ մանուկն յարգանդին լինի՝ ի վնաս կերակրոց պատրաստ կալ (ԱՍՕԲ)²⁵⁶,

բ) 1-ին, 2-րդ կամ 3-րդ դեմքի դերանունով՝ Լաւ է *ինձ* մեռանել, քան թէ կենդանի (ԽԿ, 24): Բայց եւ *մեզ* աշխարհական հաւտիս *պարտ է* մերոց հովուացն *հնազանդ լինել* իբրեւ Աստուծոյ հայցն (ՍՄԴ): *Ձեզ* պարտ է լըսել, եղբա՛րք, Յաշխարհի աստ դուք մի՛ խաբիք (Ֆ, 855): *Եղբարք*, պարտ է *մեզ* քաջանալ, Մինչեւ ի մահ պատերազմեալ (ԱՍ): Եւ ասէ աղվէսն. ով անմիտս եւ յիմարս, յառաջն պարտ էր *ինձ* ուտել եւ ապայ գոհանալ զԱստուծոյ (ՎԱԱ): *Պարտ է քեզ գործել*, զոր աստուած յանձնեաց (ՊՎ, 429),

գ) փոխանունով՝ Յուցանէ առակս, թէ պարտ է զայս ասել *առաջնոր-*

²⁵⁶ Հետևյալ նախադասության մեջ Ամիրդովլաթ Ամասիացին գործածել է միջոցի խնդիր, որը տվյալ համատեքստում բովանդակային պլանում փոխարինում է հանգման խնդրին՝ Կին որ ամուլ լինի եւ տղայ չբերէ՝ նա պատեհ է *բժշկաւք* տեսնուլ եւ իմանալ թէ ի յոր դեհաց է, ի յայրկնէն՝ թէ կնկնէն (ՍՄԴ): Նույնը չենք կարող ասել «Բայց աղէկ պիտի տեսնուլ ու փնտռել *վկայաւք*՝ որ ընդ վնասուն տէրն դարպաս ասցել լինայ եւ ի դարպաս այլ գնացել ու ասցել» (ՍՄԴ) նախադասության ընդգծված միջոցի խնդրի մասին, որն իր բովանդակության պլանում երկրորդաբար չի համատեղում հանգման խնդրի քերականական իմաստը, քանի որ այս դեպքում որպէս հանգման խնդիր ենթադրվում է *դատաւորաց* ոչ թէ *վկայից* բառաձևը: Հմտ. Բայց *դատաւորաց* աղէկ պիտի տեսնուլ ու փնտռել *վկայաւք* :

դին առ ժողովրդին, թե համբերեցէք եւ տամք զաւրէն Աստուծոյ (ՎԱԱ)²⁵⁷:

Տրական հոլովով արտահայտված անդամները բերված կառույցներում հանգման խնդրի շարահյուսական գործառույթ են կատարում՝ անուղղակի կերպով ցույց տալով գործողություն կատարողին:

Թեև որոշ նախադասությունների կազմում տրականով արտահայտված անդամը բառային արտահայտություն չունի, սակայն, ելնելով խոսքային իրադրությունից, այն ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում, և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել, ինչպես՝ Եւ նայ ՚ի բաց վարեաց զաւճն եւ ասաց. *ոչ է արժան [ի նձ-Գ.Խ.] առնուլ ինչ ՚ի թունալից բերանոյ քումէ*: (ՎԱԱ):

Այն դեպքում, երբ այս կարգի նախադասություններում բացակայում է տրական հոլովով արտահայտված անդամը, գերադաս անդամով արտահայտված հատկանիշը ենթադրաբար վերագրվում է բոլորին, ինչպես՝ Եւ թէ ատեցվոր լինին մէկումէկն՝ անմեղանք՝ առանց բոզութեան՝ նա պատեհ է յերկար ժամանակ *փնտռել* (ՍՄԴ): Յուցանէ առակս, թէ *ոչ է պարտ առնել ի պղծոյ եւ անզոջից*, որ ոչ կամին դիմել առ Աստուած ապաշխարութեամբ եւ արտասուաւք (ՎԱԱ): Յուցանէ առակս, թէ *զբարեմիտն, զհեզն եւ զհամբերաւոն պարտ է կացուցանել առաջնորդ եւ թագա-*

²⁵⁷ Պ. Վարդապետյանը «Պարտ է զայս իմանալ, որ տղային երակն գեճային լինի» կարգի նախադասությունները համարում է անորոշ-դիմավոր, իսկ «Պարտ է բժշկին, որ իմաստուն լինի» կարգի նախադասությունները երկկազմ գտնելով, որ վերջիններիս կազմում առկա է տրական հոլովով ենթակա (*Պ. Վարդապետյան, 1975, 138*): Գտնում ենք, որ ա) այսօրինակ նախադասություններում տրական հոլովով արտահայտված անդամը ոչ թե ենթակայի շարահյուսական գործառույթ ունի, այլ հանգման խնդրի, և բ) այդ նախադասությունները ոչ թե երկկազմ են, այլ միակազմ: Բանն այն է՝ նմանատիպ նախադասություններ կազմվում են նաև ժամանակակից հայերենում (օր.՝ *Մեզ հարկավոր է համբերել*), սակայն տրական հոլովով արտահայտված ենթակայի մասին խոսք չկա. բոլոր շարահյուսագետները գտնում են, որ ժամանակակից հայերենում ենթական արտահայտվում է միայն ուղղական հոլովով: *Մեզ հարկավոր է համբերել* կարգի նախադասություններում առկա է միադիմի բայաձևով գերադաս անդամ՝ *հարկավոր է համբերել*, որով արտահայտված գործողությունը կարելի է անուղղակի կերպով վերագրել կա՛մ 1-ին, կա՛մ 2-րդ և կա՛մ 3-րդ դեմքով արտահայտված առարկայի (հանգման խնդիր), իսկ դրանց բացակայության դեպքում՝ բոլորին: Հմմտ. *Ինձ (մեզ) հարկավոր է համբերել: Քեզ (ձեզ) հարկավոր է համբերել: Նրան/երեխային (նրանց/երեխաներին) հարկավոր է համբերել և Հարկավոր է համբերել*:

ւոր, իշխան եւ դատաւոր. եւ ոչ գաներկեղն եւ զխիստն եւ զչարայբարոյն եւ զանգգամ (ՎԱԱ) և այլն:

Ասվածից հետևում է, որ «Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտված նախադասությունները, որոնք իրենց կազմում չունեն միադիմի գործողությունն անուղակիորեն կրող հանգման խնդիր, բովանդակության պլանում համանիշ են ընդհանրական-դիմավոր նախադասություններին, քանի որ վերջիններին պես սրանք ևս արտահայտում են բոլորին վերագրելի գործողություն՝ վասն որոյ պարտ է դարմանել զնա և կաղանդել, դեղել²⁵⁸ և աղապատել²⁵⁹, զի թերևս զղջասցի և գայցէ յուղղութիւն (ՎՎԲԳ, 378):

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող միադիմի նախադասությունները միջին հայերենում շարահյուսորեն համանիշ են «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասություններին: Տարբերությունն այն է, որ այդ կառույցներից առաջինում անորոշ դերբային որպես հանգույց կապակցվում է այլ շարահյուսությո՞ւթ, իսկ անորոշ դերբայով արտահայտված գործողությունը երանգավորում՝ մեկ ուրիշը, մինչդեռ «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միադիմի նախադասություններում հիշյալ երկու շարահյուսությո՞ւթերի փոխարեն հանդես է գալիս մեկը, որը հանգույցի գործառույթ ունենալուն զուգահեռ երանգավորում է անորոշ դերբայով արտահայտված գործողությունը (օրինակ՝ *պիտի յիշել* և *պիտոյ է յիշել*, *վայել է ասել* և *վայել է ասել* և այլն): Հմմտ. Բայց՝ զինչ ցեղ եւ է, արեան պարտական է, *եւ սահմանել պիտի* որ քաւէ (ՄՄԴ) և Եւ կերակուրն ուտելն ի յատենն *դեղ առնել պիտոյ* է (ԱԱՕԲ): Շաքրին շատ *ուտել չկայլէ*, Արդմորդուն սրտին կահոկէ (Հ, 221) և Արդ վասն ջերմանցն գիտութեան առաւել *պէտ առնել արժան է* յաղագս երից պատճառանաց (ՋՍ) և այլն:

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական

²⁵⁸ Բնագրում՝ *գեղել*:

²⁵⁹ *Աղապատել*՝ ՆՀԲ-ն և ՄՀԲ-ն չունեն: ՆՀԲ-ն ունի *աղապատանք*՝ «Աղեօք գթոյ և սիրո պատումն. բնաւորական բերումն. սէր և կարեկցութիւն» իմաստներով, ուստի *աղապատել* նշանակում է «սիրել, կարեկցել, գթալ»:

հոլովածն» մասնակադապարով արտահայտվող միադիմի նախադասությունները միջին հայերենում շարահյուսորեն համանիշ են նաև «եղանակիչ բառ+միադիմի բայածն» մասնակադապարով արտահայտվող գուգորդվող միադիմի նախադասություններին: Տարբերությունն այն է, որ առաջիններում եղանակիչ բառի և միադիմի բայածնի հետ հանդես է գալիս նաև անորոշ դերբայ, իսկ երկրորդ կարգի նախադասություններում անորոշ դերբային փոխարինում է երկրորդական նախադասություն: Հմմտ. հետևյալ նախադասությունները.

- մի կողմից՝ *Եւ չէ պարտ կարծել, թէ փոքր գնով ենք գնած* (ՄՄԴ): Յուցանէ առակս, թէ *չէ պարտ աղքատին ընդ մեծատան ձկտիլ* եւ ոչ ՚ի կրիւ *մտանել* (ՎԱԱ): *Եւ միայկանի դատաստան չէ պարտ առնել*. զի շատ վնաս լինի ի յայնմանէ (ՄՄԴ),

- մյուս կողմից՝ Բայց թէ կենայ ճարակ՝ նա *պատեհ է, որ եպիսկոպոսն զամէնն եկեղեցոյն ի շէնքն տայ կամ ի վարդապետանոց եւ կամ ճշմարիտ գերետորոջ* (ՄՄԴ): Եւ յորժամ բշտերն չորնայ՝ աղ տրորէ Ըռուֆօսն ասէ, թէ զայս ցաս *չէ պարտ որ երկարեն որ չղժարնայ* (ԱԱՕԲ):

Պ. Վարդապետյանը «*պարտ է, պիտոյ է, արժան է, պատեհ է*» և նման միադիմի բայերի ու անորոշ դերբայի հարադրությամբ կազմված նախադասություններին տեղ է տալիս անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների շարքում: Օրինակ՝ Պարտ է զայսպիսոյս արիւնն հեղել²⁶⁰, սակայն պետք է նկատել, որ սրանցում արտահայտված գործողությունները վերաբերում են ոչ թե մեկ կամ մի քանի անձի, այլ բոլորին: Պատահական չէ, որ նշված կարգի կառույցներում կարող է տեղ գտնել ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների բովանդակության պլանում ենթադրվող *սովորաբար, առհասարակ* կամ *ընդհանրապես* բառերից որևէ մեկը՝ «*Պարտ է, [սովորաբար-Գ.Խ.], զայսպիսոյս արիւնն հեղել*»: *Մրգերն [ընդհանրապես-Գ.Խ.] յայնժամ ժողվել պիտի, որ կատարեալ հասնի և քաղցր լինի* և այլն: Անորոշ-դիմավոր չէ նաև *կու պիտի*-ով կազմված գլխավոր նախադասությունը, քանի որ նրանով արտահայտված գործողությունը ևս ենթադրաբար հնարավոր է վերագրել ոչ թե մեկ կամ մի քանի անձի, այլ ընդհանրապես բոլորին՝ [*Առհասարակ/ընդհանրապես-Գ.Խ.*] *կու պիտի*, որ հիւանդն միս չուտէ (ԱԱՕԲ): Ասվածը

²⁶⁰ Պ. Վարդապետյան, 1975, 135-136:

վերաբերում է անորոշ դերբայի գործողությունը եղանակավորող այն կառույցներին, որոնցում բացակայում է հանգման խնդիրը:

Հանգման խնդիր ունեցող նախադասությունները, որոնք արտահայտվում են «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» և «միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակադապարներով, շարահյուսորեն համանիշ են երկկազմ նախադասությունների՝ ըստ վերջիններիս ստորոգյալների և նշված միակազմ նախադասությունների հանգման խնդրի դիմային համապատասխանության: Այսպես՝ ա) «*Բայց ինձ Մմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ հարկ եղեւ յայս տեղիս գտնուլ զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն*» (ՄՄԴ) նախադասությունը բովանդակության պլանում համանիշ է եզակի թվի 1-ին դեմքով արտահայտված, սակայն երկկազմ նախադասություններին, բ) «*Եղբարք, պարտ է մեզ քաջանայ, Մինչեւ ի մահ պատերազմեալ*» (ԱՍ) նախադասությունը՝ հոգնակի թվի 1-ին, դեմքով արտահայտվածներին, գ) «*Լաւ է բանիլ քեզ քան թէ՛ ՚ի կենաց էլնել*» նախադասությունը՝ եզակի թվի 2-րդ դեմքով արտահայտվածներին և այլն:

Պատմագրական երկերից բացի, որոնք միջին հայերենում սովորաբար շարադրվում էին գրաբար, «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» մասնակադապարով արտահայտվող նախադասություններ գերազանցապես գործածվում են խոսքը ոճավորելու նպատակով՝ ավելի հաճախ հանդիպելով արձակ ստեղծագործություններում:

Բ.2. ԶՈՒԳՈՐԴՎՈՂ ՄԻԱԴԻՄԻ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշել ենք, զուգորդվող միադիմի միակազմ նախադասությունները խոսքի շղթայում հանդես են գալիս միայն բարդ ստորադասական կառույցների կազմում և պահանջում ենթակայի շարահյուսական գործառույթով երկրորդական նախադասություն: Օրինակ՝ *Սպա թէ ուրդի՝ որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն*, նա կու տայ հրամանք արեւնքս, որ բաժնեն երբ այլ ճարակ չկենայ (ՄՄԴ): Ըռուֆօսն ասէ, թէ այս ուռենալն ցեղ ու ցեղ լինայ, եւ ազգի ազգի անուանեն. *եւ լինի որ խոչակն լման ուռի*. Եւ զայս չէ պատեհ որ կտրեն, այնոր համար որ արիւնն չի դադրիր (ԱՍՕԲ): *Եւ պիտի որ յայն ժամն կայթ*

կերած չի լինի եւ չի փոնքտայ (ԱՍՕԲ) և այլն:

Ենթակա երկրորդական նախադասություն պահանջելու պարտադիր հատկանիշից բացի՝ միջին հայերենում զուգորդվող միադիմի նախադասությունները, կախված իրենց արտահայտած իմաստից և գերադասանդամի կազմությունից, միատարր չեն. ի հայտ են բերում կառուցվածքային և դրանից բխող բովանդակային տարբերություններ: Ասվածը պայմանավորված է նրանով, որ այս կարգի նախադասություններում որպես գերադասանդամ կարող են հանդես գալ՝ ա) կա՛մ չեզոք սեռի միադիմի բայաձևեր, բ) կա՛մ չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտված բաղադրյալ կազմություններ, գ) կա՛մ էլ կրավորական սեռի միադիմի բայաձևեր: Արդյունքում ձևավորվում են կազմությամբ և բովանդակությամբ տարբեր հաղորդակցական միավորներ: Հմնտ., համապատասխանաբար, հետևյալ միակազմ նախադասությունները.

ա) *Յայնժամ կու պիտի* որ մարն խունկ ծամէ եւ զջուրն ի տղին բերանն կաթեցնէ (ԱՍՕԲ),

բ) *Եւ դեռ կարէ լինել*, որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին, որ սղալէ ու չկարէ գալ առ հիւանդն (ՍՄԴ): *Եւ չէ պատեհ*, որ ամէն բնութիւն զինքն ի գործ ածէ (ԱՍՕԲ),

գ) *Ասացած է*, թէ այս ցաւուս տէրն յորժամ վատուժ լինայ՝ կակղացնող եւ բացող դեղերն ի վրան դիր մինչեւ ուժովնայ (ԱՍՕԲ):

Այսպիսով՝ միջին հայերենում զուգորդվող միակազմ նախադասությունները բաժանվում են երեք ենթախմբի՝

Բ.2.1. չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասություններ,

Բ.2.2. չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասություններ,

Բ.2.3. կրավորական սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասություններ:

Ստորև քննության կառնենք առանձնացված ենթախմբերը և նրանց հնարավոր ենթատեսակները՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների առանձնահատկության:

Բ.2.1. ՉԵԶՈՔ ՄԵՌԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ
ԶՈՒԳՈՐԴՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները ցույց են տալիս երկրորդական նախադասությամբ արտահայտված իրական կամ թվացյալ առարկայի, երևույթի կամ իրողության լինելիությունը, անհրաժեշտությունը, հավանականությունը կամ հնարավորությունը: *Եւ կու պիտի* որ բժիշկն աղէկ համբերէ Բ-Գ օր եւ հարցանէ հիւանդին, թէ յերէկ ի՞նչ կերար (ԱՍՕԲ): *Եւ շատ կու լինայ*, որ կայնէ գաղիքն խոց եւ նստատեղն ի դուրս գայ. *հանց պիտի* որ չի լինի այսպէս (ԱՍՕԲ): Ապուճարէին ասէ, թէ զքիթն արիւնել տուր եւ զմրգերուն ջուրն տուր որ թթու լինայ *եւ լինի* որ չորութիւն լինի, որ իսկի իրք չի հասկանայ (ԱՍՕԲ): Եւ տեղեկանայի *է՛ր* գոր Ա. տեղեւան, և *է՛ր* գոր Բ., կամ ևս աւելի տող գրելով և կամ դէմ մի կամ թուղթ մի (ԺԴ, 79):

Այս կարգի գուգորդվող միակազմ նախադասությունները, ի տարբերություն միադիմի բայաձևով արտահայտվող անկախ նախադասությունների, հանդես են գալիս միայն բարդ ստորադասական կառույցներում՝ ենթադրելով և պահանջելով ենթակա երկրորդական նախադասություն: Օրինակ՝ *Եւ պիտի որ գէղ որդոյ առնուն ի տանէն եւ ի տեղոյն եւ յընչիցն բաժին գէղ երկու քուրոջ* (ՄՄԴ)²⁶¹: Եթէ *ուրդի որ եպիսկոպոսին վերայ իր ժողովուրդն խուխայ այնեն*, նա չէ պատեհ որ ի կասկած թողվի այն հիլայքն (ՄՄԴ): Սապիթ Կուտանն ասէ, թէ ինքն տաք ուռէցնուն է, որ լինայ այն կերակրէն որ զարիւնն յաւելցնէ, եւ կամ *լինի* [=պատահում է-Գ.Խ.] *որ* ատենն երակ առնելուն անցնի եւ չառնու (ԱՍՕԲ) և այլն:

Չեզոք սեռի միադիմի բայաձևով հանդես եկող գուգորդվող միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է մի շարք բայերի (*եւ*, *թուենայ*, *թուիլ*, *լինիլ*²⁶², *կալ*, *կենայ*, *հասնել*, *ուրդիլ*²⁶³ և

²⁶¹ Հմմտ. «Եւ թէ ցան ի ստամոքն եւ ի կուրծքն լինի՝ հապերն *բարակ եւ լատիֆ եւ մանր կու պիտի*, որ զինքն հաւնին» նախադասությունը, որում *կու պիտի* բայաձևը գործածվել է ոչ թե միադիմի ձևով, այլ որպէս երկկազմ նախադասության բաղադրյալ ստորոգյալի հանգույց:

²⁶² Ըստ մեր հաշվարկի՝ միայն Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ *լինի* գերադաս անդամով արտահայտված մեկ տասնյակից ավելի բարդ ստորադասական կառույց է հանդիպում, ինչպէս՝ Եւ *լինի* որ այս դեղս չօգտէ (ԱՍՕԲ): Եւ *լինի* որ շունչն այլ բռնվի. եւ այն որ չորութենէ լինի՝ ցան խիստ եւ

այլն) միադիմի ձևերով: Օրինակ՝ Բայց *պիտի*, որ մինչև Գ (3) դրամ խմեն (ԱԱՍ, 199): Եթե *լինէր*, որ թոչ՛ի, բարձրանայի, տեսն՛ի²⁶⁴ զիմ երամս, Չուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամս (ԱՏՎՂ, 182): Եւ երբ լինի զքունն իւր՝ հանց *թուենայ*, թէ ի մուօն տեղ եմ (ԱԱՕԲ): Չաւտամ, թէ նա խելք ունի. *Կու թուի*, թէ խիստ յիմար է (Հ, 446):

Քննության առարկա լեզվական փաստերը վկայում են, որ չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող նախադասությունների գերադաս անդամը կարող է հանդես գալ ն՛ համադրական, ն՛ վերլուծական բայաձևերով: Գերադաս անդամի գործառնությունը հանդես եկող համադրական բայաձևերը հիմնականում հանդես են գալիս սահմանական ներկա ժամանակաձևով՝ արտահայտված ինչպես գրաբարատիպ, այնպես էլ մասնիկավոր տարբերակներով՝ *Եւ է այլ* որ մահողով սպաննեն. եւ են որ վասն սիրոյ դեղ տան, եւ սպաննեն (ՍՄԴ): *Եւ կայ* (=լինում է) որ *յանկարծամահ լինի* (ԱԱՕԲ): Դարձեալ ցուցանէ առակս այլ միտք, թէ *պատահի*, որ բան եւ գործն եւ իրքն մարդոյն ի պետք լինի, բաց պատեհի չէ, որ շուտով յանձն առնու, մինչեւ յոլով աղաչեն գնայ (ՎԱԱ): Եւ յայն ժամ որ ակոսան ի դուրս ելանէ՝ նա յայնժամ *կու պիտի* որ տապաշիր եւ սերկելիլին քամուքսն յիրար խառնես եւ տաս (ԱԱՕԲ) և այլն:

Գերադաս անդամի՝ սահմանական ներկա ժամանակաձևով ար-

ծանրութիւն գարնէ (ԱԱՕԲ): Արճիճանիսն ասէ, թէ այս լինի խամ խլտէ եւ լազիճորի յերակքն եւ ի շղերն է ճապղեր եւ յաւելցեր եւ զայս ցաւս է ընծայել. եւ կամ *լինի* որ ի չորութենէ լինի այս (ԱԱՕԲ) և այլն:

²⁶³ ՄՉԲ-ում տեղ են գտել՝ ա) «պատահի» նշանակությամբ ՈԻԲԴԻ «(միադիմի բայ)» և բ) «պատահել», «հանդիպել» նշանակությամբ ՈԻԲԴԻԼ «ուրդեցաւ, չ.» բառահոդվածները, որոնցից առաջինը, ըստ էության, *ուրդիլ* բայի թեք ձևերից մեկն է (ըղձական ապառնի, որը որոշ կիրառություններում նաև սահմանական ներկայի իմաստ է արտահայտում) և հանդես է գալիս թե՛ միակազմ, թե՛ երկկազմ նախադասություններում: Այսպես՝ հենց ՄՉԲ-ում ՈԻԲԴԻ բառահոդվածի ներքո գետեղվել են բնագրային օրինակներ, որոնցում *ուրդի*-ն ոչ թե միակազմ նախադասության գերադաս անդամ է (միադիմի բայաձև), այլ երկկազմ նախադասության ստորոգյալ, քանի որ ունի ենթակա՝ Եւ եթէ ումէք *ուրդի* ի գեղակն *աղբիւր* քաղցրահամ՝ *արժան է այնու բաւականանայ*: Եւ թէ *չուրդի* օջիւղրի *զինի*, ա ո զօջիւղրն և եփէ՛ ջրով»: (ՄՉԲ, 623): Այս կարգի երկկազմ նախադասություններ հանդիպում են նաև այլ աղբյուրներում, ինչպես՝ Եւ ի կոի ուր *թագաւորն ուրդի*՝ նա երբ սուրն վերնա՝ նա չէ պատեհ այլ մարդ սպաննել (ՍՄԴ) և այլն:

²⁶⁴ Բնագրում՝ *թոչի, տեսնի*:

տահայտությունը վկայում է, որ ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում բարդ ստորադասական կառույցների գլխավոր նախադասությամբ գերազանցապես արտահայտվում է բացարձակ ժամանակաձևով գործողություն: Սակայն, ինչպես վկայում են մեր ունեցած լեզվական փաստերը, այս կարգի նախադասություններով արտահայտվում է ոչ թե միանգամյա, այլ սովորության, շարունակական գործողություն, որը ենթակա է կատարման և՛ այժմ՝ խոսելու պահից անմիջապես հետո, և՛ առհասարակ:

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող որոշ գուգորդվող միակազմ նախադասություններում վերոնիշյալ գրաբարատիպ և մասնիկավոր տարբերակներով երբեմն արտահայտվում է ըղձական ապառնի ժամանակաձևի քերականական իմաստ (ասվածը միջին հայերենին բնորոշ քերականական իրողություններից մեկն է), ինչին, անկասկած, նպաստել է այդ բայաձևերի իմաստային պլանում առկա շարունակականության իմաստը՝ *Եւ թէ ուրդի*, որ ի խաղալն տղայք զիրար սպաննեն՝ նա պատեհ է տեսնուլ զապաննաւդին հասակն (ՍՍԴ): Զի պատեհ է, *որ լինի*, որ վանքն կաշովն ըռովկի, եւ զմիսն տառապելքն ուտեն (ՍՍԲ) և այլն: Նկատենք, որ նշված քերականական իմաստի փոփոխություն արձանագրվում է ոչ միայն բազմաբարդ, այլև բարդ ստորադասական կառույցներում՝ *Լինի* թէ աչերս քեզ արժանանայ (ԳԱՂ, 84):

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել նաև սահմանական անցյալով՝ *Կու թվէր* իմ եարին լեզուն Ան հաւին բերանն էր դրած (Հ, 158):

Սահմանական ներկա և ըղձական ապառնի ժամանակաձևերից բացի՝ գուգորդվող միադիմի նախադասություններում գերադաս անդամը կարող է հանդես գալ նաև վերլուծական ժամանակաձևերով, որոնցով արտահայտված միակազմ նախադասությունները, ինչպես որ վերոբերյալ սահմանական անցյալը, հազվադեպ են: Վկայված նախադասություններն արտահայտվել են *լինի* բայի *եղեր է/եղել է* վաղակատար ներկայով՝ Ա-

մէն հատի պաք մի տամ՝ Ո՞ւր եղէր կամ ո՞ւր տի լինի (Հ, 162)²⁶⁵: Եւ թէ լեզուն չէ ծանրացեալ, եւ հանց եղել է որ Ա անդամն մնացել է եւ գունն փոխել է՝ չէ աղէկ (ԱՍՕԲ):

Թուիլ բայի միադիմի ձևերով գուգորդվող կառույցներում հանդէս են գալիս տրականով արտահայտված հանգման խնդիրներ, որոնք մատնանշում են գործողությանն անուղղակիորեն առնչվող առարկան՝ Հանց անուշ լեզու ունիս, *Ինձ թուի՛* ճօհար կու թափես (Հ, 86): *Կու թուի ինձ*, որ հարկէտը մարդոյ որդի ես եւ թագաւորի զարմէ ես (ՎԱԱ): Բայց թուի, թէ զարութեամբ քառանկիւնին ի բոլորն է (ՎՐԼ, 106): *Ինձ թուի*, թէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց (ԴԶ, 162-163): Սակայն երբեմն հիշյալ առարկան կարող է նաև չհիշատակվել համատեքստում հասկանալի լինելու պատճառով՝ բայց [*ինձ-Գ.Խ.*] *թուի*, թէ ոչ մի որակութիւն ընդունի զյաւէտն և զնուագն, այլ որակն (ՎՐԼ, 146):

Այս շարքում բացառիկ կիրառությամբ առանձնանում է նաև *հասնել* բայի *հասնի* բայաձևի միադիմի կիրառությունը՝ «տեղին է (նպատակա)հարմար է, սագում է» իմաստով՝ Եւ յայտ տեղդ *հասնի*, որ եկեղեցին միապէս խնամաւք դատէ (ՍՍԴ), որը գործածական է նաև ժամանակակից խոսակցական հայերէնում: Օրինակ՝ *Նրան հասնում է*, որ համարժեք պատասխան ստանա:

Պիտի, որ ..., պարտի, որ ... կարգի նախադասություն է կազմվել նաև *սկսնուլ* բայով, որը նույնպես կարևոր փաստ է՝ եղանակավորող բայերի իմաստային փոփոխությունների հետագիծը ցույց տալու համար՝ Եւ յորժամ որ *կսկսնու որ* ակոթան բուսնի՝ զհաւուն եղն ի զմանուշակին եղն յակոթակերն օծէ, որ շուտ բուսնի ԱՍՕԲ): *Սկսնու* բայաձևը տվյալ դեպքում ոչ թէ ներգործական, այլ չեզոք սեռի քերականական իմաստ է արտահայտում՝ կատարելով միադիմի բայի գործառույթ:

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող նակառույցներում է, էր, կայ և լինի միադիմի բայաձևերով գերադաս անդամները էական բային բնորոշ իրենց հիմնական իմաստին զուգահեռ ունեն

²⁶⁵ Հմմտ. «Ամէն հատի՛ պագիկ մի՛ Ո՞ւր եղեր կամ ո՞ւր տի լինի» (Հ, 80) կառույցը, որում ենթակա երկրորդական նախադասությունը (*ամէն հատի՛ պագիկ մի*) կազմությամբ թերի է:

նան «պատահում է» երկրորդական նշանակություն²⁶⁶: Օրինակ՝ *Կայ (ի նչ կայ, ի նչ է լինում, ի նչ է պատահում-Գ.Խ.)* որ երթան ի դուրս եւ ընդ վայր գրուցեն, թէ կու բռնեն զիս աղէկ մանկտիքն եւ կու ծաղր առնեն զիս (ԱՍՕԲ): *Կայ (=լինում է, պատահում է-Գ.Խ.)* որ անխափան գրուցեն ընդ վայր եւ ի շուրջ գան (ԱՍՕԲ): Այլ սնանի մանուկն յարգանդին Թ ամիս, *է է (=լինում է, պատահում է-Գ.Խ.)* որ Է ամիս (ԱՍՕԲ): *Բայց թէ անճարկութենէ լինի (=լինի, պատահի-Գ.Խ.)*՝ որ բնաւ որդի չկենայ թագաւորին՝ այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պուման՝ որ հետ իր մահուն չլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն (ՍՄԴ): Ի սաֆրայէ եղածին ի բռնելու ժամն շուտով պաղ ջուր խմցնէ՝ նա շատ չի բռնէր. *լինի (=լինում է, պատահում է-Գ.Խ.)* որ այնով անցնի զբռնելն (ԱՍՕԲ): *Եւ էր* գոր ոչ կարէի առ ժամայն՝ թողլով իմ ի միւս արն և կամ յերկուս և ապա տեղեկանայի (ԺԴ, 79) և այլն: Այսօրինակ կառույցներ հանդիպում են նաև գրաբար բնագրերում, ինչպես՝ *Եւ էր*, զի սակաւ գնեալ արծաթով ի յետս դարձուցին (ԹՄԼԹ, 83):

Ոմանց բարի ասեն գիտողքն եւ խոստանան.

Այլք ըզչար թէ լինիցի խօսին ըզբան:

Է զի լինի եւ կատարի գոր խօսեցան.

Է զի սխալօղ եւ ընդունայն բարբառեցան (ՆՇՅ):

Է՛ր, զի երբեմն այր զօրավար

Երկիր Հայոց հանէր ի վեզ (ՅՎ, 6) և այլն:

Կայ և *լինի* միադիմի բայաձևերով արտահայտված գործողություններն այս դեպքում չեն վերաբերում երկրորդական նախադասության գործողությունը կատարող անձի կամ անձերի և հետևաբար չեն պատասխանում անձ ցույց տվող ենթակային տրվող *ո՞վ* կամ *ուրքե՞ր* հարցին: Ասվածի օգտին է վկայում նաև այն, որ նմանատիպ գլխավորներին կարող են

²⁶⁶ Որոշ բարդ կառույցների կազմում հանդիպում են *կայ* և *լինի* բայաձևերով արտահայտված, բայց քերականորեն անհամագոր միադիմի նախադասություններ, որոնք հետաքրքիր են ոճի տեսանկյունից: Ահավասիկ դրանցից երկուսը՝ *Եւ կայ որ հանց լինայ, որ զիր հօրն եւ մօրն անունն մոռնայ*, կայ որ երնճկտայ, եւ զբերանն մոռնայ (ԱՍՕԲ): Հմնտ. նաև՝ *Ասացած է, թէ կու պիտի*, որ գինին ամիսն Ա տարպայ կամ Բ տարպայ խմէ (ԱՍՕԲ): Վտահաբար կարելի է ասել, որ այս կարգի կառույցները բնորոշ էին խոսակցական միջին հայերենին, որից էլ մուտք են գործել գրավոր խոսք:

ստորադասվել ոչ միայն եզակի, այլև հոգնակի թվով արտահայտված երկրորդականներ, որոնցում իբրև գործողություն կատարող ենթադրվում են, համապատասխանաբար, անորոշ անձ կամ անձինք, ինչպես՝ *Կայ* (= *լինում է, պատահում է*-Գ.Խ.) որ ոտիցն *չկարէ կենալ*, ի վար դիպի և փրփրի. որ կէս մի ասէն թէ դիւական է (ԱՍՕԲ): *Կայ* (= *լինում է, պատահում է*-գ.Խ.) որ *միզէն եւ աղբէն եւ զանօթն չի գիտեն* (ԱՍՕԲ): Այսպես նաև՝ *Եւ կայ*, որ կատողենայ ի պեղծ յարոյնէ և ի սուր մաղձէ յաւելվածէ (ԲԶ, 95) և այլն: Լեզվական աղբյուրներում հազվադեպ հանդիպում են նաև մեր՝ վերը դիտարկած *կայ* և *լինայ* միադիմի բայաձևերով արտահայտված, սակայն մեկը մյուսին լրացնող երկու միակազմ նախադասությունների գուգորդությամբ կառույցներ, ինչպես՝ *Եւ քանի մարդն տաքանայ՝ այս ցաւերս ի յինքն երեւնայ. եւ կայ որ հանց լինայ*, որ զիր հօրն եւ մօրն անունն մոռնայ, *կայ* որ երնճկտայ, եւ գրեքանն մոռնայ, իրար ածել չտայ, եւ խիստ մոռացկոտ լինայ (ԱՍՕԲ): Նմանատիպ կառույցները, որոնք ոճական արժէք ունեն, միջին հայերենին են անցել գրաբարից, ինչի մասին վկայում է, օրինակ, Փավստոս Բուզանդի հետևյալ բարդ կառույցը՝ *Էր զի լինէր՝ զի յորժամ ցաւ ինչ ցաւեր գագանացն, գային շուրջ պատէին զնովաւ* (ՓԲ):

Սակայն պարտադիր պայման չէ, որ նշված բայաձևերով արտահայտված միակազմ նախադասությունները հանդես գան միայն անձ(եր)ի վերագրվող գործողություն ցույց տվող երկրորդական նախադասություններին գուգորդված: Ամիրդովլաթ Ամասիացու «*Կայ* որ ...» սկսվածքով հետևյալ բարդ ստորադասական կառույցի երկրորդական նախադասության ենթական, օրինակ, իրանիշ է՝ *Կայ* որ *եփվածքն* սակաւ լինայ սերման, մանուկ չընծայի (ԱՍՕԲ): Ահավասիկ նաև *լինի* միադիմի բայաձևով արտահայտվող գլխավոր նախադասությամբ բարդ ստորադասական կառույց՝ *Եւ թէ լինի* որ *փորն* ամուր եւ պինտ լինայ՝ պիտի որ տաս զմրգաց ջուրն եւ զպանրին ջուրն (ԱՍՕԲ): *Եւ եղև*, իբրև լրեաց ամենայն անպատշաճ և սնտոի *խրախճանութիւնն*, յայնժամ դիմեցին առ հասարակ ազգ և ազինք յիրաքանչիւր յեկեղեցիս (ՅԿ, 46):

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով կազմված գուգորդվող նախադասությունների գերադաս անդամը հազվադեպ կարող է արտահայտվել նաև *կենալ* բայի *կենայ* սահմանական ներկայով՝ միադիմի նշանակությամբ, որի դեպքում այն հոմանիշ է *լինիլ*, *պատահիլ* բայերի, համապատասխանաբար, *լինի*, *պատահի* միադիմի ձևերին: Հմտ. Եւ մարդ թէ

*կենայ*²⁶⁷, որ չարի ընդ իր երեցն ու այլ երեցով մատաղ այնե գաղտուկ, նա թէ երեցն դատըստնի՝ նա իրաւունքն հայնց է, որ տըպլէ զիր իրիցուն վզենն (ՍՄԴ) և *Եւ թէ լինի* որ տեղոյն կամ տանն կամ իրացն տէրն ասէ ընդ մարդ, թէ՛ ձգէ կրակ կամ կոտորէ կամ արա զինա բանն՝ զինչ ու լինի, եւ ճորտն այնէ՛ նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզենն վճարէ (ՍՄԴ):

Նշենք, որ *կենայ* միադիմի ձևով նախադասություններ հանդիպում են միայն Սմբատ Մպարապետի դատաստանագրքում՝ բայց երբ *կենայ* ու լինի եպիսկոպոսին ընտրաւորութիւն՝ նա վասն այնոր թէ բաժին մի հակառակին՝ նա կաթողիկոսն չլսէ նոցա, զի ի յոր շատն ի յաղէկ դեռն հաճին, նա զինչ որ այլք հակառակ վկայեն՝ նա աղէկին հաւնի որ լինի (ՍՄԴ)²⁶⁸:

Ամսախացու բժշկարանում ոճական այդ հնարքի համար բարդ կառույցների գլխավոր նախադասության գերադաս անդամն ավելի հաճախ արտահայտվում է *լինիլ* բայի *լինի/լինայ* եզակի 3-րդ դեմքով՝ Եւ *լինի* որ ի բուշտն խոց *լինայ*՝ անկից *լինի* (ԱԱՕԲ): Եւ *լինի* որ սովորութենէն աւելի ելանէ, եւ *լինայ* որ պակաս ելանէ (ԱԱՕԲ): *Լինայ որ* ի պաղ ջրէ ցաւի ակոռան (ԱԱՕԲ): Ի սաֆրայէ եղածին ի բոնելու ժամն շուտով պաղ ջուր խմցնէ՝ նա շատ չի բռներ. *լինի որ* այնով անցնի գրոնելն (ԱԱՕԲ): Եւ *լինի որ* ծանրանայ եւ աւաղ լինի կէսն (ԱԱՕԲ): Եւ *լինի որ* շունչն այլ բռնվի (ԱԱՕԲ): Եւ *լինի որ* չորութիւն լինի, որ իսկի իրք չի հասկանայ (ԱԱՕԲ):

Եզակի թվով անձ ենթադրող այս կարգի երկրորդական նախադասությունները խոսքային այլ իրադրություններում կարող են ունենալ քերականորեն արտահայտված *մարդ* ենթակա, որը, սակայն, դարձյալ նշում է անորոշ անձ կամ անձինք: Օրինակ՝ *Եւ թէ լինի* որ *մարդն* աւելի կերակուր ուտէ՝ եւ իր թպտիրն այն է, որ քիչ մի ի շուրջ գայ որ կերակուրն կիսահալ լինայ (ԱԱՕԲ)²⁶⁹: Եւ *լինի* որ ատեն ատեն գետ խելի պէս ձրի

²⁶⁷ Այլ ճար *չկենայ* (Հ, 38) նախադասության *չկենայ* ստորոգյալը գործածվել է «*չլինի*» իմաստով, սակայն երկկազմ նախադասության մեջ: Հմմտ. *Բայց դարձ իրացն թէ լինի*՝ նա հարսնից ծախքն չդառնայ, եւ ոչ յիշուի բնաւ (ՍՄԴ), որը նույնպէս գործածվել է երկկազմ նախադասության կազմում:

²⁶⁸ Ի դեպ, բառարաններում չի նշվում *կենայ* բայի «պատահել, լինել» նշանակության մասին:

²⁶⁹ Հմմտ. *Մարդ* զբնում է առուտուրի, Հավաքվում են՝ քաշում սըրի (ՀԹ2, 162):

խօսվի զրուցե՛ մարդն (ԱՍՕԲ): Եւ լինի որ ձրի զրուցե՛ մարդն խիստ (ԱՍՕԲ):

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում (*կու*) *պիտի* միադիմի բայաձևով արտահայտված միադիմի նախադասությունները, որոնք հաճախադեպ են, իսկ արտահայտության պլանում ունեն տարբերակներ: Վերջիններս հավելյալ կերպով ուրվագծում են *պիտի* եղանակավորիչի առաջացման նախապայմաններն ու ճանապարհը: Բանն այն է՝ միջինհայերենյան ժամանակահատվածում *պիտի* բայաձևը զուգահեռաբար արտահայտվում է և՛ հիմնական իմաստով՝ հանդես գալով երկկազմ կամ միակազմ նախադասությունների կազմում, և՛ որպես եղանակավորիչ:

Այսպես՝ հիմնական իմաստով արտահայտված *պիտիմ* բայը՝

1. երկկազմ նախադասություններում տարբեր դիմաթվային ձևերով դառնում է՝

1.1. պարզ ստորոցյալ՝ ենթակային համաձայնելով²⁷⁰ տարբեր դիմաթվային ձևերով, ինչպես՝ Եւ *աշխատիլն* կերակրեն յառաջ *պիտի* ԱՍՕԲ): Ծառ նարընճենի ես դուն, Քեզ հազար *անուն կու պիտի* (Հ, 144): Ա՛յ զընայ, չի *պիտիս դուն* ինձ, Լուկ պեզար իմ սիրտս ի քենէ (Հ, 134): Արի՛, որ հետրաց երթանք, Այս *աշխարհս* մեզ չի *պիտի* (Հ, 104)²⁷¹: Խօջ եար, *դուն* ինձի *պիտիք*²⁷², Որ վրատ անէի չատըր (Հ, 87): Ասողին *լսող պիտի*, Խուլ իշուն *զանկակ չպիտի* (Հ, 213) և այլն:

1.2. Բաղադրյալ ստորոցյալի հանգույց՝ կապակցվելով գոյականով, ածականով և այլ միջոցներով արտահայտված ստորոգելիների, ինչպես՝ Ես *ծիծրոնիկ պիտէի*, Բունս ի ձեր տունն դնէի (Հ, 113): Ես ինաֆրք *ապրոնիկ պիտիք*²⁷³, Իմ պոնիկս քիոյ էրդիս դընի²⁷⁴ (Հ, 776)²⁷⁵ և այլն:

²⁷⁰ Հանդիպում են նաև անհամաձայնության դեպքեր, երբ *պիտիմ* բայը հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ հանդես է գալիս եզակի թվով՝ Աղէկ *կերակուր եւ աղէկ դեղեր կու պիտի* ԱՍՕԲ): Սիրուն՝ *քար ՚ւ երկաթ պիտի*, Երկաթէ դոնակն ի վերայ (Հ, 82): Եւ թէ պալլամի ցանն ի գլուխն լինի՝ եւ *հասպերն մեծ կու պիտի*, եւ *խոշոր կու պիտի դեղերն* (ԱՍՕԲ):

²⁷¹ Հմմտ. Արե՛կ, որ ի վայր նըստինք, Աստընվորըս մեզ չի պիտի (Հ, 291):

²⁷² Իմա՛ *պիտէիք*:

²⁷³ Իմա՛ *պիտէիք*: Հմմտ. նաև՝ Ես շարէ շապիք *պիտի*, Զօրն ի բուն անձըս կեւայի (Հ, 146):

²⁷⁴ Իմա՛ *դնէի*:

²⁷⁵ Հմմտ. Ոսկի *աղաւնի ըլլայի*, Ոսկի սենի կըտկըտայի (Հ, 812):

2. Միակազմ նախադասություններում եզակի թվի 3-րդ դիմային ձևով կատարում է գլխավոր նախադասության գերադաս անդամի գործառույթ՝ բարդ ստորադասական և բազմաբարդ կառույցներում կապակցվելով ենթակա երկրորդական նախադասություններին, ինչպես՝ *Կու պիտի*, որ գինին ամիսն Ա տարպայ կամ Բ տարպայ խմէ (ԱԱՕԲ): *Եւ հանց կու պիտի*, որ չափաւոր լինի ամէն իրք, որ զէն չառնէ մարդոյն (ԱԱՕԲ): Սսէ Բագարատ, թէ աշխատիլն այնոց որ գլխացաւ ունին խիստ՝ *հանց կու պիտի*, որ ի ժիր զջղերն եւ զկրունկ աճռեցնէ եւ կամաց շարժի մարդ (ԱԱՕԲ): Եւ դեղ թէ պիտնայ՝ *պիտի որ բժիշկն այնոր հանց դեղ տայ, որ կարենայ* (ԱԱՕԲ) և այլն:

Միջին հայերենում բարդ ստորադասական և բազմաբարդ կառույցներում որպէս գլխավոր նախադասություն հանդես եկող այս վերջին միավորները (կետ 2) զուգորդվող միադիմի նախադասության մի տեսակ են: Դրանց արտահայտության հիմնական միջոցը (*կու*) *պիտի* բայաձևն է, որը, որպէս կանոն, բարդ կամ բազմաբարդ կառույցում գրավում է նախադաս դիրք՝ անմիջականորեն նախորդելով սովորաբար *որ* ստորադասական շղկապով կապակցված ենթակա երկրորդական նախադասության: Օրինակ՝ *Եւ կու պիտի որ* վաղմնէ Բ ժամուն առնու կամ Գ ժամուն (ԱԱՕԲ): Եւ թէ ձուն լինի՝ նա ձունին իսպիտակութիւնն աչիչն զէն առնէ. *կու պիտի որ սեւ իրք մն ի ճակատէն ի վար կախ անեն*, որ օգտէ աչացն (ԱԱՕԲ): *Պիտի որ* դեղն իւր հսապովն առնէ, որ օգտակար լինի (Ալէք., 93)²⁷⁶: Եւ թէ ձմեռն երթաս ի ճանապարհս՝ *պիտի որ տաք կերակուրք ուտես* (ԱԱՕԲ):

Կարևոր ենք, որ միջին հայերենում՝ մասնավորապէս երկրորդ ենթաշրջանում, (*կու*) *պիտի* գերադաս անդամով արտահայտված զուգորդվող միակազմ նախադասությունը ոչ բոլոր բարդ ստորադասական կառույցներում է պահպանել գլխավոր նախադասությանը բնորոշ պայմանական անկախությունը: Գրական հայերենի զարգացման այդ ժամանակահատվածում (*կու*) *պիտի*-ն հիշյալ կառույցներում ավելի հաճախ ըսկսում է եղանակավորել երկրորդական նախադասության ստորոգյալով արտահայտվող գործողությունը, իսկ հետագայում՝ ուղղակիորեն կատա-

²⁷⁶ Քաղված է ՄՀԲ-ից, 655 («Ալէքսիանոսի բժշկի բժշկարան», Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 8185 ձեռագիր):

րել եղանակավորիչ մասնիկի գործառույթ: Այսպես՝ «Եւ ամէն մարդ *կու պիտի որ* իմաստութենովն հանց իրվի ուտէ» (ԱՍՕԲ) կառույցն իրակա- նում պետք է կազմվեր անդամների հետևյալ շարադասությամբ՝ Եւ կու պիտի, որ ամէն մարդ իմաստութենովն հանց իրվի ուտէ: Բայց, ինչպես տեսնում ենք, ընդգծված գուգորդվող միակազմ նախադասությունը և նրան սովորաբար անմիջապես հաջորդող *որ* ստորադասական շաղկա- պը գրավել են միջադաս դիրք, ինչն էլ ակնհայտորեն սկսել է նպաստել *կու պիտի* բայաձևի՝ աստիճանաբար եղանակավորիչ դառնալուն: Մաս- նավորապես խոսքը վերաբերում է միջադաս դիրքում հայտնված և կազ- մությամբ համառոտ, այսինքն՝ միայն (*կու*) *պիտի*-ով արտահայտված գու- գորդվող միակազմ նախադասություններին, որոնք *որ* շաղկապի հետ մի- ասին միջադաս դիրք են գրավում երկրորդական նախադասության են- թակայի և ստորոգյալի կամ նրանց խմբերի միջև: Բնական է, որ այս դիր- քում (*կու*) *պիտի*-ն ավելի է մոտենում երկրորդական նախադասության ստորոգյալին և երանգավորում նրանով արտահայտված գործողությունը անգամ *որ* շաղկապի առկայությամբ, ինչը պայմանավորված է (*կու*) *պի- տի*-ի միջադաս շարադասությամբ և բառիմաստով: (*Կու*) *պիտի*-ի հետ միջադաս դիրք տեղափոխված *որ* շաղկապն էլ սկսում է գիտակցվել ոչ որպես գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման միջոց: Հմտ նան՝ Եւ կակուղ կերակուր *պիտի որ* լինի (ԱՍՕԲ), փխ՝ Եւ պիտի որ կակուղ կերակուր լինի: Եւ թէ ձմերուկն էր յընկուզին, զիս *պիտի որ* սպանանէր (ՎԱԱ), փխ՝ Եւ թէ ձմերուկն էր յընկուզին, *պիտի որ* զիս սպանանէր և այլն: Մակայն նկատենք, որ հայերենում, որպես կանոն, մի- ջադաս կարող են լինել երկրորդական, բայց ոչ գլխավոր նախադասու- թյունները²⁷⁷, ինչը նշանակում է՝ (*կու*) *պիտի* գլխավոր նախադասությունն ու *որ* շաղկապը միջադաս դիրքում կորցրել են իրենց նախկին գործա- ռույթը. (*կու*) *պիտի*-ն՝ հարաբերական անկախությունը, *որ*-ը՝ նախադա- սություններ կապակցելու հատկանիշը: Այդ ամենը նպաստել է, որ *պիտի* նյութական և *որ* քերականական իմաստ արտահայտող առանձին միա-

²⁷⁷ Ի դեպ, գրական հայերենի զարգացման բոլոր շրջաններում թերևս բացա- ռություն է հեղինակի խոսքը, որը, լինելով գլխավոր նախադասություն, կարող է ուղղակիորեն մեջբերվող խոսքում գրավել ոչ միայն նախադաս ու ետադաս, այլև միջադաս դիրք:

վորները վերածվեն եղանակավորիչ բայ-թարմատար (*պիտի որ*) բաղադրյալ կազմության²⁷⁸, որով սկսում է եղանակավորվել ըղձական եղանակի ժամանակաձևերի արտահայտած քերականական իմաստը՝ վերջինիս հաղորդելով անհրաժեշտության, հարկադրականության երանգ, ինչպես՝ Կու հրամայե աւրէնքս, որ՝ զինչ այն սուտ վկայութեամբն անմեղն *պիտի որ տանջուէր*, նա զինք տանջեն թէ մահու էր՝ թէ խրատելոյ՝ եւ թէ տուգնելոյ (ՍՍԴ):

Ինչպես վկայում են մի շարք լեզվական փաստեր, *որ* շաղկապի՝ թարմատարի վերածվելուց և ոչ պարտադիր դառնալուց հետո *պիտի*-ն եղանակավորիչի գործառույթ ունի նույնիսկ այն դեպքում, երբ դիմավոր բայից ընդմիջարկված է այլ անդամներով: Օրինակ՝ Կինն որ դալատի մեղօք, Կամ ընկնի ի ճօշ՝ ւ ի բամբաս, *Պիտի* հանց որդի *բերէ*, Զինչ եբեր զայս Օլօմպիաս (Հ, 153): Եւ այլ ով որ ուզէ որ կատարեալ հեքիմ լինի՝ յառաջն կու պիտի²⁷⁹ որ զղեղերուն կերպն ճանաչէ (ԱՍՕԲ)²⁸⁰: Այն մարդն, որ ի դուրն երթայ, Գէմ *պիտի* զղըժարն *անտիճէ* (Հ, 221):

Հայտնի է, որ թարմատարը գերազանցապես խոսքը ոճավորելու միջոց է, իսկ խոսքի ոճավորումը՝ լեզվամտածողության սուբյեկտիվ դրսևորում: Այդ է պատճառը, որ իբրև թարմատար գործածվող *որ* շաղկապը հետագայում ավելի հաճախ դուրս է մնացել խնդրո առարկա կառույցներից, և *պիտի*-ն եղանակավորիչի գործառույթով սկսել է հանդես գալ միայնակ, քանի որ երբ արդեն *որ* շաղկապը նախադասություններ չի կապակցում, այսինքն՝ վերածվում է թարմատարի, նրա գործածությունը դառնում է ոչ պարտադիր, ապա և՝ ավելորդ, ինչպես դա նկատելի է հետևյալ նախադասություններում՝ Եւ զայս ամէնն հաւասար ի կերպ *պիտի բերեմ եւ ցուցանեմ*, որ կարդացողին եւ ուսանողին հեշտ լինի (ԱՍՕԲ): Կարմիր ու ճերմակ երես, Ամ քանի՞ դուն զիս *պիտի երես* (Հ, 46): Էյն առչի սիրուն Դու պաք մի պարտիս, Ի՛մ տուն, *պիտի վճարես* (Հ, 558): Հնցգուն թագաւոր,

²⁷⁸ Նախադասության բաղադրիչների միացության օրինակ է նաև *այնպես* հարաբերյալի և *որ* ստորադասական շաղկապի կապակցությունը, որը նկատել է Գ. Գարեգինյանը (*Գ. Գարեգինյան*, 1984, 235):

²⁷⁹ Հմնտ. Եւ այնք, որ զշարժումն եւ զաշխատիլն ուժով ունին, նոցա կերակուրն շատ պիտի եւ գորաւոր (ԱՍՕԲ):

²⁸⁰ Հմնտ.՝ Ով որ ուզէ կատարեալ բժիշկ լինի եւ հիւանդի պէտ առնէ՝ *պարտ է* որ յառաջն աշակերտէ (ԱՍՕԲ):

փատիշահ Ո՛չ եկեր է, և ո՛չ պիտի գայ (Հ, 325)²⁸¹:

Միջինհայերենյան աղբյուրներում լեզվառճական այս հնարքի կիրառումով կազմվել են միջադաս շարադասությամբ մի շարք կառույցներ ոչ միայն *պիտի որ*, այլև *ուրդի որ*, *լինա/լինի որ*, *պարտի որ* և այլ կապակցություններով: Օրինակ՝ *Ու թէ հետ այնոր ուրդի, որ գայ մեկայլն ի ծառայութենէ*, նա իրաւունք է՝ որ թէ ուզենայ եկածն՝ նա խափանեն գլետի պսակն եւ առաջի պսակն է ընդունած (ՄՄԴ), փխ.՝ *Ու թէ ուրդի, որ հետ այնոր գայ մեկայլն ի ծառայութենէ ... : Ապա երբ այրիկն լինի որ մեռնի՝* նա զիր հոգւոյն բաժինն ի յիր ընչիցն այնել ըղորդ է (ՄՄԴ), փխ.՝ *Ապա երբ լինի, որ այրիկն մեռնի՝* նա զիր հոգւոյն բաժինն ի յիր ընչիցն այնել ըղորդ է: *Եւ թագվորն պարտի որ պահէ գաղքատն* (ՄՄԴ), փխ.՝ *Եւ պարտի որ թագվորն պահէ գաղքատն և այլն*: Ասվածից հետևում է, որ այսօրինակ կառույցները՝ ա) հանրային լեզվամտածողության արտահայտություն են, բ) ձևավորվում են գուգորդվող միադիմի նախադասությունների կրած գործառության-շարադասական փոփոխությունների հետևանքով և գ) խոսակցական հայերենում լայն տարածում ունեն, որից էլ անցել են գրավոր միջին հայերենին: Պատահական չէ, որ բարդ ստորադասական կառույցները, որոնցում գործածվում է միջադաս շարադասությամբ միադիմի գլխավոր նախադասություն, հաճախադեպ են, օրինակ, «Օգուտ բժշկութեան» բժշկարանում և Սմբատ Սպարապետի դատաստանագրքում՝ *Եւ ամառն պիտի որ հով իրվի տան ուտէ* (ԱԱՕԲ), փխ.՝ *Եւ պիտի որ ամառն հով իրվի տան ուտէ* (ԱԱՕԲ): *Զի թեպէտ եւ յառաջն դրած կենայ՝ բայց ու յետինն պիտի որ շատնան* (ՄՄԴ): *Եթէ անասունք մտեն ի յայգի կամ յածուք կամ յարտ կամ կալ կամ այլ վնաս զինչ ու լինի՝* նա պախրէի ու գեհին պատ *պիտի որ արգիլէ զիրենք* (ՄՄԴ) և այլն: Սակայն նշված հեղինակները չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող

²⁸¹ Միջին հայերենում *որ*-ը իբրև թարմատար գործածվում է նաև մյուս խոսքի մասերի հետ՝ *Եւ յորժամ որ* գարունն գայ եւ հիւսիսոյ քամի փչէ խիստ շատ (ԱԱՕԲ): *Եւ հանց որ* այրեցն չի կտրի եւ նստի, ա՛ռ կտուած ոսպ եւ ծեծէ՝ եւ վրան շփէ (ԱԱՕԲ): *Եւ յորժամ որ* զկերակուրն ուտես՝ կու պիտի որ համբերես (ԱԱՕԲ): *Ով որ* ուզէ որ հեռու ճանապարհ երթայ՝ *կու պիտի որ* յառաջն զանձն յստկէ ի յաւելվածոց խառնուածէ (ԱԱՕԲ) և այլն: *Զինչ որ, ով որ, երբ որ* և այսօրինակ կազմություններում հանդես եկող *որ* թարմատարն ավելի է ընդգծում միջինհայերենյան գրական ժառանգության մեծ մասի՝ խոսակցական հայերենին բնորոշ ոճը:

նախադասություններ գործածում է նաև նախադաս շարադասությամբ՝ *Եւ թէ քեզ պիտենայ*, որ գտնուս գաւշինդրն, կամ զանիստն, կամ զանուխն՝ դու տե՛ս ի վերայ այբին (ԱՍՕԲ): Սահակն ասէ, թէ *լինի որ* ի կոպին մէջն խոց լինայ եւ զկոպերն յիրար փակցնէ (ԱՍՕԲ): *Եւ պիտի որ* զանձն տաք հազուստով ծածկեն, քահրակ զկուրծքդ ծածկես (ԱՍՕԲ):

Վերն ասվածը հանրագումարի բերելով՝ նշենք, որ միջադաս հանդես եկող զուգորդվող միակազմ նախադասությունները, ժամանակի ընթացքում դադարելով բարդ ստորադասական կառույցի գլխավոր նախադասություն լինելուց, սկսել են գործածվել որպես միջանկյալ միավոր: Դրանցից (*կու*) *պիտի*-ով արտահայտվողները որոշ ժամանակ անց ձեռք են բերել եղանակավորիչ մասնիկի արժեք՝ դառնալով դիմավոր բայի նոր եղանակի արտահայտության միջոց²⁸²: Քանի որ այդ նախադասությունները բնորոշ են եղել միջին հայերենի խոսակցական մակարդակին²⁸³, դրանք կարելի է գնահատել նաև որպես ետևառաջության ոճական հնարք: Հաշվի առնելով լեզվաբանական և լեզվամտածողության տարբերությունները՝ դժվար է այդ նախադասությունները 500 տարվա հետավորությունից միարժեքորեն գնահատել, հետևաբար մենք պայմանականորեն զուգորդվող միադիմի ենք համարում (*կու*) *պիտի*-ով և այլ միադիմի բայաձևերով արտահայտված այն միջադաս կառույցները, որոնց հետ դեռևս հանդես է գալիս *որ* շողկապը, և որոնց անմիջականորեն չի հաջորդում երկրորդական նախադասության դիմավոր բայ-ստորոգյալ, ինչպես՝ *Եւ կաթն կու պիտի* որ համովն եւ հոտովն աղէկ լինի եւ գունն իսպիտակ լինայ եւ պայծառ (ԱՍՕԲ) և այլն:

Միջին հայերենը հայտնի է զուգաձևերի առատությամբ, որոնք ար-

²⁸² Նկատի ունենք այն ժամանակահատվածը, երբ (*կու*) *պիտի*-ն այս կամ այն գործողությունը եղանակավորում էր արդեն առանց *որ* թարմատարի:

²⁸³ *Պիտիմ* բայի *պիտի* և *կու պիտի* միադիմի բայաձևերով արտահայտված զուգորդվող միակազմ նախադասություններ ավելի հաճախ գործածում է Ամասիացին, ընդ որում թե՛ որպես նախադաս շարադասությամբ զուգորդվող միադիմի նախադասություն և թե՛ որպես միջանկյալ միավոր: Հմտ. Եւ ամեն մարդ *պիտի որ* զան կերակուրն ուտէ (ԱՍՕԲ): Եւ *պիտի որ* զայն տեղն յառաջն աղէկ լուանան (ԱՍՕԲ): զի ամեն մարդ *պիտի*. որ զինչ որ ուտէր՝ զան անէ (ԱՍՕԲ) և Եւ *կու պիտի որ* ի կրէն յետ եւ գտեղն վարդի եղով եւ քացիսով օծեն (ԱՍՕԲ): Եւ *կու պիտի* որ չափաւոր լինայ եւ աւել չի լինի (ԱՍՕԲ) և այլն:

տահայտություն են գտել նրա բոլոր մակարդակներում: Քերականական գուգաձևություններ միջին հայերենի լեզվական աղբյուրներում հանդիպում են ոչ միայն տարբեր ժանրերի տարբեր երկերում, այլև միևնույն ստեղծագործության մեջ: Այսպես՝

1. հայրեններում և Ամասիացու բժշկարաններում *լինի* միադիմի բայաձևը հանդիպում է նաև *լինայ* գուգաձևով: Հմմտ. Թե՛ *լինի* որ մարդն աւելի կերակուր ուտե՛ եւ իր թպտիրն այն է, որ քիչ մի ի շուրջ գայ (ԱՍՕԲ) և Եւ կամ *կու լինայ* որ իրք մն է կերել որ զգոզի գունն ի սեւ է դարձուցեր (ԱՍՕԲ)²⁸⁴: Ավելին՝ միևնույն բարդ կառույցի մեջ՝ ա) *լինայ* և *լինի* գուգաձևերով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասություններով ձևավորվել է ենթաստորադասական հարաբերություն, բ) իսկ *լինայ* բայաձևը մի դեպքում միակազմ, մյուս դեպքում՝ երկկազմ նախադասության արտահայտության միջոց է ծառայում՝ եւ *լինայ* որ *ի սսֆրայէն լինի*, որ յաւելնայ եւ խոց առնէ զլեզուն. եւ ուժով *լինայ* այս (ԱՍՕԲ):

2. Մասնավորապես հայրեններում *պիտի* եղանակավորիչով արտահայտվող որոշ հարկադրական կազմություններ հանդես են գալիս ոչ միայն *պիտի*, այլև վերջինիս *պիտ*, *տի*, անգամ *տ՝* կարճառոտ տարբերակներով²⁸⁵, ինչը նույնպես վկայում է այդ կարգի կառույցների՝ խոսակցական լեզվին բնորոշ և, հետևաբար, ավելի հին լինելու օգտին՝ Ամէն հատի պաք մի տամ՝ Ո՞ւր եղեր կամ ո՞ւր *տի լինի* (Հ, 162): Նշված տարբերակների՝ չափածո ստեղծագործություններում հաճախակի գործածությունը բանատողերի վանկերի քանակի կարգավորման նպատակ է հետապնդում: Դրանց գործածության առումով նկատվում է, որ՝

ա) *պիտ* տարբերակը միջինհայերենյան աղբյուրներում հազվադեպ է, սակայն կարող է հանդիպել թե՛ ձայնավորով և թե՛ բաղաձայնով սկսվող դիմավոր բայաձևերի հետ՝ Կարմիր ու ճերմակ երես, Ամ քանի՞ դուն զիս *պիտ երես* (Հ, 129): Բայց կինն չար նեղեր զնա եւ ասեր. *պիտ որ* ասես ինձ (ԳԱԱ):

բ) *Տի* տարբերակը հավասարապես հանդիպում է և՛ բաղաձայնով,

²⁸⁴ Հմմտ. Իմ եարն ինձ ճուղայ երես, Թե՛ Կացի՛ր, *լինի* իրիկուն (Հ, 343) և Իմ եարն ինձ ճուղայ երես, Թե՛ Կացի՛ր, *լինայ* իրիկուն (Հ, 375):

²⁸⁵ Բացառիկ է *պի* տարբերակը՝ Եւ դարձեալ էտուն նմա. որ հագնի մինչեւ ի Քրիստոսի սուրբ ծնունդն: Եւ ծննդեան կրկին այլ *պի բերէ* եւ տայ ի ձեռն տանուտրացն անպատճառ (Կ-Պ):

և՛ ձայնավորով սկսվող դիմավոր բայաձևերի հետ: Հմմտ. Թէ ապրիս հազար տարի, Երբ որ է *տի գաս* մօտ ինձի (Հ, 920): Ձեր հոգին փառաւոր *տի մնայ* (Հ, 920): Անչափ *տի գովեմ* զքեզ, Չուր աչերուցը պագ մի տաս (Հ, 86): Տի ուտիմ կաքու մսի պէս (Հ, 644): – Մէկ պագն, որ մուրատով *տի տաս*՝ Պագդ ինձի հարամ թող լինի (Հ, 80) և Քանի սարերովտ երթաս, Օր մի ի չիմ ափըս *տի ընկնիս* (Հ, 191): Առնում գայն, որ անցեր ես, Առնուս գայն, որ դեռ *տի անցնիս* (Հ, 191): Մեռնիս ու յանտէնն երթաս, Անդ ճերմակ ծոցդ ի՞նչ *տի ենես* (Հ, 261): Արդարքն ի ցնձալ առնուն, Մեղաւորն նա ի՞նչ *տի առնէ* (Հ, 422):

զ) Տ՛ տարբերակը հանդիպում է միայն ձայնավորով սկսվող դիմավոր բայաձևերի հետ՝ *Տ՛ անիծիմ*, ուր քար տի դառնաս (Հ, 729): Հարամկին ընկեր եղայ, նա *տ՛ այրիմ* անանց կըրակով նի (Հ, 527): Երթամ ու Վանքը *տ՛ իջնիմ*, Սուրբ Սարգիս տանիմ հաւալէ (Հ, 647): Մսիկն ալ քէպապ *տ՛ անիմ* (Հ, 644):

Քննության առարկա բայերի միադիմի ձևերը, որոնցից են՝ *է, էր, թուենայ, կու թուի, լինի//կու լինի, կայ, հասնի, ուրդի, պատահի, պիտի//կու պիտի* և այլն, բացառությամբ *պիտի* և *լինի* բայաձևերի, սովորաբար գործածվում են դրական խոնարհմամբ, և միայն *պիտի*-ն և *լինի*-ն են հանդես գալիս և՛ դրական, և՛ ժխտական խոնարհմամբ: Հմմտ. Զինծորին եւ զիկտային կեղեւն *պիտի որ* ուտես (ԱՍՕԲ): Երբ ջրհեղն լցվի մարդոյն՝ *չի պիտի որ* արգիլէ, շուտ ելնել պիտի (ԱՍՕԲ)²⁸⁶: զի ոչ *լինի*, եթէ գոյաւոր անձն ոչ իցէ (ՎԱԳՀ, 20) և այլն:

Միադիմի բայաձևով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները երկրորդական նախադասություններին հիմնականում կապակցվում են գոդման եղանակով, և կապակցման բուն միջոցը *որ* ստորադասական շաղկապն է՝ Չաքարիային որդին ասէ, թէ լինի *որ* մօրուք հանց է ծնել. այնոր դեղ չի լինար (ԱՍՕԲ): Եւ լինի *որ* փակել կարէ եւ բանալ ոչ. լինի *որ* բանալ կարէ եւ փակել ոչ (ԱՍՕԲ): Եւ այս պակասիլն եւ հատանիլն անճարակ է եւ պիտի, *որ* լինի եւ այնպէս հատնի այդ տաքութիւնդ, որպէս որ ճրագին եղն հատնի (ԱՍՍ, 108): Եւ թէ ուրդի, *որ* ի խաղալն տղայք զիրար սպաննեն՝ նա պատեհ է տեսնուլ զսպաննաւդին հասակն (ՍՄԴ) և այլն:

²⁸⁶ Երբ ջրհեղն լցվի՝ մարդն չպիտի արգիլել. շուտ ելնել պիտի (ԱՍՕԲ):

Երկրորդական նախադասությունների կապակցման համար *որ* շաղկապի գործածությունն այնքան է տարածված, որ նրանով երկրորդական նախադասություններին կապակցվում են ոչ միայն հաստատականություն ցույց տվող *լինի, պիտի, ուրդի, կայ*, այլև թեականություն արտահայտող *թուի* բայաձևով արտահայտվող գուգորդվող միադիմի կառույցներ, ինչպես՝ *Կու թուի ինձ, որ հարկետր մարդոյ որդի ես եւ թագաւորի գարմէ ես* (ՎԱԱ):

Որ ստորադասականից բացի՝ գոդման եղանակով կապակցում է կատարվում նաև *թէ* շաղկապով: Վերջինս հանդիպում է միայն թեականություն արտահայտող *թուի, թուենայ* գլխավորներով կազմված նախադասությունների դեպքում, ինչպես՝ *Եւ երբ լինի գբունն իւր՝ հանց թուենայ, թէ ի մութն տեղ եմ* (ԱԱՕԲ): Չաւտամ, *թէ նա խելք ունի. Կու թուի, թէ խիստ յիմար է* (Հ, 446): վասն այն *թուի, թէ ոչ շարժին* (ՅՈՀ, 386): Ինձ այսպէս *թուի, թէ* ասացելոց բառիցս ոմանք բարդեալ միայն են ըստ անուան կամ ընդ բայի (ԴԶ, 155):

Անհամեմատ սակավադեպ են այս կարգի՝ շարահարությանը կապակցվող գլխավոր և երկրորդական նախադասություններով կառույցները: Դրանք հանդիպում են թե՛ արձակ ստեղծագործություններում՝ վկայելով այդ երևույթի՝ բանավոր խոսքին բնորոշ լինելու մասին, թե՛ չափածո գործերում՝ այս դեպքում ելնելով տողաչափի կարգավորման անհրաժեշտությունից: Օրինակ՝ *Կու թվէր իմ եարին լեզուն Ան հաւին քեքանն էր դրած* (Հ, 158): Հանց անուշ լեզու ունիս, *Ինձ թուի՝ ճոհար կու թափես* (Հ, 86): Իմ տէրն զիս քեզ չի տար, *լինի՝ քեզ պարտական լինա*, պարտուցն ալ վրճար չըլլայ, պարտուցն գաս դու հաւալա (ՄԲՀ) և այլն:

Միադիմի բայաձևով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունը և նրա պահանջով հանդես եկող երկրորդականը փոխադարձաբար կախյալ վիճակ ներկայացնող հաղորդակցական կառույցներ են, որոնցում բաղադրիչներից յուրաքանչյուրը հանդես է բերում իմաստային անկատարություն, ինչը, սակայն, վերանում է ողջ բարդ կառույցի սահմաններում: Զուգորդվող միադիմի նախադասությունները, լինելով գլխավորի դերում, լավագույն վկայությունն են այն բանի, թե բարդ ստորադասական նախադասությունների՝ բաղադրիչների բաժանումը գլխավորի և երկրորդականի չի ենթադրում, որ բովանդակության տեսանկյունից առաջինը պետք է ավելի մեծ կշիռ ունենա: Եվ իրոք, այսպիսի կա-

ռույցներում տեղեկատվական կարևորության տեսանկյունից առաջին պլանում երկրորդական նախադասություններն են և ոչ թե գլխավորները²⁸⁷: Ասվածը տվյալ դեպքում պատճառաբանվում է նրանով, որ այս կարգի կառույցներում գլխավոր նախադասությունները՝ ա) պակասավոր են, այն է՝ ունեն մեկ առանցքային անդամ, իսկ մյուս գլխավորը չունեն, և հնարավոր չէ ենթադրել, ուստի չեն կարող մի ամբողջական միտք արտահայտել, և բ) գերազանցապես համառոտ են՝ կազմված միայն բայական գերադաս անդամից, որով ընդամենը հաստատվում է երկրորդական նախադասությամբ արտահայտված իրողության կամ երևույթի առկայությունը, հավաստիությունը, թվացյալությունը, անհրաժեշտությունը կամ այլ հանգամանք:

Բ.2.2. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՑՎՈՂ ԶՈՒԳՈՐԴՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասությունների գերադաս անդամը միջին հայերենում բաղադրյալ է և ունի արտահայտության երկու մասնակաղապար՝

ա) «եղանակիչ բառ+միադիմի բայաձև»: Օրինակ՝ *Եւ յիւր ստածումն պարտ է* որ զհիւանդն չպատրաստեցնես իխտ (ՄՇ),

բ) «միադիմի բայաձև+անորոշ դերբայ»: Օրինակ՝ *Եւ դեռ կարէ լինել*, որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին, որ սղալէ ու չկարէ գալ առ հիւանդն (ՍՍԴ):

1. «ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՌ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ» ՄԱՍՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՑՎՈՂ ԶՈՒԳՈՐԴՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին հայերենում զուգորդվող միակազմ նախադասությունների շարքում տեղ են գտել նաև «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող միադիմի կառույցներ, որոնցում չեզոք սեռի միադիմի բայաձևը հանդես է գալիս ոչ թե որպես առանձին անդամ, այլ բաղադրյալ անդամի շարահյուսությո: Օրինակ՝ *Եւ թէ հոռում ձիթովն լինայ, լաւ է* (ԱԱ): *Եւ պատեհ է* որ յիբ հայրենի երկրէն զեղ եղբար մի կես բաժին

²⁸⁷ Հմմտ. Գ. Գարեգինյան, 1984, 77:

տան իր արժեաւք ընդ պռոյզն (ՄՄԴ): *Եւ այլ պարտ է որ Գ օր յառաջ գեր շուրվայ ուտեն (ԱԱՕԲ) և այլն:*

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով հանդես եկող գուգորդվող միակազմ նախադասություններով արտահայտվում է զգացական, դատողական, գնահատողական և այլ վերաբերմունք այս կամ այն առարկայի, երևույթի կամ իրողության նկատմամբ: Օրինակ՝ *նա պատեհ է*, որ ընդունի զինք եկեղեցին, բայց ոչ լման, ինչուր հաստատի ի հավատն (ՄՄԴ): *Մահման է* յարիհնացն՝ որ թէ թագաւոր եւ թէ իշխան ու թէ հեծելուր, որ ի ճանպահ կենայ, ու վանք պատահի, նա ի հան իջնու, չիջնու ի գեղ. եւ վանքն տայ զպետքն (ՄՄԴ) և այլն:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, ընդգծված գուգորդվող միադիմի նախադասությունները բովանդակության պլանում միատարր չեն, ինչը պայմանավորված է անվանական բաղադրիչի բառիմաստով: Ձուգորդվող միակազմ նախադասությունների «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» կապակցությունների անվանական բաղադրիչը միջին հայերենում արտահայտվում է գոյականներով, ածականներով, դերանուններով, ինչպես նաև բայանվանական հիմքով ձայնարկություններով, որոնցից են՝ *անգիտութիւն, անհնարայ, արժան, աւա՛ղ, ափսո՛ս, բարիք*²⁸⁸, *բաւ, բնութիւն, դժուար//դժար, դժուարին// դժարին, երանի՛/յերնէ կ, է՛րք, զարմանք, զարմացումն, է՛ր, ընդէ՛ր, ժամանակ, իշխանութիւն, իրաւունք, լաւ, խախք, կամ, հախ, հանց, հարկ, ճաշ/ք/, յայտ, յայտնի, յերեւան*²⁸⁹, *յո՛ւր, նեղ, պատեհ, պատեհիլի*²⁹⁰, *պատշաճ, պարտ, պիտոյ, վա՛յ, վա՛ջ, վարձք, տարի, ցաւ, օր* և այլն: Օրինակ՝ *Եւ այլ պատեհ է որ այս ջերմանս տերն վերաբերութիւն այնէ ի հիւանդութեան սկիզբն սամթի ջրով եւ մեղրով եւ աղով (ՄՀ): ապա յայտ է, թէ յայսմիկ միաւորութիւն բնութեանն ցուցանի, յայսմ՝ զօրութիւնս Աստուծոյ (ՊՏ, 26): Բայց թէ կենայ ճարակ՝ նա պատեհ է, որ եպիսկոպոսն զամէնն եկեղեցոյն ի շէնքն տայ կամ ի վարդապետանոց եւ կամ ճշմարիտ գերէտրոջ (ՄՄԴ): Այսինքն լաւ*

²⁸⁸ Այս կարգի որոշ կառույցներ երկխոսություններում գործածվում են որպես պատասխան խոսքեր (ինչպես ժամանակակից հայերենում): Օրինակ՝ Նայ ասաց, թէ վաղն ալ երեկ բանեց եւ առ զ .Գ. աւուր վարձն եւ գնայ. եւ կին ասաց. *բարի է* (ՎԱԱ):

²⁸⁹ *Յայտ, յայտնի:*

²⁹⁰ *Հարմար, տեղին, պատշաճ:*

է, որ այնպէս քննեն դատեն զգիրսն այս արուեստիւս և այս օրինակաւս (ԴԶ, 69): Պարտ է, որ քերթելով արուեստաւոր և պարզ և յստակ կարդան (ԴԶ, 69) և այլն:

Իբրև գերադաս անդամի բաղադրիչ գործածվող վերոբերյալ բառերը բաժանվում են իմաստային խմբերի: Ստորև առանձնացրել ենք «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասությունների հետևյալ խմբերը՝

1.1. «Հանգամանք ցույց տվող բառ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասություններ

«Հանգամանք ցույց տվող բառ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով զուգորդվող միակազմ նախադասություններում գերադաս անդամի անվանական բաղադրիչն արտահայտվում է գործողության կատարման տեղ, ժամանակ, չափ, ձև ցույց տվող գոյականներով, դերանուններով ու մակբայներով, որոնցից են՝ *ամ, ե՞րբ, է՞ր, ընդէ՞ր, ժամանակ, հանց, հերիք, յո՞ւր, տարի, օր* և այլն²⁹¹: Օրինակ՝ Երեք *տարի* է, որ աշխատանքս ի յամբրաւի կտէն սեղան մի շինեցի եւ բերի թագաւորին (ՎԱԱ): Այս բազում *ժամանակ է*, որ ոչ երկեայ եւ ոչ զարհուրեցայ ի քէն (ՎԱԱ): Երդնում ի գլուխ քո, որպէս *քանի օր է* աշխատել եմ ու շուրջ եկել (ՎԱԱ): *Յո՞ւր* էր, որ սիրեցաք զիրար, Դու ինձ՝ մեղր՝ ւ ես քեզի՝ շաքար (Հ, 110): Ձի այս *տարի մի է* ինձ, որ ոչ ի մահն եմ եւ ոչ ի կեանքն ի ձեռաց սորայ (ՎԱԱ): Մկներն ասացին ընդ իրեարս, թէ *է՞ր է*, որ մեք ո՛չ սլեհ ունիմք եւ ոչ եղջիւր (ՎԱԱ): Եւ ասէն. ընդէ՞ր է, *որ* կէտդ թոչուն էք, կէտդ սրբնթացք (ՎԱԱ): Այս երկու *ամ* է, որ եղև վիշտ մեծազգիս Հայոց (ԺԵ, 204) և այլն²⁹²:

²⁹¹ Նշված բառերից մի քանիսը (*ամ, ե՞րբ, է՞ր, ընդէ՞ր* և այլն) զուգորդվող միակազմ նախադասությունների արտահայտության միջոց էին նաև հին գրական հայերենի ոչ միայն դասական, այլև հետագա ենթաշրջաններում, ինչպես՝ *Ե՞րբ հ-ցէ*, զի մեոցի և կորիցէ անուն նորա (ԳՄ, 381): Տե՛ս Գ. Խաչատրյան, 2002, 153-160:

²⁹² Որոշ բարդ ստորադասական կառույցներ, որոնց գլխավոր նախադասության կազմում առկա է ուղղական հոլովով արտահայտված ժամանականիչ բառ, չպիտի շփոթել վերոբերյալ միակազմ նախադասությունների հետ. դրանք երկկազմ են և պահանջում են ոչ թե ենթակայի, այլ հատկացուցչի գործառնությամբ երկրորդական նախադասություն: Այսպես՝ Ձի *ժամ* էր ինձ, որ ամէի լուսատու մարգարիտ մի՝ քան զգալամու ձու մի, որ ամէն արարածս գին չէ իւրն (ՎԱԱ) կառույցի գլխավոր նախադասությունը պատասխանում է ոչ թե *ժամ էր ի՞նչը*, այլ *ժամ էր ինչի՞նչ*՝ հարցին՝ կատարելով հատկացուցչի շարահյուսական գործառնությո՛ւք: Քերա-

Ի տարբերություն վերը բերված կառույցների, որոնցում բաղադրյալ գերադաս անդամը և երկրորդական նախադասությունը նրան կապող *որ* շաղկապը ունեն բառային արտահայտություն՝ *հերիք* բառը հանդիպում է այնպիսի բարդ ստորադասական կառույցներում, որոնցում է հանգույցն ու *որ* ստորադասական շաղկապը բառային արտահայտություն չունեն, սակայն տվյալ կառույցի բովանդակության պլանում ենթադրվում են, և անհրաժեշտության դեպքում դրանք կարելի է վերականգնել²⁹³: Օրինակ՝ Մօլայ՝, գեմ *հերիք* (է, *որ-Գ.Խ.*) կանչես, Գիտացաք, որ կու լուսանայ (Հ, 141)²⁹⁴: Քո եարն ի մեռե, *հերիք* [է-Գ.Խ.] *որ* գընաս, Սև օրըն ի բերե վեր քո արևուն» (Հ, 792): Քանի՛ ու քանի՛ ասեմ, Թե՛ *Հերի՛ք* (է, *որ-Գ.Խ.*) խահրըտ տաս ուտելու (Հ, 125): – Կաքա՛ւ, դու *հերիք* (է, *որ-Գ.Խ.*) խօսիս, Որ չերթայ փետուրտ ի քամին (Հ, 271)²⁹⁵:

Այս ենթախմբի զուգորդվող միակազմ նախադասություններում երբեմն գործածվում է ձևի պարազայի իմաստ արտահայտող *հանց* դերանունը, որը, սակայն, տվյալ դեպքում ունի թարմատարի արժեք, քանի որ այդ նախադասությունների մեջ հարաբերյալի գործառույթ չունի, քանի որ չի ենթադրվում նրա չտարբերակված իմաստը որոշակիացնող ձևի պա-

կանական այս իրողությունն առկա է նաև *ատեն* գոյականի դեպքում, որը գլխավոր նախադասության կազմում ենթակայի գործառույթ է կատարում՝ պահանջելով հատկացուցիչ երկրորդական նախադասություն՝ *Եւ ատեն կու լինի*, որ այս ցաւս կանանց հանց կու լինի, որ շունչն կու բռնվի (ԱՍՕԲ): Հմմտ. նաև «Եւ կածիք է, թէ սպանեալն յոլով էր քան թէ ապրեալն» (ԹՄԼԹ, 23) կառույցը, որում է-ն էական, նյութական նշանակություն ունի («կարծիք կա»):

²⁹³ *Հերիք*-ը առանց է հանգույցի է գործածվում նաև այլ կարգի կառույցներում, որոնցում գերազանցապես հանդես է գալիս որպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեջբերվող խոսք՝ Դարձիր յԱրարիչըն քո Եւ մեղացդ ասա՛ դու *հերիք*» (Հ, 856): Այս կեանքս է շատ ոք խաբել, Չի ասել իսկի թէ *հերիք* (Հ, 853):

²⁹⁴ Հմմտ. Մօլայ, քեմ *հերիք* (է, *որ-Գ.Խ.*) կանչես (Հ, 181):

²⁹⁵ *Հերիք* բառը հանդես է գալիս հարադրի և այլ գործառույթներով նույնպես՝ գրավելով տարբեր դիրքեր: Օրինակ՝ Կեօզե՛լ, դուն *հերիք արա*, Քո սիրուն հոգիս կու քակտի (Հ, 104): Է՛յ, Չարիս, ա՛մ, *հերիք արա* Ու ձրգե ըզքակդ ի յոլոր (Հ, 847): *Հերիք արա*, Ստեփանն՛ս, Վայ՛ւ եղուկ կարդա գօրն ի բուն (Հ, 949): Թե՛ ապրինք՝ հետրաց ապրինք, Թե՛ մեռնինք՝ սերն այլ *հերիք* է (Հ, 95): Մըտիկ լեռներուդ արեք, Խելօքնուն *հերիք* խըրատ է (Հ, 479): Մտիկ սարերուն արայ, Խելօքնի *հերիք* խրատ է (Հ, 507): Մտիկ լեռներուն արայ, Խելօքնուն խրատ *հերիք* է (Հ, 442): Ամենն ի քամին գընաց Եւ ի քուն կացեր դու *հերիք* (Հ, 854) և այլն:

րագա երկրորդական նախադասություն: Օրինակ՝ «Եւ այսպէս թէ չառնես՝ ստածունն դժար լինայ. եւ *հանց լինի*, որ ամէն անդամն բշտէ» (ԱՍՕԲ) և «Եւ *հանց լինի* որ հիւսիսային հողմն փչէ ... » (ԱՍՕԲ) կառույցների «*հանց լինի*» նախադասության կազմում *հանց*-ը շարահյուսական գործառույթ չունի. նրա գործածությունն այս դեպքում խոսքի ոճավորման նպատակ է հետապնդում: Նկատենք, որ *հանց*-ը այս դերով գործածվում է միադիմի այլ բայերով արտահայտված գլխավոր նախադասություններում նույնպէս՝ Նշան աթաշի փարսուն այն է, որ այն տեղն որ ցան է՝ ուռէց լինայ եւ քերվի եւ բշտէ, եւ *հանց թուի*, թէ ի կրակն է այրել մարդուն զօգուածն (ԱՍՕԲ): Եւ գունն կարմիր լինի, եւ ի վերան բշտեր լինայ, եւ *հանց թուենայ* թէ ի կրակն է այրել ինքն (ԱՍՕԲ): *Եւ հանց կու պիտի* որ ի ցաւուն յառաջն երակ առնուն եւ ըստ ուժուն արին հանես (ԱՍՕԲ): Եւ այլ *հանց կու պիտի*, որ թագաւորն զրժիշկն հարկէւոր եւ պատուական տեսնու Գ իրաց վերայ (ԱՍՕԲ) և այլն:

Հարկ է նշել, որ *հանց*-ից բացի՝ խնդրո առարկա միադիմի կառույցներում նշված իմաստով հանդես է գալիս նաև *որպէս* դերանունը, որը հանդիպում է Կամենիցի հայկական արձանագրություններում՝ Բայց *որպէս* ձեր հրամանոցն յայտնի է. որ եկայ ի Լուցքան եւ ընդ հօր ձեռամբն արգելական արարին զամենայն ապրանքս (Կ-Պ): Այս փաստն իր հերթին վկայում է նշված ոճական հնարքի՝ միջին հայերենում տարածված լինելու մասին²⁹⁶:

1.2. «Գնահատողական վերաբերմունք ցույց տվող բառ+միադիմի բայածև»

ենթամասնակադայարով զուգորդվող միակազմ նախադասություններ

«Գնահատողական վերաբերմունք ցույց տվող բառ+միադիմի բայածև» մասնակադարով զուգորդվող միակազմ նախադասություններում գերադաս անդամի անվանական բաղադրիչն արտահայտվում է մի շարք գոյականներով ու ածականներով, որոնցից են՝ *անհնար, անհնարայ, ար-*

²⁹⁶ Ի տարբերություն բերված նախադասության՝ *որպէս*-ով արտահայտված նմանատիպ վերջադաս նախադասությունները միջանկյալ երկկազմ կառույցներ են՝ Եւ ասաց Խաչէրեան. եթէ հաշիւ արարաք Յովանէսն յետ ինձի վասն այն պարտքի համար. գոր ինձի պարտ է. *որպէս յայտնի է ի դատաստանի դիժնարին* (Կ-Պ): Եւ ասաց. եթէ կու վկայեցնեմ ձեր հրամանքներուն. գոր Միլքո՛ն Եագուպին որդին ինձի պարտական է եւ զտունն իւր գրել է ինձի ի մէջ սումային. *որպէս յայտնի է դատաստանին տիժնարն* (Կ-Պ):

*ժան, բարի, բաւ, դժուար//դժար, դժուարին, զարմանք, զարմացումն, լաւ*²⁹⁷, *խախք, հախ, հարկ, յայտ, յայտնի, յերեւան, նեղ, պատեհ, պատեհիլի, պէտպատշաճ, ցաւ* և այլն: Օրինակ՝ Բայց *պատեհիլի* չէ, որ շուտով յանձն առնու, մինչէլ յոլով աղաչեն գնայ (ՄՄԴ): Եւ շունչն կապեալ է ընդ երակն եւ ընդ արիւնն. իսկ արիւնն կապեալ է ընդ մարմնոյն, *եւ յայտ* անտի է, յորժամ կամի որ հեշտ սպանանել զմարդ՝ զերակն արձակէ (ԱԱՕԲ): *Եւ անգիտութիւն է*, որ այսպիսուն մարդիք ուսնին եւ կամ հարցանեն եւ զբանին զառաջքն եւ զվերջքն, զի չի գիտէ զինչ գործէ (ԱԱՕԲ)²⁹⁸: Եւ ասէ. *վարձք է*, որ ստով ապրեցայ ես, որպէս կաքան եւ չիտն, որք խաբեցին եւ ապրեցան (ՎԱԱ): Եւ ասէ որդին. ո՞վ հայր, *զարմացումն է*, զի հուրն ոչ կիզեց զմեզ վասն քո անդէպ խորհրդոցդ (ՎԱԱ): *Յայտնի է*, որ յառաջն եւ պիսկոպոսունքն կին ուննային եւ որդիք՝ եւ ի քաղաքս կենային (ՄՄԴ): Եւ տեսի որ *յերեւան է*, որ [քահանայ] ամուսնանայ, ասելի քան զմէկն, եւ որ շնայ՝ նա ելած է ի քահանայագործութենէ բնաւիմբ (ՄՄԴ): Ասէ. *դժվարին*²⁹⁹ է մարդոյ, որ զսովորական գործքն թողու (ՎԱԱ): Սրտիս էլ է *նեղ*

²⁹⁷ Այս բառերի մի մասը կարող է գործածվել նաև որպես անկախ միադիմի նախադասությունների գերադաս անդամ: Այսպես՝ *լաւ է* միադիմի կապակցությունը մինևսյն բարդ կառուցում մի դեպքում գործածվում է անկախ նախադասության կազմում՝ անորոշ դերբայի համադրությամբ, մյուս դեպքում՝ զուգորդվող նախադասության կազմում՝ ենթակա երկրորդական նախադասության զուգորդությամբ՝ Ժահահոտութիւն դժոխոցն այնպէս չար է. որ *լաւ է, թէ յարեւմտից յարեւելս կրակ լինի, լաւ է յայն կրակն 'ի ներս գնալ քան թէ գրժոխոց ժահահոտութիւնն առնուլ եւ զՍաղայէլի զագիր կերպարանքն տեսանել:*

²⁹⁸ Այս կարգի նախադասությունների հետ չպետք է շփոթել այն կառույցները, որոնք արտահայտվել են *անուն-եզակի 3-րդ դեմքի բայաձև* կապակցությամբ, որը ոչ թե միակազմ նախադասության գերադաս անդամի գործառույթ ունի, այլ երկկազմ նախադասության ստորոգյալի (ենթական այս դեպքում բառաքերականական արտահայտություն չունի)՝ Եւ այլ ասէ, թէ այդ ցաւդ ի պալղամէ լինի. եւ զարմանան. բայց [*դա//այդ*] *չէ զարմանք*, զի առաջին ժամանակին մարդ մի եղեր է այս ցաւուս տէր:

²⁹⁹ Ածական բաղադրիչների հետ կարող են հանդես գալ նաև հատկանիշի աստիճան ցույց տվող բառեր՝ Յուցանէ առակս, թէ *կարի դժուարին* է մարդոյն, որ զհայրենական եւ զբնութիւն եւ զսովորական արուեստն թողու, որպէս զխաւսողն (ՎԱԱ):

կու գա³⁰⁰, Որ հագնիմ գրիի կովելոյ (Հ, 305): Ով զիս կտրատե, մորթե, Քարկոծե՛ իմ կես *հախն չէ* (Հ, 280)³⁰¹: Կերթար ու լալով կասեր, Թ՛ Ի նչ *խախք էր՝* եղաք ցորեկով (Հ, 362): Նա միայն տեր կենայ հասին, Եւ այլ *ցաւ չէ*, թե կորնչին (ՍՍ, Ք, 109): Արդ *պատե՛հ է*, որ այսպիսի ազգն այնպէս ծուլացեալ և տգիտացեալ լինի, որ չգիտենա զիւր պատիւն (ԿԲԽԹ, 279): *հարկ է*, զի ընդ որոց ձեռամբ անկեալ կան, զնոցուն թագաւորսն շարայտրել (ՄԱՊՀ, 58):

Նկատենք, որ անվանական բաղադրիչներից մի քանիսը (*արժան, յայտ, պատեհ, պատեհի, պատշաճ, պիտոյ*)՝

ա) այս ենթախմբի կառույցներում եղանակավորիչի գործառույթ ունեն³⁰²: Օրինակ՝ վասն այնոր՝ զի *չէ պատեհ* որ յորոց թագաւորի ի ցածուրթին ընկնին (ՍՄԴ): ապա *յայտ է*, որ իւելացն ֆրելովն գտանի ֆալաքն (ՅԵ, 303): *Յայտ է*, զի անբնական, որ է հանդէպ երեսաց արեգականն, է աշխարհ անծանօթ (ԻՇ, 78) և այլն:

բ) ավելի հաճախ հանդիպում են միջինհայերենյան պաշտոնական և գործարար ոճի աղբյուրներում, ինչը բնորոշ էր նաև գրաբարին ու շարունակվում է նաև միջին հայերենում՝ այդ շրջանի գերազանցապէս գրաբար բնագրերում՝ Բայց *պարտ և պատշաճ է* սակաւութ զվարս կենաց նորա *գրել և ծանուցանել* ի մերոց աղքատամտաց և ի սուղ բանից (ՍՄԸԿ, 384): *Յայտ է*, զի իմացական և զգայական զօրութիւնքն ի մարդս առանց միմեանց ոչինչ առնեն (ՍՁ, 128): Եպիսկոպոսին *պարտ է եւ պատշաճ*, որ զամէն արի կենաց եւ փնտռե ի վերայ քահանայիցն եւ սարկաւագացն վասն բոգութեան (ՍՄԴ) և այլն:

1.3. «Դատողական, կամական կամ զգացական վերաբերմունք ցույց տվող բառ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասություններ

«Դատողական, կամական կամ զգացական վերաբերմունք ցույց տվող բառ+միադիմի բայաձև» ենթամասնակաղապարով գուգորդվող մի-

³⁰⁰ Եւ բայի փոխարեն որպէս հանգույց գործածվել է *ցալ* բայի միադիմի ձևը՝ փոխաբերական իմաստով:

³⁰¹ Հմմտ. Մօլա՛յ, գեմ հերիք (Է՛-Գ.Խ.) կանչես, Գիտացաք, որ *կու լուսանայ* (Հ, 141): – Կաքա՛ւ, դու հերիք (Է-Գ.Խ.) իօսիս, Որ չերթայ փետուրտ ի քամին (Հ, 271): Հմմտ. Ապա իւր լեզուվն ասե, Թէ՛ «Հերի՛ք է, այլ չի պիտի» (Հ, 434) և այլն:

³⁰² Այս շարքում տեղ գտած գերադաս անդամները բայանուններ են:

ակազմ նախադասությունների գերադաս անդամի անվանական բաղադրիչն արտահայտվում է *անգիտություն, բնություն, իշխանություն, իրաւունք, կամ, հարկ, յայտ, պարտ, սահման, վարձք* գոյականներով և *աւա՛ղ, ափսո՛ս, երանի՛ք//յերնէ՛կ, վա՛յ, վա՛շ* ձայնարկություններով: Օրինակ՝ *Կամ եղև* ինձ որ յայս յարուեստս շատ դովի ցուցանեմք եւ գրեմք զբժշկութեան չաքսն եւ ստուղուսաթն (ԱՍՕԲ)³⁰³: Եթէ կենայ թագաւորին կտրճեր եւ աղչկներ, *նա իրաւունք է* որ կտրճերն հաւսար ժառանգեն զթագաւորութիւնն (ՍՄԴ): Տուցանէ, *թէ չէ պարտ* որ մարդ ի թագաւորաց տուն եւ ի դատաւորաց մտանէ, նա զայլ ոք չարախօսէ կամ մատնէ (ՎԱԱ): *Իշուն բնություն եւ սահմանք է* որ ի դիժար տեղ անկանի եւ կամ ի շաղախ խրի, այլ անտեղովն չի գնար (ՎԱԱ): Եւ ասէ. հազար *վայ զիս* եւ շատ *աւաղ է*, որ չկայ ի հետս (ՎԱԱ):

Վերոնշյալ երեք ենթախմբերի գերադաս անդամների՝ հանգամանք, գնահատողական, զգացական, դատողական, կամական վերաբերմունք ցույց տվող բառերի հետ բայական բաղադրիչի գործառույթով հանդես են գալիս ոչ թե ի սկզբանէ միադիմի բայեր³⁰⁴, այլ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դեմքով թեք ձևեր, որոնք տվյալ կիրառության մեջ հակադրամիասնություն չեն կազմում եզակի 1-ին և 2-րդ դիմային ձևերի հետ, այսինքն՝ ցուցաբերում են միադիմի բայի արժեք: Ասվածը առաջին հերթին վերաբերում է *եւ*³⁰⁵ բայի սահմանական ներկա ժամանակաձևին (*է*), որի մասնակցությամբ արտահայտվում է խնդրո առարկա նախադասությունների մեծագույն մասը³⁰⁶: Եւ պատեհ է, որ ծառայորարարն ձիոյն,

³⁰³ Հմմտ. *կամ* անուն բաղադրիչով արտահայտված հետևյալ անկախ միակազմ նախադասությունը՝ *Կամ եղև* ինձ ճանաչել գերակն եւ զգոն (ԱՍՕԲ):

³⁰⁴ Նկատի ունենք *առաւօտանայ, լուսանայ* և այս կարգի այլ բայեր, որոնք չեն կարող հանդես գալ որպէս էական բայ:

³⁰⁵ Որքան էլ մասնագիտական գրականության մեջ նշվում է, թե միջին հայերենում դադարում է գործածվել *եւ* բայի *իցէ* առաջին ապառնին, այնուամենայնիվ նրա որոշ ձևեր հանդիպում են միջին հայերենի երկրորդ ենթաշրջանի հեղինակների գործերում անգամ՝ Նշան ոսկրին մխվելուն այն է, որ հարցնէս հիւանդին, թէ ի՛նչ կերար եւ ի՛նչ պատճառ եղաւ. եւ հիւանդն ասէ զինչ եւ *իցէ*, եւ դու գտածումն այնպէս անես աստուծով (ԱՍՕԲ):

³⁰⁶ Բանատողի չափը պահպանելու նպատակով *է* միադիմի բայաձևը կարող է նաև գեղջվել.

Լաւ (*է-Գ.Խ.*) թէ չէիր ծընեալ յերկրի,

որ հայնց ծառայի զինք, որ սիրէ զինք (ԲԶ, 68) և այլն: Դրանից բացի՝ տվյալ դեպքում գերադաս անդամի ձևավորմանը մասնակցում են նաև *եւ* բայի սահմանական անցյալ (*էր*) և *լինիլ* բայի անցյալ կատարյալ (*եղև*) ժամանակաձևերը՝ աչքի ընկնելով խիստ սահմանափակ գործածությամբ: Օրինակ՝ Ապա *պատեհ է* որ ուխտիւք եւ պատարագաւք զինք զեղ զսգաւոր մխիթարեն ի յիր սուքն, զեղ երբ հացիւ երթան (ՄՄԴ): Գնաց առ բժիշկն եւ առիծն եւ ասէ, թէ մեծ *գարմանք է*: զի էշն այն ոչ սիրտ ունի եւ ոչ ականջ (ՎԱԱ): Եւ *պարտ է* որ զարինն բռնեն դուրսի քահրուպարով (ԱԱՕԲ): Ի՞նչ *պատեհ է*, որ այդ ճմրի մարդդ հետ քեզ ի շուրջ գայ եւ զքո հարկետր անունդ աւերէ (ՎԱԱ): Ասեն. *լաւ էր* թէ չէայք տեսեալ զքեզ (ՎԱԱ): *Կաւ եղև* ինձ որ յայս յարուեստս շատ դովի ցուցանեմք եւ գրեմք զբժշկութեան չաքսն եւ ստողութեան (ԱԱՕԲ)³⁰⁷: Եւ *երկու ամ էր*, որ նստեալ էր յաթոռ վարդապետութեան ուսուցանելոյ (ԹՄԼԹ, 37):

Որպէս միադիմի բայաձև հանդես եկող *է*-ն այս կարգի կառույցներում արտահայտվում է և՛ դրական, և՛ ժխտական խոնարհմամբ: Հմտ. Եւ *պատեհ է* որ բժիշկն զէտ խոստովանահայր լինի եւ զամէն ծածուկ խորհուրդն պահէ (ԱԱՕԲ) և Եւ *չէ պատեհ*, որ կշտու ջուր իմէ (ԱԱՕԲ): Եւ աշխարհի իրիցնին *չէ պատեհ*, որ մատդին՝ որ ի վանքն երթայ՝ հակառակին (ՄԳԲ): Նկատենք, որ միջինհայերենյան աղբյուրներում անհամեմատ հաճախադեպ են «անուն (եղանակիչ բառ)+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող դրական (կամ հաստատական) գուգորդվող միադիմի նախադասությունները, ինչպէս՝ Յայնժամ ասաց, թէ *երեք տարի է*, որ ի յամբրաւի կտէն չարչարանօք զսեղան մի շինեցի (ՎԱԱ): Անհարկի եւ չար կին, *լաւ է*, որ դու մեռանիս քան թէ ես (ՎԱԱ) և այլն: Այս շարքում առանձնանում է «Յայնժամ ասէ թագաւորն ցայն, թէ *ափսոս չէ՞*, որ քո պիսի հարկետր մարդն հետ այնպիսի անբախտ մարդոյն շրջի» (ՎԱԱ) կառույցի ընդգծված միակազմ նախադասությունը, որը թէև ժխտական կազմություն ունի, սակայն քանի որ ճարտասանական հարց է արտահայտում, բովանդակության պլանում ունի դրական իմաստ, այն է՝ «*ափսոս է*, որ քո պիսի հարկետր մարդն հետ այնպիսի անբախտ մարդոյն շրջի»:

Մեծ բարկութիւն կայ առաջի (ԱԱ, Բ, 107):

³⁰⁷ *էր* սահմանական անցյալով և *եղև* անցյալ կատարյալով վերջին երկու նախադասությունները մեզ հանդիպած հազվադեպ վկայություններն են:

Դրական զուգորդվող նախադասությունների համեմատությամբ՝ հիշյալ կադապարով արտահայտվող ժխտական նախադասությունները սակավադեպ են՝ *Քահանայի չէ պատեհ*, որ մեծ քությունը է հպարտությամբ է դիական նախանձով երթան ընդ իրար ՄՄԴ): թէ պատճառն այս ցառուս ի գարկուց լինայ է կամ ծեծած՝ *չէ պատեհ որ երակ առնեն* (ԱԱՕԲ): Եւ նա ասաց նմա թէ. անհարկետր է չար մարդ. *քեզ հարկ չէ*. որ դուն վոյթութեան նշանն առնէիր (Կ-Պ) և այլն: Այդ նախադասություններում ժխտական իմաստն արտահայտվում է *ոչ* բառով և չ մասնիկով, որոնք ավելանում են դրական խոնարհման միադիմի բայաձևերին: Հիշյալ ժխտման միջոցները համանիշ են, ուստի նրանցով կազմված զուգաձևեր անգամ նույն հեղինակն է գործածում: Ասվածը լավագույնս վկայում են, օրինակ, Սմբատ Սպարապետի դատաստանագրքում առկա զուգաձևությունները նույնիսկ նույն բառերով (ինչպես՝ *պատեհ, իրաւունք* և այլն) արտահայտված կառույցներում: Հմմտ. հետևյալ նախադասությունները.

Եւ *ոչ է պատեհ*՝ որ երկու կոյր զիրար առնուն (ՄՄԴ) և Նա հայրն ի յայն *չէ պատեհ*, որ բռնվի, էւ ոչ եղբայր վասն եղբար (ՄՄԴ):

Եւ թէ որ ի կարգէ ձգած լինի՝ զինչ ու լինի կարգն, էւ նա ջանայ այլ ուրեք երթալ առնուլ՝ նա *չէ իրաւունք* որ տան. քաւել թէ աղչանք գրեն ի կապաւղն որ արձակէ (ՄՄԴ) և *Ոչ է իրաւունք* որ ամէն իշխան կարէ սպանութիւն այնել, քաւել որք ազգաւ թագաւորութեան ընքնակալ լինին (ՄՄԴ) և այլն:

Նշված ժամանակաշրջանում օրինաչափ է, երբ է դիմային ձևը չ ժխտական մասնիկի հավելումից հետո չի հնչյունափոխվում՝ Բայց *չէ իրաւունք*, որ զհարսնից ծախքն ի յորդից բաժինն հաշվին: Սակայն կան բացառիկ կիրառություններ, որոնցում կատարվել է *է-ի* հնչյունափոխություն: Հմմտ., օրինակ, *չէ պատեհ* և *չի պատեհ* զուգաձևությունը Ամասիացու բժշկարանում՝ Սահակն ասէ, թէ այս ի պոհրանին աւուրքն լինի՝ *չէ պատեհ* որ զփորն կապես (ԱԱՕԲ) և Եւ *չի պատեհ* որ տաս զայն իրվին, որ զփորն լուծէ (ԱԱՕԲ), որը, ըստ մեր դիտարկումների, այդ երկում պատահականություն չէ, քանի որ հանդիպում են գործածության այլ դեպքեր նույնպես՝ Եւ *չի պիտի* որ այսպիսի մարդն մէն մէն ի շուրջ գայ (ԱԱՕԲ): Եւ *չի պիտենայ* որ յամէն ժամ մարդն ի յարտաքս ելանէ (ԱԱՕԲ):

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտա-

հայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները կազմությամբ ավելի հաճախ համառոտ են. գերազանցապես արտահայտվում են միայն գերադաս անդամով, ինչպես՝ Եւ թագուրն զիր շահուն տասնեակն *պատեհ է* որ եկեղեցոյն տայ (ՄՄԴ): *Հաւ է*, որ փախչիմ երթամ յաշխարհս մարդակերաց եւ լինիմ ըղտապան (ՎԱԱ): Եւ ասէ. *վարձք է*, որ ստով ապրեցայ ես, որպէս կաքան եւ չիտն, որք խաբեցին եւ ապրեցան (ՎԱԱ) և այլն: Ասվածը նշանակում է, որ ինչպէս միադիմի բայաձևով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները, այնպէս էլ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվողները և վերջիններիս պահանջած երկրորդականները լիարժեք տեղեկության առումով երկուստեք անկատար են: Ավելին՝ բուն տեղեկություն են պարունակում ոչ թէ գլխավոր, այլ երկրորդական նախադասությունները, քանի որ գլխավոր նախադասությունները, լինելով միակազմ, չեն կարող ամբողջական միտք չեն արտահայտում, այլ ընդամենը հավաստում են երկրորդական նախադասությամբ արտահայտված միտքը և երանգավորում այն:

Այսուհանդերձ, նշված կարգի սակավաթիվ գլխավոր նախադասությունների կազմում հանդես են գալիս նաև երկրորդական անդամներ՝ տվյալ կառույցը վերածելով ընդարձակի: Ավելի հաճախ լրացման գործառույթ ունեն գործողության կատարման հանգամանք ցույց տվող բառեր՝ արտահայտված ժամանակի, չափի մակբայներով, ինչպէս՝ *ամենին, ապա, բնաւ, կարի, յայնժամ, շատ* և այլն: Օրինակ՝ Յուցանէ առակս, թէ մեծայտունք ծրծեն զըղուղս ժողովրդեան եւ *շատ պատահի*, որ աղքատն ՚ի նեղեալ վիշտացն մեռանի (ՎԱԱ): Եւ *յայնժամ պատեհ է* որ պատրաստ կենան, զի մահ բերէ (ԱԱՕԲ): *Բնաւ չէ պատեհ* որ տաք իրք տաս (ԱԱՕԲ): *Ապա յայդ տեղդ պատեհ է*, որ եկեղեցին աղէկ տեսնու եւ փնտռէ, որ յետև անհանգստութիւն չլինի (ՄՄԴ): *Չէ ամենեւին պատեհ* որ եպիսկոպոս յոչինչ ազգ գործ աշխարհական եւ ոչ ի բան մերձենայ (ՄՄԴ)³⁰⁸: Բայց *որպէս*

³⁰⁸ «Եւ ի դարպաս ու ի հանդէս պատեհ է, որ հնազանդութիւն այնէ եպիսկոպոսն արհիւեպիսկոպոսին» (ՄՄԴ) նախադասության կառուցվածքը երկու կերպ է մեկնաբանելի. նախադաս երկրորդական անդամները հավասարապես կարելի է վերագրել և՛ միադիմի գերադաս անդամին, և՛ նրան հաջորդող երկրորդական նախադասությանը, ինչին հակված ենք մենք, քանի որ *պատեհ է* գերադաս անդամը գերազանցապէս հանդես է գալիս առանց լրացումների, մասնավորապէս՝ առանց տեղի պարագայի:

ձեր հրամանոցն յայտնի է: որ եկայ ի Լուսքան եւ ընդ հօր ձեռամբն արգելական արարին զամենայն ապրանքս (Կ-Պ): Տուցանէ առակս, թէ *կարի անպատշաճ է*, յորժամ տղայք խրատ տան ծերոց եւ կամ տղետքն գիտնականաց (ՎԱԱ): *Կարի պէտպատշաճ է*, յորժամ տղայք խրատ տան ծերոց՝ եւ տղետք գիտակաց եւ անմիտք իմաստոց (ՎԱԱ):

Ընդարձակ զուգորդվող միադիմի նախադասություններ են ձևավորվում նաև այն դեպքում, երբ նրանցում ըստ անհրաժեշտության գործածվում են առարկա ցույց տվող բառերի (գոյական, փոխանուն կամ 1-ին, 2-րդ և կամ 3-րդ դեմքի դերանուն) հոլովով արտահայտված անդամներ: Այսպես՝ «Եւ ես զիմաստութիւնս խելօքս եմ գտել, *եւ չէ պատեհ ինձ*, որ խելքս կորուսանեմ» (ՎԱԱ) և «Եւ նա ասաց նմա թէ. անհարկեւոր եւ չար մարդ. *քեզ հարկ չէ*. որ դուն վոյթութեան նշանն առնէիր» (Կ-Պ) նախադասություններից առաջինի *պատեհ* հատկանիշը վերագրվում է 1-ին դեմքին, երկրորդ նախադասության *պատեհ* հատկանիշը՝ 2-րդ դեմքին, իսկ «Գեղիանոս ասէ, թէ *պատեհ է բժշկին* (հմմտ. *նմա-Գ.Խ.*). որ զայս ցաւուս նշաննի աղէկ իմանայ» և «Եւ *չէ պատեհ բժշկին* (հմմտ. *նմա*), որ մինչեւ զգոզն չի տեսնու՝ որ հիւանդին պէտ այնէ» (ԱԱՕԲ) նախադասություններում՝ 3-րդ դեմքին:

Վերոնշյալ կազմությամբ կառույցներում հանգման խնդրի բացակայությունը հնարավորություն է ստեղծում միադիմի գերադաս անդամով արտահայտված հատկանիշը վերագրել բոլորին՝ արդյունքում ձևավորելով բովանդակության պլանում ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին համանիշ կառույցներ, որոնցում կարելի է ենթադրել տրականով արտահայտված *ամենեցուն* անդամը, ինչպես հետևյալ նախադասության կազմում՝ Եւ յորժամ որ գոգելուն ատենն գայ՝ չէ պատեհ [*ամենեցուն*] որ արգիլեն. եւ թէ արգիլեն՝ մեծ ցաւեր բերէ ի բուշտն եւ երիկամունքն (ԱԱՕԲ):

Բարդ ստորադասական կառույցներում ենթակայի գործառույթ կատարող երկրորդական նախադասությունները զուգորդվող միադիմի նախադասություններին ավելի հաճախ կապակցվում են գոդման եղանակով, մասնավորապես *որ*, *թէ* և *զի* ստորադասական շաղկապներով՝ Եւ ասէ հաքիմն. ո՛վ դու, այր փառօր, անհնարայ է, *թէ* ռոջանայ դայ ի բժշկաց. զի իշուն ազին միայն կա (ՎԱԱ): Եւ ասէ որդին. ո՛վ հայր, զարմացումն է, *զի* հուրն ոչ կիզեց զմեզ վասն քո անդէպ խորհրդոցդ (ՎԱԱ): Եւ յայն ատենն

լաւ է, *որ* այարիճով խաղաջ այնես (ԱՍՕԲ) և այլն:

Չուգորդվող միակազմ նախադասությունները ենթակա երկրորդական նախադասություններին հիմնականում կապակցվում են *որ* ստորադասական շաղկապով՝ նա յառաջ պատեհ է *որ* կնկան ազգն բերեն գայն փեսայն, եւ յիրար տան իրանաւք (ՍՄԴ): որ չլինի՝ *որ* վասն խստասրտութեան խիստ յառաջ երթայ (ՍՄԴ): Եւ այն օրն որ դալար ձուկն ուտես՝ կաթն եւ հաւկիթն եւ ոսպ եւ ապուխտ եւ պախրու միս չէ պատեհ *որ* ուտեն (ԱՍՕԲ): Եւ յորժամ որ զկերակուրն ուտես՝ կու պիտի *որ* համբերես (ԱՍՕԲ) և այլն:

Որ ստորադասական շաղկապի հետ համեմատած՝ *թէ* շաղկապի գործածությունը նկատելիորեն սահմանափակ է, ինչը պայմանավորված է հետևյալ կարևոր հանգամանքով. *որ* շաղկապով սովորաբար կապակցվում են հաստատական գործողություն արտահայտող երկրորդական նախադասությունները, որոնք միջին հայերենում անհամեմատ հաճախադեպ են, մինչդեռ *թէ* ստորադասականով կապակցվում են այն երկրորդականները, որոնցում սովորաբար արտահայտվում են կասկած, թեականություն և այլն: Վերջին կարգի նախադասություններն առանձնանում են սահմանափակ կիրառությամբ, ինչպես՝ Եւ ասէ հաքիմն. ով դու, այր փառօր, *անհնարայ է, թէ ողջանայ դայ ի բժշկաց* (ՎԱԱ): Եւ ասէ գայլն. գնամ՝ ի շուրջ գամ, *լինի թէ* գտնում եւ բերեմ (ՎԱԱ): *Լինի, թէ այլի դառնաս Ու կենաս խելկացդ ի վերայ* (Հ, 219): Այլ թուի, *թէ* ի բարձր տեղոյ անկել եւ կամ ի ծովու մէջն կայ, եւ կամ *թէ* ի նեղ տեղի կայ (ԱՍՕԲ):

Միջին հայերենում գուգորդվող միադիմի նախադասություններով կառույցներում առավել սահմանափակ գործածություն ունի գրաբարից ավանդված *զի* ստորադասական շաղկապը, ինչպես՝ Գնաց առ բժիշկն եւ առիւծն եւ ասէ, *թէ մեծ զարմանք է. զի էջն այն ոչ սիրտ ունի եւ ոչ ականջ* (ՎԱԱ): Եւ գայս ինչ վկայեցոյց, զի յայտնի լիցի դատաստանին. *զի* սատկեցավ ինքն այն ձին (Կ-Պ): Եւ *է զարմացումն, զի* ոչ հրըշտակք է դատաւորն եւ ոչ մարգարէ. ոչ գայնայտն եւ զձաձուկն զիտնայ (ՎԱԱ): Պատճառն այն է, որ գրավոր աղբյուրներում *զի* շաղկապին զուգահեռ շրջանառության մեջ է միջինհայերենյան *որ*-ը: Վերջինս՝ ա) բնորոշ է խոսակցական հայերենին, բ) իր քերականական իմաստով համանիշ է *զի* ստորադասականին, սակայն նրա նման բազմիմաստ չէ, գ) զերազանցապես գործածվում է առարկայական հարաբերությունների կապակցման դաշտում և դ)

լիարժեքորեն փոխարինում է *զի* ստորադասականին: Դրանով է պայմանավորված, որ *զի* շաղկապը աստիճանաբար սկսում է հանդես բերել կապակցման սահմանափակություն (պարագայական հարաբերություններ), մասամբ էլ գիտակցվել որպես խոսքի ոճավորման միջոց (գրաբարաբանություն):

Միջին հայերենում «եղանակիչ բառ+միադիմի բայածև» կադապարով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները երկբաղադրիչ բարդ ստորադասական կառույցներում հազվադեպ են, մինչդեռ առանձնապես հաճախ են հանդիպում բազմաբարդ կառույցների միջակա հատվածներում: Այսպես՝ Սմբատ Մպարապետի դատաստանագրքի ոճական յուրահատկություններից մեկն այն է, որ հիշյալ նախադասությունները, պայմանավորված այդ երկի բովանդակությամբ, իրենց նախորդող և հաջորդող նախադասություններին առավել հաճախ կապակցվում են գոդման եղանակով, և կապակցումը գերազանցապես իրականանում է, համապատասխանաբար, *նա* (այն տվյալ դեպքում գործածվում է «ապա» իմաստով) և *որ* ստորադասական շաղկապներով՝ Եթե ոք որ չէ քահանայ, եւ սուտ քահանայութիւն կու այնէ՝ *նա պատեհ է, որ* բերէ զինք եպիսկոպոսն եւ վարդապետաւք փնտռէ հետ իր (ՄՄԴ): Կին՝ որ առանց եկեղեցոյ եւ առանց հրամանաց եւ մեծ պատճառանաց, որ հաւնեցնէ զդատաւորն, թողու զայրն ու փախչի՝ *նա իրաւունք է, որ* բռնեն զինք եւ ի յիր այրիկն տան, որ յաւիտեան ծառայ ուննայ զինք (ՄՄԴ): Եւ էկին .Բ. քաջ ՚ի հօրուն բերանքն .Ա. ասաց, թէ .Գ. *տարի է, որ ՚ի թագաւորին դուստրն եմ մտել* (ՎԱԱ) և այլն:

Գլխավորին գոդման եղանակով կապակցված գուգորդվող նախադասությունների համեմատ՝ լեզվական աղբյուրներում նկատելիորեն սակավադեպ են շարահարությամբ կապակցվածները, որոնց կապակցման միջոցը կախման հնչերանգն է: Օրինակ՝ Բայց ու եպիսկոպոսն պատեհ է [*որ-Գ.Խ.*] աղէկ տեսնու, որ չլինի՝ որ վասն խստասրտութեան իմիստ յառաջ երթայ (ՄՄԴ): Ես այլ փեշաքար եմ. *եւ այս չափ տարի է, յայս դուռնս կու գամ* (ՎԱԱ): Փոքրիկ, բոլորիկ շամամ, *Յե՛րբ տի լի* [*որ-Գ.Խ.*] *սիրուտ տիրանամ* (Հ, 233): *Բայց չէ պարտ այս թռուղթս բացուի* (ՎՄ, 28) և այլն:

Հարկ է նշել, որ արձակ ստեղծագործություններում շարահարությամբ կապակցությունների գործածությունը գերազանցապես խոսքը ոճավորելու նպատակ է հետապնդում. նյութը շարադրվում է, այսպես կոչված,

հասարակ ոճով, ինչն ակնհայտորեն կրում է խոսակցական լեզվի ազդեցությունը: Այդ է պատճառը, որ նշված կարգի երկերում շարահարությամբ կապակցումը հաճախադեպ չէ: Ասվածին հակառակ՝ հիշյալ եղանակով կապակցում գերազանցապես կատարվում է չափածո կառույցներում, ինչը, անշուշտ, պայմանավորված է բանաստղերի վանկերի քանակի կարգավորման անհրաժեշտությամբ (գոդման եղանակով կապակցելու դեպքում բանաստղում կավելանար նոր վանկ՝ խախտելով նախատեսված տողաչափը): Բերենք ասվածը հավաստող լեզվական փաստեր հայրեններից՝ Ուր որ դու կանկնած լինիս՝ *Չէ պատեհ [որ-Գ.Խ.] վառեն մոմեղէն* (Հ, 138): Փոքրիկ, բոլորիկ շամամ: Ինձ խիփն ու դուսայ *կու գայ [որ-Գ.Խ.]*՝ Քո ծոցուդ այլ մարդ տիրանայ (Հ, 340): Թէ ապրիս հազար տարի, *Երբ որ է՝ տի գաս մօտ ինձի* (ՅԶ, 920): *Պարտ է [որ-Գ.Խ.]*, ի յարքունոյն դու ոչ հեռանաս (ՊՓՎՎ, 122): – Իմ տերն ըզիս քեզ չի տար. *Լինի՛ քեզ պարտըկան լինա, ...* Անճըրկի լօք զիս քեզի տայ, Ապա քո բանըդ լինենայ (Հ, 196): *Ինձ դժար ու գերայ կու գայ՝* Քո ծոցուտ այլ մարդ տիրանայ (Հ, 250)³⁰⁹ և այլն:

Թե՛ արձակ և թե՛ չափածո ստեղծագործություններում շարահարության եղանակով կազմված կապակցությունների առկայությունը վկայում է այդ իրողության՝ միջին հայերենի խոսակցական մակարդակին բնորոշ լինելու մասին:

Ըստ շարադասության՝ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» կաղապարով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունները հանդիպում են՝

1. նախադաս՝ *Այս բազում ժամանակ է*, որ շնացայ եւ չերկեայ ի յԱստուծոյ դատաստանացն (ՎԱԱ): Եւ ասէ գայլն. գնամ՝ ի շուրջ գամ, *լինի թէ քրարկան եմ եղել ի գառներուս՝ գտնում եւ բերեմ* (ՎԱԱ): *Լինի, թէ ավլի դառնաս Ու կենաս խելկացդ ի վերայ* (Հ, 219),

2. նախադաս՝ Յանկիկտ ի պատէս քակես, *Ինձի շատ դժար կու լընի* (Հ, 661): Ամէն հատի պաք մի տամ՝ *Ո՞ւր եղեր կամ ո՞ւր տի լինի* (Հ, 196):

³⁰⁹ Հմմտ. «Մօտ իմ եարուն մի՛ նստիլ, Թէ հազար ես ինձ սիրելի. *Ինձի խիստ դժար կու գայ*, Քանց հոգույս քակտիլն աւելի» (Հ, 259) և «*Իմ գայլս քեզ դիժար եկաւ*, Փոշիման ի վայր մնացի» (Հ, 310) կառույցների ընդգծված նախադասությունները, որոնք երկուսն էլ երկկազմ են:

Մա բնական է, քանի որ բարդ ստորադասական կառույցի բաղադրիչ նախադասությունների շարադասությունը միջին հայերենում ազատ է: Նախադաս գլխավոր նախադասությամբ կառույցները արտահայտության միջոցների և գործածության առումներով սահմանափակություն չունեն: Օրինակ՝ *Եւ թէ լինի*, որ տղին փորն լուծիլ չկարէ եւ կապի՝ պատրոյց արա մկան ծրտով եւ շաքրով եւ տուր (ԱՍՕԲ): *Եւ կու պիտի*, որ դու սնցնողին ասես, թէ հետ երկան չի պատկիս (ԱՍՕԲ): *Բայց ի վերայ ամենայնի իրավունք է*, որ առաջի պսակն ընդունած առնուի (ՄՄԴ): *Չէ իրավունք* որ թագաւոր անպսակ սիրողով կենայ. զի Աստուծոյ եւ հայրապետին արինադրակից է (ՄՄԴ) և այլն, մինչդեռ վերջադաս գլխավորով կառույցները լեզվական աղբյուներում ոչ միշտ են հանդիպում՝ *Եւ յորժամ որ օթեւանն իջնուս*, եւ թէ ի բաղանիս մտես՝ *պատեհ է* եւ թէ յետ այնոր ի ծովն նայիս՝ *պատեհ է* (ԱՍՕԲ): Եւ որ յարքունի ջամբոէ իրք գողանայ՝ նա գերկու աչսն հանէ եւ զկինն ու գորդիսն առնուն եւ այլ զինչ ունենայ՝ առնուն. եւ թէ ծախէ զկինն եւ գորդիսն՝ *արժան է ՄՄԴ*: Եւ թէ այս դեղերուն մէկն կամ Բ լինի՝ *բաւ է* (ՄՄԴ):

Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունների շարադասության կապակցությամբ նշել ենք, որ դրանց մի մասը հանդես է բերում միջադաս դիրք, ինչը բարդ ստորադասական կառույցներում անբնական իրողություն է: Միջադաս գործածվում են նաև վերոնշյալ նախադասություններին շարահյուսորեն համանիշ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» գերադաս անդամով արտահայտված գուգորդվող միակազմ նախադասությունները: Օրինակ՝ Ու բանադրաւոն *պատեհ է*, որ յայդ տեղդ աղէկ առնու զիր թպտիրն ի բանադրելն, զի եւ իր այլ կայ կապաւոյ եւ արձակաւոյ (ՄՄԴ): Եւ թէ քաղաք լինի սղարել եւ ի յառ ածել, նա երեք հետ *պատեհ է* որ ձենել տայ՝ թէ եկէք ի հնազանդութիւն (ՄՄԴ): Ջայս *անհնար է*, թէ կարասցէ գործել (ՊՏ, 26):

Ի տարբերություն չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող միջադաս նախադասությունների (մասնավորապես (*կու*) *պիտի*-ով), որոնք կարող էին հանդես գալ նաև առանց *որ* շաղկապի՝ նշված դիրքում հանդիպող «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտահայտվող գուգորդվող կառույցները գործածվում են միայն շաղկապի հետ, ինչը, կարծում ենք, վերջիններս միջադաս գլխավոր նախադասություն դիտելու համոզիչ փաստարկ է:

Բարդ կառույցների կազմում ընդգրկված՝ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» գերադաս անդամով արտահայտված ոչ բոլոր գուգորդվող միակազմ նախադասություններն են միջադաս, այսինքն՝ ոչ բոլոր կառույցներում է առկա երկրորդական նախադասության ընդմիջարկում: Օրինակ՝ «Բայց այս պատճառանօքն պատեհ է որ համբերեն կերակրոյ եւ ուշ ուտեն» (ԱՍՕԲ) կառույցում *պատեհ է* գերադաս անդամը գործածվել է ոչ թե միջադաս, այլ նախադաս դիրքում, քանի որ գտնվում է շարադասությամբ նախադաս և կազմությամբ ընդարձակ «Բայց այս պատճառանօքն պատեհ է» գլխավոր նախադասության կազմում: Այդպիսին է նաև «Եթէ որ մշակ վարձէ՝ ու առանց խնամոց հանցչաք շատ հալածեցնէ ի բան, կամ իրք տայ վերցնել՝ որ մեռնի կամ վնասի, նա պատեհ է, որ հայի դատավորն ի վարձն ու ի բանն եւ ի կարիքն» (ՍՄԴ) բարդ կառույցի «*նա պատեհ է*» նախադասությունը թեև գտնվում է միջակա տարածքում, սակայն երկրորդական նախադասության նկատմամբ նախադաս դիրքում է: Հմտ. նաև՝ Եւ թէ այրիկն երթայ յիրմէ, եւ առնու իր այլ կնիկ՝ նա թէ ու լսէ կինն նա պատեհ է, որ զայն է տարի համբերէ³¹⁰, եւ ապա առնու այրիկ (ՍՄԴ):

Հետաքրքրական է և այն, որ խնդրո առարկա նախադասությունները վերջադաս չեն հանդիպում:

Միջադաս շարադասությամբ հանդես եկող «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակադասարով գուգորդվող նախադասություններով ընդմիջարկվում են երկրորդական նախադասությունների առանձին անդամ(ներ) կամ հատվածներ: Օրինակ՝ *Եւ սաֆրային տիրոջն մտպուխ եւ սֆուֆ եւ շարապն լաւ է որ խմէ* (ԱՍՕԲ): *Եւ զդասերսն իրաւունք է՝ որ ի նահապետութեան տուն կարգեն* (ՍՄԴ): *Ի քաղաքի եւ ի բերդի շէնք՝ պատեհ է որ ամէն երկիրն աւգնեն ամէն իրաւք, զի ամէնին է* (ՍՄԴ): *Բայց զգոյն արժան է՝ որ ամէն երկրկալ յարատել կարէ*. բայց իւրենց ճորտերն չխրատեն առանց իրենց պարոնին (ՍՄԴ): *Բայց եւ զյիշուելոյն եւ զշահերոյն բաժնելն* պատեհ է՝ *որ զրենք* (ՍՄԴ): *նա է տարի* պատեհ է, *որ համբերէ կինն* (ՍՄԴ) և այլն:

Խնդրո առարկա միջադաս նախադասությամբ ընդմիջարկված երկրորդական նախադասության դիտարկումը երևան է հանում որոշ օրինա-

³¹⁰ Համբերելը գրաբարում կրկնասեռ (չեզոք և ներգործական) բայ էր, ինչը փաստորեն պահպանվել է նաև միջին հայերենում:

չափություններ: Այդ նախադասությունների՝

1. ենթական և ստորոգյալը հայտնվում են ընդմիջարկված տարբեր հատվածներում,

2. ենթական և նրա լրացումները սովորաբար գտնվում են միևնույն հատվածում,

3. ստորոգյալի և նրա լրացումների՝ խնդրի ու պարագայի՝ միևնույն հատվածում գետեղված լինելը պարտադիր չէ: Վերջիններս կարող են տեղ գտնել նաև ենթակային առընթեր: Ասվածից հետևում է, որ ստորոգյալի և նրա լրացումների իմաստային-քերականական կապն այնքան սերտ է, որ գիտակցվում է դրանց՝ անգամ ընդմիջարկված լինելու դեպքում:

Միջադաս դիրքում գործածվող ինչպես չեզոք սեռի միադիմի բայերով, այնպես էլ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակադապարով արտահայտվող զուգորդվող նախադասությունները ակնհայտորեն կրում են խոսակցական լեզվի կնիքը: Ասվածի մասին վկայում է այն, որ խնդրո առարկա տարբեր կառույցներում գերադաս անդամի՝ եղանակիչի գործառույթ կատարող բաղադրիչն արտահայտվում է տարբեր բառերով (*արժան, իրաւունք, լաւ, պատեհ, պիտոյ* և այլն), որոնցից ավելի հաճախադեպ են *պատեհ է* գերադաս անդամով կազմվածները: Անկասկած, քննվող նախադասությունների՝ վերոնշյալ շարահաստությամբ կառուցումը խոսքի ոճավորման նպատակ է հետապնդում. խոսողին (տվյալ դեպքում՝ հեղինակին) և խոսակցին (նեղ առումով՝ ընթերցողին) հասկանալի լեզվով գրելը միջնադարյան հեղինակների առաջադիր խնդիրներից մեկն էր, ինչի մասին անթաքույց նշում էին նաև հենց իրենք³¹¹:

Նկատենք, որ եթե միադիմի բայաձևերով միջադաս կառույցներ ավելի հաճախ գործածում էին Սմբատ Սպարապետը և Ամասիացին, ապա միադիմի բայաձևերի մասնակցությամբ կազմված միջադաս շարահաստությամբ կառույցները հաճախադեպ են Սմբատ Սպարապետի դատաստանագրքում: Զի գեպիսկոպոսն *պատեհ է*, որ երկրին եւ զաւառին ու իր կարգակցերոյն եւ ուսուցչացն ու վարդապետացն տեսով եւ ընտրաւորութեամբ

³¹¹ Այսպես՝ Սմբատ Սպարապետի դատաստանագրքում կարդում ենք. «Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս, ի թըւականութեանս Հայոց ՉԺԴ ամին՝ ի հայարապետութեան Տեառն Կոստանդէայ եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հէթմոյ եւ որդոյ սորա Լեւոնին» (ՄՄԴ):

նստուցանեն յաթոռ (ՄՄԴ): ... երեք հետ *պատեհ է* որ [թագաւորն-Գ.Խ.] ձենել տայ՝ թէ եկեք ի հնազանդութիւն (ՄՄԴ) և այլն:

«Եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասություններին աղերսներ ունեն մի շարք միակազմ և երկկազմ նախադասություններ, որոնք միմյանցից տարբերվում են քերականական կառուցվածքով, սակայն բովանդակության պլանում համանիշ են և պատկերացում են տալիս միջին հայերենում առկա հաղորդակցական միավորների բազմազանության, այլն դրանցով ազատորեն հաղորդակցվելու հնարավորության մասին: Ահավասիկ այդ նախադասությունների շարքը՝

1. Եւ պատեհ է բժշկին, որ հարկետր եւ ծանրագլուխ լինի:
2. Եւ պատեհ է որ բժիշկն գետ խոստովանահայր լինի:
3. Եւ պատեհ է [բժշկին] գայն կտրել:
4. Եւ պատեհ է ի նոքա շատ լուծման դեղ չառնելն:
5. Եւ պատեհ է որ ստածել³¹²:

Թեւ «եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող նախադասությունները միջինհայերենյան ոչ բոլոր աղբյուրներում են գործածվել, սակայն նրանք միջին հայերենին բնորոշ հաղորդակցական միավորներ են: Ասվածի մասին առաջին հերթին վկայում է այն, որ գրաբարից ավանդված այս կարգի նախադասություններում միջին հայերենի ժամանակահատվածում սկսել են գերադաս անդամի՝ եղանակիչ բառի գործառնությունը հանդիպել ոչ միայն գրաբարյան, այլն զուտ միջինհայերենյան բառային միավորներ:

2. «ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ» ՄԱՄՆԱԿԱՂԱՊԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԶՈՒԳՈՐԴՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն «եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող գուգորդվող միակազմ նախադասությունների՝ «միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող գուգորդվող նախադասությունները միջինհայերենյան աղբյուրներում հազվադեպ են՝ Եւ դեռ *կարէ լինել*, որ հայնց մեծ հարկ

³¹² Հետաքրքրական է, որ բերված նախադասությունները հանդիպում են միևնույն հեղինակի (Ամիրդովլաթ Ամասիացի) նույն բժշկարանում:

հանդիպի բժշկին, որ սղալէ ու չկարէ գալ առ հիւանդն (ՄՄԴ): Ասվածը պատճառաբանվում է նրանով, որ ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում գործողության եղանակավորումն ավելի հաճախ կատարվում է անուն խոսքի մասերով (մասնավորապես՝ գոյականներով ու ածականներով), որոնք, ի դեպ, ի տարբերություն եղանակիչ բայերի, նաև մեծաթիվ են՝ արտահայտելով տարբեր իմաստներ և անորոշ դերբայով արտահայտված գործողությունը եղանակավորելով նրբիմաստներով:

Բ.2.3. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշել ենք, չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող միակազմ նախադասությունների մի մասում գերադաս անդամն արտահայտվում էր միայն չեզոք սեռի բայաձևով, իսկ մյուսներում չեզոք սեռի բայաձևը հանդես էր գալիս որպես գերադաս անդամի բաղադրիչներից մեկը: Դրանից բացի՝ չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող միակազմ նախադասությունների մի մասը հանդես էր գալիս որպես անկախ միակազմ կառույց, մինչդեռ մյուսները գործածվում էին որպես մեկ այլ նախադասության հետ զուգորդվող միակազմ կառույցներ:

Ի տարբերություն չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող միակազմ նախադասությունների՝ կառուցվածքային և գործառական վերոնշյալ տեսակների՝ միջին հայերենում կրավորական սեռի միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է միայն կրավորական սեռի միադիմի բայաձևով, և այդ նախադասությունները անկախ գործածություն չունեն. հանդես են գալիս միայն որպես զուգորդվող միակազմ նախադասություններ:

Կրավորական սեռի միադիմի բայաձևով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասությունները, որպես կանոն, գործածվում են ենթակայի գործառույթ կատարող երկրորդական նախադասությունների հետ զուգորդված: Ասվածը նշանակում է, որ իբրև գլխավոր նախադասություն գործածվող հաղորդակցական այդ միավորները միակազմ են ոչ թե ընդհանրապես, այլ տվյալ կիրառության մեջ: Բանն այն է՝ նրանց կազմում բացակայում է երկրորդ առանցքային անդամը՝ ենթական, քանի որ այն արտահայտվում է մեկ այլ (տվյալ դեպքում երկրորդական) նախադասությամբ: Այդ նախադասությունները բարդ ստորադասական կառույցի

կազմից դուրս կա՛մ չեն գործածվում, կա՛մ գործածվում են որպես թերի (այս դեպքում զեղչված ենթակայով) երկկազմ նախադասություն՝ *Սսս-ցած է*, թե՛ այն լաւ է, որ ի յառողջութեան ժամն լինի (ԱՍՕԲ): *Սսցած է*, թե՛ այս ըռէշպալիսին որպէս սաֆրայ կու նմանի (ԱՍՕԲ): *Գրած է յարէնքս*, որ թե՛ ոք գրաւով զմարդոյ տուն կամ գտեղ կամ զհայրենիք շահի (ՍՄԴ): *Նա գրած է հիսայ՝* որ ով լսաւ լինիլ սահմանիս, եւ յեպիսկոպոսն թողու զվանքն իր ապրնաւքն՝ նա աւրհնած է յԱստուծոյ (ՍՄԴ)³¹³:

Կրավորական սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող գու-գորդվող միակազմ նախադասությունները կարող են հանդես գալ թե՛ համադրական և թե՛ վերլուծական բայաձևերով, սակայն նրանց գերադաս անդամի արտահայտության հիմնական միջոցը ներկա վերլուծական ժամանակաձևի եզակի թվի 3-րդ դեմքն է, որը տվյալ կիրառության մեջ ունի միադիմի բայաձևի արժեք: Օրինակ՝ *Սսսցած է*, թե՛ այս ցաւուս տէրն յորժամ վատուժ լինայ՝ կակղացնող եւ բացող դեղերն ի վրան դիր մինչեւ ուժովնայ (ԱՍՕԲ):

Լեզվական փաստերը վկայում են, որ այս կարգի նախադասություններում գերադաս անդամն արտահայտվում է *ասել, գրել, հրամայել, սահմանել* և այլ ներգործական սեռի բայերի կրավորական նշանակությամբ հարակատար ներկա ժամանակաձևով: Օրինակ՝ Եւ այլ *սսցած է*, թե՛ որ այլ ստամոքէն արինն գայ եւ ջերմն ունենայ՝ գէշ է, եւ այն որ ջերմն չի լինի՝ հեշտ է (ԱՍՕԲ): Վասն այսոր *հրամայած է եւ սահմանած*, որ տան զայս բաժին ողորմութիւն ի վաներս (ՍՄԴ): Եւ վասն այսոր *հրամայած է* յարինացս, որ թե՛ ոք պահք խոստանայ, նա երթայ ի վանքն պահէ, ինչվի լմննայ (ՍՄԴ) և այլն: Բանն այն է՝ միջին հայերէնում դեռևս վերջնականապես չի ամրակայվել և լիարժեքորեն շրջանառվել կրավորական իմաս-

³¹³ Հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևերով արտահայտվող գու-գորդվող միակազմ նախադասությունների քերականական իմաստը գրաբարում արտահայտվում էր վաղակատար-հարակատար ներկա և վաղակատար-հարակատար անցյալ ժամանակներով արտահայտվող գուգորդվող միադիմի կառույցներով, ինչպէս՝ Նա պատասխանի ետ եւ ասէ. *գրեալ է* թէ «Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի որ էլանէ ի բերանոյ Աստուծոյ» (ՄԳ): Նմանատիպ կրավորական կառույցներ գործածում են նաև միջնադարյան հեղինակները, երբ շարադրում են գրաբար՝ *Զի գրեալ իսկ է*, թէ ամենայն երկմտութիւն թերահաւատութիւն ծնանի (ՊՏ, 23) և այլն:

տի արտահայտության միջոցը՝ ու//լ քերականական ձևային: Առանց նշված ձևային գործածվող ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը, նրանով կազմված հարակատար ներկա և անցյալ վերլուծական, ինչպես նաև լինիլ բայի խոնարհված ձևերի օժանդակությամբ կազմված կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը միջին հայերենում հանդես են բերում կրկնասեռություն՝ քերականական միևնույն ձևով կարողանալով մի դեպքում արտահայտել ներգործական, մյուս դեպքում՝ կրավորական սեռի քերականական իմաստ: Այսպես՝ գրած է բայաձևը տարբեր նախադասություններում կարող է նշանակել «գրած է/գրել է» կամ «գրված է/գրվել է»: Ասվածը, ի դեպ, լավագույնս վկայում է միջին հայերենին բնորոշ այն իրողության մասին, որ միջին հայերենի բայը մասամբ ժառանգել է գրաբարի բայի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը՝ ներգործական սեռի բայերին հատուկ կրկնասեռությունը: Մասնավորապես հարակատար դերբայը (այն միջին հայերենում է սկսել գործառվել, և նրանով արտահայտվող վերլուծական ու կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը գրեթե նույնությամբ ժառանգել են գրաբարի անցյալ դերբային և նրանով արտահայտվող վերլուծական ու կրկնաբաղադրյալ ժամանակաձևերին բնորոշ գծերը) ներգործական սեռի բայ լինելու դեպքում քերականական միևնույն ձևով մի դեպքում կարող է արտահայտել ներգործական, մյուս դեպքում՝ կրավորական սեռի իմաստ: Ուսումնասիրվող կառույցներում, օրինակ, *ասել, գրել, հրամայել, սահմանել* բայերի հարակատար ներկա ժամանակաձևերի միադիմի (համապատասխանաբար՝ «հրամայված է», «ասված է», «գրված է», «սահմանված է» և այլն) կիրառությամբ արտահայտվում է կրավորական սեռի իմաստ, քանի որ նրանցով ձևավորված գլխավոր նախադասությունները ենթադրում և պահանջում են ոչ թե ուղիղ խնդրի, այլ ենթակայի շարահյուսական գործառույթ կատարող երկրորդական նախադասություն:

Կրավորական սեռի միադիմի բայաձևով արտահայտվող զուգորդվող նախադասությունները շարահյուսորեն հոմանիշ են *եղանակիչ բառ-միադիմի բայաձև* կապակցությամբ արտահայտվող որոշ զուգորդվող նախադասությունների (ասվածը վերաբերում է նշված կարգի այն կառույցներին, որոնցում որպես անվանական բաղադրիչ հանդես են գալիս բայանուններ): Տարբերությունը այդ նախադասությունների գերադաս անդամի արտահայտության պլանն է. միևնույն քերականական իմաստը վկայվել է

թե՛ գոյականով (*սահման է, հրաման է*) և թե՛ նրանից սերված *հրամայել* բառությամբ, որի հարացուցային միավորներից մեկն էլ դերբայն է (*սահմանած է, հրամայած է*): Հմտ. *Սահման էր՝* որ յառաջ չիշխեր եպիսկոպոսն վանացն. ապա թե մին մէն իշխեր (ՄԳԲ) և Վասն այսոր հրամայած է եւ *սահմանած [է]*, որ տան զայս բաժին ողորմութիւն ի վաներս (ՄԳԲ):

Նկատենք, որ նշված կարգի զուգորդվող միակազմ նախադասություններ գերազանցապես հանդիպում են Ամասիացու և Սմբատ Սպարապետի աշխատություններում: Ընդ որում, եթե Ամասիացին գերադասում է հաճախակի գործածել *ասացած է* բայաձևը, ապա Սմբատ Սպարապետը նախապատվությունը տալիս է *հրամայած է* բայաձևին: Օրինակ՝ *Ասացած է, թե* օդն գոլոշիկ մն է, որ ի գետնէն կու ելանէ եւ կու վերանայ (ԱՍՕԲ): *Եւ այլ ասցած է, թե* ի տաք բաղնիսն անչափ նստիս որ թալնաս (ԱՍՕԲ): *Եւ հրամայած է, որ* զինչ իսկ մարդ մեռնի, թե հարուստ եւ թե աղքատ, նա ամենեւին պառկելիքն ու հալան ինչուի գաւտին ու ի սաւլերն ի վանքն երթայ (ՍՄԴ): Ասվածը, անշուշտ, պայմանավորված է այդ երկերի թեմատիկ առանձնահատկությամբ. հեղինակները ոճական այս հնարքով մերթընդմերթ ձևակերպում են իրենց առաջ քաշած, համապատասխանաբար, բժշկագիտական և իրավագիտական դիտարկումներն ու սահմանումները, որոնցից առաջինների համար արտահայտության միջոց է ծառայում սոսկ խորհրդատվական արժեք ունեցող *ասացած է* բայաձևը (հանդիպում է նաև միջին հայերենին բնորոշ *ացած* հնչյունափոխությամբ), իսկ երկրորդների համար՝ պարտադրանք արտահայտող *հրամայած է* բայաձևը:

Հարակատար ներկայի միադիմի ձևով արտահայտվող զուգորդվող միակազմ նախադասությունները երկրորդական նախադասություններին կապակցվում են գոդման եղանակով, իսկ կապակցման միջոցը *թե՛* կամ *որ* ստորադասական շաղկապներն են՝ *Չայսու ընծայալք եւ մատդնով հրամայած է, որ* ի վաներն երթան այնեն (ՍՄԴ): *Ասացած է, թե* օդն գոլոշիկ մն է, որ ի գետնէն կու ելանէ եւ կու վերանայ (ԱՍՕԲ): Այդ շաղկապների բաշխվածությունը բնագրերում տարբեր է: Օրնակ՝ Ամիրդովլաթ Ամասիացին որպես քննության առարկա կառույցների բաղադրիչ նախադասությունների կապակցման հիմնական միջոց գործածում է *թե՛* շաղկապը: Օրինակ՝ *Եւ այլ ասցած է, թե որ այլ ստամոքէն արիւն գայ եւ ջերմն ունենայ՝ գէշ է* (ԱՍՕԲ): *Ասցած է, թե այս ըռէշ պալիսին որպէս սաֆրայ կու նմանի* (ԱՍՕԲ): Մինչդեռ Սմբատ Սպարապետի աշխատության մեջ նշված դե-

րով հանդես է գալիս որ շաղկապը, ինչպես՝ *Գրած է ի Մովսեսի յարեւքն, որ թէ որ ի ծառէ ի վայր ընկնի ու մեռնի՝ նա զծառն կտրեն (ՍՄԴ): Հրամայած է յարիւնացն՝ որ ամենեւին չիշխէ քահանայ ոչ մարդ սպաննել եւ ոչ անասուն բնաւ (ՍՄԴ): Նշված փաստը վկայում է տարբեր բարբառներում որ և թէ շաղկապների գործածության նախընտրության մասին:*

Ի տարբերություն հարակատար ներկա վերլուծական ժամանակաձևով արտահայտվող կրավորական միակազմ նախադասությունների, որոնք աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ, համադրական ժամանակաձևերով արտահայտվող կրավորական գուգորդվող նախադասությունները միջինհայերենյան աղբյուրներում հազվադեպ են: «*Եւ իմացվաւ որ ամէն գոյութեան պատճառն ի յայս չորս նիւթէն, եւ իւրեանց խառնվիլն արարչին հրամանան է*» (ԱՍՕԲ) կառույցի ընդգծված նախադասությունը՝ արտահայտված անցյալ կատարյալով, մեր ունեցած միակ վկայությունն է: Ասվածը պատճառաբանվում է նրանով, որ ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում հաղորդակցական միավորները (խոսքը և՛ երկկազմ, և՛ միակազմ նախադասությունների մասին է) առավելապես արտահայտվում են ներգործական կամ չեզոք սեռի բայերով, մինչդեռ կրավորական կառույցները նկատելիորեն սահմանափակ կիրառություն ունեն, ինչը լեզվամտածողության և ավանդականության հետևանք է և դրսևորվել է նաև միակազմ նախադասություններում:

Բայական միադիմի նախադասություններով կարող են արտահայտվել գործողություններ, որոնք վերաբերում են թե՛ բնության, մթնոլորտի, իրականության մեջ տեղի ունեցող փոփոխություններին ու իրավիճակներին, թե՛ մարդկանց ներքին ապրումներին ու արտաքին ընկալումներին:

Բայական միադիմի միակազմ նախադասությունների ուսումնասիրությունից եկել ենք մի շարք եզրահանումների, որոնք ներկայացնում ենք ստորև:

Միադիմի նախադասություններն արտահայտվում են կա՛մ դիմասահմանափակ (տվյալ դեպքում՝ միադիմի) բայերի խոնարհված ձևերով, կա՛մ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դեմքի բայաձևերով (կամ վերջիններիս մասնակցությամբ), որոնք տվյալ կիրառության մեջ ունեն միադիմի բայի գործառույթ:

Ե՛վ գուգորդվող, և՛ անկախ միադիմի նախադասությունները խոսքը

ոճավորելու միջոցներ են, ինչի մասին վկայում է այն փաստը, որ նշված կարգի կառույցներ ոչ բոլոր հեղինակներն են կիրառել, առավել ևս՝ ոչ բոլոր երկերում: Զուգորդվող և անկախ միակազմ նախադասությունները հաճախադեպ են մասնավորապես բժշկարաններում և «Դատաստանագրքում», որոնցում միակազմ այդ կառույցների միջոցով ձևակերպվում են տարբեր բնույթի կարգեր, կանոններ, հորդորներ, խորհուրդներ և այլն, որոնց կատարման համար որոշակի անձի կամ անձանց հիշատակելու անհրաժեշտություն ոչ միշտ է զգացվում: Երբեմն միևնույն բարդ կառույցի մեջ գործածվում են թե՛ զուգորդվող և թե՛ անկախ միադիմի նախադասություններ³¹⁴:

Միադիմի նախադասությունների կիրառությունն այնքան է սովորական, որ միևնույն բարդ կառույցում, նայած բովանդակությանը, կարող են գուգադրվել մեկից ավելի զուգորդվող միադիմի նախադասություններ՝ արտահայտված տարբեր կազմությամբ գերադաս անդամներով: Օրինակ՝ *Ու թէ հետ այնոր ուրդի*, որ գայ մեկայլն ի ծառայութենէ, *նա իրաւունք է՝* որ թէ ուզենայ եկածն՝ նա խափանեն գլետի պսակն եւ առաջի պսակն է ընդունած (ՍՄԴ): *Կու թուի ինձ*, որ հարկետր մարդոյ որդի ես եւ թագաւորի զարմէ ես. ի՞նչ պատեհ է, որ այդ ճմրի մարդդ հետ քեզ ի շուրջ գայ եւ զքո հարկետր անունդ աւերէ (ՎԱԱ):

Թեև միևնույն բնագրում կարող են հանդիպել միակազմ նախադասությունների զանազան տեսակներ, սակայն տարբեր բովանդակության երկերում հաճախադեպ է միակազմ նախադասության այս կամ այն տեսակը: Իջօխի «Գիրք ի վերայ բնութեան» երկում, որը բնագիտական բովանդակությամբ ստեղծագործություն է, առկա են բնությանը և օդերևութին վերաբերող միադիմի կառույցներ: Սմբատ Մպարապետի դատաստանագրքում՝ օրենք, կարգ, սովորություն սահմանող միադիմի նախա-

³¹⁴ Օրինակ՝ *Եթէ որպէս պատեհ է*, որ եպիսկոպոսունն իրաց հնազանդութին այնեն. *նա պարտ է գրել*՝ որ եպիսկոպոս որ արհիեպիսկոպոսի գաւառ կենայ *նա պատեհ է*, որ յարհիեպիսկոպոսին ի հնազանդութին կենան, որ զիր աշխարհավարութիւնն նոցա թըտարով այնեն (ՍՄԴ): *Կամ եղև ինձ որ յայս յարուեստս շատ դովի ցուցանենք* եւ գրենք զբժշկութեան չաքսն եւ ստուղոսաթն, ... *եւ [կամ եղև ինձ-Գ.Խ.] ճանաչել զերակն եւ զգոզն, որ է դարուրան*, եւ զձեռնալուան, եւ զպօհրան, զմահու եւ զկենաց նշաննին, ... *եւ շինել զխառնուած դեղերն*, որ է թարթիպնին (ԱՍՕԲ) և այլն:

դասությունները, իսկ քանի որ դրանք վերաբերում են անձերին, ապա առկա են նաև անորոշ- և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ: Բժշկարաններում (Ամիրդովլաթ Ամասիացի, Մխիթար Հերացի, Ասսար Մեբաստացի), որոնցում ներկայացվում են անձերին վերաբերող գործողություններ, անորոշ- և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ և այլն:

Ի տարբերություն *եւ, լինիլ* էական բայերի, որոնց միադիմի ձևերը միջին հայերենում միայնակ և բաղադրությունների կազմում հանդես են գալիս և՛ որպես անկախ, և՛ որպես զուգորդվող միադիմի նախադասությունների արտահայտության հիմնական միջոց՝ *կամ* էական բայն աչքի է ընկնում սահմանափակ կիրառությամբ. այն հանդես է գալիս միայն անկախ միակազմ նախադասության տեսակներից մեկում: Գտնում ենք, որ այս հանգամանքը պայմանավորված է *կամ* բայի բովանդակությամբ. նըրանով որևէ առարկայի առկայության կամ բացակայության գաղափարը արտահայտվում է առավել շոշափելիորեն³¹⁵:

Անձնանիշ առարկաներին բնորոշ գործողություն ցույց տվող միադիմի բայերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտված որոշ նախադասություններ բովանդակության պլանում համանիշ են անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններին. ցույց են տալիս անորոշ անձի կամ անձանց կատարած, կատարվող կամ կատարելի գործողություն: Այս կարգի միակազմ նախադասություններն ունեն արտահայտության սահմանափակ միջոց. դա ներկա վերլուծական ժամանակաձևի եզակի թվի 3-րդ դեմքն է, որը գործածվում է որպես միադիմի բայաձև: Անձնանիշ առարկաներին վերաբերող գործողություն ցույց տվող միադիմի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտվող մի-

³¹⁵ Այսպես՝ «Եւ չկայ հրամանք, որ ուտէ» (ՍՄԴ) կառույցի անդամների միջև ակնհայտ է ենթակա-ստորոգյալ հարաբերություն, և նրանք պահանջում են հատկացուցիչ երկրորդական նախադասություն, մինչդեռ, օրինակ, «Չէ իրաւունք, որ ...» կարգի նախադասությունների կառուցվածքում և բովանդակության պլանում նկատելի են էական փոփոխություններ. *չէ իրաւունք* շարահյուսական միավորների միջև առկա է ոչ թե ենթակա-ստորոգյալ, այլ ստորոգելի-հանգույց հարաբերություն, և ենթադրվում է ոչ թե հատկացուցիչ, այլ ենթակա երկրորդական նախադասություն: Լեզվական նույն իրողությունն առկա է նաև «Գայ իրաւունք, որ ...»// «Իրաւունք է, որ ...» կարգի դրական նախադասություններում:

ակազմ նախադասությունների մեկ այլ խումբ բովանդակության պլանում համանիշ է ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին. ցույց է տալիս ընդհանրապես բոլոր անձանց վերաբերող կատարված, կատարվող կամ կատարելի գործողություն: Այս կարգի միակազմ նախադասություններն առանձնանում են արտահայտության պլանի բազմազանությամբ՝ հանդես գալով մի շարք մասնակազմապարներով³¹⁶:

Գ. ԱՆՂԵՍ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշել ենք, ըստ գերադաս անդամի արտահայտության՝ բայական միակազմ նախադասությունները լինում են դիմավոր, միադիմի և անդեմ³¹⁷: Դրանցից վերջիններս գերազանցապես ցույց են տալիս կատարելի գործողության գաղափար: Օրինակ՝ Ով այս ցաւիս տէր է՝ պատրաստ կենայ ամէն հով եւ չոր ուտելվէ, եւ զլուխն կաթն կթել, եւ հով եւ գէճ դեղերով կակղացնել (ԱՍՕԲ): Է՞ր ասէ. երգել զհովերական քերթուածս (ԴԶ, 77): Նախ դատել զգիրս տառից, այսինքն քննել զթաւ և զլերկ, զերկարն և գտող (ԴԶ, 77):

Անդրադառնալով միջին հայերենի բայական անդեմ նախադասություններին՝ Պ. Վարդապետյանն իրավացիորեն նշում է, որ միջին հայերեն գրականության մեջ բայական անդեմ նախադասությունները շատ սակավ են, գրեթե չկան³¹⁸: «Մեզ միայն մի օրինակ է հանդիպել», - նշում է

³¹⁶ Միջին հայերենի միադիմի նախադասություններին վերաբերող այս և նախորդ պարբերության եզրահանգումները մեր աշխատանքի համապատասխան հատվածներում հիմնավորել ենք փաստական տվյալներով: Ըստ այդմ՝ անորոշ- և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններին շարահյուսորեն համանիշ միադիմի նախադասությունները այլ կերպ կարելի էր անվանել *անորոշ-միադիմի* և *ընդհանրական-միադիմի*, ինչը, սակայն, չենք արել, քանի որ միադիմի բայաձևերով կամ նրանց մասնակցությամբ արտահայտված միակազմ նախադասությունների դասակարգումը կատարել ենք այլ դիտանկյունից:

³¹⁷ Գ. Ջահուկյանը գտնում է, որ «... անորոշ դերբայով արտահայտված հրամայական և բացականչական («Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, ամենին մոռանալ»-ՎՏ) նախադասությունները պետք է համարել անվանական նախադասությունների մի տեսակ և քննել փոխակերպման մեջ (կրկնակի փոխակերպում՝ գոյականացում, և վերջինիս ստորոգական փոխակերպում՝ վերածում նախադասության)» (Գ. Ջահուկյան, 1974, 394):

³¹⁸ Պ. Վարդապետյան, 1975, 139:

նա՝ ասվածը պատճառաբանելով այն բանով, որ եթե այդ նախադասությունները գրաբարում գործածվում էին՝ գրքային ոճին հատուկ լինելու հանգամանքով պայմանավորված, ապա միջին հայերենում դրանք գրեթե բացակայում են, քանի որ «միջին հայերենին ավելի հարագատ է խոսակցական ոճը»³¹⁹: Հավելենք, որ բայական անդեմ միակազմ նախադասությունները հաճախադեպ չէին նաև գրաբարում. այնտեղ նրանք գերազանցապես հանդիպում էին թարգմանական գրականության մեջ, մինչդեռ հայ հեղինակների երկերում թեև սակավադեպ էին, սակայն ոճական առումով սահմանափակություն չունեին. նմանօրինակ նախադասություններ գործածում էին, օրինակ, և՛ Խորենացին, և՛ Բուզանդը:

Ի տարբերություն դիմավոր և միադիմի միակազմ նախադասությունների, որոնք միջինհայերենյան աղբյուրներում առանձնանում են արտահայտության և բովանդակության պլանների բազմազանությամբ՝ բայական անդեմ նախադասությունները հակառակ պատկերն են ներկայացնում. արտահայտվում են միայն՝ ա) անորոշ և բ) հարակատար դերբայներով՝ աչքի ընկնելով սահմանափակություններով ոչ միայն արտահայտության միջոցների, այլև կիրառության տեսանկյունից: Հատկանշական է, որ ասվածը վերաբերում է թե՛ միջին հայերեն և թե՛ գրաբար լեզվական աղբյուրներին: Օրինակ՝ *Յիշոցաւագ դնել յամենայն տեղիս՝ ի մեծ և ի փոքր, անողորմ տուգանով և խրատով* (ԿԲԽԹ, 283): Կենդանին բազում անուանս փաղեաց, որգոն այլևայլ անուամբ կենդանին նշանակել, որպէս հրեշտակ, մարդ, ձի, եգ, արծուի, ճնճղուկ (ԴԶ, 129): Դաւիթ երեց Ստամպոլու Տեղեալ Սուլու մանաստիրու. Դու նիբակ Ուռումելու, *Սահմանդին հերն անիծած* (ՄՂ): *Մաքրել այնու միտք և զհոգին, մաքուր պահել յաղտոյ զմարմին* (ՎՍ, 20):

Նախ անդրադառնանք այն անդեմ նախադասություններին, որոնցում գերադաս անդամն արտահայտվում է անորոշ դերբայով: Այսօրինակ նախադասություններ հանդիպում են թե՛ գրաբար և թե՛ միջին հայերեն աղբյուրներում: Օրինակ՝ Եւ այն, որ ասէ *հանդերձ այլով իսկիւ կամ երկանուանն որոշել*, քանզի անտ մի իսկ ասէ և աստ կրկին (ԴԶ, 125): իսկ դրուատն գով է, *որպէս ասել, ո՞ կարէ դրուատել զքեզ քանզի աննման ես* (ԴԶ, 160): *«Թքել,- ասաց,- ընդդէմ խաչին Եւ հաւանիլ Փեղամբարին»:*

³¹⁹ Նշվ. աշխ., 139-140:

Չհանդուրժեալ նահատակին՝ Թուք արձակեաց յերես պղծին (ՆՄ, 66):

Բայական անդեմ նախադասություններ մեր ուսումնասիրած աղբյուրներից առավել հաճախ հանդիպում են Դավիթ Ջեյթունցու՝ քերականության մեկնության մեջ, որը գերազանցապես շարադրված է գրաբար, և որում այդ կառույցներն արտահայտվում են և՛ որպես անկախ հաղորդակցական միավորներ՝ *Սյսպէս և զամենեսեան նախ քան զանունն գովասանութեամբ կամ պարսաւանօք ճանաչել սահմանաւ* (ԴԶ, 107), և՛ հանդես են գալիս երկկազմ նախադասությունների զուգորդությամբ՝ *Յորժամ ասել, թէ գո՞ խնդրես և պատասխանեալ թէ զՅիսուս կամ զԱստուած կամ զայլ ոք, որ ի դէպ իցէ* (ԴԶ, 118): Թէ հարցանէ ոք և ասէ *յումմէ՞ ուսար* դու զայդ ինչ կամ զայն ինչ, և նա պատասխանէ, թէ *յԱստուծոյ կամ ի մարդոյ, կամ ի հօրէ կամ ի քէն. և կամ թէ ասել է՞ր արարեր* զայս ինչ կամ զայն ինչ, նա պատասխանէ, թէ *ի քէն ուսայ* կամ *ի նմանէ* կամ *ի սմանէ* (ԴԶ, 118): Կենդանին բազում անուանս փաղեաց, *որզոն այլևայլ անուամբ կենդանին նշանակել*, որպէս հրեշտակ, մարդ, ձի, եգ, արծուի, ճնճղուկ (ԴԶ, 129):

Ի տարբերություն անորոշ դերբայով արտահայտվող անդեմ նախադասությունների, որոնք ժառանգվել էին գրաբարից՝ հարակատար դերբայով արտահայտված անդեմ միակազմ նախադասությունները միջին հայերենին բնորոշ հաղորդակցական միավորներ են: Օրինակ՝ *Դառը դատած, դատարկ մնացած* (ԴԼ, 235): *Եկած ճամբուդ դուռն անհծած* (ՄԴ):

Բացի վերը բերված առածական խոսքից (*Դառը դատած, դատարկ մնացած*)՝ հարակատար դերբայով արտահայտված անդեմ նախադասություններ մեզ հանդիպել են միայն *անհծել*-*անհծանել* բայով, որը ներգործական սեռի է, ինչը ենթադրում է, որ նշված կարգի նախադասությունների կազմում պարտադիր է նաև ուղիղ խնդիր անդամը, որն արտահայտվում է թե՛ գոյականով, թե՛ դերանունով և թե՛ փոխանունով, ինչպես՝ *Քեզ նման պիղծ հիւրն անհծած* (ՄԴ): Գնացաք ի ժամն, դուռ ոչ էր բաց, Յահէ զօրացն ամրափակած. Երեց անուն չար մ՛ էր դրած, *Ջինքն ու զհիր օրհնողն անհծած* (ՄԴ): Որպէս կանոն, քննվող կառույցներում ուղիղ խնդիրն ունի կայուն շարադասություն. նախորդում է *անհծած* գերադաս անդամին: Ինչպէս նկատելի է, բերված բոլոր նախադասությունները միևնույն հեղինակն է գործածել, ընդ որում՝ նույն բանաստեղծության մեջ՝ որպէս բոլոր քառատողերը եզրափակող միջոց՝ Հասաւ, *քո ուղուդ*

անիծած (ՄՂ): *Ղաթրրճուդ ալ փիրն անիծած* (ՄՂ) և այլն: Թերևս բացառություն է Մեծպարոնի գործածած «Հնցկուն կսկիծ բաներ ասաց, Թէ՛ *Ղուք ու ձեր հաւատն անիծած*» (ՄՊ) նախադասությունը, որը երկկազմ կառույց է, քանի որ «Ձեզ ու *ձեր հաւատն անիծած*»-ի փոխարեն ունի *ղուք* ուղիղ ձևը, ինչը տվյալ նախադասությանը հաղորդում է կրավորական սեռի քերականական իմաստ («*Ղուք ու ձեր հաւատն անիծված*»), և հենց դրանով էլ պայմանավորված է նրա երկկազմ լինելը:

Այս նույն ձևով կարելի էր մեկնաբանել նաև Մարտիրոս Ղրիմեցու գործածած նախադասությունների իմաստը, սակայն «*Ձինքն ու զհւր օրհնողն անիծած*» նախադասությունը վկայում է նրա գործածած այսօրինակ կառույցների ներգործական, հետևաբար նաև միակազմ լինելու մասին:

Հարակատար դերբայով արտահայտված անդեմ միակազմ նախադասությունները շարահյուսորեն համանիշ են այն անվանական միակազմ նախադասություններին, որոնց գերադաս անդամն արտահայտված է բայանունով: Ավելին՝ կան բայական և անվանական միակազմ նախադասություններ, որոնցում գերադաս անդամի գործառույթով հանդես են եկել մինևնույն իմաստն արտահայտող «անէծ» արմատով կազմված, համապատասխանաբար, հարակատարը (*անիծած*) և փոխադասված գոյականը (*նալլաթ*): Հմմտ. *Քո երեսին ջուրն անիծած* (ՄՂ) և Խօսքն ու զրոյցն է բուն դալատ, Իւր երեսին հազար նալլաթ (ՄՂ):

Հարակատար դերբայով արտահայտված անդեմ նախադասությունների՝ միջին հայերենի խոսակցական մակարդակին բնորոշ լինելու մասին վկայում է այն, որ դրանք մեզ են հասել նաև երգիծական-քննադատական բովանդակությամբ բանաստեղծության միջոցով³²⁰:

³²⁰ Միջին հայերենից այսօրինակ որոշ կառույցներ ավանդվել են ժամանակակից հայերենին (*Թքա ծ: Հէ ըն անիծած*), որոնք նկատել է Վ. Առաքելյանը, ապա՝ Ս. Գյուլբուդաղյանը (Վ. Առաքելյան, 1964, 251: Ս. Գյուլբուդաղյան, 1967, 142): Օրինակ՝ Նույնն է պարում կյա նքը, Նույնն է պարում մի տքը: Այս ի՛նչ խենթություն է: - *Հէ ըն անիծած* (ՊՍ2, 103): - Բայց կամաց, մի բորբոքվիր, թքած մեքենայի վրա, մեզ ոչինչ պետք չէ (ՎՊ):

ԳԼՈՒԽ 2
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անվանական միակազմ նախադասությունների միջոցով հաստատվում է որևէ առարկայի, իրողության կամ երևույթի առկայությունը կամ բացակայությունը և կամ էլ արտահայտվում է գնահատողական վերաբերմունք՝ պայմանավորված այս կամ այն հանգամանքով: Օրինակ՝ Եւ եկեալ տեսաք զաշխարհս մեր աւերակ, թափուր և դատարկ յամենայն ընչից և պակասեալ ի հոգևոր առաքինութեանց՝ *ոչ ժամ և ոչ պատարագ* (ԹՄԼԹ, 47): Սկսաւ ուտել եւ ասէ. *վա՛յ ինձ*, զի ահագին է գրգըտելոյս. զի աղաղակս է՝ ի գլուխս եւ յատամունս իմ (ՎԱԱ): *Փառք Արարչին ամենայնի՛ չոր եւ Որդոյն իւր Միածնի, Հոգոյն շնորհաց պարգևողին, Յանցեալն, յայժնուս ւ յայագային* (ԱՌԲ): Ես աս գիշեր դուրս էլայ, *Մութ գիշեր*, չկար լուսնկայ (Հ, 721): Աւա՛ղ ու *հազար բերան*, Տէր չունիս, որ զքեզ աժէ (Հ, 262): *Այսքան առ այս* (ԹՄԼԹ, 16): Քանի դուն ինձի էիր՝ *Նայ կանանչ ու ցօղն ի վերայ* (Հ, 370) և այլն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ՝

Ա. միջին հայերենում անվանական միակազմ նախադասությունների զգալի մասի գերադաս անդամն արտահայտվում է գոյականներով, որոնց շարքում առկա են նաև բայանուններ, ինչպես՝ *ալէլուիա, բարև, գոհութիւն, խաղաղութիւն, կանանչ, հաւատ, դաշտայայ, յոյս, պատիւ, սէր, սողախ, փառք, օրհնութիւն* և այլն: Օրինակ՝ Քրիստոս՝ս, Տէր իմ արքայ, *Գոհութիւն* քեզ միշտ յարակայ (Հ, 517): Գայլ մի ետես ՚ի ստորոտ լերինն գեհ մի ոչխարաց. եւ ասաց. *խաղաղութիւն* ընդ ձեզ (ՎԱԱ): *Բարև* քեզ հարիւր հազար ՚Ի ըռէհան և մուշկի ամպէր (Հ, 61): *Օրհնութիւն* հօրն անեղի Եւ էակից նորին բանի Եւ սուրբ հոգոյն քո փառակցի Յայժմ եւ յաւէտ յամենայնի (ՄՂ): *Փա՛ռք* քեզ, փրկիչ աշխարհաց, Եւ հոգւոյդ ընդ հօր յարակայ, *Պատիւ* այժմ և յաւիտեան, *Օրհնութիւն և ալէլուիա* (ՆՄ, 61): Ի վերայ այսորիկ *արհնութիւն և գոհութիւն, պատիւ և փառք* անճառ սիրոյն և գթութեանցն Քրիստոսի աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտէնից (ԿԲԽԹ):

Միջին հայերենը հայտնի է փոխառությունների աննախադեպ ծավալներով: Փոխառությունների դիմում էին նույնիսկ այն դեպքում, երբ փոխառու լեզուն ուներ դրանց համարժեք բառային միավորները, ինչը

պատճառ էր դառնում մի շարք հոմանիշ գույգերի առաջացման: Ասվածն իր արտահայտությունն է գտել անվանական միակազմ նախադասությունների գերադաս անդամի արտահայտության պլանում. այդ նախադասությունները թե՛ կազմությամբ են նույնը և թե՛ բովանդակությամբ, սակայն գերադաս անդամի գործառույթով զուգահեռաբար հանդես են գալիս միևնույն բառի, մի դեպքում՝ բնիկ, մյուս դեպքում՝ փոխառյալ տարբերակները: Դրանցից են՝ *ափսո՛ւ//հայի՛ ֆ*, *ահա//հանսայ*³²¹ և այլն: Հմմտ. *Ափսո՛ւ*, որ խրդճուկ մեռայ, Չի հասայ սըրտիս մուրատին (Հ, 595) և *Հայի՛ ֆ*, որ խրդճուկ մեռայ, Չի հասայ սըրտիս մուրատին (Հ, 594): *Սհա խաղաղություն*, որ չար է քան զխոտվութիւն (ՎԱԱ)³²² և Հեռի՛ քէֆինն ի քէնէ, *Հանսա ծոցս*, արե՛կ, մուտ ի ներս (Հ, 368) և այլն:

Նկատենք, որ փոխառյալ տարբերակներ գերազանցապես հանդիպում են հայրեններում, ինչը բնական է և անմիջականորեն առնչվում է հայրենների զգալի մասի ժողովրդական ծագմանը:

Գոյականով հանդես եկող գերադաս անդամը գերազանցապես արտահայտվում է ուղղական հոլովի անորոշ առմամբ, թեև միջին հայերենում ուղղականի առկայացումը ոչ միշտ էր կատարվում հոդերի միջոցով (առանց քերականական ցուցիչի՝ ուղղականով արտահայտվում էր և՛ որոշյալության, և՛ անորոշության քերականական իմաստ)՝ *Հաւատ, յոյս և սէր*. և այս երեքեան առաքինութեամբ լինի մարդ սիրեցող աստուծոյ (ՅԵԹ, 313): Հազվադեպ են այն նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտվում է ուղղականի որոշյալ առմամբ, ինչպես՝ Ես գիշերս ի դուրս եկայ, *Մանտր ու մեծ թաթաւն ի վերայ* (Հ, 174): Թերևս բացառություն է «Այսչափ *ցոյց օրինակի* յաղագս հասարակ շաղաշարացոյ» (ԴԶ, 92) նախադասությունը, որի գերադաս անդամը Դավիթ Զեյթունցին արտահայտել է վերլուծական բարդությամբ՝ ուղղական հոլովով և սեռական

³²¹ ՄՀԲ-ում վկայված է բառիս *հանսը* («ահա», «ահավասիկ») տարբերակը, իսկ հայրեններից մեկում *հանց*, որը, ինչ խոսք, տարբերություն հետևանք է՝ (Հեռի՛ քէֆինն ի քէնէ, *Հանց* ծոցս, արե՛կ, մուտ ի ներս (Հ, 328):

³²² Այգեկցին *ահա//ահայ* վերաբերականն ավելի հաճախ (շուրջ 70 անգամ) գործածում է երկկազմ նախադասություններում ինչպես՝ Ես նայ ասէ. ես տկար եմ. *զի ահա կան ՚ի հիմունս իմ կենդանիք*, որ ծակոտեալ պատառեն զիս (ՎԱԱ): Ասէ թագաւորն. մի տրտմիր, ո՛վ իմաստուն. *ահա զամենայն բարիք քաղաքին քո քեզ տաց*. զի մինչ յայս վայելեցեր, այլ ոչ կարես վայելել (ՎԱԱ) և այլն:

նով հավելադրությամբ, ինչը, անկասկած, գրաբարաբանություն է:

Բարդ կառույցում գոյական գերադաս անդամները երբեմն կազմում են համագոր նախադասություններ, ինչպես՝ Արարչին մերոյ *գոհութիւն եւ փառք*, Որ զքեզ տեսաք եւ ուրախացաք (ՂԹ): *Վայ եւ եղուկ* միաբերան, Որ այս չարիս հանդիպեցան (ՄԹ): *.... եւ քեզ Հայր սուրբ, հայր մեծութեան, Որդւովդ միածնիւ և ամենասուրբ Հոգւովդ, փառք յերկնաւորաց և յերկրաւորաց և մշտնջենաւոր գոհութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից*, ամէն (ՅՎԲՎ, 28): Եւ քեզ *փառք եւ երկրպագութիւն*, անբաժանելի սուրբ Երրորդութիւն, յաւիտեանս յաւիտենից. Ամէն (ՆՇՀԽ, 15):

Գոյական գերադաս անդամները կարող են հանդես գալ թե՛ առանձին, թե՛ լրացման կամ լրացումների հետ՝ կապակցվելով ուժեղ կամ թույլ կառավարման, կամ էլ առողրության եղանակով՝ կախված այն բանից՝ գերադաս անդամը բայանուն է, թե ոչ:

ա) Եթե գերադաս անդամը բայանուն չէ, ապա նա կարող է պահանջել թույլ կառավարմամբ կամ առողրությամբ կապակցվող լրացում կամ հանդես գալ առանձին: Օրինակ՝ Ես ալ ի դէմիկն ելայ, *Նեղ սողմախ ու խիստ խալապայ* (Հ, 131): Սէֆիլ ի մեջէն փրթաւ, Նայ ելաւ էլ կանչեց՝ «*Շապա շ*».... (Հ, 118):

բ) Եթե գերադաս անդամը բայանուն է, ապա այն սովորաբար ենթադրում և պահանջում է ուժեղ կառավարման եղանակով կապակցված խնդիր, բայց գուցահեռաբար կարող է ստանալ նաև առողրության եղանակով լրացում: Օրինակ՝ *Փառք փրկչին ամենայնի, Ընդ Հօր իւրում համագուգի Եւ Սուրբ Հոգւոյն իւր էակցի*, Այժմ եւ յաւէտ միշտ եղիցի (ԱԽ): Կաքուով մի ես երէկ տեսայ, *Շատ երնեկ զհւր տէրն*, որ ունի (Հ, 292): Տեսուն *փրկչին* մերոյ *Յիսուսի* միշտ *արհնութիւն անլըռելի* (ՄԹ, 136):

Գոյական, դերանուն կամ ածական գերադաս անդամով անվանական միակզում նախադասությունները լավագույն միջոց են որևէ իրողություն, երևույթ կամ հատկանիշ առանց ստորոգումի արտահայտելու: Այդ նախադասություններով ոչ միայն կատարվում է արտահայտվելիք խոսքի համառոտում, այլև ապահովվում է ասվածի սպալորչությունը: Օրինակ՝ Ես ալ ի դէմիկն ելայ, *Նեղ սողմախ ու խիստ դալապայ* (Հ, 174): *Այսքան արայս* (ԹՄԼԹ, 32): *Եւ ահա արծիւ մի՝ ի վերուստ յանկարծակի* եւ առեալ վերացաւ զնայ յալթն (ՎԱԱ): *Այս քեզ յաղագս շաղկապիդ պարզ մեկնութիւն* (ԴԶ, 170): *Ո՛հ անմտութեանդ* (ՎԱԳՀ, 260) և այլն:

Անվանական նախադասությունների միջոցով խոսողը, խոսակիցը կամ այլ անձ արտահայտում է՝

1. բնության տեսարան, դրություն, իրավիճակ, ինչպես՝ Գիշերս ես ի դուրս ելայ, *Ղարայկոզ ու բարկ լուսունկայ* (Հ, 249): Գիշերս ես ի դուրս ելայ, *Մութ գիշեր*, չըկայ լուսունկայ (Հ, 249): *Ցամաք ջրհոր* եւ *չոր աղբիւր*, Կամ *աղտատուկ ջուր դառնահամ* (ՄՂ): *Օտաղ պաղճային վըրայ*³²³, *Պաղ աղբիւր, օսկի լուկայ* (Հ, 678): Յանկարժ ի քընուս ելա, *Լուսինկա* ու խիստ կու ցոլա (Հ, 227): Եւ թէ ասէն կէս մի օժտէ, Ձեռվին տըթտէ կանգնի մէյդան. Աստուած փրկէ, տէրն ազատէ, *Ճէնկ ու կռիւ մէտէթ աման* (ՄՂ),

2. օրհնանք, մաղթանք, գովաբանություն, զանազան ցանկություններ, ինչպես՝ Եւ յամենայն փորձանաց պահէ զինքն Քրիստոս Աստուած մեր. *ամէն* (ՎԱԱ): *Եւ փառք արարչին եւ անմահին աստուծոյ*, որ է օրհնեալ անգրաւ յախտեանս. *ամէն* (ԱՍՕԲ): Սկսաւ գովել զագոսան եւ ասել, թէ *փառք Աստուծոյ կենդանոյ*, ուստի զայ պայծառ արեգակն այս (ՎԱԱ): – *էրնէկն յարևուտ վերայ*, Դուն ի մեր դուռն չե՛ս եկեր (Հ, 251): *Այդ քոյ ստեղծողիդ համար*, Երբ քայլես՝ զունքըդ մի՛ շարժեր (Հ, 230)³²⁴: – *Թագւո՛ր, քո գալդ ի բարին, Քայլափոխդ իմ զլիտյս վերայ* (Հ, 578): *Եւ դու խոճայ Ալլահվերտի, Աստուածատուր Խօտավերտի, Աջն աստուծոյ քեզ հովանի* (ԱԽ) և այլն:

Այս ենթախմբում հաճախակի գործածությամբ աչքի են ընկնում այն նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտված է՝

ա) *համար* կապով ձևավորված կապակցություններով, որոնք կայուն (անմասնատունակ) կառույցներ են, ինչպես՝ Եւ ասաց դեւն. *Աստուծոյ համար եւ Աստուծոյ սիրոյն համար* գնայ ՚ի դուռն արգելէ մէկ պահ մի (ՎԱԱ): *Աստուծոյ համար* զիս ազատէ (ՎԱԱ): *Խօշ եար, արևուդ համար*, Որբուկ եմ, *զիս մի՛ լացներ* (Հ, 346),

բ) *փառք* գոյականով, ինչպես՝ Եւ երթայ ցնծութեամբ եւ ուրախութեամբ առ Քրիստոս յուսով, ապաշարութեամբն եւ արտասուաւք եւ *Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն* (ՎԱԱ): Եւ ասէ. *փառք Աստուծոյ*, կամ յիմաստուն մարդ ես դուն կամ Սուրբ Հոգին ՚ի քեզ բնակեալ է (ՎԱԱ): *Փառք*

³²³ Ս. Գյուլբուդայանի կարծիքով՝ պարագա լրացման առկայության դեպքում տվյալ նախադասությունը կազմությամբ թերի է (գեղջված է ստորոգյալը):

³²⁴ Հմմտ. *Այդ քո ստեղծողիդ համար*, Երբ քայլես՝ զունքըդ մի՛ շարժեր (Հ, 346):

փրկչին ամենայնի, Ընդ Հօր իւրում համագուգի Եւ Սուրբ Հոգւոյն իւր Էակ-
ցի (ԱԽ): Փառք Աստուծոյ միշտ կենդանոյն, Որ հանց շնորհք Նա մեզ կու
տայ (Հ, 895, Ֆրիկ):

3. Անեծքներ, ինչպէս՝ *Նալա՛ թ ան սիրուն վրայ*. Այս գիշեր կեսըս
հալեցաւ (Հ, 190): *Դանակ ու շանփուր ա՛ն հաւին, Բարկ կըրակ*, որ զինքն
խորվէր (Հ, 548): Ցուցանէ առակս, թէ ամենայն ծնող, որ ոչ խրատէ գորդին
իւր մնալ ՚ի կամս Աստուծոյ, *նայ մեղք որդւոցն ՚ի գլուխս ծնողացն յաւուր
դատաստանի* (ՎԱԱ): Եւ ասէ ուղտն. *արհին քո ի գլուխ քո*. մի խորհել
գմահու գործդ գայդ (ՎԱԱ): Եւ ասէ արծին. *արհին ձեր ՚ի գլուխ ձեր*. զի ես
տամ, գոր հայցեք (ՎԱԱ): *Սոխի՛ րս աչերուդ վերայ*, Դու սիրու մարդն թէ
գիտես (Հ, 293) և այլն:

4. Երդումներ՝ *Արունս ձեզի հէլայ*, Ես ի ալ ձեր դօրը չիմ ի գար (Հ,
678): Սրտիս մի՛ դպչիր՝ *աղբօրդ արեւուն*, Թէ չէ կու մեռնիմ ի քո շատ սի-
րուն (ՂՍ): Բարակ նայելուդ այլ չեմ դիմանար, Սիրտս կու ձեղքեմ, *ա-
րունս քեզ հալալ* (ՂՍ): Ինձ ճարակմ արա քո խաս արեւուդ, Թէ չէ
կու մեռնիմ, կրակ է հոգուդ (ՂՍ): Կամ կերթամ կընկնիմ ես ի ծովն ի վար,
Ինձ ճարակ մարա քո հոգուդ համար (ՂՍ): – *Խօսկունքդ ի գլխուս վրայ*,
Զգիտիմ դուրը խարիպիտ (Հ, 645): – *Բարևո ի գլխուս վրայ*, Չի գիտեմ
դուրը խարիպիտ (Հ, 646)³²⁵: – Աղջի՛կ, *աղբօրս արևուն*, Նօշըպէն պտիկ
մի ջուր տուր (Հ, 648): – Չատ այլ ի ծոցս եմ պահեր, *Քո արևն՝* այլ մարդ չէ
տեսեր (Հ, 258)³²⁶: – Քա՛լ³²⁷, *քո Աստուած սիրուն*, *Քո մէկիկ աղբօրն
արևուն* (Հ, 286):

Միանգամայն ճշմարտացի է Ս. Գյուլբուղայանը՝ կարծելով, որ
ժամանակակից հայերենի այս կարգի կառույցները «գուցե կդիտվեն իբրև
զեղչված ստորոգյալով նախադասություններ, բայց դրանք այնքան
շատ են կրկնված ու տարածված, որ դարձել են քարացած ձևեր, և դրանք
օգտագործողի մտքով չի անցնում որևէ այլ բան, քան այդ կապակցույթ-
յունների արտահայտած իմաստն է»³²⁸: Շարահյուսական միևնույն իրո-
դությունն առկա է նաև միջին հայերենում, որում բազմաթիվ անեծքներ,

³²⁵ Հմմտ. – *Բարևրդ գլխուս վրայ*, Չի գիտեմ աղբօրդ տունը (Հ, 738):

³²⁶ Հմմտ. նույնի երկկազմ նախադասությամբ տարբերակը՝ Մանկտի՛ք, *ձեր
արևն ասեմ*, Գեմ չառի ես իրմէն ճորով (Հ, 289):

³²⁷ Փոխառություն է վրացերենից:

³²⁸ Ս. Գյուլբուղայան, 1967, 181:

օրհնանքներ, մաղթանքներ (և այլն) գործածվում են առանց ստորոգյալի [ինչպես՝ Գետինն երկնուցն ասաց.- *Սստուծոյ մուննաթն աւելի*։ Ջուրն ի յանդնդոցն հանեմ, Որ ծաղկունքս ամէն զարդարի (ՆՄ, 10)], և եթե անհրաժեշտություն լինի վերականգնելու նշված գեղչված անդամը, ապա հարց կառաջանա, թե ո՞ր բայով պիտի վերականգնել այն։ Բանն այն է՝ այդ նախադասությունների իմաստն այնքան է հանրայնացված և այնքան հասկանալի, որ, ասենք, «*Մեղք որդւոցն ՚ի զլուխս ծնողացն յաւուր դատաստանի*» (ՎԱԱ) նախադասության մեջ որպես գեղչված ստորոգյալ կարելի է վերականգնել ոչ թե մեկ, այլ մի քանի բայ, որոնցից են՝ *լինի, գայ, մնա, թափի* և այլն՝ *Մեղք որդւոցն ՚ի զլուխս ծնողացն (լինի//գայ//մնա//թափի) յաւուր դատաստանի*։ Մինչդեռ գեղչված անդամի վերականգնումը պետք է ունենա ոչ թե կամայական, տարբերակային, այլ միարժեք լուծում, ինչն այս կարգի նախադասություններում դժվար է, քանի որ դրանք շատ հին են և այդպիսին են դարձել բնականոն «մաշվածության» ճանապարհով։ Այս դեպքում էլ կծագեն այլ հարցեր, որոնցից են՝ ա) իսկ անհրաժեշտություն կա՞ վերականգնելու նմանատիպ նախադասությունների բացակա անդամը, բ) ի՞նչ նպատակով վերականգնել այն. գուցե ապացուցելու, որ նրանք առաջացել են երկկազմ նախադասությունների՞ց, և այլն։ Բայց չէ՞ որ անհրաժեշտության դեպքում գրեթե բոլոր անվանական միակազմ նախադասությունների գեղչման հետևանքով այլևս չգործածվող այդ անդամները կարելի է վերականգնել և ստանալ երկկազմ նախադասություններ։

Ի դեպ, քանի որ տվյալ պարագայում խոսքը գեղչված ստորոգյալների մասին է, իսկ խնդրո առարկա նախադասությունները կազմությամբ պարզ են, ապա պետք է նշել, որ պարզ նախադասության ստորոգյալի գեղչման դեպքեր սովորաբար չեն դիտարկվում. ստորոգյալները լրիվ կամ մասնակի գեղչում են բարդ նախադասությունների կազմում։ Հետևաբար հիմնավոր չէ, օրինակ, Եւ նա առլցեալ կերակրովն՝ *ձայն քո ՚ի քեզ*, ասէ, ... ո՞վ ագռաւ (ՎԱԱ) կառույցի *ձայն քո ՚ի քեզ* նախադասությունը համարել երկկազմ կառույց, թեև այն ըստ էության արտահայտում է «*ձայն քո ՚ի քեզ լինի*» կամ «*ձայն քո ՚ի քեզ մնա*» իմաստ։ Այսպես նաև՝ «*Դանակ ու շանփուր ա՛ն հաւին, Բարկ կըրակ*, որ զինքն խորվէր» (Հ, 548) կառույցի ընդգծված միակազմ նախադասությունները, որոնց բովանդակության պլանում նույնպես կարելի է ստորոգյալ ենթադրել։ Բանն այն է՝ եթե հար-

ցին մոտենանք զեղչված անդամներ վերականգնելու հնարավորությամբ, ապա այդ դեպքում «*Աւա՛ղ զայն*, որ շատ կու դատեր» (Հ, 409) կառույցի ընդգծված նախադասությունը նույնպես կարելի է երկկազմ համարել՝ պատճառաբանելով, որ այլ հայրեններում հանդիպում են նրա՝ *ասեմ* ստորոգյալով երկկազմ տարբերակները [*Աւա՛ղ, զօրերըդ ասեմ*, Որ մեռնիս դու ի յայս այգիս (Հ, 958)], որը, կարծում ենք, ճիշտ մոտեցում չէ:

Բ. Միջին հայերենում անվանական միակազմ նախադասությունների գերադաս անդամը, գոյականներից բացի, կարող է արտահայտվել ածականներով և դերանուններով նույնպես: Օրինակ՝ Եւ նայ ասէ. այոյ. գնայ՝ *կարի քաջ*. Բեր, որ տեսանես եւ դնես ազգի ազգի մլիհամ եւ սպեղանես գնայ (ՎԱԱ): Եւ ասէ հաքիմն. *խիստ քաջ*. գնա՛ Բեր դեկան մի, որ տամ սեւ մլիհամի եւ սպիտակ, որ ողջանայ (ՎԱԱ): Եւ նաասէ, *կարի քաջ*, ո՛վ ագռաւ, բայց ՚ի մտաց պակաս ես (ՎԱԱ): *Այսքան* առ այս (ՅՈՂ, 376)³²⁹:

Հիշյալ դերով մեզ հանդիպել են *այսքան*, *քաջ*, *հերիք* բառերը, ինչը նշանակում է, որ գոնե գրավոր աղբյուրներում ածականով և դերանունով արտահայտված գերադաս անդամով անվանական միակազմ նախադասությունները հազվադեպ են:

Կան նախադասություններ, որոնք անվանական միակազմ պիտի համարել պայմանականորեն: Խոսքը չափածո ստեղծագործություններում երբեմն գործածվող այնպիսի կառույցների մասին է, որոնց որոշ բաղադրիչ անդամներ, նկատի ունենալով բանաստեղծական տողաչափի կարգավորման անհրաժեշտությունը, ենթարկվում են այս կամ այն փոփոխության: Եթե տվյալ անդամն արտահայտված է մի բառով, ապա ենթարկվում է հնչյունական կազմի փոփոխության, իսկ եթե բաղադրյալ կազմություն ունի՝ կառուցվածքային փոփոխության: Դրանցով նպատակ է հետապնդվում բանաստեղծական տողի վանկերի քանակի կարգաբերման: Միջին հայերենում ստեղծագործական այս հնարքը չափազանց տարածված էր և, ինչպես վկայում են փաստերը, որևէ սահմանափակություն

³²⁹ Մեր դիտարկած անվանական միակազմ նախադասություններից մեկում որպես գերադաս անդամ գործածվել է *հազար* թվականը, որը, սակայն, ոչ թե պահպանել է բուն իմաստը, այլ ձեռք է բերել մակբայական նշանակություն («շատ»): Հետևաբար հաշվի առնելով նաև այդ իրողության բացառիկ լինելու հանգամանքը [Հազար թե հանց շընորիք ունիս, Քեզ մէկ Սուրբ Գիրք այլ պիտենայ (Հ, 895)]՝ դրան բուն շարադրանքում առանձին ենթակետով չենք անդրադարձել:

չուներ: Ելնելով տողաչափը կարգավորելու կամ խոսքը ոճավորելու անհրաժեշտությունից՝ կարելի էր միևնույն միաբառ անդամը կամ նախադասության՝ շարահյուսական մեկ միավորի արժեք ունեցող բաղադրյալ անդամը մի դեպքում գործածել առանց փոփոխության, մյուս դեպքում՝ փոփոխված³³⁰: Այսպես՝ հայրեններում հաճախակի գործածվող *հերիք* («բավական») բառը մի շարք կառույցներում է հանգույցի հետ գործածվում է երկկազմ նախադասության ստորոգելիի գործառույթով³³¹, ինչպես՝ Այսօր ընդ իս մի խօսիք, Խոց ունիմ, որ ինձ *հերիք է* (Հ, 63): Եղբա՛րք, ա՛մ, մըտիկ արեք, Օրինակ այս մեզ *հերիք է* (Հ, 955) և այլն: Մինչդեռ *հերիք* բառի հետևյալ կիրառությունը (ընդգծվում է), որում այն հանդես է գալիս առանց է-ի, կարելի է համարել անվանական միակազմ նախադասություն՝ Պիւլպիւ՛լ, *հերիք*. տո՛ւն դարձիք, Թոռմեր է մորճիկդ ի սիրուդ (Հ, 740):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում անական գերադաս անդամները կարող են հանդես գալ թե՛ առանձին (*հերիք*), թե՛ լրացման հետ՝ վերջինիս կապակցվելով առդրության եղանակով, ինչպես՝ *խիստ քաջ, կարի քաջ, ևս ողորմելի* և այլն՝ Եւ որք գիտենն և յիջեն՝ *ևս ողորմելի* (հմմտ. արդի հայերենի *ավելի վատ-Գ.Խ.*), զի կարատին ծնաւդաց և ազգայնոց (ԿԲԽԹ, 280):

Գ. Միջին հայերենում անվանական միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է նաև այն ձայնարկություններով, որոնք, քանի որ բայանուններ են, ենթադրում և պահանջում են ստո-

³³⁰ Միջնադարյան գրականությանը և հատկապես չափածո ստեղծագործություններին բնորոշ ստեղծագործական այս հնարքը վարպետորեն կիրառել է Հովհաննես Թումանյանը իր մի շարք ստեղծագործություններում, մասնավորապես՝ «Սասուցի Դավիթ» պոեմում (ՀԹ4), որում, միջին հայերենին հատուկ մի շարք լեզվական իրողություններից բացի, գործածում է նաև *քառասուն* թվականը և կախված տվյալ բանատողի վանկերի քանակից՝ մի դեպքում գործածում է հենց *քառասուն*, մյուս դեպքում՝ *քառասուն* տարբերակը: Հմմտ. Առյուծ Մըհերը, զարմով դյուցազուն, *Քառասուն* տարի իշխում էր Սասուն: Վըրեն քաջեց *քառասուն* կաշի Ու *քառասուն* ջաղացի քար: *Քառասուն* կոյս աղջիկ բերեք արմաղան, *Քառասուն* կարճ կրնիկ, որ երկանք աղան և այլն:

³³¹ Միջինհայերենյան աղբյուրներում է հանգույցին համարժեք գործածվում է նաև *զալ* բայի համապատասխան դիմավոր ձևը՝ *կու զալ*, ինչպես՝ Հարցունք ես իրման ելայ, Թէ՛ «*Կու զալ*» (=է-Գ.Խ.) տեղտ քեզ հերիք», Դարձաւ ու ջուղայ էրէտ, Թէ՛ «Հերիք (է-Գ.Խ.) ու կէսն աւելիք» (Հ, 508):

բաղաս անդամ: Դրանցից են՝ *աւա՛ղ//աւա՛խ, եղո՛ւկ, երնե՛կ, վա՛յ, փո՛ւ* և այլն: Օրինակ՝ Իմ եարն ինձի հիւր եկեր, *Զիս երնե՛կ ու երնե՛կ էլի* (Հ, 214): *Աւա՛ղ կենաց դարիպ մարդուն*, Որ նախատի յամենեցուն (ԱՌԲ): *Աւա՛ղ գայն*, որ շատ դատել, Մարդ չկայ, որ զելմըն ճանչէ (Հ, 388): *Վա՛յ եւ եղո՛ւկ ժամանակիս*, Որ լըսեցաք զձայն քո, Ստըմպոլ (ԱՌԲ): *Վա՛յ գտնողին, չի տուողին, Վա՛յ անոր կորսնցնողին...* (Հ, 757): *Հագար աւաղ իմ խելացս*, Որ հետ քոպիսուն դատեցայ (Հ, 480): Ասաց, թե՛՝ *Վա՛յ դարիպութեանս*, Այս այլ ի յո՞ւր կայր ինձ պահած (ՄՊ): *Երնեկ այն պահուն*, որ տեսանեմ զքեզ (ԳԱՂ, 183) և այլն:

Խոսքի հուզականությունը կարևորելու համար երբեմն կրկնվում է միևնույն ձայնարկությունը, կամ գործածվում է երկու, անգամ երեք ձայնարկություն: Օրինակ՝ *Ա՛խ, ո՛ւ, վա՛յ* զիս մեղաք տառապեալ ոգիս՝ անարժան եւ անպիտան գրչի սուտանուն Կարապետիս (ԺԵ, 224): Ծնի ու որդիք բերէ, *Ա՛յ, վա՛յ*, թէ ինչ խոր կու խօսի (Հ, 520): *Ա՛խ, ո՛հ* գայս դառն տարիս, ցորեանն ի Կ. (60) թկ. (թանկա) ու չկա (ԺԵ, 3, 183): *Եղո՛ւկ, եղո՛ւկ եւ ինձ հագար վա՛յ*, անձն իմ (ՄԹ): *Վայ եւ եղուկ* մեզ՝ ի հօրեդ որբացաք (ՄՏ, 419): *Ո՛հ, ո՛հ* դառն ժամանակիս, զի յամենայն կողմանց աւերք եղև և մահտարածամ (ՀՅ, 1384) և այլն:

Վերոնշյալ նպատակով երբեմն կազմվում են համադասական կառույցներ՝ արտահայտված միևնույն կամ տարբեր գերադաս անդամներով՝ *Ո՛հ դառնութեան, աւա՛ղ կորըստեան, վա՛յ վըշտիս, եղու՛կ վտանկիս* (ՎՎԲԳ, 386-387): *Վա՛յ ինձ, վա՛յ ինձ և դարձեալ վա՛յ ըստ Յովելայ* (ՎՎԲԳ, 387): *Աւաղ երկայնութեան ճանապարհին, մեծագոյն ծովագնացութեան, յոլով տքնութեան* (ՎՎԲԳ, 384): *Եղու՛կ թշուառականիս և պատմութեանս, եղբարք* (ՅՎՀՊ, 75):

Բնիկ բառերից բացի՝ միջին հայերենում հաճախադեպ են փոխառյալ գերադաս անդամներով արտահայտված անվանական միակազմ նախադասությունները, որոնցից են՝ *ամանաթ, զինահար//զէնեհար, հայի՛ ֆ, մատաթ//մադա՛թ, նալաթ//նալլաթ// նալէ՛թ, շալլա* և այլն, որոնց մեջ կան թե՛ գոյականներ, թե՛ ձայնարկություններ: Օրինակ՝ *Հայի՛ ֆ* իմ կենճ արեվուս, Որ շուտով էլայ յաշխարհէս (Հ, 595): *Մադա՛թ*, դեղ արեք փութով, Չէ կորի՛ մարմինս հոգով (Հ, 527): Փերթիկ մի կաշի՛ է, *Շալլա*, թէ դուս բերես (Հ, 625): *Նալաթն* յաչերուդ վերայ, Զիմ թարկիկն է՞ր տուիք շուտով (Հ, 117): *Հագար զինահար*, լուսի՛ն, Պահ մի կաց՝ չուր յետ լուսանայ (Հ, 120): Ոնց

որ քունըն զիս տանի՝ *Ամանաթ*, որ այլ չի խօսիս (Հ, 46): *Նալէ՛թ այն սիրուն վերս*։ Այս գիշեր կէսըս հալեցաւ (Հ, 76): *Խօշ եար, քեզ լալով սէլամ*, Ես ի քո քաղքէն կու գրնամ (Հ, 90) և այլն:

Չայնարկությամբ արտահայտված գերադաս անդամներին բնորոշ է խնդրատական արժույթը, նրանք խնդրատուությամբ միարժույթ են և սովորաբար ուժեղ կառավարմամբ պահանջում են մի բնության խնդիր: Անկասկած, վերջին դիտարկումը պայմանավորված է այդ ձայնարկությունների՝ բայանուն լինելու հանգամանքով: Օրինակ՝ *Աւա՛ղ իմ կարճ արնուս* (ԳԱՂ, 109): *Աւա՛ղ աղէտիս* և դառն *կսկծիս* (ԹՄԼԹ, 34): *Ասէ՛ խոսաւդն*։ *վա՛յ ինձ*, թէ որպիսի գարշելի ձայնի կամէիր կատարել զտաւն մեծ Կարապետին Յովանու (ՎԱԱ)

Որպէս ստորադաս բաղադրիչ գործածվող բնության խնդիրները գերազանցապէս արտահայտվում են տրականով, ինչպէս՝ *Սկսաւ ուտել եւ ասէ*։ *վա՛յ ինձ*, զի ոչ համ ունի պանիրս եւ ոչ հոտ (ՎԱԱ): *Աւա՛ղ և եղո՛ւկ ամենայն Հայոցս*, զի աւերեցաւ ամենայն երկիրս (ԹՄԼԹ, 36): *Քն տիրոջտ* այլ ի՛նչ յենէկ, Դու հերիք ես խաղլու խնձոր (Հ, 180) և այլն:

Իբրև բնության խնդիր ավելի հաճախ հանդիպում են 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունների եզակի և հոգնակի տրական հոլովածներ կամ էլ գոյականներ ու փոխանուններ՝ համապատասխան դիմորոշ հոդով՝ ինչպէս՝ *Եւ էշն ասէ*։ *վա՛յ ինձ*, բարեկամք իմ. զի թէ հարուր թոռն լինի յերանաց իմոց, զճանդրութիւն բեռանցն ոչ թեթեւացուցանեն ՚ի թիկնաց իմոց (ՎԱԱ): *Վա՛յ մեզ*. զի ականջ ունիմք՝ եւ ո՛չ լսեմք զսպանալիս դժոխոցն (ՎԱԱ): *Եւ ասէ մեծայտուն*։ *վա՛յ քեզ*, ժառանգ անմիտ եւ հայրենայկորուստ (ՎԱԱ): *Յայս հրաշափառ մեծի տաւնիս, Քեզ երանի՛* որ հանդիպիս (ԺԵ, 2, 150): *Եւ ասէ*։ *վա՛յ ձեզ* որ ծիծաղիք. զի սքացէք եւ լացէք (ՎԱԱ): *Երանի այնոցիկ*, որ ունիցին զաւակ ի Սիոն (ՄՅՀԶ, Բ, 71):

Կան կառույցներ, որոնցում դերանունով արտահայտված հանգման խնդիրը բացահայտվում է գոյականով՝ *Վայ ինձ* հազար բերան Ստեփանու *եղբորդ քո* (ՄԹ, 133):

Խոսքը ոճավորելու նպատակով որոշ նախադասություններում *դերանունով արտահայտված բացահայտյալ-հանգման խնդիր* և *գոյականով արտահայտված բացահայտիչ* քերականական գույգի փոխարեն գործածվում է միայն բացահայտիչը՝ տվյալ դերանվանը համապատասխանող հոդով: *Հմտտ Վա՛յ ինձ, մեղապարտ գրչիս՝ Իսրայէլ սուտ քահանայիս*

(ԺԵ, 2, 146) և Նա աղուեսն վազեր եւ կանչէր. վա՛յ, վա՛յ *սրբոց պարտականիս* (ՎԱԱ): Նա գայթեր եւ ասէր, թէ *վա՛յ սրբոց պարտականիս* (ՎԱԱ): Վ ա՛յ *գրկելոյս* հազար լեզուով (ԳԿ): Բայց երանի է յարածամ *տեսանողացս*, Յիմաստ սորին *վայելողացս*, Ջի բանք սորին է զարդ փառաց (ՄԴ):

Խոսքը ոճավորելու հնարք պետք է դիտել այն դեպքերը, երբ տրականով արտահայտված հանգման խնդիրը (խոսքի ենթատեքստում հասկանալի լինելու պատճառով) զեղչվում է, ինչպես՝ *Երանի* ոչք քննեն զվկայութիւնս նորա բոլորով սրտի իւրեանց խնդրեսցեն զնա (ՄՄԱԱ):

Մի շարք դեպքերում բայանուն ձայնարկությունների պահանջած խնդիրը արտահայտվում է ոչ թե տրական, այլ հայցական հոլովով: Օրինակ՝ Ի նեղ գերեզման մտնուս Եւ ասես. «*Վա՛յ, զմենակ գերիս*» (Հ, 456³³²): ...Երկու սերըն պարապար, *Ջինքն էյնեկ և էյնեկ* ելի (Հ, 511): *Վա՛յ զիս աներեկ աւուրն*, Ուր ամէն ծնեալ ժողովի (Հ, 460): *Հազար երանի այս օրս*, Որ մէկտեղ ենք մեք ժողովել (Հ, 418): *Շատ երնեկ զիւր տէրն*, որ ունի (Հ, 292): *Վա՛յ զմենակ գերիս* (ԽԿ, 20): Եւ ասես. «*Վա՛յ զմենակ գերիս*» (ԽԿ, 20): Իմ եարն ինձի հիւր եկեր, *Ջիս երնե՛կ ու երնե՛կ ելի* (Հ, 214): *Աւա՛ղ զայն*, որ շատ դատի, Մարդ չկա, որ նա ճանաչէ (Հ, 421)³³³:

Բացառիկ դեպքերում *ախ* և *աւաղ* ձայնարկությունների հետ գործածվում է ուղղականով արտահայտված անդամ՝ Եւ գութ ծնողացն եւ Աստուծոյ համեմատք են. զի յորժամ ծնօղն զգաւակն ծնանի, թէ գութն չէր, յորժամ մէկ ծնօղ ծնաներ, այլ ոչ ծնանէր եւ ոչ հոգայր հեշտութեանն. *ախ աւաղ ես* (ՎԱԱ)³³⁴:

Բայանուն գերադաս անդամի պահանջով անվանական միակազմ նախադասություններում հանդիպում են նաև կապական կապակցությամբ խնդիր լրացումներ՝ արտահայտված հանգման քերականական իմաստ ձևավորող *ընդ, ի, համար, ի վերայ/վերայ* և այլ կապերով, որոնցից *համար* -ը միջինհայերենյան իրողություն է՝ ետադրությունների շարքից,

³³² Պիտի լինի առանց տրոհման՝ «*Վա՛յ զմենակ գերիս*»:

³³³ Անվիճելի փաստ է, որ սեռի խնդիր պահանջելու բացառիկ առանձնահատկություն ունեն միայն բայերը, իսկ բայանունները կարող են պահանջել բնության խնդիր: Կարծում ենք՝ հայցական հոլովով խնդրի առկայությունը կա՛մ անհետևողականության դրսևորում է, կա՛մ էլ կրկնասեռության:

³³⁴ Այս շարքում պայմանականորեն կարելի է տեղ տալ նաև նախորդ պարբերության *Հազար երանի այս օրս* (Հ, 418) նախադասությանը:

իսկ *ի վերայ* կապը թեև գրաբարի նախադրություններից է, սակայն միջին հայերենում վերածվել է ետադրության՝ մի շարք կիրառություններում հանդես գալով առանց *ի* նախդրի: Ահավասիկ՝ Մողմունն Նախատեաց զիմաստութիւն, Ինքն ի յինքն ասաց՝ Փռ՛ւ *ի քեզ* (Հ, 903): Նալա՛ թ ան *սիրուն վրայ*. Այս գիշեր կեղսս հալեցաւ (Հ, 190): Նալաթն³³⁵ *յաչերուղ վերայ*, Ջիմ թարկիկն է ր տուիք շուտով (Հ, 117): Եւ աղաչեր ասելով, թէ Աստուծոյ *սիրուն համար*, մի ասեր ինձ բան եւ ամէն օր զիս այսպէս ծեծէ. միայն մի վարեր զիս ՚ի դուրս (ՎԱԱ):

Ուժեղ կառավարմամբ կապակցված խնդիրներից բացի՝ բայանուն գերադաս անդամների և նրանց խնդիր լրացումների հետ ըստ անհրաժեշտության հանդես են գալիս նաև այլ երկրորդական անդամներ (առդրությամբ կապակցված պարագա, համաձայնությամբ կապակցված բացահայտիչ և այլն), ինչպես՝ Յուցանէ առակս, թէ *յայտնայպէս վա՛յ ինձ գրասս անգեղջ մեղաւորացն*. զի ծնունդ են Աստուծոյ արարչութեամբ եւ սուրբ աւազանան (ՎԱԱ): *Ո՛վ որդեակ, վայ ինձ՝ որորմելի մեղաւորիս*. քանզի այսպէս ցուցանէ առակս (ՎԱԱ): *Աւա՛ իս իմ կէնձ արևուս*³³⁶, Կու մեռնիմ, այլ ճարակ չունիմ (ԹԼԿ, 905): *Վա՛յ եւ եղո՛ւկ* միաբերան (ՄԹ): *Փառք եւ պատիւ պարգեւողին*, Երրորդութեանն երբեակ *անձին*, Ի ներկայիս *ւ պագային* Եւ հանդերձեալն *յաւիտենին* (ՄԴ):

Միջին հայերենի լեզվական աղբյուրներում, մասնավորապես՝ հայրեններում, լրացման դերով առանձնանում է *հազար* թվականը՝ առավել հաճախ հանդիպելով *ամանաթ, աւա՛ղ, բարև՛, եղո՛ւկ, երնէ՛կ, վա՛յ, նալաթ* բայանուններով (տվյալ դեպքում՝ գոյականներ, ձայնարկություններ) գերադաս անդամներին: Օրինակ՝ Աւա՛ղ ու *հազար աւա՛ղ*, Որ գալուն բախտովն եմ եղեր (Հ, 213): *Հազար երանի նորս*, Ջոր բարի գործով զըտանես (Հ, 904): *Յէսօր* մեզ *հազար երնէկ*, Ծառն մուշտուլուխ մեզ եբեր (Հ, 613): *Հազար ամանաթ*, հոգի՛, Յետև ինձ ըզսերն թարկէ (Հ, 235): *Բարև՛ ու հազար բարև՛*, Արեգա՛կ, իմ լո՛յս, իմ արև՛ (Հ, 111)³³⁷: *Հազար եղուկ* իմ խելացս, Որ հետ քոպխոյն դատեցայ (Հ, 402): Խօսքն ու գրոյցն է բուն դա-

³³⁵ Ի տարբերություն նախորդ նախադասության՝ այս դեպքում գերադաս անդամն արտահայտվել է որոշյալ առմամբ:

³³⁶ Բնագրում տրոհված է՝ *Աւա՛ իս, իմ կէնձ արևուս*:

³³⁷ Հանդիպում է նաև *հարհուր հազար* կապակցությամբ, ինչպես՝ *Բարև քեզ հարհուր հազար՝ Ի բռէհան և մուշկի ամպեր* (Հ, 61):

լատ, Իւր *երեսին հազար նալլաթ* (ՄՂ) և այլն:

Հազար թվականի դիտարկումից պարզվում է, որ այն, լինելով, այսպես կոչված, մոգական թվերից մեկը, միջին հայերենում սկսել է ավելի հաճախ գործածվել «շատ», «բազմաթիվ» իմաստներով: Լայնորեն տարածված լինելով բանավոր խոսքում՝ այն աստիճանաբար տեղ է գտել նաև գրական այլ ժանրերի՝ ա) թե՛ երկկազմ և բ) թե՛ միակազմ նախադասություններում³³⁸: Հմմտ. ա) Եւ ասէր գայլն. վայ գանտէրս. եւ ասաց աղուէսն, թէ ես եմ յանտէր, որ 'ի դարս 'ի վեր կու երթամ, թէ չէ քեզ հիմա *հազար* տէր գայ (ՎԱԱ): Ի քո քաղաքամիջին՝ Ծարուած եմ, կայ աղբիւր *հազար* (Հ, 61): Կու գան ու կու տան *հազար*, Չե՛ւ անուուր և գքեզ չե՛ւ ի տար (Հ, 55): Հայ յ իմ աղանի պայծառ, Որ թնիտ թէպրիկն է *հազար* (Հ, 55) և բ) Ժողովեցան քահանայք եւ տանուտէրք առ ջուհին եւ ասեն. *հազար վասն Աստուծոյ*. այս օր մեզ յերեսն մի գալ (ՎԱԱ): Հեռի ու *հազար*, իմ Տէր, Բաժակն ի այս ինչ նմանի (Հ, 520): Ես ալ աղկէկան բերած, Ու *հազար* նագով սնուցած (Հ, 52) և այլն: Նկատենք, որ *հազար* թվականը նշված իմաստները ձեռք էր բերել դեռևս գրաբարում³³⁹: Ավելին՝ *հազար* թվականը *բերան* գոյականի հետ կազմել է կայուն բառակապակցություն՝ «շատ անգամ, բազմաթիվ անգամ» նշանակությամբ և ցույց է տալիս գերադաս անդամի արտահայտած իմաստի չափը: Օրինակ՝ Իրնիկ ինձ *հազար բերան*, Իմ եայրըն մնաց ինձ պալաշ» (Հ, 118): Աւա՛ղ ու *հազար բերան*, Թէ՛ ի՛նչ խելօք ու անխելացայ (Հ, 492)³⁴⁰: Ջի ասէ աստուածայբանն, թէ սովորական բնութիւն լինի եւ ամրանայ 'ի մարդն եւ կորուսանէ զմարդն. *վա յ հազար բե-*

³³⁸ ՄՀԲ-ն ունի ՀԱԶԱՐ ԹԵ բառահոդվածը՝ «որքան էլ», «ինչքան էլ», «չնայած որ» իմաստներով՝ դիտելով որպես վերաբերական, սակայն կարծում ենք, որ բառարանում տեղ գտած երկու օրինակներում էլ *հազար թէ՛ն* ոչ թե վերաբերականի, այլ շաղկապի գործառույթ ունի: Ահա դրանցից մեկը՝ քաղված Ֆրիկի գործերից՝ Հազար թէ մանուկ ես դեռ՝ ես կասեմ դու քեզ ճար արայ:

³³⁹ Ահավասիկ վիպասանական հայերենի հայտնի հատվածը՝ Եւ ասէ արքայն Ալանաց. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս *հազարս ի հազարաց* եւ բիւրս ի բիւրուց ընդ քաջագգույ կոյս օրիորդիս Ալանաց» (ՄԽՊՀ):

³⁴⁰ Շարունակությունը հանդիպում է մի շարք այլ լուծումներով, ինչպես՝ Աւա՛ղ ու հազար բերան, Թէ՛ զի՛ նչ խելօք ու անխելացայ (Հ, 470): Աւա՛ղ ու *հազար բերան*, Թ՛ ի՛նչ խելօք էի՛ անխելացայ (Հ, 320): Հմմտ. նաև Աւա՛ղ ու հազար բերան, Խելօք էի անխելացայ (Հ, 247) կառույցը, որում նախադասությունները կապակցվել են շարահարությամբ:

բան (ՎԱԱ): Երանի *հազար բերան* Արդարոցն՝ աւուր գալըստեան (Հ, 462)³⁴¹ և այլն:

Անվանական միակազմ նախադասություններով բարդ կառույցներում, որոնք հանդես են գալիս որպես ուղղակիորեն մեջբերվող խոսքի բաղադրիչ, առկա են նաև կոչականներ՝ առանձին կամ լրացման (լրացումների) հետ: Որոշ դեպքերում կոչականները հանդես են գալիս անվանական միակազմ նախադասությունների կազմում, ինչպես՝ Եւ ասէ մեծայտուն. *վայ քեզ, ժառանգ անմիտ եւ հայրենայկորուստ*. զի ես քեզ գարէնս Աստուծոյ քարոզեմ. եւ դու զերակ փորոյդ ՚ի թիւ արկանես (ՎԱԱ): Սակայն նմանատիպ կառույցներում կոչականը գերազանցապես գործածվում է ոչ թե որպես անվանական միակազմ, այլ հարակից երկկազմ նախադասության բաղադրիչ: Այսպես՝ հետևյալ կառույցների *աղջի՛կ* և *քա՛լ* կոչականները, ճիշտ է, առնչվում են, համապատասխանաբար, *աղբորտ արևուն* և *քո Աստուած սիրուն*, *Քո մէկիկ աղբորն արեվուն* անվանական միակազմ նախադասություններին և նրանց հետ ունեն թվի քերականական կարգի համաձայնություն (օրինակ՝ *քա՛լ* և *քո* անդամները համաձայնել են եզակի թվով), սակայն իրականում գտնվում են 2-րդ դեմքով նախադասությունների կազմում՝ վերջիններիս ենթակաների և ստորոգյալներին համաձայնելով թվի քերականական կարգով *Աղջի՛կ*, *աղբորտ արևուն*, *Նօշըպէն պտիկ մի ջուր տուր* (Հ, 648): – *Քա՛լ*, *քո Աստուած սիրուն*, *Քո մէկիկ աղբորն արևուն*, *Կամ առ զիս ծոցդ ի քուն*, *Կամ տաստուր տուր*՝ երթամ ի տունէ (Հ, 286): Այսպես նաև՝ Եւ ՚ի հետ մտեալ ձայնէր նապաստակին. *ա՛յ էջ հնդացի*, վայ ինձ. *մի փաղջիր* (ՎԱԱ) և այլն:

Անվանական միակազմ նախադասությունների կազմում կարող է կոչական լինել նաև այն դեպքում, երբ նրանց, որպես շարունակություն, չի հաջորդում 2-րդ դեմքով միակազմ կամ երկկազմ նախադասություն.

– *Վա՛յ ինձ, նազելի որդի*, Զինչ դիպաւ ցաւտ անբուժելի (Հ, 908)³⁴²:

Որևէ երևույթ, իրողություն կամ առարկա կարևորելու, նրա առկայությունն ընդգծելու նպատակով անվանական միակազմ նախադասու-

³⁴¹ Հմմտ. *Երանի հազար բերան* Արդարոցն՝ յաւուր յարութեան (Հ, 432):

³⁴² Հմմտ. «Ողորմելի Ստեփաննոս, *Վա՛յ է քեզ* ու վա՛յ քո հոգուն» (Հ, 949) կառույցը, որում քերականական միևնույն իրողությունն առկա է ընդգծված միադիմի նախադասության մեջ:

յունների կազմում երբեմն գործածվում է *ահա//ահայ* ցուցական վերաբերականը³⁴³: Օրինակ՝ Երկուսն ի յիրար եկան, *Ահայ* ժամ արև զարնան (ՆՍ, 917): Եւ ասէ. բարի եկիք. *ահա քաղաքս առաջի ձեր*. յոր տեղ կամիք դուք, ՚ի հոն հանգիք (ՎԱԱ): *Ահա ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան՝* ասէ. զի յորժամ մարդ մեղօք մեռանի եւ լա, ոչ ինչ օգտի (ՎԱԱ): Դարձի՛ր, ինձի պագ մի տուր, *Ահա ժամ ու շատ մի քարամ* (Հ, 363): Եւ ասէ իմաստունն. *ահա ոսկին քո աստ*. քանզի անպէտ էր քեզ, իբրեւ զքարս զայս (ՎԱԱ): *Ահա մարմինս, հատիք կանգնած* (ՄՊ): *Ահա ձեզ ձայն մեծ աւետեաց*, Որ ի յանկանջըս ձեր հնչեաց (ԱՍ, ԱԴԱՍ, 23): *Ահա՛ քեզ զիրք առաքինութեանց* (ԹՄԼԹ, 41): Եւ իբրև անց ժամ մի, դարձան և *ահա մեծ սքանչելիք* (ՊՎ, 429):

Նմանատիպ կառույցները միջին հայերենին ավանդվել են գրաբարից, որում նրանք հաճախադեպ են մասնավորապես աստվածաշնչյան տարբեր գրքերում՝ Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր առ նա, եւ ասէ. *ահաւասիկ գառն Աստուծոյ՝* որ բառնայ զմեղս աշխարհի (ՍԳ): Եւ ձըգեալ զձեռն իւր յաշակերտոսն՝ ասէ. *ահաւասիկ մայր իմ եւ եղբարք իմ* (ՍԳ): *Եւ ահա դահլիճք, եւ սինք շրջանակօք* (ՍԳ): *Եւ ահա շուրջ զտաճարան փողոցս* (ՍԳ): *Եւ ահա այր մի, եւ տեսիլ նորա իբրեւ զտեսիլ փայլուն պղնձոյ* (ՍԳ)³⁴⁴:

Այս կարգի նախադասություններ հանդիպում են թե՛ նախադաս, թե՛ միջադաս և թե՛ վերջադաս դիրքերում, ինչպես՝ *Վայ եւ եղուկ*, զի կայի ի մեջ վիմաց, ի արգելական խցի, ի հայել յարինական տեսի իժ մի, զի մերձ էր ի օրինակն, եւ տեսեալ զահի հարայ եւ փախայ (ԺԵ, 260): Իմ եարն ինձի հիւր եկեր, *Ջիս երնէ՛կ ու երնէ՛կ ելի* (Հ, 214): Թէ յամմէն օր մեղօք կենաս, *վա՛յ քո հոգուն*, ողորմելի (ՄԽՏ, 350): Իսկ մերայինք.- *Վա՛յ եղկելոյս*,- Իբրև զոչխար կոտորեցան (ՅՎ, 6):

³⁴³ *Ահա, որ աշուն երեկ*, Կու շարժիմ՝ քամին կու տանի (Հ, 881):

³⁴⁴ *Ահա* ցուցականից բացի՝ գրաբարում գործածվում էին նաև *ահաւասիկ*, *ահաւադիկ*, *ահաւանիկ*, *աւասիկ* վերաբերականները: Օրինակ՝ Եւ ասէ Աբրամ ցըՍարա. *ահաւանիկ աղային քո ի ձեռս քո*, արա նմա զինչ հաճոյ է առաջի աչաց քոց (ՍԳ): Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, *ահաւադիկ քաղաքդ Աստուծոյ* (ՍԳ): Եւ ասէ Հեղի ցՄամուէլ՝ Մամուէլ որդեակ. եւ ասէ՛ *աւասիկ ես* (ՍԳ): Եւ նա ասէ ցնա՝ *ահաւասիկ ես* (ՍԳ) և այլն, որպիսիք միջինհայերենյան բնագրերում չեն հանդիպում:

Գրաբարից միջին հայերենին ժառանգված իրողություն պիտի համարել այն բարդ և բազմաբարդ կառույցները, որոնցում անվանական միակազմ նախադասությունները նախադաս շարադասությամբ հանդես են գալիս գլխավորի դերում: Օրինակ՝ Լար կին եւ ասէր. *վա՛յ ինձ* զի հակառակ եղև աղալթս իմ (ՎԱԱ): *Վա՛յ մեզ*. զի ականջ ունիմք՝ եւ ո՛չ լսեմք զսպանալիս դժոխցն. եւ սիրտ ունիմք՝ եւ ոչ իմանամք զխաբէութիւն սատանայի (ՎԱԱ): *Հազար աւաղ իմ խելացս*, Որ հետ քոպիսուն դատեցայ (Հ, 480) և այլն³⁴⁵:

Այսօրինակ անվանական կառույցներին սովորաբար հաջորդում են գողման եղանակով կապակցված նախադասություններ, որոնցում կապակցումը կատարվում է *թէ, որ* կամ *զի* ստորադասական շաղկապներով: *Աւա՛ղ զայն, որ շատ դատիս*, Մարդ չկայ, որ զելն ճանչէ (Հ, 353): *Շալլայ թէ շուտով դառնայ*, Թէ չէ իմ հոգեկս կելնէ (Հ, 241): Յուցանէ առակս, թէ ամենայն ծնօղք, որ ոչ խրատէ գորդին իւր գնալ աւրինօքն եւ ասէ. *ո. աւաղ, թէ ուտես զիս* (ՎԱԱ): Եւ ասէ. *վա՛յ ձեզ որ ծիծաղիք*. զի սքացէք եւ լացէք (ՎԱԱ): Ասէ խոսօղն. *վայ ինձ, թէ այդպիսի գարշելի ձայնիւղ կամէիր կատարել զսօս մեծի սուրբ Կարապետին* (ՎԱԱ): *Վա՛յ ինձ. զի ցուցանէ օրինակս*, թէ ամենայն մեղաւոր անգեղջ զաղբ եւ զշարաւ մեղացն ուտէ եւ պարարտանայ (ՎԱԱ):

Երկրորդական նախադասությունները, կախված գլխավոր նախադասությունների արտահայտությունից և բովանդակությունից, հանդես են գալիս շարահյուսական տարբեր գործառնություններով (բացահայտիչ, հանգում, պատճառ, պայման և այլն)՝ *Աւաղ, որ զըրկեցայ տեսուղ քաղցրագին* (ԽԿ, 23): *Մուրբն է Աստուծոյ նման, երանի, ով որ սուրբ լինի* (ԽԿ, 34): *Երանի ով զհոգոյն օգուտն իմանայ* (ՄԹ): *Վա՛յ ինձ, զի ես մեղաւոր եմ* (ՅԳ, 12): *Ափսոս որ կայ զուխն բաշ*, Ընդ սատանին եղեալ է գաշ (ՄՂ) և այլն³⁴⁶:

Անվանական միակազմ նախադասությունները ծագմամբ առնչվում են սկզբնապես երկկազմ այն նախադասություններին, որոնց ստորոգյալն

³⁴⁵ Հմմտ. գրաբ. *Վայ մեզ՝* զի ոչ եղև մեզ այսպիսի յերէկ եւ յառանտ (ՄԳ): Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր գօրութեանց, հգօրն Իսրայելի. *Վայ ձեզ, հգօրքդ Իսրայելի*, զի ոչ եւս դադարեցէ բարկութիւն իմ ի հակառակորդաց իմոց (ՄԳ): *Վայ ազգին մեղաւորի*. ժողովուրդ որ յի է մեղօք (ՄԳ): *Վայ քեզ քաղաք* որոյ թագաւորք մանուկ է, եւ իշխանք քո ընդ առաւօտս ուտեն (ՄԳ):

³⁴⁶ Հմմտ. գրաբ. Եւ ասէ՝ *վաշ ինձ*, զի ջեռայ՝ եւ տեսի զկրակ (ՄԳ):

արտահայտվում է *եւ* բայի եզակի թվի *է, էր, իցէ* դիմավոր բայաձևերով: Վերջիններս նմանատիպ կառույցներում այնքան են սերտաճել ենթակա- ների հետ, որ կորցրել են էական բային հատուկ իմաստը՝ հետագայում ձեռք բերելով կցորդ բաղադրիչի (տվյալ դեպքում՝ միադիմի բայաձևի) ար- ժեք և ենթակայի հետ միասին վերածվելով մեկ անդամի, ինչպես՝ *Սմայ էր: Գարուն է: Ցուրտ է* և այլն: Անվանական միակազմ նախադասությունները հենց այս կարգի միադիմի կառույցների *է, էր* կամ *իցէ* միադիմի բայաձևե- րի անկման հետևանքով են առաջացել: Նշված գործընթացն առկա է դեռ- ևս գրաբարի դասական շրջանում, ինչի ապացույցն է, օրինակ, *Վա՛յ է ինձ // Վա՛յ ինձ* և նմանօրինակ նախադասությունների գործածությունը թե՛ ու- սումնասիրվող և թե՛ գրաբար շրջանի լեզվական աղբյուրներում: Դրանք անգամ միևնույն բարդ կառույցներում են գուգորդվում: Հմմտ. Ո՛վ որ- դեակ իմ՝ *վա՛յ է ինձ* և եղո՛ւկ, և *վա՛յ աւուր քո ծննդեան*, և *վա՛յ ինձ* և *վա՛յ հոր քոյ աւետեաց*, *վա՛յ յանկեալ բազկիս*, որ զքեզ բարձի որդեակ (ԹՄԼԹ, 91) և Բայց *վայ է ինձ* թե ոչ աւետարանեմ (ՄԳ): Թեպէտ եւ սնուցեն գոր- դիս իւրեանց, անգաւակեացին ի մարդկանէ, քանզի *վայ է նոցա* (ՄԳ) և Զի եթէ գլորիցի մին՝ կանգնեսցէ զնա ընկեր իւր. *եւ վայ միումն* յորժամ գլորի- ցի, եւ ոչ գուցէ մեւս՝ որ յարուցանիցէ զնա (ՄԳ): *Վայ այնոցիկ* որ յառնեն ընդ առաւօտս՝ եւ զհետ լինին ցբւոյն, որ երեկանան ի նմին, զի զինին իսկ անդէն զնոսին այրէ (ՄԳ):

Հաստատապես կարելի է ասել, որ խնդրո առարկա նախադասույթ- յունները գրական լեզվին են անցել խոսակցական մակարդակից, որից սո- վորաբար սկսվում է ասելիքի՝ հնարավորինս համառոտ ձևակերպման գործընթացը:

Նշված իրողությունը բնորոշ է նաև միջին հայերենին: Հայրեննե- րում ,օրինակ, հանդիպում են և՛ *վա՛յ*, և՛ *վա՛յ է* գերադաս անդամներով միակազմ նախադասություններ: Հմմտ. – *Վա՛յ ինձ, նագելի որդի*, Զինչ դի- պաւ ցաւտ անբուժելի (ԹԼԿ, 908): Շատ պատճառ եղէ չարեաց, *Եղուկ ու վա՛յ ինձ՝ այս ծերիս* (Ֆ, 884) և *Վա՛յ է այն մարդուն հոգւոյն*, Որ զլոյսն ա- ռեալ թագուցեր (Հ, 932): *Ողորմելի Ստեփաննոս, Վա՛յ է քեզ ու վա՛յ՝ քո հո-*

գուն (Ստ., 949)³⁴⁷:

Վերն ասվածի մասին է վկայում նաև *երնեկ/երնեկ/երնիկ/էյնեկ//յէյնեկ* զուգաձևերով հանդես եկող *երանի* ձայնարկությունը, որը միակզման նախադասության գերադաս անդամի դերում՝

ա) մի դեպքում ինքնուրույն է գործածվում, ինչպես՝ *Երնեկ* անոր գտնողին, Վա՛յ էկեր կորսնցնողին (Հ, 658)³⁴⁸: Սուրբ Աստուածածնայ ծոցէն Մարգրիտ մի ինկեր, զին չունի: *Երնե՛կ* զըստողին, Վա՛յ էկեր կորուստողին (Հ, 751): Եւ ասէ, ո՛վ գեղեցիկ ՚ի հաւերտ, *երնիկ* ականջին, որ լսէ զբարի բարբառ քո (ՎԱԱ) և այլն,

բ) մյուս դեպքում՝ է բայաձևի հետ, որը տվյալ կիրառության մեջ միադիմի է, ինչպես՝ Իմ եարն ինձի հիւր երեկ, *Յէ՛յնեկ է* զիս՝ ՚ յէյնե՛կ էլի (Հ, 149): *Երանի է* քեզ. զի գտի զքոյ աւագ եղբարն. եւ ցանկայ տեսանել զքեզ (ՎԱԱ)³⁴⁹:

Անվանական միակզման նախադասությունները արտահայտության և/կամ բովանդակության պլան(ներ)ով առնչվում են՝ ա) բայական միադիմի, բ) բայական անդամ և գ) բառ-նախադասություններին, սակայն էապես տարբերվում են նրանցից:

ա) Անվանական միակզման նախադասությունները բովանդակության պլանով առնչվում են բայական անկախ միադիմի նախադասությունների այն տեսակին, որի գերադաս անդամն արտահայտվում է «*հնգեվի՛-ճականի՛շ կամ վերաբերմունքանի՛շ բառ+միադիմի բայաձև*» մասնակադապարով: Անվանական միակզման և բայական միադիմի նախադասությունները թէև միևնույն բովանդակության պլանն ունեն, և կազմությամբ կարող են լինել թե՛ համառոտ, թե՛ ընդարձակ, սակայն արտահայտության

³⁴⁷ Ժամանակակից հայերենում գործածական են միայն *վա՛յ* գերադաս անդամով արտահայտվող, այսինքն՝ անվանական նախադասությունները, ինչպես՝ *Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարհին ...* (ՀԹ4, 26):

³⁴⁸ Հմմտ. «*Երնեկ* բերին գտնողին, Վա՛յ բերին կորսնցնողին» (Հ, 658) կառույցը, որում *երնեկ*-ն արդեն անորոշ-դիմավոր միակզման նախադասության երկրորդական անդամ է:

³⁴⁹ Հմմտ. գրաբ. *Բայց ձեր երանի է աչացո՛* զի տեսանեն, եւ ակընջաց ձերոց՝ զի լսեն (ՍԳ): *Երանի է ձեզ* յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն (ՍԳ) և *Երանի քեզ երկիր*, որոյ թագաւոր քո որդի ազատի է, եւ իշխանք քո ի ժամու ուտեն զօրութեամբ՝ եւ ոչ ամաչեսցեն (ՍԳ):

պլանում տարբեր են. Բայական միադիմի նախադասության գերադասանդամի կազմությանը, որպես կանոն, մասնակցում են բայանուն և միադիմի բայաձև, մինչդեռ անվանական նախադասության գերադասանդամն արտահայտվում է միայն բայանունով: Հմմտ. *Վա՛յ է՛նցա* (ՎԱԱ) և *Վա՛յմեգ* (ՎԱԱ):

բ) Անվանական միակազմ նախադասությունները բայական անդեմ միակազմ նախադասություններից տարբերվում են նրանով, որ թեև երկու դեպքում էլ գերադասանդամն արտահայտվում է նյութական իմաստակիր բառով, և այդ նախադասությունները կազմությամբ կարող են լինել թե՛ համառոտ, թե՛ ընդարձակ, սակայն բայական անդեմ նախադասությունների միջոցով արտահայտվում է փոփոխվող հատկանիշի գաղափար, մինչդեռ անվանական միակազմ նախադասությունների միջոցով հավաստվում է այս կամ այն առարկայի, երևույթի առկայությունը կամ բացակայությունը, կամ էլ արտահայտվում է որոշակի դատողական կամ զգացական վերաբերմունք: Հմմտ. հետևյալ ընդգծված նախադասությունները՝ *Ով այս ցախ տեր է՝ պատրաստ կենայ ամեն հով եւ չոր ուտելվէ, ... եւ գլուխն կաթն կթել, եւ հով եւ գէճ դեղերով կակղացնել* (ԱԱՕԲ) և *Հորըն փա՛ռք, Որդուն պատի՛ւ, Սուրբ Հոգուն նորին փառակցի* (Հ, 513):

գ) Անվանական նախադասությունները բառ-նախադասություններից տարբերվում են նրանով, որ բառ-նախադասությունների գերադասանդամները զուրկ են լրացում ստանալու հնարավորությունից, քանի որ արտահայտվում են ոչ նյութական խոսքի մասերով, և, բնական է, նրանցով ձևավորվում են միայն համառոտ նախադասություններ: Մինչդեռ անվանական միակազմ նախադասությունները կազմությամբ կարող են լինել թե՛ համառոտ, թե՛ ընդարձակ, այսինքն՝ խոսքի մեջ կարող են արտահայտվել կա՛մ միայն գերադասանդամով, կա՛մ գերադասանդամով ու վերջինիս լրացում(ներ)ով: Հմմտ. *Եւ նայ ասէ այոյ, բաց եկ, նախ կապեցից զքեզ. զի մի փախիցես* (ՎԱԱ) և *Եւ թափիմք յայս կենացս ու յայն կենացն. վա՛յ ու Ռ. վայ* (ՎԱԱ):

Միջին հայերենում անվանական միակազմ նախադասությունները կարող են հանդես գալ թե՛ որպես անկախ շարահյուսական միավոր, թե՛ բարդ ու բազմաբարդ կառույցներում՝ երկկազմ և միակազմ նախադասությունների զուգորդությամբ՝ վերջին դեպքում գրավելով գերադաս, ստորադաս կամ համագոր դիրք: Ահավասիկ համապատասխան օրինակներ՝

Փա՛նք անմահ թագաւորին, Որ ստեղծել զամէն կենդանի (Հ, 513): Քանի հետ ինձիկ էիր՝ *Ծառ կանանչ, տէրևտ ի վերայ* (Հ, 124): *Աւա՛ղ կենաց դարիպ մարդուն*, Որ նախատի յամենեցուն (ԱՌԲ): *Աւա՛ղ զայն*, որ շատ դատի, Մարդ չկա, որ նա ճանաչէ (Հ, 421): Փառք Աստուծոյ Հօրըն վերին Եւ Միածնին՝ նորին Բանին, Հոգոյն Սըրբոյ կենաց տուողին՝ Խաղաղութեանց պարգեւողին (ԱՌԲ):

Բայանուն գերադաս անդամներով անվանական միակազմ նախադասությունները, որոնցում կապակցումը գերազանցապես կառավարման եղանակով է (միակի և ուժեղ կառավարում), ավելի հաճախ հանդիպում են որպես ուղղակիորեն մեջբերվող խոսքեր:

Հազվադեպ են որպես հաղորդակցական ինքնուրույն միավոր հանդես եկող անվանական միակազմ նախադասությունները, որոնք կազմված են բայանուն ձայնարկությամբ արտահայտված գերադաս անդամով և ուժեղ կառավարմամբ կապակցված խնդիր լրացումով: Օրինակ՝ *Վա՛յ մեզ* (ՎԱԱ):

Խնդրո առարկա նախադասություններին ավելի հաճախ հաջորդում և/կամ նախորդում են ստորադասական հարաբերությամբ կապակցված երկկազմ, երբեմն՝ միակազմ նախադասություններ: Օրինակ՝ *Լար կին եւ ասէր. վա՛յ ինձ զի հակառակ եղև աղալթս իմ* (ՎԱԱ): Վայ մեզ. *որ հեշտացեալ եմք ՚ի մեղս եւ ոչ վախեմք յայսմանէ, որ կան առաջի մեր* (ՎԱԱ): Եւ ասէ. *ո. աւաղ, թէ ուտես զիս* (ՎԱԱ) և այլն:

Ըստ հնչերանգի՝ միջին հայերենի անվանական նախադասությունները լինում են՝

ա) պատմողական, որոնցով սովորաբար համառոտակի նկարագրվում են բնապատկեր, կատարվածի, կատարվողի կամ կատարվելիքի մասին արտահայտվում որևէ գնահատողական վերաբերմունք և այլն, ինչպես՝ *Ասէ աքլորն, թէ իմ ձվերս ՚ի վայր, թէ օր մեռնի. ես որ նորա ծառայ եմ . Ի. Լ. կին ունիմ* (ՎԱԱ): Ասաց դեւն, թէ *քո աղէկուտ աղէկ. ես կերթամ մտեմ ՚ի յայս անուն թագաւորի դուստր որ ես աղէկին զաղէկն անեմ* (ՎԱԱ): *Զդուռն այլ նըջանով ասեմ՝ Բարձր պատ ու ծառն ի միջին* (Հ, 361): *Կարիբն ուր կարիբութնին, Եարն ուր սրտի ուզածին* (Հ, 778): *Այդ քո ստեղծողիտ համար, Երբ քայլես՝ զուներտ մի՛ շարժեր* (Հ, 378): Դուն այլ այտ վարձկունք արայ, Քո մէկիկ աղբօրն արևուն (Հ, 298) և այլն:

բ) բացականչական, որոնցով արտահայտվում են զանազան զգացո-

դուրյուններ, ապրումներ և այլն, ինչպես՝ *Վա՛յ անոր սօրկանն*, որ կորուսեր Ու չէ գտեր (Հ, 761): Գոզեոն ուղտոյ եւ ասանակն իշուն լային սովեալ եւ ասէին ան ծնողսն իրեանց, թէ *վայ մեզ սովելոցս*. զի հերձիմք ՚ի նախանձու (ՎԱՍ): Աս զիշեր հինչու լուսցաւ, Կանչեցի՝ *Վա՛յ ինձի դանկիկ* (Հ, 660): *Փա՛ռք փառաց թագաւորին*, Որ մեր մըտացըս լոյս կու տայ (Հ, 896): *Քան զԱդամ այլ ի՛նչ հարուստ*, Որ ունէր զդրախտն առնձին (Հ, 335) և այլն:

զ) հարցական, որոնցով արտահայտվում են նաև ճարտասանական բնույթի հարցեր, ինչպես՝ *էս ի՞նչ լայեղ փէշքաշ*, Որ տուիր քո հաքմուն վերայ (Հ, 581): Չիմ եարն ի գնալ տեսայ, Կանչեցի՝ *«Պագհկտ ի քանի՞»*, Դարձաւ ու ճուղայ ետուր, Թէ՛ *«Քանի՛ քո չարն ու քանի՞»* (Հ, 79): Ամենայն ծառ պտուղ կու տայ, Թէ ուռին չի տայ՝ նա համ ի՛նչ, Շատ եար իր եարին լոբեր, Թէ դու այլ լոբս՝ *նա համ ի՞նչ* (Հ, 326): Շատ մարդ ի սիրուն մեռեր, Թէ դու ալ մեռնիս՝ *նա համ ի՞նչ* (Հ, 326): *Քան զայս աւելն այլ ինչ օգուտ*, Երբ նա անզիղջ է գերդ ջհուղ (ՄՂ):

դ) հրամայական, որը մեզ հանդիպած միակ վկայությունն է՝ *– Հեռի՛ք քէֆինն ի քէնէ*, Հանսա ծոցս, արե՛կ, մուտ ի ներս (Հ, 368):

Միջին հայերենի գրական ժառանգությունը բազմաժանր ստեղծագործությունների մի հարուստ շտեմարան է, որում տեղ են գտել թե՛ հեղինակային և թե՛ ժողովրդական ստեղծագործություններ: Վերջիններիս մի մասը, սերնդից սերունդ բերնեբերան փոխանցվելով, հետագայում գրի է առնվել տարբեր գրիչների կողմից՝ շարունակաբար ենթարկվելով ձևախմաստային տարատեսակ փոփոխությունների: Խաթարումներով են մեզ հասել նաև հեղինակային ստեղծագործությունները, եթե դրանք հենց հեղինակների բնագրերը չեն: Բնականաբար, փոփոխություններից գերծ չեն մնացել նաև մեզ հասած գրական ժառանգության մեջ գործածված որոշ անվանական միակազմ նախադասություններ: Ստորև այդ փոփոխություններից կներկայացնենք մի քանիսը, որոնք առկա են հայրեններում: Այսպես՝

1. Աստվածաշնչյան *«Վայ է ինձ թէ ոչ աւետարանեմ»* (ՄԳ) կարգի միակազմ կառույցների մի մասը հետագայում հայրեններում սկսել է գործածվել նաև կառուցվածքային փոփոխությամբ, այն է՝ առանց հանգման խնդրի (*վայ է թէ՛վայ թէ՛*)՝ հանգեցնելով նյութական իմաստ արտահայտող գերադաս անդամի և *թէ* շաղկապի իմաստային փոփոխության:

նրանք կորցրել են բառային ինքնուրույնությունը՝ երկուսը միասին ձեռք բերելով այլ խոսքի մասին (վերաբերական) բնորոշ մեկ բառային միավորի արժեք՝ նոր բառիմաստով («երևի»): Օրինակ՝ Չարկա՛ւմ, քեզ էլ ի՞նչ ասեմ, Միրտըս խըռով ի, *Վա՛յ թէ* անիծեմ (Հ, 792)³⁵⁰:

2. Գեղարվեստական միևնույն պատկերը ըստ անհրաշքշտության արտահայտվել է մի դեպքում միակզամ, մյուս դեպքում՝ երկկզամ նախադասությամբ: Հմնտ. Ես ալ ի դեմիկն ելայ, Նեղ սոխախ ու *խիստ խալապայ* (Հ, 43) և Արի՛, թէ պագիկ մ՛ առնեմ, *Նա բոլորս էր խիստ դալապայ* (Հ, 95) և այլն: *Քաւ էլ, թէ//քաւ ալ, թէ* կապակցության *է//ալ* սաստկական վերաբերականը բազմաթիվ կիրառություններում *քաւ* բառի հետ սկսել է հանդես գալ որպէս կցական բարդություն՝ *քաւել//քաւէլ*՝ «բացի, միայն, եթէ միայն, միայն թէ, թող թէ» նշանակություններով, *թէ* ստորադասական շաղկապը ձեռք է բերել թարմատարի արժեք, իսկ որոշ կիրառություններում չի էլ գործածվում: Օրինակ՝ Ասի, թէ սիրեմ գքեզ, Դու ի քեզ ի նագներ ելար, *Քաւ ալ, թէ* անցաւ աշխարհ, Որ այլ տեղ չկայ սիրոյ ճար (Հ, 121): Փա՛ռք կու տամ ստեղծողիդ, *Քաւ էլ, թէ* քեզ նման դու ես (Հ, 60)³⁵¹:

3. Հարցը փոքր-ինչ այլ է *թուխ ամպ էր* և *թուխ ամպեր* կառուցվածքով նախադասությունների դեպքում: Վերջիններս տեղ են գտել միևնույն հայրենի՝ սկսվածքով փոքր-ինչ զանազանվող շուրջ մեկ տասնյակ տարբերակներով: Խոսքը «Առաւօտուն դուրս ելա(յ)» և «Գիշերս ես (ի) դու(ր)ս ելա(յ)» սկսվածքներով հայրենների՝ ստորև ընդգծված շարահյուսական միավորների մասին է, որոնցից մի քանիսը անվանական միակզամ նախադասություններ են՝ կազմության և բովանդակության տարբեր լուծումներով՝ Գիշերս ես ի դուրս ելայ, *Շատ աստղունք ու բարկ լուսնկայ* (Հ, 85): Գիշերս ես դուս ելայ՝ *Մանր ու մեծ թաթաւն ի վերայ* (Հ, 44): Գիշերս ես ի դուրս ելայ, *Ղարայկօզ ու բարկ լուսունկայ* (Հ, 249): Գիշերս ես ի դուրս ելայ, *Մութ գիշեր*, չըկայ լուսունկայ (Հ, 249): «Առաւօտուն դուրս ելայ, *Թուխ ամպ էր*, անուշ կու ցօղար» (Հ, 755) նախադասությունը բայական միադիմի կառույց է և ունի կանոնավոր քերականական ձևավորվա-

³⁵⁰ Հմնտ. Ա՛խ, կըմեռնեմ՝ ամա նա *Վա՛յ թէ* հանկարծ իմանա (ՀԹ3, 101):

³⁵¹ Պահպանել ենք բնագրի կետադրությունը՝ *քաւ ալ, թէ, ..., քաւ էլ, թէ...*, մինչդեռ ՄՀԲ-ում բերվում է ՔԱԻԵԼ ԹԵ//ՔԱԻԵԼ ԹԵ//ՔԱԻ ԷԼ ԹԵ տարբերակներով բառահոդվածի ներքո, բնագրային բոլոր օրինակներն էլ՝ առանց տրոհման՝ Փառք կուտամ ստեղծողիդ, *քաւ էլ թէ* քեզ նման դու ես և այլն:

ծութուն: «Առաւօտուն դուրս ելայ, *Թուխ ամպեր*, անուշ կու ցոյար» (Հ, 755) և «Գիշերս ես ի դուրս ելայ, *Թուխ ամպեր ' անուշ կու ցոյայ*» (Հ, 265) կառույցների ընդգծված նախադասություններն անվանական միակազմ դիտելու դեպքում առկախ է մնում *անուշ կու ցոյար* նախադասության կազմության հարցը, կամ պետք է ենթադրել, որ միջին հայերենում դիմասահմանափակ էր նաև *ցողալ* բայը: Իսկ Գիշերս ես ի դուրս ելա, *Թուխ ամպերն անուշ կու ցողայ* (Հ, 250) կառույցի խնդրո առարկա նախադասությունը կարելի է դիտել երկկազմ, թեև առկա է ենթակայի և ստորոգյալի անհամաձայնություն, ինչը միջին հայերենին բնորոշ լեզվական իրողություն էր:

4. Կան տեղանք, վայր նկարագրող և մի շարք այլ նախադասություններ, որոնք կարելի է արժևորել տարբեր դիտանկյուններից. մի դեպքում դրանք կարելի է համարել թերի (զեղչված ստորոգյալով) երկկազմ, մյուս կողմից՝ անվանական միակազմ կառույցներ: Ահա դրանցից մի քանիսը՝ *Երկուքս ի մէկ մահալլայ*, Նա՝ ի յիս կարօտ, ես՝ ի նա (Հ, 101): *Իմ եարն ի դարիպութիւն*, Իր կրակն զիս կու երէ (Հ, 367): *Օտադ բաղչային վրայ*, Պաղ աղբիւր, ոսկի լուլայ (Հ, 753): *Ըստամպօլ բոլորը պաղչա, Մէջը վարդ, բոլորն ալ ըռահան* (Հ, 767): Հագեր ես քեմխա կապայ, *Ֆերէճէտ գերպայ սերասար* (Հ, 96) և այլն:

5. Առանց մեկնաբանելու համեմատենք նաև հետևյալ նախադասությունները՝ Երնէկ բերին գտնողին, Վա՛յ բերին կորսնցնողին (Հ, 658) և Երնէկ անոր գտնողին, Վա՛յ եկեր կորսնցնողին (Հ, 658): Կամ՝ – *Երկինք քեզ վկա*, ա՛յ, *Երկինք քեզ վկա*, ա՛յ: – *Երկինք քեզ վկայ, Երկիր և գետին*, Ի՛մ տուն, *Աստեղքն և լուսին* (Հ, 558): Լուսունկայ երկան գիշեր, Ես ի քու դրոնակդ իմ եկեր (Հ, 72) և Լուսինկայ՝ Ի երկան գիշեր, Ես ի քու դրոնակդ եմ եկեր (Հ, 666): *Երկինք ու գետին վկայ՝ Չեմ երեր, զքեզ չեմ մոռանայր* (Հ, 253): – *Երկինք ու գետինք*, ի՛մ ճան, *Լուսին՝ ' արեգակն*, ա՛յ (Հ, 560):

Միջին հայերենում բայական միակազմ նախադասությունների համեմատությամբ անվանական միակազմ նախադասությունները նկատելիորեն սակավ կիրառություն ունեն:

Ինչպես բայական անդեմ նախադասությունների մեջ, անվանական միակազմ նախադասություններում ևս ստորոգումը կատարվում է ոչ թե քերականական ձևային կիրառմամբ, այլ հնչերանգով (տվյալ դեպ-

քում հնչերանգը քերականական ձևի դեր է կատարում³⁵²): Պատահական չէ, որ անվանական միակազմ կառույցներից շատերը կիրառվում են հուզականություն արտահայտելու համար՝ Դարձաւ ու ճուղապ ետուր, Թէ՛ «Քանի՛ք չարն ու քանի՛» (Հ, 79): Խօ՛շ եար, քեզ լալով սէլամ (Հ, 90) և այլն:

Այս շարքում առանձնանում են իրենց կազմում կոչական ունեցող մի շարք կառույցներ, որոնք ժամանակին եղել են միակազմ նախադասության ուրույն տեսակ. նրանցում հնչերանգով իրականացվել է 2-րդ դիմային ստորոգում, ինչպես՝ Աղուր մի գնալ տեսայ, Կանչեցի, թէ՛ Կարմիր երես (Հ, 51): Շատ ձագերու մեջ լինիս Ու կանչես՝ Արծի՛ւ, գենեհար (Հ, 67): Երբ որ ես պզտիկ էի, Կանչեին ինձ՝ «Ոսկի տղայ» (Հ, 82):

Անվանական միակազմ նախադասություններով սովորաբար ներկայացվում է որևէ առարկայի առկայությունը առանց բայ-ստորոգյալի, որով նկարագրվող պատկերն ավելի տպավորիչ է դառնում, ինչպես՝ Գիշերս ես ի դուրս ելայ, Ղարայիօզ ու բարկ լուսունկայ (Հ, 248): Ես ալ ի դեմիկն ելայ, Նեղ սոխախ ու խիստ խալապայ (Հ, 43):

Մի շարք նախադասություններ էլ լավագույն միջոց են անեծք, օրհնանք, ողջույն, երդում (և այլն) արտահայտելու համար, և այս փաստը նույնպես վկայում է անվանական միակազմ նախադասությունների՝ ժողովրդախոսակցական ակունքներից ավանդված լինելու օգտին: Օրինակ՝ Բարն՛ ու հազար բարն՛, Արեգակ, իմ լոյս, իմ արև (Հ, 111): Երկինք ու գետինք վկա՝ Միբեր եմ ու չեմ մոռանար (Հ, 74-75): Նալէ՛թ այն սիրուն վերայ. Այս գիշեր կեսըս հալեցաւ (Հ, 76):

Նմանատիպ նախադասություններով արտահայտվում են զանազան զգացողություններ՝ ցանկություն, հրճվանք, ցավ, ամոսսանք և այլն, ինչպես՝ Ոնց որ քունն զիս տանի՛ Ամանաթ, որ այլ չի խօսիս (Հ, 46): Շալլայ, թէ շուտով դառնայ, Թէ չէ իմ հոգեկս կելնէ (Հ, 241): Հազար ամանաթ, հոգի՛, Յետև ինձ ըգսերըն թարկէ (Հ, 235): Նայ ելաւ և կանչեց՝ «Շապա՛ջ» (Հ, 118) և այլն:

Անվանական նախադասություններում, որոնց գերադաս անդամն արտահայտվում է ձայնարկությամբ, խոսքի հուզականությունն առավել քան ակնհայտ է, ինչպես՝ Երնեկ արևուս վրբայ, Դու ի մեր դռնակըն չես եկեր (Հ, 65): Իրնիկ ինձ հազար բերան, Իմ եարն մնաց ինձ պալաշ (Հ, 118):

³⁵² Ս. Գյուլբուղադյան, 1967, 17:

Հասա, չհասա եարիս, Վա՛յ հազար մորրս բերելուն (Հ, 71): Աւա՛ղ ու հազար բերան, Թ՛ ի՛նչ խելօք ի՛նչ անխելացայ (Հ, 82):

Վերևում քննված լեզվական իրողությունների տարատեսակ լուծումները վկայում են միջնադարյան հայ մարդու՝ լեզուն, պատկերավոր լեզվամտածողությունը խոսքի վերածելու հնարավորությունների, նախասիրությունների մասին:

Անվանական միակազմ նախադասությունները միջին հայերենին բնորոշ հաղորդակցական միավորներ են: Նրանք չեն առանձնանում լայն տարածվածությամբ, ինչը, սակայն, պայմանավորված է այդ նախադասությունների՝ գերազանցապես խոսքը ոճավորելու միջոց լինելու հանգամանքով:

Անվանական միակազմ նախադասությունները հիմնականում գործածվում են գեղարվեստական խոսքում: Պատահական չէ այդ նախադասությունների՝ հայրեններում և Վարդան Այգեկցու առակներում հաճախակի գործածությունը:

Անվանական միակազմ նախադասությունները լավագույն միջոց են որևէ իրողություն, երևույթ կամ հատկանիշ առանց ստորոգումի արտահայտելու: Այդ նախադասություններով ոչ միայն կատարվում է արտահայտվելիք խոսքի համառոտում, այլև ապահովվում է ասվածի տպավորչությունը: Կիրառելով այդպիսի միակազմ նախադասություններ՝ խոսքի հեղինակը խուսափում է ոճական հորանց առաջացնող երկկազմ նախադասությունների անվերջ շղթայից՝ դրանով իսկ շարադրանքին հաղորդելով անսովոր թարմություն:

ԳԼՈՒԽ 3

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌ-ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաղորդակցումն իրականանում է պարզ և բարդ նախադասություններով: Միջին հայերենի հաղորդակցական միավորներից է նաև բառ-նախադասությունը, որը պարզ նախադասության երկու հիմնական տեսակներից մեկի՝ միակազմ նախադասությունների մի ենթատեսակն է:

Որպես հաղորդակցական միավոր՝ բառ-նախադասությունները հայ լեզվաբանների ուսումնասիրության առարկա են անցյալ դարակեսից: Լեզվական այդ իրողությունը հայ լեզվաբաններից առաջինը նկատել է Գ. Ղափանցյանը, սակայն ելնելով իր աշխատության մեջ հետապնդվող նպատակադրումներից՝ նա ոչ թե խորապես քննել, այլ միակազմ նախադասությունների շարքում բերել է նաև բառ-նախադասությունների օրինակներ³⁵³: Թեև Գ. Ղափանցյանը գործածում է *բառ-նախադասություն* եզրույթը, սակայն դրանով նկատի ունի մեկ բառով արտահայտված բոլոր միակազմ նախադասությունները, որոնցում «գործողությունը ոչ թե տրամաբանական ակցիա է, այլ ավելի շուտ կամային-զգայական արտահայտություն»³⁵⁴՝ անկախ այն բանից, թե ո՞ր խոսքի մասով է արտահայտված նրանց գերադաս անդամը: Պատահական չէ, որ լեզվաբանը բառ-նախադասությունների շարքում բերում է ոչ միայն ոչ նյութական բառերով, այլև գոյականով, ածականով և բայով արտահայտված միակազմ հաղորդակցական միավորներ, ինչպես՝ «թե՛ յ» («чаю»-կայարանում), «գո՛ղը, գողը» ..., - «չաղմկե՛ լ», «զգաստ»³⁵⁵, «լռություն, սս, կամաց, մտիկ, չծխե՛ լ (բայ է), ավսոս ...»³⁵⁶ և այլն:

Ժամանակակից հայերենի միակազմ կառույցները (այդ թվում նաև բառ-նախադասությունները) առաջին անգամ ձևախմբատային դասակարգման և համակողմանի վերլուծության է ենթարկել Վ. Առաքելյանը³⁵⁷: Հաշվի առնելով ռուս շարահյուսագետների (Ա. Շախմատով, Վ. Վինոգրա-

³⁵³ Գ. Ղափանցյան, 1939, 170:

³⁵⁴ Նշվ. աշխ., 172:

³⁵⁵ Նշվ. աշխ., 168:

³⁵⁶ Նշվ. աշխ., 174:

³⁵⁷ Վ. Առաքելյան, 11-57:

դով, Ա. Պեշկովսկի և այլք) առաջ քաշած սկզբունքային դրույթները՝ Վ. Առաքելյանը ժամանակակից հայերենում առանձնացնում է միակազմ նախադասությունների երեք տեսակ՝ բայական, անվանական և բառ-նախադասություն³⁵⁸: Ըստ լեզվաբանի՝ ա) բառ-նախադասությունների գերադաս անդամ կարող են դառնալ այն «բառերը կամ առանձին մասերի չբաժանվող ամբողջական բառակապակցությունները, որոնք լրացումներ չեն ընդունում »³⁵⁹, բ) ժամանակակից հայերենի բառ-նախադասությունները լինում են *հաստատական, ժխտական, հարցական, հորդորական* և *արտահայտչական* (վերջիններն արտահայտվում են «ձայնարկություններով կամ դրանց մոտիկ բառերով»³⁶⁰:

Ի տարբերություն Վ. Առաքելյանի, որը բառ-նախադասությունների արտահայտման միջոց էր համարում թե՛ վերաբերականներ ու ձայնարկություններ և թե դրանց մոտիկ բառեր՝ Ս. Գյուլբուդաղյանը հստակեցնում է, որ ժամանակակից հայերենի բառ-նախադասությունների գերադաս անդամ կարող են դառնալ բացառապես վերաբերականներն ու ձայնարկությունները³⁶¹: Ավելի ուշ նա բառ-նախադասությունները համարում է ոչ թե միակազմ նախադասությունների առանձին տեսակ, այլ անդեն նախադասության ենթատեսակներից մեկը³⁶²:

Այսուհանդերձ, թե՛ վերաբերականների, թե՛ (առավել ևս) ձայնարկությունների առումով ունենք որոշ վերապահումներ: Բանն այն է՝ ա) ոչ բոլոր վերաբերականները (օրինակ՝ *ևս, նաև* և այլն) կարելի է գործածել որպես բառ-նախադասության գերադաս անդամ, բ) որոշ ձայնարկություններ այժի են ընկնում խնդրառական արժույթով. հնարավորություն ունեն պահանջելու ուժեղ կառավարմամբ խնդիր լրացում, և այդ դեպքում կազմվում են ոչ թե բառ-նախադասություններ, այլ անվանական միա-

³⁵⁸ Վ. Առաքելյանը դրանք անվանում է *բայական, անվանական* և *բառական*՝ նկատելով, որ վերջինս կոչվում է նաև բառ-նախադասություն[2, 12]: Հետագայում այդ նախադասություններն ինքն էլ է անվանում բառ-նախադասություն[1, 276, 290-293]:

³⁵⁹ Վ. Առաքելյան, 1964, 52: Ս.Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոչյան, 1975, 290:

³⁶⁰ Վ. Առաքելյան, 1964, 57:

³⁶¹ Ս. Գյուլբուդաղյան, 1967, 196:

³⁶² Նշվ. աշխ., 122, 137-139:

կազմ կամ միադիմի միակազմ կառույցներ: Խոսքը մասնավորապես բայ-անուն հիշեցնող ձայնարկությունների մասին է, որոնք թեև կարող են հանդես գալ նաև առանձին, սակայն սովորաբար գործածվում են ուժեղ կառավարմամբ կապակցվող լրացման³⁶³: Ասվածը հիմնավորենք, օրինակ, *վա՜յ ձայնարկությամբ կամ նրա մասնակցությամբ արտահայտված, համապատասխանաբար, անվանական միակազմ [Եւ ասէ էշն. ես ոչ փողայիար եմ եւ ոչ խաղայցող. ասայ վա՛յ ինձ. գիտեմ, որ ծանդր բեռ կայ ինձ պահած եւ կամ ջուր կրելոյ ՚ի հարսանիսն (ՎԱԱ): Հազար վա՛յ անոր հոգւոյն, Որ զջուրն տարեալ թագուցեր (Հ, 933): Հասայ, չի հասայ սիրուս, Վա՛յ հազար մօրքս բերելուն (Հ, 365)³⁶⁴] և միադիմի [Նայ կրկգեալ վայեր զանձն իւր եւ լալով ասեր. վայ է ինձ, թափեցայ յագոյս եւ ձուկն ոչ ըմբռնեցի (ՎԱԱ)] նախադասություններով: Ինչպես նկատելի է, *վա՛յ-ը* առաջին դեպքում գերադաս անդամի գործառույթ ունի և պարտադիր պահանջում է տրականով (*բերելուն, ինձ, հոգւոյն*) արտահայտված խնդիր լրացում, երկրորդ դեպքում հանդես է գալիս որպես գերադաս անդամի բաղադրիչ և դարձյալ պահանջում է տրականով (*ինձ*) արտահայտված խնդիր լրացում: *Վա՛յ-ից* բացի՝ այս շարքում են նաև *վա՜շ, երնէ՜կ, աւա՜ղ, թո՛ւ* և այլ ձայնարկություններ, որոնք որպես գերադաս անդամ կիրառվում են թե՛ իբրև բառ-նախադասությունների գերադաս անդամ [- *Թո՛ւ ի ...*, - կարասների մոտ նստեց տնտեսության ղեկավարը (ՀՄ1, 356)], թե՛ միադիմի և/կամ անվանական միակազմ նախադասություններում {- *Թո՛ւհ դրանց վրա* (ՇՀ, 23)}: Ուստի և բառ-նախադասությունների շարքում նպատակահարմար է ուսումնասիրել միայն այն վերաբերականներն ու ձայնարկությունները, որոնք տվյալ կիրառության մեջ կամ առհասարակ չեն կարող լրացում պահանջել: Մինչդեռ այն ձայնարկությունները, որոնք իրենց բուն նշանակությամբ աչքի են ընկնում պարտադիր խնդրառությամբ, նպատակահարմար է քննության ենթարկել հենց այս կարգի ձայնարկություն-*

³⁶³ Հարկ եղած դեպքում այդ ձայնարկությունները, ուժեղ կառավարումից բացի, կարող են պահանջել նաև և՛ կառավարման, և՛ առդրության եղանակներով կապակցված ստորադաս բաղադրիչներ, ինչպես՝ *Եւ թափիմք յայս կենացս ու յայն կենացն. վա՛յ (մեզ-Գ.Խ.) ու Ռ. վայ (ՎԱԱ):*

³⁶⁴ Հմմտ. Հասա, չհասա սիրուն, *Վա՛յ հազար մօրքս բերելուն (Հ, 223):* Հասայ, չհասայ սիրուս *Վա՛յ հազար մօրս բերելոյն (Հ, 318):*

ները³⁶⁵:

Միջին հայերենի պարզ նախադասության շարահյուսական հավակարգում Պ. Վարդապետյանը ներկայացնում է միայն բայական և անվանական միակազմ կառույցներ³⁶⁶: Կարծում ենք՝ դա պայմանավորված է Պ. Վարդապետյանի առաջադիր խնդիրներով. նա միջին հայերենի միակազմ նախադասությունները ենթարկել է ոչ թե առանձին ծավալուն ուսումնասիրության, այլ դրանք ընդհանուր գծերով ներկայացրել է գրական հայերենի հիշյալ շրջանի պարզ նախադասությունների սահմաններում³⁶⁷:

Բառ-նախադասությունները մեկ բառով արտահայտված գերադասանդամ ունեցող այն միակազմ կառույցներն են, որոնք ցույց են տալիս խոսողի, խոսակցի կամ այլ անձի դատողական կամ զգացական վերաբերմունք: Օրինակ՝ Եւ կոծեցին վասն նորա ամենայն ազգք երկրի: *Այո՛, ամէն* (ՆԼ, 33, 4): Յայնժամ որ բժշկեցան, ասէ. Ո՛չ տեսանէք զուրբ առաքեալն Պաղոս և զվարդապետն Գեորգ ընդ նմա: Եւ ասէն. *Ոչ*: (ՊՎ, 424): Եւ ասէ աղուէն գաղտ ՚ի մարդն, թէ ինձ .Բ. շերտ պանիր բեր. որ քեզ լաւ դատաստան անեմ. եւ ասաց լծվարն. *այո՛ յ, քեզ տկով պանիր բերեմ* (ՎԱՍ)³⁶⁸:

Խոսողի, խոսակցի կամ այլ անձի դատողական կամ զգացական վերաբերմունք կարող են ցույց տալ թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական իմաստով բնութագրվող խոսքի մասեր, սակայն ի տարբերություն վերաբերականների և ձայնարկությունների՝ նյութական խոսքի մասերով արտա-

³⁶⁵ Վ. Առաքելյանը, առանձնացնելով հանդերձ ձայնարկությամբ արտահայտված բառ-նախադասություններ (նա դրանք անվանում է *արտահայտչական*) նմանօրինակ տարբերակում չի կատարում, ինչը երևում է նրա բերած օրինակներից, որոնցում հանդիպում են և՛ տրականով խնդիր պահանջող (- *Երանի՛*), և՛ այդ հատկությունից զուրկ գերադասանդամներ (- *Ուր՞ էր թե՛ - Ա՛ն*) (Վ. Առաքելյան, 1964, 52-57):

³⁶⁶ Պ. Վարդապետյան, 1975, 134-141:

³⁶⁷ Բառ-նախադասությունները քննության է առել նաև տողերիս հեղինակը՝ անդրադառնալով գրաբարի համապատասխան լեզվական իրողություններին (Գ. Խաչատրյան, 2002, 200-204):

³⁶⁸ Բնագրերում այս կարգի նախադասությունները հաճախ տրոհվում են ոչ թե վերջակետով կամ միջակետով, այլ ստորակետով: Ստորակետով տրոհված լինելու դեպքում մենք գնահատել ենք այդ միավորների հարաբերական անկախությունը՝ փորձելով այդ շարքից դուրս թողնել միջանկյալ բառի գործառույթով հանդես եկող միավորները:

հայտված՝

ա) վերաբերմունքը կամ զգացողությունն ունի շոշափելի իմաստ՝ Ահա մեծ *ամօթ* է ինձ (Հ, 835):

բ) գերադաս անդամն անհրաժեշտության դեպքում կարող է լրացում պահանջել՝ Եւ նա ասէ, *կարի քաջ*, ո՛վ ազուաւ, բայց ՚ի մտաց պակաս ես (ՎԱԱ):

Ասվածն ինքնին նշանակում է, որ բառ-նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել միայն ոչ նյութական (տվյալ դեպքում՝ դատողական կամ զգացական) իմաստ արտահայտող խոսքի մասերով, այն է՝ վերաբերականներով և ձայնարկություններով, որոնք, որպէս կանոն, չեն կարողանում կապակցվել այլ բառերի և դառնալ լրացում-լրացյալ կապակցության անդամ:

Նշենք, որ միջինհայերենյան աղբյուրներում արտահայտչական բառ-նախադասություններ չեն հանդիպում, իսկ վերաբերականներով արտահայտված բառ-նախադասությունները (հաստատական և ժխտական), որոնք հիմնականում ավանդվել են գրաբարից, սակավադեպ են³⁶⁹:

Միջինհայերենյան բնագրերում բառ-նախադասություններն արտահայտվում են *ամէն, այո//այոյ* հաստատական և *չէ, քաւ լիցի* ժխտական վերաբերականներով: Օրինակ՝ Եւ ասէ առիծն ՚ի սպառնալեալք, թէ դո՞ւ ես մարդն, որ նեղես զամենայն կենդանիս. եւ նայ ասէ. *այոյ* (ՎԱԱ): Գոհանալով փառաւորենք զնա, որ զարարածս ստեղծեաց եւ զամենեսեան կերակրեաց իւր շնորհիւն, եւ նմա փառք յաիւտեանս. *ամէն* (ԱՍՕԲ): Ասացաք, թէ Չէ. մեք մեղաւոր մարդ ենք (ՎՎՀՊ): Ասէ ցնոսա «Փեղամբերն ձեր հրաման տուեալ է ձեզ չարագործութեան»: Ասեն ցնա «*քաւ լիցի*» (ԹՄԼԹ, 63)³⁷⁰:

Բառ-նախադասություններում առկա *ամէն, այո//այոյ* և *չէ* գերադաս անդամների մասին անհրաժեշտ է նշել, որ՝

1. *ամէն* բառը գրաբարյան բնագրերում գործածվում է թե՛ նախադաս շարադասությամբ (*Ամէն* ասեմ քեզ), թե՛ վերջադաս (Որ է օրինեալ

³⁶⁹ Դրանով է պայմանավորված այն, որ աշխատության գլուխների ծավալները խիստ անհամաչափ են:

³⁷⁰ Հմմտ. որ տեսանէ զսիրելի որդի իւր ի տառապանս, ասէ. «*Քաւ լիցի քեզ*, որդի, հեռի ի քեզանէ» (ԴԶ, 73):

յալիտեանս, *ամէն*): Բոլոր նախադաս կիրառություններում *ամէն* բառն ունի մակբայական նշանակություն, ինչի մասին վկայում են նաև ՆՀԲ-ի հեղինակները նույն բառահոդվածում. «Ի սկիզբն բանից նշանակէ, Ստոյգ, ստուգութեամբ. արդարև. ճշմարտապէս »՝ հավելելով, որ նախադասությունների վերջում *ամէն*-ը « նշանակէ, Այո՛ այդպէս է, և այդպէս եղիցի»³⁷¹: Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ գրաբարում *ամէն* բառը վերջադաս կիրառությամբ ուներ նաև վերաբերականի նշանակություն³⁷² և կարող էր կատարել բառ-նախադասության գերադաս անդամի գործառույթ³⁷³:

Միջինհայերենյան աղբյուրներում *ամէն* բառը գործածվում է միայն վերջադաս: Նրանով արտահայտված բառ-նախադասությունները կազմությամբ համառոտ են, որով տեղի է ունենում խոսքի ոճավորում. այս կամ այն նախադասության վերջում *ամէն* գործածելով՝ հեղինակը խոսքին հաղորդում է լրացուցիչ հավաստիություն: Նկատենք, որ ոճավորման այս հնարքին սակավաթիվ հեղինակներ են դիմում, որոնցից են՝ Վարդան Այգեկցին և Ամիրդովլաթ Ամասիացին: Օրինակ՝ Եւ այսէ Ղ. բաժանումն բնութեան խառնուածոց կամօքն աստուծոյ. *ամէն* (ԱԱՕԲ): Եւ պարոն յոյժ սիրեաց զնա՛. փառք Աստուծոյ. ամէն (ՎԱԱ): Եւ Քրիստոսի փառք յալիտեանս, *ամէն* (ՎԱԱ) և այլն:

2. *Այո՛* բառը գրաբարյան բնագրերում համարվում է մակբայ նույն հիմունքով, որով *ամէն* բառն է համարվում³⁷⁴: Հատկանշական է, որ *այո՛*-ն գերազանցապես մեկնաբանվում է այնպես, ինչպես *ամէն*-ը, այն է՝ «այդ այդպէս է», «արդարև», «յիրալի», «ամէն ասեմ» իմաստներով, և, ինչպես *ամէն*-ը, գործածվում է թե՛ միայնակ, թե՛ կրկնությամբ: Հմնտ. *Այո՛ այո՛*, և

³⁷¹ ՆՀԲ, 91:

³⁷² ՆՀԲ-ի հեղինակները *ամէն*-ը համարում են մակբայ (տե՛ս հիշյալ բառահոդվածը) այն պատճառով, որ տվյալ ժամանակաշրջանում վերաբերականները առանձին խոսքի մաս չէին համարվում, այլ դիտվում էին մակբայի մի տեսակ:

³⁷³ Նույն բառահոդվածի բնագրային օրինակներից մեկում բերվում է *ամէն* բառի իմաստը՝ «Է ամէնն եբրայեցի բարբառով, այո՛ և արդարև»: Իսկ մեկ այլ օրինակում՝ «Զամէնն ոմանք՝ եղիցի թարգմանեցին, և կէսք՝ այո՛, և այլք՝ ճշմարիտ»:

³⁷⁴ Տե՛ս նաև. 372:

ես եւ ի նոցանէ (ՆՀԲ, 115) և *Սսէն սսէն* ասեմ ձեզ (ՆՀԲ)³⁷⁵:

Միջին հայերենում *այո*-ն գործածվում է երկխոսությունների պատասխանական խոսքերում, ինչպես՝ Եւ ասեն ծնողք նոցա ցնոսայ. լսէ՞ք զայն ձայնն. եւ նոքայ ասեն. *այոյ*. զի՞նչ է այն (ՎԱԱ): Յանժամ ասաց վարդապետն, թէ ... մեկ անկամ զԱստուած ՚ի միտդ ձգէ եւ ապայ առ զգանձն եւ գնայ. եւ ասաց. *ա՛յոյ*, հայր սուրբ (ՎԱԱ) և այլն: Լեզվական աղբյուրներում *այո*-ն սովորաբար հաջորդում է հեղինակի խոսքին՝ ուղղակիորեն մեջբերվող խոսքում գրավելով նախադաս կամ միջադաս դիրք, ինչպես՝ Ասէ աղուէսն ընդ ագռան, թէ ձայնդ աղեկ է՝ *այոյ*. զամենայն տեղիքդ յաւելէ ունիս թագաւորութեան (ՎԱԱ): Եւ ասէ առուծն. միթէ դու ես մարդն, որ փախուցանես զգազանս յանայպատէ. եւ նայ ասէ. *այոյ*, ես եմ (ՎԱԱ): Պատասխանի ետ առիծն հանդարտայբար եւ ասէ. *այո՛յ*, մի կորիւն ծնանիմ, բաց առիծ ծնանիմ եւ ոչ աղուէս քան զքեզ (ՎԱԱ): Ասէ յընկերն իւր. եկ գաս, որ բաժանեմք զկարպետն. եւ նայ ասէ. *այո՛յ* զամ. (ՎԱԱ):

3. *Չէ* ժխտական վերաբերականը լեզվական աղբյուրներում թեև հազվադեպ է, սակայն համոզված ենք, որ այն բանավոր խոսքում ամենահաճախ գործածվող վերաբերականների շարքում է եղել դեռևս միջին հայերենի առաջին շրջանից: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ այդ բացառիկ վկայության հեղինակը 13-րդ դ. պատմիչ Վարդան Վանականն է, որը իր պատմության տվյալ հատվածը շարադրել է տվյալ ժամանակաշրջանի խոսակցական լեզվով:

4. *Քաւ լիցի* («ոչ», «աստված մի արասցե», «թող չլինի (այնպես)» և այլն) վերաբերականը միջին հայերենին ավանդվել է գրաբարից, որում *քաւ*-ը կայուն կապակցություն է ձևավորում ոչ միայն *լիցի*-ի հետ, այլև գործածվում է և՛ առանձին (*Քա՛ւ*. մի երբէք դիցէ արքայ ի վերայ ծառայի իւրոյ այդպիսի բան), և՛ կրկնավոր բարդության կազմում (*քաւ քաւ*), և՛ տրականով խնդրի հետ (*քաւ քեզ*)՝ կատարելով անվանական կամ բառնախադասության գերադաս անդամի գործառույթ³⁷⁶: Միջին հայերենում *քաւ լիցի*-ով արտահայտված բառ-նախադասություններն ունեն ոճական արժեք և համարվում են գրաբարաբանության արտահայտություն:

³⁷⁵ Հմմտ. *Սսէն, սսէն եւ եղիցի* (ՄԹ):

³⁷⁶ Տե՛ս ՆՀԲ-ի համապատասխան բառահոդվածը:

Ի տարբերություն բայական և անվանական միակազմ նախադասությունների, որոնք խոսքի մեջ կազմությամբ կարող են լինել թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ, այսինքն՝ արտահայտվել միայն գերադաս անդամով կամ գերադաս անդամով ու վերջինիս լրացում(ներ)ով՝ բառ-նախադասությունները կազմությամբ լինում են միայն համառոտ, ինչպես՝ Եւ ամէն կերպով տղական օգտակար մօրն կաթն է. *ամէն* (ԱԱՕԲ):

Բառ-նախադասությունները, ինչպես անվանական միակազմ կառույցները խոսքի ռճավորման լավագույն միջոց են. նրանց կիրառությամբ խոսողը համառոտում է իր ասելիքը՝ խուսափելով ընդարձակ նախադասություններ գործածելուց:

Բառ-նախադասությունները միջին հայերենում գործածվում են հիմնականում գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ այնպիսի աղբյուրներում, որոնցում առկա են ուղղակիորեն մեջբերվող խոսքեր (մասնավորապես՝ երկխոսություններ), քարոզներ, հրապարակային հայտարարություններ և այլն:

Ինչպես բայական անդամ և անվանական միակազմ նախադասությունները, բառ-նախադասությունները ևս միջին հայերենում գեղարվեստական երկին հաղորդում են հուզական շունչ:

Բառ-նախադասությունները միջին հայերենում լայն կիրառություն չունեն, ինչը պայամավորված է նաև այդ նախադասությունների արտահայտության սահմանափակ միջոցներով:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Միակազմ նախադասությունները լեզվամտածողության դրսևորումներ են և տարբեր լեզուների զարգացման տարբեր ժամանակահատվածներում հանդես են բերում արտահայտության ու բովանդակության պլանների առանձնահատկություններ: Շնորհիվ վերջիններիս՝ միակազմ նախադասություններն էապես տարբերվում են երկկազմ կառույցներից՝ ներկայացնելով պարզ նախադասության երկու հիմնական տեսակներից մեկը: Միակազմ նախադասությունները երկկազմներից տարբերվում են նաև կիրառության առումով. ոչ բոլոր խոսքային իրադրություններում կարելի է գործածել միակազմ նախադասություն: Անհրաժեշտության դեպքում անգամ կարելի է խուսափել միակազմ նախադասությունների կիրառումից՝ դրանք փոխարինելով համարժեք երկկազմ կառույցներով:

Մասնավորապես միջին հայերենի միակազմ նախադասությունների ուսումնասիրությունից հանգում ենք այն հետևության, որ կախված սկզբնաղբյուրների թեմատիկայից, դրանց հեղինակների լեզվամտածողության յուրօրինակություններից, ասելիքը վերարտադրելու հնարավորություններից ու այլ հանգամանքներից (գրագիտության մակարդակ, միջավայր, ժամանակաշրջան և այլն)՝ տարբեր սկզբնաղբյուրներում միակազմ նախադասությունների և նրանց տարբեր տեսակների գործածության առումով նկատվում են մի շարք անմիօրինակություններ և անհամաչափություն:

Շնորհիվ միակազմ կառույցների՝ միջին հայերենում խույս է տրվում երկբաղադրիչ նախադասությունների միապաղաղ շղթայից և կիրառվում համառոտ, բայց ընթերցողին (խոսակցին) լիովին հասկանալի հաղորդակցական միավորներ:

Որքան այս կամ այն սկզբնաղբյուրի ակունքները մոտ են խոսակցական լեզվին, այնքան դրանցում ավելի հաճախադեպ են միակազմ նախադասությունները, և ընդհակառակը:

Միջին հայերենում առանձնանում է միակազմ նախադասությունների երեք տեսակ՝ բայական (դիմավոր, միադիմի և անդեմ ենթատեսակներով), անվանական և բառ-նախադասություններ: Դրանցից առավել հաճախ հանդիպում են բայական, իսկ վերջիններիս շարքում՝ դիմավոր միակազմ նախադասությունները:

Անորոշ-դիմավոր նախադասությունները գործածվում են թե՛ ուղղակիորեն ու անուղղակիորեն մեջբերվող խոսքերում, թե՛ դրանցից դուրս: Ուղղակիորեն մեջբերվողները արտահայտվում են միայն անձնանիշ ենթականերին կապակցվելու հնարավորություն ունեցող անդիմասահմանափակ բայերի հրամայական եղանակով: Մակայն կախված խոսքային իրադրությունից և հեղինակի խոսքի կազմությունից՝ հրամայական եղանակի բայաձևերով կարող են արտահայտվել ոչ միայն երկկազմ, այլև ընդհանրական-դիմավոր նախադասություններ:

Ուղղակիորեն մեջբերվող նախադասությունների միակազմ կամ երկկազմ լինելու հարցում էական է երեք հանգամանք՝ ա) տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ կամ նրանից դուրս գործածվելը, բ) հեղինակի խոսքում հանգման խնդրի՝ բառային արտահայտություն ունենալը կամ բացակայությունը և գ) տվյալ նախադասության իմաստային կողմը:

Գերադաս անդամի կազմությունից բացի՝ եզակի և հոգնակի թվի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները բնորոշվում են միևնույն առանձնահատկություններով, սակայն եզակի թվի 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններ միջինհայերենյան աղբյուրներում չեն գործածվում՝ ի տարբերություն գրաբարի և ժամանակակից հայերենի, որոնցում նրանք թեև հազվադեպ, սակայն գործածվում են:

2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունները հանդես են գալիս միայն որոշակի խոսքային իրավիճակներում և միայն հեղինակի խոսքի զուգորդությամբ, նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր:

Մովորաբար հեղինակի խոսքի հանգման խնդիրը և ուղղակիորեն մեջբերվող խոսքի ենթական ու կոչականը մատնանշում են միևնույն անձին կամ անձերին՝ իրար կապակցվելով թվի քերականական կարգի համաձայնությամբ: 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասության զուգորդությամբ գործածվող հեղինակի խոսքում հանգման խնդիրը, որպես կանոն, բառային արտահայտություն չունի, և չի ենթադրվում, թե ում է հասցեագրված ուղղակիորեն մեջբերվող խոսքը: Այդ է պատճառը, որ ուղղակիորեն մեջբերվող այդօրինակ խոսքում բացակայում է և չի ենթադրվում ոչ միայն ենթական, այլև կոչականը, և տվյալ կառույցը ոչ թե երկկազմ, այլ միակազմ նախադասություն է:

2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, հակառակ դեպքում անհնար կլիներ հիշատակել պատասխան խոսքի գուգորդությամբ գործածվող հեղինակի խոսքի ենթական: Մա նշանակում է, որ այդ նախադասությունների մասնակցությամբ երկխոսություններ չեն ձևավորվում (հակառակ դեպքում դրանք չեն լինի անորոշ-դիմավոր նախադասություններով արտահայտված գործողություններին առնչվող համարժեք պատասխաններ):

2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասություն պարունակող խոսքային հատվածներին բնութագրական է և այն, որ նրանք սովորաբար եզրափակվում են մեկ այլ անորոշ-դիմավոր նախադասությամբ, որը տեղեկություն է տալիս 2-րդ դեմքով հրամանի կամ հորդորի կատարման կամ չկատարվելու մասին և արտահայտվում են ոչ թե 2-րդ, այլ հոգնակի թվի 3-րդ դեմքով:

2-րդ դեմքով գործածված անորոշ-դիմավոր նախադասությունները հանդիպում են այնպիսի իրադրությունների նկարագրություններում, որոնցում արտահայտվում են անմիջական կատարման ենթակա հրաման, հորդոր կամ խնդրանք: Նրանցում արտահայտվում են տվյալ խոսքային հատվածի տրամաբանությունից բխող մասնակի, առօրյա, իրավիճակային, տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված և նրանով սահմանափակվող և ոչ թե բոլորին կամ որոշակի անձի (անձերի) վերաբերող գործողություններ: Խոսողը ուղղակիորեն մեջբերվող խոսքով դիմում է ներկա, սակայն անորոշ անձի կամ անձանց՝ հրամայելով, հորդորելով կամ խնդրելով կատարել այս կամ այն որոշակի գործողությունը:

Ի տարբերություն 2-րդ դեմքով անորոշ-դիմավոր նախադասությունների, որոնք գործածվում են որոշակի խոսքային իրավիճակում և հեղինակի խոսքի պարտադիր գուգորդությամբ՝ նույն դեմքով ընդհանրական-դիմավոր նախադասությունները կարող են գործածվել նաև խոսքային իրավիճակից դուրս և առանց հեղինակի խոսքի:

Եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքով ուղղակիորեն մեջբերվող անորոշ-դիմավոր նախադասությունները բնորոշ են ոչ միայն միջին հայերենին, այլև գրական հայերենի նախորդ շրջանին՝ գրաբարին, և ժամանակակից հայերենին:

Ի տարբերություն 3-րդ դեմքով արտահայտվող անորոշ-դիմավոր նախադասությունների՝ 2-րդ դեմքով արտահայտվողները առանձնանում

են սահմանափակ կիրառությամբ: Ասվածը պատճառաբանվում է նրանով, որ վերջիններս գործածվում են՝ ա) խոսքը ոճավորելու նպատակով, բ) գերազանցապես արձակ ստեղծագործություններում, գ) որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք:

Հիշյալ նախադասությունները լայն տարածում չունեն: Նրանք գործածական են մասնավորապես պատմական բնույթի գեղարվեստական ստեղծագործություններում և ժողովրդական բանահյուսության մեջ (հեքիաթներ, առակներ)՝ հանդես գալով որպես խոսքի ոճավորման միջոց:

Ընդհանրական-դիմավոր նախադասություններ նկատելիորեն հաճախադեպ են որոշ միջինհայերենյան աղբյուրներում, ինչը, անշուշտ, պայմանավորված է վերջիններիս բովանդակությամբ. ընդհանրական-դիմավոր նախադասությունների միջոցով հեղինակները տարատեսակ խորհուրդներ, հանձնարարություններ, հորդորներ են տալիս խոսակցին և առհասարակ՝ ընթերցողին:

Միջին հայերենում ընդհանրական-դիմավոր նախադասությունների գերադաս անդամների արտահայտության հիմնական միջոցներն են հրամայական ապառնու եզակի և հոգնակի 2-րդ, ինչպես նաև այլ եղանակների հոգնակի 3-րդ դիմային ձևեր: Եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքերով արտահայտված ընդհանրական-դիմավոր նախադասությունները, չնայած արտահայտության տարբեր միջոցներին, շարահյուսական համանիշներ են: Պատահական չէ, որ հիշյալ նախադասություններում որպես գերադաս անդամ երբեմն գործածվում են նույն բայի հրամայականի՝ մի դեպքում եզակի, մյուս դեպքում՝ հոգնակի ձևեր. չէ՞ որ երկու դեպքում էլ խոսքն ուղղվում է ընդհանուրին:

Հրամայական եղանակի բայաձևերը գերազանցապես գրաբարատիպ են՝ միջին հայերենին բնորոշ հնչյունափոխությունների ենթարկված: Հրամայական ապառնու դրական խոնարհման համակարգի՝ -է վերջավորությամբ բայաձևերի հաճախակի կիրառությունը պայմանավորված է նրանով, որ հեղինակները գրում են միջին հայերեն՝ գերազանցապես գործածելով առտնին գործողություններ ցույց տվող և գործուն բառապաշարի մաս կազմող է խոնարհման պարզ բայեր, որոնք համեմատաբար մեծաթիվ են: Վերջին հանգամանքը պայմանավորված է նրանով, որ՝ ա) հիշյալ բայերի մի մասը միջին հայերենը ժառանգել է գրաբարից, մյուսները հենց միջինհայերենյան միավորներ են, բ) ավելի հաճախ շարադրվում է ընդ-

հանրական-դիմավոր կառույցներով, որոնց գերակշիռ մասի գերադաս անդամն արտահայտված է հ խոնարհման պարզ բայերի եզակի թվի 2-րդ դեմքով:

Հրամայական ապառնու և՛ դրական, և՛ ժխտական խոնարհումներում առկա են ոչ միայն երկբաղադրիչ, այլև եռաբաղադրիչ ու բազմաբաղադրիչ զուգաձևեր, որոնցով ուրվագծվում են հրամայական ապառնու արտահայտման միջոցների հետագա զարգացումները թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն բայերի շարքում: Չուգաձևերի՝ նույն երկում առկայությունը վկայում է միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում (15-16-րդ դդ.) առկա լեզվական իրավիճակի և մասնավորապես այն բանի մասին, որ խոսակցական լեզվին բնորոշ էին քերականական միևնույն իրողությունը բառաքերականական զուգաձևություններով արտահայտելը, ինչը հանդիպում է ոչ միայն միջին հայերենի տարբեր ենթաշրջանների լեզվական աղբյուրներում և ոչ միայն նույն ենթաշրջանի տարբեր հեղինակների բնագրերում, այլև նույն երկի մի շարք հատվածներում, անգամ՝ միևնույն պարբերության մեջ:

Միջին հայերենում միադիմի միակազմ նախադասություններն արտահայտվում են կա՛մ միադիմի բայերով, կա՛մ էլ նրանց մասնակցությամբ: Միադիմի բայերով արտահայտվող նախադասությունները միջին հայերենում անհամեմատ սակավաթիվ և սակավադեպ են, ինչն առաջին հերթին պայմանավորված է ենթակաառությամբ արժույթագուրկ, այսինքն՝ ի սկզբանե դիմասահմանափակ (միադիմի) բայերի ցույց տված իմաստով և սահմանափակ թվով:

Միադիմի նախադասությունների մեծ մասի գերադաս անդամը կազմությամբ բաղադրյալ է, և բաղադրիչներից մեկը, որպես կանոն, արտահայտվում է միադիմի բայաձևով: Այս կարգի միակազմ նախադասություններն ունեն արտահայտության մի շարք մասնակադասարներ և ենթամասնակադասարներ, որոնց զգալի մասն աչքի է ընկնում հաճախակի կիրառությամբ: Միադիմի բայաձևերի գործառնությով հանդես են գալիս որոշ անդիմասահմանափակ բայերի եզակի թվի 3-րդ դիմային ձևեր նույնպես: Վերջիններիս շարքում առանձնանում է հւ՛ բայի սահմանական ներկայի հ-ն, որը մասնակցում է բաղադրյալ գերադաս անդամ ունեցող գրեթե բոլոր միադիմի նախադասությունների կազմությամբ:

Ըստ խոսքի մեջ գործածության՝ միադիմի նախադասությունները

միջին հայերենում բաժանվում են երկու խմբի՝

1. անկախ միադիմի նախադասություններ, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս որպես ինքնուրույն հաղորդակցական միավոր, սակայն հարկ եղած դեպքում կարող են գործածվել նաև որպես բարդ կառույցի բաղադրիչ նախադասություն,

2. զուգորդվող միադիմի նախադասություններ, որոնք անպայման հանդես են գալիս միայն բարդ ստորադասական կառույցներում՝ կատարելով գլխավոր նախադասության գործառույթ և պահանջելով ենթակա երկրորդական նախադասություն, որի հետ զուգորդվող միակազմ նախադասությունը ձևավորում է երկկազմ կառույց, մինչդեռ առանձին՝ զուգորդվող նախադասությունը միակազմ է:

Անկախ միադիմի միակազմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի կամ նրա բայական բաղադրիչի սեռի քերականական կարգի, լինում են երկու տեսակ՝ իրենց ենթատեսակներով.

1. չեզոք սեռի միադիմի բայերով արտահայտվող անկախ միադիմի նախադասություններ,

2. չեզոք սեռի միադիմի բայերի մասնակցությամբ արտահայտվող անկախ միադիմի նախադասություններ:

Զուգորդվող միադիմի միակազմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի կամ նրա բայական բաղադրիչի սեռի քերականական կարգի, լինում են երեք տեսակ՝ իրենց ենթատեսակներով.

1. չեզոք սեռի միադիմի բայերով արտահայտվող զուգորդվող միադիմի նախադասություններ,

2. չեզոք սեռի միադիմի բայերի մասնակցությամբ արտահայտվող զուգորդվող միադիմի նախադասություններ,

3. կրավորական սեռի բայաձևերով արտահայտվող զուգորդվող միադիմի նախադասություններ:

Միադիմի նախադասությունների արտահայտության մի շարք մասնակաղապարներ միջին հայերենին են անցել գրաբարից: Խոսքը վերաբերում է և՛ անկախ, և՛ զուգորդվող միադիմի նախադասություններին: Նկատելի է, որ գրաբարից միջին հայերենին անցած միադիմի նախադասությունների մի մասը միջին հայերենին հարազատ լեզվական իրողություններ են և աչքի են ընկնում հաճախակի գործածությամբ: Ասվածին հակառակ՝ գրաբարյան որոշ միադիմի կառույցներ միջին հայերենում գործած-

վում են խոսքի ոճավորման նպատակով: Այդօրինակ կառույցներ ոչ բոլոր սկզբնաղբյուրներում են հանդիպում, սակավադեպ են և ունեն արտահայտության միջոցների սահմանափակություն նույնպես:

Որոշ միադիմի նախադասությունների բովանդակության պլանը հայտնի է դեռևս գարաբարից, սակայն միջին հայերենում ձեռք է բերել արտահայտության նոր միջոցներ:

Մի քանի միադիմի կառույցներ էլ թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլաններով զուտ միջինհայերենյան լեզվական իրողություններ են:

Միջին հայերենում ակնհայտորեն սակավադեպ են անդեմ բայով արտահայտված բայական միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը սովորաբար անձնանիշ առարկաների կապակցվելու հատկանիշով առանձնացող դերբայ է: Վերջին հանգամանքը պայմանավորված է նրանով, որ բայական անդեմ նախադասություններով արտահայտված գործողությունը սովորաբար վերաբերում է կա՛մ որոշակի դեմքի, կա՛մ ընդհանրապես բոլորին: Միակազմ նախադասությունների այս տեսակը հաճախադեպ չէր նաև գրաբարում և ոչ բոլոր հայ հեղինակների բնագրերում էր հանդիպում. այն ավելի շատ բնորոշ էր թարգմանական գրականությանը:

Միջին հայերենում անդեմ միակազմ նախադասությունները գրեթե առանց բացառության գործածվում են որպես խոսքի ոճավորման միջոց, ինչը վկայում է նրա մասին, որ այդ կառույցները խորթ էին գրական հայերենի այդ շրջանին:

Միջինհայերենյան աղբյուրներում արձանագրվել են ոչ միայն գրաբարից ավանդված անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամն արտահայտվում է անորոշ դերբայով, այլև միջին հայերենին բնորոշ անդեմ նախադասություններ՝ արտահայտված հարակատար դերբայով:

Բայական անդեմ նախադասություններից բացի՝ միջին հայերենում սահմանափակ գործածություն ունեն նաև անվանական միակազմ նախադասությունները: Սրանց գերադաս անդամը գերազանցապես արտահայտվում է գոյականով և միայն որոշ կառույցներ են կազմվել ածականով կամ ձայնարկությամբ: Վերջինով արտահայտված կառույցներին անվանականների շարքում տեղ ենք տվել՝ հաշվի առնելով նրանց՝ լրացում պահանջելու հատկանիշը, որը դրսևորվում է պարտադիր խնդրառությամբ:

Անվանական միակազմ նախադասություններով ցույց է տրվում որևէ առարկայի, իրողության կամ երևույթի առկայությունը կամ բացակայությունը և կամ էլ արտահայտվում է վերաբերմունք՝ պայմանավորված այս կամ այն հանգամանքով: Անվանական միակազմ նախադասությունները արտահայտության և/կամ բովանդակության պլան(ներ)ով առնչվում են՝ ա) բայական միադիմի, բ) բայական անդեմ և գ) բառ-նախադասություններին, սակայն էապես տարբերվում են նրանցից.

Անվանական միակազմ նախադասությունները հիմնականում գործածվում են գեղարվեստական խոսքում. պատահական չէ այդ նախադասությունների՝ մի դեպքում Այգեկցու առակներում, մյուս դեպքում՝ հայրեններում հաճախակի գործածությունը:

Անվանական միակազմ նախադասությունները որևէ իրողություն, երևույթ առանց ստորոգումի արտահայտելու լավագույն միջոց են: Նրանցով ոչ միայն կատարվում է արտահայտվող խոսքի համառոտում, այլև ապահովվում է ասվածի տպավորչությունը: Այդ նախադասությունները ևս, ինչպես մյուս միակազմ կառույցները, գործածվում են խոսքը լակոնիկ դարձնելու համար. դրանք կիրառելով՝ հեղինակը խուսափում է ռճական հորանջ առաջացնող երկկազմ նախադասությունների անվերջ շղթայից՝ դրանով իսկ շարադրանքին հաղորդելով անսովոր թարմություն:

Անվանական միակազմ նախադասությունները միջին հայերենին են ավանդվել գրաբարից:

Միջին հայերենի միակազմ նախադասությունների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում բառ-նախադասությունները, որոնք բոլոր միակազմ նախադասություններից տարբերվում են և՛ կազմության, և՛ բովանդակության յուրօրինակություններով. բառ-նախադասությունները անկախ գործածվող և կազմությամբ համառոտ հաղորդակցական միավորներ են, որոնք հնարավորություն չունեն ընդարձակ նախադասության վերածվելու: Ավելին՝ կորցնելով անկախ գործածությունը՝ բառ-նախադասությունը խոսքային ուրիշ իրավիճակներում կարող է հանդես գալ այլ նախադասության կազմում: Այս դեպքում այն կորցնում է իր անկախությունը և արդեն վերածվում տվյալ նախադասության հարակից անդամի: Այդ է պատճառը, որ խոսքի շղթայում բառ-նախադասության առանձնացումը հաճախ ունի նաև սուբյեկտիվ կողմ: Միջին հայերենում բառ-նախադասությունները չունեն արտահայտության տարատեսակ միջոցներ.

դրանք ըստ անհրաժեշտության գործածվող որոշ վերաբերականներ և ձայնարկություններ են, որոնք տվյալ դեպքում (իսկ մի մասը՝ առհասարակ) գուրկ են լրացում պահանջելու հատկանիշից:

Բառ-նախադասությունները բովանդակության պլանում առնչություններ ունեն այն միադիմի նախադասություններին, որոնցով նույնպես արտահայտվում է զգացական կամ իրատեսական վերաբերմունք, սակայն միադիմի նախադասություններում այդ վերաբերմունքն ունի որոշակի կամ ընդհանրական կրող:

Բառ-նախադասություններն առնչվում են նաև այն անվանական նախադասություններին, որոնք կամությանմբ համառոտ են. չունեն որևէ երկրորդական անդամ: Մակայն էթե միաբառ անվանական նախադասություններում նկարագրվում, արձանագրվում է որևէ հանգամանք կամ իրողություն, ապա բառ-նախադասությունների միջոցով արտահայտվում են զգացական և տրամաբանական ապրումներ, դատողություններ և այլն:

Միջին հայերենին բնորոշ բայական միակազմ նախադասությունների հիմնական մասը (դիմավոր և անդեմ նախադասությունները և միադիմի նախադասությունների մի շարք տեսակներ), ինչպես նաև անվանական և բառ-նախադասությունները արտահայտության պլանի որոշ փոփոխություններով ավանդվել են ժամանակակից հայերենին:

Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան – բ.գ.դ., պրոֆ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ գրաբար, միջին հայերեն, հայոց լեզվի պատմություն, գրական հայերենի շարահյուսություն, ոճաբանություն, բառարանագրություն: Հեղինակել է 7 մենագրություն և 100-ից ավել հոդված:

gxachatryan@yahoo.com

ОДНОСОСТАВНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

РЕЗЮМЕ

Односоставные предложения являются проявлением языкового мышления и в разные периоды развития разных языков проявляют особенности в плане выражения и содержания. Благодаря последним односоставные предложения существенно отличаются от двусоставных структур, представляя один из двух основных типов простого предложения. Односоставные предложения также отличаются от двусоставных в плане употребления: не во всех речевых ситуациях можно использовать односоставные предложения. При необходимости даже можно избежать использования односоставных предложений, заменив их эквивалентными двусоставными конструкциями.

В частности, из изучения односоставных предложений в среднеармянском языке мы приходим к выводу, что в зависимости от тематики первоисточников, особенностей языкового мышления их авторов, возможностей воспроизведения сказанного и других обстоятельств (уровень грамотности, среда, эпоха и др.), в плане употребления односоставных предложений и их разных типов, в разных источниках наблюдается ряд несоответствий и асимметрий.

Благодаря односоставным предложениям в среднеармянском языке делается попытка избежать монотонной цепочки двусоставных предложений и использовать короткие, но вполне понятные читателю (слушателю) коммуникативные единицы.

Чем ближе истоки того или иного произведения, к народно-разговорному языку, тем чаще в нем встречаются односоставные предложения, и наоборот.

В среднеармянском языке различают три типа односоставных предложений: а) глагольные, которые подразделяются на личные, одноличные и безличные³⁷⁷ б) номинативные, в) слова-предложения. Из всех трех типов чаще всего встречаются глагольные, а из последних - личные односоставные предложения.

Неопределенно-личные предложения используются как в прямой, так и

³⁷⁷ Термины одноличный и безличный соответствуют русским терминам безличный и инфинитивный. Использование термина безличный вместо инфинитивный обусловлено тем, что в среднеармянском языке из безличных форм глагола не только инфинитив выступает в роли главного члена односоставного предложения, но и результативные причастия.

в косвенной речи, а также вне их. Те из них, которые используются в прямой речи, выражаются повелительным наклонением личных глаголов, которые могут сочетаться с подлежащими, обозначающими лицо. Однако в зависимости от речевой ситуации и структуры слов автора, глагольными формами повелительного наклонения могут выражаться также двусоставные и обобщенно-личные предложения.

Три обстоятельства играют существенную роль, когда речь идет о том, являются ли прямо цитируемые предложения односоставными или двусоставными: а) употребление данного предложения в определенной речевой ситуации или вне ее, б) наличие у косвенного дополнения в дательном падеже словесного выражения в речи автора, в) смысловой аспект данного предложения.

За исключением структуры главного члена, неопределенно-личные предложения 2-го лица единственного и множественного числа характеризуются одними и теми же особенностями, однако неопределенно-личные предложения 2-го лица единственного числа не используются в среднеармянских источниках, в отличие от габара и современного армянского языка, в которых они хоть и редко, но употребляются.

Неопределенно-личные предложения во 2-м лице употребляются только в определенных речевых ситуациях и только в сочетании со словами автора, они не могут использоваться как самостоятельная синтаксическая единица.

Обычно косвенное дополнение дательного падежа в словах автора и подлежащее и обращение в непосредственно цитируемом тексте указывают на одно и то же лицо или лица, согласованные грамматической категорией числа.

Косвенное дополнение в дательном падеже, употребляемое в сочетании с неопределенно-личным предложением во втором лице, как правило, в словах автора не имеет словесного выражения и не подразумевается, кому адресована непосредственно цитируемая речь. Поэтому в такой прямо цитируемой речи отсутствует и не предполагается не только подлежащее, но и обращение, а рассматриваемая структура представляет собой не двусоставное, а односоставное предложение.

После неопределенно-личных предложений 2-го лица ответная реплика не предполагается, иначе нельзя было бы упомянуть подлежащее из слов автора, употребляемое в сочетании с ответной репликой. Это означает, что эти предложения в диалогах не употребляются (иначе они не были бы равнозначными ответами относящимися к действиям, выраженным неопределенно-личными предложениями).

Для речевых отрывков, содержащих неопределенно-личное предложение во 2-м лице, характерно и то, что они обычно заканчиваются другим неопределенно-личным предложением, дающим информацию о выполнении или невыполнении приказа или просьбы во 2-м лице и выражаются не 2-м, а 3-м лицом множественного числа.

Неопределенно-личные предложения, употребляемые во 2-м лице, встречаются в описании тех ситуаций, в которых выражается приказ, призыв или просьба, подлежащие непосредственному исполнению. Они выражают частичные, бытовые, ситуативные действия, вытекающие из логики данного речевого отрезка, обусловленные данной речевой ситуацией и ограниченные ею, а не относящиеся ко всем или определенному лицу (лицам). Говорящий обращается к присутствующему, но неопределенному лицу или лицам, приказывая, призывая или прося выполнить то или иное конкретное действие.

В отличие от неопределенно-личных предложений 2-го лица, которые употребляются в конкретной речевой ситуации и обязательно со словами автора, обобщенно-личные предложения в том же лице могут употребляться вне речевой ситуации и без слов автора.

Неопределенно-личные предложения 2-го лица единственного и множественного числа, употребляемые в прямой речи, характерны не только для среднеармянского, но и для предшествующего периода литературного армянского - грабара, и современного армянского.

В отличие от неопределенно-личных предложений в 3-ем лице, неопределенно-личные предложения 2-го лица отличаются ограниченным использованием, что объясняется тем, что они используются: а) с целью стилизации речи, б) преимущественно в прозе, г) как непосредственно цитируемая речь.

Упомянутые предложения не имеют широкого распространения. Они употребляются, в частности, в исторических произведениях художественной литературы и в фольклоре (сказках, баснях), выступая средством стилизации речи.

В некоторых среднеармянских источниках заметно часто встречаются обобщенно-личные предложения, что, безусловно, связано с их содержанием: авторы дают различные советы, указания и наставления собеседнику, в данном случае читателю вообще, с помощью обобщенно-личных предложений.

В среднеармянском языке главные члены обобщенно-личных предложений в основном выражаются личными формами будущего времени повелительного наклонения во 2-м лице, в единственном и множественном числе, а также других наклонений в 3-м лице, множественном числе. Обобщенно-личные предложения, во 2-м лице единственном и множественном числе,

несмотря на различные средства выражения, являются синтаксическими омонимами. Неслучайно в упомянутых предложениях в качестве главного члена иногда используется форма повелительного наклонения одного и того же глагола, в одном случае в единственном, а в другом - во множественном числе: ведь в обоих случаях речь обращена к обобщенному слушателю.

Глаголы повелительного наклонения - преимущественно глаголы при-
сущие грабару, претерпевшие характерные для среднеармянского языка фонетические изменения. Частое употребление глаголов положительного спряжения, будущего времени повелительного наклонения, с окончанием *-t*, связано с тем, что авторы пишут на среднеармянском языке, преимущественно употребляя простые глаголы спряжения *t*, показывающие повседневные действия и являющиеся частью активной лексики, которые сравнительно многочисленны. Последнее обстоятельство обусловлено тем, что: а) среднеармянский язык унаследовал часть упомянутых глаголов от грабара, а остальные являются среднеармянскими единицами, б) чаще употребляются обобщенно-личные конструкции, в большинстве из которых главный член выражен простым глаголом *t*спряжения во втором лице единственном числе.

Как в положительном, так и в отрицательном спряжении будущего времени повелительного наклонения глагола, встречаются не только двухкомпонентные, но и трехкомпонентные и многокомпонентные параллельные формы, которые намечают дальнейшее развитие средств выражения будущего времени повелительного наклонения как правильных, так и неправильных глаголов. Наличие параллельных форм в одном и том же произведении свидетельствует о том, что во втором подпериоде среднеармянского языка (15-16 вв.), разговорному стилю было характерно выражением одной и той же грамматической реальности с помощью параллельных лексико-грамматических форм, которые встречаются не только в языковых источниках разных подпериодов среднеармянского языка и не только в произведениях разных авторов одного и того же подпериода, но и в ряде отрывков одного и того же произведения, даже в одном абзаце.

В среднеармянском языке глагольные одноличные (безличные) односоставные предложения выражаются либо одноличными глаголами, либо с их участием (учитывая план выражения главных членов этих предложений, мы в армянском языке называем их одноличными предложениями). Предложения с одноличными глаголами в среднеармянском языке довольно малочисленны и редки, что в первую очередь обусловлено тем, что эти глаголы имеют нулевую субъектную валентность - не принимают подлежащее, т.е. смысловым значением одноличных глаголов и их ограниченным количеством.

Главный член большинства одноличных предложений имеет составную структуру, один из составляющих которого, как правило, выражается одноличной глагольной формой. Одноличные предложения этого типа имеют ряд моделей выражения, большинство из которых выделяются своим частым употреблением. В функции одноличных глагольных форм также выступают некоторые личные глаголы 3-го лица единственного числа. Среди последних выделяется **Է** - настоящее время изъявительного наклонения глагола **տալ**, которое участвует в образовании составного главного члена почти всех безличных предложений.

По использованию в речи одноличные предложения в среднеармянском языке делятся на две группы:

1. Независимые (самостоятельные) одноличные предложения, выступающие в качестве самостоятельной коммуникативной единицы в речевой цепочке, которые при необходимости могут употребляться также в качестве составляющей части сложного предложения,

2. сочетаемые (зависимые) одноличные предложения, которые употребляются только в сложноподчиненных конструкциях, выполняя функцию главного предложения, и требуют после себя придаточное предложение в роли подлежащего, соединяемое с которым односоставное предложение образует двусоставную структуру, в то время как отдельное, соединяемое предложение является односоставным.

По главному члену или грамматической категории залога его глагольного составляющего, независимые (самостоятельные) односоставные одноличные предложения бывают двух видов со своими подвидами:

1. Независимые (самостоятельные) одноличные предложения, образованные одноличными непереходными глаголами,

2. Независимые (самостоятельные) одноличные предложения, образованные с участием одноличных непереходных глаголов.

По главному члену или грамматической категории залога его глагольного составляющего, сочетаемые односоставные одноличные предложения бывают трех видов со своими подвидами:

1. Сочетаемые одноличные предложения, образованные одноличными непереходными глаголами,

2. Сочетаемые одноличные предложения, образованные с участием одноличных непереходных глаголов,

3. Сочетаемые одноличные предложения, образованные глагольными формами пассивного залога.

Ряд образцов выражения одноличных предложений перешли в сред-

неармянский язык из габара. Речь идет о независимых и сочетаемых одноличных предложениях. Примечательно, что некоторые одноличные предложения, перешедшие из габара в среднеармянский язык, являются присущими среднеармянскому языковыми реалиями, и выделяются своим частым употреблением. Напротив, некоторые одноличные конструкции габара используются в среднеармянском языке для стилизации речи. Такие конструкции встречаются не во всех первоисточниках, они редки и имеют ограниченные средства выражения.

В плане содержания некоторые одноличные предложения известны еще с габара, но в среднеармянском языке они приобрели новые средства выражения.

Некоторые типы одноличных конструкций как по плану выражения, так и по плану содержания являются чисто среднеармянскими языковыми реалиями.

В среднеармянском языке довольно редко встречаются односоставные глагольные безличные (инфинитивные) предложения с безличным глаголом, главный член которых обычно выражается причастием, сочетающимся, как правило, с существительным, обозначающим лицо. Последнее обстоятельство связано с тем, что действие, выражаемое глагольными безличными предложениями, обычно относится либо к определенному лицу, либо ко всем в целом. Этот тип односоставных предложений не был частым явлением также в габаре и встречался в произведениях не всех армянских авторов: они были больше характерны для переводной литературы.

В среднеармянском языке безличные предложения в основном используются как средство стилизации речи, что свидетельствует о том, что эти конструкции были чужды литературному армянскому языку того периода.

В среднеармянских источниках можно найти не только безличные предложения из габара, главный член которых выражен инфинитивом, но и безличные предложения, характерные для среднеармянского языка, выраженные результативным причастием.

Помимо безличных глагольных предложений, в среднеармянском языке ограниченное употребление имеют также номинативные односоставные предложения. Главный член этих предложений преимущественно выражается существительным, и только некоторые конструкции образованы прилагательным или междометием. Предложения, выраженные междометиями, мы отнесли к номинативным, учитывая их свойство требовать дополнения в обязательном порядке.

В номинативных односоставных предложениях указывается на наличие или отсутствие какого-либо предмета, реальности или явления, либо выражается отношение, обусловленное тем или иным обстоятельством. Номинативные односоставные предложения в плане/планах выражения и/или содержания соотносятся: а) с глагольными одноличными, б) с глагольным безличным и в) со словами-предложениями, но существенно отличаются от них.

Номинативные односоставные предложения используются в основном в художественной речи, в частности, в стихах. Неслучайно частое употребление этих предложений в одном случае в баснях В. Айгекци, а в другом - в айренах.

Номинативные односоставные предложения-лучший способ выразить какую-либо реальность или явление без сказуемого. Они не только резюмируют сказанное, но и придают ему большую экспрессию. Эти предложения, как и другие односоставные конструкции, используются для того, чтобы сделать речь лаконичной: применяя их, автор избегает бесконечной цепочки двусоставных предложений, вызывающих стилистическую зевоту, тем самым придавая повествованию необычную свежесть.

Номинативные односоставные предложения в среднеармянском являются наследием габара.

Среди односоставных предложений среднеармянского языка особое место занимают слова-предложения, которые отличаются от всех односоставных предложений как по структуре, так и по содержанию. Слова-предложения являются самостоятельно употребляемыми и короткими коммуникативными единицами, лишенными возможности перерасти в распространенное предложение. Более того, утратив самостоятельное употребление, слово-предложение может выступать в составе другого предложения в других речевых ситуациях. В этом случае оно теряет свою самостоятельность и становится частью данного предложения. Вот почему выделение слов-предложений в речевой цепи часто носит субъективный характер. В среднеармянском языке слова-предложения не имеют различных средств выражения: это некоторые модальные слова, используемые по мере необходимости, которые в данном случае (а часть-всегда) лишены функции требования дополнения.

Слова-предложения в плане содержания соотносятся с теми одноличными предложениям, которые выражают эмоциональное или реалистичное отношение, но в одноличных предложениях это отношения имеет определенное или обобщенное выражение.

Слова-предложения соотносятся и с теми номинативными предложениями, которые по желанию кратки: не имеют второстепенных членов. Одна-

ко если в односоставных номинативных предложениях описывается или констатируется какое-либо обстоятельство или реальность, то посредством слов-предложений выражаются эмоциональные и логические переживания, суждения и т.д.

Основная часть глагольных односоставных предложений, свойственных среднеармянскому языку (личные и безличные предложения, и некоторые типы одноличных предложений), а также номинативные и слова-предложения, с некоторыми изменениями в плане выражения, перешли в современный армянский язык.

Хачатрян Гурген Кипронович - доктор фил. наук, проф., Ванадзорский государственный университет имени О.Туманяна, профессор кафедры армянского языка и литературы. Научные интересы: древнеармянский язык, среднеармянский язык, история армянского языка, синтаксис армянского языка, стилистика, лексикография. Автор 7 монографий, более 100 статей.

gxachatryan@yahoo.com

ONE-MEMBER SENTENCES IN MIDDLE ARMENIAN

S U M M A R Y

One-member sentences are a manifestation of linguistic thinking and in different periods of development of different languages they display peculiarities in terms of expression and content. Thanks to the latter, one-member sentences differ significantly from two-member structures, representing one of the two main types of a simple sentence. One-member sentences also differ from two-member ones in terms of usage: not in all speech situations one-member sentences can be used. If necessary, you can even avoid using one-member sentences by replacing them with equivalent two-member constructions.

In particular, studying one-member sentences in Middle Armenian, we come to conclusion that, depending on the topic of the primary sources, the peculiarities of the linguistic thinking of their authors, the possibilities of reproducing what was said and other circumstances (literacy level, environment, epoch, etc.), in terms of the usage of single-member sentences and their different types, a number of inconsistencies and asymmetries occur.

Thanks to one-member sentences in Middle Armenian, an attempt is made to avoid a monotonous chain of two-member sentences and use short, but quite understandable to the reader (listener) communicative units.

The closer the origins of a particular work to the spoken language, the more often one-member sentences are found in it, and vice versa.

In the Middle Armenian language, there are three types of one-member sentences: a) verbal, which are divided into personal, one-person and impersonal³⁷⁸; b) nominative; c) word-sentences. Of all the three types, verbal one-member sentences are the most common, and among the latter personal one-member sentences are most-widely used.

Indefinite-personal sentences are used both in direct and indirect speech, as well as outside of them. The ones that are used in direct speech are expressed by the imperative mood of personal verbs, which can be combined with subjects denoting a person. However, depending on the speech situation and the structure of the author's words, not only two-member, but also generic-personal sentences can be expressed by verbal forms of the imperative mood.

Three circumstances are essential when it comes to whether the directly quoted sentences are one-member or two-member: a) the use of this sentence in a

³⁷⁸ The terms one-person and impersonal correspond to the English terms impersonal and non-finitive. The use of the term impersonal instead of infinitive is due to the fact that in Middle Armenian, of all non-finite forms of the verb, not only the infinitive acts as the principal member of a one-member sentence, but resultative participle as well.

certain speech situation or outside it, b) verbal expression of indirect object in the dative case in the author's speech, c) semantic aspect of this sentence.

Except for the structure of the principal member, indefinite-personal sentences of the 2nd person singular and plural are characterized by the same features, however, indefinite-personal sentences of the 2nd person singular are not used in Middle Armenian sources, unlike Grabar and Modern Armenian, in which they, although rarely, are still used.

Indefinite-personal sentences in the 2nd person are used only in certain speech situations and only in combination with the author's words; they cannot be used as an independent syntactic unit.

Usually, the indirect object of the dative case in the author's speech and the subject and direct address in direct quotations, indicate the same person or persons agreed by the grammatical category of number.

An indirect object in the dative case, used in combination with an indefinite-personal sentence in the second person, as a rule, does not have verbal expression in the author's words and does not imply who the directly quoted speech is addressed to. Therefore, in directly quoted speech of this kind, not only the subject, but also the direct address is absent and not assumed, and the structure under consideration is not a two-member, but one-member sentence.

After indefinite-personal sentences of the 2nd person, a response is not expected, otherwise it would be impossible to mention the subject from the author's words, used in combination with the response. This means that these sentences are not used in dialogues (otherwise they would not be equivalent answers related to actions expressed in indefinite-personal sentences).

For speech passages containing an indefinite-personal sentence in the 2nd person, it is also characteristic that they usually end with another indefinite-personal sentence giving information about the fulfillment or non-fulfillment of an order or request in the 2nd person and are expressed not by the 2nd, but by the 3rd person plural.

Indefinite-personal sentences used in the 2nd person are found in the description of those situations in which an order, appeal or request is expressed, which is subject to direct execution. They express partial, everyday, situational actions arising from the logic of the given speech segment, conditioned by the given speech situation and limited by it, and not related to all or a specific person (persons). The speaker refers to the present but unidentified person or persons, ordering, appealing or asking to perform a particular action.

Unlike indefinite-personal sentences of the 2nd person, which are used in a specific speech situation and necessarily with the author's words, generic-personal

sentences in the same person can be used outside the speech situation and without the author's words.

Indefinite-personal sentences of the 2nd person singular and plural, used in direct speech, are characteristic not only of Middle Armenian, but also of the previous period of Literary Armenian - Grabar and Modern Armenian.

Unlike indefinite-personal sentences in the 3rd person, indefinite-personal sentences in the 2nd person are distinguished by limited use, which is explained by the fact that they are used: a) to stylize speech, b) mainly in prose, B) as direct quotations.

The mentioned sentences are not widely used. They are used, in particular, in historical fiction and folklore (fairy tales, fables), as a means of stylizing speech.

In some Middle Armenian sources, generic-personal sentences are noticeably frequent, which, of course, is related to their content: the authors give various advice, instructions and tips to the interlocutor, in this case, the reader in general, with the help of generic-personal sentences.

In the Middle Armenian language, the principal members of generic-personal sentences are mainly expressed by personal future forms of the imperative mood in the 2nd person, singular and plural, as well as by personal forms of other moods in the 3rd person, plural. Generic-personal sentences, in the 2nd person singular and plural, despite the different means of expression, are syntactic homonyms. It is no coincidence that in the above-mentioned sentences, the principal member is expressed by the imperative mood of the same verb, in one case in the singular, and in the other in the plural: after all, in both cases the speech is addressed to the generalized interlocutor.

Imperative verbs are mainly verbs inherent in Grabar, which have undergone phonetic changes characteristic of Middle Armenian. The frequent use of positive conjugation verbs in the future tense of the imperative mood, with ending -Է, is due to the fact that authors write in Middle Armenian, mainly using simple verbs of Է conjugation, showing everyday actions and being part of the active vocabulary, which are relatively numerous. The latter circumstance is due to the fact that: a) Middle Armenian inherited part of the mentioned verbs from Grabar, and the rest are Middle Armenian units, b) generic-personal constructions are more often used, in most of which the principal member is expressed by a simple verb of Է conjugation in the second person singular.

Both in the positive and negative conjugation of verbs in the future tense of imperative mood, there are not only two-component, but also three-component and multicomponent parallel forms that outline the further development of the forms expressing future tense of imperative mood for both regular and irregular verbs.

The presence of parallel forms in the same work indicates that in the second subperiod of Middle Armenian (15th-16th centuries), the colloquial style was characterized by expression of the same grammatical reality with the help of parallel lexico-grammatical forms, which are found not only in the language sources of different subperiods of Middle Armenian and not only in the works of different authors of the same subperiod, but also in a number of passages of the same work, even in the same paragraph.

In Middle Armenian, verbal one-person (impersonal) one-member sentences are expressed either by one-person verbs or with their participation (taking into account how the principal members of these sentences are expressed, we call them one-person sentences in Armenian). Sentences with one-person verbs in Middle Armenian are quite few and rare, which is primarily due to the fact that these verbs have zero subjective valency - they do not accept the subject, i.e. due to the semantic meaning of one-person verbs and their limited number. The principal member of most one-person sentences has a compound structure, one of the components of which, as a rule, is expressed by a one-person verb form. One-person sentences of this type have a number of expression models, most of which stand out for their frequent use. Some personal verbs of the 3rd person singular also act as one-person verb forms. Among the latter, stands out the present tense of the indicative mood of the verb *տլ* - *լ*, which is involved in the formation of the compound principal member of almost all one-person sentences.

According to their use in speech, one-person sentences in Middle Armenian are divided into two groups:

1. Independent sentences acting as self-dependent communicative units in the speech chain, which, if necessary, can also be used as a component part of a complex sentence,
2. Combining (dependent) one-person sentences that are used only in complex structures, performing the function of the principal clause, and requiring a subject subordinate clause, combined with which the one-member sentence forms a two-member structure, while the combined sentence is one-member.

According to the principal member or the grammatical category of voice of its verbal component, independent one-member one-person sentences are of two types with their subtypes:

1. Independent one-person sentences expressed by one-person intransitive verbs,
2. Independent one-person sentences expressed with participation of one-person intransitive verbs.

According to the principal member or the grammatical category of voice of

its verbal component, combining one-member one-person sentences are of three types with their subtypes:

1. Combining one-person sentences expressed by one-person intransitive verbs,
2. Combining one-person sentences expressed with participation of one-person intransitive verbs,
3. Combining one-person sentences expressed by passive verb forms.

A number of patterns of expressing one-person sentences passed into Middle Armenian from Grabar. We are talking about independent and combining one-person sentences. It is noteworthy that some one-person sentences that came to Middle Armenian from Grabar are inherent in Middle Armenian language realities and stand out for their frequent use. On the contrary, some one-person constructions of Grabar are used in Middle Armenian to stylize speech. Constructions like this are not found in all primary sources, they are rare and have limited means of expression.

In terms of content some impersonal sentences had been known since Garabar, but in Middle Armenian they acquired new means of expression.

Some types of one-person constructions, both in terms of expression and in terms of content, are purely Middle Armenian linguistic realities.

In Middle Armenian, there are very few one-member impersonal verbal sentences with an impersonal verb, the principal member of which is usually expressed by a participle combined with a noun denoting a person. The latter circumstance is due to the fact that the action expressed by verbal impersonal sentences usually refers either to a certain person or to everyone as a whole. This type of one-member sentences was not a frequent occurrence in Grabar either and was not found in the works of all Armenian authors: they were more typical of translated literature.

In Middle Armenian, impersonal sentences are exceptionally used as a means of stylizing speech, which indicates that these constructions were alien to the literary Armenian language of that period.

In the Middle Armenian sources, one can find not only impersonal sentences from Grabar, the principal member of which is expressed by the infinitive, but also impersonal sentences characteristic of Middle Armenian, expressed by the resultative participle.

Besides impersonal verbal sentences, one-member nominative sentences also have a limited use in Middle Armenian. The principal member of these sentences is mainly expressed by a noun, and only some constructions are formed by an adjective or an interjection. We classified sentences expressed by

interjections as nominative ones, taking into consideration their property to require an object, which is manifested in obligatory objectivity.

In nominative one-member sentences, the presence or absence of an object, reality or phenomenon is indicated, or an attitude is expressed due to some circumstances. Nominative one-member sentences in terms of expression and/or content correspond to: a) verbal one-member, b) verbal impersonal, and c) word-sentences, but differ significantly from them.

Nominative one-member sentences are mainly used in fiction, in particular, in poetry. It is no coincidence that these sentences are often used in one case in the fables of V. Aigektsi, and in the other in the hayrens.

Nominative one-member sentences are the best way to express any reality or phenomenon without a predicate. They not only summarize what has been said, but also make it more expressive. These sentences, like other one-member constructions, are used to make speech concise: by using them, the author avoids an endless chain of two-member sentences that cause stylistic yawns, thereby giving the narrative an unusual freshness.

Nominative one-member sentences in Middle Armenian are inherited from Grabar.

Among the one-member sentences of Middle Armenian, word-sentences take a special place; they differ from all one-member sentences both in structure and in content: word-sentences are self-used and short communicative units, unable to develop into an extended sentence. Moreover, having lost its independent use, the word-sentence can act as part of another sentence in other speech situations. In this case, it loses its independence and becomes a member of this sentence. That is why emphasizing the word-sentences in speech chain is often subjective. In Middle Armenian, word-sentences do not have different means of expression: these are some modal words used as needed, which in this case (and some always) are devoid of the function to require an object.

Word-sentences in terms of content correlate with those one-person sentences that express an emotional or realistic attitude, but in one-person sentences this attitude has a definite or generalized expression.

Word-sentences also correspond to those nominative sentences that are short at will: they do not have secondary members. However, if any circumstance or reality is described or stated in one-member nominative sentences, then emotional and logical experiences, judgments, etc. are expressed through word-sentences.

Majority of one-member verbal sentences typical of Middle Armenian (personal and impersonal sentences, and some types of one-person sentences), as well as nominative and word-sentences, with some changes in terms of expression,

passed into Modern Armenian.

Gurgen Kipron Khachatryan - Doctor of Philology, professor, Vanadzor State University after Hovh. Tumanyan, Professor of the Chair of the Armenian Language and Literature, Scientific interests: Old Armenian, Middle Armenian, History of the Armenian Language, Syntax of Modern Armenian, stylistics, lexicography. Author of 7 monographs, more than 100 articles.

gxachatryan@yahoo.com

ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962:
3. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Երևան, 1975:
4. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Երևան, 1976:
5. Աղայան Է. Բ., Նախադասություն և ասություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, № 1, 121-138:
6. Այտընեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
7. Անթոսյան Ս. Մ., Բայը և նրա խոնարհման համակարգը, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1975, 391:
8. Առաքելյան Վ. Դ., Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964:
9. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Պարզ նախադասություն, Երևան, 1987:
10. Գարեգինյան Գ. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն, Երևան, 1984:
11. Գյուլբուդաղյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:
12. Գյուլբուդաղյան Ս. Վ., Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Երևան, 1988:
13. Իշխանյան Ռ. Ա., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Երևան, 1986:
14. Խաչատրյան Գ. Կ., Դիմային հարաբերության արտահայտությունը բայական անդամ նախադասությունների մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թիվ 4:
15. Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի միակազմ նախադասությունները, Երևան, 2002:
16. Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկի

- բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները, «Գիտաժողովի նյութեր՝ նվիրված Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին», Վանաձոր, 2011, 4-19:
17. Խաչատրյան Գ. Կ., Միակազմ նախադասությունների ոճական արժեքը հայրեններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, 2011:
 18. Խաչատրյան Գ. Կ., Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ, Երևան, 2013:
 19. Կատվայան Վ. Լ., Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Երևան, 2016:
 20. Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981:
 21. Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939:
 22. Մուրադյան Հ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, 1982:
 23. Պալասանեան Ստ., Քերականութիւն մայրենի լեզուի հայոց, Թիֆլիս, 1874:
 24. Պառնասյան Ն. Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
 25. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
 26. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
 27. Սևակ Գ. Գ., Հայոց լեզվի շարահյուսություն (դասագիրք միջնակարգ դպրոցի VII-VIII դասարանների համար, Երևան, 1980:
 28. Վարդապետյան Պ. Կ., Գրական միջին հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975:

ՌՈՒՍԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Белошопкова В. А., Современный русский язык, М., 1997.
2. Грамматика русского языка, т. II, Синтаксис, ч. 1, М., 1954.
3. Долин Ю. Т., К вопросу о грамматическом статусе односоставных предложений в русском языке, Вестник ОГУ, 2001.

4. Золотова Г. А., О некоторых теоретических результатах работы над «Синтаксическим словарем русского языка», Вопросы языкознания. 1986. № 1.
5. Золотова Г. А., Онипенко Н. К., Сидорова М. Ю., Коммуникативная грамматика русского языка, М., 1998.
6. Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, Изд. 7, М., 1956.
7. Русская грамматика, т. II, Синтаксис, М., 1982.
8. Шахматов А. А., Синтаксис русского языка, Л., 1941.
9. Хачатрян Г. К., Глагольные односоставные предложения древнеармянского языка V века (автореферат канд. диссерт.), Ереван, 1986.
10. Циммерлинг А. В., Имперсональные конструкции и дативно-предикативные структуры в русском языке, Вопросы языкознания, М., «Институт языкознания РАН», 2018, № 5. 7-33).

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱ – Ամիրտովլաթի Ամասիացոյ Անգիտաց անպետ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1827:

ԱԲ1 – Ակսել Բակունց, Երկեր չորս հատորով, հ. 1, Երևան, 1976:

Աբուս. – Աբուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն՝ աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Երևան, 1974

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

ԱԴՊ – Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1884:

ԱՄԳՀՊ – Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975:

ԱՄՍ – Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի (XVI-XVII դդ.), Աշխատասիրությամբ Դ. Մ. Կարապետյանի, Երևան 1993:

ԱՍ, ԱԴԱՍ – Առաքել Սիւնեցի, Ադամգիրք, Վենետիկ, 1907:

ԱՍ, Բ – Առաքել Սիւնեցի և իր քերթուածները, Վենետիկ, 1914:

ԱՎՎ – Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Բարիգ, 1960:

ԱՏՎՂ – Արտամետցի, Տաղ վասն դարբութեան (Գիտական նյութերի ժողովածու, թիվ 1, Երևան, 1941):

ԱՔՀՊ – Р. Абрамян, Армянский путеводитель по Индии XII века (Բանբեր մատենադարանի, №4, 1958):

ԲԶ – Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), Աշխատությամբ Բ.Լ. Չուգասզյանի, Երևան, 1980:

Գ – Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, Աշխատասիրությամբ Ա.Ս. Կծոյանի, Երևան, 1962:

ԳԱ – Գրիգոր Անգեղակոյթեցի (Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981):

ԳԱՂ – Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, Երևան, 1984:

ԳԴ – Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կաղամախեցոյ կամ Դարանաղեցոյ, Հրատարակեց Մ. Վ. Նշանեան, Երուսաղէմ, 1965:

ԳԹ – «Գրական թերթ», 1988, № 43:

ԳԿ – Գրիգոր Կեսարացի, Տաղեր, Երևան, 1984:

ԳՄ – Գրիգոր Մագիստրոս, Թուղթ առ վարդապետն Սարգիս (Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981):

ԳՄ – Գրիգոր Սկևռացի, Ներբողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացի (Սոփերք հայկականք, ԺԶ, Վենետիկ, 1854):

ԳՏ – Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972:

ԴԶ – Դաւիթ Զեյթունցի, Մեկնություն քերականի, Աշխատասիրությամբ Ե. Կ. Մելքոնյանի, Երևան, 1981:

Եղիշէ – Եղիշէի Վասն Վարադանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

ԵՆ – Եսայի Նչեցի, Վերլուծություն քերականութեան, Աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966:

ԶՊ – Զաքարեայ սարկաւազի Պատմագրություն, Վաղարշապատ, 1870:

ԹԼԿ – Հովհաննէս Թլկուրանցի (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1995):

ԹԿ – Ա. Անասյան, Թովմաս Կիլիկեցու աշխարհագրությունը (Բանբեր մատենադարանի, №8, 1967):

ԹՄԼԹ – Պատմություն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցոյ, Պարիս, 1860:

ԺԴ – ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչերյան, Երևան, 1950:

ԺԵ, 1 – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն ա-
ռաջին (1401-1430 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչերյան, Երևան, 1955:

ԺԵ, 2 – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկ-
րորդ (1431-1480 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչերյան, Երևան, 1958:

ԺԵ, 3 – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն եր-
րորդ (1481-1500 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչերյան, Երևան, 1967:

ԺԷ – Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620
թթ.), հ. Ա, Կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան,
1974:

ԻՇ – Իշոխ, Գիրք ի վերայ բնութեան, Երևան, 1979:

ԽԻԽ – Ա. Մարտիրոսյան, «Խրատք և իմօսատություն Խիկարայ» գրույ-
ցի հայերեն թարգմանության հարցի շուրջ (Բանբեր մատենադարանի,
№5, 1960):

ԽԿ – Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երևան, 1988:

Կ – Կաֆա (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի,

Երևան, 1995):

ԿԲԽԹ – Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրաբերդցու իրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին (Բանբեր մատենադարանի, №4, 1958):

ԿԳ – Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ Համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1865:

ԿԳԹ – Ա. Մնացականյան, «Գովանք թոչնոց» տաղաշարքը, նրա հեղինակը և ժամանակը (Բանբեր մատենադարանի, №13, 1980):

ԿԵ – Կոստանդին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981

ԿԿՑ – Կ. Կոստանեանց, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, Ս. Պետերբուրգ, 1913:

ԿՂՀ 1 – Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1998:

ԿՂՀ 2 – Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963:

Կ-Պ – Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրութիւնները (XVIդ.), Աշխատասիրությամբ Վ.Գրիգորյանի, Երևան, 1963:

Հ – Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Ե., 1995:

ՀԱԳ – XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Աշխատասիրությամբ Մ. Մկրյանի, Երևան, 1938:

ՀԹ2 – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 2, Երևան, 1990:

ՀԹ3 – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 3, Երևան, 1989:

ՀԹ4 – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 4, Երևան, 1991:

ՀՀՄԱՔ – Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981:

ՀՄ1 – Հրանտ Մաթևոսյան, Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1985:

ՀՄԳԱ – Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1957:

ՀՄՁ – Հովհաննես Մրքուր Զուղայեցի, աշխատասիրությամբ Հ.Ղ.Միրգոյանի, Երևան, 2001:

ՀՄ – Հովասափ Սեբաստացի (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1995):

ՂԹ – Ղազար Թոխաթեցի (Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921):

ՂԼ – Է. Հարությունյան, Ղուկաս Լոռեցին և նրա Քարոզգիրքը (Բանբեր մատենադարանի, №10, 1971):

ՂՓ – Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ՄԱԺ – Ժամանակագրություն տեառն Սիխայելի Ասորոյ պատրիարգի, Երուսաղեմ, 1871:

ՄԹ – Մինաս Թոխաթեցի (Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921):

ՄԺ, I – Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I, Ե., 1951:

ՄԺ, II – Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II, Ե., 1956

ՄԽՂՀ – Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913:

ՄԽՏ – Հ. Սահակյան, Մխիթար Խարասարցու տաղերը (Բանբեր մատենադարանի, №10, 1971):

ՄՀԲ – Ռ.Ս.Ղազարյան, Հ.Մ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:

ՄՄ – Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1934:

ՄՈԻ – Պատմություն Մատթեոսի Ուռհայեցույ, Երուսաղեմ, 1869:

ՄՏ – Ն. Ակինեան, Մովսես Գ Տաթևացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936:

ՄՅՀԶ, Ա – Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1984:

ՄՅՀԶ, Բ – Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երևան, 2004:

ՄՅՀԶ, Գ – Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Երևան, 2007:

ՅԵ – Ս. Արևշատյան, Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհայտ աշխատությունը (Բանբեր մատենադարանի, №4, 1958):

ՅԵԹ – Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացու թուրքը Եկեղյաց գավառի իշխանին (Բանբեր մատենադարանի, №10, 1971):

ՅԿ – Յովհաննես Կամենացի, Պատմություն պատերազմին Խոթինու,

Աշխատասիրությամբ Հ. Ս. Անասյանի, Երևան, 1964:

ՅՈ – Յովհաննու Որոտնեցոյ Վերլուծութիւն ստորոգութեանց Արիստոտելի, Համահավաք տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալոյանի, Երևան, 1956:

ՅՈՂ – С. Аревшатын, С. Лалафарян, Сочинение Иоанна Воротнеси “Об элементах” (Բանբեր մատենադարանի, №3, 1956):

ՅՁ – Ա. Մաթևոսյան, Ճանապարհացոյց Ջուղայեցի Պետրոսի որդի Հակոբի (Բանբեր մատենադարանի, №8, 1967):

ՅՎ – Յարշաւանս Թահմագ-Ղուլի շահին անօրէն պարսից, Յոհան վարդապետի Վարագացու եղերերգեալ (Գեղունի, №1-10, 1905):

ՅՎԲՎ – Աղօթք Յովհաննու Վանանդեցոյ Բենիկ կոչեցեալ վարդապետի (Սոփերք հայկականք, ԻԱ, Վենետիկ, 1861):

ՅՎՀՂ – Յոհանիսիկ վարդապետի Համառոտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանցն Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան (Ճռաքաղ, 3, 1859):

ՅՔ – Յովհաննէս Քերովբենց (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1995):

ՅՔՅՔ – Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, Բնագիրը հրատարակութեան պատրաստեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1977:

ՆԵՐՄ – Պատմութիւն վարուց սրբոյն Ներսիսի կաթողիկոսի Հայոց և տիեզերական իմաստասիրի, սկսեալ ի նախնեաց անտի նորին (Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981):

ՆԼ, ՅՅ – Ներսէս Լամբրոնացի, Յայտնութիւն Յովհաննու, Երուսաղեմ, 1906:

ՆԿ – Ներսիսի արքեպիսկոպոսի Կիլիկեցոյ Պատասխան Յուսկանն՝ արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք (Ճռաքաղ, 1, 1859):

ՆՀԲ – Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1- 2, Վենետիկ, 1837:

ՆՄ – Ներսէս Մոկացի, Բանաստեղծություններ, Երևան, 1985:

ՆՇՀԽ – Ներսէս Շնորհալի, Հաւատով խոստովանիմ, Երևան, 2012:

ՆՍ – Նաղաշ սարկաւազ (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա.Մնացականյանի, Երևան, 1995):

ՊՄԱՓԹ – Պատմութիւն վասն մանկանն և աղջկանն: Պատմութիւն

յաղագս Փահլուվ թագաւորին, Աշխատասիրությամբ, Ա. Արապյանի, Երեւան, 1983:

ՊՍ2 – Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, Ե., 1972:

ՊՎ – Է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու «Վարքը» (Բանբեր մատենադարանի, №7, 1964):

ՊՏ – Թուղթ երանելուն Պօղոսի Տարօնացոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ գրոյն Թեոփիստեայ հռոմոյ փիլիսոփային, Կոստանդնուպօլիս, 1752:

ՊՓՎՎ – Պատմութիւն Փարեզի և Վեննայի (միջնադարյան ասպետական սիրավեպ), Պատմութիւն Վենետիկ քաղաքին (չափածոյ), Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1968:

ՊՖՄ – Պատմութիւն ֆարման մանկանն, Հրատարակության պատրաստեց Շ. Նազարյան, Երևան, 1957:

Ջ – Ջիվանու քնարը, Կազմեց, տեքստերը համեմատեց և ծանոթագրեց Ա. Սահակյանը, Երևան, 1959:

ՋՄ – Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:

ՍԱԸԳ – Սարգիս գրիչ (Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981):

ՍԱԸԿ – Հանդէս բանի վասն երանեալ առնն Աստուծոյ Սարկաւազին կենաց և մահուն և այլոց սրբոց հուպ յայն ժամանակս (Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա, Երևան, 1981):

ՍԳ – Գիրք Աստուծաշունչք Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1860:

ՍԵ – Ա. Անասյան, Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ պոեմ, «Տաղ տէր Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին» (Բանբեր մատենադարանի, №8, 1967):

ՍՋ – Միմեոն Ջուղայեցի, աշխատասիրությամբ Հր. Միրզոյանի, Երեւան, 1971:

ՍԹ – Ստեփանոս Թոխաթեցի (Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921):

ՍԿՍ – Մ. Գրիգորյան, Անտիպ տաղ մը Ստեփանոսի Սալմաստեցի կաթողիկոսեն (Բանբեր մատենադարանի, №6, 1962):

ՍՍՏ – Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859:

Ստ. – Ստեփանոս (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա.Մնացական-

յանի, Երևան, 1995):

ՍՕ – Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեան, Երևան, 1942:

ՎԱԳՀ – Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, Քննական բնագիրը կազմեց Շահէ քահանայ Հայրապետեանը, Երեւան, 1998:

ՎՄ – Վրթանէս Սոնկեցի (Ն. Ակիւնյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921):

ՎՎԲԳ – Փ. Անթաբյան, Վարդան Արևելցու ներբողը՝ նվիրված հայոց գրերի գյուտին (Բանբեր մատենադարանի, №7, 1964):

ՎՎՀՊ – Վարդան Վանականի Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:

ՎՎՅՏ – Յաղագս տարեմտին ի վանական վարդապետէ ասացեալ (Գիտական նյութերի ժողովածու, թիվ 1, Երևան, 1941):

ՎԸ – Վահրամայ Բաբունոյ Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859:

ՎԸԼ – Վահրամ Բաբունի, Լուծմունք ստորոգութեանցն Արիստոտելի, Համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերէն, առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Գրիգորյանի, Երևան, 1967:

ՓԲ – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Ֆ – Ֆրիկ (Հայրեններ, աշխատասիրությամբ Ա.Մնացականյանի, Երեւան, 1995):

**ԱՌՑԱՆՑ ՄԿՋԲՆԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

ԱՍՕԲ - Ամիրտովլար Ամասիացի, Օգուս բժշկութեան, Ե., 1940:

<https://digilib.aua.am/book/57/%D5%95%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%20%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6>

Ան - Արիստակես Խարբերդցի

<https://digilib.aua.am/en/%D4%B1%D5%90%D4%BB%D5%8D%D5%8F%D4%B1%D4%BF%D4%B7%D5%8D%20%D4%BD%D4%B1%D5%90%D4%B2%D4%B5%D5%90%D4%B4%D5%91%D4%BB/library/99>

ԱՇ - Առաքել Շոռոբեցի

<https://digilib.aua.am/am/%D4%B1%D5%8C%D4%B1%D5%94%D4%B5%D4%BC%20%D5%87%D5%88%D5%8C%D5%88%D4%B9%D4%B5%D5%91%D4%BB/library/97>

ԱՋ - Ագարիա Ջուլայեցի

<https://digilib.aua.am/am/%D4%B1%D4%B6%D4%B1%D5%90%D4%BB%D4%B1%20%D5%8B%D5%88%D5%92%D5%82%D4%B1%D5%85%D4%B5%D5%91%D4%BB/library/112>

ԱՌԲ - Առաքել Բաղիշեցի

<https://digilib.aua.am/am/%D4%B1%D5%8C%D4%B1%D5%94%D4%B5%D4%BC%20%D4%B2%D4%B1%D5%82%D4%BB%D5%87%D4%B5%D5%91%D4%BB/library/95>

ԱՍ - Ագարիա Սասնեցի

<https://digilib.aua.am/am/%D4%B1%D4%B6%D4%B1%D5%90%D4%BB%D4%B1%20%D5%8D%D4%B1%D5%8D%D5%86%D4%B5%D5%91%D4%BB/library/113>

ԳԿ - Գրիգոր Կեսարացի

<https://digilib.aua.am/am/%D4%B3%D5%90%D4%BB%D4%B3%D5%88%D5%90%20%D4%BF%D4%B5%D5%8D%D4%B1%D5%90%D4%B1%D5%91%D4%BB/library/143>

ՀԵ - Հովասափ Երզնկացի

<https://www.digilib.am/en/library/all?author=170§ion=69&authorAlias=%D5%85%D5%88%D5%8E%D4%B1%D5%8D%D4%B1%D5%93+%D4%B5%D5%90%D4%B6%D5%86%D4%BF%D4%B1%D5%91%D4%BB&author&sort=vc>

ՀՅ, 1379 – Հայերէն յիշատակարաններ, 1379թ.

<https://digilib.aua.am/book/1585/1960/15879/?lang=en>

ՀՅ, 1380 – Հայերէն յիշատակարաններ, 1380թ.

<https://digilib.aua.am/book/1585/1960/15880/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A7%D5%B6%20%D5%85%D5%AB%D5%B7%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

ՀՅ, 1384 – Հայերէն յիշատակարաններ, 1383-1384թթ.

<https://digilib.aua.am/book/1585/1960/15884/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A7%D5%B6%20%D5%85%D5%AB%D5%B7%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

ՀՅ, 1387 – Հայերէն յիշատակարաններ, 1387թ.

<https://digilib.aua.am/book/1585/1960/15887/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A7%D5%B6%20%D5%85%D5%AB%D5%B7%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

ՀՊ – Հեթում Պատմիչ Կոռիկոսցի,

Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց (երեք խմբագրությունների զուգադրմամբ)
http://haygirk.nla.am/upload/1512-1940/1801-1850/hetum_patmich_talarac.pdf

ՂՍ – Ղազար Սեբաստացի

Նորին Ղազարու վասն սիրոյ ասացեալ
<https://digilib.aua.am/book/166/169/1589/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>

ՂՎ – Ղուկաս Վանանդեցի

<https://digilib.aua.am/book/171/%D4%B3%D5%A1%D5%B6%D5%B1%20%D5%B9%D5%A1%D6%83%D5%B8%D5%B5,%20%D5%AF%D5%B7%D5%BC%D5%B8%D5%B5,%20%D5%A9%D6%82%D5%B8%D5%B5%20%D5%A5%D6%82%20%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%AB%D6%81%20%D5%A2%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%20%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%AB>

ՄԵԼ – Մելքիսեդեկ գրիչ և մանրանկարիչ

<https://digilib.aua.am/en/%D5%84%D4%B5%D4%BC%D5%94%D4%BB>

[%D5%8D%D4%B5%D4%B4%D4%B5%D4%BF/library/227](https://digilib.aua.am/book/276/)

ՄԱՆ – Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավիշահանդիսարար - նագ, Երևան, 1983:

<https://digilib.aua.am/book/276/>[/am/%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85%20%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB/library/?authorAlias=%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85+%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB&author=217&sort=af](https://digilib.aua.am/am/%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85%20%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB/library/?authorAlias=%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85+%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB&author=217&sort=af)

ՄԱՂԷ – Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1867:

<https://archive.org/details/AyrvanetsiGrabarPatkanean1867/page/n67/mode/2up>

ՄԴ - Մաղաքիայ Դերջանցի

<https://digilib.aua.am/am/%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85%20%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB/library/?authorAlias=%D5%84%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%BB%D4%B1%D5%85+%D4%B4%D4%B5%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%91%D4%BB&author=217&sort=af>

ՄԵԳ - Մինաս ցրիչ

<https://www.digilib.am/en/%D5%84%D4%BB%D5%86%D4%B1%D5%8D%20%D4%B3%D5%90%D4%BB%D5%89/library/235>

ՄԽ - Մարտիրոս Խարբերդցի

<https://digilib.aua.am/am/%D5%84%D4%B1%D5%90%D5%8F%D4%BB%D5%90%D5%88%D5%8D%20%D4%BD%D4%B1%D5%90%D4%B2%D4%B5%D5%90%D4%B4%D5%91%D4%BB/library/223>

ՄԽՏ - Մարտիրոս Խարասարցի

<https://digilib.aua.am/en/%D5%84%D4%B1%D5%90%D5%8F%D4%BB%D5%90%D5%88%D5%8D%20%D4%BD%D4%B1%D5%90%D4%B1%D5%8D%D4%B1%D5%90%D5%91%D4%BB/library/222>

ՄՂ - Մարտիրոս Ղրիմեցի

<https://digilib.aua.am/en/%D5%84%D4%B1%D5%90%D5%8F%D4%BB%D5%90%D5%88%D5%8D%20%D5%82%D5%90%D4%BB%D5%84%D4%B5%D5%91%D4%BB/library/220>

ՄՊ – Մեծպարոն

<https://digilib.aua.am/am/%D5%84%D4%B5%D4%BE%D5%8A%D4%B1%D5>

<http://haygirk.nla.am/library/231>

ՅԳ – Յակոբ Գրիգորենց

http://haygirk.nla.am/upload/1512-1940/1851-1900/england_eulogy1875.pdf

ՆՇՅ – Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա

https://hy.wikisource.org/wiki/%D5%85%D5%A1%D5%B2%D5%A1%D5%A3%D5%BD_%D5%A5%D6%80%D5%AF%D5%B6%D5%AB_%D6%87_%D5%A6%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D6%81_%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1

ՇՀ – Շեքսպիր, Համլետ, Երևան, 1936:

https://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/hamlet_sheqspir_1936.pdf

ՍՍԱԱ – Սմբատ Սպարապետ, Անսիզ Անտիոքայ

<https://digilib.aua.am/book/1585/1960/15763/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A7%D5%B6%20%D5%85%D5%AB%D5%B7%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

ՍՍԴ – Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք

http://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/datastanagirq_1918.pdf

ՎԱԱ – Վարդան Այգեկցի, Ժողովածոյ առակաց Վարդանայ

https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB_%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf

ՎՊ – Վարդգես Պետրոսյան

https://hy.wiktionary.org/wiki/%D5%B4%D5%AB_%D5%A2%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%BE%D6%80%D5%A1_%D5%A9%D6%84%D5%A1%D5%9B%D5%AE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ 1	
Միջին հայերենի բայական միակազմ նախադասությունները	29
Ա. Դիմավոր միակազմ նախադասություններ	29
Ա.1. Անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ.....	30
Ա.2. Ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ.....	73
Բ. Միադիմի միակազմ նախադասություններ.....	135
Բ.1. Անկախ միադիմի միակազմ նախադասություններ.....	139
Բ.1.1. Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ.....	141
1. Օդերևութանիշ միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	141
2. Հոգեվիճականիշ միադիմի բայաձևերով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	145
Բ.1.2 Չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	145
1. «Օդերևութանիշ կամ ժամանականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	145
2. «Իրավիճականիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ.....	150
3. «Հոգեվիճականիշ կամ վերաբերմունքանիշ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	153
4. «Միադիմի բայաձև+անդեմ բայ» մասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ.....	156
4.1. «Միադիմի բայաձև+անորոշ դերբայի ուղղական հոլովաձև» ենթամասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ.....	156
4.2. «Միադիմի բայաձև+անորոշ դերբայի սեռական հոլովաձև» ենթամասնակաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	166
4.3. «Ապառնի 2-րդ դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակա- ղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ.....	169

4.4. «Հարակատար դերբայ+միադիմի բայաձև» ենթամասնակա- ղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	174
5. «Եղանակիչ բառ+միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնա- կաղապարով արտահայտվող անկախ միակազմ նախադասություններ	183
Բ.2. Չուգորդվող միադիմի միակազմ նախադասություններ	194
Բ.2.1. Չեզոք սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող Չուգորդվող միակազմ նախադասություններ	196
Բ.2.2. Չեզոք սեռի միադիմի բայաձևերի մասնակցությամբ արտահայտվող Չուգորդվող միակազմ նախադասություններ	212
1. «Եղանակիչ բառ+միադիմի բայաձև» մասնակաղապարով արտահայտվող Չուգորդվող միակազմ նախադասություններ...	212
2. «Միադիմի բայաձև+անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտվող Չուգորդվող միակազմ նախադասություններ...	230
Բ.2.3. Կրավորական սեռի միադիմի բայաձևերով արտահայտվող Չուգորդվող միակազմ նախադասություններ	231
Գ. Անդեմ բայաձևերով ատահայտվող բայական միակազմ նախադասություններ	238
ԳԼՈՒԻՆ 2	
Միջին հայերենի անվանական միակազմ նախադասությունները	242
ԳԼՈՒԻՆ 3	
Միջին հայերենի բառ-նախադասությունները	267
Ամփոփում	275
Резюме	284
Summary	292
Տեսական գրականության ցանկ	299
Սկզբնաղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկ	302
Առջանց սկզբնաղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկ	309
Բովանդակություն	313

ԳՈՒՐԳԵՆ ԿԻՊՐՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Մ Ի Ջ Ի Ն Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի
Մ Ի Ա Կ Ա Ջ Մ Ն Ա Խ Ա Դ Ա Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

ГУРГЕН КИПРОНОВИЧ ХАЧАТРЯН
О Д Н О С О С Т А В Н Ы Е П Р Е Д Л О Ж Е Н И Я
С Р Е Д Н Е А Р М Я Н С К О Г О Я З Ы К А

GURGEN KIPRON KHACHATRYAN
O N E - M E M B E R S E N T E N C E S
I N M I D D L E A R M E N I A N

Խմբագիր՝ Բ. Գ. Ն. Գ. Հովհաննիսյան

Համակարգչային շարվածքը՝ Գ. Խաչատրյանի
Ձևավորումը, էջադրումը և սրբագրումը՝ Գ. Խաչատրյանի,
Ա. Գալստյանի և Գ. Չոփուրյանի
Կազմը՝ Աշխեն Գալստյանի

Ծավալը՝ 20 տպ. մամուլ: Չափը՝ 60×84 1/16:

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ